

2181-ԱՀ

ՌՃԸԹ
1159թ հունվար

1710թ

2866-2002

ԳԻՐՔ ՍՐ

ԲՈՑ ԱՒԵՏԱՐ.

ԲԱՆԻՆ ՏԵԱՌՆ ՄԵ

րոյ և փրկչին յիսու

սի Քրիստոսի. Տպագրե

ցեալ ի թուականին հայ

ոց ՌՃԾԳ ։ յամ

սեանն յունվարի Ա.

ի Հայրապետութեան

Սրբոյ Աթոռոյն Էջ

միածնի տն Աղեք

սանդրի Սրբազան

կաթողիկոսին ամ Հայոց.

Ի տպարանի Կնդեանցի վարդանի որդի Ղակեարին։ Աշխատաւորող և գործօղ Տ ու-ռութեցի բարաքիասի որդի Մանհանէսի դպ-պիր Մինասին։ Ի Կոստանդնուպօլիս ։

Եւսեբիոս Կարպիանոս Սիրելի եղբօր ՚ի Տէր Ողջոյն ․

Ամոնի աղէքսանդրացւոյ բազում աշխատութե՟
և ճշգրտիւ փոյթ՚ի մէջ առեալ զառ՚ի չորից եթող
մեզ զաւետարան ․ Մատթէոսեան աւետարանին
համեմատաբար այլոց աւետարանչացն զդրուակս ե
դեալ առընթեր ․ Որպէս հարկէ դիպել շար՚ի կարգէ
երից և այնելոց որչափ ը՟ մի այսր ընթերցուա
ծոյն ․ Արդ զի ողջանդամն և զայլոց և զընաւղմար
մնոցն եղծանէ ունիցիս դիտել զյանձն իւրսն ը՟ իւ
րաքանչիւր աւետարանի տեղիս ․ յորս նոքին ածանա
սել ճշմարտասիրութե՟ ՚ի յաշխատութե՟ յառաջա
դոյն ասացելոց առն առեալ պատճառս ը՟ այլում
դումարութե՟ կանոնս ․ Ժ թուով դրոշմեցի զքեզ
ներքոյ նկարագրեալս ։ Որոց առաջինն ունի զթիւս յորս
զհանգոյնս միմեանց ասացին չորեքեան ․ Մտթս ․
Մրկս , Ղուկս , Յոհն ։ Երկրորդն յորս երեքն ,
Մտթս , Մրկս , Ղուկս ։ Երրորդն յորս երեքն ,
Մտթս , Ղուկս ․ Յոհն ։ Չորրորդն , յորս երեքն ,
Մտթս , Մրկս , Յոհն , Հինկերորդն յորս եր
կուսն , Մտթս Ղուկս ։ Վեցերորդն յորս երկուսն
Մտթս , Մրկս ։ Եօթներորդն յորս երկուսն
Մտթս , Յոհն ։ Ութերորդն յորս երկուսն , Ղուկս ,
Մրկս ։ Իններորդն յորս երկուսն ․ Ղուկս , Յոհն ․
Տասներորդն յորս իւրաքանչիւրն՚ի նոցանէ վ՟ իրիք
ինչ առանձին գրեաց ․

Խրատ

## Խրատ վասն զանազանից թուոց որք են յԱւետարանիս.

Ամենայն թիւ մանրագիր նկարեցեալ 'ի լուսանցս նշանակէ զհամարս տանց ։

Ամենայն թիւ մանրագիր նկարեցեալ յառաջս 'ի սորա տողիցն, նշանակէ զհամաձայնութիւն կամ զառանձնախօսութի սրբոց աւետարանչացն ։

Ամենայն թիւ խոշորագիր նշանակէ զքաներորդութիւն կերակէից և զաւուրս նոցին ։

Ամենայն մանր գլխագիր նշանակէ զքաներորդութի կանոնիցն, յորս աւետարանիչքն սուրբք համաձայնին կամ առանձնաձայնին. քանզի եթէ ճառեցեալ բանիցէ ընդ առաջնով կանոնիւն յորս չորքն համաձայնին, առադրի · Ա · որ նշանակէ զառաջին կանոնն ,

և եթէ իցէ ընդ երկրորդիւ կանոնիւն յորս երեքըն համաձայնին առադրի · Բ · որ նշանակէ զերկրորդ կանոնն · և այսպէս մինչև ցտասն երորդն , իսկ եթէ իցէ ընդ տասն երորդիւ, կանոնիւն յորս իւրաքանչիւրքն խօսին առանձին առադրի · Ժ · որ նշանակէ զտասն երորդ կանոնն ։

Ուստի համաձայնութիւք կամ առանձնախօսութիւք ընաւեց(?) ճառեցելոցն բանից ոչ միայն մանրագրիւքն թուովք գտանին, այլ և մանեբրբ(?) գլխագրիւքն հաւաստին ։

Ամենայն մեծ գլխագիր նշանակէ զբանս յատուկս և զգլխաւորս · զորս նախագրեցեալ քն ցանկըք իւրաքանչիւր իւրոց սրբոց աւետարանացն առաջ ցուցանեն ·

Որդ այսէ ՚ի ներքոյ կարգելոց կանոնաց դաս
ճառ, և յայտնագոյն պատմութիւն նոցա է այս
պէս՝ ՚ի մէջ իւրաքանչիւր չորեցունց աւե
տարանչաց թիւ ինչ առընթեր կայ ըստ իւրաքանչ
իւրն մասին սկսեալ յառաջնմէն, ապա երկրորդն
և երրորդն ։ Եւ յառաջ կարգաւ խաղացեալ ընդ
ընաւ մինչ ցկատարած գրոցն ։

Եւ ըստ իւրաքանչիւր թուոյ որ ՚ի նոցանէ թէ յորում ՚ի տասնեցունց կանոնաց կայցէ թիւն. Որպիսի ինչ եթէ առաջինն այսէ. թէ որպէս յառաջնում, և թէ յերկրորդումն և յերրորդումն. և այնպէս մինչև ցտասներն. Որդ եթէ բացեալ զմի ՚չորից աւետարանացն յորոյ վերայ կամիցիս կալ, յորում ճառագլուխ և կամիցիս գիտել, եթէ որք այնք են զոր հանգոյն միմեանց ասացին. Եւ զանձնիւրսն իւրաքանչիւր տեղիս գտանել. յոր ըստ նոցին ածան, զոր ճառագլուխ և ունիցիս առեալ զառաջակայ թիւն խնդրեսցես զնա ՚ի կանոնին ընդ որ անուանակոչութէն ներքնագրոշմ իջուցանէ. և հասցես գիւրաւ իմ յառաջագոյն գրելոց իճակատ կանոնին թէ քանն երորդ. և որքիցեն ասացեալ յորոց խնդրեսն, և կացցես ՚ի մէջ թուոց և այլ աւետարանաց որք ՚ի կանոնից են, զոր թիւ և ունիցիս զառընթերականցն խնդրեսցես զնս ՚ի ներքս ՚ի յանձնիւրսն իւրաքանչիւր աւետարանի ՚ի տեղիս զհանգոյն ասացեալսն նշ. ողջ լեր.

Կանոն Առաջին, Չորս Զօրեղին Թուոյն Համանի Ըստ Նախին:

| Մաթ | Մրկ | Ղուկ | Յօհ | Մաթ | Մրկ | Ղուկ | Յօհ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ը | Բ | Է | Ժ | ՄԾԳ | ՃԿԵ | ՄՂԴ | ԿԴ |
| ԺԱ | Դ | Ժ | Զ | ՄԾԳ | ՃԿԵ | ՄՂԴ | ԿԵ |
| ԺԱ | Դ | Ժ | ԺԲ | ՄԿԹ | ՃՀ | ՄՀԵ | ՁԻԴ |
| ԺԱ | Դ | Ժ | ԺԴ | ՄՂԱ | ՃՀԲ | ՄՀԹ | ՁԾԴ |
| ԺԱ | Դ | Ժ | ԻԲ | ՄՂԳ | ՃՀԵ | ՄՁԱ | ՁԿԱ |
| ԺԴ | Ե | ԺԳ | ԾԵ | ՄՂԵ | ՃՁԴ | ՄՁԲ | ԾԵ |
| ԻԴ | ԺԵ | ԺԵ | ԽԲ | ՄՂԵ | ՃՁԴ | ՄՁԴ | ԽԲ |
| ԻԴ | ԺԵ | ԼԴ | ԽԲ | Յ | ՃՁԱ | ՄՁԵ | ՁԾԲ |
| ԻԴ | ԺԵ | ԽԵ | ԽԲ | Յ | ՃՁԱ | ՄՁԵ | ՀԽԵ |
| Հ | Ժ | ԽԵ | ԼԲ | ՅԲ | ՃՁԴ | ՄՁԵ | ՁԴ |
| ՂԸ | ՂԲ | ՃԺԴ | ԽԹ | ՅԴ | ՃՁԴ | ՄՁԹ | ՁՀ |
| ՂԸ | ՂԲ | ՃԺԲ | ՃԺԱ | ՅԲ | ՃՁԵ | ՄԼ | ՁԿԸ |
| ՂԸ | ՂԲ | ՃԺԲ | Խ | ՅԲ | ՃՁԵ | ՄԼ | ՁԿԴ |
| ՂԸ | ՂԲ | ՃԺԲ | ՃԽԹ | ՅԵ | ՃՁԸ | ՄԼԱ | ՁԿԴ |
| ՂԸ | ՂԲ | ՃԺԲ | ՃԼԱ | ՅԺ | ՃԼԱ | ՄԼԵ | ԿԱ |
| ՃԼԴ | ՂԲ | ՀԵ | ՃԹ | ՅԺԴ | ՃՂԴ | ՄԼԷ | ՁԻԸ |
| ՃԽԱ | ԼԵ | ՄԹ | ԾԹ | ՅԺԴ | ՃՂԵ | ՄԼԱ | ՁԿԸ |
| ՃԽԸ | Ծ | ԽԱ | ԼԵ | ՅԺԴ | ՃՂԵ | ՄԼԱ | ՁԿԲ |
| ՃԽԲ | ԾԱ | ԻԸ | ԽԵ | ՅԺԵ | ՃԼԲ | ՄԼԸ | ՁԵ |
| ՃԽԵ | ԿԴ | ԲԴ | ԽԹ | ՅԺԵ | ՃԼԸ | ՄԼԵ | ՁԿԲ |
| ՃԿԲ | ԿԴ | ԲԴ | ՀԴ | ՅԺԸ | ՃԼԹ | Յ | ՁԿԲ |
| ՃԿԲ | ԾԸ | ԲԴ | ԺԵ | ՅԻ | Մ | ՅԸ | ՁԸ |
| ՄԹ | ԾԸ | ՄԼԴ | Ճ | ՅԻԵ | ՄԴ | ՅԺ | ՁԱԴ |
| ՄԺԱ | ՃԺԹ | ՄԼԴ | ԽԱ | ՅԻԲ | [illegible] | ՅԺԱ | ՀԱԸ |
| [illegible] | ՃԻԱ | ՄԼԸ | ԾԵ | ՅԻԲ | [illegible] | ՅԺԴ | ՁԼԴ |
| [illegible] | ՃԻԸ | ՄԼԹ | ԾԱ | ՅԻԸ | Բ | ՅԺԴ | ՀԼԲ |
| [illegible] | ՃԻԹ | [illegible] | ՃԵ | ՅԼԱ | Թ | ՅԺԵ | ՁԼԵ |
| ԾԵ | ՃԻԸ | [illegible] | ՃԵ | ՅԼԸ | ՄԺ | ՅԺԸ | ՀԲԵ |
| [illegible] | ՃԼԹ | ՄԾ | ՃԽԲ | ՅԼԴ | ՄԺԸ | ՅԺԱ | Մա |
| ՄՀԴ | ՃԼԹ | ՄԾ | ՃԽԱ | ՅԼԵ | ՄԺԴ | ՅԺԴ | ՁԼԹ |
| ՄՀԴ | ՀԾԲ | [illegible] | Ի | ՅԼԲ | ՄԺԵ | ՅԺԵ | ՀԼԸ |
| ՄՀԴ | ՃԾԲ | [illegible] | ԽԸ | ՅԼԲ | ՄԺԵ | ՅԺԹ | ՁԼԸ |
| ՄՀԲ | ՃԾԲ | [illegible] | ԲԲ | ՅԽԴ | ՄԴ | ՅԺԹ | ՄԴ |
| ՄՁ | ՃԾԸ | ՀԴ | ԴԸ | ՅԽ | ՄԵ | ՅԸ | ՄԲ |
| ՄՁԴ | ՃԿԸ | [illegible] | ՃԻԸ | ՅԽԹ | ՄԸ | ՅԴ | ՄԸ |
| ՄՁԴ | ՃԿԵ | [illegible] | ԾԵ | ՅԾԸ | ՄԼԱ | ՅԼԲ | ՄԹ |
| ՄՀԴ | ՃԿԵ | [illegible] | ԿԴ | ՅԾԴ | ՄԼԸ | ՅԼԵ | ՄԺԱ |
| | ՃԿԵ | [illegible] | ԿԵ | | | | |

## Կանոն Երկրորդ. Յորս Երեքն ·

| Մտթ | Մրկ | Ղուկ | Մտթ | Մրկ | Ղուկ | Մատթ | Մրկ | Ղուկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ժե | դ | ժե | ճլ | լե | ձը | միե | ճլգ | մխե |
| իա | ժ | լը | ճլա | լզ | հզ | միզ | ճլդ | մխդ |
| լա | ճբ | ճձե | ճլե | լը | հը | միէ | ճլե | ճլե |
| լբ | լթ | ճլգ | ճլէ | խդ | ճկե | միթ | ճլե | մխզ |
| լը | լթ | հթ | ճխգ | ծե | զ | մլբ | ճլզ | մլե |
| ծ | խա | ծզ | ճխդ | ծթ | ժը | մլբ | ճլզ | մխը |
| կբ | ժգ | գ | ճխթ | կզ | խդ | մլգ | ճլը | մխթ |
| կբ | ժգ | իգ | ճխթ | կզ | լե | մլը | ճխգ | մթ |
| կգ | ժը | լգ | ճծդ | կթ | լզ | մլը | ճխգ | մծգ |
| կե | ժե | իզ | ճկգ | հթ | ճխդ | մլթ | ճխդ | մծդ |
| կթ | խէ | ձգ | ճկը | ձդ | ղե | մծա | ճխզ | մծե |
| հա | իա | լը | ճկը | ձդ | մզ | մծգ | ճխը | մդ |
| հբ | իբ | լթ | ճհ | ձե | ղզ | մծը | ճծ | մծե |
| հբ | իբ | ճձզ | ճհբ | ձե | ղը | մծթ | ճծա | մծը |
| հգ | իգ | խ | ճհգ | ղա | ղթ | մկդ | ճծե | ճծզ |
| հդ | խթ | ձե | ճհզ | ղդ | ճա | մկթ | ճծգ | միը |
| հզ | ծբ | ճկթ | ճհը | ղե | ճը | մհա | խը | մլ |
| հթ | իթ | ձզ | ճհը | ղե | ճժե | մհը | ճկ | մկդ |
| ձ | լ | խգ | ճհթ | ղթ | ճլե | մձա | ճկգ | մկը |
| ձբ | ծգ | ձէ | ճղ | ձե | ճլէ | մձե | ճկզ | մկե |
| ձբ | ծգ | ճէ ձէ | ճղբ | ճզ | ճժզ | մձե | ճկզ | մկէ |
| ձգ | ծդ | ճէը | ճղգ | ճե | ճխա | մղզ | ճհե | մձ |
| ձդ | ծե | ճէդ | ճղդ | ճե | ճժը | մղզ | ճհե | մձգ |
| ձե | ծե | ձը | ճղդ | ճը | ճծը | յա | ճձը | մձզ |
| ձե | ճխա | ճխզ | ճղդ | ճը | ճժթ | յը | ճձթ | յզ |
| ձը | ճխա | մծա | ճղե | ճթ | մի | յժը | ճղգ | մղթ |
| ձը | խ | ձ | ճղը | ճժ | մխա | յժզ | ճղե | մղդ |
| ղբ | ձզ | ղէ | ճղթ | ճժա | ճհգ | յիը | մը | յթ |
| ղգ | ձզ | ճխզ | մա | ճժը | միբ | յլը | մժը | յիը |
| ղդ | ա | հ | մգ | ճժդ | մհ | յլթ | մժթ | յիե |
| ճգ | իդ | խա | մե | ճժզ | միգ | յխ | մի | յիէ |
| ճժգ | իե | ճկե | մզ | ճժե | մլբ | յխէ | միը | յիդ |
| ճժզ | լը | ճիէ | մժ | ճժը | մլգ | յխդ | միդ | յիը |
| ճիա | լգ | ճիթ | մժէ | ճիե | մի | յխզ | միե | յլ |
| ճիբ | լգ | ճխէ | մժթ | ճիը | միա | յծդ | մլգ | յլը |
| ճիդ |  |  | միդ | ճլ | միգ |  |  |  |

| Կանոն Երրորդ Յորս Երեքն | | |
|---|---|---|
| Մատ | Ղուկ. | Յոհ |
| ա | ժգ | |
| ա | ժգ | ա |
| ա | ժգ | գ |
| ե | ղ | ե |
| ե | ղ | ը |
| ծթ | կգ | իե |
| կգ | կե | ճժզ |
| ղ | ծը | լէ |
| ղ | ծը | ճժը |
| ղե | մժա | ճլթ |
| ճժա | ճժթ | ճե |
| ճժա | ճժթ | ճխը |
| ճժա | ճժթ | լ |
| ճժբ | ճժթ | ճժգ |
| ճժբ | ճժթ | ձէ |
| ճժբ | ճժթ | խգ |
| | ճժթ | կա |
| ճժբ | ճժթ | ը |
| ճժբ | ճժթ | հզ |
| ճժբ | ճժթ | զ |
| ճժբ | ճժթ | ճծգ |
| ճժբ | ճժթ | ճխը |
| ճխղ | ջ | խե |

| Կանոն Չորրորդ Յորս Երեքն | | |
|---|---|---|
| Մատ | Մար | Յոհ |
| ժը | ը | իղ |
| ճժէ | իղ | ղգ |
| ճժէ | իղ | ղե |
| ճծ | կէ | ծա |
| ճկա | հէ | իգ |
| ճկա | հէ | ծգ |
| մգ | ղժե | ղա |
| մգ | ճժե | ճլե |
| մժղ | ճիե | ճծ |
| մժղ | ճիե | ճիը |
| մժղ | ճիե | ճլէ |
| մժդ | ճիե | ճլգ |
| մհէ | ճծթ | ղը |
| մհթ | ճկա | հբ |
| մհթ | ճկա | ճիա |
| մձէ | ճկը | ճծբ |
| մլգ | ճհգ | ճէ |
| մղէ | ճհը | հ |
| մղթ | ճձ | ճգ |
| յա | մա | ճձ |
| յա | մա | ճղբ |
| յգ | մգ | ճձգ |
| յթ | մէ | ճձե |
| յթ | մէ | ճձէ |
| յլգ | մժա | ձգ |

ԿԱՆՈՆ ՀԻՆԳ ԵՐՈՐԴ, ՑՈՐՍ ԵՐԿՈՒՄՆ․

| ՄԱԹ | ԴՈՒԿ | ՄԱԹ | ԴՈՒԿ | ՄԱԹ | ԴՈՒԿ |
|---|---|---|---|---|---|
| գ | բ | կը | ած | չձե | ճձզ |
| ժ | ը | հ | ճը | ճձը | ճձթ |
| ժբ | ժա | ձէ | ճժա | ճձդ | ճղը |
| ժզ | ժզ | ձղ | ճթ | ճձգ | ճղթ |
| իե | իզ | ղգ | ճիե | ճղզ | մհը |
| իզ | իզ | ղզ | ճկ | մժգ | մլզ |
| ի[illegible] | իէ | ղղ | ճձը | գա | ճձա |
| լ | իթ | ղը | ճձգ | գը | ճլթ |
| լգ | ճլգ | ճը | կթ | մլա | ճհթ |
| լզ | ճկը | ճէ | հա | մլա | մժզ |
| լը | ծգ | ճզ | ճլգ | մլը | ճիը |
| լ[illegible] | ծը | ճգ | հգ | մլէ | ճլզ |
| խա | ծզ | ճը | ճժզ | մլղ | ճլզ |
| խգ | ճիգ | ճէ | ճժը | մլզ | ճլզ |
| խզ | ճծգ | ճժղ | ճկզ | մլը | ճի |
| խէ | ճլգ | ճժղ | ճհղ | գզ | ճխա |
| խթ | ճլա | ճժթ | ճիղ | գա | ճհզ |
| ծա | ճզ | ճիզ | կը | մծզ | մի |
| ծգ | ծթ | ճիզ | ճիը | մծղ | մի |
| ծդ | ճիզ | ճիը | ճլը | մծզ | մժգ |
| ծե | ծգ | ճլը | ճլ | մկա | մ[illegible] |
| ծզ | ճհ | ճլէ | ձա | մկը | մժը |
| ծը | կա | ճլէ | ճի | մկզ | ճծթ |
| կ | կ | ճծղ | ճկը | մկղ | ճծթ |
| կա | ճհա | ճծը | ծզ | մկզ | ճծը |
| կե | կէ | ճհզ | գղ | մհ | գթ |
| կզ | ճհը |  | մ | մհը | մլա |
|  | կղ |  |  |  |  |



| Կանոն վեցերորդ Յորս Երկուսուն | | | | | | Կանոն եօթն երորդ Յորս Երկուսուն | |
|---|---|---|---|---|---|---|---|
| մաթ | մրկ | մաթ | մրկ | մաթ | մրկ | մաթէոս | յոհաննէս |
| թ | դ | ճկգ | հը | մկդ | ճծգ | | |
| ժէ | ե | ճկե | ձ | մհե | ճծէ | ե | ժգ |
| ի | թ | ճկթ | ձգ | մձբ | ճկգ | | |
| իբ | ժա | ճհգ | ձթ | մձզ | ճկէ | ժթ | ժթ |
| իդ | ճիզ | ճձ | ճ | մձը | ճկթ | | |
| հե | կգ | ճձթ | ճդ | մղ | ճհա | ժթ | լը |
| ճ | լբ | մբ | ճժդ | մղբ | ճհգ | | |
| ճլթ | խե | ճձգ | ճի | մղը | ճհթ | ժթ | լթ |
| ճխե | կ | մժե | ճիգ | յե | ճձե | | |
| ճխը | կե | մդ | ճլա | յթ | ճղ | ճի | ձը |
| ճծա | կը | մխղ | ճխ | յժա | ճղը | | |
| ճծգ | հա | մխէ | ճխը | յլ | մբ | ճձե | մղե |
| ճծէ | հբ | մծ | ճխե | յլէ | մժէ | | |
| ճծթ | հգ | մծը | ճխէ | յխա | փա | մե | ճա |
| ճկ | հղ | մծգ | ճխթ | յխէ | փղ | | |
| ճկբ | հը | մկ | ճծը | յծ | փթ | | |
| * | * | * | * | * | * | * | * |

| Կանոն ութերորդ Յորս երկուսն | | Կանոն իններորդ Յորս երկուսն | |
|---|---|---|---|
| ՂՈՒԿԱՍ | ՄԱՐԿՈՍ | ՂՈՒԿԱՍ | ՅՈՀԱՆՆԷՍ |
| իգ | ժբ | լ | մժթ |
| իե | ժդ | լ | կբ |
| իզ | ժզ | ձբ | ճժգ |
| իե | իբ | ձբ | ճիգ |
| իը | ժե | ճհգ | կթ |
| ձգ | իը | ճհգ | կե |
| ձթ | ծզ | ճհգ | մլա |
| ղա | կա | յգ | ճլ |
| ճ | հե | յե | ճլ |
| ճգ | ղե | յժբ | ճծզ |
| ճխե | ճլզ | յժբ | ճծբ |
| մհե | մժզ | յխ | մժգ |
| յլե | մլ | յխ | մժե |
| | | յխա | կա |
| | | յխա | կգ |
| | | յխա | կե |

* * * *

Կանոն Տասն Երկուց Յորս Առանձին || Առանձինք .

| ՄԱՏԹԷՈՍ | | | ՄԱՐԿՈՍ |
|---|---|---|---|
| Բ | Ճզ | Մէ | Ժթ |
| Գ | Ճթ | Մժբ | Լա |
| Զ | Ճժգ | Մժը | Խգ |
| Ժգ | Ճժե | Միբ | Խզ |
| Իդ | Ճժը | Միե | Ծը |
| Իե | Ճիգ | Մլ | Կբ |
| Իթ | Ճիզ | Մլգ | Կ |
| Լգ | Ճլզ | Մլե | Հգ |
| Լե | Ճխ | Մլթ | Ձա |
| Լէ | Ճծա | Մխե | Ձը |
| Լթ | Ճծե | Մխը | Ղ |
| Խբ | Ճկէ | Մհգ | Ղգ |
| Խե | Ճհա | Մձգ | Ղէ |
| Ծբ | Ճհե | Յգ | Ճա |
| Ծզ | Ճձա | Յժթ | Ճգ |
| Հե | Ճձգ | Յիգ | Ճիգ |
| Ձա | Ճձզ | Յիե | Ճլբ |
| Ձթ | Ճղա | Յլե | |
| Ղա | | | Ճձզ |
| Ղթ | Ճղզ | Յծա | |
| Ճա | Մ | Յծե | Ճժգ |

| ԱՌԱՆՑԻՆ | | | ԱՌԱՆՁԻՆ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՂՈՒԿԱՍ | | | ՅՈՀԱՆՆԷՍ | | | |
| ա | ծա | մլդ | գ | կբ | ճժթ | ճհա |
| գ | ճծգ | մծբ | է | կգ | ճիգ | ճհգ |
| ե | ճծթ | ճծդ | թ | կը | ճիե | ճհե |
| թ | ճկա | մծթ | ժա | հա | ճիե | ճհթ |
| ժբ | ճկգ | մկգ | ժգ | հգ | ճլ | ճձա |
| ի | ճկգ | մհա | ժդ | հե | ճլբ | ճձթ |
| իբ | ճկդ | մհգ | ժը | հդ | ճլգ | ճղա |
| իթ | ճհգ | մհդ | իբ | հը | ճլդ | ճղգ |
| լա | ճհե | մհը | իգ | ձա | ճլը | ճղե |
| ծ | ճհը | մձդ | իե | ձգ | ճխ | մ |
| ծա | ճձ | մձը | իթ | ձդ | ճխգ | մբ |
| կե | ճձգ | մղե | լա | ձթ | մխգ | մե |
| կը | ճձը | մղդ | լգ | ղբ | ճխե | մե |
| հբ | ճղ | մղը | լդ | ղգ | ճխե | մժ |
| հե | ճղբ | յա | լը | ղե | ճխթ | մժբ |
| ճգ | ճղդ | յգ | լթ | ղթ | ճծա | մժգ |
| ճզ | մա | յե | խա | ճբ | ճծգ | մժդ |
| ճե | մգ | յը | խգ | ճգ | ճծե | մժը |
| ճժգ | մզ | յժդ | խե | ճդ | ճծե | մի |
| ճժե | մէ | յի | ծ | ճը | ճծթ | միգ |
| ճիբ | մժգ | յիդ | ծբ | ճժ | ճկգ | միդ |
| ճիգ | միգ | յլա | ծգ | ճժ | ճկե | միը |
| ճլա | միե | յլգ | ծդ | ղժե | ճկե | մլ |
| ճխգ | | յլթ | ծը | | | |
| ճխթ | մզե | յխբ | կ | ճժե | ճկթ | մլբ |

Նախադրութիւն Մատթէոսի Աւետարանին ։

Աւետարանին որ ըստ Մատթէոսի գրեալ է, զի ինքն Մատթէոս աշակերտ տ͞ն գրեաց զաւետարանս զայս, և պատմէ մեզ 'ի սկզբանն զըստ մարմնոյ ծնունդ փրկչին . 'ի զաւակէ դաւթի . վ͞ն որոյ և զազգահամարն ժողովէ մինչև ի ք͞ս, ազգս քառասուն և երկու բերէ ըստ կարգի . և զմկրտութիւն յովհաննու, և 'ի լերինն 'ի գիւղէն զ փորձութիւն և նշանս և արուեստս մեծամեծս ի փրկչէն եղեալս, և զընտրութիւն աշակերտաց, և վ͞ն խորհրդոյ մատնութեան և զ կատարածն զի մատնեցաւ պիղատոսի և խաչեցաւ մարմնով . և մարմինն եդաւ 'ի գերեզմանի և զինուորքն բաժանեցին զ հանդերձըս նորա, նոյնն և զերրորդ աւուր յարութիւն . և զպատուէր աշակերտացն աշակերտել զա͞մ հեթանոսս և մկրտել զնոսա . խոստացաւ լինել ընդ նոսա զա͞մ աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի ։

Մատթէոս, որ և ղևի իսկոյն յետ յարութեանն ք͞ի նախքան զչուելըն 'ի վիճակ իւր գրեաց զաւետարանն 'ի հրէաստանի եբրայականաւ լեզուաւ վ͞ն այնոցիկ որք 'ի թլփատութէ հաւատացեալքն էին,

Ցանկ Գլխոց Մատթէոսի Աւետարանին ։

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Վասն մոգուցն ․ | ա | — — | — — | — |
| Վասն կոտորածի մանկանցն ․ | բ | — — | — — | — |
| Վասն քարոզութեն յոհաննու ․ | գ | — — | ե | — |
| Վասն վարդապետութե փրկչին ․ | դ | — — | — — | — |
| Վասն երանութեն ․ | ե | — — | ժե | — |
| Վասն բորոտին ․ | զ | դ | ժբ | — |
| Վասն հարիւրապետին ․ | է | — — | ժը | զ |
| Վասն զոքանչին պետրոսի ․ | ը | բ | թ | — |
| Վասն բժշկութե ամ ցաւոց ․ | թ | գ | ժ | — |
| Վասն ոչ տալոյ զհրաման երթալ զկնի ․ | ժ | — — | լգ | — |
| Վասն սաստելոյն խլր ջուրցն ․ | ժա | ժ | իդ | — |
| Վասն դիւահարացն ․ | ժբ | ժա | իգ | — |
| Վասն անդամալուծին ․ | ժգ | ե | ժգ | ե |
| Վասն մատթէի ․ | ժդ | զ | ժդ | — |
| Վասն դստեր ժողովրդապետին , | ժե | ժբ | իե | — |
| Վասն տեռատեսին ․ | ժզ | ժգ | իզ | — |
| Վասն երկուց կուրացն ․ | ժէ | — — | — — | — |
| Վասն խուլ և համր դիւահարին ․ | ժը | — — | — — | — |
| Վասն առաքելոցն իշխանութե ․ | ժթ | ը ժգ | ժզ · իե | — |
| Վասն առաքելոյն յովհաննու աշակերտս | ի | ի | — — | — |
| Վասն որոյ ձեռն գօսացեալ էր ․ | իա | ե | ժե | — |
| Վասն կոյր և համր դիւահարին ․ | իբ | — — | լթ | — |
| Վասն այնոցիկ որք խնդրէին նշանս | իգ | — — | լա | — |
| Վասն առակացն սերմանեաց ․ | իդ | թ | իբ լթ | — |

(Column heads of the table: Մթ | Մրկ | Ղու | Յոհ)

Վասն

| | մթ | մրկ | ղու | յոհ |
|---|---|---|---|---|
| Ա յովհաննու և հերովդէի · | ԻԵ | ԺԵ | — | — |
| Ա հնկից հացեցն · | ԻԶ | ԺԶ | ԻԸ | Ը |
| Ա երթալոյն 'ի վր̄ ծովուն · | ԻԷ | ԺԷ | — | — |
| Ա անցանելոյն զպատուիր̄ նաւն ա̄յ · | ԻԸ | ԺԸ | — | — |
| Ա կնոջն քանանացւոյ · | ԻԹ | ԺԹ | — | — |
| Ա բժշկելոյ զժողովուրդն · | Լ | — | — | — |
| Ա եօթն հացեցն · | ԼԱ | ԻԱ | — | — |
| Ա խմորոյ փարիսեցւոցն · | ԼԲ | ԻԲ | ԻԴ | — |
| Ա հարցմանն փիլիպեայ կեսարեայ | ԼԳ | ԻԳ | ԻԹ | — |
| Ա այլակերպութե̄ տե̄ն · | ԼԴ | ԻԵ | Լ | — |
| Ա լուսնահարին · | ԼԵ | ԻԶ | ԼԱ | — |
| Ա խնդրելոյ զերկդրամեանն · | ԼԶ | — | — | — |
| Ա հարցանելոյն թէ ովիցէ մեծ · | ԼԷ | ԻԷ | ԼԲ | — |
| Ա առակի հարիւր ոչխարացն · | ԼԸ | — | ԼԳ | — |
| Ա թողլոյ զբիւր տաղանտսն · | ԼԹ | — | — | — |
| Ա հարցմանն արձակելոյ առն զկին | Խ | ԻԸ | — | — |
| Ա հարցանելոյ մեծատանն զկ̄ն · | ԽԱ | ԻԹ | Կդ | — |
| Ա վարձուց մշակացն · | ԽԲ | — | — | — |
| Ա որդւոցն զեբեթեայ · | ԽԳ | Լ | — | — |
| Ա երկուց կուրացն · | ԽԴ | ԼԱ | Կդ | — |
| Ա իշոյն և աւանակին · | ԽԵ | ԼԲ | Կը | — |
| Ա կուրացն և կաղացն · | ԽԶ | — | — | Ժգ |
| Ա չորանալոյ թզենւոյն · | ԽԷ | ԼԳ | — | — |
| Ա հարցանելոյ զոր քահանայապետիցն և ծերոց · | ԽԸ | ԼԴ | Կթ | — |

Ա

առակի երկու որդւոյն ·
առակի այգւոյն ·
կոչեցելոյն ի հարսանիսն ·
դահեկենին որումխորհեցին զոր ·
սադուկեցւոյն ·
օրինականացն ·
հարցանելոյ զխարխսեցին ·
վա տալոյ դպրց եւ փարիսեցւցն ·
կատարածի աշխարհի ·
աւուրն եւ ժամուն ·
տասն կուսանացն ·
տալոյ զտաղանդս ·
դատաստան ած ·
օծանելոյն մարիամու զքն ·
պատրաստելոյ զպասեքն ·
օրհնաւոր խորհրդոյն ·
մատնութեն ան ·
ուրացութեն պետրոսի ·
յուդայի զղջմանն ·
խնդրելոյ զտրունակն մարմինն ·
իւղաբեր կանանց ·

| Մտթ | Մրկ | Ղուկ | Յով |
| --- | --- | --- | --- |
| խթ | — | — | — |
| ծ | լզ | հ | — |
| ծա | — | ծգ | — |
| ծբ | լէ | հա | — |
| ծգ | լը | հբ | — |
| ծդ | լթ | — | — |
| ծե | խ | հգ | — |
| ծզ | — | խգ | — |
| ծէ | խբ | հե | — |
| ծը | խգ | — | — |
| ծթ | — | — | — |
| կ | — | — | — |
| կա | — | կե | ժբ |
| կբ | խդ | խա | — |
| կգ | խե | հդ | — |
| կդ | — | — | — |
| կե | խզ | — | — |
| կզ | խէ | — | — |
| կէ | — | — | — |
| կը | խը | ձբ | ժը |
| կթ | խթ | ձգ | ժթ |

Յիսուս փափակելին նախահարց խմ բից.
նախագուշակեցեալն 'ի մարգարէ ից.
այց ելանէ սիրով Իւրոց ծառայ ից.
և տայ զինքն 'ի փրկանս փոխանակ բնաւ ից.
Օ ծնթաց անօրէնութե Իւրոյ վՃա րէ.
զգիրս աւետեաց Նորա կտակ աւան դէ.
զճանապարհ փրկութե մարդկան ցուցա նէ.
և ըզ հաւատացելոլ յերկինս հրաւի րէ.
Օ երրորդութին ոք մեզ յար պաշտե լի.
ըզ մի ածութին երկրպագե լի.
ըզ ոք եկեղեցին Իւր անխախտե լի.
յառաջադրէ մեզ գոլ միշտ հաւատա լի.
Օ խորհուրդ մկրտութեն շնորհէ դեղ կե նաց.
ըզ խոստովանութին մաքրութի մե ղաց.
ըզ սէրն ածային և զսէրն ընկե րաց.
ուսուցանէ գիրս գոլ պատուիրա նաց.
Օ միխթարիչ հոգին Իւր խոստանա լով.
ըզ սիրտ աշակերտաց վերասփոփե լով.
զպտուղ պահպանութե բանիցըն տա լով.
համբառնայ 'ի յերկինս անձառելի պատ ւով.
Սորա ընթերցողք սորին միշտ զգուշա ցէք.
զբանն Ճշմարտութե վերապատուե ցէք.
շաղղացըն յիտումի առ հետեւե ցէք.
և ըզ սէր աշխարհիս 'ի բաց ընկե ցէք.

Ա.

2866-2002



Սբ Աւետարանիչն Մատթէոս.




# ՆԴԵԱՆ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Որդւոյ Դաւթի․ որդւոյ աբրահամու․ Աբրահամ
ծնաւ զիսահակ ։ Իսահակ ծնաւ զյակոբ․ Յակոբ
ծնաւ զյուդայ և զեղբարս նորա ։ Յուդա ծնաւ
զփարէս և զզարա ՚ի թամարայ ։ Փարէս ծնաւ զեզ
րոն ։ Եզրոն ծնաւ զարամ ։ Արամ ծնաւ զամինա
դաբ ։ Ամինադաբ ծնաւ զնաասոն ։ Նաասոն ծնաւ

զսաղմոն ։ Սաղմոն ծնաւ
զբոոս ՚ի Հռաքեբայ ։
Բոոս ծնաւ զյօբէթ
՚ի Հռութայ ․ Օբէթ
ծնաւ զյեսսէ ։ Յեսսէ
ծնաւ զդաւիթ արքայ ։
Դաւիթ արքայ ծնաւ
զսողոմոն ՚ի կնոջէն ու-
րիայ ․ Սողոմոն ծնաւ
զռօբովամ ։ Ռօբովամ
ծնաւ զաբիայ ։ Աբիա
ծնաւ զասափ ։ Ասափ
ծնաւ զյոսափաթ ։ Յօ
սափաթ ծնաւ զյորամ ․
Յորամ ծնաւ զոզիայ ։
Ոզիա ծնաւ զյօվաթամ
Յօվաթամ ծնաւ զա
քազ ։ Աքազ ծնաւ զե
զեկիայ ․ Եզեկիա ծնաւ
զմանասէ ։ Մանասէ
ծնաւ զամոն ։ Ամոն
ծնաւ զյօսիա ։ Յօսիա
ծնաւ զյեքոնիա եւզ
եղբարս նր՟ առ գերու-

բ
ժ

թե՟ն բաբիլացւոցն ։
Յետ գերութե՟ն բա
բիլացւոց ծնաւ յեքո
նիա զսաղաթիէլ ։ Սա
ղաթիէլ ծնաւ զզօրա
բաբէլ ․ Զօրաբաբէլ
ծնաւ զաբիուդ ։ Աբի
ուդ ծնաւ զեղիակիմ ․
Եղիակիմ ծնաւ զազոր ։
Ազոր ծնաւ զսադօք ։
Սադօք ծնաւ զաքին ․
Աքին ծնաւ զեղիուդ ։
Եղիուդ ծնաւ զեղի
ազար ։ Եղիազար ծնաւ
զմատթան ։ Մատթան
ծնաւ զյակոբ ։ Յակոբ
ծնաւ զյովսէփ զայրն
մարիամու որում խօսեց
եալէր զՄարիամ կոյս
յորմէ ծնաւ Յս՟ ․ որ
անուանեցաւ Քս՟ ։
Արդ ա՟մ ազգք յաբրա
համու մինչեւ ՚ի դաւիթ
ազգք չորեքտասանք ․
Եւ

ր ւ
բ ․

Եւ ՚ի դաւթէ մինչեւ ՚ի գերութիւն բաբելա ցւոց ազգք չորեքտա սանք։ Եւ ՚ի գերութենէ բաբելացւոց մինչեւ ՚ի Քս՟ ազգք չորեքտա սանք։

գ ե Եւ Յի՟ Քի՟ ծնունդն էր այսպէս։

Խօսեալ զմայր նորա Մարիամ Յովսէփու մինչ չեւ եկեալ առ մի մեանս գտաւ յղացեալ ՚ի Հոգւոյն սրբոյ։

դ ծ Եւ յովսէփ այր նորա քանզի արդար էր. եւ ոչ կամեցաւ առակել զնա. խորհեցաւ լռելեայն արձակել զնա։

Եւ մինչդեռ նա զայս ածէր զմտաւ ահա հրեշ տակ Տն՟ ՚ի տեսլեան եր եւեցաւ նմա եւ ասէ. յով սէփ որդի դաւթի. մի՛ երկնչիր առնուլ առ քեզ զմարիամ կին քո քանզի որ ՚ի նմայն ծնեալ է. ՚ի Հոգւոյն սրբոյ է։ Ծնցի որդի. եւ կոչես ցես զանուն նր՟ Յս՟. զի նա փրկեսցէ զժողո վուրդ իւր ՚ի մեղաց իւր եանց։

Այլ այս ամ՟ եղեւ. զի լցցի որ ասացաւն ՚ի Տէ ՚ի ձեռն եսայեայ մար գարէի։

Ահա կոյս յղասցի. եւ ծնցի որդի. եւ կոչես ցեն զանուն նորա Էմ մանուէլ. որ թարգմա նի ընդ մեզ Ա՟Ծ։

Եւ զարթուցեալ յով սէփ ՚ի քնոյ անտի արար որպէս հրամայեաց նմա հրեշտակ Տեառն. եւ

լաւ յինքն զկինն իւր. Եւ ոչ գիտէր զնա. մինչեւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ. եւ կոչեաց զանունն նր Յս.

ե
է
Մ

Եւ ՚ի ծնանելն Յի. ՚ի բեթղեհէմ հրէաստանի. յաւուրս հերովդէի արքայի. Ահա մոգք յարեւելից եկին յԵմ. Եւ ասեն ուր է որ ծնաւ արքայն հրէից. զի տեսաք զաստղն նորա յարեւելս. եւ եկաք երկիր պագանել նմա։

Եւ իբրեւ լուաւ արքա հերովդէս խռովեցաւ եւ ամ Եէմ ընդ նմա.

Եւ ժողովեալ զամ քահանայապետս. եւ զդպիրս ժողովրդեանն հարցանէր ՚ի նոցանէ. թէ ուր ծնանիցի Քս.

Եւ նոքա ասեն ցնա, ՚ի բեթղեհէմ հրէաստանի։

Զի այսպէս գրեալ է ՚ի ձեռն մարգարէին. Եւ դու բեթղեհէմ երկիր յուդա ոչ ինչ կրտսեր ես յիշխանս յուդա. ՚ի քէն ելցէ ինձ իշխան. որ հովուեսցէ զժողովուրդ իմ իէլ։

Ղ
Ժ
Յայնժամ հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն եւ ստուգեաց ՚ի նոցանէ զժամանակ աստեղն երեւելոյ։

Եւ արձակեաց զնս ՚ի բեթղեհէմ. ասէ, գնացէք եւ ստուգեցէք վս մանկանն. եւ յորժամ գտանիցէք ազդ արարէք ինձ, զի եւ ես եկեալ

եր

մ ե
մ ձք
մ բ



երկիրպագից նմա ։
Եւ նոքա իբրեւ լուան
ի թագաւորէն, գնացին ։
եւ ահա աստղն զոր տե
սին յարեւելս առաջնոր
դեաց նոցա մինչեւ եկ
եալ եկաց ի վ͞ր ուր էր
մանուկն ։
՚Իբրեւ տեսին զաստղն ·
խնդացին յոյժ յուրա
խութ͞ի մեծ ։
Եւ իբրեւ մտին ՚ի տունն
տեսին զմանուկն հան
դերձ մարիամաւ մարբն
իւրով, եւ անկեալ երկիր
պագանէին նմա ։
Եւ բացեալ զգանձս
իւրեանց մատուցին նմա
պատարագս ոսկի եւ կնդ
րուկ եւ զմուռս ։
Եւ հրաման առեալ ՚ի
տեսլեան չդառնալ ան
դրէն առ հերովդէս ·
ընդ այլ ճանապարհ
գնացին յաշխարհն իւր
եանց ։

Եւ իբրեւ գնա
ցին նոքա ան
տի · ահա հրեշ
տակ Տեառն երեւիւր
՚ի տեսլեան յօվսէփու
եւ ասէր · արի, առ զմա
նուկդ եւ զմայր իւր եւ
փախիր յեգիպտոս · եւ
անդ լինիջիր ցորժամ
ասացից քեզ · քանզի ՚ի
խնդիր է հերովդէս կո
րուսանել զմանուկդ ։
Եւ նա յարուցեալ էառ
զմանուկն եւ զմայր իւր
գիշերի · եւ գնաց յեգիպ
տոս, եւ անդ էր մինչեւ
ցվախճանն հերովդէի ։
Զի լցցի ասացեալն ՚ի
Տ͞է ՚ի ձեռն մարգարէին
որ ասէ · յեկիպտոսէ կո
չեցի զորդի իմ ·

Յայ

Բ Յայնժամ իբրեւ ետես Հերովդէս թէ խաբեցաւ ՚ի մոգուց անտի. բարկացաւ յոյժ, եւ առաքեալ կոտորեաց զամ մանկունսն որք էին ՚ի Բեթղեհէմ եւ յամ սահմանս նորա յերկեմենից եւ ՚ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց ՚ի մոգուցն ։

Յայնժամ կատարեցաւ ասացեալն ՚ի ձեռն Երեմիայի մարգարէին. որ ասէ ։

Ձայն գուժեաց ՚ի Հռամա. ողբումն եւ լալումն եւ աշխարումն յոյժ. Հռաքէլ լայր զորդիս իւր եւ ոչ կամէր մխիթարել զի ոչ էին ։

Եւ ՚ի վախճանել Հերովդէի, ահա հրեշտակ Տեառն ՚ի տեսլեան երեւիւր յովսեփայ յեգիպտոս. Եւ ասէր արի՛ առ զմանուկդ եւ զմայր իւր եւ գնա՛ յերկիրն Իլի. զի մեռան որք խնդրէին զանձն մանկանդ ։

Եւ նա յարուցեալ էառ զմանուկն եւ զմայր նորա. եւ եկն յերկիրն Իլի ։

Եւ իբրեւ լուաւ եթէ Արքեղայոս թագաւորեաց Հրէաստանի փոխանակ Հերովդէի հօրն իւրոյ երկեաւ երթալ անդր ։

Եւ հրաման առեալ ՚ի տեսլեան. գնաց ՚ի կողմանս Գալիլեացւոց ։

Եւ եկեալ բնակեցաւ ՚ի քաղաքին որ կոչի Նազարէթ. զի լցցի բանն մարգարէին. թէ Նազովրեցի կոչեսցի ։

Է
Գ
Գ. Յաւուրսն յայնո
սիկ դայ յոհան
նէս մկրտիչ քա
րոզել . յանապատին հրէ
աստանի . Եւ ասել .
ապաշխարեցէք զի մեր
ձեալ է արքայութին
երկնից ։
Բ
Ա Զի սա է նա որոյ ա
սացաւ ՚ի ձեռն եսայ
եայ մարգարէի . որ ասէ ։
Ձայն բարբառոյ յանա
պատի . պատրաստ արա
րէք զճանապարհ տն,
և ուղիղ արարէք զշա
ւիղս նորա ։
Թ Եւ ինքն յոհաննէս ու
Զ նէր զհանդերձ ՚ի ստեւոյ
ուղտու . և զգօտի մաշ
կեղէն ընդ մէջ իւր,
և կերակուր նր էր մա
րախ և մեղր վայրենի .
Յայնժամ ելանէին առ
նա ամենայն երուսաղէմ
և հրէաստան . և ամ
կողմն յորդանանու . Եւ
մկրտէին ՚ի նմանէ ՚ի յոր
դանան , և խոստովան
լինէին զմեղս իւրեանց ։
Ժ Եւ տեսեալ զբազումս
Ե ՚ի սադուկեցւոցն և ՚ի
փարիսեցւոցն եկեալս ՚ի
մկրտութի նր ասէ ցնո
սա , ծնունդք իժից ո՛
եցոյց ձեզ փախչել ՚ի
բարկութէն որ դա
լոցն է ։
Արարէք այսու հետև
զպտուղ արժանի ապաշ
խարութե ։
Եւ մի համարիցէք ա
սել յանձինս թէ ու
նիմք մեք հայր զաբրա
համ , ասեմ ձեզ , զի կա
րող է ած ՚ի քարանցս
յայսցանէ յարուցանել
որդիս աբրահամու ։

Ի.  Զի սա

Մ Մր Ղ Յ
Է . Ղ Բ Ի Ե
Ը Բ Է Ժ
Թ Դ : Ձ

Մ Ղ
Ճ Ձ

Ո՛չ է ահաւասիկ տապար
առ արմին ծառոց դնի.
ամ ծառ որ ոչ առնէ
զպտուղ բարի. հատա
նի և'ի հուր արկանի։
ժա Ա Ես մկրտեմ զձեզ ջրով
յապաշխարութի, բայց
որ զկնի իմ գայ հզօրա
գոյն է քան զիս, և ես
չեմ պատական բառնա
լոյ զկօշիկս նր նա մկր
տեսցէ զձեզ 'ի հոգին
սբ և 'ի հուր։
ժբ Ե Որոյ հեծանոցն 'ի ձե
ռին իւրում, և սրբես
ցէ զկալ իւր, և ժողո
վեսցէ զցորեանն 'ի շտե
մարանս իւր, և զյարդն
այրեսցէ անշէջ հրով։
ժգ Ժ Յայնժամ գայ յս 'ի գա
լիլէէ 'ի յորդանան առ
յոհաննէս մկրտել 'ի նմա
նէ.
Եւ յոհաննէս արգելու
զնա և ասէ, ինձ պիտոյ է
'ի քէն մկրտիլ, և դու
առ իս՞ գաս։
Պատասխանի ետ յս և
ասէ ցնա թոյլ տուր
այժմ, զի այսպէս վայե
լէ մեզ լնուլ զամենայն
արդարութի։
Եւ ապա թոյլ ետ նմա.
ժդ Ա Եւ իբրև մկրտեցաւ
յս ել վաղվաղակի 'ի
ջրոյ անտի, և ահա բա
ցան նմա երկինք, և
ետես զհոգին աստու
ծոյ զի իջանէր իբրև
զաղաւնի, և գայր իվր
նորա։
Եւ ահա ձայն յերկնից
որ ասէր, դա է որդի իմ
սիրելի. ընդ որ հաճեցայ։
ժե Բ Յայնժամ վարե
ցաւ յս յանա
պատ 'ի հոգւոյն
փոր

| մ | մկ | ղ | յ |
|---|---|---|---|
| ժա | գ | ժ | ը.ժգ.ժդ.իբ |
| ժբ | . | ժա | |
| ժգ | . | . | |

| մ | մկ | ղ | յ |
|---|---|---|---|
| ժդ | ե | ժգ | ժէ |
| ժե | զ | ժդ | . |



փորձեալ 'ի սատանայէ ։ Եւ պահեալ զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր ապա քաղցեաւ ․ Եւ մատուցեալ փորձիչն ասէ ցնա եթէ որդի ես այ՟ ասա զի քարինքս այսոքիկ հաց լինիցի ։

Նա պատասխանի ետ եւ ասէ ․ գրեալ է թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ , այլ ամ՟ բանիւ որ ելանէ 'ի բերանոյ այ՟ ։ Յայնժամ առեալ ածէ զնա սատանայ 'ի քաղաքն սբ՟ , եւ կացուցանէ զնա ի վր՟ աշտարակի տաճարին ։

Եւ ասէ ցնա եթէ որդի ես այ՟ արկ զքեզ աստի 'ի վայր , զի գրեալ է ․ թէ հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վն՟

մ մր ղ յ
ժղ ։ ղծ ։

քոյ , եւ 'ի վր՟ ձեռաց բարձցեն զքեզ զի մի երբեք հարցես զքարի զոտն քո ․ ասէ ցնա դարձեալ յս՟ գրեալ է թէ ոչ փորձեսցես զտր՟ած՟ քո ։ Դարձեալ առեալ ածէ զնա սատանայ 'ի լեառն մի բարձր յոյժ , եւ ցուցանէ նմա զամ՟ թագաւորութիւս աշխարհի , եւ զփառս նոցա ։

Եւ ասէ ցնա ․ զայս ամ՟ քեզ տաց եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ ․ Յայնժամ ասէ ցնա յս՟ երթ յետս իմ սատանայ ․ զի գրեալ է ․ տեառն այ՟ քում երկիրպագցես , եւ զնա միայն պաշտեսցես ։

ժե Ապա եթող զնա սատանայ ։

Եւ ահա հրեշտակք մատեան ,

մ մր յ
ժե է ։

մեան, և պաշտէին
զնա ։

ժը Դ Եւ իբրև լուաւ
յս՟ եթէ յոհան
նէս մատնե
ցաւ մեկնեցաւ և գնաց
՚ի գալիլեայ ։
ժթ Ե Եւ թողեալ զնազա
րէթ. եկն և բնակեցաւ
ի կափառնայում. ՚ի ծով
եզերին. ՚ի սահմանս
զաբուղոնի. և նեփթա
ղիմա ։
Զի լցցի բանն որ ա
սացաւ ՚ի ձեռն եսայ
եայ մարգարէի ։
Երկիր զաբուղոնի, և
երկիր նեփթաղիմայ
ճանապարհ ծովու յայն
կոյս յորդանանու. գա
լիլեայ հեթանոսաց.
ժթ Ժողովուրդ որ նստէր
՚ի խաւարի ետես զլոյս

մեծ. և որոց նստէին ԲԲ
յաշխարհին և ՚ի ստ
ուերս մահու լոյս ծա
գեցաւ նոցա ։
ի Զ Յայնմ հետէ սկսաւ քա
րոզել յս՟ և ասել. ապաշ
խարեցէք. զի մերձեալ
է արքայութիւն երկնից ։
Մինչդեռ գնայր յս՟
ընդ եզր ծովուն գալիլ
եացւոց ետես զերկուս
եղբարս. զսիմոն զկոչե
ցեալն պետրոս և զան
դրէաս եղբայր նր՟ որ
կեալ զուռկան ՚ի ծովն
քանզի ձկնորսք էին ։
իա Բ Եւ ասէ ցնոսա. եկայք
զկնի իմ. և արարից զձ
ձեզ որսորդս մարդկան ։
Եւ նոքա թողեալ վաղ
վաղակի զգործիսն գնա
ցին զհետ նորա ։
իբ Զ Եւ մատուցեալ անտի
յառաջ ետես զայլ եր
կուս

մ մր յ
ժը ը իէ
ժթ ; ժթ լբ լէ

մ մր ղ
ի թ ;
իա ժ ;
իբ ժա լէ

կուս եղբարս . զՅակով բոս զԶեբեդեա , և զՅով հաննէս զեղբայր նորա 'ի նաւի զԶեբեդեաւ հան դերձ հարբն իւրեանց . մինչ կազմէին զուռկա նս իւրեանց , և կոչեաց զնոսա :

Նոցա թողեալ վաղվա ղակի զնաւն և զհայրն իւրեանց գնացին զհետ նորա :

ԻԳ Ա Դ Եւ շրջէր յմ ընդ ամ կողմն Գալիլեացւոց . ուսուցանէր 'ի ժողո վուրդս նոցա և քարո զէր զաւետարանն ար քայութեան և բժշկէր զամ ախտս 'ի ժողովր դեանն :

Եւ ել լուր նր ընդ ամ երկիրն ասորւոց :

Եւ մատուցին առ նա զամ հիւանդս որք նե ղեալ էին 'ի պէսպէս ցաւս և 'ի տանջանս , և զդիւահարս , և զլուս նոտս , և զանդամալոյծս և բժշկեաց զնս :

Եւ երթային զհետ նո րա ժողովուրդք բա զումք . 'ի Գալիլեէ , և 'ի Դեկապօլեայ , և յէմ , և 'ի Հրէաստանէ , և յայնկոյս յորդանանու , և բժշկեաց զնոսա :

ԻԴ Ժ Ետեսեալ զժ ժողովուրդսն ել 'ի լեառն . ԵԴ

Եւ իբրև նստաւ անդ մատեան առնա աշա կերտք նորա :

ԻԵ Ե Ա Եւ բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա , և ասէր :

Երանի աղքատաց հո գւով զի նոցա է ար քայու

քայութին երկնից ։
ԻԶ Ե Երանի սգաւորաց զի
նոքա մխիթարեսցեն ։
ԻԷ Դ Երանի հեզոց զի նոքա
ժառանգեսցեն զերկիր ։
ԻԸ Ե Երանի որք քաղցեալք
և ծարաւիք իցեն ար
դարութեան զի նոքա յա
գեսցին ։
ԻԹ Դ Երանի ողորմածաց զի
նոքա զողորմութիւն
գտցեն ։
Երանի այնոցիկ որք
սուրբք են սրտիւք ։ զի
նոքա զԱծ տեսցեն ։
Երանի խաղաղարարաց
զի նոքա որդիք Աստու
ծոյ կոչեսցին ։
Երանի որք հալածեալք
իցեն վն արդարութե
զի նոցա է արքայութին
երկնից ։
Լ Ե Երանի է ձեզ յորժամ
նախատիցեն զձեզ, և
հալածեսցեն, և ասի
ցեն զամենայն բան չար
զձէնջ սուտ վասն իմ ։
Ցնծացէք և ուրախ լե
րուք ։ զի վարձք ձեր բա
զումք են յերկինս ։
Զի այսպէս հալածե
ցին զմարգարէսն ։ որք
յառաջ քան զձեզ էին ։ —Հ
ԼԱ Բ Դուք էք աղ երկրի ։
ապա թէ աղն անհամե
ցի և յաղիցի ։ ոչ իմիք
ազդիցէ այնուհետև ։
բայց եթէ ընկենուլ
արտաքս, և կոխան լի
նիլ ՚ի մարդկանէ ։
ԼԲ Բ Դուք էք լոյս աշխար
հի ։ ոչ կարէ քաղաք
թաքչել որ ի վր լերին
կայցէ ։ Եւ ոչ լուցա
նեն զճրագ, և դնեն
ընդ գրուանաւ, այլ
ի վերայ աշտանակի, և
լոյս տայ ամենեցուն
որք

| Մ | Յհ | Ղ |
|---|---|---|
| ԻԶ | . | ԽԶ |
| ԻԷ | . | . |
| ԻԸ | . | ԽԵ |
| ԻԹ | . | . |
| Լ | . | ԽԸ |

| Մ | Մր | Ղ |
|---|---|---|
| ԼԱ | ԴԺ | ԾԳԵ |
| ԼԲ | ԼԹ | ՀԹ ՃԼԳ |

որք 'ի տանն իցեն .
Այսպէս լուսաւորես-
ցի լոյս ձեր առաջի
մարդկան . որպէս զի
տեսցեն զգործս ձեր
բարիս , և փառաւորես-
ցեն զՀայր ձեր որ յեր-
կինս է .

Մի՛ համարիք ե բդ-
ԼԴ Ժ թէ եկի լու-
ծանել զօրէնս
կամ զմարգարէս , ոչ
եկի լուծանել այլ լնուլ .
ԼԵ Ե Զի ամէն ասեմ ձեզ
մինչև անցցեն երկինք
և երկիր յովտ մի՛ . որ
նշանախեց մի՛ է . ոչ
անցցէ յօրինացն և 'ի
մարգարէիցն մինչև ա-
մենայն եղիցի ։
ԼԶ Ժ Որ ոք լուծցէ մի՛ ինչ
'ի պատուիրանացս յայս-
ցանէ 'ի փոքունց , և ու-
սուցանէ այնպէս զմար-
դիկ . փոքր կոչեսցի յար-
քայութեանն երկնից .
Իսկ որ արասցէ , և
ուսուսցէ նա մեծ կո-
չեսցի յարքայութեանն
երկնից .
Բայց ասեմ ձեզ . զի
եթէ ոչ առաւելցի ար-
դարութիւն ձեր աւե-
լի քան զդպրացն և զփա-
րիսեցւոցն . ոչ մտանի-
ցէք յարքայութիւն երկ-
նից ։
Լուարուք զի ասացաւ
առաջնոցն . թէ մի՛ սպա-
նաներ . զի որ սպանանի-
ցէ պարտական լիցի դա-
տաստանի ։
Այլ ես ասեմ ձեզ .
եթէ ամ՟ որ բարկանայ
եղբօր իւրում տարա-
պարտուց պարտաւոր լի-
ցի դատաստանի .

Եւ

Մ Ղ
ԼԴ .
ԼԵ ՃԼԴ
ԼԶ .

Եւ որ ասիցէ ցեղբայր
իւր յիմար. պարտաւոր
լիցի ատենի.
Եւ որ ասիցէ ցեղբայր
իւր մորոս. պարտաւոր
լիցի գեհենին հրոյն։
Եթէ մատուցանիցես
զպատարագ քո ՚ի սեղա
նոյ, և անդ յիշես
ցես. եթէ եղբայր քո
ունի ինչ զխէթ զքէն.
Թող զպատարագն քո ա
ռաջի սեղանոյն, և երթ
նախ հաշտեաց ընդ եղ
բօր քում, և ապա ե
կեալ մատուսջիր զպա
տարագն քո։
ԼԴ Ե Լեր իրաւախոհ ընդ
ոսոխի քում վաղվաղոյն.
մինչ դեռ իցես ընդ
նմա ՚ի ճանապարհի.
գուցէ մատնիցէ զքեզ
ոսոխն դատաւորի. և
դատաւորն դահճի, և
արկանիցիս ՚ի բանտ.
Ամէն ասեմ քեզ ոչ ելա
նիցես անտի. մինչև
հատուցանիցես զյետին
նաքարակիտն։
ԼԵ Ժ Լուարուք զի ասացա
մի՛ շնար։
Բայց ես ասեմ ձեզ.
թէ ամ որ հայի ՚ի կին
մարդ առ ՚ի ցանկանա
լոյ նմա, անդէն շնացա
ընդ նմա ՚ի սրտի իւրում
Եթէ ակն քո աջ գայ
թակղեցուցանէ զքեզ
խլեա զնա. և ընկեա ՚ի
քէն. զի լաւ է քեզ եթէ
մի՛ յանդամոց քոց կորի
ցէ, և մի՛ ամենայն մար
մինդ քո անկանիցի ՚ի
գեհեն։
Եւ եթէ աջ ձեռն քո
գայթակղեցուցանէ զը
քեզ, հատ զնա, և ըն
կեա ՚ի քէն, զի լաւ է
քեզ

Մ . Ղ
ԼԴ . ՃԿԲ

Մ
ԼԵ

քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո արկանիցի 'ի գեհեն։

Ապաքէն ասացաւ եթէ որ արձակիցէ զկին իւր տացէ նմա զարձակմանն։

Բայց ես ասեմ ձեզ. եթէ ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան նա տայ նմա շնալ. և որ զարձակեալն առնու շնայ.

Դարձեալ լուարուք. զի ասացաւ առաջնոցն մի՛ երդնուցուս սուտ. բայց հատուսցես տն զերդմունս քո։

Այլ ես ասեմ ձեզ ամենևին մի՛ երդնուլ. մի՛ յերկինս զի աթոռ է աստուծոյ։

Եւ մի՛ յերկիր զի պատուանդան է ոտից նր և մի՛ յԵրէմ. զի քաղաք է մեծի թագաւորի. Եւ մի՛ 'ի գլուխ քո երդնուցուս զի ոչ կարես մազ մի՛ սպիտակ առնել կամ թուխ։

Այլ եղիցի ձեր բանն այոն, այո, և ոչն ոչ. զի աւելին քան զայն 'ի չարէն է։

Լուարուք զի ասացաւ. ակն ընդ ական, և ատամն ընդ ատաման։

Այլ ես ասեմ ձեզ մի՛ կալ հակառակ չարի։

լը Ե Այլ եթէ որ ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո դարձո՛ նմա և զմիւսն։

Եւ որ կամիցի դատել և առնել զշապիկ քո. թող նմա և զբաճկոն քո։

լթ Ժ Եւ որ տարապարհակ



մ ղ
լը ծգ
Թ .

վարիցէ զքեզ մղոն մի . երթ ընդ նմա և եր կուս .

Որ ոք խնդրէ 'ի քէն տուր , և որ կամի փոխ առնուլ 'ի քէն մի' դար ձուցաներ զերեսս ։

Լուարուք ապաքէն զի ասացաւ . սիրեսցես զընկեր' քո' և ատեսցես զթշնամին քո ։

խբ
ե
Սակ ես ասեմ ձեզ սի րեցէք զթշնամիս ձեր , բարի արարէք ատելեաց ձերոց , և աղօթս արա րէք ի վերա այնոցիկ որք լլկեն զձեզ և հալածեն ։ Զի եղիջիք որդիք հօր ձերոյ որ յերկինս է , զի զարեգակն իւր ծա գէ ի վերա չարաց և բա րեաց , և ածէ անձրև ի վերա արդարոց և մեղաւորաց ։

խա
ե
Զի եթէ սիրիցէք զայնոսիկ , որք սիրեն ըզ ձեզ . զինչ վարձք իցեն . ոչ ապաքէն և մաքսա ւորք զնոյն գործեն ։ Եւ եթէ տացէք միայն ողջոյն բարեկամաց ձե րոց զինչ աւելի առնէք , ոչ ապաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գոր ծեն . արդ եղերուք դուք կատարեալք . որ պէս և հայրն ձեր երկ նաւոր կատարեալ է ։

խգ
ժ
Զգոյշ լերուք բն
ողորմութեան ձերում մի' առ նել առաջի մարդկան , ոմ' թէ 'ի ցոյց ինչ նո ցա , դուցէ և վարձս ոչ ընդունիցիք 'ի հօրէն ձերմէ որ յերկինս է . Նա յորժամ առնիցես

զո

ղորմութի՛, մի՛ հարկաներ փող առաջի քո որպէս կեղծաւորքն առնեն ՚ի ժողովուրդս և ՚ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին ՚ի մարդկանէ։

Ամէն ասեմ ձեզ այն իսկ են վարձք նոցա։

Այլ դու յորժամ ողորմութի առնիցես, մի՛ գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո։

Որպէս զի եղիցի ողորմութին քո ՚ի ծածուկ, և Հայրն քո որ տեսանէ ՚ի ծածուկ. հատուսցէ քեզ յայտնապէս։

Եւ յորժամ յաղօթս կայցէք, մի՛ լինիցիք որպէս կեղծաւորքն, զի սիրեն ՚ի ժողովուրդս և յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս. որպէս զի երևեսցի մարդկան։

Ամէն ասեմ ձեզ այն իսկ են վարձք նոցա։

Այլ դու յորժամ կայցես յաղօթս, մուտ ՚ի սենեակ քո, և փակեա զդուրս քո, և կաց յաղօթս առ Հայր քո ՚ի ծածուկ, և Հայրն քո, որ տեսանէ ՚ի ծածուկ հատուսցէ քեզ յայտնապէս։

Խզ Ե Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շատախօսք լինիք իբրև զհեթանոսս զի համարին եթէ ՚ի բազում խօսից իւրեանց լսելի լինիցին։

Մի՛ նմանիցէք նոցա, զի գիտէ Հայրն ձեր, զինչ պիտոյ է ձեզ մինչ չև ձեր խնդրեալ ինչ իցէ ՚ի նմանէ։

Եւ արդ այսպէս կացէք

Հ մք
Ե– ձէ։

ցէք դուք յաղօթս :
Հայր մեր որ յերկինս
ես, սուրբ եղիցի անուն
քո :
Եկեսցէ արքայութիւն
քո, եղիցին կամք քո որ
պէս յերկինս և յերկրի :
Զհաց մեր հանապազ
որդ տուր մեզ այսօր ։
Եւ թող մեզ զպարտիս
մեր որպ և մեք թողումք
մերոց պարտապանաց :
Եւ մի՛ տանիր զմեզ 'ի
փորձութիւն, այլ փրկեա՛
զմեզ 'ի չարէ, զի քո է
արքայութիւն և զօրութիւն
և փառք յաւիտեանս :
ԽԴ Զի եթէ թողուցուք
Զ մարդկան զյանցանս նո
ցա, թողցէ և ձեզ հայրն
ձեր երկնաւոր զյանցա
նս ձեր ։ ապա թէ ոչ թո
ղուցուք մարդկան ըզ
յանցանս նոցա, և ոչ

հայրն ձեր երկնաւոր
թողցէ ձեզ զյանցանս
ձեր :
ԽԵ Եւ յորժամ պահիցէք
Ժ մի՛ լինիք իբրև զկեղ
ծաւորսն տրտմեալք,
որք ապականեն զերեսս
իւրեանց ։ որպէս զի եր
և եսցին մարդկան թէ
պահիցեն :
Ամէն ասեմ ձեզ այն
իսկեն վարձք նոցա :
Այլ դու յորժամ պա
հիցես, օծ զգլուխ քո, և
լուա զերեսս քո :
Զի մի՛ երևեսցիս
մարդկան իբրև զպա
հօղ, այլ հօրն քում 'ի
ծածուկ, և հայրն քո
որ տեսանէ 'ի ծածուկ
հատուսցէ քեզ :
Մի՛ գանձէք ձեզ գան
ձս յերկրի, ուր ցեց և
ուտիճ ապականեն, և
ուր

ուր գողք ական հատա
նեն, և գողանան.
խզ Ե Այլ գանձեցէք ձեզ
գանձս յերկինս. ուր ոչ
ցեց և ոչ ուտիճ ապա
կանեն, և գողք ական
հատանեն և գողանան.
Զի ուր գանձք ձեր
են, անդ և սիրտք ձեր
եղիցին.

խէ Ե Ճրագ մարմնոյ քո
ակն է, եթէ
ակն քո առատ
է. ամենայն մարմինդ
լուսաւոր եղիցի. ապա
եթէ ակն քո չար է ա
մենայն մարմինդ խաւա
րին եղիցի. իսկ արդ ե
թէ լոյսդ որ 'ի քեզ է
խաւար է խաւարն որ
չափ և ս.
խը Ե Ոչ ոք կարէ երկուց տե
րանց ծառայել. կամ
զմինն ատիցէ, և զմիւսն
սիրիցէ. կամ զմինն մե
ծարիցէ, և զմիւսն ար
համարհիցէ, ոչ կարէք
աստուծոյ ծառայել և
մամոնայի.
խթ Ե Վասն այդորիկ ասեմ
ձեզ մի՛ հոգայք վասն
ոգւոց ձերոց, զինչ ու
տիցէք, և մի՛ վն մար
մնոց ձերոց թէ զինչ
ագանիցիք, ոչ ապաքէն
ոգի առաւել է քան զկ
կերակուր և մարմին
քան զհանդերձ.
Հայեցարուք 'ի թռ
չունս երկնից զի ոչ վա
րեն, և ոչ հնձեն, և ոչ
ժողովեն 'ի շտեմարանս
և հայրն ձեր երկնաւոր
կերակրէ զնս, ոչ ապա
քէն դուք առաւել էք
քան զնոսա.
Իսկ արդ ո՛ 'ի ձէնջ առ 'ի
հո

| Մ | Ղ |
|---|---|
| խզ | ճծզ |
| խէ | ճլէ |
| խը | ճղը |
| խթ | ճծ |

հոգալ իւրում յաւելուլ
կարիցէ 'ի հասակ իւր
զկանգուն մի ։
Եւ վասն հանդերձի զի՞
հոգայք . հայեցարուք
'ի շուշանն վայրենի ոպ՟
աճէ . ոչ ջանայ եւ ոչ նիւ-
թէ . ասեմ ձեզ զի եւ ոչ
սողոմոն յամ՟ փառսն իւ-
րում զգեցաւ իբրեւ զմի
'ի նոցանէ ։
Իսկ եթէ զխոտն վայ
րի որ այսօր է , եւ վա
ղիւն 'ի հնոց արկանի .
ած՟ այնպէս զգեցուցանէ
որ չափ եւս առաւել ըզ
ձեզ թերահաւատք ։
Մի՛ այսու հետեւ հո
գայցէք , եւ ասիցէք ,
զինչ կերիցուք կամ
զինչ արբցուք , կամ զինչ
զգեցցուք . զի զայդ ամ՟
հեթանոսք խնդրեն
քանզի գիտէ հայրն ձեր
երկնաւոր թէ պիտոյ է
ձեզ այդ ամ՟ ։
Խնդրեցէք նախ զար
քայութիւն աստուծոյ
եւ զարդարութ՟ի նր՟ , եւ
այդ ամ՟ յաւելցի ձեզ ։
Մի՛ այսու հետեւ հո
գայցէք վս՟ վաղուին զի
վաղիւն վս՟ իւր հոգաս
ցէ . շատ է աւուրն չար
իւր ։

ծ
Թ Մի՛ դատէք զի մի՛ ըէ
դատիցիք . զի
որով դատաս
տանաւ դատէք դատե
լոց էք , եւ որով չափով
չափէք , չափեսցի ձեզ ։
ծա Զի՛ տեսանէք զշիւղ
Ե յական եղբօր քո , եւ 'ի
քում ականդ զգերանդ
ոչ տեսանես ։
Կամ զի արդ ասես ցեղ
բայր քո թող հանից ըզ
շիւղդ

մ մր ղ
ծ խա ծզ
ծա . ծէ

շիւղդ յականէ քումմէ,
եւ ահաւասիկ ՚ի քում
ականդ գերան կայ։
Կեղծաւոր · հան նախ
զգերանդ յականէ քում
մէ, եւ ապա հայեսցիս
հանել զշիւղն յականէ
եղբօր քո։
ԾԲ Մի տայք զսրբութիւն
Ժ շանց եւ մի՛ արկանէք զմ
մարգարիտս ձեր առաջի
խոզաց · զի մի՛ առոտն
կոխեսցեն զնոսա, եւ
դարձեալ երդիծուցա
նիցեն զձեզ։
ԾԳ Խնդրեցէք, եւ տացի
Ե ձեզ · հայցեցէք եւ գտ
ջիք · բախեցէք, եւ բաց
ցի ձեզ ·
Զի ամ որ խնդրէ,
առնու · եւ որ հայցէ,
գտանէ, եւ որ բաղխէ,
բացցի նմա։
Ո՞վ իցէ ՚ի ձէնջ մարդ
զոր խնդրեսցէ որդին իւր
հաց, միթէ քար տացէ
նմա։
Կամ խնդրեսցէ ձուկն,
միթէ օձ տացէ նմա։
Արդ եթէ դուք որք
չարքդ էք գիտէք պար
գեւս բարիս տալ որդւոց
ձերոց · որ չափ եւս առ
աւել հայրն ձեր որ յեր
կինս է տացէ բարիս
այնոցիկ որք խնդրեն
ԾԴ զնա · զամ որ միանգամ
Ե կամիջիք թէ արասցեն
ձեզ մարդիկ այնպէս ա
րարէք եւ դուք նոցա ·
զի այն իսկ են օրէնք եւ
մարգարէք ·
ԾԵ Մտէք ընդ նեղ դուռն
Ե քանզի ընդ արձակ է
դուռն եւ համարձակ
ճանապարհն որ տանի ՚ի
կորուստ, եւ բազումք
են որք մտանեն ընդ նա։
Որան

| Մ | Ղ |
|---|---|
| ԾԲ | · |
| ԾԳ | ՃԻԵ |

| Մ | Ղ |
|---|---|
| ԾԳ | ԾԴ |
| ԾԵ | ՃՀ |

Բանզի անձուկ է դուռն, և նեղ ճանապարհ որ տանի 'ի կեանս և սակաւք են որք գտանեն զնա։

ՀԶ Ժ Զգուշ լերուք 'ի սուտ մարգարէից որք գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց և 'ի ներքոյ են գայլք յափշտակօղք. 'ի պտղոյ նոցա ծանիջիք զնա։

ՀԷ Ե Միթէ քաղիցեն 'ի փշոյ խաղող կամ 'ի տատասկէ թուզ։

ՀԸ Ե Այնպէս ամ ծառ բարի պտուղ բարի առնէ, և ծառ չար պտուղ չար առնէ։

Ոչ կարէ ծառ բարի զպտուղ չար առնել, և ոչ ծառ չար զպտուղ բարի առնել։

Ամենայն ծառ որ ոչ առնէ զպտուղ բարի. հատանի և 'ի հուր արկանի.

Ապա 'ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա։

ՀԹ Գ Ոչ ամենայն որ ասէ ցիս Տր Տր. մտցէ յարքայութիւն երկնից. այլ որ առնէ զկամս հօր իմոյ որ յերկինս է։

Ձ Ե Բազումք ասիցեն ցիս յաւուր յայնմիկ Տր Տր ոչ յանուն քո մարգարէացաք, և յանուն քո դևս հանաք, և յանուն քո զօրութիւնս բազումս արարաք։

Եւ յայնժամ ասացից ցնոսա եթէ ոչ երբէք գիտէի զձեզ. 'ի բաց կացէք յինէն ամենեքեան որք գործէք զանօրէնութի։

Ձա Ե Ամենայն որ լսէ զբանս

իմ

| Մ | Ղ |
|---|---|
| ՀԶ | . |
| ՀԷ | Կա |
| ՀԸ | Կ |

| Մ | Ղ | Յ |
|---|---|---|
| ՀԹ | ԿԴ | ՃԺԶ |
| Ձ | ՃՀա | . |
| Ձա | ԿԴ | . |

իմ զայսոսիկ, և առնէ
զսոսա նմանեսցի առն ի
մաստնոյ. որ շինեաց զտ
տուն իւր ի վր̅ վիմի.
Իջին անձրևք, և խա
ղացին գետք շնչեցին
հողմք և բախեցին զտ
տունն և ոչ կործանե
ցաւ. քանզի իվր̅ վիմի
հաստատեալ էր:
Եւ ամ̅ որ լսէ զբանս
իմ զայսոսիկ և ոչ առնէ
զսոսա. նմանեսցի առն
յիմարի որ շինեաց զտուն
իւր իվր̅ աւազոյ. Իջին
անձրևք յարեան գետք
շնչեցին հողմք հարին
զտունն և անկաւ. և էր
կործանումն նորա մեծ
յոյժ:
ԻԵ Եւ եղև իբրև կատար
Բ եաց. յս̅ զամ̅ զբանս
զայսոսիկ զարմանային
ժողովուրդքն ընդ վար
Դ

մ մր ղ
կե ժդ դ.իդ

դապետութի̅ նորա:
Զի իբրև իշխանութե̅
ուսուցանէր և ոչ որ
պէս դպիրքն և փարի
սեցիքն:

կգ
Բ
Ը Եւ իբրև էջ
'ի լեռնէ ան
տի. գնացին
զկնի նորա ժողովուրդք
բազումք:
Եւ ահա մատուցեալ
բորոտ, մի երկիր պագա
նէր նմա և ասէր. տէր
եթէ կամիս կարող ես
զիս սրբել:
Ձգեաց զձեռն իւր և
հասոյց 'ի նա յիսուս և
ասէ, կամիմ սրբեաց.
և վաղվաղակի սրբեցաւ
'ի նմանէ բորոտութի̅ն:
Եւ ասէ ցնա յիսուս
զգուշ լեր մի' ումեք ասի
ցես. այլ երթ ցոյց զանձն
քո

մ մր ղ
կգ ժա ևթ

քո քահանային · և մա
տո՛ զպատարագն · զոր
հրամայեաց Մովսէս ՚ի
վկայութիւն նոցա :
կդ Եւ մտեալ ՚ի կափառ
Գ Նաում, մատեաւ առ նա
Լ հարիւրապետ մի՛, աղա
չէր զնա :
Եւ ասէր, Տէր մանուկն
իմ անկեալ կայ ՚ի տան
անդամալոյծ չարաչար
տանջեալ :
Ասէ ցնա Յիսուս · Ես
եկից և բժշկեցից զնա:
Պատասխանի ետ հա
րիւրապետն և ասէ, Տէր
չեմ բաւական եթէ ընդ
յարկաւ իմով մտցես,
այլ ասա՛ բանիւ, և բժշ
կեսցի մանուկն իմ ·
քանզի և ես այր մի եմ
ընդ իշխանութեամբ · ունիմ
ընդ իւև զինուորս, ա
սեմ սմա երթ, և եր
թա · և այլում թէ եկ,
և գայ · և ծառայի իմ
թէ արա՛ զայս, և
առնէ :
Իբրև լուաւ Յիսուս
զարմացաւ և ասէ ցայ
նոսիկ որք զհետն եր
թային, ամէն ասեմ ձեզ
և ոչ յԻսրայէլի այսպիսի
հաւատս գտի երբէք :
կե Բայց ասեմ ձեզ · զի
Ե բազումք յարևելից և
յարևմտից եկեսցեն և
բազմեսցին ընդ Աբրա
համու և ընդ Իսահա
կայ և ընդ Յակոբայ յար
քայութեան երկնից · և
որդիքն արքայութեան ել
ցեն ՚ի խաւարն արտա
քին · անդ եղիցի լալ և
կրճել ատամանց :
կզ Եւ ասէ Յիսուս ցհար
Ե իւրապետն երթ և որ
պէս հաւատացերդ ,
եղի

Մ Ղ Յ
կդ կե լե

Մ Ղ
կե ռհր
կզ կզ

երկեցի քեզ :
Եւ ողջացաւ մանուկն
նորա յաւուր յայնմիկ :
կե Եւ եկեալ Յիսուս ՚ի
բ տունն պետրոսի , ետես
Ր զի զոքանչ նորա անկեալ
դնէր տապացեալ :
Կալաւ զձեռանէ նորա
եւ եթող զնա ջերմն .
յոտն եկաց եւ պաշտէր
զնա :
Թ Իբրեւ երեկոյ եղեւ մա
տուցին առ նա դիւա
հարս բազումս , եւ եհան
զայսսն բանիւ , եւ զամ
հիւանդսն բժշկեաց :
Զի լցցի բանն որ ասա
ցաւ ձեռն Եսայեայ մար
գարէի , նա զհիւան
դութիւնս մեր վերացոյց եւ
զցաւս մեր եբարձ :
Տեսեալ Յիսուսի զժողով
ուրդս բազումս զիւր եւ
հրամայեաց երթալ յայն
կոյս :

մ մբ զ
կե ժե ԻԶ

կը Եւ մատուցեալ դպիր
Ե մի՛ ասէ ցնա , վարդա
Ժ պետ եկից եւ ես զկնի
դկ քո յոր վայր եւ երթիցես :
Ասէ ցնա Յս . աղուե
սուց որջք գոն եւ թռչ
նոց երկնից բոյնք . այլ
որդւոյ մարդոյ ոչ գոյ ,
ուր դիցէ զգլուխ իւր :
Եւ մի ոմն յաշակերտաց
նր ասէ . Տր տուր ինձ
հրաման զի երթայց նախ
թաղեցից զհայրն իմ :
Ասէ ցնա Յս եկ զկնի
իմ , եւ թոյլ տուր մեռե
լոցն թաղել զմեռեալս
իւրեանց :
կթ Եւ իբրեւ եմուտ ՚ի
բ նաւն . գնացին զկնի նր
ԺԱ աշակերտքն նր . եւ ա
հա շարժումն մեծ եղեւ
՚ի ծովուն . մինչեւ նա
ւուն ծածկել յալեաց
անտի . եւ ինքն ննջէր :
Եւ

մ մբ զ
կբ . ճն
կթ խե ճգ

Եւ մատուցեալ աշա
կերտքն յարուցին զնա
և ասեն. Տ̅ր փրկեա՛ ըզ
մեզ զի կորնչիմք ։
Եւ ասէ ցնոսա ընդ էր
վատասիրտք էք սակա
ւա հաւատք ։
Յայնժամ յարուցեալ
սաստեաց հողմոցն և
ծովուն, և եղև խաղա
ղութի̅ մեծ ։
Եւ մարդիկն զարմա
ցան, և ասէին. որպիսի
ոք իցէ սա զի և հողմք
և ծով հնազանդին սմա։
ԺԲ Եւ իբրև եկն յայն
կոյս յերկիրն գերգեսա
ցւոց պատահեցան նմա
դիւահարք երկու ել
եալք 'ի գերեզմանացն
չարաչարք յոյժ. որպէս
զի չէր հնար անցանել
ումեք ընդ այն ճանա
պարհ. և ահա աղաղա

կեցին և ասեն. զի՛ կայ
մեր և քո յ̅ս որդի աս
տուծոյ. եկիր տարա
ժամ տանջել զմեզ։
Եւ էր հեռագոյն 'ի
նոցանէ երամակ մի՛ խո
զից արօտական ։
Եւ դևքն աղաչէին
զնա և ասէին. եթէ հա
նես զմեզ աստի, հրաման
տուր մեզ երթալ յերա
մակ խոզիցն ։
Եւ ասէ ցնոսա երթայք.
Եւ նոքա ելեալ գնա
ցին յերամակն խոզից,
և դիմեաց ամենայն երա
մակն 'ի դարէ անտի 'ի
ծով և մեռան 'ի ջուրսն
և խոզարածքն փախ
եան, և երթեալ 'ի
քաղաքն պատմեցին զա̅մ
և զիրս դիւահարացն ։
Եւ ահա ամենայն քա
ղաքն ել ընդ առաջ յի̅,
իբրև

իբրեւ տեսին զնա. աղա
չէին, զի գնասցէ 'ի սահ
մանաց նոցա։

Եւ մտեալ 'ի
նաւ էանց
յայնկոյս եւ եկն
'ի քաղաքն իւր։
հ Եւ ահա մատուցին առ
Ա
Ժ.Գ. նա անդամալոյծ մի, որ
դնէր 'ի մահճի։
Եւ տեսեալ յիսուսի ըզ
հաւատս նոցա, ասէ ցան
դամալոյծն թողեալ լի
ցին քեզ մեղք քո։
Եւ ահա ոմանք 'ի դպ
րացն ասէին ընդ միտս
հայհոյէ դա։
Եւ ծանուցեալ յս՟ ըզ
խորհուրդս նց՟ ասէ ցնս՟.
ընդէր խորհիք դուք
չարիս 'ի սիրտս ձեր.
զինչ դիւրին է ասել,
թողեալ լիցին քեզ մեղք

քո. թէ ասել՝ արի եւ
շրջեաց։
Բայց զի գիտասջիք եթէ
իշխանութի՟ ունի որդի
մարդոյ յերկրի թողուլ
զմեղս. յայնժամ ասէ
ցանդամալոյծն, արի առ
զմահիճս քո եւ երթ 'ի
տուն քո։
Եւ յարուցեալ գնաց
'ի տուն իւր. իբրեւ տե
սին ժողովուրդքն, զար
մացան. եւ փառաւոր
առնէին զած՟ զտուիչն
այնպիսի իշխանութե՟
մարդկան։
հա
Բ
Ժ.Գ. Եւ անցեալ ընդ
այն յս՟ եւս
ետես
զայր մի' զի նըս գէ
տէր 'ի մաքսաւորութե՟
մատթէոս անուն. եւ
ասէ ցնա եկ զ կնի իմ,
հբ
Բ Եւ յարուցեալ գնաց
զկնի

մ մբ զ յ
ե է լէ լը

ճ մբ զ
հա իա լբ
հբ իբ լթ.ձձզ

զկնի նորա ։

Եւ եղև իբրև բազմեալ էր նա ՚ի տան, և ահա բազում մաքսաւորք և մեղաւորք եկեալ և բազմեալ էին ընդ յիսուսի և ընդ աշակերտս նր ։

Իբրև տեսին փարիսեցիքն ասեն ցաշակերտս նր, ընդէր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր ։

հգ Բ Իսկ յս իբրև լուաւ ասէ ցնս. ոչ պիտոյ է բժիշկ կարողաց այլ հիւանդաց։

Երթայք, ուսարուք զինչ է. զողորմութիւն կամիմ, և ոչ զզոհ, զի ոչ եկի կոչել զարդարս այլ զմեղաւորս ։

Յայնժամ մատեան առ նա աշակերտքն յոհաննու և ասեն. ընդէր մեք և փարիսեցիքն պահեմք յաճախ և քո աշակերտքդ ոչ պահեն ։

Ասէ ցնոսա յս, մի թէ մարթ ինչ իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ մինչ փեսայն ընդ նոսա իցէ. այլ եկեսցեն աւուրք յորժամ բարձցի ՚ի նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն ։

Ոչոք արկանէ կապերտ անթափ ի վր հնացեալ ձորձոյ. զի առնու ելանէ զլրութին նորա ՚ի հանդերձէն, և ևս չար պատառումն լինի ։

Եւ ոչոք արկանէ զգինի նոր ՚ի տիկս հինս. ապա թէ ոչ տիկքն պատառին և գինին հեղանի, և տիկքն կորնչին ։

այլ

Մ մբ դ
հգ իգ ի

այլ արկանեն զգինի նոր
՚ի տիկս նորս և երկոքինն
պահին ։

ՀԴ
Բ
ԺԱ Մինչ դեռ նա զդ-
այս խօսէր
ընդ նս ահա
իշխան մի՛ մատուցեալ
երկիր պագանէր նմա և
ասէր դուստր իմ արդ
ևս վախճանեցաւ ․ այլ
եկեալ դիցես զձեռն քո
՚ի վերայ նորա և կեցցէ ։
Յարեաւ յս և գնաց
զկնի նորա աշակերտօքն
հանդերձ ։
ԺԲ ․Օ Եւ ահա կին մի՛ տե-
ռատես երկոտասան ա-
մեայ մատուցեալ յետոյ
մերձեցաւ ՚ի դրօշակս
հանդերձի նորա ։
Քանզի ասէր ՚ի միտս
իւրում ․ թէ միայն մեր-
ձենամ ՚ի հանդերձս նո-

Մ Մր Ղ
ՀԴ ԽԹ ՁԵ

րա փրկիմ ։
Իսկ յս իբրև դարձաւ
և ետես զնա ասէ , քա-
ջալերեաց դուստր հա-
ւատք քո կեցուցին ըզ-
քեզ , փրկեցաւ կինն ․
՚ի ժամէն յայնմանէ ։
Իբրև եկն յիսուս ՚ի
տունն իշխանին , և ետես
զփողահարսն և զամբոխ
յոյժ , ասէ ցնոսա ի բաց
գնացէք ։
Զի ոչ եթէ մեռեալ
է աղջիկդ այլ ննջէ , և
ծաղր առնէին զնա ։
Եւ իբրև ել ամբոխն
ի բաց , եմուտ կալաւ
զձեռանէ նորա , և յար-
եաւ աղջիկն ։
Եւ ել համբաւս այս
ընդ ամենայն երկիրն
ընդ այն ։

Եւ



Եւ մինչ դեռ ԴԴ
ՀԵ անցանէր ընդ
Ժ այն յս. զհետ
ԺԱ եղեն նորա կոյրք երկու
աղաղակէին և ասէին.
ողորմեաց մեզ որդի
դաւթի։
Եւ իբրև եկն ՚ի տուն.
մատեան առ նա կոյրքն։
Եւ ասէ ցնոսա յս. հա
ւատայք, եթէ կարող
եմ առնել ձեզ զայդ։
Ասեն ցնա այո տր. յայն ՀԴ
ժամ մերձեցաւ յաչս նո Բ
ցա և ասէ, ըստ հաւա
տոց ձերոց եղիցի ձեզ
և բացան աչք նոցա։
Եւ սաստեաց նոցա յս
և ասէ. զգուշ կացէք մի
ոք գիտասցէ։
Եւ նոքա ելեալ համ
բաւեցին զնա ընդ ամե ՀԵ
նայն երկիրն ընդ այն։ Զ

ԺԲ Եւ յելանելն նոցա ար
տաքս ահա մատուցին
առ նա զայր մի համր
դիւահար։
Եւ յելանել դիւին խօ
սեցաւ համրն։
Եւ զարմացան ժողո
վուրդքն, և ասեն, թէ
և ոչ երբէք երևեցաւ
այսպիսի ինչ յիէլ։
Իսկ փարիսեցիքն ասէ
ին, թէ իշխանաւն դի
ւաց հանէ դա զդևս։
Եւ շրջէր յս ընդ ամե Դե
նայն քաղաքս և ընդ
գիւղս ուսուցանէր ՚ի
ժողովուրդս նոցա, և
քարոզէր զաւետարանն
արքայութե, և բժշկէր
զամ ախտս, և զամ հի
ւանդութիւն ՚ի ժողովր
դեանն։
Եւ տեսեալ զժողովուրդ
սն գթացաւ ՚ի նս, զի
էին

Մ
ՀԵ

Մ Ղ Ղ
ՀԴ ԾԲ ՃԿԹ
ՀԵ ԿԵ

էին աշխատեալք իբրեւ զոչխարս. որոց ոչ իցէ հովիւ։

հէ Ե Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր. հունձք բազում են եւ մշակք սակաւք. արդ աղաչեցէք զտէր հնձոց զի հանցէ մշակս ՚ի հունձս իւր.

* *

ՀԹ Բ Ժ.Թ. Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասան աշակերտսն իւր, ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա, եւ բժշկել զամ ախտս եւ զամ հիւանդութիւնս։

Ճ Բ Եւ առաքելոցն երկոտասանից էին անուանք այսոքիկ. առաջինն սիմոն անուանեալն պետրոս, եւ անդրէաս եղբայր նր. յակոբոս զեբեդեայ եւ յոհաննէս եղբայր նր. փիլիպպոս եւ բարդուղիմէոս. թովմաս եւ մատթէոս մաքսաւոր. յակոբոս աղփեայ եւ ղեբէոս, որ անուանեցաւ թադէոս. սիմոն կանանացի, եւ յուդա իսկարիովտացի որ եւ մատնեաց զնա։

Ճա Ժ Զնոսա երկոտասանսն առաքեաց յս պատուիրեաց նց, եւ ասէ. ՚ի ճանապարհս հեթանոսաց մի երթայցէք, եւ ՚ի քաղաքս սամարացւոց մի մտանիցէք.

Այլ երթայք առաւել առ ոչխարս կորուսեալս տանն իէլի։

Եւ իբրեւ երթայցէք քարոզեցէք եւ ասացէք թէ մերձեալ է արքայութիւնն երկնից.

Եւ ... Զ հի

Մ Մր Ղ
ՀԲ . ՃԲ
ՀԹ ԻԹ ՃԴ
Ճ Ը ԽԴ

Մ
Ճա

ձը Բ Զհիւանդս բժշկե
ցէք, զբորոտս սրբեցէք
զդեւս հանէք, ձրի
առէք եւ ձրի տուք։
Մի՛ ստանայք ոսկի եւ
մի՛ արծաթ եւ մի՛ պղինձ
՚ի գօտիս ձեր. մի՛ պարկ
՚ի ճանապարհի. եւ մի՛
երկուս հանդերձս, մի՛
կօշիկս, մի՛ ցուպս, զի
արժանի է մշակն կերակ
րոյ իւրոյ։
ձգ Բ Յոր քաղաք մտանիցէք
կամ ՚ի գեօղ. հարցանի
ցէք թէ ո՛ է ՚ի նմա ար
ժանի, եւ անդ լինիջիք
մինչեւ ելանիցէք անտի։
ձդ Ե Եւ իբրեւ մտանիցէք ՚ի
տունն. ողջոյն տայջիք
նմա եւ ասասջիք, ողջոյն
տանս այսմիկ։
Եւ եթէ իցէ տունն ար
ժանի, եկեսցէ ողջոյնն
ձեր ի վե՟ նո՟. ապա թէ
ոչ իցէ արժանի. ողջոյնն
ձեր առ ձեզ դարձցի.
ձե Բ Եւ որ ոչ ընկալցի զձ
ձեզ, եւ ոչ լուիցէ բա
նից ձերոց ՚իբրեւ ելանի
ցէք ՚ի տանէն կամ ՚ի
քաղաքէն յայնմանէ.
Թօթափեսջիք զփոշին
յոտից ձերոց. ամէն ա
սեմ ձեզ դիւրագոյն լի
ցի երկրին սոդոմացւոց
եւ գոմորացւոց յաւուրն
դատաստանի քան քաղ
քին այնմիկ։
ձզ Ե Ահաւասիկ ես առա դ-զ
քեմ զձեզ իբրեւ զոչ
խարս ՚ի մէջ գայլոց, եղե
րուք այսու հետեւ խո
րագէտք իբրեւ զօձս.
եւ միամիտք իբրեւ զա
ղաւնի։
ձէ Ա Զգոյշ լինիջիք ՚ի մարդ
կանէ, զի մատնեսցեն
զձեզ յատեանս եւ ՚ի
ժո

| Մ | Մր | Ղ | |
|---|---|---|---|
| ձը | ծգ | ձե.ՃԺ | |
| ձգ | ծգ | ՃԺը.ՃԺ | |
| ձդ | . | ՃԺա | |

| Մ | Մր | Ղ | Յ |
|---|---|---|---|
| ձե | ծե | ձը.ՃԺգ. | |
| ձզ | . | ՃԹ | . |
| ձէ | ՃԼԹ | ՃԵ | ՃԿա.ՃԿէ |

ժողովուրդս իւրեանց
տանջեսցին զձեզ ։
Եւ առաջի դատաւո
րաց եւ թագաւորաց
տանիցեն զձեզ վն իմ
'ի վկայութի նոցա եւ
հեթանոսաց ։
ՂԸ Բ Այլ յորժամ մատնես
ցեն զձեզ ․ մի' հոգայց
էք թէ ոպ կամ զինչ խօ
սիցիք ․ զի ոչ եթէ դուք
իցէք որք խօսիցիք ․ այլ
հոգին հօր ձերոյ որ խօ
սիցի 'ի ձեզ ։
Մատնեսցէ եղբայր
զեղբայր 'ի մահ եւ հայր
զորդի, եւ յառնիցեն որ
դիք իւրց հարց եւ սպա
նանիցեն զնս ․ եւ եղի
ջիք ատեցեալք յամենե
ցունց վն անուան իմոյ ։
Իսկ որ համբերեսցէ
իսպառ, նա կեցցէ ։
ՂԹ Ժ Եւ յորժամ հալածեսցեն
զձեզ 'ի քաղաքիս
յայսմիկ փախիջիք յայլ,
եւ եթէ յայնմանէ հա
լածիցեն զձեզ, փախի
ջիք 'ի միւսն ։
Ամէն ասեմ ձեզ ոչ
սպառեսջիք զքաղաքս
Իղի մինչեւ եկեսցէ որ
դի մարդոյ ։
Ճ Գ Ոչ է աշակերտ առա
ւել քան զվարդապետ,
եւ ոչ ծառայ քան զտր
իւր, շատ իցէ աշակեր
տին եթէ եղիցի իբրեւ
զվարդապետ իւր, եւ ծա
ռային իբրեւ զտր իւր ․
ՃԱ Ժ Եթէ զտանուտէրն բե
եղզեբուղ կոչեցին ․ որ
չափ եւս առաւել զըն
տանիս նորա ։
Մի՛ այսուհետեւ երկնի
ջիցիք 'ի նոցանէ ։
ՃԲ Բ Զի ոչինչ է 'ի ծա
ծուկ որ ոչ յայտնեսցի
եւ

| Մ | Մր | Ղ | Յ |
| --- | --- | --- | --- |
| ՂԸ | ՃԽԱ | ՃԽԸ | ՃԾԱ |
| ՂԹ | Ը | Ը | Ը |

| Մ | Մր | Ղ | Յ |
| --- | --- | --- | --- |
| Ղ | · | ԾԸ | ՃԿԸ. ՃԿԹ. |
| ՃԱ | · | · | · |
| ՃԲ | Ի | Ձ | Ե |

և գաղտնի, որ ոչ ծա
նիցի ։
ՂԳ Ե Զոր ասեմ ձեզ ՚ի խա
ւարի ասացէք ՚ի լոյս,
և զոր լսէք յունկանէ,
քարոզեցէք ՚ի վերայ տա
նեաց ։ և մի՛ երկնչիք
յայնցանէ որք սպանա
նեն զմարմին, և զոգի
ոչ կարեն սպանանել ։
Այլ երկերուք դուք
առաւել յայնմանէ որ
կարող է զոգի և զմար
մին կորուսանել ՚ի գե
հեննի ։
Ոչ ապաքէն երկու
ճնճղուկ դանկի միոջ
վաճառին և մի՛ ՚ի նոցա
նէ յերկիր ոչ անկցի ա
ռանց Հօր ձերոյ ։
Այլ ձեր և ամենայն
խուկ հեր գլխոյ թուեալ
է ։ և արդ մի երկնչի
ցիք զի լաւէք քան ըզ
բազում ճնճղուկս ։
Ամենայն որ խոստովա
նեսցի զիս առաջի մարդ
կան ։ խոստովանեցայց
և ես զնմանէ առաջի
Հօր իմոյ որ յերկինս է ։
ՂԴ Բ Նա որ ուրասցի զիս ա
ռաջի մարդկան ։ ուրա
ցայց և ես զնա առաջի
Հօր իմոյ որ յերկինս է ։
ՂԵ Ե Մի՛ համարիք եթէ
եկի արկանել զխաղա
ղութիւն յերկիր, ոչ եկի
արկանել զխաղաղութիւն
այլ զսուր ։
Քանզի եկի քակել
զայր ՚ի հօրէ իւրմէ և
զդուստր ՚ի մօրէ իւր
մէ, և զհարսն ՚ի սկեսու
րէ իւրմէ ։
ՂԶ Ե Եւ թշնամիք առն ըն
տանիք իւր ։
Որ սիրէ զհայր կամ ըզ
մայր առաւել քան զիս
ոչ

| Մ | Մր | Ղ | Յ |
|---|---|---|---|
| ՂԳ | . | Ճխե | . |

| Մ | Մր | Ղ | Յ |
|---|---|---|---|
| ՂԴ | ծԿ | Ճխզ | ՂԷ |
| ՂԵ | . | ՃԿ | . |
| ՂԶ | . | Ճծբ | ԺԹ |

ոչ է ինձ արժանի ։
Եւ որ սիրէ զուստր
կամ զդուստր առաւել
քան զիս , չէ ինձ ար
ժանի ։
Եւ որ ոչ առնու զխաչ
իւր եւ գայ զհետ իմ · չէ
ինձ արժանի ։
ղէ Որ գտանէ զանձն իւր
Գ կորուսցէ զնա , եւ որ կո
րուսցէ զանձն իւր վն
իմ գտցէ զնա ։
ղը Որ ընդունի զձեզ · զիս
Ա ընդունի · եւ որ զիս ըն
դունի , ընդունի զառա
քիչն իմ ։
ղթ Որ ընդունի զմարգա
Ժ րէ յանուն մարգարէի ,
զվարձս մարգարէի առ
ցէ ։
Եւ որ ընդունի զար
դար յանուն արդարոյ
զվարձս արդարոյ առցէ ։
ճ
Զ Եւ որ արբուսցէ միում
՚ի փոքրկանցս յայսցա
նէ բաժակ մի՛ ջուր
ցուրտ միայն յանուն
աշակերտի · ամէն ա
սեմ ձեզ ոչ կորուսցէ
զվարձս իւր ։
ճա Եւ եղեւ իբրեւ դէ
Ժ կատարեաց յս
զպատուէր եր
կոտասանից աշակեր
տացն իւրոց · գնաց
անտի քարոզել եւ ու
սուցանել ՚ի քաղաքս
նոցա ։
ճբ Իսկ յովհաննէս իբրեւ
Ե լուաւ ՚ի բանտին զգոր
ծսն քի · առաքեաց ի
ձեռն աշակերտացն իւ
րոց · եւ ասէ ցնա , դու
ես որ գալոցն ես · եթէ
այլում ակն կալցուք ։
Պատասխանի ետ յս եւ
ասէ ցնոսա · գնացէք
եւ

| Մ | Մր | Ղ | Յ |
|---|---|---|---|
| ղէ | · | մժա | · |
| ղը | ղզ | ճժզ·խ·ճժա·ճի·ճլա | |
| ղթ | · | · | · |
| ճ | ղը | · | · |

| Մ | Ղ |
|---|---|
| ճա | · |
| ճբ | կթ |

և պատմեցէք յոհան
նու. զոր լուայք և
տեսէք։
Կոյրք տեսանեն. կաղք
գնան, բորոտք սրբին,
և խուլք լսեն, և մե
ռեալք յառնեն, և աղ
քատք աւետարանին.
և երանեալ է որ ոչ
գայթակղեսցի յիս։
և իբրև նոքա գնացին
սկսաւ յս֊ ասել ցժողո
վուրդն զյոհաննու։
Զինչ ելէք տեսանել
յանապատին, եղէգն շար
ժուն ՚ի հողմոյ։
Այլ զինչ ելէք տեսա
նել մարդ ՚ի հանդերձս
փափկութեան զարդա
րեալ.
Ահաւասիկ որք զփա
փուկսն զգեցեալք են
՚ի տունս թագաւորաց
են։

Այլ զինչ ելէք տեսա
նել. մարգարէ, այո՛ ա
սեմ ձեզ և առաւել ևս
քան զմարգարէ.
ճգ Զի սա է վասն որոյ
բ գրեալ է, ահա ես առա
քեցից զհրեշտակ իմ ա
ռաջի երեսաց քոց որ
պատրաստեսցէ զճանա
պարհս քո առաջի քո։
ճդ Ամէն ասեմ ձեզ չէ յա
ե րուցեալ ՚ի ծնունդս
կանանց մեծ քան զյո
հաննէս մկրտիչ։
ճե Բայց փոքրիկն յարքայ
ե ութեան երկնից մեծ է
քան զնա։
Բայց յաւուրցն յոհան
նու մկրտչի մինչև ցայ
ժմ արքայութիւն երկնից
բռնադատի, և բռնա
ւորք յափշտակեն զնա.
ճզ Բանզի ա՜մ օրէնք և մար
ժ գարէք մինչև ցյոհան
նէս

| | | |
|---|---|---|
| Մ | Մր | Ղ |
| ճգ | ա | ղ |
| ճդ | . | հա |
| ճե | . | ճղգ |
| ճզ | . | . |

նէս մարգարէացան ։
Եւ թէ կամիք ընդու
նել, նա է եղիա որ գա
լոցն է ։
Որ ունիցի ականջս լսե
լոյ, լուիցէ ։
ճե Ում նմանեցուցից զազ
Ե գս զայս, նման է մանկ
տւոյ, որք նստիցեն ՚ի
հրապարակս . կարդայ
ցեն զնկերս իւրեանց,
և ասիցեն . փողս հա
րաք ձեզ և ոչ կաքաւե
ցէք . ողբացաք ձեզ և
ոչ կոծեցիք ։
Եկն յովհաննէս . ոչ ու
տէր և ոչ ըմպէր . և
ասեն դև գոյ ՚ի նմա ։
Եկն որդի մարդոյ ու
տէ և ըմպէ . և ասեն .
ահա այր կերող և ար
բեցող . բարեկամ մաք
սաւորաց և մեղաւո
րաց . և արդարացաւ ի

մ ղ
ճե հց

մաստութի յորդւոց իւ
րոց ։
ճը Յայնժամ սկսաւ նա
Ե խատել զքաղաքսն յորս
եղեն բազում զօրու
թիւք նորա և ոչ ապաշ
խարեցին ։
Վայ քեզ քորազին .
վայ քեզ բեթսայիդայ ։
Զի եթէ ՚ի տիւրոս
և ՚ի սիդոն եղեալ էին
զօրութիւքն որք ՚ի քեզ
եղեն, վաղուեւս արդ
եօք խորգով և մոխրով
ապաշխարեալ էին ։
Բայց ասեմ ձեզ . դիւ
րադոյն լիցի երկրին տիւ
րոսի և սիդոնի յաւ
ուրն դատաստանի քան
ձեզ ։
Եւ դու կափառնաում
մի՛ մինչև յերկինս բարձ
րացիս, այլ մինչև ՚ի
դժոխս իջցես ։
Զի

գ ղ
ճը ծժե

ՃԹ Ո՛վ եթէ ՚ի Սոդոմ
Ժ եղեալ էին զօրութիւնքն
որք ՚ի ձեզ եղեն, ապա
քէն կային եւ մինչեւ
ցայսօր։
Բայց ասեմ ձեզ եթէ
երկրին Սոդոմացւոց դիւ-
րագոյն լիցի յաւուրն
դատաստանի քան ձեզ։

ՃԺ Յայնմ ժամանա-
Ե կի պատասխանի
ետ Յս եւ ասէ։
Գոհանամ զքէն Հայր
Տր երկնի եւ երկրի.
զի ծածկեցեր զայս ՚ի
իմաստնոց եւ ՚ի գիտնոց
եւ յայտնեցեր տղայոց.
այո Հայր, զի այսպէս հա-
ճոյ եղեւ առաջի քո։
ՃԺԱ Ամենայն ինչ տուաւ
Գ ինձ ՚ի Հօրէ իմմէ։
ՃԺԲ Եւ ոչ ոք ճանաչէ զՈր-
Գ դի եթէ ոչ Հայր, եւ
ոչ զՀայր ոք ճանաչէ
եթէ ոչ Որդի, եւ ում
Որդին կամիցի յայտնել։
ՃԺԳ Եկայք առ իս ամ վաս-
Ժ տակեալք եւ բեռնա-
ւորք եւ ես հանգուցից
զձեզ. առէք զլուծ իմ
՚ի ձեզ, եւ ուսարուք յի-
նէն զի հեզ եմ, եւ խո-
նարհ սրտիւ, եւ գտջիք
ԴԿ հանգիստ անձանց ձե-
րոց. զի լուծ իմ քաղցր
է եւ բեռն իմ փոքրոգի։

ՃԺԴ Յայնժամ գնաց ԴԷ
Բ Յս ընդ արտո-
րայսն նոցա ՚ի
շաբաթու, եւ աշակերտ-
քն նորա քաղցեան, եւ
սկսան հասկ կորզել եւ
ուտել։
Փարիսեցիքն իբրեւ տե-
սին ասեն ցնա, ահա
աշակերտքն քո

Մ Ղ Յ
ՃԹ . .
ՃԺ ՃԺԸ .
ՃԺԱ ՃԿԹ Ա. ՃԺԳ. ՃԽԸ
ՃԺԲ ՃԿԹ Ը. ԽԳ. ԿԱ. ՀՉ. ՃԵ. ԶԹ
ՃԽԶ. ՃԾԶ.

Մ Մր Ղ
ՃԺԳ . .
ՃԺԴ ԻԴ ԻԱ

գործեն, զոր ոչ է՛ օրէն
'ի շաբաթու ։
Եւ նա ասէ ցնոսա • ոչ
իցէ ընթերցեալ ձեր
զոր արար Դաւիթ • յոր
ժամ քաղցեաւն • և
որք ընդ նմայն էին ։
Զիարդ եմուտ 'ի
տունն աստուծոյ և ե
կեր զհացն առաջաւո
րութե՟ն, զոր ոչ էր օրէն
նմա ուտել, և ոչ որոց
ընդ նմայն էին • բայց
միայն քահանայից ։
ՃԺԵ Կամ թէ չիցէ ընթեր
Ժ ցեալ յօրէնս, զի 'ի շա
բաթս քահանայքն 'ի
տաճարին պղծեն զշա
բաթն և անմեղք են •
բայց ասեմ ձեզ զի մեծ
քան զտաճարն է՛ աստ ։
Եւ եթէ գիտէիք զինչ
է զողորմութի՟ կամիմ,
և ոչ զզոհ • ապա ոչ դա
Զ.

տապարտէիք զուք
զանպարտսն ։
Զի տէր է շաբաթու
որդի մարդոյ ։ —
ՃԺԶ Եւ գնացեալ անտի յա
Բ եկն 'ի ժողովուրդն նո
ԻԸ.
ցա ։
Եւ անդ էր այր մի •
որոյ ձեռն գօսացեալ
էր, հարցին ցնա և ասեն •
եթէ պարտ իցէ 'ի շա
բաթու բժշկել, զի չա
րախօսեսցեն զնմանէ ։
Եւ նա ասէ ցնոսա •
ով է 'ի ձէնջ մարդ •
որոյ իցէ ոչխար մի՛, և
անկանիցի այն 'ի խոր
խորատ 'ի շաբաթու,
մի՛ թէ ոչ ունիցի և յա
րուցանիցէ զնա ։
Իսկ արդ որ չափ ևս ա
ռաւել է մարդ քան զոչ
խար, ապա ուրեմն պարտ
է 'ի շաբաթու բարիս
գոր

գործել :
Յայնժամ ասէ ցայրն, ձգեա զձեռն քո, և նա ձգեաց, և եղև ողջ ի բերև զմիւսն :
ճժե Իսկ փարիսեցիքն ել
դ եալ արտաքս խոր հուրդ առին զնմանէ. թէ որպէս կորուսցեն զնա: Եւ յիս գիտաց, մեկնեցաւ անտի :
ճժը Եւ գնացին զհետ նր
ժ ժողովուրդքն և բժշկեաց զամենեսեան :
Եւ սաստեաց նոցա զի մի՛ յայտնեսցեն զնմա նէ ումեք. զի լցցի, որ ասացաւն ի ձեռն Եսայեայ մարգարէի :
Ահա մանուկ իմ զոր ընտրեցի, և սիրելի իմ ընդ որ հաճեցաւ անձն իմ. եդից զոգի իմ ի նր և իրաւունս հեթանոսաց պատմեսցէ :
Ոչ հակառակեսցի և ոչ աղաղակեսցէ, և ոչ ոք լուիցէ ի հրապարակս զբարբառ նորա. զեղէգն ջախջախեալ ոչ փշրեսցէ, և զպատրոյգն առկայծեալ ոչ շիջուսցէ. մինչև հանցէ ի յաղթութի զդատաստան. և յանուն նորա հեթանոսք յուսասցին :
ճժթ
ե
ԻԲ Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր և համր, և բժշկեաց զնա, որպէս զի համրն և կոյրն խօսէր և տեսանէր : դգ
ճի Զարմացան ամ ժողո
ե վուրդքն և ասեն. մի թէ սա իցէ քնի որդի դաւ

| մ | ժ | ղ | յ |
|---|---|---|---|
| ճժե | իղ | . | ՟ղգ.՟ղե |
| ճժը | . | . | . |

| մ | ղ | յ |
|---|---|---|
| ճժթ | ճիղ | . |
| ճի | . | ժբ |

դաւթի ։
ճկա Բայց փարիսեցիքն ի
բ բրեւ լուան ասեն, ոչ
իւիք հանէ դա զդեւս ե
թէ ոչ բէեղզեբուղաւ
իշխանաւն դիւաց ։
ճկբ Իբրեւ գիտաց յս̃ զխոր
բ հուրդս նոցա ասէ ցնո
սա․ ամենայն թագաւո
րութիւն բաժանեալ
յանձն իւր աւերի, և
ամ̃ քաղաք կամ տուն
բաժանեալ յանձն իւր
ոչ կացցէ ։
Եւ եթէ սատանայ ըզ
սատանայ հանէ, յանձն
իւր բաժանեցաւ․ արդ
զի արդ կացցէ թագա
ւորութի̃ նորա ։
Եւ եթէ ես բէեղզե
բուղաւ հանեմ զդեւս
որդիքն ձեր իւ հանի
ցեն․ վս̃ այնորիկ նոքա
եղիցին ձեր դատաւորք ։

մ մր ղ
ճիա լբ ճիզ
ճիբ լգ ճիթ

Ապա թէ հոգւովն̃ աս
տուծոյ հանեմ զդեւս․
ուրեմն հասեալ է իվե
րայ ձեր արքայութի̃ն
աստուծոյ ։
Կամ զիարդ կարէ ոք
մտանել ի տուն հզօրի
և զգործիս նորա յափշ
տակել․ եթէ ոչ նախ
կապիցէ զհզօրն, և ա
պա զտուն նորա յափշ
տակիցէ ։
Որ ոչ ընդ իս է հակա
ռակ իմ է, և որ ոչ ժո
ղովէ ընդ իս ցրուէ ։
ճկգ Վս̃ այդորիկ ասեմ ձեզ,
բ ամ̃ մեղք և հայհոյու
թիւնք թողցին մարդկան․
բայց հոգւոյն հայհոյ
ութի̃ մի՛ թողցի ։
Եւ որոք ասիցէ բան
զորդւոյ մարդոյ թողցի
նմա․ բայց որ զհոգւոյն
սրբոյ ասիցէ մի՛ թողցի
նմա ։

մ մր ղ
ճկգ լգ ճխէ

նմա, մի՛ լոյսն աշխար
հի, և մի՛ 'ի հանդերձե
լումն :
ՃԻԴ Ժ Կամ արարէք զծառն
բարի և զպտուղ նորա
բարի, կամ արարէք ըզ
ծառն չար և զպտուղ
նորա չար, քանզի 'ի պտ
ղոյ անտի ծառն ճա
նաչի :
Ծնունդք իժից, զի՞ արդ
կարիցէք բարիս խօսիլ
որք չարքդ էք, քանզի
'ի յաւելուածոյ սրտի
խօսի բերան :
ՃԻԵ Ե Մարդ բարի 'ի բարի
գանձուց սրտի իւրոյ
հանէ զբարիս, և մարդ
չար 'ի չար գանձուց սր
տի իւրոյ հանէ զչարիս :
ՃԻԶ Ժ Բայց ասեմ ձեզ . Թէ
ընդ ամ դատարկ բանի
զոր խօսիցին մարդիք,
տացեն համարս յա

| | |
|---|---|
| Մ | Ղ |
| ՃԻԴ | . |
| ՃԻԵ | ԿԲ |
| ՃԻԶ | : |

ւուրն դատաստանի . զի
'ի բանից քոց արդարա
ցիս, և 'ի բանից քոց
պարտաւորեսցիս :

ԻԳ
ՃԻԷ Ե Յայնժամ պա դդ
տասխանի ե
տուն նմա ո
մանք 'ի դպրացն և 'ի
փարիսեցւոց և ասեն,
վարդապետ կամիմք
նշան ինչ տեսանել 'ի
քէն :
ՃԻԸ Ե Նա պատասխանի ետ
և ասէ ցնոսա, ազգ չար
և շնացող նշան խնդրէ,
և նշան մի՛ տացի նմա .
բայց նշանն յօնանու
մարգարէի :
Զի որպէս էր յօնան 'ի
փոր կիտին զերիս տիւս
և զերիս գիշերս, այն
պէս եղիցի և որդի մար
դոյ 'ի սիրտ երկրի զե
րիս

| | |
|---|---|
| Մ | Ղ |
| ՃԻԷ | ՃԸ |
| ՃԻԸ | ՃԾ |

րիս տիւս և զերիս գի
շերս ։
Արք նինուէացիք յարի
ցեն 'ի դատաստանի
ընդ ազգիս ընդ այս
միկ, և դատապարտես
ցեն զսա, զի զղջացան 'ի
քարոզութեն յօնանու ։
Եւ արդ աւասիկ
մեծ քան զյօնան է
աստ ։
Դշխոյն հարաւոյ յարի
ցէ 'ի դատաստանի ընդ
ազգիս ընդ այսմիկ և
դատապարտեսցէ զսա.
զի եկն 'ի ծագաց եր
կրի լսել զիմաստութին
սողոմոնի ։
Եւ ահա մեծ քան զսո
ղոմոն է աստ ։
ՃԿԹ Ե Յորժամ այսն պիղծ
ելանէ 'ի մարդոյ, շրջի
ընդ անջրդիս տեղիս,
խնդրէ հանգիստ և ոչ
գտանէ . յայնժամ ասէ
դարձայց 'ի տուն իմ
ուստի ելի, և եկեալ
գտանէ զնա պարա
պրտ մաքրեալ և յար
դարեալ . յայնժամ եր
թայ և առնու ընդ իւր
եօթն այլ այսս չարա
գոյնս քան զինքն, և մտ
եալ բնակին անդ . և
լինի մարդոյն այնորիկ
յետինն չար քան զառա
ջինն ։
Նոյնպէս եղիցի և ազ
գիս այսմիկ չարի ։
ՃԼ Բ Մինչդեռ նա ընդ ժո
ղովուրդսն խօսէր . ահա
մայր նորա և եղբարք
նորա կային արտաքոյ
և խնդրէին խօսել ընդ
նմա ։
Եւ ասէ ոմն ցնա ահա
մայր քո և եղբարք քո
կան արտաքոյ և խն
դրեն

մ ՃԿԹ ղ ՃԼ

մ ՃԼ մր ԼԷ ղ ՀԲ

դիրեն խօսել ընդ քեզ ։
Նա պատասխանի ետ այնմիկ որ ասացին ցնա, և ասէ, ով են իմ եղբարք ։
Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտսն ասէ, ահա մայր իմ և եղբարք իմ ։
Զի որ առնիցէ զկամս հօր իմոյ որ յերկինսն է, նա է իմ եղբայր և քոյր և մայր ։

ճլթ
բ
ԽԴ. Յաւուր յայնմիկ ելեալ յիսուս ի տանէն նստաւ առ ծով եզերն ։
Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչև մտանել նմա ի նաւ. և նստել, և ամ ժողովուրդն կայր առ ծով եզերբն ։
Եւ խօսէր ընդ նոսա բազում առակօք և ասէր ։
Ահա ել սերմանահան սերմանել, և ի սերմանելն իւրում, էր որ անկաւ առ ճանապարհաւ. և եկին թռչուն երկնից և եկեր զնա ։
Եւ այլն անկաւ յապառաժի, որ ոչ գոյր հող բազում, և վաղվաղակի բուսաւ. առ ի չգոյէ հիւթոյ երկրին, ի ծագել արեւու տապացաւ, և զի ոչ գոյին արմատք, չորացաւ ։
Եւ այլն անկաւ ի մէջ փշոց, և ելին փուշքն և հեղձուցին զնա ։
Եւ այլն անկաւ յերկիր բարի, և տայր պտուղ. էր որ հարիւրաւոր, և էր որ վաթսնաւոր, և էր որ երեսնա

նա

նաւոր :
Որ ունիցի ականջս լսե
լոյ լուիցէ :
Եւ մատուցեալ աշա
կերտքն ասեն ցնա . ըն
դէր առակօք խօսիս
ընդ նոսա :
Նա պատասխանի ետ
եւ ասէ ցնոսա :
Զի ձեզ տուեալ
է գիտել զխորհուրդ
արքայութեան երկնից ,
եւ նոցա չէ տուեալ :
ԺԲ Զի որ գուցէ տացի
Ե նմա եւ յաւելցի , եւ ոյր
ոչն գուցէ , եւ զոր ունի
ցի , բարձցի 'ի նմանէ :
ԺԳ Վա՛ս այդորիկ առակօք
Ա խօսիմ ընդ նոսա . զի
տեսանեն եւ ոչ տեսա
նեն , եւ լսեն եւ ոչ լսեն
եւ ոչ առնուն 'ի միտ :
Եւ կատարի առ նոսա
մարգարէութիւնն Ե
սայեայ որ ասէ , լսելով
լուիջիք եւ մի՛ իմասջիք ,
եւ տեսանելով տեսջիք
եւ մի՛ տեսջիք :
Զի թանձրացաւ սիրտ
ժողովրդեանս այսորիկ ,
եւ ականջօք իւրեանց
ծանունս լուան , եւ զաչս
իւրեանց կափուցին ,
զի մի՛ երբեք տեսցեն
աչօք եւ ականջօք լուի
ցեն , եւ սրտիւք իմասցին .
եւ դարձցին , եւ բժշկե
ցից զնոսա :
ԺԶ Բայց ձեր երանի է ա
Ե չաց զի տեսանեն , եւ
ականջաց ձերոց , զի
լսեն :
ԺԷ Ամէն ասեմ ձեզ . զի
Բ բազում մարգարէք եւ
արդարք ցանկացան տե
սանել զոր տեսանէքդ
եւ ոչ տեսին , եւ լսել զոր
լսէքդ եւ ոչ լուան :
Եւ

Եւ այդ լուարուք
դուք զառակ սերմա
նացանին. ամենայն որ
լսէ զբանն արքայու
թեն և ոչ առնու 'ի միտ,
գայ չարն և յափշտակէ
զսերմանեալն 'ի սրտէ
նր, այնէ որ առ ճա
նապարհաւն սերմանե
ցաւ։
Եւ որ յապառաժին
սերմանեցաւ, այն է որ
իբրև լսէ զբանն և վաղ
վաղակի խնդութբ ըն
դունի զնա։
Բայց քանզի ոչ ունի
արմատս յինքեան. այլ
առ ժամանակ մի' է,
'ի լինել նեղութն և հա
լածանաց վասն բանին
վաղվաղակի գայթակղի։
Իսկ որ 'ի մէջ փշոցն
սերմանեցաւ այն է որ
իբրև լսէ զբանն, և
հոգք աշխարհիս, և
պատրանք մեծութեան
հեղձուցանեն զբանն,
և լինի անպտուղ։
Իսկ որ յերկիրն բարի
սերմանեցաւ այն է որ
իբրև լսէ զբանն, և 'ի
միտ առնու, և տայ ըն
պտուղ, է որ հարիւր,
և է որ վաթսուն, և
է որ երեսուն։

ճլզ
ժ

Այլ առակ էարկ դը
առ նոսա և
ասէ, նմանե
ցաւ արքայութն երկ
նից առն. որ սերմանի
ցէ զսերմն բարի յագա
րակի իւրում. և 'ի քուն
լինել մարդկան. եկն
թշնամին նր, և ցա
նեաց իվր զորոմն 'ի մէջ
ցորենոյն և գնաց։
Եւ իբրև բուսաւ
խոտն

ժ
ճլէ

խոտն և արար զպտուղ, ապա երևեցաւ և որոմն։

Մատուցեալ ծառայք տանուտեառն ասեն ցնա. Տէր, ոչ սերմն բարի սեր մանեցեր յագարակին քում, արդ՝ ուստի ունիցի զորոմն։

Եւ նա ասէ ցնոսա այր թշնամի արար զայն. ասեն ցնա ծառայքն կամիս, զի երթիցուք քաղեսցուք զայն ՚ի բաց։ Եւ նա ասէ ցնա, ոչ, գուցէ մինչ քաղիցէք զորոմն, և զցորեանն ընդ նմին ՚ի բաց խլիցէք։

Թոյլ տուք երկոցունցն աճել ՚ի միասին մինչև ՚ի հունձս, և ՚ի ժամանակի հնձոցն ասացից ցհնձօղսն. քաղեցէք Եւ

նախ զորոմն, և կապեցէք զայդ խրձունս առ ՚ի այրել, և զցորեանն ժողովեցէք ՚ի յշտեմարանս իմ։

ՃԼԷ Բ Այլ առակ էարկ առաջի նոսա և ասէ. նման է արքայութիւնն երկնից հատոյ մանանխոյ. զոր առեալ մարդոյ սերմանեաց յագարակի իւրում, որ փոքր է քան զամ սերմանիս, և յորժամ աճիցի, մեծ է քան զամ բանջարս, և լինի ծառ մինչև գալ թռչնոց երկնից և հանգչիլ յոստս նորա։

ՃԼԸ Ե Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա և ասէ։ Նման է արքայութիւնն երկնից խմորոյ. զոր առեալ կնոջ թաքոյց ՚ի գրիւս երիս ալեր, մինչև

Մր Ղ
ՃԼԷ ԽԴ ՃԿԷ
ՃԼԸ . ՃԿԸ

մինչև ամ խմորեցաւ ։
ճլթ Զ Զայս ամ խօսեցաւ
յս առակօք ընդ ժողո
վուրդսն , և առանց ա
ռակի ոչ ինչ խօսէր ընդ
նս ․ զի լցցի ասացեալն
՚ի մարգարէ էն ․ բացից
առակօք զբերան իմ ․
բղխեցից զծածկեալսն
՚ի սկզբանէ աշխարհի ։
ճխ Ժ Յայնժամ թող դե
եալ յս զժողո
վուրդսն , եկն
՚ի տուն ․ մատեան առ
նա աշակերտքն նորա
և ասեն , մեկնեա մեզ
զառակ որոմանցն ագա
րակի ։
Նա պատասխանի ետ
և ասէ ցնոսա , որ սեր
մանէ զսերմն բարի , է
որդի մարդոյ ․ և ագա
րակն աշխարհս է , սերմն
բարի նոքա են , որք
որդիքն արքայութեան
են ․ իսկ որոմն որդիք
չարին են ։
Եւ թշնամին որ վար
եաց զայն , սատանայ է ։
Եւ հունձն կատարած
աշխարհիս է , և հնձօղքն
հրեշտակք են ։
Որպէս ժողովի որոմն
և ՚ի հուր այրի ․ այնպէս
եղիցի ՚ի կատարածի աշ
խարհիս ․ առաքեսցէ որ
դի մարդոյ զհրեշտակս
իւր , և ժողովեսցեն
յարքայութէ նորա զա
մենայն գայթակղու
թիս և զայնոսիկ որք
գործեն զանօրէնութի
և արկցեն զնոսա ՚ի հնոց
հրոյ , անդ եղիցի լալ և
կրճել ատամանց ։
Յայնժամ արդարքն
ծագեսցեն իբրև զա
րե

Մ Մր
ճլթ եՃ
ճխ

րեգակն յարքայութեան
երկնից, որ ունիցի ական
ջս լսելոյ լուիցէ ։
Դարձեալ նման է ար
քայութիւն երկնից գան
ձի ծածկելոյ յագարա
կի, զոր գտեալ մարդոյ
թաքոյց. եւ ՚ի խնդութե̃
անտի երթայ վաճառէ
զա̃մ ինչ զոր ունի, եւ
գնէ զագարակն զայն ։
Դարձեալ նման է ար
քայութիւն երկնից առն
վաճառականի, որ խնդ
րիցէ մարգարիտս գե
ղեցիկս. եւ գտեալ մի
պատուական մարգա
րիտ, երթեալ վաճառ
եաց զա̃մ զոր ինչ ունէր
եւ գնեաց զայն մարգա
րիտ ։
Դարձեալ նման է ար
քայութի̃ երկնից ուռ
կանի արկելոյ ՚ի ծով, եւ
յամենայն ազգաց ժողո
վելոյ ։
Զոր իբրեւ լցաւ, հան
եալ ՚ի ցամաք. եւ նստ
եալ ժողովեցին զբարի
բարին յամանս, եւ զխո
տանն ՚ի բաց ընկեցին ։
Այնպէս եղիցի ՚ի կա
տարածի աշխարհիս.
ելցեն հրեշտակք եւ մեկ
նեսցեն զչարս ՚ի միջոյ
արդարոց ։
Եւ արկցեն զնոսա ՚ի
հնոց հրոյ՝ անդ եղիցի
լալ եւ կրճել ատամանց ։
Ասէ ցնոսա յիսու՝ իմա
ցայք զայս ա̃մ. ասեն ցնա
այո Տ̃ր ։
Եւ նա ասէ ցնոսա
վասն այսորիկ ա̃մ դպիր
աշակերտեալ արքայու
թեան երկնից, նման է
առն տանուտեառն, որ
հանէ ՚ի գանձէ իւրմէ
զնոր

զնոր և զհին ։
ճխա Ա Եւ եղև իբրև կատար եկ
եաց յի՛ս զառակս զայ ճխգ
սոսիկ, փոխեցաւ անտի ։ Բ
Եւ եկեալ 'ի գաւառ ԽԸ
իւր ուսուցանէր զնոսա
մինչև զարմանալ նոցա
և ասել, ուստի իցէ
այս իմաստութի՛ և զօ
րութի՛ ։ ոչ սա է հիւ
սանն որդի ։ ոչ մայր սո
րա կոչի մարիամ, և եղ
բարք սորա յակոբոս, և ճխդ
յօսէս և սիմոն և յու Բ
դաս ։ և քորք սորա ամե
նեքեան առ մեզ են ։
արդ ուստի է սմա այս
ամենայն ։ և գայթակ
ղէին 'ի նա ։
ճխբ Ա Եւ յի՛ս ասէ ցնոսա, չէք
մարգարէ անարգ եթէ
ոչ յիւրում գաւառի և
յիւրում տան ։ և ոչ ա
րար անդ զօրութի՛ս բա
զում վասն անհաւա
տութե՛ նոցա ։

Յայնմ ժամանա ԵԲ
կի լուաւ հե
րովդէս չորրոր
դապետն զլուրն յի՛ ։
Եւ ասէ ցծառայս իւր
նա է յոհաննէս մկրտիչ
նա յարեաւ 'ի մեռելոց,
և վասն այնորիկ զօրու
թիք լինին նովաւ ։
ճխդ Բ Քանզի հերովդէս կա
լաւ զյոհաննէս, կապ
եաց զնա և եդ 'ի բան
տի, վասն հերովդիադայ
կնոջ փիլիպպոսի եղբօր
նորայ ։
Զի ասէր ցնա յոհան
նէս, չէ արժան քեզ ու
նել զդա ։ և կամէր զնա
սպանանել, բայց երկն
չէր 'ի ժողովրդենէ ան
տի ։ քանզի իբրև զմար
դա

| մ | մր | ղ | յ |
|---|---|---|---|
| ճխա | ծ | ճթ | ճբ |
| ճխբ | ծա | ժա | լէ |

| մ | մր | ղ |
|---|---|---|
| ճխգ | ծէ | ղ |
| ճխդ | ծթ | ղե |

դարձ ունէին զնա ։
ձեե Զ Եւ իբրեւ եղեն ծնունդք Հերովդի, կաքաւեաց դուստրն Հերովդիադայ ի մէջ բազմականացն, և հաճոյ թուեցաւ Հերովդի. ուստի և երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ ։
Եւ յառաջագոյն խրատեալ ՚ի մօրէն իւրմէ. տուր ինձ ասէ այսր ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի ։
Եւ տրտմեցաւ թագաւորն. բայց վասն երդմանցն և բազմականացն հրամայեաց տալ նմա ։
Եւ առաքեաց, գլխատեաց զՅովհաննէս ՚ի բանտի. և բերաւ գլուխն նր սկտեղբ, և տուաւ աղջկանն, և տարաւ առ մայր իւր ։
Եւ մատուցեալ աշակերտքն նորա բարձին զմարմինն և թաղեցին, և եկեալ պատմեցին յսի ։
ձկզ Ա Եւ իբրեւ լուաւ եղ յս գնաց անտի նաւու յանապատ տեղի առանձին ։ Իբրեւ լուան ժողովուրդքն. գնացին զհետ նորա հետի ՚ի քաղաքաց անտի ։
Եւ իբրեւ ել, ետես ժողովուրդ բազում, և գթացաւ ՚ի նոսա, և բժշկեաց զհիւանդս նոցա ։
ձկէ Ա Իբրեւ ընդ երեկս եղև մատեան առ նա աշակերտքն և ասեն, տեղիս անապատ է և օրս տարաժամեալ. արձակեա

մ մր
ձկե կ

մ մ մր ղ յ
ձկզ ձկզ կգ ղբ խէ
ձկէ ձկէ կդ ղգ խթ

կեա զ ժողովուրդսդ
զի երթիցեն շուրջ 'ի
շէնսն գնեսցեն իւր
եանց կերակուրս.
Եւ ասէ յս. ոչինչ պի
տոյ է դոցա երթալ,
դուք տուք դոցա ու
տել ։
Եւ նոքա ասեն ցնա
ոչինչ ունիմք աստ, բայց ճխը
հինգ նկանակ և երկուս Ա
ձկունս ։ ԻԴ
Եւ ասէ ցնոսա բերէք
այսր զայն ։
Եւ հրամայեաց բազ
մեցուանել ըզ ժողո
վուրդսն, 'ի վերա խո ճխթ Բ
տոյ, և առեալ զ հինգ
նկանակսն և զերկուս
ձկունսն, հայեցաւ յեր
կինս, օրհնեաց և եբեկ, ճծ Դ
և ետ ցաշակերտսն ըզ
նկանակսն, և աշակերտք
քն ժողովրդոցն.

Կերան ամենեքեան և
յագեցան. և բարձին
զ նշխարս կոտորոցն եր
կոտասան սակառի լի ։
Եւ որք կերանն, էին
արք իբրև հինգ հա
զարք. թող զ կանայս և
և զ մանկտիս ։

Եւ ստիպեաց եդ
վաղ վաղակի զա
շակերտսն մտա
նել 'ի նաւ և յառաջել
յայնկոյս. մինչև ինքն
զ ժողովուրդն արձակի
ցէ ։
Եւ իբրև արձակեաց
զ ժողովուրդսն, ել 'ի
լեառն առանձին կալ
յաղօթս ։
Եւ իբրև ընդ երեկս
եղև անդ էր միայն ։
Եւ նաւն մեկնեալ էր
'ի ցամաքէն բազում աս

պա

| Մ | Մր | Ղ |
|---|---|---|
| ճխը | կէ | . |
| ճխթ | կզ | լէ. խա |
| ճծ | կէ | կա |

պարիզօք ծփեալ յա լեացն. քանզի ընդդէմ էր հողմն.

Եւ 'ի չորրորդ պահու գիշերոյն՝ եկն առ նոսա յի՛ գնալով ի վերայ ծո վուն.

Իբրեւ տեսին զնա աշա կերտքն. զի գնայր ի վե րայ ծովուն, խռովե ցան, եւ առ ահին աղա ղակեցին.

Եւ վաղվաղակի խօսե ցաւ ընդ նոսա յի՛ եւ ասէ. քաջալերացարուք ես եմ, մի՛ երկնչիք.

ՃԿԱ Ժ Պատասխանի ետ նմա պետրոս եւ ասէ տէ՛ր, եթէ դու ես, հրամայեա ինձ գալ առ քեզ ի վե րայ ջրոյս.

Եւ նա ասէ եկ. Եւ իջեալ 'ի նաւէն պետրոս գնաց ի վերայ ջրոցն եւ եկն առ յի՛.

Եւ տեսեալ զհողմն սաստիկ երկեաւ. եւ իբ րեւ սկսաւ ընկղմիլ ա ղաղակեաց, եւ ասէ. տէ՛ր փրկեա զիս.

Եւ վաղվաղակի յի՛ ձգ եաց զձեռն, իւր կալաւ զնա եւ ասէ. թերահա ւատ ընդէր երկմտե ցեր.

ՃԿԲ Զ Եւ իբրեւ ել 'ի նաւն հանդարտեցաւ հողմն. եւ որք 'ի նաւին էին մա տեան եւ երկիրպագին նմա եւ ասեն, արդարեւ որդի աստուծոյ ես դու.

ՃԿԳ Բ Եւ անցեալ 'ի ցամաք. եկին 'ի գեննեսարէթ. եւ իբրեւ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ. առաքեցին ընդ ամ գաւառն եւ ածին առ նա

Ժ
ՃԿԱ

Բ Մր. Զ
ՃԿԲ Կբ :
ՃԿԳ ԿԹ ԼԶ

նա զամենայն հիւանդս՝
և աղաչէին զնա ․ զի
գոնէ միայն ՚ի քղանցս
հանդերձի նորա մեր
ձեսցին ․ և որք միան
գամ մերձեցան փրկե
ցան ։

գլխ Ձ ԺԵ Յայնժամ մա ե
տեան առ յս̃
որք յերէմէ փա
րիսեցիքն և դպիրք և
ասեն , ընդէր աշակերտ
քըն քո անցանեն զաւան
դութբ̃ ծերոց ․ զի
ոչ լուանան զձեռս յոր
ժամ զհաց ուտեն ։
Նա պատասխանի ետ
և ասէ ցնս̃ ․ իսկ դուք
ընդէր անցանէք զպա
տուիրանաւն աստու
ծոյ վասն ձերոյ աւան
դութե ։
Զի ած̃ ասաց ․ պա

տուեա զհայր քո և
զմայր ․ և որ բամբասէ
զհայր կամ զմայր մահու
վախճանեսցի ։
Իսկ դուք ասէք որ ա
սիցէ ցհայր իւր կամ
ցմայր իւր ․ թէ պատա
րագ է զոր յինէն օգտի
ցիս ․ և ոչ պատուիցէ
զհայր իւր և զմայր , և
խոտէք զբանն աստու
ծոյ վս̃ ձերոյ աւան
դութե ։
Կեղծաւորք , բարւոք
մարգարէացաւ իվերայ
ձեր եսայի և ասէ ։
Ժողովուրդս այս շր
թամբ պատուէ զիս ․
և սիրտք իւրեանց հե
ռացեալ մեկուսի են յի
նէն ։
Զուր պաշտեն զիս ․
ուսուցանեն վարդա
պետութիւս զմարդկան
պա

մ մր
ձեց հա

պատուիրեալս։
Եւ կոչեալ առ ինքն
զժողովուրդսն ասէ ցնոսա,
լուարուք՝ և ՚ի միտ ա
ռէք. ոչ որ ինչ մտանէ
ընդ բերանն, պղծէ զմ
մարդ, այլ որ ինչ ելանէ
՚ի բերանոյ այն պղծէ
զմարդ։
ճծե Յայնժամ մատուցեալ
Ժ աշակերտացն նորա
ասեն. գիտես զի փա
րիսեցիքն իբրև լուան
զբանն գայթակղեցան։
Նա պատասխանի ետ
նոցա և ասէ. ամ տունկ
զոր ոչ տնկեաց հայր իմ
երկնաւոր, խլեսցի։
ճծզ Թոյլ տուք զնոսա կոյրք
Ե են կուրաց առաջնորդք,
կոյր կուրի յորժամ ա
ռաջնորդէ սխալի, և եր
կոքին ի խորխորատ ան
կանին։

ճծէ Պատասխանի ետ նմա
Զ պետրոս և ասէ մեկնեա
մեզ զառակս զայս։
Նա ասէ. յա՞ռ տակաւին և
դուք անմիտ էք. և
ոչ իմանայք եթէ ամ որ
մտանէ ՚ի բերանն. յորո
վայնն երթայ և արտա
քս ելանէ։
Իսկ որ ելանէ ՚ի բերա
նոյ ՚ի սրտէ անտի գայ,
և այն պղծէ զմարդն։
Զի ՚ի սրտէ ելանեն
խորհուրդք չարք. սպա
նութիւնք, շնութիւնք,
պոռնկութիւնք, գողու
թիւնք, սուտ վկայութիւնք,
հայհոյութիւնք,. այս ամ
է որ պղծէ զմարդն.
այլ անլուա ձեռօք ու
տելն ոչ պղծէ զմարդ։

ԻԹ Եւ ելեալ անտի յի գնաց 'ի կողմանս տիւրոսի և սիդոնի ։

Եւ ահա կին մի՛ քանանացի 'ի սահմանաց անտի նոցա․ ելեալ աղաղակէր և ասէր, ողորմեաց ինձ տր որդի դաւթի․ դուստր իմ չարաչար այսահարի ։

Եւ նա ոչ ետ նմա պատասխանի ։

Եւ մատուցեալ աշակերտքն նորա աղաչէին զնա և ասէին, արձակեա զնա զի աղաղակէ զհետ մեր ։

ՃԿԸ
Ե
Նա պատասխանի ետ և ասէ, ոչ ուրէք առաքեցայ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն իլի ։

ՃԾԹ
Զ
եղ
Եւ նա մատուցեալ երկիր պագանէր նմա և ասէր․ տէր օգնեա ինձ։

Պատասխանի ետ նմա և ասէ․ ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց ։

Եւ նա ասէ այո տէր․ քանզի և շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց ։

Յայնժամ պատասխանի ետ նմա յս և ասէ, ով կին դու, մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս և կամիս ։

Եւ բժշկեցաւ դուստր նր 'ի նմին ժամու ։

ՃԿ
Զ
Ժ
Եւ գնացեալ անտի եկն յս 'ի ծովեզրն գալիլեացւոց ։

Եւ

Մ Ղ
ՃԾԷ ՄԻԹ

Մ Յհ
ՃԿԹ ՀԶ
ՃԿ ՀԷ

Եւ ելեալ 'ի լեառն նստ
էր անդ ։
Մատեան առ նա ժո
ղովուրդք բազումք որք
ունէին ընդ իւրեանս ,
կաղս՝ կոյրս՝ համերս՝ միա
կողմանիս , և զայլս բա
զումս , և ընկեցին զնո
սա առ ոտս նր և բժշկ
եաց զնոսա
Մինչև զարմանալ ժո
ղովրդոցն որք տեսա
նէին ․ զի համրքն խօ
սէին , կաղք գնային ,
միակողմանիք բժշկեին ,
կոյրք տեսանէին , և փա
ռաւոր առնէին զած
իլի ։
ԼԲ. Եւ կոչեալ առ ինքն յի
զաշակերտսն ասէ ․
գթամ 'ի ժողովուրդդ
զի արդ երեք աւուրք
են զի կան առիս , և
ոչ ունին զինչ ուտիցեն ․
և արձակել զդոսա նօ
թիս չկամիմ , գուցէ
նքթիցին զճանապար
հայն ։
Ասեն ցնա աշակերտքն ,
արդ մեզ յանապատի
աստ ուստի իցէ այնչափ
հաց՝ մինչև յագեցու
ցանել զայսչափ ժողո
վուրդ ։
Եւ ասէ ցնոսա յս՝ քա
նի նկանակ ունիք ։
Եւ նոքա ասեն ․ եօթն ․
և սակաւ ձկունս ։
Եւ հրամայեաց ժողո
վրդեանն բազմել իվե
րայ գետնոյ ։
Եւ առեալ զեօթն նկա
նակսն և զձկունսն գո
հացաւ՝ և եբեկ՝ և ետ
ցաշակերտսն ․ և նոքա
ժողովրդեանն ։
Կերան ամենեքեան և
յագեցան , և բարձին
զնշ

զնշխարսն կոտորոցն եօ
թն զամբիւղ լի ։
Եւ որք կերանն էին
արք իբրև չորք հազարք,
թող զկանայս և զմանկ
տիս ։
Իբրև արձակեաց զժո
ղովուրդսն ել 'ի նաւ,
և եկն 'ի սահմանս մագ
դաղեայ ։

ճկա Դ Եւ մատուցեալ
փարիսեցիքն
և սադուկե
ցիքն փորձելով խնդրէին
'ի նմանէ նշան յերկնից
ցուցանել նոցա ։
ճկբ Զ Նա պատասխանի ետ
և ասէ ցնոսա, յորժամ
երեկոյ լինի ասէք, պարզ
լինիցի. զի կարմրացեալ
է երկին ։
Եւ առաւօտու այսօր
մրրիկ. զի շառագունի

տրտմութբ երկին, արդ
զերեսս երկնի կարէք
քննել. իսկ զնշանս ժա
մանակիս ոչ կարէք գի
տել. ազգ չար և շնացող
նշան խնդրէ, և նշան մի
տացի նմա, բայց նշանն
յօնանու մարգարէի ։
ճկգ Զ Եւ եթող զնոսա և
գնաց ։
Գնացին և աշակերտ
քըն յանկոյս, և մոռա
ցան առնուլ զհաց ։
ճկդ Բ Ասէ ցնս յս. տեսէք և
ԺԶ զգուշ լերուք 'ի խմորոյ
սադուկեցւոցն և փա
րիսեցւոցն ։
ճկե Զ Նոքա խորհէին ընդ
միմեանս և ասէին թէ
զհաց ոչ բարձաք ։
Գիտաց յս և ասէ, զի
խորհիք 'ի միտս ձեր թե
րահաւատք եթէ հաց
ոչ ունիմք, տակաւին
չէ

| Մ | Մք | Յ |
|---|---|---|
| ճկա | ՀԶ | ԻԳ.ԾԳ |
| ճկբ | ՀԷ | . |

| Մ | Մր | Ղ |
|---|---|---|
| ճկգ | . | . |
| ճկդ | ՀԹ | ճխգ |
| ճկե | Ձ | . |

չիմանայք և ոչ յիշէք
զ հինգ նկանակսն 'ի հինգ
հազարսն, և քանի սա
կառի բարձիք ։
Եւ ոչ զեօթն նկանա
կսն 'ի չորս հազարսն ·
և քանի զամբիւղս բար
ձիք ։
Որդ՝ զիարդ ոչ իմա
նայք, եթէ ոչ վս հացի
ասացի ձեզ զգոյշ լինիլ
'ի խմորոյ սադուկեցւոց
և փարիսեցւոցն ։
Յայնժամ 'ի միտ առին
թէ ոչ ասաց զգուշա
նալ 'ի խմորոյ, այլ յաղան
դոյ փարիսեցւոցն և սա
դուկեցւոց ։

ճկզ
Ա
Լ.Գ Եւ եկեալ յս 'ի
կողմանս փի
լիպպեայ կե
սարեայն հարցանէր զա
շակերտսն · և ասէր, զո

ոք ասեն զինէն՝ մար
դիկն թէ իցէ որդի մար
դոյ ։
Եւ նոքա ասեն · ոմն
զյոհաննէս մկրտիչ, և
այլք զեղիայ, և կէսք
զերեմիայ · կամ զմի ոք
'ի մարգարէից ։
Ասէ ցնոսա · իսկ դուք
զո՞ ասէք զինէն թէ ի
ցեմ ։
ճկէ Պատասխանի ետ սի
Ժ մոն պետրոս և ասէ ցնա,
դու ես քս որդի ա
ստուծոյ կենդանւոյ ։
Պատասխանի ետ յս և
ասէ ցնա, երանի է քեզ
սիմոն որդի յօնանու,
զի մարմին և արիւն ոչ
զկ յայտնեաց քեզ, այլ
հայրն իմ որ յերկինս է ։
Եւ ես քեզ ասեմ · զի
դու ես վէմ, և ի վր
այդր վիմի շինեցից զե
կե

կեղեցի իմ . և դրունք
դժոխոց զնա մի՛ յաղ
թահարեսցեն . և տաց
քեզ զփականս արքայու
թեն երկնից . և զոր ինչ
անդամ կապեսցես յեր
կրի, եղիցի կապեալ յեր
կինս . և զոր արձակես
ցես յերկրի . եղիցի ար
ձակեալ յերկինս .
Յայնժամ սաստեաց
աշակերտացն զի մի՛ ու
մեք ասիցեն թէ նա է
քրիստոսն :
ճլ Յայնմհետէ սկսաւ յիսուս
Բ ցուցանել աշակերտացն
իւրոց թէ պարտ է նմա
երթալ յերուսաղէմ, և բա
զում չարչարանս կրել
՚ի քահանայապետից
և ՚ի դպրաց՝ և ՚ի ծե
րոց ժողովրդեանն՝ և
սպանանել . և յերրորդ աւ
ուր յառնել :

ճկթ Եւ առեալ զնա մեկու
Զ սի պետրոսի . սկսաւ կա
ռել ընդ նմա և ասել
քաւ լիցի քեզ տէր, մի
եղիցի քեզ այդ :
Եւ նա դարձեալ ՚ի
պետրոս ասէ, երթ յետ
սիմ սատանայ գայ
թակղութիւն իմ ես . զի
ոչ խորհիս դու զաս
տուծոյն այլ զմարդ
կան :
Յայնժամ յիսուս ասէ ցա
շակերտսն իւր .
ճլ Եթէ ոք կամի զկնի իմ
Բ գալ, ուրասցի զանձն,
և առցէ զխաչն իւր, և
եկեսցէ զկնի իմ :
Զի որ կամիցի զանձն
իւր կեցուցանել կորուս
ցէ զնա, և որ կորուս
ցէ զանձն իւր վս֊ իմ,
գտցէ զնա :
Զինչ օգտիցի մարդ
թէ

մ մր ղ
ճլ ձզ ղէ . Վ

մ մր ղ
ճկթ ձէ :
ճհ ձէ ղշ

Թէ զաշխարհս ամ շա
հեսցի, և զանձն իւր
տուժեսցէ. կամ զինչ
տացէ մարդ փրկանս
ընդ անձին իւրոյ.
ՃՀա Ժ Զի գալոց է որդի
մարդոյ փառօք հօր իւ
րոյ՝ հանդերձ հրեշտա
կօք իւրովք, և յայն
ժամ հատուսցէ իւրա
քանչիւրում ըստ գոր
ծոց իւրոց.
ՃՀբ Բ ԼԳ Ամէն ասեմ ձեզ, զի են
ոմանք ՚ի դոցանէ որք
աստ կան, որք ոչ ճա
շակեսցեն զմահ՝ մինչև
տեսցեն զորդի մարդոյ
եկեալ արքայութեամբ
իւրով.

Եւ յետ վեց
աւուրց՝ առ
նու յս զպե
տրոս՝ և զյակոբոս՝ և

Մ Մր Ղ
ՃՀա . .
ՃՀբ ՁԵ ՂԲ

զյովհաննէս զեղբայր նո
րա, և հանէ զնոսա ՚ի
լեառն մի՛ բարձր առան
ձին.
Եւ այլակերպեցաւ ա
ռաջի նոցա, և լուսա
ւորեցան երեսք նորա
իբրև զարեգակն, և
հանդերձք նորա եղեն
սպիտակք իբրև զլոյս.
Եւ ահա երևեցան նո
ցա մովսէս և եղիա որք
խօսէին ընդ նմա.
Պատասխանի ետ պետ
րոս և ասէ ցյս, տէր
բարւոք է մեզ աստ լի
նել. եթէ կամիս արաս
ցուք երիս տաղաւարս.
մի քեզ, և մի մովսէսի,
և մի եղիայի.
Եւ մինչդեռ նա խօ
սէր. ահա ամպ լուսա
ւոր հովանի եղև ի վե
րայ նոցա.
Զայն



Ձայն եղեւ յամպոյն եւ ասէ․ դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա լուարուք։

Իբրեւ լուան աշակերտքն․ անկան ի վերայ երեսաց իւրեանց, եւ երկեան յոյժ։

Եւ մատուցեալ յս բուռն եհար զնոցանէ եւ ասէ․ յոտն կացէք եւ մի երկնչիք․

Ամբարձին զաչս իւրեանց եւ ոչ զոք տեսին բայց միայն զյս․

Եւ մինչ դեռ իջանէին ի լեռնէ անտի․ պատուիրեաց նոցա յս եւ ասէ․ մի՛ ումեք ասիցէք զտեսիլդ՝ մինչեւ որդի մարդոյ ՚ի մեռելոց յարիցէ։

հնգ Զ Հարցին ցնա աշակերտքն եւ ասեն, զի՞ արդ դպիրքն ասեն․ թէ եղիայի նախ պարտ է գալ․

Պատասխանի ետ յս եւ ասէ ցնոսա․ եղիա գայ եւ հաստատեսցէ զամենայն։

Բայց ասեմ ձեզ զի եղիա եկեալ իսկ է․ եւ ոչ ծանեան զնա այլ արարին ընդ նմա զոր ինչ կամեցան․ նոյնպէս եւ որդի մարդոյ չարչարելոց է ՚ի նոցանէ․

Յայնժամ ՚ի միտ առին աշակերտքն․ թէ վասն յոհաննու մկրտչի ասաց ցնոսա։

հնգ Բ ԺԸ Եւ իբրեւ եկն ՚ի ժողովուրդն, մատեաւ այր մի, ՚ի ծունր իջանէր եւ ասէր․ տր ողորմեա որդւոյ իմում․ զո

մ ․․․ հնգ ․ ժթ

մ մ ղ հնգ ղա մթ

զի լուսնոտի և չարա
չար հիւանդանայ. բա
զում անգամ անկանի 'ի
հուր՝ և երբեք 'ի ջուր։
Եւ մատուցի զնա աշա
կերտացն քոց, և ոչ կա
րացին բժշկել։
Պատասխանի ետ յս̃ և
ասէ, ով ազգ անհաւատ
և թիւր. մինչև յերբ
իցեմ ընդ ձեզ. մինչև
յերբ անսայցեմ ձեզ,
ած զնա աստ, և ա
ծին զնա առ յս̃։
Եւ սաստեաց 'ի նա յս̃
և ել 'ի նմանէ դեւն, և
բժշկեցաւ մանուկն 'ի
ժամէն յայնմանէ.
ճհե Ը Յայնժամ մատեան ա
շակերտքն առանձին,
և ասեն ցյս̃. մեք ըն
դէր ոչ կարացաք հա
նել զնա.
Եւ նա ասէ ցնոսա,
վն̃

վն̃ թերահաւատութեան
ձերոյ. ամէն ասեմ ձեզ
եթէ ունիցիք հաւատս
քան զհատ մանանխոյ,
ասասջիք լերինս այսմիկ
փոխեաց աստի անդր,
և փոխեսցի, և ոչ ինչ
անհնարին լինիցի ձեզ.
բայց այս ազգ ոչ ելա
նէ եթէ ոչ աղօթիւք
և պահօք.

ճհզ Բ Եւ մինչ դեռ
շրջէին նոքա
'ի Գալիլեա,
ասէ ցնոսա յս̃
մատնելոց է որդի մար
դոյ 'ի ձեռս մարդկան.
Եւ սպանցեն զնա և
յերիր աւուր յարիցէ.
Եւ տրտմեցան յոյժ.
ճհէ Ժ Իբրև եկին նոքա 'ի կա
փառնայում, մատեան,
Որք զերկդրամեանն պա
հան

մ
ճհե ց

մ մր ղ
ճհզ ղծ ճա
ճհէ . .

հանջէին առ պետրոս
և ասեն. վարդապետն
ձեր ոչ տայ զերկդրա
մեանն.
Եւ ասէ, այո։ ճհը Բ
Եւ իբրև եմուտ ՚ի
տունն յառաջեաց քան
զնա յս̃ և ասէ. զի՞ արդ
թուի քեզ սիմոն. թա
գաւորք երկրի յումէ
առնուն զհարկս կամ
զհաս, յորդւոց իւր
եանց թէ յօտարաց.
Եւ իբրև ասաց թէ
յօտարաց. ասէ ցնա յս̃
ապա ուրեմն ազատք են
որդիքն։
Բայց զի մի գայթակ
ղեցուսցուք զնոսա.
երթ ՚ի ծով և ընկեա
զկարթ. և զառաջին ճհթ
ձուկն որ ելանիցէ. առ Բ
և բաց զբերան նորա.
և գտանիցես զսատեր,
և զայն առեալ տացես
ընդ իմ և ընդ քո.

Յայնմ աւուր մա
տեան աշակերտ
քն առ յս̃ և ա
սեն, ով իցէ ՚ի մէնջ
մեծ յարքայութն երկ
նից. և կոչեալ առ ինքն
յս̃ զմանուկ մի. կացոյց
զնա իմէջ նոցա։
Եւ ասէ ամէն ասեմ
ձեզ. եթէ ոչ դարձջիք,
և եղիջիք իբրև զմանկ
տիս. ոչ մտանիցէք յար
քայութիւն երկնից.
Արդ՝ որ խոնարհեցու
ցանէ զանձն իբրև զմա
նուկս զայս նա է մեծ
յարքայութեն երկնից.
ճհթ Եւ որոք ընկալցի զմա
Բ նուկ մի այսպիսի յա
նուն իմ. զիս ընդունի.
և որոք գայթակղեցու
ցէ

Մ Մր Ղ
ճհը ղե ճբ. ժծ
ճհթ ղթ ճղէ

ցէ զմի 'ի փոքրկանցս
յայսցանէ յիս հաւատա
ցելոց լաւ էր նմա եթէ
կախիցի երկան իշոյ ընդ
պարանոց նր եւ ընկղմի
ցի 'ի խորս ծովու ։
Վայ աշխարհի 'ի գայ
թակղութեանց ․ հարկ է
գալ գայթակղութեանց ․
բայց վայ մարդոյն այն
միկ յորոյ ձեռն գայցէ
գայթակղութիւն ։
Եթէ ձեռն քո կամ
ոտն գայթակղեցուցա
նէ զքեզ՝ հատ զնա՝ եւ
ընկեա 'ի քէն ․ լաւ լիցէ
քեզ միաձեռանի կամ
կաղ մտանել 'ի կեանս ․
քան թէ երկուս ձեռս
եւ երկուս ոտս ունել ,
եւ անկանել 'ի հուրն յա
ւիտենական ։
Եւ եթէ ակն քո գայ
թակղեցուցանէ զքեզ ,
խլեա զնա եւ ընկեա 'ի
քէն ․ լաւ լիցէ քեզ միա
կանի մտանել 'ի կեանս ․
քան երկուս աչս ունել
եւ անկանել 'ի գեհեն
հրոյն ։
Զգոյշ լերուք զի
մի արհամարհ
իցէք զմի 'ի
փոքրկանցս յայսցանէ ․
ասեմ ձեզ , զի հրեշ
տակք նոցա յերկինս հա
նապազ տեսանեն զե
րեսս Հօր իմոյ որ յեր
կինս է ։
Զի եկն որդի մար
դոյ կեցուցանել զկո
րուսեալս ։
Զի արդ թուի ձեզ
եթէ լինիցի մարդոյ հա
րիւր ոչխար , եւ մոլորեսցի
մի 'ի նոցանէ ․ ոչ թո
ղուցու զիննսուն եւ
զինն

զինն ոչխարսն 'ի լերինս, և երթիցէ խնդրիցէ զմոլորեալն։

Եւ եթէ լինիցի գտանել զնա. ամէն ասեմ ձեզ. զի ուրախ լինի ի վերայ նորա առաւել քան ի վերայ իննսուն և իննուցն, որք չիցեն մոլորեալք

Այսպէս ոչ են կամք առաջի Հօր իմոյ որ յերկինս է, եթէ կորիցէ մի 'ի փոքրկանցս յայսցանէ։

ճժգ ե Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո՝ երթ յանդիմանեա՛ զնա յորժամ դու և նա միայն իցէք, եթէ լուիցէ քեզ՝ շահեցար զեղբայր քո։

ճժդ ա Ապա թէ ոչ լուիցէ քեզ. առ ընդ քեզ միւս ևս կամ երկուս. զի 'ի բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն բան։

Իսկ եթէ նոցա ոչ լուիցէ, ասասջիր յեկեղեցւոջն։

Ապա եթէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ. եղիցի քեզ իբրև զհեթանոս և զմաքսաւոր։

ճժե է Ամէն ասեմ ձեզ. զոր կապիցէք յերկրի եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկրի եղիցի արձակեալ յերկինս։

ճժզ ա Դարձեալ ասեմ ձեզ, եթէ երկու 'ի ձէնջ միաբանիցեն յերկրի վասն ամ իրաց. զինչ և խնդրեսցեն եղիցի նոցա 'ի Հօրէ իմէ որ յերկինս է։

Զի ուր իցեն երկու կամ

կամ երեք ժողովեալ
յանուն իմ . անդ եմ ես
ի մէջ նոցա ։
ճձե Յայնժամ մատեաւ
Ե առ նա պետրոս և ասէ.
տ̃ր քանիցս անգամ եթէ
մեղիցէ ինձ եղբայրն իմ,
և թողից նմա, մինչև
ցեօթն անգամ.
Ասէ ցնա յս̃, ոչ ասեմ
քեզ, թէ մինչև ցեօթն
անգամ . այլ մինչև ցեօ
թանասնեկին եօթն ։
ճձը Ած̃ այսորիկ նմանե
Ժ Լ,Թ ցաւ արքայութի̃ն երկ
նից առն թագաւորի .
որ կամեցաւ համարս
առնուլ ի մէջ ծառայից
իւրոց ։
Եւ իբրև սկսաւ առ
նուլ, մատուցաւ առ նա
պարտապան մի բիւր
քանքարոյ ։
Իբրև ոչ ունէր հատու
ցանել հրամայեաց վա
ճառել զնա տէրն նր̃,
և զկին նր̃, և զորդիս,
և զա̃մ զոր ինչ և ունէ
ցի և հատուցանել ։
Եւ անկեալ ծառայն
երկիրպագանէր նմա
և ասէր, երկայնամիտ
լեր առիս, և զամենայն
հատուցից քեզ ։
Գթացեալ տէր ծա
ռային այնորիկ արձա
կեաց զնա, և զպարտ
սըն եթող նմա ։
Ելեալ ծառայն այն
եգիտ զմի 'ի ծառայակի
ցաց իւրոց, որ պարտէր
նմա հարիւր դահեկան,
և կալեալ զնա խեղդէր
և ասէր, հատո՛ ինձ,
զոր պարտիսն ։
Անդ անկեալ ծառայ
ակցին առ ոտս նորա՝ ա
ղաչէր զնա և ասէր, եր

մ Հ
ճձե ճլթ
ճձը ։

կայնամիտ լե՛ր առ իս եւ հատուցից քեզ.

Եւ նա ոչ կամէր. այլ չոգաւ էարկ զնա ՚ի բանտ, մինչեւ հատուսցէ զպարտսն.

Իբրեւ տեսին ծառայակիցքն նորա, որ ինչ եղեն, տրտմեցան յոյժ, եւ եկեալ ցուցին տեառն իւրեանց զա՛մ որ ինչ եղեւն.

ճձթ
Զ
Խ

Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր եւ ասէ, ծառայ չար, զա՛մ զպարտսն թողի քեզ վասն զի աղաչեցեր զիս.

Իսկ արդ՝ ոչէր պարտ եւ քեզ ողորմել ծառայակցին քում. ո՛պ եւ ես քեզ ողորմեցայ.

Եւ բարկացեալ տէրն նր̃ մատնեաց զնա դահճաց. մինչեւ հատուսցէ զա՛մ զպարտսն.

Նոյնպէս եւ հայր իմ որ յերկինս է արասցէ ձեզ. եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում ՚ի սրտից ձերոց զյանցանս նոցա.

Եւ եղեւ իբրեւ զի կատարեաց յի-սուս զբանս զայսոսիկ, փոխեցաւ ՚ի գալիլեէ եւ եկն ՚ի սահմանս հրէաստանի յայն կոյս յորդանանու.

Եւ գնացին զհետ նր̃ ժողովուրդք բազումք, եւ բժշկեաց զնոսա անդ.

Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն, փորձէին զնա, եթէ արժան իցէ ումեք արձակել զկին իւր ըստ ամենայն վնասու.

Պա

մ մբ
ճձթ դփ

Պատասխանի ետ նոցա եւ ասէ. չիցէ ընթերցեալ ձեր թէ որ հաստատեացն ՚ի սկզբանէ՝ արու եւ էգ արար զնոսա, եւ ասէ. վասն այսորիկ թողցէ այր զհայր՝ եւ զմայր՝ եւ երթիցէ ընդ հետ կնոջ իւրոյ՝ եւ եղիցին երկոքեան ՚ի մարմին մի։ ճզ Բ

Ապա ուրեմն ոչ են երկու, այլ մի մարմին։

Արդ՝ զոր ած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ։

Ասեն ցնա իսկ Մովսէս ընդէր պատուիրեաց մեզ տալ զթուղթ մեկնելոյ եւ արձակելոյ։

Ասէ ցնոսա. Մովսէս վասն խստասրտութեան ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր. այլ ՚ի սկզբանէ ոչ եղեւ այնպէս։

ճզ Բ Բայց ասեմ ձեզ, զի ամենայն որ արձակեսցէ զկին իւր, եւ ոչ վասն պոռնկութեան. եւ առնիցէ այլ, շնայ. եւ որ զարձակեալն առնիցէ, շնայ։

ճէ Ծ Ասեն ցնա աշակերտքն իւր. եթէ այդպէս վնաս իցէ ընդ այր եւ ընդ կին, լաւ է չամուսնանալ։

Նա ասէ ցնոսա, ոչ ամենեքին բաւական են այդմ բանի, այլ որոց տուեալ է։

Զի են ներքինիք, որք յորովայնէ մօր իւրեանց ծնան այնպէս։

Եւ են ներքինիք. որք ՚ի մարդկանէ եղեն ներքինիք։

Եւ են ներքինիք, որք զանձինս իւրեանց ա-

ար

մ մբ զ
ճզ ճե ճէ
ճշա . .

րուրին նորբինիս վասն
արքայութեան երկնից,
Որ կարողն է տանել
տարցի։
ճղբ
բ
Յայնժամ մատուցին
առ նա մանկտիս, զի
ձեռն դիցէ ի վերա նո
րա և աղօթս արասցէ.
Եւ աշակերտքն նորա
սաստէին նոցա.
Ասէ յս̃ թոյլ տուք մանկ
տեայդ և մի արգելուք
զդոսա գալ առ իս, զի
այդպիսեաց է արքայու
թեան երկնից։
Եւ եդեալ ձեռս ի վե
րայ նոցա գնաց անտի.
ճղգ
բ
ԽՄ.
Եւ ահա մատուցեալ ոմն ասէ,
վարդապետ
բարի. զինչ բարի գոր
ծեցից, զի ընդունիցիմ
զկեանսն յաւիտենա
կանս.
Եւ նա ասէ ցնա. զի
հարցանես զինէ զբարւոյ.
մի է բարի.
Եթէ կամիս ՚ի կեանսն
յաւիտենականս մտա
նել՝ պահեա՛ զպատուի
րանս.
Ասէ ցնա զորս.
Ասէ ցնա յս̃, զմի սպա
նաներն, և զմի՛ շնարն, և
զմի՛ սուտ վկայերն.
Պատուեա՛ զհայր քո
և զմայր, և սիրեսցես
զընկեր քո իբրև զանձն
քո։
Ասէ ցնա պատանին,
զայդ ամենայն պահե
ցի ՚ի մանկութենէ իմէ,
արդ ի՞ւ իւիք պակա
սեցեմ.
ճղդ
բ
Ասէ ցնա յս̃, եթէ կա
միս կատարեալ լինել.
երթ վաճառեա զինչս
քո

Մ Մր Ղ
ճղբ ճղ մժղ
ճղգ ճխ ճիա. մձբ

Մ Մր Ղ
ճղդ ճը ճիբ. մԺԹ

քո և տուր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս, և եկ զկնի իմ․

ճղե բ Իբրև լուաւ պատանին զբանն, գնաց տրտմեալ, զի ունէր ստացուածս բազումս․

Իսկ յս ցաշակերտսն․ ամէն ասեմ ձեզ․ զի դժուարաւ մտցէ մեծատունն յարքայութիւն երկնից․

Դարձեալ ասեմ ձեզ․ դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատան յարքայութիւն աստուծոյ մտանել․

Իբրև լուան աշակերտքն զարմացան յոյժ, և ասեն, իսկ ո կարիցէ ապրել․

Հայեցաւ ՚ի նոսա յս եւ ասէ․ առ ՚ի մարդկանէ այդ անկար է․ այլ առ յաստուծոյ ամենայն ինչ զօրաւոր է․

Յայնժամ պատասխանի ետ պետրոս և ասէ ցնա․ ահաւասիկ մեք թողաք զամենայն և եկաք զկնի քո․ արդ՝ զինչ լինիցի մեզ․

ճղզ դ Իսկ ասէ ցնոսա յս․ ամէն ասեմ ձեզ․ զի դուք որք եկիք զկնի իմ, ՚ի միւսանգամ գալստեանն․ յորժամ նստցի որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց․

ճղէ ե Նստջիք և դուք յերկոտասան աթոռ, դատել զերկոտասան ազգն իէլի․

ճղը բ Եւ ամենայն որ եթող զտուն, կամ զեղբարս, կամ զքորս, կամ զհայր, կամ զմայր, կամ զկին, կամ



| Մ | Մր | Ղ |
| --- | --- | --- |
| ճղե | ճթ | ձթ |

| Մ | Մր | Ղ |
| --- | --- | --- |
| ճղզ | ․ | ․ |
| ճղէ | ․ | ձհը |
| ճղը | ճժ | ձռ |

կամ զորդիս՝ կամ զագա
րակս՝ վասն անուան ի
մոյ , հարիւրապատիկ
առցէ եւ զկեանսն յաւի
տենականս ժառանգես
ցէ ։
ճկթ Բազումք եղիցին ա
բ ռաջինք յետինք եւ յե
տինք առաջինք ։

ր
ժ
ԽԲ Քանզի նման է
արքայութիւն երկ
նից առն տա
նուտեառն . որ ել
ընդ առաւօտս ՚ի վար
ձու ունել մշակս յայգի
իւր . եւ հարկ վարձս
մշակացն տուրն դա
հեկան , եւ առաքեաց
զնոսա յայգի իւր ։
Եւ ելեալ զերրորդ ժա
մու ետես այլս , զի կայ
ին դատարկք ՚ի հրապա
րակս ։

մ մբ գ
ճկթ ճժա ճհգ
մ ը ը

Ասէ եւ ցնոսա , երթայք
եւ դուք յայգի իմ , եւ
որ ինչ արժան իցէ տաց
ձեզ ։
Գնացին եւ նոքա ։
Եւ դարձեալ ելեալ
զվեց ժամու , եւ զիննե
ժամու , արար նոյնպէս ։
Եւ զմետասան երորդ
ժամու ելեալ եգիտ այլս ։
զի կային դատարկք ,
ասէ եւ ցնոսա , ընդէր
կայք աստ զօրս ողջոյն
դատարկք ։
Ասեն ցնա զի ոչ ոք կա
լաւ զմեզ ՚ի վարձու ։
Ասէ ցնս , երթայք եւ
դուք յայգին , եւ որ ինչ
արժան է առնուցուք ։
Եւ իբրեւ երեկոյ եղեւ ,
ասէ տր այգւոյն ցդա
ստապետ իւր . կոչեա
զմշակսն եւ տուր նոցա
զվարձս՝ սկսեալ ՚ի յետ
նոցն

նոյն մինչև ցառաջինսն. Իբրև եկին որք զմետասներորդ ժամուն, առին մէն մի դահեկան։ Եկեալ առաջինքն, համարէին թէ աւելի առնուցուն, և առին մէն մի դահեկան և նոքա։

Իբրև առին, տրտնջէին զտանուտեառնէն և ասէին.

Թէ դոքա յետինքդ մի ժամ գործեցին, և հաւարակորդս մեզ արարեր զդոսա, որք զծանրութի աւուր բարձաք և զտօթ։

Նա պատասխանի ետ միում ի նոցանէ և ասէ. ընկեր չի զրկեմ զքեզ, ոչ դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս։ Առ զքոյդ և երթ, և թէ կամիմ յետնոյս տալ որպէս և քեզ. Եթէ չիցէ ինձ իշխանութիւն յիմս՝ առնել զինչ և կամիմ. կամ թէ ակն քո չար է. զի ես առատ եմ։

Այսպէս եղիցին յետինք առաջինք, և առաջինք յետինք. զի բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք։

մն
Բ
Իբրև ելանէր յ̃ յերուսաղէմ, էառ զերկոտասանսն առանձինն, և 'ի ճանապարհին ասէ ցնոսա։

Ահաւասիկ ելանեմք յե̃մ, և որդի մարդոյ մատնեսցի քահանայապետաց, և դպրաց, և դատապարտեսցեն զնա 'ի մահ. և մատնեսցեն

զնա

մ մր ղ
մն ծժբ ճէ

զնա հեթանոսաց այպա
նել և հարկանել և 'ի
խաչ հանել, և յերրորդ ա
ւուր յարիցէ:
ճջ Յայնժամ մատեա
ԽԳ. առ նա մայր որդւոցն
զեբեդեայ որդւովքն
իւրովք հանդերձ, եր
կիր պագանէր և խնդ
րէր ինչ 'ի նմանէ:
Եւ նա ասէ ցնա զինչ
կամիս:
Ասէ ցնա. ասա՛, զի նստ
ցին սոքա երկու որդի
քըս իմ, մի ընդ աջմէ քու
մէ, և մի ընդ ահեկէ
յարքայութեան քում:
Պատասխանի ետ յս և
ասէ, ոչ գիտէք զինչ
խնդրէք, կարէք ըմպել
զբաժակն, զոր ես ըմ
պելոց եմ, կամ զմկրտու
թիւն զոր ես մկրտելոց
եմ մկրտիլ:

Ասեն ցնա կարօղք եմք
Ասէ ցնոսա յս, զբա
ժակն իմ ըմպիցէք, և
զմկրտութիւն զոր ես
մկրտելոցեմ մկրտիցիք,
բայց նստուցանել ընդ
աջմէ և ընդ ահեկէ
իմէ՝ ոչ է իմ տալ, այլ
որոց տուեալ է 'ի հօ
րէ իմէ:
մե Եւ լուեալ տասանցն
բարկացան իւերա եր
կուց եղբարցն:
Եւ յս կոչեաց զնոսա
առ ինքն և ասէ. գիտէք
զի իշխանք ազգաց տի
րեն նոցա, և մեծամեծ
քըն իշխեն նոցա:
Ոչ այսպէս իցէ և 'ի
ձերում միջի:
Այլ որ կամիցի 'ի ձէնջ
մեծ լինել, եղիցի ձեր
պաշտօնեայ:
Եւ որ կամիցի 'ի ձէնջ
առա

մ մէ ֆ ծժգ

մ մգ ֆ ծժբ ղ ժհ

առաջին լինել եղիցի
ձեր ծառայ :
Գ Որպէս որդի մարդոյ ոչ
Դ եկն պաշտօն առնուլ ,
այլ պաշտել , եւ տալ
զանձն իւր փրկանս փո
խանակ բազմաց :

ժե
Բ
ԽԳ. Եւ յելանելն նո էկ
ցա յերիքովէ ,
գնացին զհետ
նորա ժողովուրդք բա
զումք :
Եւ ահա կոյրք երկու
նստէին առ ճանապար
հաւն :
Իբրեւ լուան թէ Յս
անցանէ՝ աղաղակեցին
եւ ասեն , ողորմեա մեզ
Յս որդի դաւթի :
Եւ ամբոխն սաստեաց
նոցա զի լռեսցեն :
Եւ նոքա եւս առաւել
աղաղակէին եւ ասէին ,
Տր՝ ողորմեա մեզ որդի
դաւթի :
Օ տեղի էառ Յս՝ կոչ
եաց զնոսա եւ ասէ , զինչ
կամիք զի արարից ձեզ :
Ասեն ցնա Տր՝ զի բաց
ցին աչք մեր :
Եւ գթացեալ Յս մեր
ձեցաւ յաչս նոցա . եւ
վաղվաղակի տեսին , եւ
գնացին զհետ նորա :

մզ
Բ
ԽԵ Իբրեւ մօտ եղեն
յԵՂմ , եւ եկին ՚ի
բեթփագէ մերձ
՚ի լեառն ձիթենեաց ,
յայնժամ Յս առաքեաց
երկուս յաշակերտացն
իւրոց , եւ ասէ ցնոսա ,
երթայք ՚ի գեօղդ որ ա
ռաջի ձեր է , եւ ան
դէն գտանէք էշ կապ
եալ , եւ յաւանակ ընդ
նմին , լուծէք . եւ ածէք
ինձ .

ԺԱ.

| | | | |
|---|---|---|---|
| մ | մր | ղ | յ |
| մէ | ծժե | . | ղա . ծլե |
| ժե | ծժղ | մէռ | . |

| | | |
|---|---|---|
| մ | մր | ղ |
| մզ | ծժե | մէ |

ինձ. եւ եթէ ոք ասիցէ
ինչ ձեզ, ասասջիք, ե-
թէ տեառն իւրեանց
պիտոյ են, եւ վաղվաղա-
կի առաքեսցէ զնոսա։
Ե Բայց այս ամ եղեւ՝ զի
լցցի բան մարգարէին
որ ասէ. ասացէք դըս-
տեր սիօնի, ահա թա-
գաւոր քո գայ քեզ. հեզ
հեծեալ յէշ՝ եւ յաւա-
նակ իշոյ։
Զ Գնացին աշակերտքն,
Բ եւ արարին որպ հրամայ-
եաց նոցա յս։
Եւ ածին զէշն եւ զա-
ւանակն։
Եւ արկին զնոքօք զհան-
դերձս, եւ նստաւ իվր նոցա։
Եւ բազում ժողովուրդք
տարածեցին զհան-
դերձս իւրեանց ի ճա-
նապարհին։
Եւ այլք հատանէին
ոստս ի ծառոց, եւ տա-
րածանէին ի ճանապար-
հին.
ՃԹ Եւ ժողովուրդքն որք
Ա առաջի եւ զկնի երթայ-
ին. աղաղակէին եւ ասէ-
ին. օրհնութի որդւոյ
դաւթի, օրհնեալ որ
գայ յանուն տեառն՝
օրհնութի ի բարձունս.
ՃԺ Եւ ի մտանելն նր յեմ,
Ժ դղրդեցաւ քաղաքն ամ,
եւ ասէ ով իցէ սա.
Եւ ժողովուրդքն ասէ-
ին, սա է մարգարէն յս
որ ի նազարեթէ գալի-
լեացւոց։
ՃԺԱ Եւ եմուտ յս ի տա-
Ա ճարն՝ եւ եհան արտաքս
զամենեսին, որք վաճա-
ռէին եւ գնէին ի տա-
ճարի անդ։
Եւ զսեղանս հատավա-
ճառացն կործանեաց,
եւ

| Մ | Մր | Ղ | Յ |
|---|---|---|---|
| ՃԵ | . | . | Ճա |
| ՃԶ | ՂԺԲ | ՃԼԶ | [illegible] |

| Մ | Մր | Ղ | Յ |
|---|---|---|---|
| ՃԹ | ՂԺԹ | ՃԼԴ | Ճ |
| ՃԺ | . | . | . |
| ՃԺԱ | ՂԻ | ՃԼԵ | ԺԵ |

Եւ զաթոռս աղաւնավաճա
ռացն :
Եւ ասէ ցնոսա՝ գրեալ
է, տուն իմ տուն աղօ
թից կոչեսցի, և դուք
արարէք զդա այրս ա
ւազակաց :
մժբ Եւ մատեան առ նա
ժ կոյրք և կաղք 'ի տաճա
Խ.Օ րին, և բժշկեաց զնոսա :
մժգ Իբրև տեսին քահա
Ի նայապետքն և դպիրքն
զսքանչելիսն զոր արար,
և զմանկտին որք աղա
ղակէին 'ի տաճարին
և ասէին, ովսաննայ օրհ
նութի որդւոյ դաւթի .
բարկացան և ասեն ցնա՝
լսես, զինչ ասեն դոքա :
Ասէ ցնս այո .՝ չիցէ
ընթերցեալ ձեր, թէ 'ի
բերանոյ տղայոց և ստն
դեաց կատարեցեր զօր
հնութի :

մժդ Զ Եւ թողեալ զնոսա ել
արտաքոյ քաղաքին 'ի
բեթանիայ՝ և անդ ա
գաւ :

Եւ այգուցն ի եբ
երև դարձաւ
անդրէն 'ի քա
ղաքն քաղցեաւ . և տես
եալ զթզենի մի իվերայ
ճանապարհին՝ եկն 'ի
նա և ոչ եգիտ 'ի նմա,
բայց միայն տերև .
Եւ ասէ ցնա, մի՛ այս
ուհետև 'ի քէն պտուղ
եղիցի 'ի յաւիտեան :
և առժամայն չորացաւ
թզենին :
Իբրև տեսին աշակերտ
քն զարմացան և ասեն .
Թէ զիարդ վաղվաղակի
ցամաքեցաւ թզենին .
մժե Զ Պատասխանի ետ յս և
ասէ ցնոսա . ամէն ասեմ
ձեզ .

Մ Ղ
մժբ .
մժգ մլե

Մ Մր
մժդ Ծի
մժե Ծիբ

ձեզ. եթէ ունիցիք հաւատս և ոչ երկմտիցիք, ոչ միայն զթզենւոյդ առնիցէ. այլ թէպէտ և լերինդ ասիցէք բարձիր՝ և անկիր 'ի ծով, եղիցի:

ՄՅԲ Դ Եւ զամենայն զոր և խնդրիցէք յաղօթս, հաւատով առնուցուք:

ՄՅԷ Բ Եւ 'իբրև եկին 'ի տաճարն. մատեան առ նա

ԽԲ մինչդեռ ուսուցանէր, քահանայապետքն՝ և ծերք ժողովրդեանն՝ և ասեն, որով իշխանութբ̃ առնես զայդ, և ով ետ քեզ զիշխանութիւնդ զայդ:

Պատասխանի ետ յս̃ և ասէ ցնոսա, հարցից և ես զձեզ բան մի, զոր եթէ ասիցէք ինձ, և ես ձեզ ասացից որով իշխանութեամբ առնեմ զայս:

Մկրտութիւնն յոհաննու ուստի էր, յերկնից, թէ 'ի մարդկանէ: Եւ նոքա խորհէին ընդ միտս և ասէին: Եթէ ասեմք յերկնից ասէ ցմեզ. իսկ ընդէր ոչ հաւատացիք նմա. և եթէ ասեմք 'ի մարդկանէ է երկնչիմք 'ի ժողովրդենէն. զի ամենեքին զյոհաննէս իբրև զմարգարէ ունէին: Պատասխանի ետուն յս̃ և ասեն. ոչ գիտեմք: Ասէ ցնոսա և նա, և ոչ ես ասեմ ձեզ՝ որով իշխանութբ̃ առնեմ զայս:

ՄՅԸ Ծ

ԽԹ Բայց զի արդ թուի ձեզ. այր միոջ էին երկու որդիք: Եւ

Մ ՄՅԲ . ՄՅԷ | ՄԲ ՃԻԵ . ՃԻԷ | Ղ . ՄԽ | Յ ՃԻ, ՃԼԶ ՃԼԵ ՃԽ . | Ծ ՄՅԸ

Եւ մատուցեալ 'յառաջինն ասէ, երթ այսօր գործեա' յայգւոջ։
Նա պատասխանի ետ և ասէ, երթամ տէր' և ոչ չոգաւ։
Մատեաւ և առ միւսն, և ասէ նոյնպէս։
Նա պատասխանի ետ և ասէ ոչ կամիմ, բայց յետոյ զղջացաւ և չոգաւ յայգին։
Ո՞րդ' ո՞ յերկոցունց արար զկամս հօրն։
Ասեն յետինն։
Ասէ ցնոսա յս, ամէն ասեմ ձեզ, զի մաքսաւորք և պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւն երկնից։
Զի եկն յոհաննէս ճանապարհաւ արդարութեան' և ոչ հաւատացիք նմա, և մաքսաւորք և պոռնիկք հաւատացին նմա, և դուք տեսիք և ոչ զղջացայք յետոյ հաւատալ նմա։

ՄԻԹ Ժ Օ
Այլ առակ լուարուք, այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի. և ցանկով պատեաց զնա, և փորեաց 'ի նմա հնձան, և շինեաց աշտարակ, և ետ զնա մշակս, և գնաց 'ի տար աշխարհ։ ԻԳ
Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն առնուլ զպտուղս նորա։
Եւ կալեալ մշակացն զծառայսն նր, զոմն տանջեցին, զոմն սպանին, և զոմն քարկոծ եցին։

Դարձ

ՄԻԹ ԾԻԸ Զ

Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն, և արարին նոցա նոյնպէս։

Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր և ասէ, թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ. իսկ մշակքն իբրև տեսին զորդին. ասեն ընդ միտըս սա է՛ ժառանգն. եկայք սպանցուք զսա, և կալցուք զժառանգութ̅ի սորա։

Եւ առեալ հանին զնա արտաքոյ քան զայգին, և սպանին։

Արդ՝ յորժամ եկեսցէ տէր այգւոյն, զինչ արասցէ մշակացն այնոցիկ։

Ասեն ցնա, զչարսն չարաչար կորուսցէ. և զայգին տացէ այլոց մշակաց, որք տայցեն նմա զպտուղս ՚ի ժամու իւրեանց. ասէ ցնոսա յի̅ս. չիցէ երբէք ընթերցեալ ձեր ՚ի գիրս. ըզվէմն զոր անարգեցին շինօղքն. նա եղև գլուխ անկեան, ՚ի տ̅է եղև այս՝ և է՛ սքանչելի յաչս մեր։

Վ̅ս այսորիկ ասեմ ձեզ՝ զի բարձցի ՚ի ձէնջ արքայութի̅ն աստուծոյ, և տացի ազգի. որ առնիցէ զպտուղս ն̅ր։

Եւ որ անկցի ի վ̅ր վիմիս այսորիկ՝ փշրեսցի. և յ̅ոյր վերայ անկցի, հոսեսցէ զնա։

Ա Իբրև լուան քահանայապետքն և փարիսեցիքն զառակս զայս. գիտացին թէ վ̅ս նոցա ասաց։

Եւ

| | | | |
|---|---|---|---|
| ճ | մբ | ղ | յ |
| ճէ | ծիէ | մլթ | հե |
| օ | ծիթ | փբ | ձե |
| ջ | ա | փա | ձջ |

Եւ խնդրէին զնա ունել, բայց երկեան 'ի ժողովրդոցն, քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա։

գա
ե
ԾԲ. Դարձեալ պատասխանի ետ յս̃ եւ ասէ ցնոսա առակօք.

Նմանեցաւ արքայութի̃ն երկնից առն թագաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւրում.

Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն 'ի հարսանիս, եւ ոչ կամեցան գալ.

Դարձեալ առաքեաց այլ ծառայս եւ ասէ, ասացէք հրաւիրելոցն, ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի, զուարակք իմ եւ պարարակք զենեալք են, եւ ա̃մ ինչ պատրաստ է, եկայք 'ի հարսանիս.

Եւ նոքա յուլացեալք գնացին. ոմն յագարակ իւր, եւ ոմն 'ի վաճառ
էդ իւր. եւ այլք կալան զծառայս նր̃ թշնամանեցին, եւ սպանին.

Իսկ թագաւորն իբրեւ լուաւ բարկացաւ, եւ առաքեաց զզօրս իւր. եւ սատակեաց զսպանողսն զայնոսիկ եւ զքաղաքս նոցա այրեաց.

Յայնժամ ասէ ցծառայս իւր, հարսանիքս պատրաստ են, եւ հրաւիրեալքն չէին արժանի.

Արդ երթայք յանցս ճանապարհաց, եւ զոր միանգամ գտանիցէք կոչեցէք 'ի հարսանիսս.

Եւ ելեալ ծառայքն 'ի

՚ի ճանապարհս, ժողո
վեցին զամենեսեան.
զորս եւ գտին, զչարս՝ եւ
զբարիս, եւ լցան հարսա
նիքն բազմականօք:
Եւ մտեալ թագաւ
որն հայել զբազմակա
նօքն, ետես անդ զայր
մի, որոյ ոչ էր զգեցեալ
հանդերձ հարսանեաց.
եւ ասէ ցնա, ընկեր զի՞
արդ մտեր այսր՝, զի
ոչ ունէիր հանդերձ
հարսանեաց:
Եւ նա պապանձեցաւ.
Յայնժամ ասէ ցսպա
սաւորսն. կապեցէք ըզ
դորա զոտս եւ զձեռս,
եւ հանէք զդա ՚ի խա
ւարն արտաքին, անդ
եղիցի լալ եւ կրճել ա
տամանց:
Զի բազումք են կո
չեցեալք, եւ սակաւք են
ընտրեալք:
Յայնժամ գնացե
եալ փարիսե
ցիքն առին խորհ
ուրդ զնմանէ, որպէս
դնիցեն նմա զորոգայթ
բանիւք:
Եւ առաքեն առ նա
զաշակերտսն իւրեանց
հերովդիանոսօքն հան
դերձ եւ ասեն. վարդա
պետ, գիտեմք՝ զի ճշմա
րիտ ես, եւ զճանապարհն
աստուծոյ ճշմարտու
թե՟ ուսուցանես, եւ
ոչ է քեզ փոյթ զումե
քէ, եւ ոչ հայիս յերեսս
մարդոյ. արդ՝ ասա՛ մեզ
զի արդ թուի քեզ,
պարտ է հարկս տալ
կայսեր թէ ոչ:
Գիտաց յս՟ զխորաման
կութի՟ նոցա, եւ ասէ.
զի

զի փորձէք զիս կեղ
ծաւորք ։
Ցուցէք ինձ զդահե
կան հարկին , և նոքա
մատուցին նմա զդահե
կան մի ։
Եւ ասէ ցնոսա յս̃ . ոյր
է՛ պատկերս այս կամ
գիր ։
Ասեն կայսեր ։
Յայնժամ ասէ ցնոսա ,
երթայք տուք զկայ
սերն՝ կայսեր , և զաս
տուծոյն աստուծոյ ։
Իբրև լուան զարմա
ցան , և թողին զնա և
գնացին ։
ՃՂ. Յայնմ աւուր մատեան
առ նա սադուկեցիքն ,
որք ասէին թէ չիք յա
րութի̃ւ . հարցին ցնա՝ ,
և ասեն , վարդապետ՝
մովսէս ասաց , եթէ ոք
մեռցի անորդի , արաս
ցէ զկին նր̃ եղբայր իւր ,
և յարուսցէ զաւակ եղ
բօր իւրում ։
Էին առ մեզ եղբարք
եօթն . առաջինն արար
կին և մեռաւ . և զի ոչ
ունէր զաւակ , եթող
զկինն իւր եղբօր իւ
րում . նոյնպէս և երկ
րորդն , և երրորդն , մինչ
և ցեօթն երորդն ։
Յետ ամենեցուն մե
ռաւ և կինն ։
Արդ 'ի յարութե̃ ոյր
յեօթանցն եղիցի նա
կին . զի ամենեքին կա
լան զնա կին ։
Պատասխանի ետ նոցա
յս̃ և ասէ . մոլորեալ էք՝
ոչ գիտէք զգիրս՝ և ոչ
զզօրութի̃ն աստուծոյ .
զի 'ի յարութե̃ ոչ կա
նայս առնեն՝ և ոչ ա
րանց լինին , այլ են ի
բրև

երև զՀրեշտակս յեր
կինս ։
Բայց վս՟ յարութեան
մեռելոց չիցէ ընթերց
եալ ձեր զասացեալն
ձեզ յաստուծոյ ․ ես եմ
ած՟ աբրահամու, ած՟
իսահակայ, և ած՟ յակո
բայ, և չէ ած՟՝ ած՟ մեռ
ելոց այլ կենդանեաց ․
Իբրև լուան ժողո
վուրդքն ․ զարմանային
ընդ վարդապետութիւն
նորա ։
Փդ Իսկ փարիսեցիքն իբրև
Զ լուան եթէ պապանձե
ԾԳ ցոյց զսադուկեցիսն ․
ժողովեցան ի միասին ։
Եւ եհարց միոմն ՚ի նո
ցանէ զնա փորձելով և
ասէ ։
Վարդապետ՝ որ պա
տուիրանն է մեծ յօ
րէնս ։

Եւ յս՟ ասէ ցնա, սի
րեսցես զտր՟ ած՟ քո յամ՟
սրտէ քումէ, և յամ՟ անձ
նէ քումէ, և յամ՟ մտաց
քոց ։
Այս է մեծն՝ և առա
ջին պատուիրանն ։
Երկրորդն նման սմին,
սիրեսցես զընկեր քո իբ
րև զանձն քո ․ յայս եր
կուս պատուիրանս ամ՟
օրէնք և մարգարէք
կախեալ կան ։
Փե Եւ ՚ի ժողովել փարիսեց
Բ
ԾԵ ւոցն եհարց ցնոսա յս՟
և ասէ ։
Զիարդ թուի ձեզ
վս՟ քի՟, ոյր որդի է ․ ա
սեն ցնա դաւթի ․
Ասէ ցնս՟ յս՟, իսկ զի արդ
դաւիթ հոգւովն կոչէ
զնա տր՟, և ասէ ․
Ասաց տր՟ ցտր՟ իմ, նիստ
ընդ աջմէ իմմէ մինչև
եդից

մ կ
փդ ճլ

մ մր ղ
միե ճլե փե

եդից զթշնամիս քո պա
տուանդան ոտից քոց ։
Իսկ եթէ Դաւիթ զնա
տէր կոչէ, զի՞ արդ որդի
նորա լինի ։
ՄԴ Բ Եւ ոչոք կարէր տալ
նմա պատասխանի բան
մի, և ոչ իշխէր ոք յայնմ
օրէ հարցանել զնա և
ոչ ինչ ։

ՄԵ Ժ Յայնժամ խօսէր Յի
սուս ընդ ժո
ղովրդեան և
ընդ աշակերտսն իւր,
և ասէ ։
Յաթոռն Մովսէսի նըս
տան դպիրքն և փարի
սեցիքն ։
Զամ ինչ զոր ասիցեն
ձեզ արարէք, և պահե
ցէք, բայց ըստ գոր
ծոց նոցա մի առնէք,
զի ասեն և ոչ առնեն ։

ՄԸ Ե Կապեն մարդկան բեռ
ինս ծանունս և դժուա
րակիրս, և դնեն ի վե
րայ ուսոց մարդկան,
և մատամբ իւրեանց ոչ
կամին շարժել զնոսա ։
ՄԹ Բ Եւ զամ զգործս իւր
եանց առնեն ի ցոյց
մարդկան. լայնեն զգրա
պանակս իւրեանց, և
երկայնեն զքղանցս հան
դերձից իւրեանց ։
Սիրեն զյառաջագահս
ընթրիս, և զնախաթո
ռս ի ժողովուրդս և
զողջոյնս ի հրապարակս ։
Եւ կոչել ի մարդկանէ
ռաբբի ռաբբի ։
Ծ Ժ Բայց դուք մի՛ զոք կո
չէք վարդապետ, զի մի
է ձեր ուսուցիչ, և ա
մենեքեան դուք եղ
բարք էք ։
Եւ հայր մի կոչէք ձեզ
յեր

Մ Մր Ղ
ՄԴ ՃԻԲ ՃԴ
ՄԵ ։ ։

Մ Կ Ղ
ՄԸ ։ ՃԼԹ
ՄԹ ՃԼԵ ՃԼԵ ։ ՄԵ
Ծ ։ ։

երկրի, զի ձեր մի է
Հայր որ յերկինս է։
Եւ մի կոչիցիք ուսու-
ցիչք զի ուսուցիչն ձեր
քս է։
մա ե Եւ մեծն 'ի ձէնջ ե
զեղցի ձեր սպասաւոր։
Որ բարձրացուցանէ
զանձն խոնարհեսցի, եւ
որ խոնարհեցուցանէ
զանձն բարձրասցի։
մբ ե Վայ ձեզ դպրաց եւ
Ծ. Օ. փարիսեցւոց կեղծաւո
րաց, զի փակէք զար
քայութիւն երկնից առա
ջի մարդկան. դուք ոչ
մտանէք, եւ որոց մտա
նենն չտայք թոյլ մտա
նել։
մգ ժ Վայ ձեզ դպրաց եւ
փարիսեցւոց կեղծաւո
րաց. զի ուտէք զտունս
այրեաց, պատճառանօք
երկարէք զաղօթս վս

զի աւելի դատաստան
ընդունիցիք։
Վայ ձեզ դպրաց եւ
փարիսեցւոց կեղծաւ-
որաց, զի յածիք ընդ
ծով եւ ընդ ցամաք՝ առ
նել եկամուտ մի, եւ յոր
ժամ լինիցի, առնէք
զնա որդի գեհենի կր
կին եւս քան զձեզ։
Վայ ձեզ առաջնորդք
կոյրք. զի ասէք որ երդ
նու 'ի տաճարն չէ ինչ,
բայց որ երդնու յոսկին
որ 'ի տաճարին է, ար
ժան է։
Անմիտք եւ կոյրք՝ զինչ
մեծ է, ոսկին, եթէ
տաճարն, որ սրբէ զոս
կին։
Եւ որ երդնու 'ի սե
ղանն չէ ինչ, բայց որ
երդնու 'ի պատարագն որ
ի վերայ նր է, արժան է։
Յի

մ Ղ
մա ՃՀԹ ԺԳ
մբ ՃԽԲ
մգ 9

Յիմարք, և կոյրք. զինչ մեծ է. պատարագն, եթէ սեղանն որ սրբէ զպատարագն:
Իսկ արդ որ երդուաւ ի սեղանն. երդնու ի նա, և յամ որ ի վերայ նորա է:
Եւ որ երդուաւ ի տաճարն, երդնու ի նա և ի բնակիչս նր:
Եւ որ երդուաւ յերկինս՝ երդնու յաթոռն աստուծոյ, և յայն որ նստի ի վերայ նր:
ճլդ ե Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց, զի տասանորդէք զանանուխ, և զսամիթ, և զչաման, և թողէք զծանր ծանր օրինացն զդատաստան և զողորմութի և զհաւատս: Զայս արժան էր առնել՝ և զայն չթողուլ:
ճլե ժ Առաջնորդք կոյրք, որք զմժղուկս քամէք, և զուղտս կլանէք:
ճլզ ե Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց, զի սրբէք զարտաքինն զբաժակին և զսկաւառակին, և ի ներքոյ լի են յափշտակութե և անիրաւութե:
Փարիսեցի կոյր, սրբեա նախ զներքին բաժակին և զսկաւառակին, զի լինիցի և արտաքինն նոցա սբ:
ճլէ ե Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց, զի նման էք գերեզմանաց բռելոց, որք արտաքոյ երևին գեղեցիկք, և ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց՝ և ամ պղծութե:
Նոյն

Մ Ղ
ճլդ ճլջ

Մ Ղ
ճլե :
ճլզ ճլե
ճլէ ճլէ

Նոյնպէս եւ դուք ար
տաքոյ երեւիք մարդ
կան արդարք, եւ 'ի ներ
քոյ լի էք կեղծաւորու
թ͞ե եւ անօրէնութեամբ.
ԻԹ Վայ ձեզ դպրաց եւ
փարիսեցւոց կեղծաւ
որաց. զի շինէք զշիրիմս
մարգարէից, եւ զարդա
րէք զգերեզմանս ար
դարոց. եւ ասէք եթէ
էաք յաւուրս հարցն
մերոց ոչ հաղորդեաք
արեան մարգարէիցն.
Ապա ուրեմն վկայէք
զանձանց, եթէ որդիք
էք այնոցիկ որք կոտո
րեցին զմարգարէսն.
Եւ դուք լցէք զչափ
հարցն ձերոց.
ԼԳ Օձք' ծնունդք իժից.
զի արդ փախնուցուք 'ի
դատաստանէ գեհենին
ԼԴ Վ͞ս այդորիկ ահաւա
սիկ ես առաքեմ առ
ձեզ մարգարէս' եւ իմաս
տունս' եւ դպիրս' եւ 'ի
նոցանէ սպանանիցէք,
եւ 'ի խաչ հանիցէք, եւ
'ի նոցանէ տանջիցէք 'ի
ժողովուրդս ձեր, եւ հա
լածիցէք 'ի քաղաքէ 'ի
քաղաք.
Որ͞պ զի եկեսցէ ի վերայ
ձեր ա͞մ արիւն արդար
հեղեալ յերկրի, յարե
նէն աբէլի արդարոյ
մինչեւ ցարիւնն զաքա
րիայ որդւոյ բարաքեայ,
զոր սպանիք ընդ մէջ
տաճարին եւ սեղանոյն.
Ամէն ասեմ ձեզ, եկես
ցէ այն ի͞վ ազգիս այ
սորիկ.
ԼԷ Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորես
զմարգարէս' եւ քարկոծ
առնես զառաքեալսն, առ
քեզ քանիցս անգամ
կա

Մ Ղ
ճի. ճխ
ճխթ .
ճկ ճկա

Յ Ղ
ճխա ճ.ճէ

կամեցայ ժողովել զման
կունս քո, զորօրինակ ժո
ղովէ հաւ զձագս իւր
ընդ թեւօք, եւ ոչ կամե
ցար. ահա թողեալ լիցի
ձեզ տունդ ձեր աւե
րակ.
Բայց ասեմ ձեզ. թէ
ոչեւս տեսանիցէք զիս
յայսմհետէ, մինչեւ ասի
ցէք օրհնեալ եկեալ յա
նուն տեառն.

Գր Բ Եւ ելեալ արէն
տաճրս յս՟ ՚ի տա
ճարէն գնայր,
եւ մատեան աշակերտքն
ցուցանել նմա զշինու
ածս տաճարին.
Եւ նա պատասխանի
ետ եւ ասէ ցն՟, տես
անէք զայդ ամ՟. ամէն
ասեմ ձեզ. ոչ մնասցէ
այդր քար ՚ի քարի վե

մ մր
մեթ Դլէ Հ մլէ մխը

րայ որ ոչ քակտեսցի.
Թր Բ Եւ մինչդեռ նստէր ՚ի
լերինն ձիթենեաց, մա
տեան առ նա աշակերտ
քն առանձինն եւ ասեն,
ասա մեզ երբ լինիցի
այդ, եւ կամ զինչ նշան
իցէ քոյոյ գալստեանն,
եւ վախճանի աշխարհիս։
Պատասխանի ետ յս՟ եւ
ասէ ցն՟, զգոյշ լերուք
գուցէ ոք զձեզ խաբի
ցէ.
Զի բազումք գայցեն
յանուն իմ, եւ ասիցեն
թէ ես եմ քս՟ն, եւ զբա
զումս մոլորեցուցանի
ցեն.
Լսելոց էք պատերազ
մունս, եւ զհամբաւս պա
տերազմաց. զգոյշ լե
րուք, մի խռովեսջիք,
զի պարտ է լինել այնմ
ամ՟. այլ չեւ է կատա
րած. Յա

մ մր Հ
մեթ Դլը մխթ

Յարիցէ ազգ յազգի վերայ, եւ թագաւորութի՛ ՚ի թագաւորութե՛, եւ եղիցին սովք՝ եւ սրածութի՛ք՝ եւ սասանութի՛ք՝ ՚ի տեղիս տեղիս.
Սակայն եւ այն ամենայն սկիզբն է երկանց.

ճժԴ Ը Յայնժամ մատնեսցեն զձեզ ՚ի նեղութի՛ս, եւ սպանանիցեն զձեզ, եւ եղիջիք ատեցեալք յա՛մ ազգաց՝ վասն անուան իմոյ.

ճժԵ Ժ Եւ յայնժամ գայթակղեսցին բազումք, եւ զմիմեանս մատնեսցեն, եւ ատեսցեն զմիմեանս.
Եւ բազում սուտ մարգարէք յարիցեն, եւ ըզբազումս մոլորեցուսցեն.
Եւ վ՟ն բազմանալոյ անօրէնութե՛ն՝ ցամաքեսցի սէր բազմաց.
Բայց որ համբերեսցէ, ի սպառ նա կեցցէ.

ճժԷ Զ Եւ քարոզեսցի աւետարանս արքայութե՛՝ ընդ ա՛մ տիեզերս. ՚ի վկայութի՛ ա՛մ հեթանոսաց.
Եւ ապա եկեսցէ կատարած.

ճժԸ Զ Յորժամ տեսանիցէք զպղծութի՛ աւերածոյն, որ ասացեալն է ՚ի ձեռն դանիէլի մարգարէի. զի կայցէ ՚ի տեղւոջն սրբութեան, որ ընթեռնուն ՚ի միտ առցէ.

ճժԹ Բ Յայնժամ որք ՚ի հրէաստանի իցեն փախիցեն ՚ի լերինս.
Եւ որ ՚ի տանիս կայցէ՝ մի իջցէ առնուլ ինչ ՚ի տանէ իւրմէ.
Եւ որ յանդի իցէ՝ մի

դար

| Մ | Մր | Ղ | Յ | |
|---|---|---|---|---|
| ճժԴ | ճլԹ | ՄԵ | ճխա | ճխԶ |
| ժԱ | Ա | Ը | Զ | |

| Մ | Մր | Ղ |
|---|---|---|
| ճժԷ | ճխ | Օ |
| ճժԸ | ճխԲ | Օ |
| ճժԹ | ճխԳ | մԲ մԿԶ |

դարձցի յետս առնուլ
զձորձս իւր ։
մխթ Բայց վայ իցէ յղեաց
Բ և սնուցանողաց յաւուրսն
յայնոսիկ ։
մծ Յաղօթս կացէք՝ զի մի
Զ լինիցի փախուստն ձեր
ձմերայնի ։
մծա Եւ մի' 'ի շաբաթու ։
Բ Զի եղիցի յայնժամ
նեղութի՛ մեծ . որպիսի
ոչ եղև 'ի սկզբանէ
արարածոց աշխարհի
մինչև ցայժմ, և ոչ այլ
լիցի ։
մծբ Եւ եթէ ոչ կարճէին
Զ աւուրքն այնոքիկ, ոչ
ապրէր ամենայն մար
մին ։
Բայց վասն ընտրելոցն
կարճեսցին աւուրքն այ
նոքիկ ։
Յայնժամ թէ ոք ասի
մծգ
Բ ցէ ձեզ , ահաւասիկ

Ժ. Գ.

| մ | մր | ղ |
| --- | --- | --- |
| մխթ | ծխզ | մծգ |
| մծ | ծխէ | . |
| մծա | ծխղ | մծե |
| մծբ | ծխէ | . |
| մծգ | ծխը | մժթ |

աստ է Քն՝ կամ անդ՝
մի' հաւատայցէք ։
մծդ Զի յարիցեն սուտ
Զ քրիստոսք, և սուտ մար
գարէք . և տացեն նշա
նս մեծամեծս և արու
եստս . մինչև մոլորե
ցուցանել թէ հնար ինչ
իցէ և զընտրեալսն . ա
հա առաջագոյն ասացի
ձեզ ։
մծե Արդ եթէ ասիցեն
Ե ձեզ . ահաւանիկ յանա
պատի է մի ելանիցէք,
և թէ ահա 'ի շտեմարա
նս է մի հաւատայցէք ։
մծզ Զի որպէս փայ
Ե լակն որ ելա
նէ յարևելից
և երևի մինչև յարև
մուտս . այնպէս եղիցի
գալուստն որդւոյ մար
դոյ ։

Օ.

| մ | մր | ղ |
| --- | --- | --- |
| մծդ | ծխթ | . |
| մծե | . | մր |
| մծզ | . | մխ |

ՄԿԵ Զ ի ուր դէշն իցէ ․
Ե անդր ժողովեսցին ար
ծուիք ։
ՄԿԶ Աղվաղակ յետ նե
Բ ղութե աւուրցն այնո
ցիկ, արեգակն խաւա
րեսցի, եւ լուսինն ոչ տա
ցէ զլոյս իւր, եւ աս
տեղք անկցին յերկնից,
եւ զօրութիւնք երկնից շար
ժեսցին ։
Եւ ապա երեւեսցի
նշան որդւոյ մարդոյ
յերկինս ։
Եւ յայնժամ կոծես
ցին ամենայն ազգք եր
կրի ։
ՄԿԷ Եւ տեսցեն զորդի մար
Բ դոյ եկեալ իվր̃ ամպոց
երկնից զօրութեամբ եւ
փառօք բազմօք ։
Եւ առաքեսցէ զհրեշ
տակս իւր փողով մե
ծաւ, եւ ժողովեսցեն
զընտրեալս նր̃ 'ի չորից
հողմոց, 'ի ծագաց երկ
նից՝ մինչեւ 'ի ծագս նց̃ ։
Ի թզենւոյ անտի ու
սարուք զառակն, զի յոր
ժամ նորայ ոստքն կակ
ղասցին, եւ տերեւն ցցու
իցի, գիտէք թէ մերձ
է ամառն ։
Նոյնպէս եւ դուք յոր
ժամ տեսանիցէք զայս
ամ̃, գիտասջիք թէ մերձ
է 'ի դուրս ։
Ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ
անցցէ ազգս այս, մինչեւ
այս ամենայն եղիցի ։
Երկինք եւ երկիր անց
ցեն ․ եւ բանք իմ մի
անցցեն ։
Ա Բայց վասն աւուրն
Չ այնորիկ եւ ժամու, ոչ
ոք գիտէ, ոչ հրեշտակք
երկնից, եւ ոչ որդի, բայց
միայն հայր ։

Որ

| Մ | Մր | Ղ |
|---|---|---|
| ՄԿԵ | · | ՄԺԳ |
| ՄԿԶ | ՃԾ | ՄԾԵ |
| ՄԿԷ | ՃԾԱ | ՄԾԶ |

| Մ | Մր |
|---|---|
| Ը | ՃԾԲ |

Մա Այլ որպէս աւուրքն
Ե Նոյի. նոյնպ(էս) եղիցի գա
լուստն որդւոյ մարդոյ.
Զի որպէս էին յաւ
ուրսն որք յառաջ քան
զջրհեղեղն, ուտէին և
ըմպէին. կանայս առնէ
ին՝ և արանց լինէին.
մինչև յօրն յորում ե
մուտ Նոյ 'ի տապանն.
և ոչ գիտացին մինչև
եկն ջրհեղեղն և եբարձ
զամենեսին, այնպէս ե
ղիցի և գալուստն որ
դւոյ մարդոյ.

Մբ Յայնժամ թէ իցեն եր
Ե կու յագարակի. մինն
առցի, և միւսն թողցի։
Եւ եթէ երկու աղայ
ցեն 'ի մի երկանս. մինն
առցի, և միւսն թողցի.

Մգ Արթուն կացէք, զի
Զ ոչ գիտէք յորում ժա
մու տէրն ձեր գայ.

Մդ Զայն գիտասջիք, ե
Բ թէ գիտէր տանու
տէրն, յորում պահու
գող գայ, հսկէր, և ոչ
տայր ական հատանել
զտան իւրոյ.

Վասն այսորիկ և դուք
եղերուք պատրաստք,
զի յորում ժամու ոչ
ակն ունիցիք գայ որդի
մարդոյ.

Մե Իսկ ով իցէ հաւատա
Ե րիմ ծառայ և իմաս
տուն, զոր կացոյց տէր
իւր իվերայ ծառայից
իւրոց տալ նոցա զկե
րակուր 'ի ժամու.

Մզ Երանի է ծառային
Ե այնմիկ՝ զոր եկեալ
տէրն գտանիցէ արար
եալ այնպէս. ամէն ա
սեմ ձեզ, զի ի վերայ ա
մենայն ընչից իւրոց կա
ցուսցէ զնա.

Ապա

| Մ | Մր | Ղ |
|---|---|---|
| Մա | . | Ճե |
| Մբ | . | ՃԺԸ |
| Մգ | Ճծդ | [illegible] |

| Մ | Մր | Ղ |
|---|---|---|
| Մդ | Ճծե | ՃԿԶ |
| Մե | . | ՃԾԶ |
| Մզ | . | ՃԾԷ |

ՃԿԵ Ե Ապա եթէ ասիցէ ծառայն չար ՚ի սրտի իւրում, տէր իմ յամէ զգալ. և սկսանիցի հարկանել զծառայակիցս իւր. ուտիցէ և ըմպիցէ ընդ արբեցօղս. գայցէ տէր ծառային այնորիկ՝ յաւուր յորում ոչ ակն ունիցի, և ՚ի ժամու յորում ոչ գիտիցէ. և կարեսցէ զնա ընդ մէջ, և զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ. անդ եղիցի լալ և կրճտել ատամանց

ՃԿԶ Ժ ԻԵ Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց ելին ընդ առաջ փեսային և հարսին.

Մ Ղ
ՃԿԵ ԾԶԲ
ՃԿԷ Ջ

Հինգն ՚ի նոցանէ յիմարք էին, և հինգն իմաստունք. Յիմարքն առին զլապտերսն. և զձէթ ընդ իւրեանս ոչ բարձին. Իսկ իմաստունքն առին ձէթ ամանօք ընդ լապտերս իւրեանց. Եւ ՚ի յամել փեսային նիրհեցին ամենեքեան և ՚ի քուն մտին. Եւ ի մէջ գիշերի եղև բարբառ՝ ահա փեսայ գայ՝ արիք ընդ առաջ նորա. Յայնժամ յարեան ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս իւրեանց. Ասեն յիմարքն ցիմաստունսն, տուք մեզ յիւղոյդ ձերմէ. զի ահա շիջանին լապտերքս մեր. Պատասխանի ետուն ի

իմաստունքն, և ասեն.
գուցէ, ոչ իցէ մեզ և
ձեզ բաւական, այլ երթայք ի վաճառականս և
գնեսջիք ձեզ:
Մինչդեռ գնային նոքա
գնել՝ եկն փեսայն, և
պատրաստքն մտին ընդ
նմա 'ի հարսանիսն, և
փակեցաւ դուռն:
Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն. տէր տէր
բաց մեզ.
Նա պատասխանի ետ
և ասէ. ամէն ասեմ ձեզ՝
թէ ոչ գիտեմ զձեզ.
Արթուն կացէք, զի ոչ
գիտէք զօրն՝ և ոչ զժամն:
ՃԲ Ը Կ Որպէս այր մի գնացեալ
'ի տար աշխարհ, կոչեաց
զծառայս իւր. և ետ
նոցա զինչս իւր:
ՃԳ Ե Ումեմն ետ հինգ քանքար. և ումեմն երկուս.
ումեմն մի. իւրաքանչ
իւրում ըստ իւրում կարի և գնաց:
Զոքաւ վաղվաղակի որ
էառ զհինգն՝ գործեաց
նոքօք, և շահեցաւ այլ
և ս հինգ:
Նոյնպէս և որ զերկուսն, շահեցաւ այլ և ս
երկուս:
Իսկ որ զմին էառ՝ գնաց
փորեաց զերկիր, և թաքոյց զարծաթ տեառն
իւրոյ:
Յետ բազում ժամանակի՝ գայ տէր ծառայից
այնոցիկ, և առնէ
համարս ի մէջ նոցա. և
մատուցեալ որ զհինգն
քանքարն էառ՝ մատոյց
այլևս հինգ քանքար՝ և
ասէ. տէր հինգ քանքար
ետուր ցիս, արդ աւասիկ

| Մ | Ք | Ղ |
|---|---|---|
| ՄԿԹ | ԾԹԵ | ՃԲ |
| ՄԵ | Ա | ՃԹ |

սիկ հինկ այլ եւս քան
քար ’ի վերայ շահեցայ ։
Ասէ ցնա տէրն իւր,
ազնիւ ծառայ՝ բարի եւ
հաւատարիմ, որով հե
տեւ ’ի սակաւուդ հաւա
տարիմ ես, ’ի վերայ բազ
մաց կացուցից զքեզ,
մուտ յուրախութիւն տ̃ն
քո ։

Մատուցեալ եւ որոյ
զերկուս քանքարսն առ
եալ էր եւ ասէ ․ տ̃ր եր
կուս քանքարս ետուր
ցիս ․ ահաւասիկ երկուս
եւս այլ քանքարս զորս
’ի վերայ շահեցայ ։

Ասէ ցնա տ̃ր իւր ․ ազ
նիւ ծառայ՝ բարի եւ
հաւատարիմ ․ որով հետեւ
’ի սակաւուդ հաւա
տարիմ ես, ’ի վ̃ր բազմաց
կացուցից զքեզ ․ մուտ
յուրախութիւն տեառն
քո ։

Մատուցեալ եւ որոյ
զմի քանքարն առեալ էր
եւ ասէ, տ̃ր՝ գիտէի,
զի այր մի խիստ ես,
հնձես, զոր ոչ սերմա
նեցեր, եւ ժողովես,
ուստի ոչ սփռեցեր ․ եր
կեայ, գնացի, եւ թա
քուցի զքանքարն քո
յերկրի, արդ՝ ահաւասիկ
քոյդ ցքեզ ։

Պատասխանի ետ տէրն
եւ ասէ ցնա ․ ծառայ
չար եւ վատ ․ գիտէիր է
թէ հնձեմ, ուստի ոչ
սերմանեցի, եւ ժողովեմ
ուստի ոչ սփռեցի ։

Պարտ էր քեզ արկա
նել զարծաթդ իմ ’ի
սեղանաւորս, եւ եկեալ
ես տոկոսեօք պահան
ջէի զիմն ․

Արդ՝ առէք ’ի դմանէ
զքանքարդ եւ տուք

այնմ, որ ունիցի զտասն
քանքար :
ՄՀԱ Բ Զի ամենայնի, որ ու
նիցի, տացի և յաւելցի,
և որ ոչն ունիցի, և զոր
ունիցին, բարձցի ՚ի
նմանէ .
ՄՀԲ Ժ Եւ զծառայդ անպի
տան հանէք ՚ի խաւարն
արտաքին, անդ եղիցի
լալ և կրճել ատամանց:
ՄՀԳ Ժ ԿԸ. Եւ յորժամ եկեսցէ
որդի մարդոյ փառօք
իւրովք և ամենայն հրեշ
տակք ընդ նմա:
Յայնժամ նստցի յա
թոռ փառաց իւրոց .
և ժողովեսցին առաջի
նր̅ ա̅մ ազգք, և մեկ
նեսցէ զն̅ ՚ի միմեանց՝
ո̅պ հովիւ զի մեկնեսցէ
զօդիս յայծեաց . և կա
ցուսցէ զօդիսն ընդ աջ
մէ իւրմէ և զայծիսն

՚ի ձախմէ իւրմէ :
Յայնժամ ասասցէ թա
գաւորն ցայնոսիկ որք
ընդ աջմէն իցեն, եկայք
օրհնեալք Հօր իմոյ ժա
ռանգեցէք պատրաստեալ
ձեզ արքայութիւնն ՚ի
սկզբանէ աշխարհի :
Զի քաղցեայ և ե
տուք ինձ ուտել, ծա
րաւեցայ և արբուցէք
ինձ, օտար էի և ժողո
վեցէք զիս :
Մ՝երկ՝ և զգեցուցէք
զիս, հիւանդ էի և տե
սէք զիս . ի բանտի էի
և եկիք առ իս:
Յայնժամ պատասխա
նի տացեն նմա արդար
քն և ասասցեն :
Տէր երբ տեսաք զքեզ
քաղցեալ և կերակրե
ցաք, կամ ծարաւի, և
արբուցաք :
Երբ

| | | |
|---|---|---|
| Մ | Մր | Ղ |
| ՄՀԱ | ԽԲ | Մ |
| ՄՀԲ | . | ՄԼ |
| ՄՀԳ | . | Ի |

Երբ տեսաք զքեզ օտար, և ժողովեցաք, կամ մերկ, և զգեցուցաք ։

Երբ տեսաք զքեզ հիւանդ, կամ ՚ի բանտի, և եկաք առ քեզ ։

Պատասխանի տացէ Թագաւորն և ասասցէ ցնոսա, ամէն ասեմ ձեզ՝ որով հետև արարէք միում յեղբարցս այսցիկ փոքրկանց՝ ինձ արարէք ։

Յայնժամ ասասցէ և ցայնոսիկ որք ընդ ահեկէն իցեն . երթայք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա ։

Զի քաղցեայ, և ոչ ետուք ինձ ուտել, ծարաւեցայ, և ոչ արբուցէք զիս ։

Օտար էի, և ոչ ժողովեցէք զիս, մերկ էի, և ոչ զգեցուցէք զիս, հիւանդ էի և ՚ի բանտի և ոչ տեսէք զիս ։

Յայնժամ պատասխանի տացեն և նոքա և ասասցեն, Տէր երբ տեսաք զքեզ քաղցեալ, կամ ծարաւի, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ, կամ ՚ի բանտի, և ոչ պաշտեցաք զքեզ ։

Յայնժամ պատասխանի տացէ նոցա և ասասցէ, ամէն ասեմ ձեզ՝ որովհետև ոչ արարէք միում ՚ի փոքրկանցս յայսցանէ, և ոչ ինձ արարէք ։

Եւ երթիցեն նոքա ՚ի տանջանս յաւիտենականս, և արդարքն ՚ի

կե

կեանսն յաւիտենականս ։
Եւ եղև իբրև կատար
եաց յ͞ս զա͞մ զբանս
զայսոսիկ, ասէ ցաշա
կերտսն իւր ։
ՃՀԴ Ա Գիտէք, զի յետ եր
կուց աւուրց զատիկ
լինի, և որդի մարդոյ
մատնի ՚ի խաչ ելանել ։
ՃՀԵ Զ Յայնժամ ժողո
վեցան քահա
նայապետքն՝ և
դպիրք և ծերք ժողո
վրդեանն ՚ի սրահ քա
հանայապետին՝, որում
անուն էր կայիափա ։
Եւ արարին խորհուրդ
զի նենգութեամբ կալցեն
զյ͞ս և սպանցեն ։
Բայց ասէին թէ մի՛ ՚ի
տօնի աստ, զի մի խռո
վութիւն լինիցի ՚ի ժո
ղովրդեանն ։
ԺԱ Գ.

ՃՀԶ Ա Իբրև եկն յ͞ս ՚ի բեթա
նիա ՚ի տուն սիմօնի բո
րոտի ։
Մատեաւ առ նա կին
մի, որ ունէր շիշ իւղոյ
ծանրագնոյ, և թա
փեաց ՚ի գլուխ նորա ՚ի
բազմականին ։
Իբրև տեսին աշակերտ
քըն բարկացան, և ասեն
ընդէր է կորուստ այդ
իւղոյդ ։
Զի մարթ էր վաճա
ռել զդա մեծագնոյ, և
տալ աղքատաց ։
Գիտաց յ͞ս և ասէ ցն͞ս
զի՞ աշխատ առնէք զդա
կինդ. գործ մի բարի
գործեաց դա յիս. յա͞մ
ժամ զաղքատս ընդ
ձեզ ունիք, բայց զիս
ոչ հանապազ ընդ ձեզ
ունիք ։
ՃՀԷ Դ Արկանել դորա զիւղդ
՚ի

| | | | |
|---|---|---|---|
| Մ | Մ | Ղ | Յ |
| ՃՀԲ | ՃԾԼ | Ծ̃Ղ | ԻՒԲ ՂԶ |
| ՃՀԵ | ՃԾԵ | ○ | ○ |

| | | | |
|---|---|---|---|
| Մ | Մր | Ղ | Յ |
| ՃՀԶ | ՃԾՐ | ԿԶ | ՂԸ |
| ՃՀԷ | ՃԿԹ | ○ | ՂԸ |

'ի մարմին իմ, առ 'ի թա
ղելոյ զիս նշանակեաց ։
Ճշմարտ ասեմ ձեզ,
զի ուր քարոզեսցի աւե
տարանս այս ընդ ա̃մ
աշխարհ, խօսեսցի եւ
զոր արար դա՝ 'ի յիշա
տակի դորա ։

ճհր Բ Յայնժամ գնաց մի
յերկոտասանիցն անուա
նեալ յուդաս սկարիո
տացի առ քահանայա
պետսն, եւ ասէ. զինչ
կամիք տալ ինձ, եւ ես
մատնեցից զնա ձեզ.
Եւ նոքա կշռեցին նմա
երեսուն արծաթիս ։
Եւ յայնմ հետէ խնդ
րէր պարապ՝ զի մատ
նեսցէ զնա նոցա ։

ԿԳ. Եւ յառաջնում
աւուր բաղար
ջակերացն մա
տեան աշակերտքն առ
յս̃ եւ ասեն, ուր կամիս
զի պատրաստեսցուք քեզ
ուտել զ զատիկն ։
Եւ նա ասէ ցն̃ս, եր
թայք 'ի քաղաքն առ
այս անուն, եւ ասացէք
ցնա, վարդապետն ասէ՝
ժամանակ իմ մերձեալ
է, առ քեզ առնեմ զզա
տիկս աշակերտօքս հան
դերձ ։
Եւ արարին աշակերտ
քն որպ̃ հրամայեաց նո
ցա յս̃, եւ պատրաստե
ցին զ զատիկն ։
Եւ իբրեւ երեկոյ եղեւ
կայր բազմեալ ընդ եր
կոտասան աշակերտսն ։
ճհթ Դ Եւ մինչ դեռ ուտէ
ին նոքա ասէ. ամէն ա
սեմ ձեզ. զի մի ոմն 'ի
ձէնջ մատնելոց է զիս ։
ճձ Ա Եւ տրտմեցան յոյժ.
եւ

Մ Մր Ղ
ճհը Ծկ Ճկց

Մ Մր Ղ Յ
ճհթ Ծկ · հբ
ճձ Ծկբ ճկթ Ծիթ

և սկսան ասել ցնա իւրա
քանչիւրոք 'ի նոցանէ մի
թէ ես իցեմ տր։
ճա ե Նա պատասխանի ետ
և ասէ, որ մխեաց ընդ
իս զձեռն իւր 'ի սկաւա
ռակին՝ նա մատնելոց է
զիս։
Որդի մարդոյ երթայ
որպէս և գրեալ է վն նո
րա, բայց վայ մարդոյն
այնմիկ յոյր ձեռն որդի
մարդոյ մատնեսցի։
ճբ զ Եւ էր նմա թէ չէր
ծնեալ մարդն այն։
ճգ Պատասխանի ետ յու
դաս որ մատնելոցն էր
զնա և ասէ. մի թէ ես
իցեմ վարդապետ.
Ասէ ցնա դու ասացեր։
ճդ Ը Ա Եւ մինչ դեռ ուտէին
նոքա, էառ յս հաց.
օրհնեաց, և եբեկ, և
ետ աշակերտացն և
ասէ.

| մ | մր | ղ | յ |
|---|---|---|---|
| մձա | ճկգ | մկը | · |
| ճձբ | ճկգ | · | · |
| ճգ | · | · | · |
| ճձդ | ճկե | մկզ | ձե կըկեկը |

Առէք, կերէք, այս է
մարմին իմ։
ճե ե Եւ առեալ բաժակ, գո
հացաւ՝ ետ նոցա և ասէ.
Արբէք 'ի դմանէ ամե
նեքին.
Զի այդ է արիւն իմ
նորոյ ուխտի, որ ի վր
բազմաց հեղանի 'ի թո
ղութիւն մեղաց։
Բայց ասեմ ձեզ. ոչ ևս
արբից յայսմ հետէ 'ի
բերոյ որթոյ, մինչև
ցօրն այն յորժամ արբից
զդա ընդ ձեզ՝ նոր յար
քայութն հօր իմոյ։
ճզ Ջ Եւ օրհնեցին, և ելին
'ի լեառն ձիթենեաց։
Յայնժամ ասէ ցնո
ճէ Դ սա յս. ամենե
քին դուք գայ
թակղելոց էք յինէն յայսմ
գիշերի։
Զի

| մ | մր | ղ | յ |
|---|---|---|---|
| մճե | ճկղ | մկե | |
| մճզ | ճկէ | · | |
| ճձէ | ճկը | · | ճեը |

ՄՁԸ Զ Զի գրեալ է թէ հա
րից զհովիւն, և ցրուես
ցին ոչխարք հօտին։
Այլ յետ յառնելոյ ի
մոյ յառաջեսցից քան
զձեզ ՚ի Գալիլեա։
ՄՁԹ Ա Պատասխանի ետ պե
տրոս և ասէ ցնա. թէ
պէտ և ամենեքեան
գայթակղեսցին ՚ի քէն.
սակայն ես ոչ գայթակ
ղեցայց։
Ասէ ցնա Յս̃ ամէն ա
սեմ քեզ, զի յայսմ գի
շերի մինչ չև հաւու
խօսեալ իցէ երիցս ու
րասցիս զիս։
ՄՂ Զ Ասէ ցնա պետրոս. թէ
և մեռանիլ հասանիցէ
ընդ քեզ. զքեզ ոչ ու
րացայց։
Նոյնպէս և ամ̃ աշա
կերտքն ասէին։
ՄՂԱ Ա Յայնժամ գայ Յս̃ ընդ
նոսա ՚ի դիւղ մի, որում
անուն էր Գեթսե
մանի։
ՄՂԲ Զ Եւ ասէ ցնս̃, նստա
րուք այդր, մինչև եր
թայց կացից յաղօթս.
Եւ առեալ ընդ իւր
զպետրոս, և զերկուս որ
դիսն զեբեդեայ, սկսաւ
տրտմիլ և հոգալ.
ՄՂԳ Դ Յայնժամ ասէ ցնոսա,
տրտում է ոգի իմ մինչ
և ՚ի մահ. կացէք աստ
և հսկեցէք ընդ իս.
ՄՂԴ Ա Եւ մատուցեալ յա
ռաջ սակաւիկ մի, ան
կաւ ՚ի վր̃ երեսաց իւ
րոց, եկաց յաղօթս և
ասէ, Հայր իմ. եթէ
ճնար է անցցէ բաժա
կս այս յինէն.
ՄՂԵ Ա Բայց ոչ որպ̃ ես կամիմ,
այլ որպ̃ դու.
ՄՂԶ Բ Գայ առ աշակերտսն
և

| Մ | Մր | Ղ | Յ |
| --- | --- | --- | --- |
| ՄՁԸ | ՃԾԹ | . | . |
| ՄՁԹ | Ճ. | ՄԿԵ | ՃԺԵ |
| ՄՂ | ՃԿԱ | . | . |
| ՄՂԱ | ՃԿԲ | ՄԿԹ | ՃԾԶ |

| Մ | Մր | Ղ | Յ |
| --- | --- | --- | --- |
| ՄՂԲ | ՃԿԳ | . | . |
| ՄՂԳ | ՃԿԴ | . | ՃԽ |
| ՄՂԴ | ՃԿԵ | ՄՀ | ՃԿԱ |
| ՄՂԵ | ՃԿԶ | ՄՀԱ | [illegible] |
| ՄՂԶ | ՃԿԷ | ՄԿԶ | ՄԶ. |

եւ գտանէ զնս 'ի քուն ,
եւ ասէ ցպետրոս . այդ-
պէս ոչ կարացէք ժամ
մի արթուն կալ ընդ
զիս . արթուն կացէք ,
եւ աղօթս արարէք զի
մի' անկանիցէք 'ի փոր
ձութիւն .
ղկ Դ Հոգիս յօժար է բայց
մարմինս տկար :
ձլը Ջ Դարձեալ երկրորդ
անգամ չոգաւ եկաց յա
ղօթս յս եւ ասէ . Հայր
իմ . եթէ հնար իցէ ան
ցանել յինէն բաժակիս
այսմիկ .ապաթէ ոչ' ար
բից զսա , եղիցին կամք
քո :
Եւ եկեալ միւսանգամ
եգիտ զնս 'ի քուն , զի
էին աչք իւրեանց ծան
րացեալք .
Եթող զնս եւ գնաց .
եկաց յաղօթս երրորդ
անգամ , եւ դարձեալ
զնոյն բան ասաց :
Յայնժամ գայ առ աշա
կերտսն եւ ասէ ցնս .
մլթ Դ Ննջեցէք այսու հետեւ
եւ հանգերուք .
Զի ահա հասեալ է
ժամ , եւ որդի մարդոյ
մատնի 'ի ձեռս մեղա
ւորաց :
Արիք , երթիցուք աս
տի , զի ահաւասիկ ե
հաս որ մատնելոց է զիս .
Եւ մինչ դեռ նա զայն
ԿԱ խօսէր , ահա յուդաս մի
յերկոտասանիցն եկն .
եւ ընդ նմա ամբոխ բա
զում , սրօք եւ բրօք , 'ի
քահանայապետիցն եւ 'ի
ծերոց ժողովրդեանն .
մա Բ Եւ որ մատնելոցն էր
զնա' ետ նոցա նշան եւ
ասէ , ընդ որում ես
համբուրեցից նա է
զնա

| | | |
|---|---|---|
| մ | մր | յ |
| մլե | ճ ը | ճ |
| մլը | ճհթ | ը |

| | | | |
|---|---|---|---|
| մ | մր | ղ | յ |
| մլթ | ճձ | . | ճգ |
| յ | ճձա | մչե | հթ ճկը |
| կա | ճձբ | մձը | է |

զնա ունիցիք :
Եւ փաղփաղկի մատ
ուցեալ առ յս ասէ,
ողջ եր վարդապետ՝ և
համբուրեաց ընդ նմա :
Եւ յս ասէ ցնա, ըն
կեր, վս որոյ եկիր․
Յայնժամ մատուցեալ
արկին ձեռս ՚ի յս, և
կալան զնա :
մբ Ա Եւ ահա մի ոմն յայն
ցանէ որք էին ընդ յի․
ձգեաց զձեռն, և եհան
զսուր իւր, և եհար ըզ
ծառայ քահանայապե
տին, և ՚ի բաց եհան ըզ
ունկն նորա :
մգ Ժ Յայնժամ ասէ ցնա յս․
դարձո՛ զսուր քո ՚ի տե
ղի իւր, զի ամենեքեան
որք զսուր առնուցուն՝
սրով անկանիցին :
Թէ համարիցիս, թէ ոչ
կարեմ աղաչել զհայր
իմ, և հասուցանիցէ
ինձ այժմ աւելի քան
զերկոտասան գունդս հ
րեշտակաց :
Բայց զի արդ լնանիցին
գիրք, թէ այսպէս պար
տէ լինել :
մդ Ա Յայնժամ ասաց յս ցամ
բոխն․ իբրև ի վր աւազա
կի ելէք սուսերօք և բրօք
ունել զիս․ հանապազ
առ ձեզ ՚ի տաճարին՝ նս
տէի և ուսուցանէի, և ոչ
կալայք զիս :
Բայց այս ամ եղև, զի լը
մե ցին գիրք մարգարէից․
Հ Յայնժամ աշակերտքն ա
մենեքին թողին զնա և
փախեան :
մզ Ա Իսկ նոցա կալեալ
զյս ածին առ
կայիափա քահա
նայապետն, ուր դպիրք
և ծերք ժողովեալ էին

Եւ

| մ | մր | ղ | յ |
|---|---|---|---|
| մբ | ծձգ | մձէ | ճկ |
| մգ | . | . | . |

| մ | մր | ղ | յ |
|---|---|---|---|
| մդ | ծձդ | մձթ | ճհ |
| մե | ծձե | . | . |
| մզ | ծձզ | մլ | ճկ ճհզ |

յէ Ա Եւ պետրոս զհետ նո՟ր
երթայր բացագոյն մին
չեւ 'ի սրահ քահանայա
պետին, եւ մտեալ ի ներ
քս նստէր ընդ սպասա
ւորսն տեսանել զկատա
րածն ։

յը Բ Իսկ քահանայապետքն եւ
ամենայն ատեանն խնդրէ
ին սուտ վկայութիւն
զյ՟է ․ զի սպանցեն զնա ։
եւ ոչ գտանէին 'ի բազ
մաց սուտ վկայից մա
տուցելոց ։

յթ Զ Յետոյ մատուցեալ եր
կու սուտ վկայք ։
Ասէին թէ սա ասէր՝
կարող եմ քակել զտա
ճարն աստուծոյ, եւ զե
րիս աւուրս շինել ։
Եւ յարուցեալ քահա
նայապետն ասէ ցնա ․
չտաս ինչ պատասխանի ։
զինչ՛ դոքա ամբաստա
նեն զքէն ․
Եւ յ՟ս լուռ կայր ․
Պատասխանի ետ քա
հանայապետն եւ ասէ
ցնա, երդմնեցուցանեմ
զքեզ յա՟ծ կենդանի,
զի ասասցես մեզ թէ
դու ես ք՟ն որդի աս
տուծոյ ։
Ասէ ցնա յ՟ս, դու աս
ցեր ։

յժ Ա Բայց ասեմ ձեզ, յայսմ
հետէ տեսանիցէք զոր
դի մարդոյ նստեալ ընդ
աջմէ զօրութեան՝ եւ ե
կեալ ընդ ամպս երկնից ։

յժա Զ Յայնժամ քահանայա
պետն պատառեաց ըզ
հանդերձս իւր եւ ասէ,
հայհոյեաց ։

յժբ Զի՞ եւս պիտոյեն մեզ
վկայք ․ ահա արդ լու
այք զհայհոյութի՟ն դորա ։
Զի՞նչ՛ համարի է ձեզ
Նո

| մ | մր | ղ | յ |
| --- | --- | --- | --- |
| յէ | ճհը | մղա | ճկթ |
| յը | ճհթ | յե | . |
| յթ | ճձ | ։ | ։ |

| մ | մր | ղ | յ |
| --- | --- | --- | --- |
| յժ | ճձա | մղէ | կթ |
| յժա | ճձբ | . | |
| յժբ | ճձգ | մղթ | ։ |

Նոքա պատասխանի ե
տուն և ասեն . մահա
պարտ է .

յժգ Ա Յայնժամ թքին ընդ
երեսս նր , և կռփեցին
զնա , և ոմանք ապտա
կեցին , և ասեն . մար
գարէեաց մեզ քս՟դ՝ ով
է որ եհարն զքեզ .

յժդ Ա Իսկ պետրոս նստէր ար
Կ.Օ. տաքոյ 'ի գաւթին , մատ
եաւ առ նա աղախին
մի և ասէ , և դու ընդ
յի՟ գալիլեացւոյ էիր .
Նա ուրացաւ առաջի
ամենեցուն և ասէ թէ
ոչ գիտեմ զինչ խօսիդ :

յժե Ա Եւ իբրև ել նա արտա
քս քան զդրունն . ետես
զնա այլ կին մի . և ասէ
ցայնոսիկ որք անդն կայ
ին , և սա ընդ յի՟ նազօ
րեցւոյ էր .
Եւ դարձեալ ուրա

Մ Մր Ղ Յ
յժգ ճղէ սլգ ճհը
յժդ ճղը սլդ ճկզ ճկէ
յժե ճղթ սլե ճհզ

ցաւ երդմամբ , թէ ոչ
գիտեմ զայրն .
Եւ յետ սակաւ միոյ
մատուցեալ որք կային
անդ ասեն ցպետրոս .
արդարև՝ և դու ի նո
ցանէ ես , քանզի և
խօսք քո յայտ առնեն
զքեզ .
Յայնժամ սկսաւ նզո
վել և երդնուլ . թէ
ոչ գիտեմ զայրն :
Եւ նոյն հաւ խօսե
ցաւ .

յժզ Բ Եւ յիշեաց պետրոս ըզ
բանն յի՟ զոր ասաց . թէ
մինչ չև հաւու խօսեալ
իցէ երիցս ուրասցիս
զիս .
Եւ ելեալ արտաքս ե
լաց դառնապէս .

Իբրև

Մ Մր Ղ
յժզ ճղէ սլզ

յժե Ա Իբրև այգ եղև,
խորհուրդ արա
րին ամ՟ քահա
նայապետք՝ և ծերք ժո
ղովրդեանն վասն յի՟,
սպանանել զնա ։
Կապեցին զնա, և տարին
գնացին ։
Եւ ետուն ՚ի ձեռս
յժը Ա պոնտացւոյ պիղատոսի դա
տաւորի .
յժթ Ժ Յայնժամ տեսեալ յու
դայի որ մատնեաց զնա
Կ՟ թէ պարտաւորեցաւ,
զղջացաւ, և դարձոյց
զարծաթն առ քահա
նայապետսն, և ծերս
ժողովրդեանն . և ասէ,
մեղայ, զի մատնեցի զա
րիւն արդար .
Եւ նոքա ասեն, մեզ
չէ փոյթ . դու գիտես ։
Եւ ընկեց զարծաթն



| մ | մր | ղ | յ |
| --- | --- | --- | --- |
| յժե | մղբ | մլն | ճհզ |
| յժը | ճլթ | ժ | ճհղ |
| յժթ | ÷ | ÷ | ÷ |

իտաճարին և գնաց, և
հորքաւ խեղդեցաւ ։
Իսկ քահանայապե
տքն առեալ զարծաթն
ասեն . ոչ է արժան ըն
դունել զայդ ՚ի կորբան՝
քան զի գինք արեան են ։
խորհուրդ առեալ գը
նեցին այնու զագարա
կըն բրտի ՚ի գերեզմանս
օտարաց ։
Վասն այնորիկ կոչե
ցաւ ագարակն այն՝ ա
գարակ արեան, մինչև
ցայսօր .
Յայնժամ լցաւ որ ա
սացաւն ՚ի ձեռն երե
միայի մարգարէին . ա
ռին զերեսուն արծաթին
զգինս վաճառելոյն .
զոր առին յորդւոյն իղի ։
Եւ ետուն զնա յագա
րակն բրտի . որպէս հրամայ
եաց ինձ տր ։

Եւ

յի Ա Եւ յս̅ եկաց առաջի
դատաւորին։
Եհարց ցնա դատաւորն
եւ ասէ․ դու ես թագա
ւորն հրէից․
Եւ յս̅ ասէ, դու ասես։
յիա Դ Եւ ՚ի չարախօսելն նր̅
՚ի քահանայապետիցն եւ
՚ի ծերոց, ոչ ինչ ետ պա
տասխանի։
Յայնժամ ասէ ցնա պի
ղատոս․ ոչ լսես որ չափ
դոքա հակառակ քո վը
կայեն։
Եւ ոչ ետ նմա պատաս
խանի եւ ոչ բան մի․
մինչեւ զարմանալ դա
տաւորին յոյժ։
յիբ Բ Բայց ըստ տօնի սովոր
էր դատաւորն արձա
կել ժողովրդեանն կապ
եալ մի, զոր կամէին։
յիգ Դ Ունէին յայնժամ կապ
եալ մի նշանաւոր ո
րում անունն էր յեսու
բարաբբայ։
Իբրեւ ժողովեցան ասէ
ցնոսա պիղատոս, զո՞ կա
միք յերկուց աստի զի
արձակեցից ձեզ․ զյե
սու բարաբբայ, եթէ
զյս̅ զանուանեալն քս̅։
Քանզի գիտէր թէ
առ նախանձու մատնե
ցին զնա․
յիդ Ժ Եւ մինչ դեռ նստէր
յատենին, առաքեաց
առ նա կինն իւր եւ ա
սէ․ չկայ ինչ քո եւ արդա
րոյդ այդորիկ․ զի բա
զում անցք անցին ընդ
իս այսօր յանուրջս՝ վս̅
դորա։
յիե Ա Իսկ քահանայապետքն
եւ ծերքն հաւանեցու
ցին զժողովուրդսն, զի
խնդրեսցեն զբարաբ
բայն, եւ զյս̅ կորուսցեն։
Պա

| Մ | Մր | Ղ | Յ |
|---|---|---|---|
| յի | մ | յբ | ճձը |
| յիա | մա | ․ | ճձ ճղբ |
| յիբ | մբ | յթ | ․ |
| յիգ | մգ | ? | ճձգ |

| Մ | Մր | Ղ | Յ |
|---|---|---|---|
| յիդ | ․ | ․ | ․ |
| յիե | մդ | յժ | ճձե |

Պատասխանի ետ դա
տաւորն եւ ասէ ցնոսա,
զո՞ կամիք, զի արձակե
ցից ձեզ յերկուց այտի։
Եւ նոքա ասեն զԲա
րաբբայ։
յիզ Ա Ասէ ցնս Պիղատոս. Իսկ
զի՞ արարից զՅս զանուա
նեալն Քս։
Ասեն ամենեքեան, Խա
չեսցի. Եւ նա ասէ զինչ
չար արար. Եւ նոքա առա
ւել եւս աղաղակէին
եւ ասէին, Խաչեսցի։
յիէ Ժ Եւ տեսեալ Պիղատո
սի թէ ոչ օգնէ, այլ
առաւել խռովութի՛ լի
նի, առեալ ջուր լու
աց զձեռս առաջի ժո
ղովրդեանն եւ ասէ,
քաւեալ եմ ես յարենէ
արդարոյդ այդորիկ դուք
գիտասջիք։
Պատասխանի ետ ամ ժո
ղովուրդն եւ ասէ, Ա
րիւն դորա ի վ՛ր մեր եւ
ի վ՛ր որդւոց մերոց։
յիը Ա Յայնժամ արձակեաց
նոցա զԲարաբբայն։
Եւ զՅս գան հարեալ
ետ ի ձեռս զի խաչես
ցի։
յիթ Դ Յայնժամ զինուորք
դատաւորին առին զՅս
յապարանս, եւ ժողովե
ցին ի վերայ նորա զամ
զգունդն։
Մերկեցին զնա, եւ ար
կին զնովաւ քղամիդ
կարմիր։ Եւ բոլորեալ
պսակ ի փշոց եդին ի
գլուխ նր, եւ եղէգն յա
ջոյ ձեռին նորա։
Ի ծունր իջեալ առ
աջի նր կատակէին եւ
ասէին, ողջեր թագա
ւոր հրէից։
յլ Զ Եւ թքեալ ի նա առ
նո

| Մ | Մր | Ղ | Յ |
|---|---|---|---|
| յիզ | ձե | յձայձգ | ճձըճղէ |
| յիէ | ։ | ։ | ։ |

| Մ | Մր | Ղ | Յ |
|---|---|---|---|
| յիը | ձզ | յձդ | ճղղ |
| յիթ | ձէ | . | ճձե ճղթ |
| յլ | ձը | ։ | ։ |

նուին զեղէգն և ծե
ծէին զգլուխ նր :
Եւ յորժամ ձաղեցին
զնա՝ մերկացուցին 'ի
նմանէ զքղամիդն · և
ագուցին նմա զիւր հան
դերձն , և տարան զնա
'ի խաչ հանել :
ՄԼԱ Ա Եւ եղեալ արտաքս
գտին զայր մի կիւրե
նացի յանուն սիմոն , զնա
կալան պահակ , զի բարձ
ցէ զխաչն նորա :
ՄԼԲ Ա Եւ եկեալ 'ի տեղին ա
նուանեալ գողգոթա ,
որ է տեղի կառափե
լոյ :
ՄԼԳ Դ Ետուն նմա գինի ընդ
լեղի խառնեալ · և իբրև
ճաշակեաց ոչ կամէր ըմ
պել :
ՄԼԴ Ա Եւ հանեալ զնա 'ի խաչ ,
բաժանեցին զհանդեր
ձս նորա վիճակաւ : զի

| Մ | Մ | Ղ | Յ |
|---|---|---|---|
| ՄԼԱ | ՅԼԹ | ՅԺԵ | ՃՂԵ |
| ՄԼԲ | ՅԽ | ՅԺԶ | ՃՂԶ |
| ՄԼԳ | ՅԽԱ | . | ՃԶ |
| ՄԼԴ | ՅԽԲ | ՅԺԱ | [illegible] |

լցցի բանն որ ասացաւ
'ի մարգարէէն · բաժանե
ցին զհանդերձս իմ յիւր
եանս , և 'ի վր պատմու
ճանի իմոյ վիճակս ար
կանէին · և նստեալ պա
հէին զնա :
ՄԼԵ Ա Եւ եդին 'ի վր գլխոյ
նր գրեալ զվնաս նորա ,
թէ սա է յս թագա
ւորն հրէից :
ՄԼԶ Ա Յայնժամ հանին ընդ
նմա 'ի խաչ երկուս աւա
զակս , մի յաջմէ նր , և
մի յահեկէ :
ՄԼԷ Զ Եւ որք անցանէինն ,
հայհոյէին զնա · շարժէ
ին զգլուխս իւրեանց :
Եւ ասէին , վահ , որ քա
կէիր զտաճարն և զե
րիս աւուրս շինէիր զնա ,
ապրեցո՛ զքեզ , եթէ որ
դի ես աստուծոյ էջ 'ի
խաչէդ :
Նոյն

| Մ | Մ | Ղ | Յ |
|---|---|---|---|
| ՄԼԵ | ՅԽԳ | ՅԺԷ | ՃՂԹ |
| ՄԼԶ | ՅԽԵ | ՅԺԸ | ՃՂԸ |
| ՄԼԷ | ՅԽԶ | : | : |



ՅԼԷ Բ Նոյնպէս և քահանայա
պետքն ծաղրէին՝ հան
դերձ դպրօքն՝ և ծերօք՝
և ասէին ։
Զայլս ապրեցոյց զին
քըն ոչ կարէ ապրեցու
ցանել, եթէ թագաւոր
է Իղի իջցէ այժմ ՚ի խա
չէդ և հաւատասցուք ՅԼԸ Բ
դմա,
Եթէ յուսացաւ յԱծ,
փրկեսցէ այժմ զդա, ե
թէ կամի զդա. քանզի
ասաց եթէ աստուծոյ
որդի եմ ։
ՅԼԹ Բ Զնոյն և աւազակքն
որք խաչեալ էին ընդ
նմա՝ նախատէին զնա ։
ՅԽ Բ Եւ ՚ի վեց ժամէ աւու
րըն խաւար եղև ի վերայ
ամ երկրի մինչև ցինն
ժամն ։
ՅԽԱ Զ Եւ զիննև ժամաւն գոչ
եաց յս ՚ի ձայն մեծ և
ասէ. էլի՛ էլի՛ լամասա
բաքթանի. այս ինքն է
ած իմ, ած իմ, ընդ էր
թողեր զիս ։
Ոմանք յայնցանէ որք
անդ կային. իբրև լու
ան ասէին, զեղիա կար
դայ դա ։
ՅԽԲ Բ Եւ վաղվաղակի ընթա
ցաւ մի ոմն ՚ի նոցանէ,
էառ սպունգ լի քացա
խով՝ հարեալ յեղեգան
ետ ըմպել նմա ։
Եւ կէսքն ասէին, թող
տեսցուք եթէ գայ Ե
ղիա փրկել զդա ։
ՅԽԳ Ա Եւ յս դարձեալ աղա
ղակեաց ՚ի ձայն մեծ, և
արձակեաց զոգին ։
ՅԽԴ Բ Եւ ահա վարագոյր տա
ճարին ցելաւ յերկուս,
՚ի վերուստ մինչև ՚ի
վայր ։
ՅԽԵ Ժ Երկիր շարժեցաւ, և
վէմք

| Մ | Մր | Ղ |
|---|---|---|
| ՅԼԷ | ՄԺԸ | ՅԻԸ |
| ՅԼԹ | ՄԺԹ | ՅԻԵ |
| ՅԽ | ՄԻ | ՅԻԹ |
| ՅԽԱ | ՄԻԱ | |

| Մ | Մր | Ղ | Յ |
|---|---|---|---|
| ՅԽԲ | ՄԻԲ | ՅԻԳ | ։ |
| ՅԽԳ | ՄԻԳ | ՅԼԹ | ՃԶ |
| ՅԽԴ | ՄԻԴ | ՅԻԸ | ։ |
| ՅԽԵ | ○ | ○ | ○ |

վէմք պատառեցան :
Եւ գերեզմանք բացան. եւ բազում մարմինք նըն
ջեցելոց սրբոց յարեան :
Եւ ելեալք 'ի գերեզմանացն յետ յարութեն
նր, մտին 'ի քաղաքն սբ
եւ երեւեցան բազմաց :
յխզ Բ Իսկ հարիւրապետն եւ
որք ընդ նմա պահէին
զյս. իբրեւ տեսին զշար
ժումն եւ զեղեալսն, եր
կեան յոյժ եւ ասեն, ար
դարեւ աստուծոյ որդի
էր սա :
յխէ Զ Էին անդ կանայք բա
զումք, կային 'ի հեռ
աստանէ եւ հայէին, որք
եկին զկնի յի 'ի գալիլեէ
պաշտել զնա :
Յորս էր մարիամ մագ
դաղենացի, եւմարիամ յա
կոբայ, եւ յօսեայ, մայր
եւ մայր որդւոցն զեբեդ
եայ :

մ մ ղ
յխզ մխե յլ
յխէ մխզ :

յխը Ա Եւ իբրեւ երե
կոյ եղեւ, եկն
այր մի մեծա
տուն յարիմաթեայ, որ
ում անունն էր յօսէփ.
որ աշակերտեցաւ իսկ
յիսուսի :
Սա մատուցեալ առ պի
ղատոս խնդրեաց զմար
մինն յի :
Յայնժամ պիղատոս հր
ամայեաց տալ զմար
մինն :
յխթ Ա Եւ առեալ զմարմինն
յօսէփ. պատեաց սուրբ
կտաւօք :
Եւ եդ 'ի նոր գերեզ
մանի, զոր փորեաց 'ի
վիմի. եւ թաւալեցուց
եալ կափարիչ դրան գե
րեզմանին վէմ մի մեծ,
եւ գնաց :
յծ Զ Անդ էր մարիամ մագ
դա

մ մր ղ յ
յխը մխե յլե մղ
յխթ մխը յլզ մք
յծ մխթ

դաղենացի և միւս մա
րիամ , նստէին հան
դէպ գերեզմանին ։

յծա
ծ
Եւ ’ի վաղիւ ան
դր որ է յետ
ուրբաթուն ։
ժողովեցան քահանայա
պետքն և փարիսեցիքն
առ պիղատոս ։
Եւ ասեն , տէր յիշե
ցաք , զի մոլորեցուցիչն
այն ասէր , մինչ կենդա
նին էր , թէ յետ երից
աւուրց յառնեմ ։
Արդ՝ հրամայեա՛ զգու
շանալ գերեզմանին
մինչև ցերիս աւուրս ,
մի գուցէ եկեալ աշա
կերտքն գիշերի գողա
նայցեն զնա , և ասիցեն
ժողովրդեանն թէ յար
եաւ ’ի մեռելոց , և լի
նիցի յետին մոլորութի՟ն

չար՝ քան զառաջինն ։
Ասէ ցնոսա պիղատոս ,
ունիք զզօրականս , եր
թայք զգուշացարուք որ
պէս և գիտէք ։
Եւ նոքա երթեալ ընդ
գուշացան գերեզման
նին , և կնքեցին զվէմ
հանդերձ զօրականօքն ։

յծբ
Ա
ԼԹ.
Եւ յերեկոյի
շաբաթուն , յո
րում լուսանայր
միաշաբաթին ։ եկն մա
րիամ մագդաղենացի , և
միւս մարիամ տեսանել
զգերեզմանն ։
Եւ ահա շարժումն
մեծ եղև , զի հրեշտակ
տեառն իջեալ յերկնից
մատուցեալ ’ի բաց թա
ւալեցոյց զվէմ ’ի դը
րանց անտի , և նստէր
ի վերայ նորա ։

Եւ էր տեսիլ նորա իբ-
րեւ զփայլակն, եւ հան-
դերձ նր սպիտակ իբրեւ
զձիւն.

ձժգ Ե Եւ յահէ անտի նորա
խռովեցան պահապան-
քն, եւ եղեն իբրեւ զմ-
եռեալս։

Պատասխանի ետ հրեշ-
տակն եւ ասէ ցկանայսն
մի՛ երկնչիք դուք, գի-
տեմ զի զյս զխաչե-
լեալն խնդրէք։

Չէ աստ, քանզի յար-
եաւ որպ ասացն, եկայք
եւ տեսէք զտեղին ուր
կայր։

Եւ վաղվաղակի. եր-
թայք ասացէք աշակեր-
տացն նր թէ յարեաւ.
եւ ահա յառաջանայ քան
զձեզ ՚ի գալիլեա, անդ
տեսանիցէք զնա, ահա
ասացի ձեզ։

ճ.Օ.

մ մր ղ յ
ձժգ մլբ ղլէ մժա

ձժդ Բ Եւ ելեալ վաղվաղակի
՚ի գերեզմանէ անտի,
ահիւ եւ խնդութբ բազ-
մաւ, ընթանային պատ-
մել աշակերտացն։

ձժե Ժ Եւ ահա պատահեցաւ
նոցա յս եւ ասէ ողջ լերուք։
Եւ նոքա մատուցեալ
կալան զոտս նր, եւ երկիր
պագին նմա։

Յայնժամ ասէ ցնս յս
մի՛ երկնչիք, երթայք
ասացէք եղբարցն իմոց՝
զի երթիցեն ՚ի գալիլ-
եա՝ եւ անդ տեսցեն
զիս՝։

Իբրեւ նոքա գնացին
ահա ոմանք ՚ի զօրակա-
նացն եկին ՚ի քաղաքն՝
եւ պատմեցին քահանայա-
պետիցն զամ որինչ
եղեն։

Եւ նոքա ժողովեալ
հանդերձ ծերօքն ՚ի խոր-
հուրդ

մ փ ղ
ձժդ պլգ ղլբ
ձժե



հուրդ առեալ, արծաթ յոյժ ետուն զօրականացն .

Եւ ասեն, ասասջիք՝ եթէ աշակերտքն նորա եկեալ գիշերի գողացան զնա մինչ մեք 'ի քունէաք .

Եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեք հաճեսցուք զնա՝ և զձեզ անհոգս արասցուք .

Եւ նոքա առեալ զարծաթն յօրարին ոպ̃ ուսանն . և եղ համբաւս այս 'ի հրէից մինչև ցայսօր .

Իսկ մետասան աշակերտքն գնացին 'ի գալիլեայ, 'ի լեառն ուր ժամադիր եղև նցյս̃ .

Եւ իբրև տեսին զնա երկիրպագին նմա . և ոմանք երկուացան .

Եւ մատուցեալ յս̃ խօսեցաւ ընդ նոսա և ասէ, տուաւ ինձ ա̃մ իշխանութի̃ յերկինս և յերկրի, ոպ̃ առաքեաց զիս հայր, և ես առաքեմ զձեզ .

Գնացէք այսուհետև աշակերտեցէք զա̃մ հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ .

ուսուցէք նոցա պահել զա̃մ զոր ինչ պատուիրեցի ձեզ .

Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զա̃մ աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի .

Նախադրութիւն Մարկոսի Աւետարանին ։

Աւետարանս որ ըստ մարկոսի. գրեալ է. նոյն մարկոս աշակերտն պետրոսի. և ընթացակիցն պօղոսի. և դնէ սկիզբն աւետարանին 'ի յոհան նու քարոզութէն, և ըզ մկրտութիւնն յովհան նու. և առնու վկայու թի յեսայեայ մարգա րէէ. նշանակէ և զփոր ձութին 'ի լերինն, և ոչ առնէ զփորձանքն. պատ մէ և վս ընտրութե ա շակերտացն, և զնշանս և զարուեստս զոր ա րար. և զխորհուրդ մատնութեան և զկատա րածն, թէ որպէս մատ նեցաւ պիղատոսի, և խաչեցաւ մարմնով, և զինուորքն բաժանե ցին զհանդերձս նր, և մարմինն եդաւ 'ի գե րեզմանի, և յարեաւ եր եքօրեայ. զինչանելն հրեշտակին, և զերևելն կանանց, և պատմելն զ նոյնն աշակերտացն ։

Մարկոս աշակերտ և թարգման պետրոսի էր մին, յետ ծնգետասա նից ամաց համբառնա լոյ տն, աղաչեցեալ ի հռոմ յեղբարց հաւա տացելոց ի քս, գրեաց զաւետարանն լեզուաւ եգիպտականաւ համա ռօտապէս և հաւանու թք նոյնոյ սրբոյն պետ րոսի առեալ զաւե տարանն իւր գնաց յա ղեքսանդրիայ և յետոյ յեգիպտոս ։

Ցանկ գլխոց մարկոսի Աւետարանին ․

Վսն դիւահարին ․
Վսն պետրոսի զոքանչին ․
Վսն բժշկութեան հիւանդութեանց ․
Վսն բորոտին ․
Վսն անդամալուծին ․
Վսն ղեւեա մաքսաւորին ․
Վսն գօսացելոյ ձեռին ․
Վսն առաքելոցն ընտրութեան ․
Վսն սերմանեացն առակին,
Վսն սաստելոյ ջուրցն ․
Վսն լէգէոնացն ․
Վսն դստեր ժողովրդապետին ․
Վսն տեռատեսին ․
Վսն համարոյ առաքելոցն ․
Վսն յովհաննու և հերովդէի ․
Վսն հնգից հացիցն և երկուց ձկանց ․
Վսն գնալոյն ի վերայ ծովուն ․
Վսն անցանելոյ զպատուիրանաւն այ
Վսն կնոջն փիւնիկեցւոյ ․
Վսն համերն և խլին ․
Վսն եօթանց հացիցն ․
Վսն խմորոյ փարիսեցւոցն ․
Վսն կուրին ․
Վսն հարցանելոյն 'ի կեսարիա զ պետրոս

Վսն

| մրկ | ՝ղուկ | ՝յոհ | ՝մտթ |
|---|---|---|---|
| ա | — | — | — |
| բ | թ | — | ը |
| գ | ժ | — | թ |
| դ | ժբ | — | զ |
| ե | ժգ | ե | ժգ |
| զ | ժդ | — | ժդ |
| է | ժե | — | իա |
| ը | ժզ·իէ | — | ժթ |
| թ | իբ·լթ | — | իբ |
| ժ | իգ | — | ժա |
| ժա | իդ | — | ժբ |
| ժբ | իե | — | ժե |
| ժգ | իզ | — | ժզ |
| ժդ | իէ·ժզ | — | ժէ |
| ժե | — | — | իե |
| ժզ | իը | ը | իզ |
| ժէ | — | թ | իէ |
| ժը | — | — | իը |
| ժթ | — | — | իթ |
| ի | լթ | — | իբ |
| իա | — | — | լա |
| իբ | լգ | — | լբ |
| իգ | — | — | — |
| իդ | լթ | — | լգ |

Մ այլակերպութեան Տն̃ .
Մ լուսնահարին .
Մ խորհելոյ աշակերտացն թէ ով իցէ մեծ
Մ հարցանելոյ թէ պարտիցէ արձակել զկինս .
Մ հարցանելոյ մեծատանն զՅ̃ս .
Մ որդւոցն զեբեդեայ .
Մ բարտեմէոսի որդւոյ տիմէի .
Մ աւանակին և իշոյն ։
Մ չորանալոյ թզենւոյն .
Մ անյիշաչարութե̃ .
Մ հարցանելոյ քահանայապետացն զՏ̃րն .
Մ այգւոյն .
Մ հարցանելոյ զդահեկանէն .
Մ սադուկեցւոցն .
Մ դպրացն .
Մ Տն̃ հարցանելոյ զփարիսեցիսն .
Մ երկուց լումայիցն .
Մ կատարածին .
Մ աւուրն և ժամուն .
Մ օծանելոյ կնոջն զՏ̃րն .
Մ զատկին .
Մ մատնութե̃ն մարգարէանալոյ .
Մ պետրոսի ուրացութե̃ն .
Մ խնդրելոյ զՏ̃րունական մարմինն .
Մ իւղաբեր կանանցն .

| Մրկ | Ղուկ | Յոհ | Մատթ |
|---|---|---|---|
| իե | լե | — | լդ |
| իզ | լա | — | լե |
| իէ | լբ . հե | — | լզ |
| իը | — | — | լը |
| իթ | կգ | — | խա |
| լ | — | — | խգ |
| լա | կդ | — | խդ |
| լբ | կը | ժգ | խե |
| լգ | — | — | խէ |
| լդ | — | — | — |
| լե | — | — | — |
| լզ | կթ | — | խը |
| լէ | հ | — | ծ |
| լը | հա | — | ծբ |
| լթ | հբ | — | ծգ |
| խ | — | — | ծդ |
| խա | հգ | — | ծե |
| խբ | հդ | — | — |
| խգ | հե | — | ծզ |
| խդ | — | — | ծը |
| խե | իա | ժբ | կա |
| խզ | հզ | — | կգ |
| խէ | — | — | կե |
| խը | ձբ | ժը | կզ |
| խթ | ձգ | ի | կթ |





Սրբոյ Աւետարանիս
Ղուկ․ Մարկոսի ։

ա բ ՍԿԶԲՆ

# ԱՒԵՏԱՐԱՆԻ ՅԻ ՔԻ , ՈՐԴՒՈՅ

Աստուծոյ Ոպ և գրեալ է եսայի մարգարէ ․ ա
հաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո ,
որ հանդերձեսցէ զճանապարհս քո առաջի քո ։

բ Ա Ձայն բարբառոյ յանապատի , պատրաստ արարէք
զճանապարհս տեառն , և ուղիղ արարէք զշաւիղս
նորա ։

գ Զ Եւ եղև զի յոհաննէս մկրտէր յանապատի , և քա

ԺՂ րո

մբ ղ յ մ
ա հ ․ ճգ
բ ե ժ ը
գ ջ ջ թ

րողէր զմկրտութիւն ապաշխարութեան ՚ի թողութիւն մեղաց։
Եւ ելանէր առ նա ամ՟ աշխարհն Հրէաստանի, և Ե՟էմացիք ամենեքեան, և մկրտէին ՚ի նմանէ ՚ի յորդանան գետ խոստովանեալ զմեղս իւրեանց։
Եւ էր յովհաննէս զգեցեալ ստև ուղտու, և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, և կերակուր նր՟ մարախ և մեղր վայրենի։
Է "Քարոզէր և ասէր՝ գայ զօրագոյն քան զիս զկնի իմ, որում չեմ բաւական խոնարհիլ լուծանել զխրացս կօշկաց նորա։
Ես մկրտեցի զձեզ ջրով, և նա մկրտեսցէ զձեզ հոգւով սրբով։
Ը Եւ եղև յաւուրսն յայնոսիկ եկն յս՟ ՚ի նազարեթէ գալիլեացւոց, և մկրտեցաւ ՚ի յովհաննու ՚ի յորդանան։
Եւ նոյն ժամայն ընդ վերանալն ՚ի ջրոյն ետես ցելեալ զերկինս՝ և զհոգին աստուծոյ իբրև զաղաւնի. զի իջանէր ի վր՟ նորա։
Ձայն եղև յերկնից՝ և ասէ. դու ես որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ։
ԶԲ Եւ նոյն ժամայն ոգին հանէ զնա յանապատ.
Եւ էր նա անդ զաւուրս քառասուն փորձեալ ՚ի սատանայէ։
Ջ Եւ էր ընդ գազանս, և հրեշտակք պաշտէին զնա։

Եւ

| Մտ | Ղ | Յ | Մ |
|---|---|---|---|
| Է | Ժ | Զ ԺԲԺԳԺԷԸ | Ժա |
| Ե | ԺԳ | ԺԵ | ԺԳ |

| Մտ | Ղ | Մ |
|---|---|---|
| Ղ | ԺԶ | ԺԶ |
| Ե | Ի | ԺԷ |

Ե ԴԵւ յետ մատնե
լոյն Յովհաննու՝
եկն յս̅ ՚ի Գալի
լեայ՝։
Թ Զ Քարոզէր զաւետարանն
աստուծոյ և ասէր ։
Թէ կատարեալ է ժա
մանակ , և հասեալ է
արքայութիւնն աստու
ծոյ , ապաշխարեցէք ,
և հաւատացէք յաւետա
րանն ։
Իբրև անցանէր առ
ծովեզերբն գալիլեաց
ւոց՝ ետես զսիմոն և
զանդրէաս զեղբայր սի
մոնի , զի արկեալ էր նո
ցա ուռկանս ՚ի ծով․ քան
զի ձկնորսք էին ։
Ժ Բ Եւ ասէ ցնս̅ յս̅՝ եկայք
զկնի իմ, և արարից ըզ
ձեզ լինել որսորդս
մարդկան․

ԲԲ Եւ վաղվաղակի թող
եալ զուռկանսն գնացին
զհետ նորա ։
ԺԱ Զ Եւ մատուցեալ անտի
սակաւիկ մի յառաջ․ ե
տես զյակոբոս զզեբե
դեայ, և զյովհաննէս զեղ
բայր նորա , և զնս̅ ՚ի
նաւին՝ մինչ կազմէին
զուռկանս , և կոչեաց զ
նոսա ։
Եւ վաղվաղակի թող
եալ զհայրն իւրեանց
զզեբեդէոս ՚ի նաւին
վարձկանօքն հանդերձ
գնացին զհետ նորա ։
ԺԲ Ն Եւ մտանեն ՚ի բդ
կափառնաում ,
և իսկ և իսկ ՚ի
շաբաթուն մտեալ ՚ի
ժողովուրդն ուսուցա
նէր զնս̅ ։
ԺԳ Բ Եւ զարմանային ընդ
վար

| Մր | Ղ | Յ | Մ |
| --- | --- | --- | --- |
| ե | · | իզ | ժը |
| թ | · | · | ի |
| ժ | Ը | · | իա |

| Մր | Ղ | Մ |
| --- | --- | --- |
| ժա | · | իբ |
| ժբ | իդ | · |
| ժգ | ժիգ | իե |

վարդապետութեն նորա
զի ուսուցանէր զնոսա
իբրեւ իշխանութեամբ և ոչ
որպէս դպիրքն

ժգ ը Ա Եւ էր 'ի ժողովրդեանն
նոցա այր մի . յորում
այս պիղծ դոյր, որ ա-
ղաղակեաց և ասէ . Թոյլ
տուր, զի՞ կայ մեր և քո
յիսուս նազովրեցի, եկիր կո-
րուսանել զմեզ . գի-
տեմք զքեզ, ով ես սուրբ
աստուծոյ :

Սաստեաց 'ի նա յիսուս և
ասէ, կարկեաց և ել 'ի
դմանէ :

Եւ զարկոյց զնա այսն
պիղծ . և աղաղակեաց
'ի ձայն մեծ, և ել 'ի
նմանէ :

Եւ զարմացան ամենե-
քին . մինչեւ հծծել ընդ
միմեանս և ասել, զինչ
է այս նոր վարդապե-

տութիւս, զի իշխանու-
թեամբ այսոց պղծոց սաս-
տէ և հնազանդին սմա :

Եւ ել լուր նորա ընդ ամենայն
կողմն գալիլեացւոց :

ժե բ Բ Եւ վաղվաղակի ելեալ
'ի ժողովրդենէն, եկն 'ի
տուն սիմոնի և անդրէ-
այ, յակոբաւ և յօհաննու
հանդերձ :

Եւ զզօքանչ սիմոնի դըն
իւր ջերմացեալ, և վաղ-
վաղակի ասեն զնա վասն
նորա :

Եւ մատուցեալ յարոյց
զնա կալեալ զձեռանէ,
և եթող զնա տենդն՝ և
պաշտէր զնոսա :

Գ Եւ իբրեւ երեկոյ եղեւ
'ի մտանել արեգականն՝
բերէին առնա զամենայն հի-
ւանդս և զդիւահարս :

Եւ էր ամենայն քաղաքն ժո-
ղովեալ առ դրունսն .

Եւ

մտ ժգ ղ իե մ

մտ ժե ղ իզ մ կե

ժդ Եւ բժշկեաց զբազում
ը հիւանդս ՚ի պէսպէս ախ
տից.
Եւ զդեւս բազում ե
հան, և ոչ տայր խօսել
դիւացն, զի գիտէին
զնա թէ քրիստոս է.

ժե Եւ ընդ այգն ընդ
ը առաւօ
տըն յարուցեալ
ել, և գնաց յանապատ
տեղի, և անդ կայր յա
ղօթս.
Եւ գնաց զհետ նորա
սիմոն և որք ընդ նմայն
էին. և իբրեւ գտին զնա,
ասեն ցնա՝ թէ ամենե
քին խնդրեն զքեզ.
Եւ ասէ ցնոսա, եկայք,
երթիցուք և յայլ մօ
տաւոր գիւղաքաղաքսն՝
զի և անդ քարոզեցից,
զի յայս իսկ եկեալ եմ.
Եւ քարոզէր ՚ի ժողո
վուրդս նոցա ընդ ամ
գալիլեացիս, և զդեւս
հանէր.
ժզ Գայ առ նա բորոտ մի.
բ
գ աղաչէր, ՚ի ծունր իջա
նէր, և ասէր. տէր եթէ
կամիս, կարող ես զիս
սրբել.
Իսկ յիսուս գթացեալ ձգե
աց զձեռն մերձեցաւ
՚ի նա և ասէ ցնա, կա
միմ, սրբեաց.
Եւ իբրեւ ասաց ցնա,
վաղվաղակի գնաց ՚ի նմա
նէ բորոտութիւնն և սր
բեցաւ.
Եւ սաստեաց նմա ե
հան արտաքս վաղվաղա
կի և ասէ. զգոյշ լեր.
մի՛ ումեք ասիցես, այլ
երթ ցոյց զքեզ քահա
նային, և մատո՛ վասն սըր
բութեան քոյ պատարագ
զոր

մթ ղ
ժդ իե
ժե իը

մթ ղ մ
ժը լգ կթ

զոր հրամայեաց մովսէս
'ի վկայութի̃ նոցա :

ԺԹ Ժ Եւ նա ելեալ սկսաւ
քարոզել յոյժ՝ և հռչակ
հարկանել զբանն . մինչ
ոչ ևս կարող լինել նմա
յայտնապէս 'ի քաղաք
մտանել . այլ արտաքոյ
յանապատ տեղիս էր .
և գային առ նա յա̃մ
կողմանց :

Ի Ա Եւ մտեալ դարձեալ 'ի կա
փառնաում յետ
աւուրց , լուր եղև ե
թէ 'ի տան է . և ժո
ղովեցան բազումք՝ մին
չև տեղի ևս ոչ լինել , և
ոչ առ դրանն , և խօսէր
նոցա զբանն :

Ա Եւ գային առ նա՝ բե
րէին անդամալոյծ մի՝
բարձեալ 'ի չորից :

Եւ իբրև ոչ կարէին
մերձենալ առ նա յամ
բոխէ անտի . քակեցին
զյարկն՝ ուր էր յս̃ , և
բացեալ զառաստաղն
իջուցին զմահիճսն՝ յո
րում կայր անդամա
լոյծն :

Եւ տեսեալ յս̃ զհաւա
տս նոցա՝ ասէ ցանդա
մալոյծն , որդեակ՝ թող
եալ լիցին քեզ մեղք
քո :

Եւ էին ոմանք 'ի դպր
րաց անտի , որք անդ
նստէին , և խորհէին 'ի
սիրտս իւրեանց :

Զինչ է այս , որ խօսի
սա զհայհոյութիւնս ,
ո՞վ կարէ թողուլ զմեղս՝
եթէ ոչ մի ա̃ծ :

Եւ գիտաց յս̃ յոգի իւր՝
թէ այնպէս խորհէին
'ի սիրտս իւրեանց , և
ասէ

մ ղ յ ճ
ժթ . . .
Ա Ե ԼԵ Զ

ասէ՝ զի՛ խորհիք զայդ
՚ի սիրտս ձեր . զի՞նչ դիւ ժա բ
րին է . ասել ցանդամա
լոյծն՝ թողեալ լիցին
քեզ մեղք քո . եթէ ա
սել , արի առ զմահիճս
քո և երթ ՚ի տուն քո ։
Այլ զի գիտասջիք՝ եթէ
իշխանութիւն ունի որդի
մարդոյ իմն երկրի թո
ղուլ զմեղս ։
Ասէ ցանդամալոյծն ։
Քեզ ասեմ , արի՝ առ ժբ բ
զմահիճս քո՝ և երթ ՚ի
տուն քո ։
Եւ յարեաւ վաղվաղա
կի . առեալ զմահիճսն՝
ել առաջի ամենեցուն .
մինչև զարմանալ ամե
նեցուն և փառաւոր առ
նել զած , և ասել ։
Թէ այսպիսի ինչ երբէք
ոչ տեսաք ։

Եւ ել դարձեալ
՚ի ծովեզրն ,
և ամ ժողո
վուրդն գայր առ նա ,
և ուսուցանէր զնոսա ։
Եւ մինչդեռ անցանէր՝
ետես զղևի ալփեայ՝ զի
նստէր ՚ի մաքսաւորու
թեն , և ասէ ցնա , եկ
զկնի իմ , և յարուցեալ
գնաց զկնի նր ։
Եւ եղև ՚ի բազմելն նո
րա ՚ի տանն նր , և բազում
մաքսաւորք . բազմեալ էին
ընդ յի՝ և ընդ աշա
կերտսն նր , քանզի էին
բազումք՝ որք երթային
զհետ նր ։
Իսկ դպիրքն՝ և փարի
սեցիքն իբրև տեսին ,
թէ ուտէ ընդ մաքսա
ւորս և ընդ մեղաւորս .
ասեն ցաշակերտսն նր .

զի

մբ ղ մ
իա ւբ հա
իբ ւթ ճլզ հբ

զի է՛ զի ընդ մեղաւորս և ընդ մաքսաւորս ուտէք և ըմպէք։

ԻԴ Բ Իբրև լուաւ յս՟ ասէ ցնոսա, ոչ ինչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց. և ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։

Եւ էին աշակերտքն յոհաննու և փարիսեցւոցն ՚ի պահս. գան և ասեն ցնա. ընդէր աշակերտքն յոհաննու և փարիսեցւոցն պահեն, և քո աշակերտքն ոչ պահեն։

Եւ ասէ ցնա յս՟, միթէ մարթ ինչ իցէ որդւոց առագաստի՝ մինչ ընդ նոսա իցէ փեսայն պահել, ցորքան ընդ իւրեանս ունիցին զփեսայն, ոչ է մարթ պահել։

մր ԻԴ ղ Ն մ ՀԴ

Այլ եկեսցեն աւուրք յորժամ վերասցի ՚ի նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն յաւուրն յայնմիկ։

Ոչ ոք կապերտ նոր անթափ արկանէ ՚ի վերայ հնացեալ ձորձոյ, ապա թէ ոչ առնու լրութիւն իւրով նորն ՚ի հնոյ անտի, և չարև պատառումն լինի։

Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ՚ի տիկս հինս, ապա թէ ոչ պայթուցանէ գինին զտիկսն, գինին հեղանի, և տիկքն կորնչին. այլ գինի նոր ՚ի տիկս նորս արկանելի է։

ԻԴ Բ Եւ եղև նմա ՚ի բն շաբաթու անցանել ընդ արտորայս. և աշակերտքն ՚ի

մր ԻԴ ղ ԽԱ մ ԾԺԴ

'ի գնալն իւրեանց սկը
սան հասկ կորզել եւ
ուտել։
Եւ փարիսեցիքն ասէին
ցնա. տես զինչ գործեն
աշակերտքն քո 'ի շաբա
թու որ չէ արժան։
Եւ ասէ ցնս յս, ոչ՞երբ
ք՞էք իցէ ընթերցեալ
ձեր զոր արարն դաւիթ.
յորժամ պիտոյն եղեւ
եւ քաղցեաւ նա եւ որք
ընդ նմայն էին։
Զիարդ եմուտ 'ի
տունն աստուծոյ առ
աբիաթարաւ քահանայ
ապետիւ, եւ զհացսն առ
աջաւորութեան եկեր,
եւ ետ այնոցիկ որք ընդ
նմայն էին, զորս ոչ էր
օրէն ուտել՝ բայց միայն
քահանայիցն։
իէ Եւ ասէ ցնս, շաբաթ
Բ վս մարդոյ եղեւ, եւ ոչ

եթէ մարդ վս շաբա
թու. ապա ուրեմն տր
է որդի մարդոյ եւ շա
բաթու։
Գ Եւ եմուտ միւսան
գամ 'ի ժողովուրդն, եւ
էր անդ այր մի որոյ
ձեռն գօսացեալ էր.
եւ սպասէին նմա եթէ
բժշկիցէ զնա 'ի շաբա
թուն զի չարախօսեսցեն
զնմանէ։
Եւ ասէ ցայրն որոյ
ձեռն գօսացեալ էր,
արի, անց 'ի մէջ։
Եւ ասէ ցնոսա, զինչ
արժան է 'ի շաբաթու
բարի ինչ գործել եթէ
չար առնել, հոգի մի ապ
րեցուցանել՝ թէ կո
րուսանել, եւ նոքա լռե
ցին։
Եւ հայեցեալ յն զնա
բք՝ ըն ցասմամբ տրտ
մեալ

ժԲ

մր Ղ Մ
իե Լա ծկե ծ։ե ծժշ

մեալ վն կուրութե սր
տից նոցա, ասէ ցայրն.
ձգեա զձեռն քո, և նա
ձգեաց. և ողջացաւ
ձեռն նորա.

իզ Դ Եւ ելեալ արտա
քս վաղվաղա
կի փարիսե
ցիքն հերոդիանոսօքն
համադերձ. խորհուրդ
առնէին վասն նր, թէ
զի արդ կորուսցեն զնա.
Իսկ յս աշակերտօքն իւ
րովք գնաց 'ի ծովեզրն.
իէ Ա Եւ բազում ժողովուրդ
'ի գալիլեացւոց երթային
զհետ նր, և 'ի հրէաստ
անէ.
Եւ յեմէ և յայնկոյս
յորդանանու, և որք 'ի
տիւրոսէ և 'ի սիդոնէ,
բազում ժողովուրդ իբ
րև լսէին որչափ ինչ
առնէր գային առ նա.
Եւ ասէ ցաշակերտսն
իւր, զի նաւակ մի պատ
րաստական կայցէ նմա
վասն ամբոխին, զի մի՛
նեղեսցեն զնա.
Զի զբազումս բժշ
կեաց, մինչ գալ և խռ
նիլ զնովաւ, զի մերձեա
ցին առ նա, որք ունէին
ախտս ինչ.
իբ Ն Եւ այսք պիղծք յոր
ժամ տեսանէին զնա՛
անկանէին առաջի նո
րա, աղաղակէին և ասէ
ին. թէ դու ես որդին
աստուծոյ, և նա յոյժ
սաստէր նոցա, զի մի՛
յայտնի առնիցեն զնա.
իթ Բ Ելանէ 'ի լեառն, և
կոչէ առ ինքն
զորս ինքն կամե
ցաւ, և չոգան առ նա.
Եւ

մբ ղ յ մ
իզ · ղգ ղբ ձձե
իդ ժե իւզ իգ

մբ ղ մ
իբ իէ ·
իթ ժզ հթ

Եւ արար երկոտասանս
զի իցեն զնովաւ, և զի
առաքեսցէ զնս քարո լա
զել.
Եւ ունել իշխանու
թիւն բժշկելոյ զցաւս,
և հանելոյ զդևս.
Լբ Եւ եդ զանուն Սիմո
նի Պետրոս. և Յակոբու
զեբեդեայ՝ և Յոհաննու
եղբօրն Յակոբայ. եդ
նոցա անուանս Բանե լբ բ
րեգէս, որ է որդիք ո
րոտման. և զԱնդրէաս,
և զՓիլիպպոս. և զԲար
թուղիմէոս, զՄատթէոս
զՄաքսաւորն, և զԹո լգ բ
մաս, և զՅակոբոս Աղ
փեայ, և զԹադդէոս՝
և զՍիմոն Կանանացի.
Եւ զՅուդայ Իսկարիո
տացի, որ և մատնեաց
զնա.

Գան ՚ի տուն, և գայ դդ
միւսանգամ ընդ
նոսա ժողովուր
դըն, մինչ զի և զհաց ևս
ոչ ժամանել ուտել
նոցա.
Եւ իբրև լուան որք
ի ւրքն էին, ելին ունել
զնա. զի համարէին թէ
մոլեգնեալ իցէ.
լբ բ Եւ դպիրքն որք յԵ՟մ
իջեալ էին, ասէին թէ
Բեեղզեբուղ գոյ ՚ի
դմա, և իշխանաւ դև
ացն հանէ դա զդևս.
լգ բ Եւ կոչեալ զնոսա առ
ինքն առակօք խօսէր
ընդ նոսա, զիարդ կա
րէ սատանայ զսատա
նայ հանել. և արդ եւ
թէ թագաւորութիւն
յանձն իւր բաժանես
ցի, ոչ կարէ կալ թա
գաւ-

| փ | ղ | մ |
| --- | --- | --- |
| ձ | խբ | ձ |

| փ | ղ | մ |
| --- | --- | --- |
| լա | . | . |
| լբ | ճիե | ճիա |
| լգ | ճիթ | ճիբ |

դաւորութիւն այն ։
Եւ եթէ տուն յանձն
իւր բաժանեսցի , ոչ
կարէ կալ տունն ։
Եթէ սատանայ իվե
րայ անձին իւրոյ յար
եաւ , և բաժանեալ
էցէ , ոչ կարէ կալ , այլ
վախճանեալ է ։
Ոչ ոչոք կարէ զկարա
սի հզօրի մտեալ ՚ի տուն
նր աւար հարկանել , և
թէ ոչ նախ զհզօրն կա
պիցէ , և ապա զտուն նո
րա աւար հարկանիցէ ։
ԼԴ Բ Ամէն ասեմ ձեզ . զի
ամենայն թողցի որդ
ւոց մարդկան , մեղք
և հայհոյութիւնք , որ չափ
և հայհոյիցեն ։
Բայց որ հայհոյեսցէ
զոգին սբ , ոչ ունիցի
զթողութի յաւիտեան ,
այլ պարտապան լիցի

մր ղ մ
ԼԴ ՃԽԵ ՃԺԹ

յաւիտենից մեղաց ։
Զի ասէին թէ այս
պիղծ գոյ ՚ի նմա ։

ԼԵ Բ Գան եղբարք և դս
մայր նորա , և ար
տաքոյ կացեալ
յղեցին , և կոչէին զնա ։
Եւ անդ ժողովուրդն
շուրջ զնովաւ նստէր ,
և իբրև ասացին ցնա ,
ահաւասիկ մայր քո և
եղբարք քո կան արտա
քոյ և խնդրեն զքեզ ։
Պատասխանի ետ նոցա
և ասէ , ով է իմ մայր
կամ եղբարք ։
Հայեցաւ շուրջ զիւր և
յաշակերտսն զի նստէին
և ասէ ահաւասիկ մայր
իմ և եղբարք իմ ։
Զի որ առնիցէ զկա
մս աստուծոյ , նա է
եղբայր իմ , և քոյր և
մայր ։ Պար

մր ղ մ
ԼԵ ՃԲ ՃԶ

Դարձեալ սկսաւ գե
ԼՂ Բ ուսուցանել
առ ծովեզերբն,
և խռնեցան զնո
վաւ ժողովուրդք բա
զումք, մինչև ՚ի նաւ
մտանել նմա և նստել
՚ի ծովուն, և ամենայն
ժողովուրդն զծովե
զերբն զցամաքն ունէ
ին. և ուսուցանէր զնո
սա առակօք բազում
ինչ:
Թ Եւ ասէր նոցա ՚ի վար
դապետութեան իւրում.
Լուարուք. ահաւասիկ
ել սերմանօղ ՚ի սերմա
նել. և եղև ՚ի սերմա
նելն, ոմն անկաւ առ
ճանապարհաւն. և եկին
թռչունք և կերան զնա:
Եւ այլն անկաւ յապա
ռաժի, ուր ոչ գոյր հող
բազում, և վաղվաղակի
բուսաւ, քանզի ոչ գոյր
խորութիւն երկրին:
Եւ յորժամ ծագեցաւ
արեւն, ջեռաւ, և զի
ոչ գոյին արմատք, ցա
մաքեցաւ:
Եւ այլն անկաւ ի մէջ
փշոց. ելին փուշքն և
հեղձուցին զնա, և
պտուղ ոչ ետ:
Եւ այլն անկաւ յեր
կիր բարւոք, և ելեալ ա
ճեցաւ և տայր զպտուղ
և բերէր ընդ միոյ երե
սուն, և ընդ միոյ վաթ
սուն, և ընդ միոյ հա
րիւր:
Եւ ասէր որ ունիցի
ականջս լսելոյ լուիցէ:
Եւ իբրև եղև ըղ
առանձինն,
հարցին զնա
որք

մբ զ մ
ԼՁ ՀԶ ՁԼա

որք զնովաւն էին աշակերտօքն հանդերձ զաւակաւն ։
Եւ ասէ ցնոսա , ձեզ տուեալ է գիտել զխորհուրդ արքայութեանն աստուծոյ ։
ԼԵ Ա Բայց նոցա որք արտաքինքն են , ամ ինչ առակօք լինի ։
Զի տեսանելով տեսցեն և մի՛ տեսցեն , և լսելով լուիցեն և մի՛ իմասցին . զի մի՛ երբէք դարձցին և թողցի նց ։
Եւ ասէ ցնոսա , ոչ գիտէք զառակս զայս , և զի արդ զամ առակսն գիտիցէք ։
ԼԶ Որ սերմանէն , զբանն սերմանէ ։
Եւ նոքա են որք առ ճանապարհաւն , ուր բանն սերմանի , և յորժամ լսեն զնա գայ սատանայ՝ և հանէ զսերմանեալն 'ի սիրտս նց ։
Եւ նոքա են որք յապառաժին սերմանեցան . որք յորժամ լսիցեն զբանն , վաղվաղակի խնդութբ ընդունին ։
Եւ զի ոչ ունին արմատս յանձինս , այլ առ ժամանակ մի են . ապա 'ի հասանիլ նեղութե կամ հալածման՝ վս բանին վաղվաղակի գայթագղին ։
Իսկ որ իմէջ փշոցն սերմանեցաւ նոքա են . որք իբրև զբանն լսեն ։
Եւ հոգք աշխարհիս , և պատրանք մեծութե մտանեն , և հեղձուցանեն զբանն և անպտուղ լինի ։
Եւ

մ ղ յ մ
ՃԵ ԿԵ ՃԲ ՃԺԹ
ՃԸ ԿԸ : ՃԻ

Եւ նոքա են որք յեր
կիրն բարւոք սերմա
նեցան, որք լսեն զբանն
և ընդունին՝ և տան ըզ
ԼԸ Բ պտուղ, ընդ միոյ երե
սուն, և ընդ միոյ վաթ
սուն, և ընդ միոյ հա
րիւր ։

ԼԹ Զ Եւ ասէ ցնոսա միթէ գայ ճրագ՝
զի ընդ գրու
անաւ դնիցի, կամ
ընդ մահճօք, ոչ ապա
քէն ի վերայ աշտանակի
դնիցի ։

Խ Բ Զի չէ ինչ ՚ի ծա
ծուկ որ թէ ոչ յայտ
նեսցի, և ոչ եղև ինչ
գաղտնի, եթէ ոչ ՚ի
յայտ գայցէ ․ եթէ ոք
ունիցի ականջս լսելոյ
լուիցէ ։

ԽԱ Բ Եւ ասէ ցնոսա, տե
սէք զինչ լսէքդ, և յաւ
ելցի ձեզ որոց լսէքդ,
որով չափով չափէք՝ նո
վին չափեսցի ձեզ,
Որ ոք ունիցի, տացի
նմա, և որ ոչ ունիցի
և զոր ունին բարձցի ՚ի
նմանէ ։

Եւ ասէր այսպէս է արքայ ԽԲ
ութիւնն Աստուծոյ,
որպէս զի այր մի ար
կանիցէ զսերմանիս յեր
կիր, և ննջիցէ, և յառ
նիցէ զցայգ և զցերեկ ․
և սերմանիքն բուսանի
ցին և աճիցին, և նա
ոչ գիտէ ։
Թէ երկիր ինքնին բե
րէ զպտուղն, նախ զխո
տն, և ապա զհասկն ․ ա
պայ զցորեանն ատոք ՚ի
հասկին ․ և յորժամ տայ
ցէ

| Մթ | Ղ | | Յ |
|---|---|---|---|
| ԼԹ | ՀԹ | ՃԼԹ | ԼԱ |
| Խ | Ժ | | ԼԲ |
| ԽԱ | ԿԳ | | Ծ |

| Մթ | Ղ | Յ |
|---|---|---|
| ԽԲ | ՄԷ | ՄՀԱ |
| ԽԳ | [illegible] | [illegible] |

ցէ պտուղն . վաղվա
ղակի առաքէ մանգաղ ,
զի հասեալ են հունձք ։
ԽԴ Բ Եւ ասէր , ում նմանե
ցուցուք զարքայութիւն
աստուծոյ , կամ որով
առակաւ առակեսցուք
զնա ։
Որպէս հատն մանան
խոյ , որ յորժամ սերմա
նիցի յերկրի փոքրագոյն
է քան զամենայն սեր
մանիս որք են յերկրի ։
Եւ յորժամ սերմանի
ցի , բուսանի , եւ լինի
մեծ քան զամենայն
բանջար , եւ արձակէ ոս
տըս մեծամեծս մինչեւ
բաւական լինել ընդ
հովանեաւ նորա թռչ
նոց երկնից բնակել ։
ԽԵ Զ Եւ այնպիսի առակօք
խօսէր ընդ նոսա զբանն
ոպ̃ կարող լինէին լսել ։

Մ Ղ Յ
ԽԴ ՃԿԵ ՃԼԵ
ԽԵ Զ ՃԼԹ

Եւ առանց առակի ոչ
ինչ խօսէր ընդ նոսա ։
ԽԶ Ժ Բայց առանձինն աշա
կերտաց իւրոց մեկ
նէր զամենայն ։

ԽԷ Բ Ժ Եւ ասէ ցնոսա ԴԵ
յաւուր յայն
միկ . երբեւ ընդ
երեկս լինէր , եկայք
անցցուք յայն կողմն ։
Թողուն զժողովուրդն
եւ առնուն զնա նաւաւն
հանդերձ , եւ զայլ եւս
նաւսն որք էին ընդ
նմա ։
Եւ լինէր մրրիկ մեծ
հողմոյ , եւ զալիսն ՚ի
նաւն վերոյր . մինչ գրե
թէ լի եւս լինել ։
Եւ ինքն ննջէր ՚ի խելս
նաւուն ՚ի վերայ բարձի ։
Զարթուցանէին զնա
եւ ասէին . վարդապետ
ոչ

Մ Ղ Յ
ԽԶ : :
ԽԷ ԾԳ ԿԹ

ոչ ինչ է քեզ փոյթ, զի կորնչիմք աւասիկ։

Եւ զարթուցեալ սաստեաց հողմոյն եւ ծովուն, ասէ, դադարեաց կարկեաց։

Եւ դադարեաց հողմն, եւ եղեւ խաղաղութիւն մեծ.

Եւ ասէ ցնոսա. ընդէ՞ր այդպէս վատասիրտք էք, չեւեւս ունիք հաւատս.

Եւ երկեան յերկիւղ մեծ, եւ ասէին ցմիմեանս, ո՞վ արդեօք իցէ սա. զի եւ հողմ եւ ծով հնազանդին սմա։

Ժ.Մ. Եւ եկին յայնկոյս ծովուն յաշխարհն Գերգեսացւոց. եւ ընդ ելանելն նորա 'ի նաւէ

Ժ.Թ.

անդէն. պատահեցաւ նմա այր մի 'ի գերեզմանացն, որ ունէր այս պիղծ. որոյ բնակութիւնն իսկ 'ի գերեզմանս էր. եւ ոչ շղթայիւք ոք եւս կարէր կապել զնա. Զի բազում անգամ ոտնակապօք եւ շղթայիւք կապեալ եւ խզեալ 'ի նմանէ զշղթայսն, եւ զոտնակապսն խորտակեալ. եւ ոչ ոք կարէր պարտել զնա, քանզի հանապազ զցայգ եւ զցերեկ 'ի գերեզմանս եւ 'ի լերինս աղաղակէր, եւ կոծէր զանձն իւր քարամբք։

Իբրեւ ետես զՅս 'ի հեռաստանէ, ընթացաւ եւ երկիր եպագ նմա,

Աղաղակեաց 'ի ձայն մեծ եւ ասէ, զի՞ կայ իմ

եւ

և քո յ՟ս որդի աստու
ծոյ բարձրելոյ. եր
դմնեցուցանեմ զքեզ
յա՟ծ, մի՛ տանջեր զիս.
քանզի ասէր ցնա ել
այսդ պիղծ ՚ի մարդոյ
այդի:
Եւ հարցանէր ցնա թէ
զինչ անուն է քո:
Եւ ասէ ցնա լէգէօն
անուն է իմ. քանզի բա
զումք եմք:
Եւ աղաչէին զնա յոյժ.
զի մի՛ առաքեսցէ զն՟ս
արտաքս քան զաշխարհն
Եւ անդ էր առ լե
րամբ երամակ մի խո
զից՝ արօտական մեծ:
Աղաչեցին զնա ամե
նայն դևքն և ասեն, ա
ռաքեա զմեզ ՚ի խոզսն՝
զի մտցուք ՚ի ն՟ս:
Եւ հրամայեաց նոցա:
խբ Եւ իբրև ելին այսքն
ե

պիղծք մտին ՚ի խոզսն,
և դիմեաց երամակն ՚ի
դարէ անտի ՚ի ծովն:
Եւ էին իբրև երկու հա
զարք, և հեղձնուին ՚ի
ծովուն.
Եւ խոզարածքն փախ
եան, և պատմեցին ՚ի
քաղաքին և յագարակս,
և ելին տեսանել զինչ
իցէ որ գործեցաւն.
Գան առ յ՟ս և տեսա
նեն զդիւահարն, զի նստ
էր զգեցեալ և զգաստ
ացեալ, որ ունէր զլէ
գէօնն, և զահի հարան
Եւ պատմեցին նոցա որ
ոց տեսեալն էր. թէ
զինչ եղև դիւահարին,
և զինչ վասն խոզիցն.
Եւ սկսան աղաչել զնա
գնալ ՚ի սահմանաց ն՟ց.
Եւ իբրև եմուտ նա
՚ի նաւն. աղաչէր զնա
դիւա

մբ է
խբ ժթ

դիւահարն զի ընդ նմա էիցէ. և յիս ոչ ետ նմա թոյլ, այլ ասէ ցնա երթ 'ի տուն քո առ ընտանիս քո, և պատմեա նոցա, զոր ինչ միանգամ տէր արար քեզ՝ և ողորմեցաւ քեզ.
Եւ չոգաւ և սկսաւ քարոզել 'ի դեկապօլին զոր ինչ արար նմա յիս, և ամենեքին զարմանային.

ԺԲ
Բ
Ժ.Ի Եւ իբրև եանց դարձեալ յիս միւսանգամ յայն կողմն, ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր առ ծովեզերբն.
Եւ ահա մի 'ի ժողովրդապետացն գայր, որում անուն էր յայրոս, և իբրև ետես զնա անկաւ առ ոտս նորա
Աղաչէր զնա յոյժ և ասէր, թէ դուստր նորա մերձ է 'ի մահ. զի եկեսցես դնիցես նմա ձեռն. որպէս զի ապրեսցի, և կեցցէ.
Եւ գնաց ընդ նմա. երթայր և ժողովուրդ բազում զհետ նորա, և նեղէին զնա.
Ժ.Գ. Եւ կին մի էր 'ի տեռատեսութեան արեան՝ զեր կոտասան ամս.
Եւ յոյժ վշտացեալ 'ի բազում բժշկաց. և ծախեալ զինչս իւր զամ(ենայն) և չէր ինչ օգտեալ. այլ ևս առաւել զայրացեալ.
Իբրև լուաւ զյիս, եկն իմեջ ամբոխին յետոյ, և բուռն եհար զհանդերձէ նորա.

Ասէր

ԺԳ Զ Մ
ԵԹ ՁԵ ՀԹ

Քանզի ասէր 'ի մտի ,
թէ միայն մերձեցայց
'ի հանդերձս նորա , փրկե
ցայց ։
Եւ վաղվաղակի ցամա
քեցաւ աղբիւր արեան
նորա , և գիտաց 'ի մար
մին իւր՝ թէ բժշկե
ցաւ 'ի տանջանացն ։
Եւ անդէն վաղվաղա
կի գիտաց յս̃ յանձն իւր՝
զ զօրութիւնն՝ որ ել 'ի
նմանէ ․ դարձաւ յամ
բոխն և ասէ , ով մեր
ձեցաւ 'ի հանդերձս իմ ։
Եւ ասեն ցնա աշակերտ
քն , տեսանես , զի
ամբոխդ նեղէ զքեզ ,
և ասես , թէ ով մեր
ձեցաւ 'ի հանդերձս իմ ։
Եւ շուրջ հայէր տե
սանել , թէ ով զայն
արար ։
Եւ կինն զարհուրեալ
և դողացեալ վասն որոյ
գաղտն արար , քան զի
գիտէր զինչ եղև նմա ․
եկն , անկաւ առաջի նո
րա , և ասաց զամենայն
իրսն ստուգութ̃ ։
Եւ յս̃ ասէ ցնա դուս
տր հաւատք քո կեցու
ցին զքեզ ․ երթ 'ի խա
ղաղութիւն , և եղիջիր
ողջ 'ի տանջանաց քոց ։

Մինչ դեռ նա ԴՆ
զայն խօսէր ․
գան ոմանք 'ի
ժողովրդապետէն և ա
սեն , թէ դուստրն քո
մեռաւ՝ զի՞ ևս աշխատ
առնես զվարդապետդ ։
Իսկ յս̃ իբրև լուաւ
զբանն ասացեալ , ասէ
ցժողովրդապետն , մի՛
երկնչիր բայց միայն հաւա
տա ։

Եւ

Եւ ոչ զոք էթող ընդ
իւր երթալ, բայց միայն
զՊետրոս, և զՅակոբոս,
և զՅովհաննէս զեղբայրն
Յակոբայ ։
Գայ 'ի տուն ժողովր
դապետին և տեսանէ
ամբոխ յոյժ, և լալակա
նս և աղաղակս յոյժ. և
մտեալ 'ի ներքս ասէ ցնո
սա, զի՞ խռովեալ էք և
լայք, մանուկդ ոչ է
մեռեալ այլ ննջէ ։
Եւ ծաղր առնէին զնա։
Ա Եւ նորա հանեալ ար
տաքս զամենեսեան, և
առնու ընդ իւր զհայր
մանկանն և զմայր, և
զնոսա, որք ընդ նմայն
էին. և մտանէ ուր
դնիւր մանուկն ։
Եւ կալեալ զձեռանէ
մանկանն ասէ ցնա, տա
լիթա կումի, որ թարգ
մանի աղջիկ դու քեզ
ասեմ արի ։
Եւ վաղվաղակի յար
եաւ աղջիկն, և գնայր,
քանզի էր ամաց իբրև
երկոտասանից, և զար
մացան մեծաւ զարմա
նալեաւ ։
Եւ պատուէր տայր նո
ցա յոյժ, զի մի՛ ոք գի
տասցէ զայն, և ասաց
տալ նմա ուտել ։

Եւ ել անտի, և
եկն 'ի գաւառ
իւր, և եր
թային զհետ նր աշա
կերտքն իւր ։
Եւ եղև 'ի շաբաթուն
սկսաւ ուսուցանել 'ի
ժողովրդեանն ։
Եւ բազումք իբրև լսէ
ին, զարմանային ընդ
վարդապետութիւն նորա

և

մբ ծ գ ժթ յ ծթ ճ ձխ

և ասէին. ուստի իցէ
սմա այս, կամ զինչ իցէ
իմաստութիւն՝ որ տու-
եալ է սմա, զի զօրու-
ծբ Ը թիւնք այսպիսիք ՚ի ձեռ-
աց սորա լինին.
ծգ Բ Ո՞չ սա է մանուկն հիւ-
սանն, և որդին մարիա-
մայ, եղբայր յակոբայ, և Մ՛ր
յովսեայ, և յուդայի, և
սիմոնի, և չիցեն քորք
դորա աստ առ մեզ.
ծդ Ա Եւ գայթակղէին ՚ի նա.
Եւ ասէ ցնոսա, ոչ է
մարգարէ անարգ բայց
եթէ ՚ի գաւառի իւ-
րում և յազգատոհմի,
և ՚ի տան իւրում.
Եւ ոչ կարէր անդ, և
ոչ մի ինչ զօրութիւն
առնել.
Բայց սակաւ ինչ հիւ-
անդաց զձեռն եդեալ
բժշկէր զնոսա. և զար-

մանայր վասն անհաւա-
տութեց նոցա.
Եւ շրջէր շուրջ զն
զգաւառօքն,
և ուսուցանէր.
ծե Բ Եւ կոչեաց առ ինքն
զերկոտասանսն, և սկսաւ
առաքել զնոսա եր-
կուս երկուս, և տայր
նոցա իշխանութիւն ի
վերայ այսոց պղծոց.
Եւ պատուիրեաց նո-
ցա զի մի՛ ինչ բարձցեն
՚ի ճանապարհի, բայց
միայն գաւազան, մի՛
պարկ, մի՛ հաց, մի՛ պղինձ
՚ի գօտիս. այլ ագանիլ
հողաթափս, և մի՛ զգե-
նուցուք երկուս
պարեգօտս.
ծե Բ Եւ ասէր ցնոսա, յոր
տուն մտանիցէք ան-
դէն օթեվանս կալջիք,
մինչև

[illegible]

մինչև ելանիցէք անտի ։
ծա Բ Եւ որք ոչ ընկալցին
զձեզ և ոչ լուիցեն ձեզ,
յորժամ ելանիցէք ան
տի . թօթափեսջիք զփո
շի ոտից ձերոց 'ի վկայ
ութիւն նոցա ։
ծբ Ը Եւ ելեալ քարոզէին
զի ապաշխարեսցեն ։
Եւ զդևս բազումս հա
նէին, և օծանէին իւ
ղով զբազում հիւանդս
և բժշկէին զնոսա ։
ծե Բ ՃԻԱ Եւ լուաւ արքայ Հերովդէս,
քան զի յայտնի
եղև անունն նորա, և
ասէր թէ Յովհաննէս
մկրտիչ յարեաւ 'ի մե
ռելոց, և վասն այնորիկ
զօրութիւնք լինին նովաւ
ծը Ժ Այլք ասէին թէ ե
ղիա է ։
Իսկ այլքն թէ մարգա
րէ է, կամ թէ իբրև
զմի 'ի մարգարէից ։
Իբրև լուաւ Հերովդէս
ասէ, զորոյ ես զգլուխն
հատի զՅովհաննու սա է.
նա յարեաւ 'ի մեռելոց ։
ծթ Բ Զի ինքն Հերովդէս
առաքեաց կալաւ զՅո
հաննէս, և կապեաց զնա
և եդ 'ի բանտի, վասն
Հերովդիադայ կնոջ փի
լիպպոսի եղբօր նորայ.
զի նա կին արար զնա ։
Քանզի ասէր Յովհան
նէս ցՀերովդէս, թէ ոչ
է օրէն քեզ ունել զկին
եղբօր քո ։
Եւ Հերովդիա ոխացեալ
էր ընդ նմա, և կամէր
սպանանել զնա . և ոչ
կարէր ։
Զի Հերովդէս երկն
չէր 'ի Յովհաննէ . քան
զի

| Մր | Ղ | Մ |
|---|---|---|
| ծա | ձլ Ճձգ | հա |
| ծբ | ձթ | . |
| ծե | Ղ | Ճխց |
| ծը | Ի | Ը |

| Մր | Ղ | Մ |
|---|---|---|
| ծթ | ձբ | Ճխդ |
| . | . | Ճձե |

զի գիտէր զնա այր արդար և սուրբ, և սպասէր նմա, և լուեալ 'ի նմանէ բազում ինչ առնէր՝ և քաղցրութեամբ լսէր նմա։

Իբրև օր մի լինէր պարապոյ, յորժամ ընթրիս տայր Հերովդէս յաւուր ծննդոց իւրոց, նախարարաց իւրոց և հազարապետաց. և մեծամեծաց գալիլեացւոց. և 'ի մտանել դստերն Հերովդեայ և 'ի կաքաւելն. հաճոյ եղև Հերովդէի և բազմականացն։

Ասէ թագաւորն ցաղջիկն, խնդրեա՛ յինէն զոր ինչ կամիս, և տաց քեզ.

Եւ երդուաւ նմա բազում անգամ թէ զոր ինչ և խնդրեսցես զդու յինէն՝ տաց քեզ. մինչև ցկէս թագաւորութեան իմոյ։

Նա ելեալ ասէ ցմայր իւր, զինչ խնդրեցից. Եւ նա ասէ, զգլուխ Յովհաննու մկրտչի.

Եւ մտեալ անդրէն փութանակի առ թագաւորն ասէ, կամիմ, զի տացես ինձ վաղվաղակի 'ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի։

Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն. այլ վասն երդմանցն և կոչնականացն ոչ կամեցաւ անարգել զնա։

Եւ առաքեաց վաղվաղակի թագաւորն դահիճ, և հրամայեաց բերել զգլուխ նորա։

Եւ

Եւ չոգաւ գլխատեաց կգ Զ
զնա ՚ի բանտին. եւ եբեր
զգլուխ նորա սկտեղբ
եւ ետ ցաղջիկն, եւ աղ
ջիկն տարաւ եւ ետ մօր
իւրում:
Եւ լուեալ աշակերտա
քն նորա, եկին եւ բար
ձին զմարմին նորա, եւ
եդին ՚ի գերեզմանի.

կե Բ Ժողովեցան ա եկ
ռաքեալքն առ
յս̃, եւ պատմե
ցին նմա զամենայն ինչ
զոր արարին, եւ զոր ու
սուցին:
կբ Ժ Եւ ասէ ցնոսա յս̃. ե
կայք դուք, առանձինն
յանապատ տեղի, եւ հան
գիջիք սակաւ մի:
Զի էին բազումք որք
երթային եւ հաց անգամ
չժամանէին ուտել.

Ի

կգ Զ Եւ գնացին նաւու յա
նապատ տեղի առանձ
ինն.
Եւ տեսին զնոսա զի
երթային, եւ զգացին
բազումք, եւ հետի յա
մենայն քաղաքաց խու
ռն ընթանային անդր,
եւ մերձենային առ նոսա:
Եւ ելեալ ետես ամ
բոխ բազում եւ գթա
ցաւ ՚ի նոսա, զի էին
իբրեւ ոչխարք որոց ոչ
իցէ հովիւ:
Եւ սկսաւ ուսուցանել
զնոսա յոյժ:
կդ Ը Եւ իբրեւ բազում ժամ
Փ. Օ եղեւ մատուցեալ աշա
կերտքն ասէին տեղիս
անապատ է, մինչ օր
կայ.
Արձակեա զժողովուրդ
դ, զի երթեալ շուրջ
յագարակս եւ ՚ի գեօղս
գնեօ

մր զ
կա զա
կբ ե

մր զ յ մ
կդ . . հե
կգ շէ իթ ծժէ

գնեսցեն իւրեանց զինչ ուտիցեն . զի աստ ուտել ինչ ոչ ունին .
Նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա , դուք տուք դոցա ուտել . Ասեն ցնա , երթիցուք , գնեսցուք երկերիւր դահեկանի հաց եւ տացուք դոցա ուտել :
Ասէ ցնոսա . քանի նկանակ ունիք , երթայք եւ տեսէք :
Իբրեւ գիտացին , ասեն ցնա հինգ , եւ երկուս ձկունս :
Եւ հրամայեաց նոցա բազմել երախանս՝ երախանս՝ ի վերայ դալար խոտոյ :
Եւ բազմեցան դասք , ուր հարիւր եւ ուր յիսուն :
Եւ առեալ զհինգ նկանակսն եւ զերկուս ձկունսն հայեցաւ յերկինս , օրհնեաց , մանրեաց զնկանակսն , եւ ետ ցաշակերտսն զի արկցեն նոցա . եւ զերկուս ձկունսն բաշխեաց ամենեցուն . կերան , եւ յագեցան :
Եւ բարձին զնշխարսն երկոտասան սակառի լի , եւ ՚ի ձկանց անտի .
Եւ էին որք կերանն իբրեւ արք հինգ հազարք :

կե Զ Եւ նոյն ժամայն ետ ձեպեաց զաշակերտսն մտանել ՚ի նաւ , եւ յառաջագոյն քան զնա երթալ յայնկոյս ՚ի Բեթսայիդայ . մինչեւ ինքն զժողովուրդսն արձակիցէ .

Եւ

մր կե ձկը

կդ Բ Եւ հրաժարեալ ՚ի նո
ցանէ ել ՚ի լեառն կալ
յաղօթս ։
կե Դ Եւ իբրեւ երեկոյ եղեւ,
էր նաւն իմէջ ծովուն
Ժ.Ա. եւ ինքն ՚ի ցամաքի ։
Եւ ետես զնոսա հող
մակոծեալս ՚ի վարելն․
զի էր հողմն ընդդէմ
նոցա, եւ զչորրորդ պա
հու գիշերոյն գայ առ
նոսա գնալով իվերայ ծո
վուն, եւ կամէր զանց առ
նել առ նոքօք ։
Նոքա իբրեւ տեսին զի
գնայր իվերայ, ծովուն,
համարեցան թէ առաչք
ինչ լինիցի, եւ զաղաղակ
բարձին ։
Քանզի ամենեքեան
տեսին զնա եւ խռովե
ցան ։
Եւ նա անդէն վաղ
վաղակի խօսեցաւ ընդ
նոսա եւ ասէ․ քաջալե
րացարուք՝ ես եմ, մի՛
երկնչիք ։
կզ Եւ ել ՚ի նաւն առ նո
սա, եւ դադարեցաւ
հողմն ։
Եւ առաւել եւս յիմար
եալք էին ՚ի միտս իւր
եանց, եւ զարմանային
յոյժ․ քանզի եւ ՚ի վերայ
հացին ոչ իմացան, զի
էր սիրտ նց̃ թմրեալ ։
Եւ իբրեւ անցին յայն
կոյս, եկին յերկիրն գեն
նեսարեթ ։
կէ Բ Եւ իբրեւ ելին ՚ի նաւէ
անտի, իսկ եւ իսկ ծա
նեան զնա արք տեղւոյն
այնորիկ․ եւ ընթացեալ
այլր անդր ընդ ամե
նայն գաւառն, սկսան
մահճօք բերել զամե
նայն հիւանդս, ուր լսէ
ին թէ անդ իցէ ։

Եւ

[illegible]

Եւ ուր և մտանէր ՚ի գեօղս՝ կամ ՚ի քաղաքս՝ կամ յագարակս, ՚ի հրապարակս դնէին զհիւանդս, և աղաչէին զնա զի գոնէ ՚ի քղանցս հանդերձի նորա մերձենայցեն, և որք միանգամ մերձեցան, փրկեցան։

Եւ ժողովեցան առ նա փարիսեցիքն, և ոմանք ՚ի դպրացն, որք եկեալ էին յԵՃմէ. և տեսեալ զոմանս յաշակերտացն, զի խառնակ ձեռօք, այսինքն անլուայ ուտէին զհաց, բամբասեցին։

Ե Փ Զի փարիսեցիքն՝ և ամ հրէայք եթէ ոչ բռնալիր լուանան զձեռս, զհաց ոչ ուտեն. քանզի ունին զաւանդութիւն ծերոցն։

Եւ ՚ի հրապարակէ մտեալ, եթէ ոչ նախ մկրտիցին, ոչ ուտեն։

Եւ այլ ինչ բազում է. զոր ընկալեալ ունել, մկրտութիւնս բաժակաց և ստամանաց, և պղնձեաց, և մահճաց։ եգ

Հա Ջ Ճ Ապա հարցանեն ցնա փարիսեցիքն և դպիրք, թէ ընդ էր աշակերտքն քո ոչ գնան ըստ աւանդութեան ծերոցն այլ խառնակ ձեռօք զհաց ուտեն։

Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա, թէ բարւոք մարգարէացաւ եսայի վն ձեր կեղծաւորաց, որպ ասաց. Ժողովուրդս այս շրթամբք մեծարէ զիս, և սիրտք

նո

նոցա հեռացեալ իբաց եայ են յինէն .

Զուր պաշտեն զիս, ուսուցանեն վարդապետութիւնս զմարդկան պատուիրեալս .

Թողեալ զպատուիրանն Աստուծոյ, ունիք զմարդկան աւանդութիւնս, մկրտութիւնս սափորաց և բաժակաց, և այլոց նմանեայց այսպիսին առնէք բազումս .

Եւ ասէ ցնս, բարւոք խոտէք զպատուիրանն Աստուծոյ, զի զձեր աւանդութիւնն հաստատիցէք .

Զի Մովսէս ասէ . պատուեա՛ զհայր քո և զմայր, և որ չարախօսեսցէ զհօրէ կամ զմօրէ, մահու վախճանեսցի .

Եւ դուք ասէք եթէ ասիցէ մարդ ցհայր կամ ցմայր կորբան, որ է պատարագ . զոր յինէն օգտիցիս . և ոչևս տայք թոյլ նմա առնել ինչ հօրն կամ մօրն .

Եւ անարգէք զբանն Աստուծոյ ձերով աւանդութեամբն . զոր աւանդեցէք, և բազում ինչ որ այսմ նմանէ առնէք .

Եւ կոչեալ առ ինքն զամ ժողովուրդն ասէ ցնոսա, լուարուք ինձ ամենեքեան և ի միտ առէք .

Ոչինչ արտաքուստ ՚ի մարդ մտեալ եթէ կարիցէ պղծել զնա, այլ որ ելանէ ՚ի նմանէ, այն է որ պղծէ զմարդն .

Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ .

Եւ

կէ
Զ

Եւ իբրեւ եմուտ եդ 'ի տուն յամբոխէ անտի · հարցանէին ցնա աշակերտքն վս առակին ։

Եւ ասէ ցնոսա, այդպէս և դուք անմիտք էք, ոչ իմանայք, եթէ ամ որ արտաքուստ 'ի ներքս մտանէ 'ի մարդ, ոչ կարէ զնա պղծել · Զի ոչ եթէ 'ի սիրտ նր մտանէ, այլ յորովայնն և արտաքս ելանէ, և սրբէ զամ կերակուրսն ։

Եւ ասէր թէ որ ինչ 'ի մարդոյն ելանէ այն պղծէ զմարդ · զի 'ի ներքուստ 'ի սրտէ մարդկան խորհուրդք չարութեն ելանեն, շնութիւնք, պոռնկութիւնք · գողութիւնք, սպանութիւնք, ագահութիւնք, չարութիւնք, նենգութիւնք, գիճութիւնք, չարակնութիւնք, հայհոյութիւնք, ամբարտաւանութիւնք, անզգամութիւնք · այս ամ չարիք ի ներքուստ ելանեն և պղծեն զմարդ ·

'ի ժաժա

Եւ անտի յարուցեալ եկն 'ի սահմանս տիւրոսի և սիդոնի, և մտեալ 'ի տուն ոչ կամէր յայտնել ·

Եւ ոչ կարաց ծածկել · Լուաւ կին մի զնմանէ · որոյ դուստրն նեղեալ էր յայսոյ պղծոյ, եկն անկաւ առաջի նորա · և կինն էր հեթանոս փիւնիկ ասորի յազգէ, և աղաչէր զնա զի զդեւն հանցէ 'ի դստերէ նորա ։



Եւ

ՀԴ Եւ յա՛ռ ասէ ցնոսա Թոյլ
Բ տուր զի նախ յագեսցին մանկունք, զի ոչ է բարւոք առնուլ ըզհաց մանկանց՝ և արկանել շանց.

Նա պատասխանի ետ և ասէ. տէր և շունք 'ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին.

Եւ ասէ ցնա. վա՛ սյդր բանի երթ, ել դեւն 'ի դստերէ քումմէ.

Գնաց 'ի տուն իւր, և եգիտ ելեալ զդեւն, և զդուստրն, զի անկեալ դնիւր 'ի մահճին.

ՀԵ
Ժ
Եւ ելեալ միւս ան-
գամ 'ի սահմանացն տիւրոսի և սիդոնի, և եկն 'ի ծովեզրն գալիլեացւոց ի մէջ սահմանացն 'ի դեկապօլիս.

Եւ բերին առաջի նո՛ր խուլ մի և համր, և աղաչէին. զի ձեռն դիցէ իվերայ նորա.

Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի, էարկ զմատունս իւր ընդ ականջս նորա և եթուք անդր, և կալաւ զլեզուէ նորա.

Հայեցաւ յերկինս, յոգւոց եհան և ասէ ցնա, եփփաթայ որ է բացիր.

Եւ նոյն ժամայն բացան լսելիք նորա, և լուծան կապք լեզուի նորա և խօսէր ուղիղ.

Եւ պատուիրեաց նոցա զի մի ումեք ասիցեն.

ՀԶ
Ը
Եւ որչափ նա պատուիրէր նոցա, նոքա ևս առաւել քարոզէին.

Եւ ևս քան զևս զար

մա

մթ մ
հգ ճեթ
հթ

մթ ղ
հե ճ

մանայէն եւ ասէին.

հզ Զ Օ՜ն զինչ բարուք գործեաց սա, զի խլից լսել տայ եւ համրոց խօսել։

Ը. Ընդ աւուրսն յայնոսիկ դարձեալ ժողովուրդ բազում էր. եւ ինչ ոչ ունէին ուտել, կոչեաց զաշակերտսն իւր եւ ասէ ցնոսա։

Գթամ ես ի վերայ ժողովրդեանդ, զի արդ երեք աւուրք են զի առ իս են, եւ ոչ ունին զինչ ուտիցեն։

Եւ եթէ արձակեմ զդոսա նօթիս ՚ի տունս իւրեանց՝ նքթիցին ՚ի ճանապարհի, զի ոմանք ՚ի դոցանէ ՚ի հեռաստանէ եկեալ են։

Պատասխանի ետուն նմա աշակերտքն նորա, ուստի կարես յագեցուցանել զդոսա հացիւ յանապատի աստ։

Եւ հարցանէ զնոսա,
եղ քանի նկանակ հաց ունիք։

Եւ նոքա ասեն եօթն,

Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ՚ի վերայ երկրի, եւ առեալ զեօթն նկանակսն գոհացաւ եբեկ, եւ տայր ցաշակերտսն զի արկցեն, եւ արկին առաջի ժողովրդեանն. Եւ ձկունս սակաւս ունէին, եւ զայն եւս օրհնեաց, եւ հրամայեաց արկանել։

Կերան եւ յագեցան՝ եւ բարձին զնշխարս կոտորոցն եօթն զամբիղ։

Եւ էին որք կերանն իբրեւ չորք հազարք, եւ արձակեաց զնոսա։

Եւ

մբ մ
հզ ծզ

Եւ նոյն ժամայն ԷԵ
մտեալ ՚ի նաւ
հանդերձ աշա
կերտօքն, եկն ՚ի սահմանս
դաղմանութեայ ։
Փ Դ Ելին փարիսեցիքն՝ և
սկսան վիճել ընդ նմա,
և խնդրէին ՚ի նմանէ
նշան յերկնից փորձելով
զնա ։
ՀԲ Զ Եւ զայրացաւ յոգի իւր
և ասէ, զի է զի ազգս
այս նշան խնդրէ, ամէն
ասեմ ձեզ, թէ տացի
նշան ազգիս այսմիկ ։
Եւ թող զնս̃, և դարձեալ
եմուտ ՚ի նաւ, և գնաց
յայնկոյս ։
Եւ մոռացան զհաց
բառնալ, բայց միայն
զմի նկանակ ունէին
ընդ իւրեանս ՚ի նաւին ։
ՀԹ Բ Եւ պատուիրէր նոցա

Ի.

| | | | |
|---|---|---|---|
| մի | Ա | Ղ | Մ |
| ՀԵ | ԺԳ ԺԳ | . | ՃԿԱ |
| ՀԸ | . | . | ՃԿԸ |
| ՀԹ | ։ | ՃԽԳ | ՃԿԹ |

և ասէր զգոյշ եղերուք
՚ի խմորոյ անտի փարի
սեցւոց, և ՚ի խմորոյ հե
րոդիանոսաց ։
Զ Եւ խորհէին ընդ մի
Ի. միանս և ասէին, թէ
զի հացս ոչ ունիմք ։
Գիտաց յս̃ և ասէ ցնո
սա, զի՛ խորհիք ՚ի սիրտս
ձեր թերահաւատք՝ թէ
զհաց ոչ ունիք, տակաւ
ին ոչ իմանայք և ոչ յի
շէք, ապշութիւն ու
նի զսիրտս ձեր ։ աչս
գոն և ոչ տեսանէք, ա
կանջք են և ոչ լսէք,
և ոչ իմանայք տակաւ
ին, և ոչ յիշէք յորժամ
զհինգ նկանակն ՚ի հինգ
հազարսն, և քանի սա
կառի լի բարձէք զկո
տորոցն ։
Եւ ասեն երկոտասան ։
Եւ յորժամ զեօթն նկա
նա

| | |
|---|---|
| մբ | Մ |
| Զ | ՃԿԷ |

նախքան ՚ի չորս հազարսն․
քանի զամբիւղ լի բար
ձիք զկոտորոցն, և նոքա
ասեն եօթն։
Եւ ասէ ցնոսա, իսկ
զիարդ ոչ իմանայք։
ծա
ժ
ԻԳ Գան ՚ի բեթսայիդայ,
՚և ածեն առաջի նորա
կոյր մի, և աղաչէին զնա
զի մերձեսցի ՚ի նա։
Եւ առեալ զձեռանէ
կուրին եհան արտաքոյ
շինին, եթուք յաչս նո
րա, և ձեռն եդ ի վերայ
նորա, և հարցանէր ցնա
թէ տեսանիցէ ինչ։
Հայեցաւ և ասէ, տեսա
նեմ զմարդիկ զի շրջին
իբրև զծառս։
Դարձեալ եդ զձեռն
ի վերայ աչաց նորա, և
բաց, և տեսանէր․ ող
ջացաւ, և տեսանէր հա
մարձակ զա̃մ։

մջ
ծա

Արձակեաց զնա ՚ի
տուն իւր և ասէ, ՚ի
շէնդ մի՛ մտանիցես,
այլ երթ ՚ի տուն քո,
և յորժամ ՚ի շէնն մտա
նիցես մի՛ ումեք ասի
ցես ՚ի շինին։
ծբ
Ա
ԻԳ Եւ ել յս̃ աշա զի
կերտօքն հան
դերձ, ՚ի շէնս
կեսարեայ փիլիպպեայ․
Եւ ՚ի ճանապարհին հար
ցանէր ցաշակերտսն և
ասէր, զո՞ ասեն զի
նէն զինէն մարդիկ թէ
իցեմ։
Նոքա ետուն պատա
խանի և ասեն զյոհան
նէս մկրտիչ, և այլք
զեղիա, և այլք զմի ոք
՚ի մարգարէից անտի․
Նա ասէ ցնոսա․ իսկ դուք
զո՞ ասեք զի
նէն

մջ ղ յ մ
ծբ ղա հգ ճն ֆկ

նէն թէ իցեմ ։
ծգ Պատասխանի ետ պետ
Բ րոս և ասէ ցնա , դու
ես քս̃ ․ և սաստեաց ՚ի
նոսա զի մի՛ ումեք ասի
ցեն զնմանէ ։
Եւ սկսաւ ուսուցա
նել զնս̃ , թէ պարտ է
որդւոյ մարդոյ բազում
չարչարանս ընդունել՝
և անարգիլ յերիցանց՝
և ՚ի քահանայապետից՝
և ՚ի դպրաց , և մեռա
նիլ , և յերիր աւուր
յառնել ։
ծդ Եւ համարձակ զբանն
Ժ խօսեցաւ ։
Եւ առեալ զնա մեկու
սի պետրոսի սկսաւ սաս
տել նմա ։
Եւ նա դարձաւ և
ետես զաշակերտսն ,
սաստեաց պետրոսի և
ասէ , երթ յետս իմ սա
տանայ , զի ոչ խորհիս
դու զա̃յսն՝ այլ զմարդ
կանս ։
ծե Եւ կոչեալ առ ինքն
Բ զժողովուրդն աշակեր
տօքն հանդերձ ասէ
ցնոսա ․ եթէ որ կամի
գալ զկնի իմ , ուրասցի
զանձն իւր , և բարձցէ
զխաչ իւր և եկեսցէ զկ
կնի իմ ։
Զի որ կամիցի ապրե
ցուցանել զանձն իւր
կորուսցէ զնա ։
Եւ որ կորուսցէ զանձն
իւր վն̃ աւետարանին՝
ապրեցուսցէ զնա ։
Զինչ օգուտ է մար
դոյ եթէ զաշխարհ ա
մենայն շահեսցի , և
զանձն իւր տուժեսցէ ․
քան ՚ի զինչ տացէ մարդ
փոխանակ անձին իւրոյ ․
ծզ Զի որոք ամօթ հա
Բ մա

| մթ | ղ | յ |
| --- | --- | --- |
| ծգ | ղե մղ | ճկբ |
| ծդ | Ժ | ճկթ |

| մթ | ղ | յ |
| --- | --- | --- |
| ծե | ղղ | ճհ |
| ծզ | ղե ճխղ | ղձ |

մաչեսցի զիս եւ զբանս իմ 'ի շնացող եւ 'ի մեղաւոր ազգիս այսմիկ, եւ որդի մարդոյ յամօթ արասցէ զնա, յորժամ եկեսցէ փառօք հօր իւրոյ եւ հրեշտակաց սրբոց :

ձե Բ Եւ ասէ ցնս̅, ամէն ասեմ ձեզ, զի են ոմանք 'ի սոցանէ որք աստ կան, որք մի' ճաշակեսցեն զմահ, մինչեւ տեսցեն զարքայութիւն աստուծոյ եկեալ զօրութ̅բ :

Եւ յետ վեց աւուրց, առնու ընդ իւր յս̅ զպետրոս, եւ զյակոբոս, եւ զյոհաննէս. եւ հանէ զնս̅ 'ի լեառն մի բարձր առանձինն, եւ յայլակերպս եղեւ առաջին նոցա. եւ ձորձք նորա եղեն փայլուն սպիտակ յոյժ, որպ̅ թափիչք երկրի ոչ կարեն այնպէս սպիտակ կացուցանել :

Եւ երեւեցաւ նոցա եղիա մովսէսիւ հանդերձ, որք խօսէին ընդ յս̅ : Պատասխանի ետ պետրոս եւ ասէ ցյս̅, ռաբբի, բարւոք է մեզ աստ լինել, եւ արասցուք երիս տաղաւարս, մի քեզ, եւ մի մովսէսի, եւ մի եղիայի.

Քանզի ոչ գիտէր զինչ խօսէր, զի զարհուրեալ էին.

Եւ եղեւ ամպ մի հովանի իվ̅ր նոցա. ձայն եղեւ յամպոյ անտի եւ ասէ, դա է որդի իմ սիրելի՝ դմա լուարուք :

Եւ յանկարծակի հայեցեալ այսր անդր ոչ եւս

զոք

մր ղ մ
ձէ ղբ ճհք

զոր ուրեք տեսին. բայց
միայն զ Յս ընդ ինքեանս
Եւ մինչ դեռ իջանէ
ին ՚ի լեռնէ անտի. պա
տուիրեաց նոցա զի մի՛
ումեք պատմեսցեն, զոր
տեսին, բայց յորժամ
որդի մարդոյ ՚ի մեռե
լոց յարիցէ։
ձը ժ Եւ նոքա զբանն ՚ի միտ
ունէին. և խնդրէին
ընդ միմեանս, թէ զինչ
իցէ ՚ի մեռելոցն յա
նել։
ձթ զ Հարցին ցնա և ասեն.
զինչ է այն զոր դպիր
քն ասեն. եթէ նախ ե
ղիայի պարտ է գալ։
Նա պատասխանի ետ
նոցա և ասէ, եղիա նախ
եկեալ յարդարեսցէ զամ
իսկ զիարդ գրեալ է
զորդւոյ մարդոյ, զի
բազում ինչ չարչարես

ցի, և անգոսնեսցի.
Այլ ես ասեմ ձեզ,
եթէ եղիա եկն, և ա
րարին ընդ նմա զինչ և
կամեցան, որպ և գրեալ
է վասն նորա.
ղ ժ Եւ եկեալ առ զա
շակերտսն,
տեսին ամբոխ
շուրջ զնոքօք, և զդպիր
սն զի վիճէին ընդ նս.
Եւ վաղվաղակի ամ ժո
ղովուրդն իբրև տեսին
զնա, զարմացան, և ընդ
առաջ ընթացեալ ող
ջոյն տային նմա.
Եւ եհարց ցնս, թէ
զինչ վիճէիք ընդ նոսա.
ղա բ Բ.Օ Պատասխանի ետ միոմն
՚ի ժողովրդենէն և ասէ
վարդապետ, ածի զոր
դի իմ առ քեզ, զոր ու
նի այս համր։

Եւ

Եւ ուր հասանի զար
կուցանէ զնա և փրփրէ,
և կրճտէ զատամունս
իւր և ցամաքի, և ասա
ցի ցաշակերտսն քո զի
հանցեն, և ոչ կարացին
հանել զնա ։
Պատասխանի ետ նոցա
և ասէ. ով ազգ անհա
ւատ մինչև յերբ իցեմ
առ ձեզ. մինչև ցերբ
անսայցեմ ձեզ, ածէք
զնա առ իս. և ածին
զնա առնա ։
Իբրև ետես զնա այսն՝
վաղվաղակի շարժեաց
զնա, և անկեալ յերկիր
թաւալէր և փրփրայր ։
Եհարց ցհայր նորա և
ասէ, քանի ժամանակք
են յորմէ հետէ այդ
եղև դմա ։
Եւ նա ասէ 'ի մանկու
թենէ ։

Բազում անգամ 'ի հուր
արկանէ զդա և 'ի ջուր,
զի կորուսցէ, այլ թէ
կարող ինչ ես, օգնեա
մեզ տէր, գթացեալ 'ի
վերայ մեր ։
Եւ յ̃ս ասէ ցնա, ասա
ցեր թէ կարող ես, 'ա̃մ
ինչ հնարաւոր է այնմ,
որ հաւատայն ։
Եւ վաղվաղակի աղա
ղակեաց հայր մանկանն
և ասէ, հաւատամ տ̃ր,
օգնեա անհաւատութեա
իմում ։
Իբրև ետես յ̃ս եթէ
կուտի ժողովուրդն 'ի
վերա, սաստեաց այսոյն
պղծոյ և ասէ. համր
և խուլ այս. ես տամ
քեզ հրաման. ել 'ի դմա
նէ, և այլ ևս մի՛ մտա
նիցես 'ի դա ։
Եւ աղաղակեաց և յոյժ

չա

լլկեաց զնա և ել, և
եղև պատասխանի իբ-
րև զմեռեալ, մինչև
բազմաց իսկ ասել թէ
մեռաւ։
Եւ յս կալեալ զձեռա
նէ նորա. յարոյց զնա
և կանգնեցաւ։
ՂԲ Ժ Եւ իբրև եմուտ նա
'ի տուն, աշակերտքն
առանձինն հարցին ցնա
մեք ընդէր ոչ կարա
ցաք հանել զնա։
Եւ ասէ ցնս, այդ ազգ
ոչ իւիք ելանէ, եթէ
ոչ պահօք և աղօթիւք։
ՂԳ Բ Եւ անտի ել
եալ անցանէ
ին առ Գալիլ
եացւովք, և
ոչ կամէր եթէ ոք գի
տասցէ. քանզի ուսու
ցանէր զաշակերտսն
իւր և ասէր ցնոսա,
թէ որդի մարդոյ մատ
նելոց է 'ի ձեռս մարդ
կան, և սպանցեն զնա,
և իբրև սպանցի յերիր
աւուր յարիցէ. և նոքա
ոչ գիտէին զբանն, և եր
կնչէին հարցանել ցնա։
ՂԴ Ժ Եւ եկն 'ի Կափառնաում,
և իբրև եմուտ 'ի տուն
հարցանէր զնս. զինչ վէ
ճէիք զճանապարհայն
ընդ միմեանս։
ՂԵ Բ Եւ նոքա լուռ լինէին,
զի ընդ միմեանս
վիճէին 'ի ճանապարհին
թէ ով մեծ իցէ։
ՂԶ Եւ իբրև նստաւ կոչ
եաց զերկոտասանսն և
ասէ ցնս, եթէ ոք կա
մի առաջին լինել, եղի
ցի ամենեցուն կրսեր
և ամենեցուն պաշտօ
նեայ։
Եւ

| մր | ղ | մ |
|---|---|---|
| ՂԲ | · | · |
| ՂԳ | ճա | ճհշ |

| մր | ղ | մ |
|---|---|---|
| ՂԵ | · | · |
| ՂԶ | ճբ-ճէ | ճհը |

Եւ առեալ մանուկ մի
կացոյց ի մէջ նոցա, և
ընկալեալ զնա ի գիրկս
իւր, ասէ ցնս. որ միան
գամ յայսպիսեաց մանկտ
ւոյ ընկալցի յանուն
իմ, զիս ընդունի.
ՂԷ Ա Եւ որ զիս ընդունիցի,
ոչ զիս ընդունի, այլ
զայն՝ որ առաքեացն զիս.
ՂԸ Ժ Պատասխանի ետ նմա
յովհաննէս և ասէ, վար
դապետ՝ տեսաք զոմն,
որ յանուն քո դևս հա
նէր և զկնի մեր ոչ շր
ջէր և արգելաք զնա.
Եւ նա ասէ մի՛ արգե
լուք զնա, զի ոչ ոք է.
որ առնէ զօրութիւնս
յանուն իմ. և կարիցէ
հայհոյել զիս.
Զի որ ոչն է ընդ մեզ
հակառակ՝ ի մեր կոյս է.
ՂԹ Զ Եւ որ ոք արբուսցէ
ձեզ ջուր բաժակաւ յա
նուն այս, թէ դուք
Քրիստոսի էք, ամէն ասեմ ձեզ
մի՛ կորուսցէ զվարձս
իւր.
Ճ Բ Եւ որ ոք գայթագղե
ցուսցէ զմի ՚ի փոքրկան
ցս որք հաւատան յիս,
լաւ էր նմա առաւել,
եթէ արկեալ էր ընդ
պարանոց նորա երկան
ի շոյ և ընկեցեալ ՚ի ծով.
ՃԱ Զ Եւ եթէ գայթագղե
ցուսցէ զքեզ ձեռն քո՛
հատ, և ընկեա՛ ՚ի քէն,
լաւ իցէ քեզ խեղ մտա
նել ՚ի կեանսն յաւիտե
նից, քան երկուս ձեռս
ունել, և երթալ ՚ի գե
հեն ՚ի հուրն անշէջ.
Ուր որդն նոցա ոչ մե
ռանի՝ և հուրն ոչ շի
ջանի.
ՃԲ Ժ Եւ եթէ ոտն քո գայ
թակղ

| Մտ | Ղ | Յ | Մ | Մտ | Ղ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| ՂՂ | ՃԺԴ | ԽՃԺԱՃԲ | ՂԷ | ՂԹ | ՃԼԵ | ՃՂԹ |
| ՂԵ | ՃԲ | . | . | Ճ | . | ՃԹ |
| ՑԸ | Ա | Ա | [illegible] | ՃԾ | Ա | Ա |

Թակղեցուսցէ զքեզ ,
հատ՝ և ընկեա՛ զնա ՚ի
քէն . լաւ իցէ քեզ կաղ
մտանել ՚ի կեանսն յաւի
տենից՝ քան երկուս ոտս
ունիլ և արկանիլ ՚ի գե
հեն ՚ի հուրն անշէջ .
ուր որդն նոցա ոչ մե
ռանի և հուրն ոչ շի
ջանի ։
Եւ եթէ ակն քո գայ
թակղեցուցանէ զքեզ .
հան զնա ի բաց , լաւ իցէ
քեզ միով ականբ մտա
նել յարքայութիւն աս
տուծոյ , քան երկուս
աչս ունել և անկանիլ
՚ի գեհեն ։
Ուր որդն նորա ոչ մե
ռանի , և հուրն ոչ շի
ջանի . զի ա՟մ ինչ հրով
յաղեսցի , և ա՟մ ողջա
կէզ աղիւ յաղեսցի ։
ճբ Բ Բարւոք է աղ , և եթէ
ԽԲ

մբ ճբ   զ ճձե   մ լ

աղն անհամեսցի , իւ
համեմեսցի .
Ունիջիք յանձի
նս ձեր զաղն, և խաղա
ղութիւն արարէք ընդ
միմեանս ։

ճգ
ԽԱ Եւ անտի յարու զե
ցեալ գայ ՚ի
սահմանս Հրէ
աստանի , յայնկոյս յոր
դանանու ։
Եւ երթայր դարձեալ
խռնեալ ժողովուրդն
առ նա , և որպ սովոր
էր միւսանգամ ուսու
ցանէր զնոսա ։
Իսկ փարիսեցիքն՝ մա
տուցեալ փորձելով հար
ցանէին զնա և ասէին ,
եթէ արժան իցէ առն
զկին իւր արձակել ։
Նա պատասխանի ետ
նոցա և ասէ . զինչ պա
տուի

մբ ճգ   մ ժթ

տուիրեաց ձեզ մովսէս։ Եւ նոքա ասեն. Մովսէս հրաման ետ զգիր մեկնելոյ գրել և արձակել։

Պատասխանի ետ յս և ասէ ցնս, վս խստասրտութե ձերոյ գրեաց զպատուիրանն զայն։

ՃԶ
Բ
Այլ ՚ի սկզբանէ արարածոց, արու և էգ արար զնոսա ած. և ասէ. վս այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ. և եղիցին երկուքն ՚ի մարմին մի, և այնուհետև ոչ են երկու՝ այլ մարմին մի. արդ զոր ած զուգեաց մարդ մի մեկնեսցէ։

ՃԴ
Ժ
Եւ ՚ի տան դարձեալ աշակերտքն զնոյն հարցին ցնա։

ՃԵ
Բ
Եւ ասէ ցնոսա, եթէ այր արձակեսցէ զկին իւր՝ և արասցէ այլ, շնայ. և կին եթէ ելցէ յառնէ իւրմէ, և եղիցի առն այլում, շնայ։

ՃԶ
Բ
Եւ մատուցանէին զնա մանկտի, զի ձեռն դիցէ նոցա, իսկ աշակերտքն սաստէին այնոցիկ որք մատուցանէին։

Իբրև ետես յս, բարկացեալ սաստեաց նոցա և ասէ, թոյլ տուք մանկտւոյդ գալ առիս և մի արգելուք զդոսա զի այդպիսեացդ է արքայութին այ։ Ամէն ասեմ ձեզ, որ ոչ ընկալցի զարքայութին այ իբրև զմա

ՄԲ
ՃԴ
ՃԶ ՃԵ ՃԶ ՃԵ ՃԶ ՃԵ ՃԶ
ՃԴ ՄԺԴ ՃԶԵ

զմանուկ ոչ մտցէ ՚ի նա։
Եւ առեալ զնո՛ ՚ի գիր
կս, ձեռն եդ ՚ի վերայ և
օրհնեաց զնոսա։
ԺԷ Բ Եւ ընդ ելանելն նորա
ՃԼԹ անտի ՚ի ճանապարհ,
աՀաւասիկ ոմն մեծա
տուն ընթացեալ ՚ի
ծունր իջանէր, հարցա
նէր ցնա և ասէր, վար
դապետ բարի, զինչ ա
րարից՝ զի զկեանս յաւի
տենականս ժառանգե
ցից։
Եւ յիսուս ասէ ցնա, զի
ասես զիս բարի, չէք ոք
բարի. բայց մի ած։
Զպատուիրանս գի
տես, մի՛ շնար, մի՛ սպա
նանաներ, մի՛ գողանար,
մի՛ սուտ վկայեր, պատ
ուեա զհայր քո և
զմայր։
Նա պատասխանի ետ
և ասէ ցնա, վարդա
պետ զայդ ամ արարի
՚ի մանկութէ իմէ, արդ
զինչ ևս պակասեցիմ։
ԻԱ Բ Եւ յիսուս հայեցեալ ՚ի նա
սիրեաց զնա։
Եւ ասէ ցնա, մի ինչ
պակաս է ՚ի քեն, եթէ
կամիս կատարեալ լի
նիլ, երթ զոր ինչ ունիս
վաճառեա, և տուր աղ
քատաց և ունիցիս գան
ձս յերկինս, և առ ըզ
խաչն, և եկ զկնի իմ։
ԻԲ Բ Եւ նա խոժոռեալ
ընդ բանն գնաց տր
տում, զի ունէր ինչս
բազումս։
Եւ հայեցեալ յայս կոյս
յայն կոյս յս, ասէ ցաշա
կերտսն. զիարդ դժուա
րին է որք զինչս ունին
մտանել յարքայութիւն
աստուծոյ։
Եւ

Ու աշակերտքն զարմա
ցեալ էին ի վերայ բանիցն ճժ
նորա։ բ
Իսկ յս դարձեալ պա
տասխանի ետ նոցա և
ասէ, որդեակք որչափ
դժուարին է յուսացե
լոցն յինչս՝ մտանել յար
քայութիւն այ․
դիւրին է մալխոյ ընդ
ծակ ասղան անցանել,
քան մեծատան յարքայ
ութիւնն այ մտա
նել․ և նոքա առաւել՝
ես զարմանային և ասէ
ին ընդ միմեանս, իսկ
ով կարասցէ ապրել։
Հայեցեալ ընդ նս յս
ասէ, առ ՚ի մարդկանէ
այդ անհնարին է, այլ
ոչ առ յայ, զի
ամենեքեան կարելիք են
առ այ։

Սկսաւ ասել ցնա պետրոս, ահա
աւասիկ մեք թո
ղաք զամ, և եկաք զ
կնի քո։
Պատասխանի ետ յս և
ասէ․ ամէն ասեմ ձեզ,
ոչոք է որ եթող զտուն,
կամ զեղբարս, կամ զքո
րս, կամ զհայր, կամ զմ
այր, կամ զորդիս, կամ
զագարակս վս իմ, կամ
վս աւետարանին։
Եթէ ոչ առնուցու
հարիւրապատիկ այժմ
յայսմ ժամանակի տունս
և եղբարս, և քորս, և
զմայր, և որդիս, և ագա
րակս հալածանօք հան
դերձ, և յաշխարհին որ
գալոց է զկեանսն յաւի
տենականս։
ճժա
բ Օ ի բազումք եղիցին
առա

| մ | ղ | յ |
|---|---|---|
| ճժ | մխա | ճ |
| ճժա | ճհբ | ճլբ |

առաջինք յետինք և յե
տինք առաջինք ։
ԾԺԲ Բ Եւ էին ՚ի ճանապարհի
մինչ դեռ ելանէին
յէմ, և երթայր յս̄ յա
ռաջ քան զն̄ս, և զար
մացեալ էին որք զհետն
երթային և երկնչէին ։
Եւ տարեալ միւս
անգամ զերկո
տասանսն առան
ձինն ․ սկսաւ ասել նոցա,
զորինչ անցք անցանելոց
իցեն ընդ նա ։
Թէ ահաւասիկ ելա
նեմք յէմ, և որդի մա
րդոյ մատնեսցի քահա
նայապետից և դպրաց,
և դատապարտեսցեն զնա
՚ի մահ, և մատնեսցեն
զնա հեթանոսաց ։
Եւ կատակեսցեն զնո
վաւ, և հարկանիցեն

զնա․ և թքանիցեն ՚ի նա,
և սպանցեն, և յերիր ա
ւուր յարիցէ ։
ԾԺԳ Զ Եւ երթային առ նո
վաւ յակոբոս և յոհան
նէս որդիքն զեբեդեայ․
և ասեն ցնա, վարդա
պետ՝ կամիմք, զի զոր ինչ
խնդրեսցուք մեք ՚ի քէն
զէ արասցես մեզ ։
Եւ նա ասէ ցնոսա,
զինչ կամիք յինէն զի
արարից ձեզ ։
Եւ նոքա ասեն ցնա ։
տուր մեզ զի նստցուք
մի յաջմէ քումմէ, և
մի յահեկէ ՚ի փառս
քոյս ։
Պատասխանի ետ յս̄ և
ասէ ցնոսա, ոչ գիտէք
զինչ խնդրէք, կարէք
ըմպել զբաժակն զոր
ես ըմպելոց եմ, կամ
զմկրտութիւնն մկրտիլ
զոր

Մթ Ղ Մ
ԾԺԲ ՃԲ Կա

Մթ Մ
ԾԺԳ Կբ

զոր ես մկրտելոց եմ ։
Եւ նոքա ասեն ցնա
կարեմք ։
Եւ յ͞ս ասէ ցն͞ս ։ զբա
ժակն զոր ես ըմպելոց
եմ, ըմպիցէք , եւ զմկր
տութիւնն զոր ես մկր
տելոց եմ , մկրտիցիք ։
Այլ նստուցանելն ընդ
աջմէ իմմէ եւ ընդ ա
հեկէ ոչ է իմ տալ ,
այլ որոց պատրաստեալ
իցէ ։
ՃԺԴ Բ Եւ լուեալ զայն տա
սանցն սկսան բարկա
նալ 'ի վ͞ր յակոբայ եւ յո
հաննու ։
Եւ յ͞ս կոչեաց զնոսա
առինքն , եւ ասէ ցնոսա ։
Գիտէք , զի որք յա
նուան իշխանքն են հե
թանոսաց տիրեն նոցա ,
եւ մեծամեծք նոցա իշ
խեն նոցա ։

Ոչ նոյնպ͞էս իցէ եւ 'ի ձեր
րում միջի , այլ որ կա
միցի 'ի ձէնջ մեծ լինել՝
եղիցի ձեր պաշտօնեայ ։
Եւ որ կամիցի 'ի ձէնջ
առաջին լինել , եղիցի ա
մենեցուն ծառայ ։
ՃԺԵ Դ Զի որդի մար
դոյ ոչ եկն առնուլ
պաշտօն այլ պաշտել ,
եւ տալ զանձն իւր փր
կանս փոխանակ բազ
մաց ։

ՃԺԶ Բ ՄՐ. Եւ գան յերիքով ։ Եւ ընդ
ելանելն նր͞ա
յերիքովէ աշակերտօքն ,
եւ բազում ժողովրդով ,
որդի տիմէի բարտի
մէոս կոյր նստէր մու
րացիկ յանցս ճանապար
հի ։ իբրեւ լուաւ թէ
յ͞ս նազօրեցի է սկսաւ
աղա

Մտ Ղ Մ
ՃԺԴ [illegible] [illegible]

Մտ Ղ Յ Մ
ՃԺԵ [illegible] [illegible] [illegible]
ՃԺԶ [illegible] [illegible] [illegible]

աղաղակել և ասել . որ
դի դաւթի յ̅ս̅ ողոր
մեա ինձ ։
Եւ սաստէին նմա բա
զումք, զի լռեսցէ ։
Եւ նա առաւել ևս
աղաղակէր, որդի դաւ
թի, ողորմեա ինձ ։
Զտեղի էառ յ̅ս̅, և
հրամայեաց կոչել զնա .
Կոչեն զկոյրն և ասեն
ցնա, քաջալերեաց արի,
կոչէ զքեզ .
Եւ նորա ընկեցեալ
զձորձս իւր, յարեաւ և
եկն առ յ̅ս̅ ։
Պատասխանի ետ նմա
յ̅ս̅ և ասէ, զինչ կամիս
թէ արարից քեզ, ասէ
ցնա կոյրն, ռաբբունի,
զի բացայց ։
Եւ յ̅ս̅ ասէ ցնա, երթ
հաւատք քո կեցուցին
զքեզ, և վաղվաղակի
բացաւ, և երթայր
զհետ նորա 'ի ճանա
պարհին ։

ճժե Բ
Եւ յորժամ մերձ
եղեն յերուսա
ղէմ, 'ի բեթ
փագէ և 'ի բեթանիայ
մօտ 'ի լեառն ձիթեն
եաց, առաքէ երկուս
յաշակերտացն անտի ։
Եւ ասէ ցնոսա, եր
թայք դուք 'ի գեօղդ
որ ընդդէմ ձեր կայ,
և նոյն ժամայն իբրև
մտանէք 'ի նա, գտանի
ցէք յաւանակ մի կապ
եալ յորոյ վերայ ոչոք
'ի մարդկանէ նստաւ .
լուծէք զնա և ածէք .
և եթէ ոք ասասցէ
ցձեզ եթէ զի լուծա
նէք զյաւանակդ, ասաս
ջիք եթէ տեառն իւ
րում

մբ ճժե գ մլբ մ մզ

րում պիտոյ է, և վաղ
վաղակի առաքեսցէ զնա
այսր:
ճժբ Բ Չոգան, և գտին զյա
ւանակն կապեալ առ
դուրս արտաքոյ 'ի փո
ղոցի անդ, և լուծին
զնա:
Եւ ոմանք յորոց անդն
կային ասեն ցնոսա, զի՞
գործէք, զի՞ լուծանէք
զյաւանակդ.
Եւ նոքա ասեն ցնոսա
որպէս ասացն յս՜, և
թոյլ ետուն նոցա:
Ածեն զյաւանակն առ
յիսուս:
Եւ արկանեն իվերայ
նորա հանդերձս և նս
տաւ իվերայ նորա:
Եւ բազումք զհան
դերձս իւրեանց տարա
ծանէին իվերայ ճանա
պարհին:

ԼԱ

Եւ այլք ոստս 'ի ծա
ռոց հատանէին, և արկա
նէին զճանապարհաւն.
ճժթ Ա Եւ որք առաջի և
զկնի երթային, աղաղա
կէին, և ասէին, ովսան
նայ բարձրելոյն.
Օրհնեալ որ գայ յա
նուն տեառն, օրհնեալ
թագաւորութիւնդ հօր
մերում դաւթի. խաղա
ղութիւն յերկինս և
փառք 'ի բարձունս.
ճի Ժ Եւ եմուտ յս՜ յեր՜մ 'ի
տաճարն, և հայեցաւ
շուրջ զամենեքումբք,
և զի էր երեկոյացեալ
ժամն, ել 'ի բեթանիայ
երկոտասանիւքն հան
դերձ:
Եւ 'ի վաղիւ բե
անդր մինչ
դեռ ելանէ
ին

մթ ղ մ
ճժբ ղէ ճբ

մթ ղ յ մ
ճժթ ղէ ճ ճթ
ճի ժժգ



էին 'ի բեթանիայ քաղ
ցեաւ ։
Եւ եւս զթզենի մի
'ի բացուստ տերեւալից,
եւ եկն թէ գտանիցէ
ինչ 'ի նմա, եւ իբրեւ եկն
'ի նա ոչինչ եգիտ բայց
միայն տերեւ. զի ոչ էր
իսկ ժամանակ թզոյ ։
Պատասխանի ետ եւ ասէ
ցնա, մի՛ եւս ոք յաւի
տեան 'ի քէն պտուղ կե
րիցէ ։
Եւ լսէին աշակերտքն
նորա ։
ճէա Ա Գան յԵ͞ղէմ, եւ մտեալ
'ի տաճարն սկսաւ հա
նել զվաճառականսն եւ
զգնողս որք էին 'ի տա
ճարի, եւ զսեղանս հա
տավաճառացն ցրու
եաց, եւ զաթոռս աղաւ
նավաճառացն կործան
եաց. եւ ոչ թողոյր եթէ
ոք անօթ ինչ ան
ցուցանիցէ ընդ տա
ճարն ։
Ուսուցանէր եւ ասէր
ցնոսա, թէ գրեալ է,
տուն իմ տուն աղօթից
կոչեսցի ա͞մ հեթանո
սաց, եւ դուք արարէք
զդա այրս աւազակաց ։
ճէբ Ա Լուան քահանայապետ
քն եւ դպիրքն, եւ
խնդրէին թէ որպէս
կորուսցեն զնա, բայց
երկնչէին 'ի նմանէ, զի
ա͞մ ժողովուրդն զար
մացեալ էր ընդ ուսու
մն նորա ։
ճէգ Ժ Եւ իբրեւ երեկոյ լի
նէր արտաքոյ քան զքա
ղաքն ելանէին ։
Եւ մինչդեռ այգուցն
առ նովաւ անցանէին,
տեսին զթզենին ցամա
քեալ յարմատոյ. եւ յիշ
եաց

| մր | ղ | յ | մ |
|---|---|---|---|
| ճէա | [illegible] | իա | [illegible] |

| մր | ղ | յ | մ |
|---|---|---|---|
| ճէբ | [illegible] | [illegible] | [illegible] |
| ճէգ | [illegible] | [illegible] | [illegible] |

եաց պետրոս և ասէ
ցնա, ռաբբի ահաւա
սիկ թզենին զոր անի
ծեր, ցամաքեցաւ։
ճիդ Զ Պատասխանի ետ յ՟ս և
ասէ ցնոսա. եթէ ունի
ցիք զհաւատսն աստու
ծոյ։
Ամէն ասեմ ձեզ. որոք
ասիցէ լերինս այսմիկ ճիէ Բ
բարձիր, և անկիր 'ի ծով Մ
և ոչ երկմտիցի 'ի սրտի
իւրում, այլ հաւատայ
ցէ թէ զոր ասէն լինի,
եղիցի նմա զորինչ և
ասիցէ։
ճիե Դ Վասն այսորիկ ասեմ
ձեզ. զա՟մ ինչ մ՟ որոյ ա
ղօթս արարեալ խնդրի
ցէք և հաւատայցէք
թէ առնուցուք, եղիցի
ձեզ։
ճիզ Զ Եւ յորժամ յաղօթս
Մ կայցէք, թողուցուք,

եթէ ունիցիք ինչ զու
մեքէ, զի և հայրն ձեր
որ յերկինս է. թողցէ
ձեզ զյանցանս ձեր։
Զի եթէ դուք ոչ
թողուցուք, և ոչ հայրն
ձեր որ յերկինս է թող
ցէ ձեզ զյանցանս ձեր։

Գան միւսանգամ էգ
յերուսաղէմ, և
մինչ դեռ 'ի տա
ճարի անդ զգնայր,
գան առնա քահանայա
պետքն և դպիրք և
ծերք։
Եւ ասեն ցնա. որով իշ
խանութ՟ առնես զայդ,
և ով ետ քեզ զիշխա
նութիւն զայդ։
Պատասխանի ետ յ՟ս և
ասէ ցնոսա, հարցից և
ես զձեզ բան մի, տուք
ինձ պատասխանի, և
ես

| մր | յ | մ |
|---|---|---|
| ճիգ | . | մժե |
| ճիե | ճիըՃՂ. ճըէ | մժզ |
| ճիզ | : | իե |

| մր | ղ | մ |
|---|---|---|
| ճիէ | ա | մժէ |

ես ասացից ձեզ որով
իշխանութը առնեմ
զայս ։
Մկրտութիւն յոհան
նու յերկնից էր, եթէ
՚ի մարդկանէ, տուք ինձ
պատասխանի ։
Խորհէին ընդ միմեանս
և ասէին, եթէ ասեմք,
եթէ յերկնից, ասէ ցմեզ
իսկ ընդ էր ոչ հաւա
տացիք նմա ։ այլ եթէ
ասեմք ՚ի մարդկանէ,
երկնչիմք ՚ի ժողովրդե
նէն, զի ամենեքին գի
տէին զյոհաննէս թէ
մարգարէ էր ։
Պատասխանի ետուն և
ասեն, ցնա չգիտեմք ։
Եւ յս՟ ետ նոցա պատաս
խանի և ասէ ։ և ոչ ես
ասեմ ձեզ, որով իշխա
նութեամբ առնեմ
զայս

ԻԲ
Ի
Լ.Օ

Եւ սկսաւ խօսիլ
ընդ նոսա առ
ակօք և ասել ։
Այր մի տնկեաց զայգի,
և էած շուրջ զնովաւ
ցանգ, և գուբ հնձան
փորեաց ։ և շինեաց աշ
տարակ, և ետ զնա ցմը
շակս, և գնաց ՚ի տար
աշխարհ ։
Եւ առաքեաց առ մշակ
սըն ՚ի ժամանակի ծա
ռայ մի, զի ՚ի մշակաց
անտի առցէ ՚ի պտղոց
այգւոյն ։
Եւ նոցա կալեալ զնա
հարին զնա, և արձակե
ցին ունայն ։
Դարձեալ առաքեաց
առ նոսա այլ ծառայ,
և զնա կառափնատե
ցին, և արձակեցին ա
նարգեալ ։
Եւ

[illegible]

Եւ դարձեալ այլ առա քեաց, և զնա սպանին ։ Եւ զբազումս այլս, զոմանս հարկանէին, և զոմանս սպանանէին ։
Ապա որդի մի էր սի րելի, զնա առաքեաց առ նոսա յետոյ, և ասէ, թերևս ամաչեսցեն յորդ ւոյ աստի իմմէ ։
Իսկ մշակքն իբրև տե սին զնա թէ գայ ։ ասեն ցմիմեանս սա է ժա ռանգն, եկայք, սպան ցուք զսա, և մեր լիցի ժառանգութիւնն ։ և կալեալ զնա սպանին՝ և հանին արտաքոյ այգ ւոյն ։
Արդ զինչ արասցէ տր̃ այգւոյն, եկեսցէ և կո րուսցէ զմշակս, և տա ցէ զայգի ՚ի ձեռս այ լոց ։
Եւ ոչ զգիրն զայն ըն թերցեալ իցէ ձեր, թէ զվէմն, զոր անարգեցին շինողքն ։ նա եղև գլուխ անկեան ։
Ի տ̃է եղև այս, և է սքանչելի յաչս մեր ։
ճիթ Ա Եւ խնդրէին զնա ու նել, և երկեան ՚ի ժողո վրդենէ անտի, զի գի տացին թէ առ նոսա ասաց զառակն, և թո ղին զնա և գնացին ։
ճլ Բ Եւ առաքեն առ նա զոմանս ՚ի փարիսեցւոց անտի և ՚ի հերովդիանո սաց, զի զնա որսասցեն բանիւ ։
Եւ նոքա եկեալ հար ցանէին զնա նենգու թբ̃, և ասէին ։ Վարդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես, և ոչ ինչ փոյթ է քեզ զու մեքէ ։

Փ Ղ Յ Մ
ճիթ ձլթ ձթ հե ձե Փ
ԺԶ ձԳ Է ճԵ

մեքէ, զի ոչ հայիս յերեսս մարդկան. այլ ճշմարտութեամբ զճանապարհն աստուծոյ ուսուցանես, արդ ասա մեզ արժան է հարկս տալ կայսեր, թէ ոչ, տացուք, եթէ ոչ տացուք:

Եւ յս գիտաց զկեղծաւորութիւն նոցա, ասէ ցնոսա, զի՞ փորձէք զիս կեղծաւորք. բերէք ինձ դահեկան մի զի տեսից:

Եւ նոքա բերին:

Եւ ասէ ցնոսա, ո՞յր է պատկերս այս, կամ գիր, և նոքա ասեն ցնա կայսեր:

Պատասխանի ետ յս և ասէ ցնոսա, երթայք, տուք զկայսերն կայսեր. և զաստուծոյն աստուծոյ:

Եւ զարմացան ընդ նա:

ԺԸ. Գան առ նա սադդուկեցիքն, որք ասեն թէ չիք յարութիւն, հարցանէին ցնա և ասէին. վարդապետ, մովսէս գրեաց մեզ, եթէ ուրուք եղբայր մեռանիցի և թողուցու կին, և զորդի ոչ թողուցու, առցէ եղբայր նր զկին նորա, և յարուսցէ զաւակ եղբօր իւրում,

Արդ եղբարք եօթն էին առ մեզ, առաջինն էառ կին և մեռաւ, և ոչ եթող զաւակ:

Եւ երկրորդն էառ զնոյն, և մեռաւ, և ոչ նա եթող զաւակ: նոյնպէս և երրորդն էառ զնոյն:

Եւ

Եւ եօԹանեքեան իսկ , և ոչ Թողին զաւակ . յետ ամենեցուն մեռաւ և կինն .

Արդ ՚ի յարուԹեն , յորժամ յառնիցեն , ոյր ՚ի նոցանէ լինիցի կինն, զի եօԹանեքեան կալան զնա կին ։

Պատասխանի ետ յս՛ և ասէ ցնոսա , ոչ վասն այդորիկ իսկ մոլորեալ էք , զի ոչ գիտէք զգիրս և ոչ զզօրուԹին այ (աստուծոյ) .

Զի յորժամ ՚ի մեռելոց յարիցեն , ոչ արք կանայս առնեն , և ոչ կանայք արանց լինին . այլ իբրև զհրեշտակս իցեն որք յերկինս են ։

Արդ վասն յարուԹե մեռելոց զի յառնեն , ոչ իցէ ընԹերցեալ ձեր ՚ի գիրսն մովսէսի ՚ի մորենւոյն . որպէս ասաց ցնա ած , ես եմ ած ած աբրահամու . ած իսահակայ . և ած յակոբայ . և ոչ է ած մեռելոց այլ կենդանեաց , և արդ դուք յոյժ մոլորեալ էք ։

Ճղա Ջ ԼԹ Եւ մատուցեալ միոմն ՚ի դպրացն լուեր նոցա մինչ վիճէին , իբրև ետես եԹէ բարւոք ետ նոցա զպատասխանին . եհարց ցնա և ասէ , որ պատուիրանն է առաջին .

Եւ յս՛ ասէ ցնա , առաջինն քան զամենայն , լուր իէլ , տր ած մեր տր մի է .

Եւ սիրեսցես զտր ած քո յամենայն սրտէ քումմէ , և յամ անձնէ քումմէ,

և

և յամենայն զօրութենէ
քումմէ, այս է առաջին
պատուիրանն ։
ճլդ Եւ երկրորդն նման
բ սմին. սիրեսցես զընկեր
քո՝ իբրև զանձն քո ։
Մեծ քան զսոսա այլ
պատուիրան ոչ գոյ ։
ճլե Եւ ասէ ցնա դպիրն,
ժ բարւոք է վարդապետ.
ճշմարտութբ ասացեր
թէ մի է նծ՝ և ոչ գոյ
այլ բաց 'ի նմանէ ։
Եւ սիրել զնա յամե
նայն սրտէ, և յամենայն
զօրութե, և յամ մտաց,
և սիրել զընկերն իբ
րև զանձն, առաւել է
քան զողջակէզս և զզոհս
Եւ տեսեալ յս թէ ի
մաստութբ ետ զպա
տասխանին, ասէ ցնա,
չես հեռի յարքայութենէ
աստուծոյ ։

ճլգ Եւ ոչ ոք իշխէր ինչ
ե հարցանել զնա ։

Խ ճլզ Պատասխանի ետ յս
բ և ասէ մինչ
ուսուցանէր 'ի
տաճարին զիարդ
ասեն դպիրքն եթէ
քսն որդի դաւթի է ։
Եւ ինքն դաւիթ հոգ
ւովն սրբով ասէ. ա
սաց տր ցտր իմ, նիստ
ընդ աջմէ իմմէ, մինչև
եդից զթշնամիս քո պա
տուանդան ոտից քոց ։
Արդ եթէ ինքն իսկ
դաւիթ զնա տր կոչէ,
զիարդ իցէ որդի նորա ։
Եւ բազում ժողովուրդ
լսէր նմա քաղցրութբ ։
ճլէ Եւ ասէր ուսուցանէ
բ րով 'ի վարդապետութե
իւրում զգոյշ լերուք 'ի
դպրաց անտի որք կա
մին

մբ
ճլթ

մբ դ մ
ճլգ մկդ գզ
ճլէ մկե գե
ճլթ ճլհ գժ

մին 'ի հանդերձս երեւե-
լիս շրջիլ. զնախողջոյնս
խնդրել 'ի հրապարակս.
Եւ զնախաթոռս 'ի ժո-
ղովուրդս, եւ զգահա-
գլուխս յընթրիս.
ճւզ Որք ուտեն զտունս այ-
ԽԱ րեաց. պատճառանօք
երկարեն զաղօթս, զի
աւելի եւս դատաստանս
ընկալցին.
Կայր յս̃ ընդդէմ գան-
ձանակին, տեսանէր
թէ զիարդ ժողովուր-
դըն արկանէր պղինձ 'ի
գանձանակն, եւ բազում
մեծատունք արկին բա-
զում ինչ. եկն այրի մի,
եւ էարկ երկուս լումայս
որ է նաքարակիտ մի.
Եւ կոչեալ առ ինքն
զաշակերտսն, ասէ ցնս̃,
ամէն ասեմ ձեզ. զի այ-
րին այն տառապեալ

ԽԳ

մ̃ զ
ճւզ ժ̃ե

շատ էարկ քան զամե-
նեսեան 'ի գանձանակն.
քանզի ամենեքին յաւե-
լորդաց իւրեանց արկին,
այլ նա 'ի չքաւորութե̃
իւրմէ զամենայն ինչ
զոր ունէր, էարկ գոյի-
չափ զկեանս իւր.

ճւե
Բ Եւ յելանելն է-
նորայ 'ի տա-
ճարէ անտի ասէ
ցնա մի յաշակերտացն
նորա. վարդապետ,
տե̃ս որպիսիքեն քա-
րինքս եւ որպիսիք շի-
նուածք.
Պատասխանի ետ նմա
յս̃ եւ ասէ, տեսանես
զայդ ամենայն շինու-
ած, ամէն ասեմ ձեզ
եթէ ոչ թողցի քար 'ի
քարի վերայ որ ոչ քակ-
տեսցի.

Եւ

մ̃ մ̃
ճւե ռ̃ւե մ̃ւբ մ̃ե

ճլը Բ Եւ մինչ նստէր նա ՚ի
ԽԲ լերինն Ձիթենեաց յան
դիման տաճարին. հար
ցանէին զնա առանձինն.
պետրոս, եւ յակոբոս, եւ
յոհաննէս, եւ անդրէաս.
Ասա մեզ, երբ լինիցի
այդ, եւ զինչ նշան է
յորժամ կատարելոց իցէ
այդ ամենայն։
Պատասխանի ետ յս եւ
ասէ ցնս, զգոյշ կացէք,
մի՛ ոք զձեզ խաբեսցէ.
զի բազումք եկեսցեն
յանուն իմ, եւ ասիցեն
թէ ես եմ քսն, եւ զբա
զումս մոլորեցուսցեն։
Այլ յորժամ լուիցէք
պատերազմունս, եւ զհամ
բաւս պատերազմաց,
մի՛ խռովիցիք. զի պար
տէ լինել. բայց չեւ է
կատարած։
Զի յարիցէ ազգ յազ
գի վերայ, եւ թագաւո
րութիւն ՚ի թագաւո
րութե վր, եւ եղիցին
շարժմունք ՚ի տեղիս
տեղիս. սովք եւ սրա
ծութիւնք եւ խռովութիւնք.
այլ այն ամենայն սկիզբն
է երկանց.
ճլթ Ա Եւ զձեզ իսկ մատնես
ցեն յատեանս, եւ ՚ի ժո
ղովուրդս տանջիցիք,
եւ առաջի դատաւորաց
եւ թագաւորաց կացջիք
վասն իմ, ՚ի վկայութն
նոցա.
Եւ ամենայն հեթանո
սաց.
ճխ Ջ Բայց նախ պարտ է
աւետարանիս քարոզել.
ճխա Բ Այլ յորժամ տանիցեն
զձեզ մատնել. մի՛ յա
ռաջագոյն հոգայցէք, եւ
մի՛ զմտաւ ածիցէք թէ
զինչ խօսիցիք, այլ
որինչ

մբ ճլը / ղ մրթ / մ մրէ

մբ ճլթ ճխ ճխգ / ղ մժ ճխը / յ ճխա ճխղ / մ ձէ մէ մխղ ՃԶ

որինչ տացի ձեզ 'ի ժա
մուն յայնմիկ զայն խօսի
ցիք · զի ոչ դուք էք
որք խօսիցիքդ, այլ՝ Հո
գին սուրբ ։
Մատնեսցէ եղբայր
զեղբայր 'ի մահ, և հայր
զորդի, և յառնիցեն
որդիք ի վերայ հարց, և
սպանանիցեն զնոսա ։
ՃԽԲ Զ Եւ եղիջիք ատեցեալք
յամենեցունց՝ վասն ա
նուան իմոյ · այլ որ
համբերեսցէ՝ խպառ նա
կեցցէ
Եւ յորժամ տեսանի
ցէք զպղծութիւն աւե
րածին, զի կայցէ 'ի տեղ
ւոջ, ուր չիցէ արժան,
որ ընթեռնուն 'ի միտ
առցէ ։
ՃԽԳ Բ Յայնժամ որք 'ի Հրէ
աստանի իցեն փախիցեն
'ի լերինս ։

| Մր | Ղ | Մ |
|---|---|---|
| ՃԽԲ | · | ՄԽԵ |
| ՃԽԳ | ՄԾ | ՄԽԶ |

Եւ որ իվ̃ր տանեացն
իցէ մի' իջցէ 'ի տուն,
և մի' մտցէ բառնալ ինչ
'ի տանէ իւրմէ · և որ
յագարակին իցէ, մի'
դարձցի յետս առնուլ
զձորս իւր ։
ՃԽԴ Բ Բայց վայ իցէ յղեաց
և ստնդեաց յաւուրսն
յայնոսիկ ։
ՃԽԵ Զ Յաղօթս կացէք, զի մի
ձմերայնի լինիցի այն ·
ՃԽԶ Բ Եղիցին աւուրքն այ
նոքիկ նեղութեանց, որ
պէս ոչ եղեն երբէք
այնպիսիք 'ի սկզբանէ
արարածոց՝ մինչև ցայժմ,
և մի' այլ լիցի ·
ՃԽԷ Զ Եւ եթէ ոչ էր կար
ճեալ Աստուծոյ զաւ
ուրսն զայնոսիկ վասն
ընտրելոց իւրոց, ոչ ապ
րէր ամենայն մարմին ·
այլ վ̃ս ընտրելոցն զորս
ընտ

| Մր | Ղ | Մ |
|---|---|---|
| ՃԽԴ | ՄԾԴ | ՄԽԸ |
| ՃԽԵ | · | ՄԾ |
| ՃԽԶ | ՄԾԵ | ՄԾԱ |
| ՃԽԷ | · | ՄԾԲ |

ընտրեաց կարճեաց զա
ւուրսն զայնոսիկ։
ՃԽԸ Բ Յայնժամ եթէ ոք ա
սիցէ ձեզ, եթէ ահա
ւասիկ է Քսն. կամ ա
ւանիկ, մի հաւատայ
ցէք։
ՃԽԹ Զ Զի յարիցեն սուտ
քրիստոսք, և սուտ մար
գարէք, և տացեն նշա
նս և արուեստս առ ՚ի
մոլորեցուցանելոյ. եթէ
հնար ինչ իցէ և զընտ
րեալսն։
Բայց դուք զգոյշ եղե
րուք, ահաւասիկ յա
ռաջագոյն ասացի ձեզ
զամենայն։
ՃԾ Բ Այլ յաւուրսն յայնո
սիկ յետ նեղութեանն
այնորիկ, արեգակն խա
ւարեսցի, և լուսինն ոչ
տացէ զլոյս իւր։
Եւ աստեղք երկնից
թօթափեսցին, և զօ
րութիւնք յերկինս շար
ժեսցին։
ՃԾԱ Բ Եւ յայնժամ տեսցեն
զորդի մարդոյ եկեալ
ամպօք զօրութեամբ և
փառօք բազմօք։
Եւ յայնժամ առաքես
ցէ զհրեշտակս իւր, և
ժողովեսցէ զընտրեալս
իւր ՚ի չորից հողմոց. ՚ի
ծագաց երկրի մինչև
՚ի ծագս երկնից։
Բայց դուք ՚ի թզենւոյ
անտի ուսջիք զառակն,
յորժամ տակաւ ոստքն
նորա կակղանայցեն, և
տերևն արձակիցի ՚ի
նմա. գիտէք թէ մերձ
է ամառն։
Նոյնպէս և դուք յոր
ժամ տեսանիցէք զայս
ամենայն եղեալ գիտաս
ջիք թէ մերձ է առ
դուրս։ Ամէն

Մտ Ղ Յ
ՃԽԸ ՄԴ ՄԳ
ՃԽԹ . ՄԿԴ
ՃԾ ՃԻԵ ՄԿԸ

Մտ Ղ Մ
ՃԾԱ ՄԾԸ ՄԵԹ

Ամէն ասեմ ձեզ, թէ
ոչ անցցէ ազգս այս՝
մինչեւ այս ամենայն
եղիցի ։
Երկինք եւ երկիր անց
ցեն, եւ բանք իմ ոչ ան
ցանիցեն ։
ճծբ Վասն մի աւուրն այնո
Զ րիկ եւ ժամու ոչ ոք գի
Խ՟Դ տէ, ոչ հրեշտակք յեր
կինս. եւ ոչ որդի. բայց
հայր միայն ։
ճծգ Զգոյշ եղերուք, հս
Զ կեցէք եւ կացէք յաղօ
թս, զի ոչ գիտէք երբ
ժամանակն իցէ.
ճծդ Որպէս այր մի գնաց
Բ եալ ՚ի տար աշխարհ,
թողուցու զտուն իւր,
եւ տացէ ծառայից իւ
րոց իշխանութի՟, եւ իւ
րաքանչիւր զգործս իւր
եւ դռնապանին պատու
էր տայցէ զի արթուն

| Մր | Ղ | Մ |
| --- | --- | --- |
| ճծբ | · | մկ |
| ճծգ | · | մկգ |
| ճծդ | մբլ | մկթ |

լինիցի .
ճծե Արդ՝ արթուն կացէք .
Բ զի ոչ գիտէք երբ տէր
տանն գայցէ, յերեկոր
եայ, եթէ ՚ի մէջ գիշե
րի, եթէ ՚ի հաւախօսի,
եթէ ընդ առաւօտս .
գուցէ եկեալ յանկար
ծակի գտանիցէ զձեզ
՚ի քուն ։
Բայց զոր ձեզդ ասեմ,
ամենեցուն ասեմ, ար
թուն կացէք .
ճծզ Եւ էր զատիկ եւ
Ա եւ բաղար
ջակեր, յետ
երկուց աւ
ուրց ։
ճծէ Խնդրէին քահանայա
Զ պետքն եւ դպիրքն եթէ
զիարդ զնա նենգութե՟
կալեալ սպանանիցեն ։
Բայց ասէին թէ մի՛ ՚ի
տօնի

| Մր | Ղ | Յ | Մ |
| --- | --- | --- | --- |
| ճծե | սծգ | · | մկգ |
| ճծզ | մկ | ի խը | մհգ |
| ճծէ | : | : | մհե |

տօնի աստ, զի մի՛ խռո
վութիւն լինիցի 'ի ժողո
վրդեանն ։

ծը Եւ մինչ էր 'ի Բեթա
Ա նիայ 'ի տան սիմոնի
ԽԴ. բորոտի բազմեալ, եկն
կին մի, որ ունէր շիշ
իւղոյ նարդեան ազնուի
մեծագնոյ, և բեկեալ
զշիշն՝ եհեղ իվերայ
գլխոյ նորա ։

Եւ աշակերտքն զչարչ
էին և ասէին, ընդէր
եղև կորուստ իւղոյդ
այդորիկ ։

Մարթ էր զայդ իւղդ
վաճառել աւելի քան
զերեք հարիւր դա
հեկանի, և տալ աղ
քատաց, և զայրանային
նմա յոյժ ։

Եւ յս̄ ասէ ցն̄ս, Թոյլ
տուք դմա, զի աշխատ
առնէք, զի գործ մի
բարի գործեաց դա յիս ։

Յամ ժամ զաղքատս
ընդ ձեզ ունիք, և
յորժամ կամիք կարօղ
էք առնել նոցա բարիս,
այլ զիս ոչ յամ ժամ ընդ
ձեզ ունիք ։

ծծթ Դ Զոր ունէր, արար
յառաջագոյն խնկեաց
զմարմին իմ 'ի նշան պա
տանաց ։

Ամէն ասեմ ձեզ, ուրև
քարոզեսցի աւետարանս
այս ընդ ամ աշխարհ, և
զոր արար դա խօսեսցի
'ի յիշատակի դորա ։

ծկ Եւ յուդա իսկարիովտա
Բ ցի մի յերկոտասանից
անտի, գնաց առ քահա
նայապետսն զի մատնես
ցէ զնա նոցա ։

Նոքա իբրև լուան
խնդացին, և խոստա
ցան տալ նմա արծաթ,
և

| մր | ղ | յ | մ |
|---|---|---|---|
| ծը | հդ | ղը | մհզ |

| մր | ղ | յ | մ |
|---|---|---|---|
| ծծթ | ։ | ղը | մհե |
| ծկ | մջե | ։ | մհը |

եւ խնդրէր թէ զի արդ
պարապով մատնեսցէ
զնա ։

ԽՆ Եւ յառաջնում աւ
ուր բաղարջակերացն ,
յորում զպասեքն զենու
ին , ասեն ցնա աշակերտ
քն , ուր կամիս երթի
ցուք պատրաստեսցուք
զի կերիցես զզատիկն ։
Եւ առաքէ երկուս յա
շակերտաց անտի եւ ասէ
ցնս , երթայք 'ի քաղա
քն , եւ իբրեւ մտանիցէք
'ի քաղաքն պատահեսցի
ձեզ այր մի , որ սափոր
ջրոյ յուսն ունիցի ,
երթայք զհետ նր ։
Եւ յոր տուն մտանիցէ,
ասասջիք տանուտերն ։
վարդապետն ասէ՝ ուր
են իջեւանքն իմ , ուր
աշակերտօքս ուտիցեմ
զզատիկն ։

Եւ նա ցուցցէ ձեզ
վերնատուն մի մեծ
զարդարեալ ։ անդ
պատրաստեսջիք մեզ ։
Եւ գնացին պատրաս
տել աշակերտքն նորա ։
եկին 'ի քաղաքն՝ եւ
գտին ոպ ասացն նոցա ,
եւ պատրաստեցին զզա
տիկն ։
Եւ իբրեւ երեկոյ եղեւ
գայ երկոտասանիւքն
հանդերձ ։
ճկա Դ Եւ իբրեւ բազմեցան
ԽԹ եւ դեռ ուտէին , ասէ
յս , ամէն ասեմ ձեզ զի
միոմն 'ի ձէնջ մատնե
լոց է զիս ։ որ ուտէ ինձ
ընդ իս ։
ճկբ Ա Եւ նոքա սկսան տրտ
միլ եւ ասել մի ըստ միո
ջէ ։ միթէ ես իցեմ , եւ
միւսն , միթէ ես իցեմ ։
ճկգ Բ Նա պատասխանի ետ

եւ

| մ | ղ | յ | մ |
|---|---|---|---|
| ճկա | · | հբ ճիա | մհթ |
| ճկբ | մկթ | ճիբ | մծ |
| ճկգ | միբ | · | մծա |

և ասէ ցնոսա մի յերկո
տասանից այտի. որ մխ
եաց ընդ իս ՚ի սկաւա
ռակդ ։
Այլ որդի մարդոյ եր
թայ ոպ գրեալ է վս
նորա, բայց վայ իցէ ճ
մարդոյն այնմիկ յորոյ
ձեռն որդի մարդոյ
մատնեսցի ։
ճկդ Զ Լաւ էր նմա թէ չէր
իսկ ծնեալ մարդն այն ։
ճկե Ա Եւ մինչդեռ ուտէին
առեալ յի հաց, օրհն
եաց, և եբեկ, ետ նոցա
և ասէ, առէք՝ այդ է
մարմին իմ ։
ճկզ Բ Եւ առեալ բաժակ՝
գոհացաւ և ետ նոցա,
և արբին ՚ի նմանէ ամե
նեքեան ։
Եւ ասէ ցնոսա, այս է
արիւն իմ նորոյ ուխտի,
որ փոխանակ բազմաց
հեղանի ։

| Մտ | Ղ | Յ | Մ |
|---|---|---|---|
| ճկդ | . | . | մձգ |
| ճլե | մկզ | ծե կգ | մձզ |
| ճկզ | մկե | . | մձէ |

Ամէն ասեմ ձեզ, թէ
ոչ եւս ուտելոց ըմպել ՚ի
բերոյ որթոյ, մինչև
ցօրն այն, յորժամ արբից
զնա նոր յարքայութեն
աստուծոյ ։
կէ Զ Եւ գոհացեալ ելին ՚ի
լեառն ձիթենեաց ։
ճկը Ր Եւ ասէ ցնս յս. ամենեքեան գայ
թակղեսջիք յիս
նէն յայսմ գիշերի ։
ճկթ Զ Զի գրեալ է թէ հա
րից զհովիւ, և ոչխարք
ն ցրուեսցին ։
Այլ յետ յարութե իմոյ՝
յառաջագոյն երթայց
քան զձեզ ՚ի գալիլեայ ։
ճհ Ա Պատասխանի ետ պետ
րոս և ասէ ցնա, թէ
պէտ և ամենեքին գա
յթակղեսցին, այլ ես ոչ ։
Եւ ասէ ցնա յս. ամէն
ասեմ

| Մտ | Ղ | Յ | Մ |
|---|---|---|---|
| ճկէ | . | . | մձդ |
| ճկը | . | ճծբ | մձե |
| ճկթ | . | . | մձը |
| ճհ | մհե | ճիգ | մձթ |

ասեմ քեզ, թէ դու
խոկ յայսմ գիշերի մինչ
չեւ հաւու խօսեալ իցէ
երիցս ուրասցիս զիս։
ճհա Զ Իսկ պետրոս առաւել
եւս պնդէր եւ ասէր,
եթէ մեռանիլ եւս հա
սանիցի ընդ քեզ, զքեզ
ոչ ուրացայց։
Նոյնպէս եւ ամենեքեան
ասէին։
ճհբ Ա Գան 'ի գեօղն որում
անուն էր գեթսեմանի,
եւ ասէ ցաշակերտսն։
ճհգ Զ Նստարուք աստ՝ մինչ
ես յաղօթս կացից։
Եւ առնու ընդ իւր
զպետրոս եւ զյակոբոս
եւ զյոհաննէս. եւ սկսաւ
տրտմիլ եւ հոգալ։
ճհդ Դ Յայնժամ ասէ ցնոսա,
տրտում է անձն իմ
մինչեւ 'ի մահ, մնացէք
աստ եւ արթուն կացէք։

Եւ

ճհե Ա Եւ մատուցեալ սակա
ւիկ մի յառաջ, անկա
նէր 'ի վերայ երեսաց իւրոց
յերկիր, եւ կայր յաղօթս
զի եթէ հնար իցէ
անցցէ 'ի նմանէ ժամն։
Եւ ասէ, աբբա հայր,
ամ ինչ քեզ հնարաւոր
է, անցո զբաժակս զայս
յինէն։
ճհզ Ա Բայց ոչ որպ ես կամիմ
այլ որպ դու կամիս։
Եւ գայ գտանէ զնոսա
զի ննջէին, եւ ասէ ցպետ
րոս, սիմոն ննջես, ոչ
կարացեր ժամ մի ար
թուն կալ։
ճհէ Բ Արթուն կացէք եւ յա
ղօթս արարէք. զի մի մտ
ջիք 'ի փորձութիւն։
ճհը Դ Ոգիս յօժար է, բայց
մարմինս տկար։
ճհթ Ա Եւ դարձեալ չոգաւ
եկաց յաղօթս, եւ զնոյն

բանս

| մր | ղ | յ | մ |
|---|---|---|---|
| ճհա | • | • | մղ |
| ճհբ | մհթ | ճծղ | մղա |
| ճհգ | • | • | մղբ |
| ճհդ | : | ճե | մղդ |

| մր | ղ | յ | մ |
|---|---|---|---|
| ճհե | մձա | ճկա | մղգ |
| ճհզ | մձբ | խբ ծը | մղե |
| ճհէ | մձգ | • | մղզ |
| ճհը | • | հ | մղէ |
| ճհթ | : | : | մղը |

բան տկար ։
Դարձեալ միւսանգամ
անդրէն, և եգիտ զնո
սա 'ի քուն, քանզի էին
աչք նց ծանրացեալք,
և ոչ գիտէին զինչ պա
տասխանի տայցեն նմա ։
Գայ երրորդ անգամն
ասէ ցնոսա, Ննջեցէք
այսուհետև, և հանգե
րուք ։ զի հասեալ է
վախճան ։
ճծդ Դ Եկն ժամ, և ահա որդի
մարդոյ մատնի 'ի ձեռս
մեղաւորաց ։
Ո՛ն արիք, գնասցուք,
զի ահաւասիկ մերձե
ցաւ որ մատնելոց է զիս ։
ճծե Ա Եւ մինչդեռ նա զայն
խօսէր, գայ յուդա խնկա
րիոտացի, մի յերկոտա
սանից անտի, և ընդ
նմա ամբոխ, սուսերօք և
բրօք, 'ի քահանայապե
տեց և 'ի դպրաց և 'ի
ծերոց ։
ճծզ Բ Տուեալ էր նշան մատնի
չին և ասէր, ընդ որում
ես համբուրեցից նա է,
կալջիք զնա, և տարջիք
զգուշութը ։
Եւ մատուցեալ վաղվա
ղակի ասէ ցնա · ռաբբի,
ռաբբի, և համբուրեաց
զնա ։
Եւ նոքա արկին 'ի նա
ձեռս և կալան զնա ։
ճծէ Ա Եւ մի ոմն յայնցանէ
որք զնովաւն կային,
ձգեաց զսուր, և եհար
զծառայ քահանայապե
տին, և 'ի բաց եհան
զունկն նորա ։
ճծը Ա Պատասխանի ետ յս և
ասէ ցնոսա, իբրև իմն
աւազակի ելէք, սուսե
րօք և բրօք, ունել զիս ։
Հանապազ առ ձեզ էի
և

| Մր | Ղ | Յ | Մ |
| --- | --- | --- | --- |
| ճծդ | · | ճկգ | մղը |
| ճծե | մծէ | հճ | յ |

| Մր | Ղ | Յ | Մ |
| --- | --- | --- | --- |
| ճծզ | մձզ | · | յա |
| ճծէ | մձէ | ճկ | յբ |
| ճծը | մձը | ճհ | յ |

և ուսուցանէի 'ի տա
ճարին, և ոչ կալայք
զիս, այլ զի լցցին գիրք
մարգարէիցն ։

ՄԾԵ Զ Յայնժամ թողին զնա
աշակերտքն ամենեքին
և փախեան ։

ՄԾԶ Ժ Եւ ոմն երիտասարդ
զհետ երթայր նորա ար
կեալ զիւրև զկտաւ մի
'ի մերկուց, ունէին զնա
երիտասարդքն, և նորա
թողեալ զկտաւն փախ
եաւ մերկ 'ի նոցանէ ։

ՄԾԷ Ա Եւ տարան զյս առ քա
հանայապետն կայիափա,
և գային ընդ նմա ամ
քահանայքըն և դպիրք
և ծերք ։

ՄԾԸ Ա Եւ պետրոս երթայր
զհետ նր մինչև 'ի ներքս
իսկ 'ի գաւիթ քահանայ
ապետին ։ և նստէր
ընդ սպասաւորսն, և
ջեռնոյր առ լուսովն ։

ՄԾԹ Բ Իսկ քահանայապետքն
և ամ ատեանն խնդրէին
հակառակ յս վկայու
թիւն ինչ, զի չարախօ
սեսցեն զնա, և ոչ գտա
նէին ։ զի բազումք սուտ
վկայութիւն վկայէին
զնմանէ, և նման մի
մեանց ոչ էին վկայու
թիւքն ։

ՄԿ Զ Ոմանք յարուցեալ վկայ
էին սուտ զնմանէ, և
ասէին ։ Թէ մեք լուաք
'ի դմանէ զի ասէր, ես
քակեցից զտաճարդ
զայդ ձեռագործ, և
զերիս աւուրս շինեցից
զայլ՝ առանց ձեռագոր
ծի ։

Սակայն և այնպէս չէր
նման վկայութի նոցա ։

Ապա

| Մթ | Ղ | Յ | Մ |
|---|---|---|---|
| ՄԾԵ | ։ | ։ | ՅԵ |
| ՄԾԶ | ։ | ։ | ։ |
| ՄԾԷ | ՄՂ | ՃԿԲ ՃՀԴ | ՅԶ |
| ՄԾԸ | ՄՂա | ՃԿԴ | ՅԷ |

| Մթ | Ղ | Մ |
|---|---|---|
| ՄԾԹ | ՅԵ | ՅԸ |
| ՄԿ | ։ | ՅԹ |

Ապա յարուցեալ քա
հանայապետն ի մէջ հար
ցանէր զՅս և ասէր ։
ոչ ինչ տաս պատասխանի
զինչ դոքա զքէն վկայեն
Եւ Յս լուռ և եթ կայր՝
և չտայր ինչ պատասխա
նի ։
Դարձեալ քահանայա
պետն հարցանէր ցնա
կրկին անգամ և ասէր ,
դու ես Քս որդի աստու
ծոյ օրհնելոյն ։
Պատասխանի ետ Յս և
ասէ ցնա ։ դու ասացեր
թէ ես եմ ։
ծլա Ա Բայց տեսանիցէք զոր
դի մարդոյ նստեալ
ընդաջմէ զօրութեան
աստուծոյ , և եկեալ Խ Ղ
ընդ ամպս երկնից ։
ծլբ Զ Եւ քահանայապետն
պատառեաց վաղվաղա
կի զպատմուճան իւր

և ասէ ։
ծլդ Բ Զի՞նչ ևս պիտոյ են
մեզ վկայք ։
Ահա լուայք ամենեքեան
զհայհոյութիւնդ 'ի բերա
նոյ դորա , զինչ թուի
ձեզ ։
Եւ ամենեքեան դատա
պարտեցին զնա թէ մա
հապարտ է ։
ծլե Գ Եւ ոմանք սկսան թքա
նել ընդ երեսն նր̄ , ծործ
զգլուխն արկանել կըա
փել և ասել , մարգա
րէաց մեզ Քսդ , ո՞վ է
այն որ եհարն զքեզ , և
սպասաւորքն ապտակս
հանէին նմա ։
ծլզ Ա Եւ պետրոս մինչդեռ
էր 'ի խոնարհ 'ի գաւ
թին , գայ աղախին մի
քահանայապետին ։
Եւ տեսանէ զնա զի
ջեռնոյր ։ հայեցաւ ընդ
նա

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| մր | ղ | ժ | մ | փ | ղ | ժ | մ |
| ծլա | մլե | կթ | յժ | ծլգ | մլթ | . | յժբ |
| ծլբ | Ա | Ա | յժա | ծլդ | մլգ | ծհը | յժգ |
| | | | | ծլե | մլե | ծկը ծկը | յժդ |

նա և ասէ, և դու ընդ յս̃ Նազովրեցւոյ էիր։

Նա ուրացաւ և ասէ, ոչ ճանաչեմ, և ոչ գիտեմ զինչ դուդ ասես։ ճլե Բ

ճլզ Ա Եւ իբրև ել յարտաքս ի գաւիթն և հաւ խօսեցաւ։

Դարձեալ եւես զնա աղախինն, և սկսաւ ասել ցայնոսիկ որք շուրջն կային, թէ և սա ՚ի նոցանէ է։ ճլէ Ա

Եւ նա դարձեալ ուրացաւ։

Եւ յետ սակաւ միոյ դարձեալ որք շուրջն կային, ասէին ցպետրոս, արդարև և դու ՚ի նոցանէ ես, քանզի գալիլեացի ես. և խօսքդ իսկ նման են։

Եւ սկսաւ նզովել երդնուլ և ասել թէ ոչ գիտեմ զայրդ զոր դուք ասէք։

Եւ նոյն ժամայն կրկին հաւ խօսեցաւ։

ճլե Բ Եւ յիշեաց պետրոս զբանն զոր ասաց ցնա յս̃. թէ չև իցէ հաւու երկիցս խօսեալ, զիս դու երիցս ուրասցիս զիս, և սկսաւ լալ։

ճլը Ա Եւ վաղ վաղակի ընդ առաւօտն, խորհուրդ արարեալ քահանայապետիցն՝ հանդերձ ծերօքն և դպրօք և ամենայն ատեանն։

ճլթ Ա Կապեցին զյս̃ և տարան մատնեցին պիղատոսի։

Ա Եհարց զնա պիղատոս և ասէ, դու ես թագաւորն հրէից, նա պատ-

տաս

| Մր | Ղկ | Յ | Մ |
|---|---|---|---|
| ճլզ | մլբ | ճհե | յժթ |

| Մր | Ղ | Յ | Մ |
|---|---|---|---|
| ճլէ | մլգ | . | յժգ |
| ճլը | մլե | ճհգ | յժդ |
| ճլթ | մ | ճհգ | յժե |
| մ | մթ | ճհը | մի |

տասխանի ետ նմա եւ
եւ ասէ դու ասես ։
մա Գ Եւ չարախօսէին զնմա
նէ յոյժ քահանայապետ
քըն, եւ նա ոչինչ տայր
պատասխանի ։
Իսկ պիղատոս դարձեալ
հարցանէր զնա, ոչինչ
տաս պատասխանի, տես՝
քանի ամբաստանեն
զքէն ։
Եւ յս̃ այնու հետեւ
ոչինչ ետ պատասխանի,
մինչեւ զարմանալ յոյժ
պիղատոսի ։
մբ Ե Բայց ըստ տօնի արձա
կէր նոցա զոք ի կապելոց
զոր ինքեանք խնդրէին ։
մգ Դ Եւ էր, որում անունն
էր բարաբբաս կապեալ
ընդ խռովիչսն որոց ընդ
խռովելն զայր մի սպա
նեալ էր ․ ՚ի ձայն բարձր
սկսաւ աղաղակել ամբո
խըն եւ խնդրել որպէս
սովորէր, զի արձակես
ցէ նոցա զբարաբբայն ։
Պատասխանի ետ պիղա
տոս եւ ասէ ցնս̃ ․ կամիք,
զի արձակեցից ձեզ զար
քայն հրէից ․ քանզի
գիտէր թէ առ նախան
ձու մատնեցին զնա
քահանայապետքն ։
մդ Ա Որք եւ զամբոխն հա
նեցուցին, զի արձակես
ցէ նոցա զբարաբբայն ։
Դարձեալ պատասխանի
ետ պիղատոս եւ ասէ
ցնոսա, իսկ զինչ կամիք
թէ արարից զարքայն
հրէից ։
մե Ա Եւ նոքա դարձեալ
աղաղակէին՝ յուզեալք
՚ի քահանայապետացն ՚ի
խաչ հան զդա ։
Ասէ ցնոսա պիղատոս ․
զինչ չար արարեալ իցէ
դորա ։

| Մ | Ղ | Յ | Մ |
|---|---|---|---|
| մա | . | ճ | յժա |
| մբ | ջթ | . | յժբ |
| մգ | . | ճձգ | յժգ |
| մդ | ջժ | ճձդ | յժդ |
| մե | ջժա | ճձե | յժե |

դորա ։

Եւ նոքա առաւել եւս աղաղակէին եւ ասէին, ՚ի խաչ հան զդա ։

խե Ա Իսկ պիղատոս իբրեւ զմիտս կամեցաւ հաճել ամբոխին, արձակեաց նոցա զԲարաբբայն, եւ զՅս̃ գան հարեալ ետ ՚ի ձեռս. զի ՚ի խաչ ելանիցէ ։

խզ Դ Եւ զինուորք տարան զնա ՚ի ներքս ՚ի գաւիթն՝ ուր հրապարակն էր. եւ կոչեն միանգամայն զամենայն զգունդն ։

Եւ զգեցուցանեն նմա քղամիդ կարմիր, եւ ծիրանիս, եւ եդին ՚ի գլուխ նորա պսակ արարեալ ՚ի փշոց ։

Եւ սկսան ողջոյն տալ նմա եւ ասել ողջ եր արքայդ հրէից ։

Եւ ծեծէին զգլուխն եղեգամբ, եւ թքանէին ընդ երեսս, եւ ՚ի ծունր իջեալ երկիրպագանէին նմա ։

խէ Ա Եւ իբրեւ կատակեցին զնա, մերկացուցին զքղամիդն եւ զծիրանիս. եւ զգեցուցին նմա զիւր հանդերձն ։

խը Ա Եւ ածին արտաքս, զի ՚ի խաչ հանիցեն զնա ։

Եւ ունէին պահակ զսիմոն կիւրենացի, որ ընդ այն անցանէր եկեալ յագարակէ, զհայրն աղէքսանդրի եւ ռուփայ. զի բարձցէ զխաչափայտն նորա ։

ծ Ա Եւ ածեն զնա ՚ի գողգոթա տեղի մի, որ թարգմանի տեղի կառափելոյ ։

ծա Դ Եւ տային նմա գինի զմուռ.

| | | | |
|---|---|---|---|
| ք | ղ | յ | մ |
| խզ | յժգ | ճղզ | յիբ |
| [illegible] | յ | ճձե | յիթ |

| | | | |
|---|---|---|---|
| ք | [illegible] | յ | մ |
| խէ | . | . | յլ |
| խը | յժե | ճղէ | յլա |
| ծ | յժը | ճղե | յլբ |
| ծա | յ | յզ | յլգ |



զմուռսեալ. և նա ոչ էառ,
և հանին զնա ՚ի խաչ
մժբ Ա Եւ իբրև խաչեցին զնա,
նեցին զհանդեր
, արկեալ վիճակս
Դէ ո՛ զինչ առ
-ցու.
մժգ Դ Եւ [illegible]ամ երրորդ, և
հանին զնա ՚ի խաչ.
մժդ Ա Եւ էր գիր վնասու նր̃
գրեալ. թէ թագաւոր
է հրէից.
մժե Ա Եւ ընդ նմա հանին ՚ի
խաչ երկուս աւազակս,
մի ընդ աջմէ նր̃, և մի
ընդ ահեկէ.
մժզ Ը Եւ լցաւ գիրն որ ասէ,
թէ ընդ անօրէնս համա
րեցաւ.
մժէ Զ Եւ որք անցանէինն,
հայհոյէին զնա, շարժ
եալ զգլուխս իւրեանց
և ասէին. վահ որ
քակէիր զտաճարն և

Ի.Օ.

| մր | ղ | յ | մ |
|---|---|---|---|
| մժբ | յիա | ձա | յլդ |
| մժգ | . | . | . |
| մժդ | յիգ | ձլթ | յլե |
| մժե | յիե | ձլը | յլզ |
| մժզ | ահե | . | . |
| մժէ | . | . | յլէ |

զերիս աւուրս շինէիր.
Ապրեցո՛ զանձն քո և
էջ ՚ի խաչէդ.
մժը Բ Նոյնպէս և քահանայա
պետքն այպն արարեալ
ընդ միմեանս հանդերձ
դպրօքն ասէին, զայլս
ապրեցոյց զանձն ոչ կա
րէ ապրեցուցանել. Քս̃դ
արքայդ Իղի, իջցէ այժմ
՚ի խաչէ անտի, զի
տեսցուք և հաւատաս
ցուք դմա.
մժթ Բ Եւ որք ընդ նմա ՚ի
խաչ ելեալ էին նախա
տէին զնա.
մի Բ Եւ իբրև վեց ժամ
եղև, խաւար կալաւ
զամենայն երկիր մինչև
ցիններորդ ժամն.
միա Զ Եւ յիններորդ ժամուն
աղաղակեաց Յս̃ ՚ի ձայն
մեծ և ասէ, էլի էլի
լամասափաքթանի, որ

թարգ

| մր | ղ | մ |
|---|---|---|
| մժը | յիբ | յլը |
| մժթ | յիե | յլթ |
| մի | յիէ | յխ |
| միա | . | յխա |

Թարգմանի. ած իմ, ած իմ, ընդէր թողեր զիս։

Եւ ոմանք 'ի նոցանէ որք շուրջն կային զնովաւ իբրեւ լուան, ասէին թէ զեղիայ կարդայ։

ճկե Բ Եւ ընթացեալ միոմն ելից սպունգ մի քացախով, եւ հարեալ յեղեգան տայր ըմպել նմա, եւ ասէ թոյլ տուք տեսցուք, գայ եղիա իջուցանել զդա։

ճկզ Ա Եւ յս արձակեաց զձայն մեծ եւ եհան զոգի։

ճկէ Բ Եւ վարագոյր տաճարին պատառեցաւ յերկուս, ի վերուստ մինչեւ 'ի խոնարհ։

ճկը Բ Եւ տեսեալ հարիւրապետին որ կայր անդ, եթէ աղաղակեաց եւ եհան զոգի, ասէ, արդարեւ այրս այս որդի աստուծոյ էր։

ճկթ Զ Եւ էին եւ կանայք, որք հայէին 'ի հեռաստանէ, յորս էր մարիամ [մագ]դաղենացի, եւ մարիամ յակոբայ փոքրկի, եւ յովսեայ մայրն, եւ սաղոմէ։ Որք յորժամ էին 'ի գալիլեայ զհետ շրջէին նր, եւ պաշտէին զնա, եւ այլք բազումք կանայք որք ընդ նմա իսկ եկեալ էին յեմ։

ճհ Ա ԽԲ Եւ իբրեւ երեկոյ եղեւ քանզի ուրբաթ էր որ 'ի շաբաթն մտանէր։

Եկեալ յովսէփ որ յարիմաթեայն էր. այր պարկեշտ եւ նախարար,

որ էր

| մր | ղ | յ | մ |
|---|---|---|---|
| ճր | յկգ | · | ճլու |
| ճգ | յկթ | մզ | ճլգ |
| ճդ | յկը | · | ճլդ |
| ճե | յւ | · | ճլզ |

| մր | ղ | յ | մ |
|---|---|---|---|
| ճզ | · | · | ճխե |
| ճհ | յւբ | մզ | ճխւ |

որ եւ ինքն իսկ ակն ունէր
արքայութեանն Աստուծոյ.
համարձակեցաւ եմուտ
առ Պիղատոս, եւ խնդր
եաց զմարմինն յի.
դ է Եւ Պիղատոս զարմա ԽԹ
ցաւ թէ այն չափ վաղ
մեռաւ, եւ կոչեալ առ
ինքն զհարիւրապետն,
եհարց զնա եւ ասէ, թէ
արդարեւ այնչափ վաղ
մեռաւ.
Եւ իբրեւ ստուգեաց
ի հարիւրապետէն անտի,
շնորհեաց զմարմինն Յովսէ
փայ.
Փը Ա Եւ Յովսէփ գնեաց
կտաւ, եւ իջուցեալ զնա
պատեաց կտաւով, եւ
եդ ի գերեզմանի, որ
էր փորեալ ի վիմէ, եւ
թաւալեցոյց զվէմ մի
ի դուռն գերեզմանին.
Փթ Ջ Իսկ Մարիամ Մագդաղե
նացի, եւ Մարիամ Յակո
բայ եւ Յովսեա, տեսին
զտեղին ուր եդաւ.


Եւ իբրեւ էանց
շաբաթն. Մա
րիամ Մագ
դաղենացի,
եւ Մարիամ Յակոբայ եւ
Սողոմէ, չոքան պատրաս
տեցին խունկս, զի եկես
ցեն եւ օծցեն զնա.
մա Ա Եւ ընդ առաւօտս միա
շաբաթուն, գան ի գե
րեզմանն ընդ արեւա
գալն.
Եւ ասէին ցմիմեանս,
ով թաւալեսցէ մեզ
զվէմն ի դրանց գերեզ
մանին.
Եւ հայեցեալ տեսին
զի թաւալեցուցեալ էր
վէմն ի գերեզմանէն,
քանզի էր մեծ յոյժ.
Եւ

| | | | |
|---|---|---|---|
| մր | զ | յ | մ |
| փ | յլփ | մը | յխթ |
| փթ | : | ․ | յծ |

| | | | |
|---|---|---|---|
| մր | զ | յ | մ |
| մլ | յլէ | ․ | ․ |
| մլա | մլզ | մթ | յծշ |



Եւ մտեալ ի ներքս 'ի գերեզմանն տեսին զերիտասարդ մի, զի նստէր ընդ աջմէ կողմանէ, զգեցեալ պատմուճան սպիտակ և զարհուրեցան ։

ՄԼԲ Ա Եւ նա ասէ ցնոսա, մի երկնչիք. զյս̅ խնդրէք զնազովրեցի զխաչեալն, յարեաւ, չէ աստ ահաւադիկ տեղին, ուր եդին զնա ։

Այլ երթայք ասացէք ցաշակերտս նր̅, և ցպետրոս, թէ ահա յառաջագոյն երթայ քան զձեզ 'ի գալիլեա, անդ տեսանիցէք զնա որպէս ասացն ձեզ ։

ՄԼԳ Բ Եւ իբրև լուան. ելին և փախեան 'ի գերեզմանէն, քանզի զահի հարեալ էին, և ոչ ումեք ինչ ասացին զի երկնչէին ։

| Մր | Ղ | Յ | Մ |
|---|---|---|---|
| ՄԼԲ | ՅԼԷ | ՄԾԱ | ՅԾԴ |
| ՄԼԳ | ՅԼԸ | ․ | ՅԾԵ |

Յարուցեալ յս̅ առաւօտուն, առաջին միաշաբաթուն երևեցաւ մարիամու մագդաղենացւոյ, յորմէ հանեալ էր զեօթն դևսն ։

Եւ նա երթեալ պատմեաց այնոցիկ որք ընդ նմայն էին, մինչդեռ լային և սգային ։

Նոքա իբրև լուան թէ կենդանի է, և երևեցաւ նոցա ոչ հաւատացին ։

Յետոյ երևեցաւ այլով կերպարանաւ որք երթային յանդաստան ։

Նոքա չոգան պատմեցին այլոց, և ոչ նոցա հաւատացին ։

Յետոյ մինչդեռ բազմեալ էին մետասանքն ։

Երև



երևեցաւ նմա, և թշնա
մանեաց զանհաւատու
թիւն նոցա և զխստասր
տութիւն, զի որ երևե
ցաւ նոցա յարուցեալ ՚ի
մեռելոց, և ոչ հաւա
տացին :

Եւ ասէ ցնոսա, երթայք
յաշխարհ ամենայն, և
քարոզեցէք զաւետա
րանն արքայութեան ա̃մ
արարածոց : որ հաւա
տասցէ և մկրտեսցի
կեցցէ, և որ ոչն հաւա
տասցէ դատապարտես
ցի : Նշանք այնոցիկ որք
հաւատանն, երթիցեն
զհետ այնոցիկ :

Յանուն իմ դևս հան
ցեն : լեզուս խօսեսցին
նորս :

Ի ձեռս լուցեանց օձս
բարձցեն :

Եւ եթէ զմահացու
ինչ դեղ արբցեն, նոցա
ինչ ոչ մնասեսցէ, ի վե
րայ հիւանդաց ձեռս
դիցեն և բժշկեսցին :

Եւ ինքն տ̃ր յ̃ս յետ
խօսելոյն ընդ նոսա՝ համ
բարձաւ յերկինս, և
նստաւ ընդ աջմէ հօր :

Եւ նոքա ելեալ քարո
զեցին ընդ ա̃մ երկիր,
տեառն գործակցու
թե̃ : և զբանն հաստա
տողին ա̃մ նշանօք որք
երթային զհետ նոցա :

Նախադրութիւն Ղուկասու Աւետարանին .

Աւետարանս որ ըստ Ղուկասու, գրեալ է նոյն ինքն Ղուկաս աշակերտն պետրոսի . որ ձեռնագրեցաւ ընթացակից պօղոսի և վկայեցաւ 'ի նմանէ . սա սկիզբն առնէ 'ի ծննդենէն յովհաննու, և զոր ըստ նմին պատմէ զ մարմնանալ փրկչի, ազգաթիւ առնէ, և ելանէ, 'ի յովսէփայ 'ի դաւիթ, և 'ի դաւթէ մինչև ցադամ . պատմէ սա և զ մկրտութիւն յովհաննու, զ լինիլն տն 'ի երինն, զ փորձիլն 'ի սատանայէ, զ ընտրելն զեօթանասուն աշակերտս, ցուցանելն զ նշանս և զարուեստս բազումս, զխորհուրդ մասնութեան, զ կատարածն, զ մատնիլն քի պիղատոսի պոնտացւոյ, զ խաչիլն մարմնով, զի զինուորքն բաժանեցին զ հանդերձս նորա, և 'ի խաչեցելոց երկուց աւազակացն մինն ապաշխարեաց խոստովանութբ . և զի մարմին նորա եդաւ 'ի գերեզմանի, և յարեաւ յերրորդ աւուր և յետ այնորիկ համբարձաւ 'ի յերկինս երևմամբ հրեշտակաց .

Ղուկաս բժիշկ անտիոքացի, աշակերտ առաքելոյն պօղոսի յետ ժէ . ամաց համբառնալոյ տն, գրեաց զաւետարանն իւր անտիոք քաղաքի, քաղդէական լեզուաւ .

Ցանկ գլխոց Աւետարանին Ղուկասու ։

Յաղագս աշխարհագրին ։
Յաղագս բացօթեայ հովուացն ։
Յաղագս սիմէովնի ։
Յաղագս մարգարէին աննայի ։
Յաղագս լինելոյ բանին այ̄ առ յովհաննէս
Յաղագս որոց հարցանէին զյովհաննէս ։
Յաղագս փորձութ̄ց փրկչին ։
Յաղագս այնր որ ունէր զոգին դիւական
Յաղագս զոքանչին պետրոսի ։
Յաղագս բժշկելոցն 'ի հիւանդութ̄ց
Յաղագս որսոյ ձկանցն ։
Յաղագս բորոտին ։
Յաղագս անդամալուծին ։
Յաղագս ղեւեայ մաքսաւորին ։
Յաղագս գօսացելոյ ձեռին ։
Յաղագս առաքելոցն համարոյ ։
Յաղագս երանութ̄ցն ։
Յաղագս հարիւրապետին ։
Յաղագս որդւոյ այրւոյն ։
Յաղագս որոց առաքեցանն 'ի յովհաննէ ։
Յաղագս օծանելոյ զտ̄րն իւղով ։
Յաղագս առակի սերմանացանին ։
Յաղագս սաստելոյ ջուրցն ։
Յաղագս այնորիկ որ ունէր զլէգէոնն ։

Իդ Յղ̄

| Ղուկ' | Յոհ | | Մթ | Մրկ |
|---|---|---|---|---|
| ա | — | — | — | — |
| բ | — | — | — | — |
| գ | — | — | — | — |
| դ | — | — | — | — |
| ե | — | — | դ | — |
| զ | — | — | — | — |
| է | — | — | — | — |
| ը | — | — | — | — |
| թ | — | — | ը | բ |
| ժ | — | — | ե | գ |
| ժա | — | — | — | — |
| ժբ | — | — | զ | դ |
| ժգ | ե | — | ժգ | ե |
| ժդ | — | — | ժդ | զ |
| ժե | — | — | իա | է |
| ժզ | — | — | ժթ | ը |
| ժէ | — | — | ե | — |
| ժը | — | զ | է | — |
| ժթ | — | — | — | — |
| ի | — | — | ի | — |
| իա | ժբ | | իբ | ժդ |
| իբ | — | — | իգ | թ |
| իգ | — | — | ժա | ժ |
| իդ | — | — | ժը | ժա |

Աւ դստեր ժողովրդապետին •
Աւ տեսանես կնոջն •
Աւ առաքելոյ զերկոտասանսն •
Աւ հնկից հացիցն և երկուց ձկանցն •
Աւ զաշակերտսն հարցանելոյ •
Աւ այլակերպութենն յն •
Աւ լուսնահարին •
Աւ խորհելոյն թէ ով մեծիցէ •
Աւ չտալոյն հրաման զ կնի երթալոյ •
Աւ երևեցուցանելոյ զ եօթանասունսն •
Աւ հարցանելոյ զօրինականն •
Աւ անկելոյն՚ի ձեռս աւազակաց •
Աւ մարիամու և մարթայի •
Աւ յաղօթս կալոյն •
Աւ խուլ դիւին •
Աւ կնոջն որ զ ձայն եբարց ՚ի ժողովդեն
Աւ խնդրելոյն զ նշան
Աւ փարիսեցւոյն որ կոչեաց զ տէրն •
Աւ վայ տալոյն օրինականացն •
Աւ խմորոյ փարիսեցւոցն •
Աւ բաժանելոյ զինչս ընդ եղբօր •
Աւ պատղաբերելոյ անդոյն մեծի •
Աւ գալիլեացւոցն և որոց ՚ի սելովամ
Աւ թզենւոյն անպտղոյ •
Աւ կարկամելոյ կնոջն տասահարի •

| ղուկ | յոհ | մաթ | մարկ |
|---|---|---|---|
| [illegible] | — — | ժե | [illegible] |
| է | — — | — | — |
| իէ | — — | ժբ | իգ |
| իը | ը — | իդ | իդ |
| իթ | — — | լգ | իգ |
| լ | — — | լդ | իե |
| լա | — — | լե | իզ |
| լբ | — — | լզ ժ | իէ |
| լգ | — — | — | — |
| լդ | — — | — | — |
| լե | — — | — | — |
| լզ | — — | — | — |
| լէ | — — | — | — |
| լը լթ | — — | իէ | — |
| խ | — — | — | — |
| խա | — — | — | — |
| խբ | — — | — | — |
| խգ | — — | ծդ | — |
| խդ | — — | լբ | իէ |
| խե | — — | — | — |
| խզ | — — | — | — |
| խէ | — — | — | — |
| խը | — — | — | — |
| խթ | — — | իգ | — |

Աւ

| | Ղւկ | Յոհ | Մթ | Մրկ |
|---|---|---|---|---|
| Ա առակացն հատին մանանխոյ . | ծ | — | — | — |
| Ա թէ սակաւք են որք ապրելոց են . | ծա | — | — | — |
| Ա այնց որք ասացին ցՅս զՀերովդէսէ . | ծբ | — | — | — |
| Ա առն որ ջրգողեալ էր . | ծգ | — | — | — |
| Ա այնոցիկ որք սիրեն զնախագահս . | ծդ | — | ծա | — |
| Ա կոչելոյ յընթրիսն . | ծե | — | — | — |
| Ա շինելոյ աշտարակին . | ծզ | — | լէ | — |
| Ա հարիւրից ոչխարացն . | ծէ | — | — | — |
| Ա անառակի որդւոյն . | ծը | — | — | — |
| Ա անիրաւի տնտեսին . | ծթ | — | — | — |
| Ա մեծատանն և ղազարու . | կ | — | — | — |
| Ա տասանց բորոտիցն . | կա | — | — | — |
| Ա անիրաւի դատաւորին . | կբ | — | — | — |
| Ա փարիսեցւոյն և մաքսաւորին . | կգ | — | խա | թ |
| Ա հարցանելոյ մեծատանն . | կդ | — | խգ | լա |
| Ա կուրին . | կե | — | — | — |
| Ա զաքէոսին . | կզ | — | — | — |
| Ա առն ազնուականին որ գնաց առնուլ իւրն թագաւորութի͞ . | կէ | — | կ | — |
| Ա առնլոյ զտասն մնասն . | կը | ժդ | խե | լզ |
| Ա աւանակին և իշոյն . | կթ | — | խէ | լե |
| Ա հարցանելոյ քահանայապետին . | հ | — | ծ | լզ |
| Ա առակի այգւոյն . | հա | — | ծբ | լե |
| Ա դահեկանին . | հբ | — | ծգ | լը |

Ա տ͞

Ա սադուկեցւոցն ·
Ա այնր թէ ո՞վ է ք՟ս որդի դաւթի ·
Ա երկուց լումայից այրւոյն ·
Ա հարցման կատարածին ·
Ա զատկին ·
Ա վիճելոյն թէ ով մեծ իցէ ·
Ա խնդրելոյն սատանայի փորձել զսիմոն
Ա նախատանացն հերովդեի ·
Ա կոծելոյ կանանցն ·
Ա ապաշխարելոյ աւազակին ·
Ա խնդրելոյ զտ՟րունական մարմինն ·
Ա իւղաբերից կանանցն ·
Ա կղէոպեանցն ·
Ա համբառնալոյ տ՟ն ·

| ղուկ | յոհ | մթ | | մրկ |
|---|---|---|---|---|
| հփ | — | — | ծե | ի |
| հգ | — | — | — | խա |
| հե | — | — | ծէ | խբ |
| հզ | — | — | կգ | խե |
| հէ | — | — | լէ | իէ |
| հը | — | — | — | — |
| հթ | — | — | — | — |
| ձ | — | — | — | — |
| ձա | — | — | — | — |
| ձբ | — | ժը | կը | խը |
| ձգ | — | — | — | — |
| ձդ | — | ի | կթ | խթ |
| ձե | — | — | — | — |
| ձզ | — | — | — | — |





Սրբոյ Աւետարանին
Ըստ Ղուկասու.

# ՔԱՆԶԻ ԲԱԶՈՒՄՔ ՅՕԺԱՐԵՑԱՆ

ա Վերստին կարգել զպատմութիւն վս իրացն հաստատելոց 'ի մեզ։

Որպէս աւանդեցին մեզ որք 'ի սկզբանէ ականատեսք և սպասաւորք եղեն բանին։

Կամ եղև և ինձ, որ 'ի սկզբանէ զհետ երթեալ էի ամենայն

ամենայն ճշմարտութե
կարգաւ գրել քեզ քաջդ
Թէոփիլէ :
Զի ծանիցես զբա
նիցն, որոց աշակեր
տեցար, զճշմարտու
թիւն :
Եւ եղեւ յաւուրս Հե
րովդի արքայ Հրէաստա
նի, քահանայ ոմն ա
նուն զաքարիա ՚ի դա
սակարգէ աբիայ, եւ
կին նորա ՚ի դստերացն
Ահարոնի, եւ անուն
նորա եղիսաբեթ :
Եւ էին արդարք եր
կոքին առաջի Աստու
ծոյ, գնային յամե
նայն պատուիրանս եւ
յիրաւունս Տեառն անա
րատք :
Եւ ոչ գոյր նոցա որ
դեակ, քանզի եղիսա
բեթ ամուլ էր, եւ
երկոքեան անցեալ
էին զաւուրբք իւր
եանց :
Եւ եղեւ ՚ի քահանայա
նալն նորա, ըստ կար
գի աւուրցն հասանելոյ
առաջի Աստուծոյ :
Ըստ օրինի քահանայու
թեն, ել հաս նմա խունկ
արկանել . մտեալ ՚ի տա
ճարն Տեառն :
Եւ ամենայն բազմու
թի ժողովրդեանն կայ
ին յաղօթս՝ արտաքոյ,
՚ի ժամուն խնկոցն :
Եւ երեւեցաւ նմա
հրեշտակ Տեառն, զի
կայր ընդ աջմէ սեղա
նոյ խնկոցն :
Եւ խռովեցաւ զաքա
րիա իբրեւ ետես, եւ
անկաւ ահ ՚ի վերայ նո
րա :
Ասէ ցնա հրեշտակն
Տեառն,

տեառն, մի՛ երկնչիր
Զաքարիա. զի լսելի
եղեն աղօթք քո, և
կին քո Եղիսաբեթ
ծնցի քեզ որդի, և
կոչեսցես զանուն նր̅
Յոհաննէս։

Եւ եղիցի քեզ ուրա
խութի̅ և ցնծութի̅,
և բազումք ՚ի ծննդ
եան նորայ խնդաս
ցեն։

Զի եղիցի մեծ առա
ջի տեառն, և գինի
և օղի մի՛ արբցէ, և
հոգւով սրբով լցցի ան
դստին յորովայնէ մօր
իւրոյ։

Եւ զբազումս յորդ
ւոցն Իղի դարձուսցէ ՚ի
տր̅ ած̅ իւրեանց։

Եւ ինքն եկեսցէ առա
ջի նր̅ հոգւով և զօրու
թբ̅ Եղիայի, դարձու
ԻՐ

ցանել զսիրտս հարց յոր
դիս, և զանհաւանս
յիմաստութիւն արդա
րոց. պատրաստել
տեառն ժողովուրդ
կազմեալ։

Եւ ասէ Զաքարիա
ցհրեշտակն, և ի՞ւ
գիտացից զայդ, զի ես
ծեր եմ, և կին իմ ան
ցեալ զաւուրբք իւ
րովք։

Պատասխանի ետ հրեշ
տակն և ասէ ցնա. Ես
եմ Գաբրիէլ, որ կամ
առաջի աստուծոյ, և
առաքեցայ խօսիլ ընդ
քեզ՝ և աւետարանել
քեզ զայդ։

Եւ ահա եղիցիս համր՝,
և մի՛ կարասցես խօսիլ,
մինչև ցօրն՝ յորում այդ
լինիցի, փոխանակ զի
ոչ հաւատացեր բանից
իմոց

իմոյ որք լցցին 'ի ժա
մանակի իւրեանց ։
Եւ ժողովուրդն ակնու
նէր զաքարիայ , և զար
մանային ընդ յամէլն նո
րա 'ի տաճարին ։
Եւ իբրև ել՝ ոչ կարէր
խօսիլ ընդ նոսա , և
իմացան թէ տեսիլ
ետես 'ի տաճարին , և
նա նշանացի խօսէր ընդ
նոսա , և կայր պապան
ձեալ ։
Եւ եղև իբրև լցան
աւուրք պաշտաման նո
րա , գնաց 'ի տուն
իւր ։
Եւ յետ աւուրցն այնո
ցիկ, յղացաւ եղիսաբեթ
կին նորա , և թաքու
ցանէր զանձն ամիսս
հինգ և ասէր ։
Ո՜ ինչ գործ գործ
եաց ընդ իս Տէր, յաւուրս
յորս հայեցաւ յիս
բառնալ զնախատինս
իմ 'ի մարդկանէ ։
Եւ յամսեանն վեց
երորդի, առա
քեցաւ գաբ
րիէլ հրեշտակ յաստու
ծոյ 'ի քաղաք մի գալի
լեացւոց , որում ա
նուն էր նազարէթ ։
Առ կոյս խօսեցեալ
առն՝ որում անուն էր
յօսէփ՝ 'ի տանէ դաւ
թի , և անուն կուսին
մարիամ ։
Եւ եկեալ առ նա հրեշ
տակն ասէ , ուրախ
լեր բերկրեալդ Տէր ընդ
քեզ ։
Եւ նա ընդ բանն
խռովեցաւ , և խոր
հէր ընդ միտս , թէ
որպիսի ինչ իցէ ողջոյնս
այս ։ Եւ



Եւ ասէ ցնա հրեշտա կն, մի՛ երկնչիր մարիամ, զի գտեր շնորհս յաս տուծոյ : Եւ ահա յղասցիս և ծնցիս որդի, և կոչես ցես զանուն նորա յի : Նա եղիցի մեծ. և որդի բարձրելոյն կո չեսցի. և տացէ նմա տր ած զաթոռն դաւ թի հօր նորայ, և թագա ւորեսցէ ի վր տանն յակոբայ 'ի յաւիտեան : Եւ թագաւորութե նորա վախճան մի՛ լիցի : Եւ ասէ մարիամ ցհրեշ տակն, զիարդ լինիցի ինձ այդ. քանզի զայր ոչ գիտեմ : բ ե Պատասխանի ետ հրեշ տակն և ասէ ցնա. հոգին սուրբ եկեսցէ 'ի քեզ, և զօրութի բարձրելոյն հովանի լի ցի ի վերայ քո, քանզի և որ ծնանելոցն է 'ի քէն սուրբ է, և որդի աս տուծոյ կոչեսցի : Եւ ահա եղիսաբեթ ազգական քո՝ և նա յղի է 'ի ծերութե իւրում. և այս վեցերորդ ամիս է նորա՝ որ ամուլն կոչ եցեալ է : Զի ոչ տկարասցի առ յաստուծոյ ամենայն բան : Եւ ասէ մարիամ՝ ահա աղախին տն, եղիցի ինձ ըստ բանի քում, և գնաց 'ի նր մանէ հրեշտակն : Յարուցեալ մա րիամ յաւուրսն յայնոսիկ, գնաց 'ի լեռնակողմն փու

փութապէս 'ի քաղաքն
յուդայ ։
Եւ եմուտ 'ի տունն
զաքարիայ, և ետ ողջոյն
եղիսաբեթի ։
Եւ եղև իբրև լուաւ
զողջոյնն մարիամու
եղիսաբեթ, խաղաց մա
նուկն յորովայնի նորայ ։
Եւ լցաւ եղիսաբեթ
հոգւով սրբով ։
Եւ 'ի ձայն բարձր
աղաղակեաց և ասէ ։
Օրհնեալ ես դու 'ի
կանայս, և օրհնեալ է
պտուղ որովայնի քոյ ․
Եւ ուստի է ինձ այս, զի
եկեսցէ մայր տեառն
իմոյ առ իս ։
Զի ահաւասիկ իբրև
եղև ձայն ողջունի քոյ
յականջս իմ, խաղաց
ցնծալով մանուկս յորո
վայնի իմում ։

Եւ երանի, որ հաւա
տայցէ եթէ եղիցի կա
տարումն ասացելոց
նմա 'ի տէ ։
Եւ ասէ մարիամ ․ Մե
ծացուսցէ անձն իմ զտ
էր ․ և ցնծացաւ հո
գի իմ ․ յածծ փրկիչ իմ ։
Զի հայեցաւ 'ի խո
նարհութիւն աղախնոյ
իւրոյ ։
Զի ահա յայսմհետէ
երանեսցեն ինձ ամե
նայն ազգք ։
Զի արար ինձ մեծա
մեծս հզօրն, և սուրբ
է անուն նորա ։
Եւ ողորմութի նր յազ
գաց յազգս, երկիւղա
ծաց իւրոց ։
Արար զզօրութի բազ
կաւ իւրով, ցրուեաց
զամբարտաւանս մտօք
սրտից իւրեանց ։
Եւ

Եւ քակեաց զհզօրս յա
թոռոց, եւ բարձրացոյց
զխոնարհս ։

Զքաղցեալս լցոյց բա
րութեամբ, եւ զմեծա
տունս արձակեաց ու
նայնս ։

Պաշտպանեաց Իէլ ծա
ռայի իւրոյ, յիշել զո
ղորմութիւն իւր ։

Որպ խօսեցաւ առ հարս
մեր աբրհամու, եւ
զաւակի նորա յաւի
տեան ։

Եկաց մարիամ առ նմա
իբրեւ ամիսս երիս, եւ
դարձաւ ՚ի տուն իւր ։

Եւ եղիսաբեթի լցան
ժամանակք ծնանելոյ,
եւ ծնաւ զորդին ։

Եւ լուան որք շուրջ
զնովաւն էին, եւ ազգա
տոհմք նորա, զի մեծ
ացոյց տր ողորմութի
իւր ընդ նմա, եւ խըն
դային ընդ նմա ։

Եւ եղեւ յաւուրն ութ
երորդի, եկին թլփա
տել զմանուկն, եւ
կոչէին զնա յանուն հօր
իւրոյ զաքարիայ ։

Պատասխանի ետ մայր
նորա եւ ասէ. ոչ. այլ կո
չեսցի յոհաննէս ։

Եւ ասեն ցնա, քանզի
ոչ ոք է յազգի քում,
որոյ կոչի անուն յոհան
նէս ։

Ակնարկէին հօրն նորայ,
թէ զինչ կամիցի կոչել
զնա ։

Եւ խնդրեաց զտախ
տակ. գրեաց եւ ասէ,
յոհաննէս է անուն դո
րա ։

Եւ զարմացան ամե
նեքին ։

Եւ բացաւ բերան

նորա

նորա վաղվաղակի , և
լեզու նորա , և խօսէր
և օրհնէր զա՟ծ ։
Եւ եղև ահ , ի վերայ
ամենեցուն որք լսէին
զայս , և որք շուրջ
բնակեալք էին զնոքօք ,
և ընդ ա՟մ լեռնակողմն
հրէաստանի պատմէին
ա՟մ բանքս այսոքիկ ։
Եւ եդին ամենեքեան
որք լսէինն ՚ի սիրտս
իւրեանց , և ասէին ։
զինչ լինիցի մանուկս
այս ։
Եւ զաքարիա հայր նո՟ր
լցաւ հոգւով սրբով ,
մարգարէացաւ և ասէ ։
Օրհնեալ տ՟ր ա՟ծ Ի՟լի ։
զի յայցել մեզ ։ և արար
զփրկութիւն ժողովր
դեան իւրոյ ։
Եւ յարոյց զեղջիւր
փրկութեան մեզ ՚ի
տանն դաւթի ծառայի
իւրոյ ։
Որպէս խօսեցաւ բերա
նով սրբոցն , որք յաւի
տենից մարգարէք նո՟ր
էին ։
Փրկութիւն ՚ի թշնա
մեաց մերոց , և ՚ի ձե
ռաց ամենայն ատել
եաց մերոց ։
Առնել ողորմութիւն
ընդ հարս մեր , և յիշել
զուխտն իւր ս՟բ ։ զեր
դումն , զոր երդուաւ
աբրահամու հօր մերում
տալ մեզ ։
Առանց երկիւղի , ՚ի ձե
ռաց թշնամեաց մերոց
փրկելոյ ։ պաշտել զնա
սրբութ՟բ , և արդարու
թ՟բ առաջի նո՟ր ։ զա՟մ
աւուրս կենաց մերոց ։
Եւ դու մանուկ , մար
գարէ բարձրելոյն կոչես
ցիս ։

Ջեր , զի երթիցես առաջի
երեսաց տեառն , պատ
րաստել զճանապարհս
նորա ․

Տալ զգիտութի՟ փրկու
թե՟ ժողովրդեան նորայ ,
'ի թողութի՟ մեղաց
նոցա ։

Վասն գթութեանց
ողորմութե՟ աստուծոյ
մերոյ , որովք այց արար
մեզ արեգակն 'ի բար
ձանց ։

Երևել՝ որոց 'ի խաւարի
և 'ի ստուերս մահու
նստէին ․ ուղղել զոտս
մեր 'ի ճանապարհս խա
ղաղութե՟ ։

Եւ մանուկն աճէր՝ և
զօրանայր հոգւով , և
էր յանապատ՝ մինչև
յօր երևելոյ նորայ
Իլի՟ ։

Բ.

Եւ եղև ընդ
աւուրսն
ընդ այնո
սիկ , ել
հրաման յօգոստոս կայ
սերէ՝ յաշխարհագիր առ
նել ընդ ամենայն տիե
զերս ։

Այս առաջին աշխար
հագիր եղև 'ի դատաւո
րութեան ասորւոց կիւ
րենայ ։

Եւ երթային ամենե
քեան մտանել յաշխար
հագիր յիւրաքանչիւր
քաղաքի ։

Ել և յովսէփ 'ի գալի
լեէ 'ի քաղաքէ նազարե
թէ 'ի հրէաստան , 'ի
քաղաք դաւթի , որ
կոչի բեթղեհէմ՝ վասն
լինելոյ նորայ 'ի տանէ՝
և յազգէ դաւթի ․

մատնել յաշխարհագիրն
Մարիամու հանդերձ,
որ խօսեցեալն էր նմա,
և էր յղի։
Եւ եղև ՚ի հասանելն
նորա անդր, լցան
աւուրք ծնանելոյ նր։
Եւ ծնաւ զորդին իւր
զանդրանիկ, և պատ
եաց ՚ի խանձարուրս, և
եդ զնա ՚ի մսուր. զի
ոչ գոյր նոցա տեղի իջե
ւանի։

Բ. Եւ հովիւք էին
՚ի տեղւոջն
այնմիկ բաց
օթեայք, որք պահէին
զպահպանութիս գիշե
րոյ հօտից իւրեանց։
Եւ հրեշտակ տեառն
երևեցաւ նոցա, և
փառք տեառն ծագե
ցան առ նոսա, և եր



կեան յերկիւղ մեծ։
Եւ ասէ ցնոսա հրեշ
տակն. մի՛ երկնչիք,
զի ահաւասիկ աւետա
րանեմ ձեզ ուրախու
թի մեծ, որ եղիցի
ամենայն ժողովրդեան.
զի ծնաւ ձեզ այսօր
փրկիչ, որ է օծեալ
տր ՚ի քաղաքի Դաւ
թի։
Եւ այս նշանակ ձեզ,
գտանիցէք մանուկ պա
տեալ ՚ի խանձարուրս
և եդեալ ՚ի մսուր։
Եւ յանկարծակի եղև
ընդ հրեշտակին ընդ
այնմիկ բազմութի զօ
րաց երկնաւորաց, որք
օրհնէին զած և ասէ
ին. փառք ՚ի բարձու
նս աստուծոյ, և յեր
կիր խաղաղութիւն, ՚ի
մարդիկ հաճութի։

Եւ եղև իբրև վերա
ցան 'ի նոցանէ հրեշ
տակքն յերկինս, ասեն
ցմիմեանս հովիւքն,
եկայք երթիցուք մինչև
ցԲեթղեհէմ, և տես
ցուք զինչ է բանս
այս որ եղև, զոր տր
եցոյց մեզ.

Եւ եկին փութանա
կի, և գտին զմա
րիամ և զյովսէփ, և
զմանուկն եդեալ 'ի
մսուր.

Եւ ծանեան վս բա
նին որ ասացաւ նոցա
զմանկանէն.

Եւ ամենեքեան որք
լսէին, զարմանային
վասն բանիցն զոր խօսե
ցան ընդ նոսա հովիւ
քն.

Եւ մարիամ զամենայն
զբանս զայսոսիկ պա
հէր, և խորհամուտ լի
նէր 'ի սրտի իւրում.

Եւ դարձան հովիւքն
փառաւոր առնէին՝ և
օրհնէին զած, վասն
ամի զոր լուան, և տե
սին, որպէս պատմեցաւ
նոցա:

Եւ իբրև լցան
աւուրք ու
թն, եկին թլ
փատել զնա. և կոչե
ցաւ անուն նորա յս,
որ կոչեցեալն էր 'ի հրեշ
տակէն, մինչև յղաց
եալ էր զնա յորովայ
նի:

Եւ իբրև լցան
աւուրք սրբու
թեան նորա, ըստ
օրինացն մովսէսի. ածին
զնա յերուսաղէմ յան
դի

դիման առնել տեառն ։
Որպէս և գրեալ է յօր-
էնս տեառն, թէ ամե-
նայն արու որ բանայ
զարգանդ՝ սուրբ տեառն
կոչեսցի ։

Եւ տալ պատարագս
ըստ ասացելոյն յօրէնս
տեառն, զոյգս տատրա-
կաց, կամ երկուս ձա-
գս աղաւնեաց ։

Գ. Եւ ահա այր մի էր
յԵմ, որոյ անուն էր
սիմէոն, և էր այրն
այն արդար և երկիւ-
ղած, և ակնունէր
մխիթարութեն Իղի,
և հոգի սուրբ էր ՚ի
նմա ։

Եւ էր նր հրաման առ-
եալ ՚ի հոգւոյն սրբոյ,
մի՛ տեսանել զմահ՝ մին-
չև տեսցէ զօծեալն տն ։

Եւ եկն հոգւովն ՚ի տա-
ճարն, և իբրև ածին
ծնօղքն զմանուկն յս
առնել նոցա ըստ սովո-
րութե օրինաց իվերայ
նորա ։

Եւ նա առ ընկալաւ
զնա ՚ի գիրկս իւր, և
օրհնեաց զած և ասէ ։
արդ՝ արձակեա զծա-
ռայս քո տր ըստ բանի
քում ՚ի խաղաղութի ։
Զի տեսին աչք իմ.
զփրկութի քո ։
Զոր պատրաստեցեր
առաջի ամ ժողովրդոց ։
Լոյս ՚ի յայտնութի հե-
թանոսաց, և փառք
ժողովրդեան քում Իղի ։
Եւ էին հայր և մայր
նորա զարմացեալք իվե-
րայ բանիցն, որք խօ-
սէին զնմանէ ։
Եւ օրհնեաց զնոսա սի-
մէոն և ասէ ցմարիամ
մայր



մարբ նորա, ահա սա
կայ 'ի գլորումն և 'ի
կանգնումն բազմաց
'ի մէջ Իէլի, և 'ի նշան
հակառակութե։
Եւ ընդ քո իսկ անձն
անցցէ սուր, զի յայտնեսա
ցին 'ի բազմաց սրտից
խորհուրդք։
Դ. Եւ անդ էր աննա մար
գարէ դուստր փանու
էլի, յազգէ ասերայ,
սա ինքն անցեալ էր զաւ
ուրբք բազմօք, կեցեալ
ընդ առն ամս եօթն, 'ի
կուսութէ իւրմէ։
Եւ էր այրի ամաց
ութսուն և չո
րից. որ ոչ մեկնիւր 'ի
տաճարէն, այլ պահօք և
աղօթիւք պաշտէր ըզ
ցայգ և զցերեկ։
Եւ սա 'ի նմին ժամու
յարուցեալ՝ գոհանայր
զտէ, և խօսէր զնմանէ
ընդ ամենեսին, որք ակն
ունէին փրկութեն եէմի։
Եւ իբրև կատարեցին
զամենայն ըստ օրինացն
տն. դարձան անդրէն
'ի գալիլեա, 'ի քաղաքն
իւրեանց նազարէթ։
Եւ մանուկն աճէր և
զօրանայր, լի իմաստու
թբ. և շնորհք աստու
ծոյ էին 'ի վերայ նորա։
Եւ երթային
ծնօղքն նո
րա, ամի ամի
յեէմ, 'ի տօնի
զատկին։
Եւ իբրև եղեն նորա
ամք երկոտասանք, յելա
նելն նոցա յեէմ, ըստ
սովորութե տօնին.
Եւ կատարել զաւուր
սըն, և դառնալն
ան

անդրէն, մնաց յս մանուկն յէմ, եւ ոչ գիտացին ծնօղք նորա. կարծէին զնմանէ թէ ընդ ուղեկիցսն իցէ. եկին իբրեւ աւուր միոյ ճանապարհ, եւ խնդրէին զնա ընդ դրացիսն եւ ընդ ծանօթսն. եւ իբրեւ ոչ գտին, դարձան անդրէն յէմ խնդրել զնա:

Եւ եղեւ յետ երից աւուրց գտին զնա ի տաճարին, զի նստէր ընդ վարդապետսն, լսէր 'ի նոցանէ, եւ հարցանէր զնոսա:

ԺԲ Ա Զարմանային ամենեքեան որք լսէին 'ի նմանէ. ընդ իմաստութիւն եւ ընդ պատասխանիս նորա:

ԺԳ Ժ Եւ իբրեւ տեսին զնա ապանչացան:

Եւ ասէ ցնա մայրն իւր, որդեակ' զինչ գործեցեր դու ընդ մեզ, ահաւասիկ հայրն քո եւ ես' տառապեալք եւ խնդրեաք զքեզ.

Եւ ասէ ցնոսա, զի խնդրէիք զիս, ոչ գիտէիք եթէ 'ի տան հօր իմոյ պարտ է ինձ լինել.

Եւ նոքա ոչ իմացան զբանն, զոր խօսեցաւ ընդ նոսա:

Եւ էջ ընդ նոսա, եւ գնաց 'ի Նազարէթ եւ էր նոցա հնազանդ:

Եւ մայր նորա պահէր զամենայն զբանսն 'ի սրտի իւրում.

Եւ յս զարգանայր իմաստութեամբ, եւ շնորհօք յյ եւ 'ի մարդկանէ.

| | | |
|---|---|---|
| Զ | Մ | Փ |
| Գ | ԿԲ | ԾԲ |
| Ը | Ը | Ը |

Իսկ

Ղ Գ Ա Ի հնգետասան երորդի ամի տէրութեան տիբերեայ կայսեր. 'ի դատաւորութեան հրէաստանի պիղատոսի պոնտացւոյ. և 'ի չորրորդ պետութեան գալիլեացւոց հերովդի, և փիլիպպոսի եղբօր նորա. 'ի չորրորդ պետութեանն իտուրացւոց և տրաքոնացւոց աշխարհին. և 'ի չորրորդ պետութեանն լիւսանեայ աբիլինացւոց. Եւ 'ի քահանայապետութեանն աննայի և կայիափայ, եղև բանն աստուծոյ 'ի վերայ յովհաննու որդւոյ զաքարեայ յանապատի. Եւ եկն յամ կողմն յորդանանու քարոզել մկրտութիւն ապաշխարութեան 'ի թողութիւն մեղաց.

Դ Ա Որպէս և գրեալ է 'ի գիրս պատգամացն եսայեայ մարգարէի. ձայն բարբառոյ յանապատի. պատրաստ արարէք զճանապարհ տեառն, և ուղիղ արարէք զշաւիղս նորա. Ամենայն ձորք լցցին. և ամենայն լերինք և բլուրք խոնարհեսցին, և եղիցին ամ դժուարինք 'ի դիւրինս, և առապարքն 'ի հարթս ճանապարհս. Եւ տեսցէ ամենայն մարմին' զփրկութիւն աստուծոյ.

Բ Ե. Եւ ասէ ցժողովուրդսն ելեալս մկրտել 'ի նմանէ. ծնունդք իժից, ո եցոյց ձեզ փախչել 'ի բարկութենէ որ գալոցն է.

Ղ Ժ Տ
Չ Բ|Ի Ե

Ղ Յ Մ Մ
Ե Ժ Ը Բ
Զ : Դ :

է ։ տարէք այսու-
հետեւ պտուղս արժա-
նիս ապաշխարութեան ,
և մի՛ սկսանիցիք ասել
եթէ ունիմք հայր զԱբ-
րահամ ։ զայս ասեմ
ձեզ , եթէ կարող է
Աստուած ՚ի քարանցս յայսցա-
նէ յարուցանել որդիս
Աբրահամու ։

Բայց ահաւասիկ տա-
պար , առ արմին ծառոց
կայ ։

Ամենայն ծառ որ ոչ
առնէ զպտուղ բարւոք
հատանի և ՚ի հուր ար-
կանի ։

Ժ Ծ Օ Հարցանէին զնա և ժո-
ղովուրդքն և ասէին ։
իսկ արդ զինչ գործես-
ցուք ։

Պատասխանի ետ և
ասէ ցնոսա ։ Որ իցէն
երկու հանդերձք տա-
ցէ զմինն այնմ , որ ոչն
գուցէ , և որ կայցէ
կերակուր նոյնպէս ա-
րասցէ ։

Եկին և մաքսաւորք
մկրտիլ , և ասեն ցնա ,
վարդապետ՝ զինչ գոր-
ծեսցուք ։

Եւ նա ասէ ցնոսա ,
մի ինչ աւելի քան զհրա-
մայեալն ձեզ առնիցէք ։

Հարցանէին զնա և զի-
նուորքն և ասէին , և
մեք զինչ գործեսցուք ։

Ասէ ցնոսա մի՛ զոք խռո-
վեսցէք , և մի՛ զոք զրպար-
տիցէք , շատ լիցին ձեզ
թոշակքն ձեր ։

Մինչ ակն ունէր ժո-
ղովուրդն , և խորհէին
ամենեքեան ՚ի սիրտս
իւրեանց վասն յոհաննու ,
մի թէ նա իցէ քրիստոս ։

Ժ Ա Պատասխանի ետ ամե-
նե

նեցուն և ասէ.
Ես մկրտեմ զձեզ ջրով,
բայց գայ զօրագոյն քան
զիս, որոյ չեմ բաւա
կան բառնալ զկօշիկս,
նա մկրտեսցէ զձեզ՝ հոգ
ւով սրբով, և հրով:
ժա ե Որոյ հեծանոցն ՚ի ձե
ռին իւրում սրբել զկալ
իւր, և ժողովել զցոր
եանն ՚ի շտեմարանս
իւր, և զյարդն այրես
ցէ անշէջ հրով:
ժբ բ Բազում և այլ ինչ մխի
թարութբ աւետարանէր
ժողովրդեանն:
Բայց հերովդէս չորրոր
դապետ յանդիմանեալ
՚ի նմանէ, վասն հերո
դիադայ կնոջ եղբօր իւ
րոյ, և վս ամենայն չար
եացն՝ զոր գործեաց հե
րովդէս. յաւել և զայն
ևս ՚ի վերայ ամենայնի,
Լ

Ղ Մ Մր
ժա. ժբ .
ժբ ճխգ ծԹ

և եդ ՚ի բանտի զյովհան
նէս:
ժգ Ա Եւ եղև ՚ի մկրտել ամ
ժողովրդեանն, և ընդ
յս մկրտելն և կալ յաղօ
թս, բանալ երկնից:
Եւ իջանել հոգւոյն
սրբոյ՝ մարմնաւոր տես
լեամբ, իբրև զաղաւնի
՚ի վերայ նորա:
Եւ գալ ձայն յերկնից
որ ասէր:
Դու ես որդի իմ սիրե
լի ընդ քեզ հաճեցայ.
ժդ գ Եւ ինքն յս էր ամաց
իբրև երեսնից, սկսեալ
որոց ոպ կարծիւր: որ
դի յօսեփայ, որ յակո
բայն, որ հեղիայն,
որ մատաթեայն.
Որ ղևեայն, որ մել
քեայն, որ յաննեայն,
որ յօսեփայն. որ մատա
թեայն. որ ամօսայն, որ
Նաւ.

Ղ Յ Մ Մր
ժգ ժե ժգ ե
ժդ ագե փ .



Նաւումայն, որ եսղ եայն, որ նանգեայն.

Որ մահաթայն, որ մա տաթեայն, որ սեմեայն, որ յովսէքեայն, որ յով դեայն:

Որ յովնանայն, որ րե սայն, որ զօրաբաբելին, որ սաղաթիելին, որ ներեայն.

Որ մելքեայն, որ ադ դեան, որ կոսամայն. որ եղմովդադայն, որ երայն:

Որ յեսուայն, որ եղիա զարայն. որ յորանայն, որ մատաթայն, որ ղեւայն.

Որ սիմոնին, որ յու դային, որ յովսեփայն, որ յովնամայն, որ եղիակի մայն:

Որ մեղէակայն, որ մեննեայն, որ մատ տաթայն, որ նաթանայն որ դաւթին. որ յես սեայն, որ օբեդայն. որ բոոսայն, որ սաղմո նայն, որ նաասոնին.

Որ ամինադաբայն, որ արամայն, որ ադմեայն, որ առնեայն, որ եսրո մայն, որ փարէսին, որ յուդային.

Որ յակոբայն որ իսա հակայն, որ աբրահամու որ թարային, որ նաքո րայն. որ սերուքայն, որ ռագաւայն, որ փա ղեկայն, որ եբերայն, որ սաղային որ կայնա նայն, որ արփաքսադայն, որ սեմայն, որ նոյին, որ ղամեքայն.

Որ մաթուսաղային, որ ենօքայն որ յարեդին, որ մաղաղիէլին, որ կայնանայն. որ ենօ սայն, որ սեթայն, որ

ադա



ադամայն , որ աստու-
ծոյն ։

ԺԵ Բ Եւ Յս՟ լի Հոգւով Սրբով դարձաւ ՚ի Յորդանանէ, և վարիւր Հոգւովն յանապատ . յաւուրս քառասուն փորձեալ ՚ի սատանայէ ։

ԺՂ Եւ ոչ եկեր, և ոչ էարբ յաւուրս յայնոսիկ ։

Եւ ՚ի կատարելն նոցա քաղցեաւ .

Եւ ասէ ցնա սատանայ , եթէ որդի ես Աստուծոյ ասա՛ քարիդ այդմիկ զի հաց լինիցի ։

Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ . գրեալ է , եթէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ , այլ ամ՟ բանիւն Աստուծոյ .

Եւ հանեալ զնա ՚ի լեառն մի բարձր , եցոյց նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի , ՚ի վայրկեան ժամանակի .

Եւ ասէ ցնա սատանայ քեզ տաց զայս ամենայն իշխանութիւն , և զփառս սոցա , զի ինձ տուեալ է և ում կամիմ տամ զսա ։

Արդ՝ դու եթէ անկեալ երկիր պագանիցես առաջի իմ , քեզ եղիցի ամենայնն ։

Պատասխանի ետ նմա Յս՟ և ասէ , գրեալ է , երկիրպագցես տեառն Աստուծոյ քում, և զնա միայն պաշտեսցես .

Եւ էած զնա յեղ՟մ, և կացոյց զնա ՚ի վերայ աշտարակի տաճարին , և ասէ ցնա , եթէ որդի ես

Ղ Մ Մր
ԺԵ ԺԵ Զ
ԺՂ ԺՂ .

ես աստուծոյ, արկ ըզ
քեզ աստի 'ի վայր ։
Զի գրեալ է, եթէ
հրեշտակաց իւրոց պա
տուիրեալ է վն քո՝ պա
հել զքեզ ։
Զի ի վր ձեռաց բարձ
ցեն զքեզ, մի՛ հարցես
զքարի զոտն քո ։
Պատասխանի ետ նմա
յս և ասէ, ասացեալ է ։
Թէ ոչ փորձեսցես զտր
ած քո ։
Եւ կատարեալ զամե
նայն փորձութիւն սա
տանայն, 'ի բաց եկաց
ի նմանէ առ ժամանակ
մի ։

ժէ
Ա Եւ դարձաւ յս
զօրութբ հոգ
ւոյն 'ի գալիլ
եայ, և ել համբաւ
զնմանէ ընդ ամենայն

Հ Մ Մ Փ
ժէ իզ իգ իէ

կողմանս գաւառին ։
Եւ նա ուսուցանէր 'ի
ժողովուրդս նց, փառա
ւորեալ յամենեցունց ։
Եւ եկն 'ի նազարեթ
ուր սնեալ էր, և եմուտ
ըստ սովորութն իւրում
յաւուր շաբաթու 'ի
ժողովուրդն ։
Եւ ետուն նմա գիրս
զեսայեայ մարգարէի,
և յարեաւ ընթեռնուլ
և իբրև եբաց զգիրսն
եգիտ զայն տեղի,
յորում գրեալն էր ։
Հոգի տեառն ի վերայ
իմ, վասն որոյ և էօծ
իսկ զիս, աւետարանել
աղքատաց առաքեաց
զիս ։
Քարոզել գերեաց
զթողութիւն, և կու
րաց տեսանել ։ արձա
կել զվիրաւորս 'ի թո
ղու

Հ
ժը Ջ Ջ Ձ

զութիւն, քարոզել
զտարեկան տեառն ընդ-
ունելի, և զօր հատուց
ման .
Եւ խփեալ զգիրսն՝ ետ
ցպաշտօնեայն և նստ
աւ :
Եւ ամենեցուն որք 'ի
ժողովրդեանն էին՝ աչք
'ի նա հայէին :
Եւ սկսաւ ասել ցնոսա,
այսօր լցան գիրքս այս
յականջս ձեր :
Եւ ամենեքին վկայէին
նմա, և զարմանային
ընդ բանս շնորհաց, որք
ելանէին 'ի բերանոյ
նորայ :
Եւ ասէին, ոչ սա է
որդին յօսէփայ :
Եւ ասէ ցնոսա, ապա
քէն ասիցէք առիս զա
ռակս զայս . բժիշկ
բժշկեա զանձն քո .

որչափ լուաք, զոր արա
րեր 'ի կափառնաում,
արա և աստ 'ի քում
գաւառի .
Եւ ասէ, ամէն ասեմ
ձեզ ; թէ չէ մարգարէ
ընդունելի 'ի քաղաքի
իւրում :
Արդարև ասեմ ձեզ,
զի բազում այրիք էին յա
ւուրս եղիայի 'ի մէջ Իղի,
յորժամ փակեցան եր
կինք զերիս ամ՝ և զվեց
ամիս . և եղև սով մեծ
ընդ ամենայն երկիր .
Եւ ոչ առ մի 'ի նոցանէ
առաքեցաւ եղիա,
բայց միայն 'ի սարեփ
թայ սիդոնացւոց, առ
կին մի այրի .
Եւ բազում բորոտք
էին յԻղի, առ եղիսեիւ
մարգարէիւ, և ոչոք
'ի նոցանէ սրբեցաւ ,
բայց

բայց միայն Նեեմանն
Ասորի ։
Եւ լցան ամենեքին
բարկութեամբ ՚ի ժողովր
դեանն, իբրև լուէին
զայս ։
Եւ յարուցեալ հանին
զնա արտաքոյ քաղաքին,
և ածին զնա մինչև
յարտևուն լերինն, յորոյ
վերայ քաղաքն նոցա
շինեալ էր, գահավէժ
առնել զնա
Եւ նա անցեալ ընդ
մէջ նոցա գնայր ։
ԼԱ Եւ էջ ՚ի Կափառ
նաում, ՚ի քա
ղաքն Գալիլեա
ցւոց, ուսուցանէր զնոսա
՚ի շաբաթուն ։
ԼԲ Եւ զարմանային ընդ
վարդապետութիւն նորա,
զի իշխանութեամբ էր բանն
նորա ։
ԼԳ Եւ էր ՚ի ժողովրդեանն
այր մի, զոր ունէր այս
դիւի պղծոյ. և աղաղա
կեաց ՚ի ձայն մեծ ։
Եւ ասէ Թուլացո՛, զի՞
կայ մեր և քո, Յիսուս Նազով
րեցի, եկիր կորուսանել
զմեզ, գիտեմք զքեզ ով
ես սուրբդ Աստուծոյ ։
Սաստեաց ՚ի նա Յիսուս և
ասէ, պապանձեաց և ել
՚ի դմանէ ։
Զգետնեաց զնա դևն
՚ի միջի անդ. և ել ՚ի
նմանէ, և ինչ ոչ վնա
սեաց նմա ։
ԼԶ Եւ եղեն զարմանալիք
ի վերայ ամենեցուն. խօ
սէին ընդ միմեանս և
ասէին, զինչ է բանս
այս, զի իշխանութեամբ
և զօրութեամբ սաստէ այ
սոց պղծոց, և ելանեն ։
Եւ

ւ ր մբ
իգ . ժբ
լդ կբ ժդ

զ ժ
իե ժզ

Եւ ներթայր հռչակ
զնմանէ ընդ ամենայն
տեղիս շուրջ զգաւառա
ւաւն :
ԻԵղ Բ մն. Եւ յարուցեալ 'ի ժողո
վրդենէ անտի եմուտ 'ի
տուն Սիմոնի . զզոքանչ
Սիմոնի տագնապեալ ջեր
մամբ մեծաւ , և աղա
չեցին զնա վասն նորա .
Եկաց առ նմա . սաս
տեաց ջերմանն և ե
թող զնա :
Եւ վաղվաղակի յար
եաւ, և պաշտէր զնոսա .
Ժ Եւ ընդ արեւմտն մտա
նել ամենեքեան , որոց
էին հիւանդք . 'ի պէս
պէս ցաւս . բերէին
զնս առ նա .
Եւ նա իւրաքանչիւր
ումեք 'ի նոցանէ դնէր
ձեռս և բժշկէր զնս :
'ԻԵ Ղ Ելանէին դեւք 'ի բազ
Մ.

Դ Մ Մ
Իզ ԻԵ ԺԵ
ԻԸ : ԺՂԷ

մաց, աղաղակէին և ա
սէին , եթէ դու ես
որդի աստուծոյ.
Եւ նա սաստէր և ոչ
տայր թոյլ խօսել . զի
գիտէին զնա թէ քրիս
տոս է.
ԻԸ Ն Եւ իբրեւ տիւ բգ
եղեւ , ել և
գնաց յանապատ
տեղի , և ժողովուրդ
քն խնդրէին զնա ,
եկին մինչեւ առ նա և
արգելուին զնա զի մի
գնասցէ 'ի նոցանէ :
Եւ նա ասէ ցնս . և
այլոց քաղաքաց պարտ
է ինձ աւետարանել
զարքայութիւն աստու
ծոյ , զի յայս իսկ առա
քեցայ :
Եւ քարոզէր 'ի ժողո
վուրդսն գալիլեացւոց .
Եւ

Դ Մ
ԻԸ ԺԵ

ԻԲ Ժ Եւ եղեւ 'ի խռնել
զնովաւ ժողովրդեանն,
եւ լսել զբանն աստու-
ծոյ, եւ ինքն կայր առ
ծովակին գեննեսարե-
թայ ։
Եւ ետես երկուս նաւս՝
զի կային առ ծովակին,
եւ ձկնորսքն ելեալք 'ի
նոցանէ լուանային ըզ-
գործիսն ։
Եւ ել նա 'ի մի նաւուցն,
որ էր սիմոնի, եւ աղա
չեաց զնա սակաւիկ մի
տանել 'ի ներքս 'ի ցամա
քէն, նստաւ, եւ ուսու-
ցանէր 'ի նաւէ անտի
զժողովուրդսն ։
Ե Եւ իբրեւ լռեաց 'ի
ԺԼ. խօսիցն . ասէ ցսիմոն.
խաղացո՛ 'ի խորն, եւ ար
կէք զգործիս ձեր յորս.
Պատասխանի ետ սիմոն
եւ ասէ ցնա, վարդա

պետ զամենայն գիշերս
աշխատեցաք՝ եւ ոչինչ
կալաք, բայց վասն քո
բանիդ արկցուք զգոր
ծիսն ։
Եւ այս իբրեւ արարին .
փակեցին 'ի ներքս բազ
մութի ձկանց յոյժ,
մինչեւ պատառէին ուռ-
կանք նոցա ։
Եւ ակն արկէին ուսակ
ցացն 'ի միւս նաւն՝ գալ
օգնել նոցա, եւ եկին ։
Եւ լցին երկոքեան նաւ-
քն, մինչեւ մերձ ընկղմել
նոցա ։
Իբրեւ ետես սիմոն
Ժ պետրոս, անկաւ առ
ծունկսն յի՛ եւ ասէ՛,
իբաց գնա՛ յինէն տ̅ր . զի
այր մեղաւոր եմ ես .
Քանզի ահ պատեաց
զնա, եւ զամենեսին որք
ընդ նմայն էին վասն
որսոյ

ԻԹ. Զ
ԺԹ ՔԸ

որսոյ ձկանցն, զորս ըմբռ-
նեցին ։
Նոյնպէս և զՅակոբոս
և զՅովհաննէս, որք էին
որսակիցք սիմոնի ։
ԻԴ Եւ ասէ ցսիմոն յս, մի՛
երկնչիր, յայսմ հետէ
զմարդիկ որսայցես ՚ի
կեանս ։
Եւ հանեալ զնաւն ՚ի
ցամաք, թողին զամե-
նայն և գնացին զհետ
նորա ։

ԻԵ Ը ժ.բ Ե
ւ եղև ՚ի հա-
սանելն նր ՚ի
մի քաղաքաց, ԲԴ
և ահա այր
մի լի բորոտութբ, իբրև
ետես զյիսուս, ան-
կեալ ՚ի վերայ երեսաց,
աղաչեաց զնա և ասէ.
տէր եթէ կամիս, կարող
ես զիս սրբել ։

Ձգեաց զձեռն իւր,
հասոյց ՚ի նա և ասէ.
կամիմ՝ սրբեաց ։
Եւ վաղվաղակի գնաց
՚ի նմանէ բորոտու-
թիւնն ։
Եւ նա պատուիրեաց
նմա մի՛ ումեք ասել,
այլ թէ, երթ՝ ցոյց զանձն
քո քահանային, և մատո՛
զպատարագ վասն սրբու-
թն քո, որպէս և հրա-
մայեաց մովսէս ՚ի վկայու-
թի նոցա ։
ԻԶ Ա Եւ յորդէր առաւել
բանն զնմանէ, և ժողո-
վէին ժողովուրդք բա-
զումք լսել՝ և բժշկել
՚ի հիւանդութենէ իւր-
եանց ։
ԻԷ Ժ Եւ նա խոյս տայր յանա-
պատ տեղիս, և կայր
յաղօթս ։

Եւ

Զ Մ Մր
ԼԲ ԽԱ Ժ
ԼԳ ԽԴ Թ.Ը

Ղ Յ Մ Փ
ԼԵ ԽՂ ԽԴ ԽԵ
ԼԶ [illegible] ԽԹ ԿԶ

Եւ եղեւ ՚ի բե
միում աւուրց, և ինքն
ուսուցանէր և
ղջ բ փարիսեցիքն, և օրէ
նացն վարդապետք նստէին, որք ժողովեալ
էին յամենայն քաղաքաց գալիլեացւոց, և
հրէաստանի, և եւեմի,
և զօրութի տեառն էր
՚ի բժշկել զնոսա.

ղէ Ա ՃԳ Եւ ահա արք բերէին
մահճօք զայր մի որ էր
անդամալոյծ, և խնդրէին զնա մուծանել
ի ներքս, և դնել առա
ջի նորա.

Եւ իբրեւ ոչ գտանէին, թէ ընդ որ մու
ծանիցեն զնա ի ներքս
վասն ամբոխին, ելին ՚ի
տանիսն և ՚ի ցւոցն կա
խեցին զնա՝ և իջուցին
մահճօքն հանդերձ ի մէջ
առաջի յիսուսի.

Եւ տեսեալ զհաւատ
սն նոցա, ասէ ցնա, այր
դու թողեալ լիցին քեզ
մեղք քո.

Սկսան խորհիլ դպիրքն
և փարիսեցիքն, և ասեն,
Ո՞ է սա, որ խօսի զհայ
հոյութիւնս, ով կարէ
թողուլ զմեղս՝ բայց
միայն ած.

Իբրեւ գիտաց յս զխոր
հուրդս նոցա. պատա
սխանի ետ և ասէ ցնոսա.
զի՞ խորհիք ՚ի սիրտս ձեր.

Զինչ դիւրագոյն է,
ասել՝ թողեալ լիցին
քեզ մեղք քո, եթէ ասել՝
արի՛, և գնա՛.

Այլ զի գիտասջիք թէ
իշխանութի ունի որդի
մարդոյ յերկրի թողուլ
զմե

ղ ժ ճ մ
ղղ · ՃԺԳ ԿԹ
ղէ ղը Զ Ի

զմեղս, ասէ ցանդամա-
լոյծն քեզ ասեմ, արի,
առ զմահճս քո եւ երթ
'ի տուն քո։

ԻԹ Բ
Եւ առ ժամայն յարուց-
եալ առաջի ամենեցուն՝
բարձ զիւրն յորոյ վե-
րայ անկեալ դնիւր,
գնաց 'ի տուն իւր,
եւ փառաւոր առնէր
զԱծ։

Զարմանք կալաւ զա-
մենեսեան, եւ փառա-
ւոր առնէին զԱծ։
Եւ լի եղեն ահիւ եւ ասեն,
թէ տեսաք այսօր նոր
նշան։

ԻԸ Բ
ԽԳ Եւ յետ այնո-
րիկ ել անտի
եւ ետես ըզ
մաքսաւոր մի,
որում անուն էր Ղեւի։
Եւ նստէր 'ի մաքսաւո-

Ղ Մ Մտ
ԻԸ ՀԱ ԻԱ

րութեան, եւ ասէ ցնա-
եկ զկնի իմ։
Եւ թողեալ զամ յարու-
եալ եւ գնաց զկնի նր։
Եւ արար ընդունելու-
թի մեծ նմա Ղեւի 'ի
տան իւրում, եւ էր ժո-
ղովուրդ բազում՝ մաք-
սաւորաց եւ այլոց, որք
էին բազմեալ ընդ
նոսա։
Եւ տրտնջէին փարի-
սեցիքն եւ դպիրքն նոցա
զնմանէ առ աշակերտսն
նորա եւ ասեն, ընդէր
ընդ մաքսաւորս եւ ընդ
մեղաւորս ուտէք եւ
ըմպէք։

ԲՂ
Պատասխանի ետ յս եւ Ի Բ
ասէ ցնոսա, ոչ ինչ են
պիտոյ բժիշկք ողջոց
այլ հիւանդաց։
Եւ ոչ եկի կոչել զար-
դարս, այլ զմեղաւորս
յա

Ղ Մ Մտ
ԻԹ ՀԲ ԻԲ
Ձ ՀԳ ԻԳ

յապաշխարութի։
Եւ նոքա ասեն ցնա, ընդէր աշակերտքն Յովհաննու պահեն ըստէպ, և խնդրուածս առնեն, նոյնպէս և փարիսեցւոցն, և քոյքդ ուտեն և ըմպեն։
Եւ նա ասէ ցնոսա. միթէ կարողէք մանկանց առագաստի, մինչ փեսայն ընդ նոսա իցէ հրաման տալ պահել։
Այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի ՚ի նոցանէ փեսայն, ապայ պահեսցեն յաւուրսն յայնոսիկ։ խա բ
Ասաց և առակ մի առ նոսա, թէ ոչ ոք արկանէ ՚ի նոր հանդերձէ խլերայ ձորձոյ հնացելոյ. ապա թէ ոչ և զնորն պատառէ. ընդ հնոյն չմիաբանի կապերտն՝ որ ՚ի նորոյն։
Եւ ոչոք արկանէ գինի նոր ՚ի տիկս հինս. ապա թէ ոչ պայթուցանէ գինին նոր զտիկսն հինս, ինքն հեղանի, և տիկքն կորնչին. այլ գինի նոր ՚ի տիկս նորս արկանելի է, և երկոքին պահին։
Եւ ոչոք ըմպէ զհինն, և կամիցի զնորն, քանզի ասէր թէ հինն քաղցրագոյն է։

Եւ եղև ՚ի շաբաթու երկրորդում առաջնոյն անցանել նմա ընդ արտորայսն, և աշակերտքն նորա կորզէին հասկ, շփէին ընդ ափ, և ուտէին։ բէ

է Ժ Գ
խա ՃԺԴ ԻԲ

Եւ

Եւ ոմանք ՚ի փարիսեցւոցն ասեն ցնոսա, զինչ գործէք, զոր չէ օրէն ՚ի շաբաթու .

Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ, չիցէ ընթերցեալ ձեր զոր արարն Դաւիթ . յոր ժամ քաղցեաւ ինքն և որք ընդ նմայն էին .

Ո՞րպէս եմուտ նա ՚ի տունն Աստուծոյ, և զհացն առաջաւորութեան եկեր, և ետ այնոցիկ որք ընդ նմայն էին . զոր ոչ էր օրէն ուրեք ուտել՝ բայց միայն քահանայապետացն .

Եւ ասէ ցնոսա, Տէր է որդի մարդոյ և շաբաթու.

իբ կբ Եւ եղև ՚ի միւսում շաբաթուն մտանել ՚ի ժողովուրդն . և ուսուցանել, և էր անդ այր մի որոյ ձեռն աջ գօսացեալ էր .

Եւ սպասէին նմա դպիրքն և փարիսեցիքն, թէ ՚ի շաբաթուն բժշկիցէ, զի գտանիցեն չարախօսութիւն զնմանէ .

Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա, ասէ ցայրն որոյ ձեռն գօսացեալ էր, արի, և անց ՚ի մէջ . Եւ նա յարուցեալ եկաց .

Ասէ ցնոսա Յիսուս հարցից ինչ ձեզ . զինչ արժան է, ՚ի շաբաթու՝ բարի ինչ առնել, եթէ չար գործել, ոգի մի ապրեցուցանել, եթէ կորուսանել .

Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրագին, ասէ ցնա, ձգեա զձեռն քո .

Եւ

ղ ծ փ
ի ճա իօ

Եւ նա ձգեաց, և հաստատեցաւ ձեռն նորա իբրև զմիւսն.

Եւ նոքա լցան յիմարութեամբ, և խօսէին ընդ միմեանս, թէ զինչ առնիցեն յիսուսի.

իգ բ Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ, ել 'ի լեառն կալ յաղօթս, և հանէր զգիշերն 'ի գլուխ յաղօթսն աստուծոյ.

իդ բ ժ.Օ Եւ իբրև այգ եղև, կոչեաց զաշակերտսն իւր, և ընտրեաց 'ի նոցանէ երկոտասանս, զորս և առաքեալս անուանեաց. զսիմոն զոր և պետրոս անուանեաց, և զանդրէաս զեղբայր նորին. և զյակոբոս, և զյովհաննէս, և զփիլիպպոս, և զբարթողիմէոս.

Եւ զմատթէոս, և զթովմաս, և զյակոբոս ալփեայ, և զսիմոն զկոչեցեալն նախանձայոյզ. և զյուդայ յակոբեայ, և զյուդա իսկարիովտացի, որ եղև իսկ մատնիչ. դկ

իե ա Եւ իջեալ նոքօք հանդերձ 'ի տեղի մի տափակ, և ժողով աշակերտացն նորա և բազմութիւն յոյժ ժողովրդեանն, յամենայն հրէաստանէ, և յերուսաղեմէ և յայնմ կողմանէ, և 'ի ծովեզերէն տիւրոսի և սիդոնի.

Որք եկին լսել 'ի նմանէ և բժշկել 'ի հիւանդութեանց իւրեանց, և նեղեալքն յայսոց պղծոց բժշկ

Ղ Մ Մր
իգ ղխթ կզ
իդ ձ լ

Ղ Յ Մ Մր
իե իզ իգ իհ

բժշկեսին ։
Եւ ժողովուրդն խնդ
րէր մերձենալ՝ ի նա,
զի զօրութի՟ բազում
ելանէր ՚ի նմանէ, եւ
բժշկէր զամենեսին ։
իզ Եւ նա ամբարձ զաչս
Ե իւր յաշակերտսն իւր եւ
Մ.Լ. ասէ ։
Երանի է աղքատացդ
հոգւով, զի ձեր է ար
քայութի՟ն աստուծոյ ։
իէ Երանի է, որք քաղց
Ե եալք են այժմ, զի յա
գեսցին ։
իը Երանի որք լան այժմ՝,
Ե զի ծիծաղեսցին ։
իթ Երանի է ձեզ՝ յորժամ
Ե նախատիցեն զձեզ մար
դիկ, եւ յորժամ որոշի
ցեն եւ նախատիցեն ըզ
ձեզ, եւ հանիցեն անուն
չար զձէնջ վ՟ որդւոյ
մարդոյ ։

Ուրախ լերջիք յաւուր
յայնմիկ եւ ցնծասջիք ։
զի ահա վարձք ձեր բա
զում են յերկինս, ըստ
դմին օրինակի առնէին
մարգարէիցն հարքն իւ
եանց ։
Ժ Բայց վայ ձեզ մեծա
տանցդ, զի ընկալայք
զմխիթարութի՟ ձեր ։
Վայ ձեզ որք յագեալք
դէք այժմ, զի քաղցի
ցիք ։ վայ ձեզ որք ծիծա
ղիքդ այժմ, զի սգայցէք
եւ լայցէք ։
Ժա Վայ ձեզ յորժամ բարի
Ժ ասիցեն զձէնջ ամենայն
մարդիկ ։ զի այդպէս
առնէին սուտ մարգա
րէիցն հարք նոցա ։
ԺԲ Այլ ձեզ ասեմ որք
Ե լսէքդ, սիրեցէք զթշ
նամիս ձեր ։ բարի արա
րէք ատելեաց ձերոց ։

Իր

| | |
|---|---|
| Ղ | Մ |
| իզ | իե |
| իէ | իը |
| իը | իզ |
| իթ | Լ |

Օր

| | |
|---|---|
| Ղ | Մ |
| Ժ | ։ |
| Ժա | ։ |
| ԺԲ | Ի |

Օրհնեցէք զանիծիչս
ձեր, աղօթս արարէք
վասն նեղչաց ձերոց:
ԿԲ Որ հարկանէ զծնօտ
Ե քո, մատո նմա եւ զմիւսն.
եւ որ հանէ 'ի քէն զբաճ-
կոն քո՝ մի՛ արգելուր 'ի
նմանէ եւ զշապիկս:
Ամենայն, որ խնդրէ
ոք 'ի քէն, տուր. եւ
զորինչ հանէ ոք 'ի քէն,
մի՛ պահանջեր:
ԿԳ Եւ որպէս կամիք թէ արաս-
Ե ցեն ձեզ մարդիկ, այն-
պէս արասջիք եւ դուք
նոցա:
ԿԴ Եթէ սիրէք դուք զսի-
Ե րելիս ձեր, զինչ շնորհ է
ձեր. զի եւ մեղաւորք սի-
րեն զսիրելիս իւրեանց:
Եւ եթէ բարի առնէք
բարերարաց ձերոց որ
շնորհ է ձեր, զի եւ մե-
ղաւորք զնոյն գործեն.

Եւ եթէ տայք փոխ
այնոցիկ յորոց ակն ունի-
ցիք առնուլ, որ շնորհ է
ձեր. քանզի եւ մեղա-
ւորք մեղաւորաց փոխ
տան, զի առցեն անդ-
րէն զհաւասարն:
Բայց սիրեցէք զթշնա-
միս ձեր. եւ բարի արա-
րէք ատելեաց ձերոց. եւ
տուք փոխ ուստի ոչ ակն
ունիցիք առնուլ. եւ
եղիցին վարձք ձեր բա-
զումք. եւ եղիջիք որդիք
բարձրելոյն, զի նա
քաղցր է իւրոց չարաց,
եւ ապաշնորհաց.
Եղերուք գթածք, որ-
պէս եւ Հայրն ձեր
գթած է.
ԿԷ Մի՛ դատէք, եւ ոչ դա-
Բ տիցիք. մի՛ պարտէք, եւ
ոչ պարտիցիք. արձա-
կեցէք, եւ արձակիցիք.
Տուք,

| Ղ | Մ |
|---|---|
| ԿԲ | ԽԲ |
| ԿԳ | ԽԳ |
| ԿԴ | ԽԱ |

| Ղ | Մ | Մր |
|---|---|---|
| ԿԷ | Ծ | ԽԱ |

Տուք, և տացի ձեզ.
չափ բարւոք թաթա
ղուն, շարժուն, զեղուն
տայցեն 'ի գոգս ձեր,
նովին չափով որով չափ
էք՝ չափեսցի ձեզ:
ծե Ե Ասաց և առակ մի ա
նոցա. մի թէ կարիցէ
կոյր կուրի առաջնոր
դել, ոչ ապաքէն երկո
քին 'ի խորխորատ ան
կանիցին:
ծը Գ Ոչ է աշակերտ լաւ
քան զվարդապետ իւր.
ամենայն կատարեալ
եղիցի իբրև զվարդա
պետ իւր:
ծթ Ե Զի՞ տեսանես զշիւղ
յական եղբօր քո. և 'ի
քում ական զգերանդ
ոչ նշմարես:
Կամ զիարդ կարես ա
սել ցեղբայր քո, եղ
բայր, թող հանից ըզ
շիւղդ յականէ քումմէ, և
դու 'ի քում ական զգե
րանդ ոչ տեսանես:
Կեղծաւոր՝ հան նախ
զգերանդ յականէ քու
մմէ, և ապա հայեսջիր
հանել զշիւղն յականէ
եղբօր քո:
կ Ե Զի ոչ է ծառ բարի,
որ առնէ պտուղ չար. և
ոչ դարձեալ ծառ չար,
որ առնիցէ զպտուղ
բարի.
Զի իւրաքանչիւր
ծառ՝ 'ի պտղոյ իւրմէ
ճանաչի.
կա Ե Զի ոչ եթէ 'ի փշոց
քաղեն թուզ, և ոչ 'ի
մորենւոյ կթեն խաղող.
կբ Ե Այր բարի՝ 'ի բարի
գանձուց սրտի իւրոյ
բղխէ զբարի. և այր
չար 'ի չարէն բղխէ զչար.
քանզի 'ի յաւելուածոյ
սրտին

| Ղ | Մ | Մ |
| --- | --- | --- |
| ծե | | ձեզ |
| ծը | ճլ, ճլթ | Ղ |
| ծթ | . | ծա |

| Ղ | Մ |
| --- | --- |
| կ | ծօ |
| կա | ծէ |
| կբ | ձլե |

սրտին խօսի բերան նո
րա ։
կզ ծ Զի՞ կոչէք զիս տ̃ր տ̃ր՝
եւ զոր ասեմս ոչ առ
նէք ։
կդ ե Ամենայն որ գայ առ իս
եւ լսէ զբանս իմ, եւ առ
նէ զնոսա. ցուցից ձեզ
ում նման է ։
Նման է առն. որ շինի
ցէ տուն. որ փորեաց եւ
խորեաց, եւ եդ զհիմն
ի վերայ վիմի. ի յառնել
հեղեղաց՝ բախեաց գետ
զտունն, եւ ոչ կարաց
շարժել զնա. զի հաստա
տեալ էր հիմն ի վերայ
վիմի ։
Իսկ որ լսէ զբանս իմ եւ
ոչ առնէ. նման է առն՝
որ շինիցէ զտուն ի վերայ
հողոյ առանց հիման,
զոր բախեաց գետ, եւ
վաղվաղակի անկաւ, եւ

եղեւ կործանումն տանն
այնորիկ մեծ ։
կե դ ԺԱ Եւ եղեւ իբրեւ գեր
կատարեաց զա
մենայն զբանս
իւր ՚ի լսելիս
ժողովրդեանն, եմուտ
՚ի կափառնաում ։
Հարիւրապետի ուրու
մն ծառայ, չարաչար հի
ւանդացեալ մերձ էր ՚ի
վախճանել, որ էր նմա
պատուական ։
Եւ իբրեւ լուաւ զյ̃ս,
առաքեաց զծերս հրէ
ից, աղաչէր զնա, զի
եկեսցէ, եւ ապրեցուսցէ
զծառայն նր̃ ։
Եւ նոքա եկեալ առ յ̃ս
աղաչէին զնա ստէպ եւ
ասէին, թէ արժանի է
որում զշնորհս զայս առ
նես. զի սիրէ զազգս
մեր,

մեր, և զժողովրդանոցն
նա շինեաց մեզ.
Եւ յ͞ս գնաց ընդ նոսա,
Իբրև ոչ ինչ կարի հեռի
էր ՚ի տանէն. յղեաց առ
նա հարիւրապետն բա
րեկամս, և ասէ ցնա, տ͞ր՝
կշ մի ինչ աշխատ լինիր, զի
ե չեմ բաւական եթէ
ընդ յարկաւ իմով մտա
նիցես.
Վ͞ս որոյ և ոչ զանձն
կե համարեցայ արժանի առ
ժ քեզ գալոյ, այլ ասա
Ղւ.Թ. բանիւ, և բժշկեսցի
մանուկս իմ.
Զի և ես այր մի եմ՝
կարգեալ ընդ իշխանու
թ͞ե, ունիմ ընդ ինև
զինուորս, և ասեմ սմա
երթ, և երթայ, և այ
լում թէ՝ եկ, և գայ,
և ծառայի իմում թէ
արա զայս, և առնէ.

Եւ իբրև լուաւ զայս
յ͞ս զարմացաւ. դարձաւ
առ ժողովուրդսն որ
զհետ ն͞ր՝ և
ասէ, ամէն ասեմ ձեզ՝
թէ և ոչ յի͞ղի այսչափ
հաւատս գտի.
Եւ դարձան անդրէն
պատգամաւորքն ՚ի տուն,
և գտին զծառայն հի
ւանդ բժշկեալ.
Եւ եղև ՚ի գդ
վաղիւն, եր
թայր ՚ի քա
ղաք մի որում անուն
էր Նային, և երթային
ընդ նմա աշակերտքն
նորա և ժողովուրդք
բազումք.
Իբրև մերձ եղև ՚ի
դուռն քաղաքին, և
ահա ելանէր մեռեալ
մի՝ որդի միամօր մօր իւ
րոյ.

ղ ր
կշ կշ
կե :

րոյ. եւ նա էր այրի, եւ
ժողովուրդ բազում քա
ղաքին էր ընդ նմա.
Իբրեւ ետես զնա տր.
գթացաւ 'ի նա եւ ասէ,
մի՛ լար.
Եւ մատուցեալ 'ի դա
գաղն, եւ որք բարձ
եալն տանէին, զտեղի
առին, եւ ասէ. պատանեակ
դու, քեզ ասեմ. արի՛.
Կանգնեցաւ՝ եւ նստաւ
մեռեալն, եւ սկսաւ
խօսել, եւ ետ զնա ցմայր
իւր.
Եւ ահ կալաւ զամե
նեսին, եւ փառաւոր
առնէին զԱծ, եւ ասէին.
մարգարէ ոմն մեծ յա
րուցեալ է 'ի միջի մե
րում, եւ թէ այց արար
Ած ժողովրդեան իւ
րում 'ի բարութի.
կբ Ժ Եւ ել զրոյցս այս ընդ

ամ Հրէաստան վս նր,
եւ ընդ ամ կողմանս աշ
խարհին.
կա ե ի Եւ պատմեցին յովհան
նու աշակերտքն իւր՝ վս
ամի այսորիկ.
Եւ կոչեաց առ ինքն
երկուս ոմանս յաշակեր
տացն իւրոց յովհաննէս,
առաքեաց առ տր, եւ
ասէ. դու ես, որ գա
լոցն ես. եթէ այլում
ակն կալցուք.
Եւ եկեալ արքն առ
նա ասեն, յովհաննէս մկր
տիչ առաքեաց մեզ
առ քեզ՝ եւ ասէ, դու ես
որ գալոցն ես, թէ այ
լում ակն կալցուք.
Եւ 'ի նմին ժամու բժշկ
եաց զբազումս 'ի հի
ւանդութեց. եւ 'ի հա
րուածոց, եւ յայսոց չա
րաց, եւ կուրաց բազմաց՝
շնորհ

շնորհեաց տեսանել ։
Պատասխանի ետ նոցա
եւ ասէ , երթայք , պատ
մեցէք յովհաննու զոր
տեսէքդ եւ լուայք . զի
կոյրք տեսանեն , կաղք
գնան , բորոտք սրբին , Հ Բ
խուլք լսեն , մեռեալք
յառնեն , աղքատք աւե
տարանեն ։
Եւ երանի իցէ , որ ոչ
գայթագղեսցի յիս ։
Եւ իբրեւ գնացին աշա Հա Ժ
կերտքն յովհաննու . ըս
կսաւ ասել ընդ ժողո
վուրդսն վասն յովհան
նու , զի՞ ելէք յանապատն
տեսանել , զեղէգն շար
ժուն ՚ի հողմոյ ։
Այլ զինչ ելէք տեսա ՀԲ Ժ
նել , զայր ՚ի հանդերձս
փափկութեան զարդա
րեալ , ահաւասիկ որք
՚ի հանդերձս երեւելիս

եւ ՚ի փափկութեն են
յարքունիս են ։
Այլ զինչ ելէք տեսա
նել , զմարգարէ . այո՛ ,
ասեմ ձեզ՝ առաւել եւս
քան զմարգարէ .
Սա է վասն որոյ
գրեալն է , թէ ահա
առաքեմ զհրեշտակ իմ
առաջի քո . որ յարդա
րեսցէ զճանապարհս քո
առաջի քո ։
Ասեմ ձեզ . մեծ
՚ի ծնունդս կանանց
մարգարէ քան զյովհան
նէս ոչ ոք է . բայց փոք
րիկն յարքայութեն աս
տուծոյ՝ մեծ է քան
զնա ։
Եւ ամ ժողովուրդն
իբրեւ լուաւ , եւ մաք
սաւորքն . արդարացու
ցին զած , զի մկրտեցան
՚ի մկրտութին յովհաննու

Իսկ

գ մ մբ
հ ծբ ա
հա ծգ .
հբ . .

Իսկ փարիսեցիքն և օրինականքն, զխորհուրդն աստուծոյ անարգեցին յանձին իւրեանց, զի ոչ մկրտեցան 'ի նմանէ :

հդ ե Որդ' ում նմանեցուցից զմարդիկ ազգիս այսորիկ, և ում իցեն նմանօղք :

Նմանք են մանկտւոյ, որք 'ի հրապարակս նստիցին, կարդայցեն զմիմեանս և ասիցեն, փողս հարաք ձեզ՝ և ոչ կաքաւեցիք, ողբացաք և ոչ լացիք :

Եկն յոհաննէս մկրտիչ, ոչ ուտէր զհաց, և ոչ ըմպէր զգինի, և ասէիք դև գոյ 'ի նմա :

Եկն որդի մարդոյ, ուտէ և ըմպէ, ասէք, ահա այր կերօղ և արբեցօղ · բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց :

Եւ արդարացաւ իմաստութի̃ յորդւոց իւրոց :

հգ Ժ Աղաչէր զնա ոմն 'ի փարիսեցւոցն, զի կերիցէ հաց ընդ նմա :

Եւ մտեալ 'ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ :

Եւ կին մի էր 'ի քաղաքին մեղաւոր, իբրև գիտաց եթէ բազմեալ է 'ի տան փարիսեցւոյն · բերեալ շիշ մի իւղոյ նարդեան ազնուի :

Կայր յետոյ առ ոտս ն̃ր, լայր, և արտասուօքն սկսաւ թանալ զոտս նորա, և հերովք գլխոյ իւրոյ ջնջէր, և համբուրէր զոտս ն̃ր, և օծանէր

Ղ Մ
հդ ԾԷ

Ղ Յ Բ Ժ
հգ ՃԷ ՃՀԶ ՃԿԶ

նէր իւղովն ։
Եւ տեսեալ փարիսե-
ցւոյն որ կոչեացն զնա,
ասէ ընդ միտս իւր, սա
թէ մարգարէ ոք էր ․
ապա գիտէր թէ ով և
որպիսի ոք կին մերձե-
նայ 'ի սա, զի մեղաւոր է ։
Պատասխանի ետ յս̃ և
ասէ, սիմոն, ունիմ ինչ
ասել քեզ ։
Եւ նա ասէ, ասա՛ վարդա-
պետ ։
Եւ ասէ երկու պարտա-
պանք էին ուրումն փո-
խատուի, մինն պար-
տիւր հինկ հարիւր դա-
հեկան, և միւսն յիսուն,
Եւ իբրև ոչ գոյր հա-
տուցանել երկոցունցն՝
շնորհեաց, արդ ասա ով
առաւել սիրեսցէ զնա ։
Ասէ սիմոն, ինձ այսպէս
թուի ․ թէ որում զբա-

զումն շնորհեաց ։
Եւ նա ասէ ցնա, ուղիղ
դատեցեր ։
Եւ դարձեալ 'ի կինն
կողմն, ասէ ցսիմոն,
տեսանես զայս կին ։
Մտի 'ի տուն քո ջուր
ոտից իմոց ոչ ետուր ․ 'իսկ
սա արտասուօք իւրովք
եթաց զոտս իմ, և հե-
րով իւրով ջնջեաց ։
Համբոյր մի դու ոչ
ետուր ինձ, սա աւասիկ
յորմէ հետէ մտեալ եմ,
ոչ դադարեաց 'ի համ-
բուրելոյ զոտս իմ ․ իւղով
զգլուխ իմ ոչ օծեր, սա
իւղով անուշիւ էօծ ․
Վս̃ որոյ ասեմ քեզ,
թողեալ լիցին սմա մեղք
իւր բազում ․ զի յոյժ
սիրեաց ։
Զի որում շատ թո-
ղուցու, շատ սիրէ և

որում սակաւ, սակաւ.
Եւ ասէ ցնա, թողեալ լիցին քեզ մեղք քո.
Եւ սկսան որք բազմեալն էին ընդ նմա. ասել ընդ միտս իւրեանց, ով է սա՝ որ զմեղս թողու.
Եւ նա ասէ ցկինն, հաւատք քո կեցուցին զքեզ. երթ 'ի խաղաղութիւն.

ՀԵ Ժ Եւ եղեւ յետ այնորիկ եւ ինքն շրջէր ընդ քաղաքս եւ ընդ գիւղս, քարոզէր եւ աւետարանէր զարքայութիւնն Աստուծոյ, եւ երկոտասանքն ընդ նմա.
Եւ կանայք ոմանք որք բժշկեալք էին յայսոց չարաց եւ 'ի հիւանդութեանց. Մարիամ որ կոչէր Մագդաղենացի, յորմէ եօթն դեւքն ելեալ էին.
Եւ Յովհաննա, կինն Քուզայ հազարապետին Հերովդի, եւ Շուշան, եւ այլք բազումք, որք պաշտէին զնա յընչից իւրեանց.
ՀԶ Բ ԻԱ Եւ 'ի ժողովել բազմաց ժողովրդոց, եւ ըստ քաղաքաց եկեալ
ԳԵ առ նա ասէ առակաւ.
Ել սերմանացանն սերմանել զսերմանիս իւր, եւ 'ի սերմանելն իւրում էր, որ անկաւ առ ճանապարհաւն, եւ եղեւ կոխան, եւ թռչունք երկնից կերին զնա.
Եւ այլն անկաւ յապառաժի. եւ ընդ բուսանելն չորացաւ. զի
չգոյր

չգոյէ հիւթոյ.
Եւ այլն անկաւ ի մէջ
փշոց, և ընդ նմին բուս
եալ փշոցն հեղձուցին
զնա.
Եւ այլն անկաւ յերկիր
բարի և պարարտ, և
բուսեալ արար զպտուղ
հարիւրապատիկ.
Զայս իբրև խօսեցաւ.
ասէ՝ որ ունիցի ականջս
լսելոյ, լուիցէ.
Հարցանէին զնա աշա
կերտքն, թէ զինչ իցէ
առակն.
Եւ նա ասէ, ձեզ տու
եալ է գիտել զխոր
հուրդս արքայութեան
Աստուծոյ.
ՀԵ Ա Բայց այլոց առակօք,
զի տեսցեն, և մի՛ տես
ցեն, և լուիցեն, և
մի՛ իմասցին.
ՀԶ Բ Բայց առակն այսինչ է.
Սերմն բանն Աստու
ծոյ է.
Եւ որք առ ճանապար
հաւն, այնոքիկ են,
որք լսենն, և ապա
գայ սատանայ և հանէ
զբանն 'ի սրտից նոցա.
զի մի՛ հաւատասցեն և
ապրեսցին.
Եւ որք յապառաժին,
որք յորժամ լսիցեն խն
դութեամբ ընդունին զբ
անն և արմատս ոչ ու
նին, որք առժամանակ
մի հաւատան, և 'ի
ժամանակի փորձութեան
հեռանան.
Իսկ որ ի մէջ փշոցն ան
կաւ. նոքա են, որք
իբրև լսեն զբանն, և
'ի հոգս՝ և 'ի մեծութիւն՝
և 'ի ցանկութիւնս աշ
խարհիս զբաղեալ հեղձ
նուն, և անպտուղ լինին.
Իսկ

Իսկ որ յերկիրն պա
րարտ, որոց բարուոք և
զուարթագին սրտիւ
լուեալ զբանն ընդու
նին, և տան զպտուղ
համբերութբ.

ՂԹ Բ Ոչ ոք լուցանէ զճրագ
և թաքուցանէ ընդ կա
րասեաւ, կամ դնէ ընդ
մահճօք, այլ ՚ի վերայ
աշտանակի դնէ, զի
որք մտանեն, զլոյս տես
ցեն.

Ճ Բ Զի ոչ ինչ ծածուկ որ
ոչ յայտնեսցի, և ոչ գաղտ
նի, որ ոչ ծանիցի, և
եկեսցէ ՚ի յայտ.

ՃԱ Ա Տեսէք այսուհետև
զիարդ լսէքդ. զի որ
ունիցի տացի նմա, և
որ ոչն ունիցի, և զոր
կարծէ՛ն թէ ունիցի՝
բարձցի ՚ի նմանէ.

ՃԲ Բ Եկին առ նա մայրն և
եղբարք իւր և ոչ կարէին
հասանել ՚ի նա վա՛ն բազ
մութեն.

Ազդ եղև նմա և ասեն.
մայր քո և եղբարք քո
կան արտաքոյ, և կամին
զքեզ տեսանել.

Նա ասէ ցնոսա, մայր իմ
և եղբարք իմ սոքա են.
որք զբանն Աստուծոյ
լսեն և առնեն.

ԻԳ ՃԳ Բ Եւ եղև ՚ի մի
ում աւուրց ԻԼ
ինքն ել ՚ի նաւ,
և աշակերտքն նորա.
և ասէ ցնոսա, եկայք
անցցուք յայնկոյս ծո
վակիս.

Եւ գնացին.

Եւ մինչդեռ նաւէին,
՚ի քուն եմուտ, և էջ
մրրիկ հողմոյ ՚ի ծովակն,
և ուռնոյր, և տագնա
պէին. Մա

| Ղ | Մ | Մր |
|---|---|---|
| ՂԹ | ԼԲ | ԼԹ |
| Ճ | ՂԲ | Խ |
| ՃԱ | ՃԼԲ | . |
| ՃԲ | ՃԼ | ԼԵ |

| Ղ | Մ | Մր |
|---|---|---|
| ՃԳ | ԿԹ | ԽԵ |

Մատուցեալ զարթուցին զնա և ասեն. վարդապետ, վարդապետ՝ կորնչիմք աւասիկ ։
Եւ նա յարուցեալ սաստեաց հողմոյն, և խռովութեան ջուրցն, և հանդարտեցան, և եղև խաղաղութիւն. ասէ ցնոսա. ուր են հաւատք ձեր ։
Եւ զահի հարեալ զարմացան. և ասէին ցմիմեանս՝ ով արդեօք իցէ սա, զի և հողմոց և ջրոց զհրաման տայ. և հնազանդին սմա ։
ԻԴ. Եւ նաւեցին իջին յաշխարհն Գերգեսացւոց, որ է յայնկոյս հանդէպ Գալիլեայ ։
Եւ ընդ ելանելն նորա ՚ի ցամաք, պատահեցաւ այր մի ՚ի քաղաքէն յորում էին դևք, և բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ, և ոչ ՚ի տան բնակեալ, այլ ՚ի գերեզմանս ։
Եւ տեսեալ զՅ՜ս, աղաղակեաց և անկաւ առաջի նորա և ասէ մեծաձայն, զի՞ կայ՝ իմ և քո, Յ՜ս որդի Աստուծոյ բարձրելոյն. աղաչեմ զքեզ մի՛ տանջեր զիս ։
Զի հրաման տայր այսոյն պղծոյ՝ ելանել ՚ի մարդոյ անտի, քանզի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, և կապէր ՚ի շղթայս, և պահէր յերկաթս, և խզէր զկապանսն, և վարէր ՚ի դիւէն յանապատս ։
Եհարց ցնա Յ՜ս և ասէ. զինչ անուն է քեզ.
Եւ

Եւ նա ասէ լէգէոն , զի
դևք բազումք մտեալ
էին 'ի նա .

Եւ աղաչէին զնա, զի
մի հրաման տայցէ նոցա
երթալ յանդունդս .

Եւ էր անդ երա՛ակ մի՛
խոզից բազմաց, արօտա
կան 'ի լերինն , և աղա
չեցին զնա՝ զի հրաման
տայցէ նոցա մտանել 'ի
նոսա , և հրամայեաց
նոցա .

Եւ ելեալ դևքն յառ
նէն մտին 'ի խոզեանն ,
և դիմեաց երամակն 'ի
դարէ անտի 'ի ծովակն ,
և հեղձաւ .

Իբրև տեսին խոզա
րածքն զիրսն , որք եղեն
փախեան . և պատմե
ցին 'ի քաղաքին և յագա
րակսն .

Եւ իբրև ելին տեսա
նել զգործսն , և եկին
առ Յս . և գտին զայրն ,
ուստի դևքն ելեալ էին ,
զգեցեալ և զգաստա
ցեալ նստէր առ ոտսն Յի
և երկեան .

Պատմեցին նոցա որոց
տեսեալն էր , թէ զի
արդ փրկեցաւ դիւա
հարն :

Եւ աղաչէր զնա ամե
նայն բազմութիւն շուրջ
զկողմամբքն Գերգեսաց
ւոց , գնալ 'ի սահմա
նաց նոցա , քանզի ահիւ
մեծաւ տագնապէին .

ձգ Եւ նա մտեալ 'ի նաւ
ն դարձաւ անդրէն :

Աղաչէր զնա այրն .
ուստի դևքն ելեալ էին՝
շրջել ընդ նմա :

Արձակեաց զնա և ասէ :
Դարձ 'ի տուն քո , և
պատմեա , զոր միանգամ
արար

ձգ եը

արար քեզ ած ։
Գնաց ի քաղաքն եւ քարոզէր , զոր ինչ արար նմա յս ։

ձե Եւ իբրեւ դարձաւ անդրէն յիսուս , ընկալաւ զնա ժողովուրդն , քանզի ամենեքեան ակն ունէին նմա ։

ԽԱ Եւ ահա եկն այր մի , որոյ անունն էր յայրոս , եւ նա էր իշխան ժողովրդեանն . անկեալ առ ոտսն յի , աղաչէր զնա մտանել ’ի տուն նորա ։
Զի դուստր միամօր էր նորա , ամաց երկոտասանից , եւ էր մերձ ’ի մահ ։
Եւ ընդ երթալն նորա ժողովուրդքն նեղէին զնա ։

ԽԳ Եւ կին մի էր ’ի տեռատեսութեան արեան , յամաց երկոտասանից , որ ’ի բժիշկս ծախեալ էր զամ ինչս իւր , որում ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկել ։
Մատուցեալ յետոյ մերձեցաւ ’ի դրօշակս հանդերձի նորայ , եւ նոյն ժամայն եկաց բղխումն արեան նորայ ։
Եւ ասէ յս . ով է որ մերձեցաւն յիս ։
Իբրեւ ամենեքեան ուրանային , ասէ պետրոս եւ որք ընդ նմա էին . վարդապետ . ժողովուրդք պնդեն եւ նեղեն զքեզ ։
Եւ ասէ յիսուս ոմն մերձեցաւ յիս , քանզի գիտացի եթէ զօրութիւն ել յինէն ։
Իբրեւ ետես կինն եթէ ոչ ծածկեցաւ ’ի նմանէ
եկն

ձն մհ մյթ

եկն դողալով և անկաւ
առաջի նորա. Թէ վասն
որոյ իրաց մերձեցաւ 'ի
նա, պատմեաց առա
ջի ամենայն ժողովր
դեանն, և թէ որպէս
բժշկեցաւ առժամայն.
Եւ ասէ քաջալերեա՛ց
դուստր. հաւատք քո
կեցուցին զքեզ՝ երթ 'ի
խաղաղութիւն
Եւ մինչ դեռ նա խօ
սէր, գայ ոմն 'ի տանէ
ժողովրդապետին, և ա
սէ ցնա. մեռաւ դուստ
րըն քո. մի՛ ինչ աշխատ
առներ զդա
Իսկ յիսուս իբրև լու
աւ՝ պատասխանի ետ
նմա և ասէ, մի՛ երկն
չիր, միայն հաւատա՛
և կեցցէ.
Եւ մտեալ 'ի տունն ոչ
զոք եթող մտանել, բայց
միայն զպետրոս, և զյա
կոբոս, և յոհաննէս,
և զհայր մանկանն և
զմայր նորա.
Լային ամենեքեան և
կոծէին զնա.
Եւ նա ասէ. մի՛ լայք.
զի չէ մեռեալ այլ ննջէ.
Եւ նոքա ծաղր առնէ
ին զնա, զի գիտէին թէ
մեռաւ.
Եւ նորա հանեալ զա
մենեսին յարտաքս.
Կալաւ զձեռանէ նորա,
բարբառեցաւ և ասէ,
արի կաց մանուկ դու.
Եւ դարձաւ ոգի նորա
և կանգնեցաւ վաղվա
ղակի, և հրամայեաց
տալ նմա ուտել.
Եւ զարմացան ծնողքն
նորա, և նա պատուի
րէր մի՛ ումեք ասել որ
ինչ եղեն.
Եւ

ձգ Ը Թ Եւ կոչեաց զեր կո
տասան առա
քեալսն, եւ նո
ցա զզօրութիւն եւ
զիշխանութիւն ի վերայ ձթ
ամենայն դիւաց, եւ Ն
բժշկել զհիւանդու
թիւնս։
Եւ առաքեաց զնոսա քա Բ
րոզել զարքայութիւն ած
ոյ, եւ բժշկել
զախտաժետս։
ձէ Եւ ասէ ցնոսա, մի ինչ
Բ բառնայք 'ի ճանապար
հի, մի գաւազան, եւ
մի մախաղ, մի հաց.
եւ մի արծաթ, եւ մի
երկուս հանդերձս ու
նիցիք։
Եւ յոր տուն մտանի
ցէք՝ անդ ագջիք, եւ ան
տի գնայցէք։
ձը Եւ որք ոչ ընդունիցին
Բ զձեզ, յորժամ ելանի
ցէք 'ի քաղաքէն յայն
մանէ, զփոշի ոտից ձե
րոց թօթափեսջիք 'ի
վկայութիւն նոցա։
Եւ ելեալ շրջէին ընդ
քաղաքս եւ ընդ գիւղս,
աւետարանէին եւ բժշ
կէին ընդ ամ տեղիս։
Է Լուաւ Հերովդէս չոր
Բ րորդապետ, զգործսն ամ.
եւ զարմանայր վասն ասե
լոյն յոմանց։
Եթէ Յովհաննէս յար
եաւ 'ի մեռելոց, եւ յո
մանց թէ Եղիա յայտնե
ցաւ, եւ յայլոց եթէ
մարգարէ ոմն յառաջ
նոցն յարեաւ։
Ասէ Հերովդէս զՅովհան
նէս ես գլխատեցի,
իսկ սա ով իցէ զորմէ
զայսպիսի իրս լսեմ։
Եւ խնդրէր տեսա
նել

| | | |
|---|---|---|
| Ղ | Մ | Մր |
| ձգ | ՀԹ | ԻԹ |
| ձե | ԽԲ | ԻԳ |
| ձը | ձե | ԾԵ |

| | | |
|---|---|---|
| Ղ | Մ | Մր |
| ձթ | . | ԾԳ |
| Է | ՁԽԴ | ԾԵ |

նել զնա .
ղ Դարձան առաքեալքն, և պատմեցին նմա զամ զոր արարին .
ղա Եւ առեալ զնս խոյս ետ առանձինն ՚ի տեղի անապատ քաղաքի միոյ, որում անուն էր բեթսայիդա.
Եւ ժողովուրդքն իբրև գիտացին, գնացին զհետ նր, և ընկալեալ զնս խօսէր ընդ նոսա վս արքայութեանն այ, և որոց պէտք էին բժշկութե բժշկէր .
ղբ
ԻԲ Եւ օրն սկսաւ տարաժամել, մատեան երկոտասանքն և ասեն ցնա, արձակեա զժողովուրդդ զի երթեալ շուրջ ՚ի գիւղն և յագարակս հանգիցեն, և գտցեն կերակուր, զի աստ յանապատի տեղւոջ եմք .
Ասէ ցնս, դուք տուք դոցա ուտել .
Եւ նոքա ասեն, ոչ գոյ մեր աւելի քան զհինգ նկանակս, և զերկուս ձկունս . բայց եթէ երթիցուք գնեսցուք բաւական ժողովրդեանդ կերակուր . քան զի էին արք իբրև հինգ հազարք .
Ասէ ցաշակերտսն, բազմեցուցէք զդոսա դասս դասս, յիսուն յիսուն .
Եւ արարին այնպէս, և բազմեցուցին զամենեսեան .
Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն, հայեցաւ յերկինս, օրհնեաց և եբեկ, և տայր ցաշակերտսն առ կանել ժողովրդեանն .
Կե

| | | | |
|---|---|---|---|
| Ղ | Մ | Մ | Յ |
| ղա | . | . | կա |
| ղբ | խե | ճխզ | կդ |
| ղգ | խզ | ճխա | կե |

Կերան և յագեցան ամե-
նեքեան, և բարձին
զնշխարս կոտորոցն եր-
կոտասան սակառի.

ԺԸ Եւ եղև ի կալն նորա յա-
ղօթս առանձինն, էին
ընդ նմա և աշակերտքն
նորա.
Եհարց զնոսա և ասէ, զո՞
ոք ասեն զինէն ժողո-
վուրդքն՝ թէ իցեմ.
Եւ նոքա պատասխանի
տուեալ ասեն, զՅովհան-
նէս մկրտիչ, և այլք
զԵղիա, իսկ այլք թէ
մարգարէ ոմն յառաջ-
նոցն յարեաւ. ասէ ցնոսա,
դուք զո՞վ ոք ասէք զի-
նէն թէ իցեմ. պատաս-
խանի ետ Պետրոս և
ասէ, զՔրիստոս Աստուծոյ.

ԻԱ Նա սաստեաց ի նոսա,
և պատուիրեաց, մի՛
ումեք ասել զայն,
Եւ ասէր թէ պարտ է
որդւոյ մարդոյ բազում
ԻԲ չարչարել, և անարգել
ի քահանայապետից և
ի ծերոց՝ և ի դպրաց,
և սպանանել, և յերիր
աւուր յառնել.
ԻԳ Եւ ասէր առ ամենե-
սին. եթէ ոք կամի
զկնի իմ գալ. ուրասցի
զանձն և առցէ զխաչ
իւր հանապազ, և եկեսցէ
զհետ իմ.
Զի որ կամիցի զանձն
իւր կեցուցանել կորուս-
ցէ զնա, և որ կորուսցէ
զանձն իւր վասն իմ,
կեցուսցէ զնա.
Զինչ օգուտ է մար-
դոյ եթէ զաշխարհս շա-
հեսցի, և զանձն իւր
կոր

կուսցէ, կամ ասու-
ժեսցէ։
ԻԶ Ո՛վ որ ամօթ համար-
եսցի զիս և զբանս իմ.
զնա և որդի մարդոյ յա-
մօթ արասցէ, յորժամ
գայցէ փառօք իւրովք,
և հօր՝ և հրեշտակաց
սրբոց։
ԻԷ Բայց արդարև ասեմ
ձեզ. եթէ են ոմանք ՚ի
դոցանէ, որք այդր
կան. որք մի՛ ճաշա-
կեսցեն զմահ, մինչև
տեսցեն զարքայութիւնն
աստուծոյ։
Եւ եղև յետ այսց բա-
նից իբրև աւուրք ութ.
առեալ զպետրոս, և
զյակոբոս, և զյովհաննէս,
ել ՚ի լեառն կալ յաղ-
օթս։
Եւ ՚ի կալ նմա յաղօթս.
եղև տեսիլ երեսաց նո-
րա այլակերպ, և փո-
խեցաւ հանդերձ նր,
և եղև սպիտակ փայ-
լուն. և ահա արք եր-
կու՝ խօսէին ընդ նմա,
որք էին մովսէս և եղիա.
երևեալ փառօք, և
ասէին զելսն նր, զոր
կատարելոց էր յեմ.
Իսկ պետրոս և որք ընդ
նմայն էին՝ ծանրաց-
եալք ՚ի քնոյ, զարթեան
և տեսին զփառսն նր
և զերկուս արսն, որք
կային առ նմա։
Եւ եղև ՚ի մեկնելն նո-
ցա ՚ի նմանէ, ասէ պետ-
րոս ցյս, վարդապետ՝
բարւոք է մեզ աստ լի-
նել, և արասցուք երիս
տաղաւարս, մի քեզ, և
մի մովսեսի, և մի եղի-
այի, և ոչ գիտէր զինչ
խօսէր։
Եւ

Ղ Մ Մր
ՂԵ ՃԴ ՁԱ
ՂԶ ԾՀԳ ՁԲ



Եւ մինչ զայս ասաց · եկին ամպ եւ հովանի եղեւ ի վերայ նոցա · եւ երկեան ՚ի մտանելն նոցա ընդ ամպովն ·

Ձայն եղեւ յամպոյն եւ ասէ · դա է որդի իմ ընտրեալ · դմա լուարուք ·

Եւ ընդ լինել բարբառոյն գտաւ յս միայն, եւ նոքա լռեցին · եւ ոչ ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ եւ ոչ ինչ յորոց տեսինն ·

ԼԸ Բ Եւ եղեւ ՚ի վաղիւն, մինչ իջանէին նոքա ՚ի լեռնէ անտի, ընդ առաջ եղեւ նմա ժողովուրդ բազում ·

Եւ ահա այր մի ՚ի ժողովրդենէ անտի աղաղակեաց եւ ասէ · վարդապետ, աղաչեմ զքեզ, հայեաց յորդի իմ, զի միամօր է ինձ ·

Եւ ահա այս հարկանէ ՚ի նմա, եւ յանկարծ գոչէ եւ զարկուցանէ՝ եւ թաւալեցուցանէ զնա՝ եւ փրփրեցուցանէ, եւ հազիւ մեկնի ՚ի նմանէ խորտակեալ զնա ·

Եւ աղաչեցի զաշակերտսըն քո զի հանցեն զնա, եւ ոչ կարացին ·

Պատասխանի ետ յս եւ ասէ · ով ազգ անհաւատ եւ թիւր · մինչեւ յերբ եղէց ընդ ձեզ · եւ անսացցեմ ձեզ · մատո այսր զորդին քո ·

Եւ մինչ դեռ մատչէր, զարկոյց զնա դեւն եւ շարժլեաց ·

Սաստեաց յիսուս այսոյն

սոյն պղծոյ , եւ բժշ
կեաց զմանուկն . եւ ետ
զնա ցհայր իւր .
ղգ Բ Ու զարմանային ամե
նեքեան իւերայ մեծա
մեծացն աստուծոյ ։
ղդ Բ Ու ՚ի զարմանալ ամե
նեցուն իւերայ ամի զոր
առնէր , ասէ ցաշակերտ
սն իւր , դիք դուք ՚ի լսե
լիս ձեր զբանս զայսոսիկ ,
զի որդի մարդոյ մատնե
լոց է ՚ի ձեռս մարդկան .
Ու նոքա ոչ գիտէին
զբանն , եւ էր ծած
կեալ ՚ի նոցանէ զի մի՛
գիտասցեն , եւ երկնչէին
հարցանել զնա վս բա
նին այնորիկ .
ղե Բ ԿԲ Եմուտ խորհուրդ ՚ի
նոսա թէ ով արդեօք
մեծ իցէ ՚ի նոցանէ ։
Յս իբրեւ ծանեաւ
զխորհուրդս սրտից նո
ցա . էառ զմանուկ մի ,
եւ կացոյց իմէջ նոցա առ
իւր , եւ ասէ ցնս . որ՛ք
ընկալցի զմանուկս զայս
յանուն իմ , զիս ընդու
նի , եւ որ զիս ընդու
նիցի , ընդունի զառա
քիչն իմ . զի որ փոք
րիկն է յամենեսին ՚ի
ձեզ , նա եղիցի մեծ .
ղզ Ե Պատասխանի ետ յո
հաննէս եւ ասէ , վար
դապետ՝ տեսաք զոմն ,
որ յանուն քո դեւս հա
նէր եւ արգելաք զնա .
զի ոչ շրջի ընդ մեզ ։
Ասէ ցնս յիսուս , մի՛
արգելուք , զի որ ոչն
է ձեր թշնամի , ՚ի ձեր
կողմն է .
ղէ Ժ Եւ եղեւ ՚ի կա
տարել աւուրց
վերանալոյ նո
րա

Գ Յ Մ
Ղ . Հե
Ղա ՃՀԶ ՃԹ
Ղբ ՃՀԲ ԶՃ

Գ Ճ
Ղե Ժ
Ղէ

րայ, և ինքն զերեսս հաստատեաց երթալ յեէմ ։

ԾԵ Ե Ի
Եւ առաքեաց հրեշտակս առաջի երեսաց իւրոց, և իբրև չոգան մտին ՚ի գիւղ մի սամարացւոց, պատրաստել ինչ նմա ։

Եւ ոչ ընկալան զնա, զի դէմ եդեալ էր նր երթալ յեէմ ։

Իբրև տեսին աշակերտքն, յակոբոս, և յովհաննէս ․ ասեն ․ տէր կամիս, զի ասասցուք, և իջցէ հուր յերկնից և սատակեսցէ զնս ․

Դարձաւ սաստեաց ՚ի նոսա և ասէ, ոչ գիտէք որո՛յ հոգւոյ էք դուք ․

Զի որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան կորուսանել, այլ կեցուցանել ․ ԾԶ Ժ

Եւ գնացին յայլ գիւղ ․

ԾԵ
Եւ մինչ դեռ երթային նոքա ՚ի ճանապարհին, ասէ ոմն ցնա, եկից և ես զկնի քո, յոր վայր և երթիցես ․

Ասէ ցնա յս, աղուեսուց որջք գոն, և թռչնոց երկնից դադարք, և որդւոյ մարդոյ ոչ գոյ, ուր դիցէ զգլուխ ․

Ասէ ցմիւս ևս, եկ զկնի իմ, և նա ասէ ․ տէ՛ր հրաման տուր ինձ, երթալ նախ թաղել զհայր իմ ․

Ասէ ցնա յիսուս ․ թող զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց, և դու երթ, և պատմեա զարքայութիւն աստուծոյ ․

Ասէ և այլոմն, եկից զկնի

Լ ԾԵ ԾԶ   Ժ ԿԵ ։

զհնի քո տր, բայց նախ
հրաման տուր ինձ հրա
ժարել ՚ի տանէ իմէ.
Ասէ ցնա յս, ոչոք որ
կանէ զձեռն զմաճով և
հայեցի յետս, եթէ
աջողեալ իցէ արքայու
թ՟ին աստուծոյ.

ձը
ժ
ԼԳ Յետ այսորիկ գդ
երևեցոյց տր
և այլս եօթա
նասուն և երկուս, և
առաքեաց զնս երկուս՝
երկուս՝ առաջի իւրոյ յիմ
քաղաքս և ՚ի տեղիս, ուր
ինքն երթալոց էր.
Եւ ասէ ցնս.
ձը ե Հունձք բազում են
և մշակք սակաւք, աղ
ձը ե աղաչեցէք զտր հնձոց,
զի հանցէ մշակս ՚ի
հունձս իւր.
ձա ե Երթայք, ահա առա

Լե

ճձ բ քեմ զձեզ իբրև զգա
ռինս ՚ի մէջ գայլոց.
Մի՛ բառնայք զքսակ,
և մի՛ մախաղ, մի՛ կօ
շիկս, և ՚ի ճանապարհի
ումեք ողջոյն մի՛ տայ
ցէք.
ճձա ե Յոր տուն մտանիցէք,
նախ ասասջիք թէ ող
ջոյն տանս այսմիկ.
Եթէ իցէ անդ որդի
ողջունի, հանգիցէ ող
ջոյնն ձեր ի վր նր. ապա
թէ ոչ ՚ի ձեզ դարձի.
ճիբ գ Եւ ՚ի նմին տան ագա
նիջիք, ուտիջիք և ըմպի
ջիք ՚ի նոցանէ, զի ար
ժանի է մշակն վարձու
իւրոյ.
Մի փոխիցիք ՚ի տանէ
՚ի տուն.
ճձգ ժ Յոր քաղաք մտանիցէք
և ընդունիցին զձեզ, ու
տիջիք զինչ առաջի դնի
ցեն ձեր. Եւ

է ժ
ձե .
ձը հը
ձա ձջ

ջ մ րբ
ճձ ձշ եգ
ճձա ձգ .
ճիբ ձգ ձե
ճձգ . .

Եւ բժշկեցէ՛ք որք 'ի
նմա հիւանդք իցեն ,
եւ ասասջի՛ք նոցա , մերձ
եալ է ի վ՛ր ձեր ար
քայութիւնն աստու
ծոյ .

ճժդ բ Իսկ յոր քաղաք մտանի
ցէք , եւ ոչ ընդունիցի՛ն
զձեզ . ի բրեւ ելանիցէք
'ի հրապարակս նո՛ր .
Ասասջի՛ք՝ եւ զփոշիս որ
կառուցեալ է ի քաղաքէ
ձերմէ յոտս մեր՝ թօթա
փեսցուք 'ի ձեզ , բայց
զայս գիտասջի՛ք զի մեր
ձեալ է արքայութիւնն ճ'զ Ա
աստուծոյ .
Ասեմ ձեզ , զի սոդո
մացւոց ընդ արձակա
գոյն լիցի յաւուրն յայն
միկ , քան քաղաքին այն
միկ .

ճժե ե Վա՛յ քեզ քորազին , ճժէ
վա՛յ քեզ բեթսայիդա . ժ

զի եթէ 'ի տիւրոս , եւ
'ի սիդոն եղեալ էին զօ
րութիւնքն որք եղեն 'ի
ձեզ , վաղուց եւս ար
դեօք 'ի խորգ եւ 'ի մո
խիր նստեալք ապաշխա
րեալ էին .
Բայց տիւրոսի , եւ սի
դոնի ընդ արձակագոյն
լիցի 'ի դատաստանի քան
ձեզ .
Եւ դու կափառնաու
ում , որ մինչեւ յերկինս
բարձրացեալ ես . մինչեւ
'ի դժոխս իջցես .
Որ ձեզ լսէ , ինձ լսէ ,
եւ որ զձեզ անարգէ ,
զիս անարգէ , եւ որ զիս
անարգէ զառաքիչն իմ
անարգէ , եւ որ ինձ
լսէ , լսէ այն մի՛ որ զ
առաքեացն զիս .
Դարձան եօթանա
սուն եւ երկուքն խնդու
թե՛

Հ Մ Մր
ճժդ ձե ծե
ճժե ձղ .

Հ Յ Մ Մր
ճժզ խճժա շք շզ
ճժէ . . .

թէ և ասեն. տէր և դևք հնազանդին մեզ յանուն քո:

ԺԸ Նա ասէ ցնս, տեսանէի զսատանայ անկեալ յերկնից իբրև զփայլակն:

Ահա ետու ձեզ զիշխանութի կոխել զօձս և զկարիճս, և զամ զօրութն թշնամւոյն. և ձեզ ոչ ինչ մեղանչիցեն.

Բայց ընդ այն մի՛ խնդայք եթէ այսք հնազանդին ձեզ, այլ խնդացէք, զի անուանք ձեր գրեալ են յերկինս.

ԻԱ Ե Ի նմին ժամու ցնծացաւ յՈ՛ Հոգւովն սրբով և ասէ. գոհանամ զ. էն Հայր, տէր երկնից և երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և 'ի գիտնոց և յայտնեցեր զայս տղայոց, այո Հայր, զի այսպէս հաճոյ եղև առաջի քո.

ԻԲ Կ Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի Հօրէ իմմէ, և ո՛ չոք գիտէ ով է որդի, եթէ ոչ Հայր, և ո՛ է Հայր՝ եթէ ոչ որդի, և ում կամիցի որդին յայտնել.

ԻԳ Ե Եւ դարձեալ առանձինն առ աշակերտսն ասէ, երանի աչաց որք տեսանիցեն զոր տեսանէքդ:

Ասեմ ձեզ, զի բազում մարգարէք և թագաւորք կամեցան տեսանել զոր դուքդ տեսանէք և ոչ տեսին. և լսել զոր լսէքդ և ոչ լուան.

Եւ

Պ̃ա
Բ
Կե

Եւ ահա յար դե
եաւ ոմն օրի
նական փորձէր ծէթ
զնա եւ ասէր, վար
դապետ, զինչ գոր
ծեցից զի զկեանս
յաւիտենականս ժառան
գեցից ·
Եւ նա ասէ ցնա, յօ
րէնսն զինչ գրեալ է,
որպէս ընթեռնուս ·
Նա պատասխանի ետ
եւ ասէ, սիրեսցես զտ̃ր
ա̃ծ քո յա̃մ սրտէ քու
մէ, եւ յա̃մ անձնէ քու
մէ, եւ յա̃մ զօրութէ
քումէ, եւ յա̃մ մտաց
քոց, եւ զընկեր քո իբրեւ
զանձն քո :
Եւ ասէ ցնա, ուղիղ
ետուր զպատասխանիդ,
զայդ արա եւ կեցցես :
Նա իբրեւ կամեցաւ

զանձն արդարացուցա
նել · ասէ ցյ̃ս, եւ ով է
իմ ընկեր ·
Պատասխանի ետ յ̃ս եւ
ասէ, այր մի իջանէր
յէմէ յերիքով, եւ ան
կաւ 'ի ձեռս աւազա
կաց, որք մերկացուցին
զնա եւ վէրս իվերայ ե
դին, թողին կիսամահ
եւ գնացին ·
Դէպ եղեւ քահանայի
միոջ իջանել ընդ նոյն
ճանապարհ, եւ տեսեալ
զնա զանց արար ·
Նոյնպէս եւ ղեւտացի
մի եկեալ ընդ նոյն տե
ղի, ետես՝ եւ զանց արար :
Սամարացի ոմն ճանա
պարհորդեալ, եկն ընդ
նոյն առ նովաւ, եւ տե
սեալ զնա գթացաւ :
Եւ մատուցեալ պա
տեաց զվէրս ն̃ր, ար
կեալ

Դ̃ւա Ծ̃ւթ Փ̃է

Դ̃իէ

կեալ 'ի վերայ զ ձէթ և
զ գինի , և եդեալ 'ի վե
րայ գրաստու իւրոյ ,
էած զնա 'ի պանդոկ մի,
և դարմանեաց զնա ։
Եւ 'ի վաղիւ անդր իբրև
ելանէր անտի , հանեալ
ետ ցպանդոկապետն եր
կուս դահեկանս , և
ասէ . դարման տար դմա
և զորինչ ծախեսցես 'ի
դմա 'ի միւս անգամ գա
լստեան իմում հատու
ցից քեզ ։
Որդ՞ ո յերեցունց 'ի
նոցանէ թուի քեզ մեր
ձաւոր լեալ անկելոյն
'ի ձեռս աւազակաց ։
Եւ նա ասէ որ արար
զողորմութիւնն ի վ͞ր ն͞ր ,
ասէ ցնա յ͞ս , երթ և
դու արա նոյնպէս ։
Լ Եւ եղև 'ի գնալն նո
ցա , և ինքն եմուտ 'ի

գիւղ մի , և կին ոմն ա
նուն մարթա ընկալաւ
զնա 'ի տուն իւրում ։
Եւ նորա էր քոյր մի ,
որում անունն էր մա
րիամ , որ և եկն , նստաւ
առ ոտսն տեառն , և
լսէր զբանսն նորա ։
Եւ մարթա զբաղեալ
էր 'ի բազում սպասու ,
եկն և եկաց առ նմա
և ասէ . տէր՝ ոչ ինչ է՞
փոյթ քեզ . զի քոյրդ իմ
միայն եթող զիս 'ի սպա
սու . արդ ասա՛ դմա , զի
օգնեսցէ ինձ ։
Պատասխանի ետ նմա
յ͞ս և ասէ . մարթա ,
մարթա՛ , դու հոգաս
և բազում իւիք զբա
ղեալ ես ։
Բայց աստ սակաւ ինչ
պիտոյ է . մարիամ մասն
բարի ընտրեաց . որ ոչ
բառ

բարձցի 'ի սմանէ .

ԺԱ ծիգ Ե Եւ եղև 'ի տե դղ
ղւոջ ուրեք
կալ յաղօթս ,
և իբրև դադարեցաւ ,
ասէ ցնա ոմն յաշակեր
տացն իւրոց . տր , ու
սո՛ մեզ յաղօթս կալ ,
ո՛պ և յովհաննէս ուսոյց
աշակերտաց իւրոց .
Ասէ ցնս . յորժամ կայ
ցէք աղօթս , ասասջիք .
հայր մեր՝ սբ եղիցի ա
նուն քո , եկեսցէ ար
քայութի՛ քո .
Զհաց մեր հանապա
զորդ , տուր մեզ օր ըս
տօրէն .
Եւ թող մեզ զմեղս
մեր , զի և մեք թո
ղումք ամի , որ պարտիցի
մեզ . և մի՛ տանիր զմեզ
'ի փորձութի՛ .

ծիդ ձ Եւ ասէ ցնս , ով է
'ի ձէնջ որոյ իցէ բարե
կամ, և երթայցէ առ
նա իմէջ գիշերի , և
ասիցէ ցնա բարեկամ .
տուր ինձ փոխ երիս
նկանակս .
Զի բարեկամ իմ եկն
առ իս յուղւոյ , և ոչ
ինչ ունիմ դնել առաջի
նորա .
Եւ նա 'ի ներքուստ տայցէ
պատասխանի և ասիցէ ,
մի՛ աշխատ առներ զիս ,
զի դուրքս փակեալ են ,
և մանկունքս ընդ ինև
կան յանկողնի . ոչ կարեմ
յառնել և տալ քեզ .
Եթէ նա ստիպեսցէ
բաղխելով .
Ասեմ ձեզ , եթէ ոչ
յարուցեալ տայցէ նմա
վն բարեկամութեանն ,
սակայն վն ժտութեանն
յա

Գ ծիգ Ժ Գ ծիե

յարուցեալ տայցէ նմա
զինչ և պիտոյ իցէ ։

ճժե ե Եւ ես ասեմ ձեզ ,
խնդրեցէք , և տացի
ձեզ ։ հայցեցէք , և գտ
ջիք ։ բախեցէք , և
բացցի ձեզ ։ զի ամ ,
որ խնդրէ , առնու ,
և որ հայցէ , գտանէ ։
և որ բախէ , բացցի
նմա ։

Ո՞ ոք ’ի ձէնջ հայր
խնդրիցէ որդի իւր
ձուկն ։ միթէ փոխա
նակ ձկանն օձ տայցէ
նմա ։

Եւ կամ խնդրիցէ ձու՝
միթէ կարիճ տայցէ
նմա ։

Իսկ եթէ դուք որք
չարքդ էք գիտէք պար
գևս բարիս տալ որդ
ւոց ձերոց , որ չափ
ևս առաւել հայրն ձեր

յերկնից՝ տացէ բարիս
այնոցիկ , որք խնդրեն
’ի նմանէ ։

ճժղ ե Եւ հանէր դև
ժա դև մի համր ։
և եղև ընդ ելա
նել դևին՝
խօսեցաւ համրն , և
զարմացան ամ ժողո
վուրդն ։

ճժե բ Եւ ոմանք ’ի նոցանէ
ասեն ։ բէեղզեբուղա
ւիշխանաւն դիւաց հա
նէ զդևս ։

ճիը ե Եւ այլք փորձէին , և
նշան յերկնից խնդրէին
’ի նմանէ ։

Իսկ նորա գիտացեալ
ճիգ բ զխորհուրդս նոցա , ասէ
ցնս , ամ թագաւորու
թի բաժանեալ յանձն
աւերի , և տուն բաժա
նեալ յանձն կործանի ։

Ապա

Դ Մ
ճժե ճջ

Գ Մ Մթ
ճիգ ճժթ ։
ճիե ճիա ԼԹ
ճիջ ճկե ։
ճկթ ճկե Ճ

Ապա եթէ և սատանայ
բաժանեցաւ յանձնէ,
զիարդ կայցէ թագաւո
րութի՛ւն նորա. զի ա
սէք զինէն եթէ բեեղ
զեբուղաւ իշխանաւն
հանէ դա զդևս.
Եթէ ես բեեղզեբու
ղաւ հանեմ զդևս, որ
դիքն ձեր իւ հանիցեն.
վասն այնորիկ նոքին եղի
ցին ձեր դատաւորք.
Իսկ եթէ մատամբն
աստուծոյ հանեմ ըզ
դևս. ապա հասեալ է
ի վերայ ձեր արքայութի՛ւն
աստուծոյ։
Յորժամ հզօր վառեալ
պահիցէ զտուն իւր,
'ի խաղաղութեան են
ինչք նորա. բայց եթէ
հզօրագոյն քան զնա ի վերայ
եկեալ յաղթեսցէ նմա,
զսպառազինութի՛ւն նորա

հանէ, յոր յուսացեալ
էր, և զաւար նո՛ր բաշ
խեսցէ։
Որ ոչ է ընդ իս, հա
կառակ իմ է, և որ ոչ
ժողովէ ընդ իս, ցրուէ.
ծը Յորժամ այսն ելանիցէ
'ի մարդոյ՝ շրջի ընդ ան
ջրդին տեղիս. խնդրէ
հանգիստ, և իբրև ոչ
գտանէ, ասէ, դարձ
այց անդրէն 'ի տուն
իմ ուստի ելի.
Այլ գայ գտանէ մաք
րեալ և յարդարեալ.
Յայնժամ երթայ և
առնու եօթն այլ յաս
չար ևս քան զինքն, և
մտեալ բնակեն անդ, և
լինի յետինն մարդոյն
այնորիկ չար քան զառա
ջինն.
ծա Խ Այլ եղև մինչդեռ խօ
սէր զայս ձայն եբարձ
կին

կին մի ՚ի ժողովրդենէ
անտի և ասէ, երանի է
որովայնին որ կրեաց
զքեզ, և ստեանցն որք
դիեցուցին զքեզ։
Եւ նա ասէ, մանա-
ւանդ. երանի այնոցիկ,
որք լսեն զբանն Աստու-
ծոյ և առնեն զնա։
ծլբ Եւ ՚ի դիզանալ իվերայ
ե նոցա ժողովրդոցն սկ
Աւ՝— սաւ ասել, ազգս այս,
ազգ չար է, նշան խն
դրէ, և նշան յերկնից
ոչ տացի սմա, բայց նշանն
Յովնանու։
Զի որպ եղև Յովնան նի
նուէացւոց. այնպէս եղի
ցի և որդի մարդոյ ազ
գիս այսմիկ։
Դշխոյն հարաւոյ յա
րիցէ ՚ի դատաստանի
ընդ արս ազգիս այսո
րիկ, և դատապարտեսցէ

Լ.Օ.

ւ մ
ծլբ ծիբ

զնոսա, զի եկն ՚ի ծա
գաց երկրի լսել զիմաս
տութիւն Սողոմոնի։
Եւ ահա առաւել քան
զՍողոմոն է աստ։
Արք նինուէացիք յարի
ցեն ՚ի դատաստանի ընդ
ազգիս այսմիկ, և դա
տապարտեսցեն զսա, զի
ապաշխարեցին ՚ի քարո
զութեան Յովնանու։
Եւ ահա առաւել քան
զՅովնան է աստ։
ծլգ ե Ոչ ուրուք լուց եկ
եալ զճրագ
դնէ ՚ի թաքս
տեան, և ոչ ընդ գրուա
նաւ, այլ ի վր աշտանա
կի, զի որք մտանենն,
զլոյս տեսանիցեն։
ծլդ ե Ճրագ մարմնոյ ակն է
յորժամ ակն առատ է.
ամ մարմինն լուսաւոր
եղի

գ մ փ
ծլգ ի լթ
ծլէ ժե

եղիցի ·
Եւ երբ ակն չար է,
և մարմինն խաւարին
եղիցի ·
Արդ՝ զգոյշ լեր գուցէ
լոյսդ որ 'ի քեզ է խա
ւար իցէ ·
Եթէ մարմինդ քո ամ
լուսաւոր է, և չգուցէ
մասն ինչ խաւարին · ե
ղիցի լուսաւոր ամ, ոպ
յորժամ ճրագն նշու
լիւք լուսաւորեսցէ ըզ
քեզ ·
ճլե ե ԼԹ Եւ մինչ խօսէր զայս,
աղաչէր զնա ոմն 'ի փա
րիսեցւոցն, զի ճաշ կե
րիցէ առ նմա ·
Եւ նա մտեալ բազ
մեցաւ ·
Իբրև ետես փարիսե
ցին, զարմացաւ, զի նախ
ոչ մկրտեցաւ յառաջ
քան զճաշն ·

Ասէ ցնա տէր, այժմ
դուք փարիսեցիք զար
տաքին զբաժակին և
զպնակին սրբէք, և ներ
քինն ձեր լի է յափշտա
կութե և չարութե ·
Անմիտք, ոչ ապաքէն
որ զարտաքինն արար և
զներքինն նոյն արար ·
Բայց աղէ զորժանն՝
իսկ տուք ողորմութի,
և ահա ամ սբ է ձեր ·
ճլզ ե Խ Այլ վայ ձեզ փարի
սեցւոց, զի տասանոր
դէք զանանուխ, և
զփեգենայ, և զամենայն
բանջար, և անցանէք
զիրաւամբք և զսիրովն
աստուծոյ, զայս ար
ժան էր առնել և զայ
նու ոչ անցանել ·
ճլէ բ Վայ ձեզ փարիսեցւոց,
զի սիրէք զբաձրագա
հս 'ի ժողովուրդս և
զնա

զնախողջունս ՚ի հրապարակս.

ճլը
ե
Վայ ձեզ՝ զի էք դուք իբրեւ գերեզմանս անյայտս, եւ մարդիկ գնան ի վ՟ր եւ ոչ գիտեն.

ճլթ
ե
Պատասխանի ետ ոմն յօրինականացն, եւ ասէ, վարդապետ, զայդ բան ասելով եւ մեզ թշնամանես.

Եւ նա ասէ, եւ ձեզ վայ օրինականացդ, զի բառնայք մարդկան բեռինս դժուարակիրս, եւ դուք մատամբ միով ՚ի բեռինսն ոչ մերձենայք.

ճխ
ե
Վայ ձեզ, զի շինէք զշիրիմս մարգարէիցն, եւ հարքն ձեր սպանին զն՟ս.

Արդ ուրեմն վկայէք եթէ կամակից էք գործոց հարցն ձերոց, զի նոքա կոտորեցին զնոսա, եւ դուք զգերեզմանս նոցա շինէք.

ճխա
ե
Վասն այնորիկ իմաստութիւն աստուծոյ ասաց. առաքեցից ՚ի նոսա մարգարէս եւ առաքեալս, եւ ՚ի նոցանէ սպանանիցեն, եւ հալածիցեն.

Զի խնդրեսցի արիւն ամենայն մարգարէից հեղեալ ՚ի սկզբանէ աշխարհի յազգէ յայդմանէ.

Յարենէն աբէլի, մինչեւ ցարիւնն զաքարիայ կորուսելոյ ընդ սեղանն եւ ընդ տաճարն. այո՛, ասեմ ձեզ, խնդրեսցի յազգէ յայդմանէ.

ճխբ
ե
Վայ ձեզ օրինականացդ, զի թաքուցանէք

զփա

զ մ
ճլը ճլթ
ճլ փը
ճխ ղը

զ մ
ճխա փ
ճխբ ղբ

զփականս գիտութեան
դուք ոչ մտանէք, և
որք մտանելոցքն էին, ար
գելուք.
ճխգ Եւ ՚ի խօսելն զայս ամ
առ նս առաջի ամենայն
ժողովրդեանն, զամօ
թի հարկանէին.
Եւ սկսան դպիրքն և
փարիսեցիքն չարել և
զդրդուել ընդդէմ վասն
բազում իրաց.
Եւ սպասել որսալ զբան
ինչ ՚ի բերանոյ նորա,
զի չարախօսեսցեն զնը
մանէ.
ճխդ Որովք ՚ի կուտել բիւ
ԺԲ Բիւրաւորաց ժողովրդեանն,
մինչև կոխել զմի
մեանս.
Սկսաւ ասել ցաշակերտ
ս իւր, նախ զգոյշ լե
րուք ՚ի խմորոյ փարի
սեցւոցն, որ է կեղծաւո
րութիւն.
ճխե Զի ոչ ինչ է ՚ի ծա
ծուկ, որ ոչ յայտնես
ցի, և գաղտնի որ ոչ
ծանիցի.
Վասն այսորիկ զորինչ
ասիցէք ՚ի խաւարի,
լուեալ լիցի ՚ի լոյս. և
զոր յունկանէ խօսի
ցիք ՚ի շտեմարանս, քա
րոզեսցի ՚ի վերայ տա
նեաց.
Բայց ձեզ ասեմ սիրել
եաց իմոց, մի՛ զարհու
րիք յայնցանէ, որք սպա
նանեն զմարմին, և յետ
այնորիկ աւելի ինչ ոչ
ունիցին առնել.
Այլ ցուցից ձեզ յումմէ
երկնչիցիք, երկերուք
յայնմանէ, որ յետ սպա
նանելոյ ունի զիշխանու
թի արկանել ՚ի գեհեան
այն, ասեմ ձեզ յայնմանէ
եր

երկերուք ,
Ուշադրեցէն հինկ ձագք երկուց դանգաց վաճառին , և մի ի նոցանէ ոչ է մոռացեալ առաջի աստուծոյ ։
Այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է ․ մի՛ երկնչիք , զի քան զբազում ձագս լաւ էք դուք ։
Ասեմ ձեզ ․ զի ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան , և որդի մարդոյ խոստովանեսցի նմանէ առաջի հրեշտակաց աստուծոյ ։
ծկղ Բ Իսկ որ ուրասցի զիս առաջի մարդկան , ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց աստուծոյ ։
Եւ ամենայն որ ասէ բան զորդւոյ մարդոյ թողցի նմա , բայց որ զհոգին սուրբ հայհոյեսցէ , մի՛ թողցի նմա ։
ծկբ Բ Այլ յորժամ տանիցեն զձեզ ՚ի ժողովուրդս և ՚ի պետութիւնս , մի՛ հոգայցէք որպէս թէ զինչ պատասխանի տայցէք ․ կամ զինչ ասիցէք ։
Զի հոգին սուրբ ուսուսցէ ձեզ ի նմին ժամու զինչ պարտիցէ խօսել ։
ծկթ Ժ ԽԵ Ասէ մի ՚ի ժողովրդենէն ցնա ․ վարդապետ , ասա՛ ցեղբայրն իմ ․ բաժանել ընդ իս զժառանգութիւն ․
Եւ նա ասէ ցնա , այր դու՝ ո՛ կացոյց զիս դատաւոր կամ բաժանարար իվր ձեր ․

Ասէ

| | | |
|---|---|---|
| Ղ | Յ | Մր |
| ծկղ | ԿԴ | ճՂ |
| ծկէ | ծկթ | Ը |

| | | |
|---|---|---|
| Ղ | Յ | Մր |
| ծկբ | ՃԸ | ծկա |
| ծկթ | ։ | ։ |

Եւ ասէ ցնոսա . տեսէք
և զգուշ լերուք յամե
նայն ագահութենէ , զի
ոչ եթէ ՚ի մթերից ըն
չից ուրուք իցեն կեանք
նորա .

ԽՕ Խօսեցաւ առ նոսա
զառակ մի , և ասէ .
առն ուրումն մեծա
տան ետուն անդք առհ
մականք .

Եւ խորհէր ՚ի միտս
իւր և ասէր , զի՛ գոր
ծեցից զի ոչ գոյ տեղի ,
ուր ժողովեցից զար
դիւնս իմ .

Եւ ասէ զայս զինչ
արարից . քակեցից
զշտեմարանս իմ , և ևս
մեծամեծս շինեցից ,
և անդր ժողովեցից
զցորեան և զամենայն
բարութիւնս իմ .

Եւ ասացից յանձն իմ ,
անձն , ունիս բազում
բարութիւնս . համբար
եալ ամաց բազմաց ,
հանգիր , կեր , արբ ,
և ուրախ լեր .

Ասէ ցնա Ած , անմիտ ,
յայսմ գիշերի զոգիդ ՚ի
քէն իբաց պահանջիցեն՝
իսկ զոր պատրաստե
ցերն ում լինիցի .

Նոյնպէս և որ գանձէ
անձին , և ոչ յԱծ մեծա
նայցէ .

ծթ Ե Ասէ ցաշակերտսն իւր
վասնայդորիկ ասեմ ձեզ՝
մի հոգայք ընդ ոգւոյ
թէ զինչ ուտիցէք , և
մի՛ ընդ մարմնոյ թէ
զինչ զգենուցուք .

Զի ոգի առաւել է
քան զկերակուր , և
մարմին քան զհանդերձ

Հայեցարուք ընդ
ագռաւս , զի ոչ սերմա
նեն

ձեն և ոչ հնձեն որոց ոչ գոն շտեմարանք և ոչ համբարանոցք, և Ած կերակրէ զնս. որ չափ ևս առաւել զձեզ. որք լաւ էք քան զթռչունս:

Ո՞վ ի ձէնջ առ ի հոգալն, կարիցէ յաւելուլ ի հասակ իւր կանգուն մի:

Իսկ արդ եթէ ի փոքուն չէք բաւական՝ վասն այլոցն զի՞ հոգայք:

Հայեցարուք ընդ շուշանն՝ որպէս աճի. ոչ ջանայ՝ և ոչ նիւթէ, ասեմ ձեզ և ոչ Սողոմոն յամենայն փառսն իւր զգեցաւ իբրև զմի ի նոցանէ: ձեա ժ

Իսկ եթէ զխոտն որ այսօր ի բացի է, և վաղիւն ի հնոց արկանելի, Ած այնպէս զգեցուցանէ, որչափ ևս առաւել զձեզ թերահաւատք:

Եւ դուք մի խնդրէք զինչ ուտիցէք, կամ զինչ ըմպիցէք, և մի՛ զբաղնուք:

Զի զայն ամենայն հեթանոսք աշխարհի խնդրեն:

Այլ ձեր Հայրն գիտէ զի պիտոյ է այն ամենայն:

Բայց խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ, և զարդարութիւն նորա, և այն ամենայն յաւելցի ձեզ:

եգ

Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւնն:

Վա

ՃԾԲ Վաճառեցէք զինչս
Բ ձեր , և տուք ողոր
մութի .
ՃԾԳ Եւ արարէք ձեզ քսա
Ե կս առանց հնանալոյ ,
գանձ անպակաս յերկի
նս , ուր ոչ գող մեր
ձենայ՝ և ոչ ցեց ապա
կանէ ։
Զի ուր գանձքն ձեր
է՝ անդ և սիրտք ձեր
եղիցին ։
ՃԾԴ Եղիցին գօտիք ձեր
Ժ պնդեալք ընդ մէջ , և
ճրագունք լուցեալք .
Եւ դուք նմանողք
մարդկան որք ակն ունի
ցին տեառն իւրեանց ,
թէ երբ դառնայցէ 'ի
հարսանեաց , զի յորժամ
գայցէ և բախիցէ ,
վաղվաղակի բանայցեն
նմա ։
ՃԾԵ Երանի իցէ ծառայիցն
Ե այնոցիկ զորս եկեալ
տէրն գտցէ արթունս .
Ամէն ասեմ ձեզ , զի գօ
տի ընդ մէջ ածցէ և
բազմեցուսցէ զնոսա ,
և անցեալ պաշտեսցէ
զնոսա ։
Եւ եթէ յերկրորդ՝
կամ յերրորդ պահու
եկեսցէ՝ և գտցէ այնպէս
երանելիք են ծառայքն
այնոքիկ .
ՃԾԶ Բայց զայն գիտասջիք ,
Բ եթէ գիտէր տանու
տէրն յորում ժամու
գող գայ , հսկէր և
ոչ տայր թոյլ ական հա
տանել 'ի տան իւրում .
Եւ դուք եղերուք
պատրաստք զի յորում
ժամու ոչ կարծիցէք
գայ որդի մարդոյ .
ՃԾԷ Ասէ պետրոս . Տէր առ
Ե մեզ ասացեր զառակդ
զայդ

| Ղ | Մ | Փ |
|---|---|---|
| ՃԾԲ | ԾԼԴ | ՃԽ |
| ՃԾԳ | ԽԶ | . |
| ՃԾԴ | . | . |
| ՃԾԵ | ՄԿ | Ջ |

| Ղ | Մ | Փ |
|---|---|---|
| ՃԾԶ | ՄԴ | ԾԵԵ |
| ՃԾԷ | ՄԵ | Ջ |

զայդ թէ առ ամենե
սեան :
Եւ ասէ տ̃ր , ով իցէ
հաւատարիմ տնտես և
իմաստուն , զոր կացոյց
տ̃ր իւր ի վերայ գեր
դաստանի իւրոյ , տալ ՚ի
ժամու զկերակուրս ,
Երանի իցէ ծառային
այնմիկ , զոր եկեալ տէր
իւր գտանիցէ արարեալ
այնպէս :
ճկը թ Ճշմարիտ ասեմ ձեզ ,
զի ի վերայ ամենայն ըն
չից իւրոց կացուսցէ
զնա :
Ապա թէ ասիցէ ծառ
այն այն ի սրտի իւրում ,
յամէ տէր իմ ՚ի գալ ,
և սկսանիցի հարկանել
զծառայս և զաղախն
եայս , ուտել և ըմպել
և արբենալ :
Եկեսցէ տէր ծառա
Ա
ային այնորիկ , յաւուր
յորում ակն ոչ ունիցի ,
և ՚ի ժամու , յորում
ոչ գիտիցէ . ընդ մէջ
կտրեսցէ զնա և զմասն
նորա ընդ անհաւատս
դիցէ :
ճկթ ծ Եւ ծառայ որ գիտիցէ
զկամս տեառն իւրոյ ,
և ոչ պատրաստեսցէ
ըստ կամաց ն̃ր՝ արբցէ
գան բազում :
Եւ որ ոչն գիտիցէ ,
և արժանի գանի ինչ
գործիցէ . արբցէ գան
սակաւ :
Ամենայնի , որում շատ
տուաւ , շատ խնդրես
ցի ՚ի նմանէ , և որում
բազում աւանդեցաւ ,
առաւել ևս պահանջես
ցեն ՚ի նմանէ :

հուր

ծգ Ե Հուր եկի արկանել եւ
յերկիր , եւ զինչ
կամիմ , թէ ար
դէն իսկ բորբոքէր ։
Եւ մկրտութի՛ մի ու
նիմ մկրտել , եւ զիարդ
փութամ մինչ կատա
րեսցի ։
Համարիք եթէ խաղա
ղութի՛ եկի տալ յեր
կիր , ոչ , ասեմ ձեզ , այլ
բաժինս ։
Զի եղիցին յայսմ հե
տէ հինգ ՚ի տան միում
բաժանեալք , երեքն յեր
կուց , եւ երկուքն յերից ։
Բաժանեսցի հայր յոր
դւոյ , եւ որդի ՚ի հօրէ ,
մայր ՚ի դստերէ , եւ
դուստր ՚ի մօրէ ․ սկես
ուր ՚ի հարսնէ , եւ հարսն
՚ի սկեսրէ իւրմէ ։
ծդ Ժ Ասաց եւ ցժողովուրդն
յորժամ տեսանիցէք
ամպ ծագեալ յարեւ
մտից , իսկոյն ասէք թէ
անձրեւ գայ , եւ լինի
այնպէս ։
Եւ յորժամ հարաւ շըն
չեալ , ասէք թէ խոր
շակ լինի , եւ լինի այն
պէս ։
Կեղծաւորք , զերեսս
երկնի եւ երկրի գիտէք
փորձել ․ իսկ զժամա
նակս զայս զիարդ ոչ
փորձէք ։
Ընդէր եւ յանձանց իսկ
ոչ ընտրէք զարժանն ։
ծե Ե Յորժամ երթայցես
ընդ ոսոխի քում առ
իշխանն , ՚ի ճանապարհի
տուր զհաշիւն զերծա
նել ՚ի նմանէ , զի գուցէ
քարշիցէ զքեզ առ դա
տաւորն , եւ դատաւորն
մատնիցէ դահճի , եւ
դահիճն արկանիցէ ՚ի
բանտ ․ ասեմ քեզ , ոչ
ելց

Դ ծզ ծզր Ժ Ը ։ Դ ծէ Լ Ն

ելանիցես անտի մինչեւ
հատուցանիցես զյետին
բնիոնն ։

ծկգ
խե Եւ էին ոմանք ՚ի
նմին ժամանա
կի, եւ պատմէ
ցին նմա վասն Գալիլ
եացւոցն, որոց զարիւնն
Պիղատոս խառնեաց ընդ
զոհսն նոցա ։
Պատասխանի ետ եւ
ասէ ցնոսա, Համարիք
եթէ այնք Գալիլեացիք
էին մեղաւորք քան զա
մենայն Գալիլեացիս, զի
զայնպիսի անցս կրեցին ։
Ոչ, ասեմ ձեզ, այլ եթէ
ոչ ապաշխարիցէք, ամե
նեքին նոյնպէս կորնչի
ցիք ։
Կամ նոքա ութուտա
սանք, յորոց վերայ աշ
տարակն անկաւ ՚ի Սիլով
ամ, եւ եսպան զնոսա,
համարիք, թէ նոքա
պարտապանք էին քան
զամ մարդիկ որք բնա
կեալք են յեմ ։
Ոչ, ասեմ ձեզ. այլ թէ
ոչ ապաշխարիցէք, ա
մենեքեան նոյնպէս կո
րնչիցիք ։
ծկդ
խզ Եւ ասաց եւ զառակս զայս,
Թզենի մի էր ուրուք
տնկեալ յայգւոջ իւրում.
եւ եկն խնդրել զպտուղ
՚ի նմանէ եւ ոչ եգիտ ։
ասէ ցայգեգործն, ահա
երեք ամք են յորմէ հե
տէ գամ խնդրել զպը
տուղ ՚ի թզենւոջդ՝ եւ
ոչ գտանեմ, արդ՝ կոտրեա
զդա ընդէր եւ զերկիրդ
խափանէ ։
Նա պատասխանի ետ
եւ ասէ. տէր, թող զդա
յայսմ ամի եւս, մինչեւ
շուրջ

շուրջ զդովաւ բրեցից
և արկից զաղբ ։
Թերևս տացէ զպտուղ
ապա թէ ոչ, յա
մէ ևս, հատցես զդա ։
ԽԹ. Եւ ուսուցա
նէր 'ի միում
ժողովրդանո
ցացն 'ի շա
բաթուն ։
Եւ ահա կին մի զոր
ունէր այս հիւանդու
թե ամս ութուտասան.
և էր կորկամեալ, և
ոչ կարէր ամենևին 'ի
վեր հայիլ ։
Եւ տեսեալ զնա յի͠
կոչեաց առ ինքն, և
ասէ ցնա, կին դու ար
ձակեալ ես 'ի հիւան
դութենէ քումմէ ։
Եւ եդ ի վերայ նորա
ձեռն, և առժամայն
ուղղեցաւ և փառա
ւոր առնէր զա͠ծ ։
ճկե Բ Պատասխանի ետ ժո
ղովրդապետն ցասուց
եալ թէ, ընդէր 'ի շա
բաթու բժշկեաց յ͠ս ։
եե Եւ ասէ ցժողովուրդն՝
վեցօր է, յորս արժան է
գործել. յայնս՝ եկայք և
բժշկեցարուք, և մի՛
յաւուր շաբաթու ։
Պատասխանի ետ նմա
տ͠ր, և ասէ, կեղծա
ւորք՝ իւրաքանչիւր ոք 'ի
ձէնջ 'ի շաբաթու ոչ
արձակէ զեզն իւր, կամ
զէշ 'ի մսրոյ, և տանի
տայ ջուր ։
Իսկ այս դուստր աբրա
համու էր, զոր կապեաց
սատանայ. ահաւադիկ
զութուտասն ամ, ոչ
էր արժան արձակել 'ի
կապանաց անտի 'ի շա
բաթու. Եւ
զ ժ ժը
ճկէ ճժզ իռ

ճկզ Եւ զայս իբրև ասէր,
ա յամօթ լինէին ամենե
քեան, որք հակառակն
կային նմա:
Եւ ամենայն ժողովուր
դն ուրախ լինէր ի վե
րայ ամենայն փառաւո
րութեանցն, որք գոր
ծէին ՚ի նմանէ.
ճկե Եւ ասէր, ում նման
բ Ոա է արքայութիւն աստու
ծոյ, և որում նմանու
նմանեցուցից զնա:
Նման է հատոյ մանանխոյ. զոր առեալ մար
դոյ էարկ ՚ի պարտէզ
իւր. աճեաց և եղև
ծառ. և թռչունք երկ
նից բնակեալ էին յոստս
նորա:
ճկը ե Եւ դարձեալ ասէ, ում
նմանեցուցից զարքայ
ութիւն աստուծոյ:
Նման է խմորոյ, զոր ա
առեալ կնոջ թաքոյց յա
լեր երից գրուից, մինչև
խմորեցաւ ամենայն:

ճկթ բ Եւ շրջէր ընդ եղ
քաղաքս, և
ընդ գիւղս,
ուսուցանէր,
և ճանապարհ արարեալ
յե̃մ:
ճհ ե Ասէ ցնա ոմն, տ̃ր,
եթէ սակաւք իցեն,
որք ապրելոց իցեն.
Եւ նա ասէ ցն̃ս. Ջա
նացարուք մտանել ընդ
դուռն նեղ, ասեմ ձեզ,
զի բազումք խնդրես
ցեն մտանել և ոչ կա
րասցեն:
ճհա ե Յորմէ հետէ մտցէ
տանուտէրն և փակես
ցէ զդուռն. և սկսա
նիցէք կալ արտաքոյ և
բախել զդուռն, և
ասել,

| Ղ | Մ | Մթ |
|---|---|---|
| ճկզ | . | . |
| ճկե | ճլէ | խդ |
| ճկը | ձըը | |

| Ղ | Մ | Մթ |
|---|---|---|
| ճկթ | հզ | ծթ |
| ճհ | եե | . |
| ճհա | ե | . |

ասել, Տէր, Տէր, բաց
մեզ, և պատասխանի
տուեալ ասիցէ ձեզ,
ոչ գիտեմ զձեզ ուստի
էք:

Յայնժամ սկսանիջիք
ասել, կերաք առաջի
քո, և արբաք. և 'ի
հրապարակս մեր ուսու
ցեր:

Եւ ասիցէ ձեզ, ոչ
գիտեմ զձեզ ուստի էք.
'ի բաց կացէք յինէն ամ
մշակքդ անիրաւութեան.

ՃՀԸ Թ Անդ եղիցի լալ և կր
ճել ատամանց, յորժամ
տեսանիցէք զաբրահամ
և զիսահակ, և զյակոբ,
և զամենայն մարգարէս
յարքայութեան աստու
ծոյ, և զձեզ հանեալ
արտաքս:

Եւ եկեսցեն յարևե
լից, և յարևմտից, և
'ի հիւսիսոյ, և 'ի հա
րաւոյ, և բազմեսցին
յարքայութեան աստու
ծոյ:

ՃՀԹ Բ Եւ ահա յետինք, որք
եղիցին առաջինք, և
իցեն առաջինք, որք
լինիցին յետինք:

ՃՁ Ժ 'Ի նմին աւուր մա
տեան ոմանք փարիսե
ցիք, և ասեն. ել և
գնա աստի, զի հերով
դէս կամի սպանանել
զքեզ:

Եւ նա ասէ ցնոսա.
երթայք ասացէք ա
ղուէսուն այնմիկ, ա
հաւասիկ հանեմ դևս,
և զբժշկութիւնս կատա
րեմ այսօր, և վաղիւ,
և յերիր աւուր կատա
րիմ:

Բայց պարտ է այսօր,
և վաղիւ, և 'ի միւս
ում

Ղ Մ
ՃՀԸ ԺԹ

Ղ Մ Գ
ՃՀԹ ՃՂԹ ՁԺԹ
ՃՁ . Ձ

ում աւուր գնալ. զի
ոչ է մարթ մարգարէի
կորնչել արտաքոյ քան
զԵրմ.

ճհե Ե Երմ, Երմ, որ կո
տորէիր զմարգարէս,
եւ քարկոծ առնէիր զա
ռաքեալսն առ քեզ.
քանիցս անգամ կամե
ցայ ժողովել զորդիս քո՝
որպէս հաւ զձագս իւր
ընդ թեւօք, եւ ոչ կամե
ցայք.

Ահա թողեալ լիցի ձեզ
տուն ձեր.

Բայց ասեմ ձեզ. եթէ
ոչ եւս տեսանիցէք զիս,
մինչեւ ասիցէք օրհնեալ
եկեալ յանուն տեառն.

ճհզ Ժ Եւ եղեւ ի մտա եւ
նելն նորա ի
տուն ուրու
քն իշխանացն փարիսե

ցւոց ի շաբաթու ու
տել հաց, եւ նոքա
սպասէին նմա.

Եւ ահա այր մի էր
անդ ջրգողեալ առա
ջի նր.

ճհէ Ժ Պատասխանի եւ յս եւ
ասէ ցօրինաւորս՝ եւ
ցփարիսեցիս, եթէ ար
ժան իցէ ի շաբաթու
բժշկել.

Եւ նոքա լուռ եղեն,
եւ բուռն հարեալ զնմա
նէ բժշկեաց զնա, եւ
արձակեաց.

Եւ ասէ ցնս, ո՞յր ու
րուք ի ձէնջ էշ կամ
եզն անկանիցի ի ջրհոր,
եւ ոչ վաղվաղակի հանի
ցէ զնա, յաւուր շաբա
թու.

Եւ ոչ կարացին տալ
նմա պատասխանի առ
այն.

Ասաց

Զ ճհե ճհզ · մխա ծժԶ

Զ ճհԹ

ՃՀԸ Ժ ԾԴ Ասաց և առ կոչնականսն առակ մի , հայեցեալ թէ զիարդ բարձ ընտիր լինէին , ասէ ցնոսա։

Յորժամ կոչիցէ ոք զքեզ 'ի հարսանիս , կամ 'ի կոչունս , մի՛ բազմիր յառաջին բարձին . գուցէ պատուականագոյն ևս քան զքեզ իցէ կոչեցեալ 'ի նմանէ։

Եւ եկեալ որ զքեզ և զնա կոչեաց՝ ասիցէ ցքեզ , տուր սմա տեղի , և ապա սկսանիցիս ամօթով զյետին տեղին ունել .

Այլ յորժամ կոչիցիս . երթիցես բազմեսցիս 'ի յետին տեղւոջ , զի յորժամ գայցէ որ կոչեացն զքեզ , ասիցէ ցքեզ բարեկամ իվեր մատիր . յայնժամ եղիցին քեզ փառք առաջի բարձակիցացն քոց .

ՃՀԹ Ե Զի ամ , որ բարձրացուցանէ զանձն , խոնարհեսցի , և որ խոնարհեցուցանէ զանձն , բարձրասցի .

ՃՁ Ժ Ասէ և ցկոչնատէրն . յորժամ առնիցես ճաշ՝ կամ ընթրիս . մի՛ կոչեր զբարեկամս քո , և մի՛ զեղբարս քո , և մի՛ զազգականս քո , և մի՛ զդրացիս քո , և մի՛ զմեծամեծս , զի մի՛ և նոքա փոխարէն կոչիցեն զքեզ և լինիցի քեզ հատուցումն .

Այլ յորժամ առնիցես ընդունելութի , կոչեա զաղքատս , և զխեղս , և զկաղս . և զկոյրս։

Եւ երանելի լինիցիս ,

զի

զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ, և հատուսցի քեզ փոխարէն 'ի յարութեան արդարոց։

Իբրև լուաւ զայս ոմն 'ի բազմականացն՝ ասէ ցնա, երանի, որ կերիցէ ճաշ յարքայութեն աստուծոյ։

Ճաշ Ե Թն Եւ նա ասէ ցնա, այր ոմն գործեաց ընթրիս, և հրաւիրեաց զբազումս։

Եւ առաքեաց զծառայ իւր 'ի ժամու ընթրեացն կոչել զհրաւիրեալսն, թէ եկայք, զի ահաւասիկ պատրաստ է ամենայն ինչ։

Եւ սկսան մի ըստ միոջէ ամենեքեան հրաժարել։

Առաջինն ասէ, ագարակ գնեցի, և հարկ է ելանել և տեսանել զնա, աղաչեմ զքեզ կալ զիս հրաժարեալ։

Եւ միւսն ասէ լուծս հինգ եզանց գնեցի, և երթամ փորձել զնոսա, աղաչեմ զքեզ կալ զիս հրաժարեալ։

Եւ միւսն ասէ, կին առի, և վասն այնորիկ ոչ կարեմ գալ։

Եւ եկեալ ծառայն պատմեաց զամենայն տեառն իւրում։

Յայնժամ բարկացեալ տանուտէրն ասէ ցծառայն իւր, ել վաղվաղակի 'ի հրապարակս և 'ի փողոցս քաղաքիս, և զաղքատս՝ և զխեղս՝ և զկաղս՝ և զկոյրս՝ մուծ այսր։

Եւ ասէ ծառայն, տէր, եղև

եղև զոր հրամայեցերն,
և կայ ևս տեղի։
Եւ ասէ տէրն ցծա
ռային, ել 'ի ճանապար
հս, և 'ի ցանգս. և Ո
արա՛ այսր մտանել զի
լցցի տուն իմ. ասեմ
ձեզ զի ոչ ոք յայնց կոչե
ցելոց ճաշակեսցէ յընթ
րեաց իմոց։

ճժբ ե

Եւ երթային
ընդ նմա ժո
ղովուրդք բա
զումք, դարձաւ և ասէ
ցնոսա։

Եթէ ոք գայ առ իս և
ոչ ատէ զհայր իւր և
զմայր, և զկին իւր,
և զորդիս, և զեղբարս
և զքորս, նա և զանձն
ևս իւր. ոչ կարէ իմ
աշակերտ լինել։
Զի որ ո՛չ բառնայ
զխաչ իւր՝ և գայ զկնի
իմ, ոչ կարէ իմ աշա
կերտ լինել։

ճժգ ծ

Ո՞վ ոք 'ի ձէնջ կամիցի
Օ շինել աշտարակ, և ոչ
նախ նստեալ համարի
ցէ զծախսն եթէ ունի
ցի բաւական 'ի կատա
րումն։
Զի գուցէ իբրև որ
կանիցէ զհիմն և ոչ կա
րասցէ կատարել, ամե
նեքեան որք տեսանի
ցեն սկսանիցին ծաղր
առնել զնա։

զկ

Եւ ասել, եթէ այս
այր սկսաւ շինել, և ոչ
կարաց կատարել։
Կամ, որ թագաւոր եր
թեալ տայցէ պատե
րազմ ընդ այլում թա
գաւորի, և ոչ նստեալ
նախ խորհիցի, եթէ
կարող իցէ տասն հազա
րաւ

ճժէ դկ

ճժդ

րու զդէմ ունիլ այնո
րիկ որ գայցէ 'ի վերայ
նորա քսան հազարաւ ։
Ապա թէ ոչ՝ մինչ դեռ
հեռագոյն իցէ, հրեշտա
կութիւն առաքեալ, ա
ղաչեսցէ 'ի խաղաղու
թիւն ։
ՃԺԴ Ե Արդ այսպէս ամ ոք 'ի
ձէնջ, որ ոչ հրաժարես
ցի յամ ընչից իւրոց,
ոչ կարէ իմ աշակերտ
լինել ։
ՃԺԵ Բ Բարւոք է աղ, ապա
թէ աղն անհամեսցի,
իւ համեմեսցի ։
Ոչ յերկիր, եւ ոչ յաղբ
է պիտանացու, այլ ըն
կենուլ զնա արտաքս ։
որ ունիցի ականջս լսե
լոյ լուիցէ ։
ՃԺԶ Բ Եւ էին մերձ
առ նա ամ մաք
սաւորք եւ մե
ղաւորք լսել 'ի նմանէ ։
Տրտնջէին փարիսեցի
քն եւ դպիրքն եւ ասէին,
ընդէր սա զմեղաւորս
ընդունի՝ եւ ուտէ ընդ
նոսա ։
Ծ
ՃԺԷ Ե Ասաց առ նոսա զառա
կս զայս ։
Ո՞վ իցէ 'ի ձէնջ մարդ,
որոյ իցէ հարիւր ոչխար,
եւ կորուսանիցէ զմի 'ի
նոցանէ, ոչ թողուցու
զիննսուն եւ զինն յա
նապատի, եւ երթայցէ
զհետ կորուսելոյն, մին
չեւ գտանիցէ զնա ։
Եւ իբրեւ գտանէ, դնէ
զնա 'ի վերայ ուսոց իւ
րոց խնդալով ։
Եւ երթայ 'ի տուն,
կոչէ զբարեկամս եւ
զդրացիս, եւ ասէ ցնս,
ուրախ եղերուք ընդ
իս ։ զի գտի զոչխարս
իմ

Գ Ժ Մթ
ՃԺԴ ՃԲ ․
ՃԺԵ ՃԾ ԿԲ
ՃԺԶ ԿԲ Ձ

Է Մ
ՃԺԷ ՃԺԸ

իմ զկորուսեալ .
Ասեմ ձեզ, զի այսպէս
է ուրախութի՟ յերկինս
վս՟ միոյ մեղաւորի, որ
ապաշխարիցէ քան ի
նսուն և ինն արդարոց՝
որոց չիցէ պիտոյ ապաշ
խարութիւն .
ՃԶԸ Ժ Կամ ով իցէ կին, որոյ
իցեն դրամք տասն . և
եթէ կորուսանիցէ ընդ
դրամ մի, ոչ լուցանի
ցէ զճրագ, և ածիցէ
զաւել ՚ի տան, և խն
դրիցէ ստէպ մինչև
գտանիցէ .
Եւ իբրև գտանէ, կո
չէ զբարեկամս և զդրա
ցիս, և ասէ . ուրախ եղե
րուք ընդ իս, զի գտի
զդրամն իմ զոր կորուսի
ՃԶԹ Ժ Այնպէս ասեմ ձեզ,
ուրախութի՟ եղիցի առ
աջի հրեշտակաց աստու
ծոյ ՚ի վերայ միոյ մեղա
ւորի, որ ապաշխարիցէ .
ՃԻ Ժ Եւ ասէ, այր մի
էին երկու որդիք . ասէ
կրտսերն ՚ի նոցանէ
ցհայրն .
Հայր՝ տուր ինձ բաժին,
որ անկանի յընչիցդ .
Եւ նա բաժանեաց նո
ցա զկեանսն .
Եւ յետ ոչ բազում
աւուրն, ժողովեալ զամ
կրտսեր որդւոյն գնաց
յաշխարհ հեռի, և անդ
վատնեաց զինչս իւր, զի
կեայր անառակութե՟ .
Եւ իբրև սպառեաց
զամ, եղև սով սաստիկ
յաշխարհի յայնմիկ, և
սկսաւ ինքն չքաւորիլ .
Եւ գնացեալ յարեցաւ
՚ի միում քաղաքացւոց
աշխարհին այնորիկ, և
յղեաց զնա յագարակ
իւր

իւր արածել զխոզս ։
Եւ ցանկայր լնուլ զո
րովայն իւր յեղջերէն ,
զոր խոզքն ուտէին , և
ոչոք տայր նմա ։
Եւ եկեալ 'ի միտս իւր
ասէ , քանի վարձկանք
են 'ի տան հօր իմոյ հա
ցալիցք , և ես աստ սո
վամահ կորնչիմ ։
Յարուցեալ գնացից
առ հայրն իմ . և ասա
ցից ցնա ։
Հայր՝ մեղայ յերկինս
և առաջի քո ։
Եւ ոչ ևս եմ արժանի
կոչիլ որդի քո , արա
զիս իբրև զմի 'ի վարձ
կանաց քոց ։
Եւ յարուցեալ եկն
առ հայր իւր . և մինչ
դեռ հեռագոյն էր ,
ետես զնա հայրն և
գթացաւ , յարեաւ և,

ընթացաւ ընդառաջ ,
անկաւ զպարանոցաւն
նորա , և համբուրեաց
զնա ։
Եւ ասէ ցնա որդին ։
Հայր՝ մեղայ յերկինս և
առաջի քո , ոչևս եմ
արժանի կոչիլ որդի քո ։
Ասէ հայրն ցծառայս
իւր , վաղվաղակի հա
նէք զպատմուճանն առա
ջին , և ագուցէք նմա ։
և տուք զմատանին 'ի
ձեռս նորա , և կօշիկս
յոտս նորա ։
Եւ ածէք զեզն պարա
րակ , և զենէք , կերի
ցուք , և ուրախ լիցուք ։
Զի այս որդի իմ մե
ռեալ էր և եկեաց ։
կորուսեալ էր և գտաւ
և սկսան ուրախ լինել ։
Եւ էր երեց որդի նր̃
յագարակի , և մինչդեռ
գայր

գայր և մերձ եղև ՚ի
տունն . լուաւ զձայն
երգոցն և պարուց .
Եւ կոչեալ առ ինքն
զմի ՚ի ծառայիցն, հար
ցանէր թէ զինչ իցէ այն .
Եւ նա ասէ ցնա, զի
եղբայր քո եկեալ է,
և եզեն հայր քո զեզն
պարարակ, զի ողջամբ
ընկալաւ զնա .
Բարկացաւ և ոչ կա
մէր մտանել, և հայրն
ելեալ արտաքս աղաչէր
զնա .
Պատասխանի ետ և
ասէ ցհայրն, այս քանի
ամք են զի ծառայեմ
քեզ, և երբէք զպա
տուիրանաւ քով ոչ անց
ցի . ուլ մի երբէք ոչ ե
տուր ինձ, զի ուրախ լի
նէի ընդ բարեկամս իմ,
Եւ յորժամ եկն որդին
քո այդ՝ որ եկեր զկեա
նս քո ընդ պոռնիկս,
զեներ դմա զեզն պարա
րակ .
Եւ ասէ ցնա, որդեակ՝
դու հանապազ ընդ իս
ես, և ա̅մ որ ինչ իմ է
քո է .
Այլ ուրախ լինել և
խնդալ պարտ էր, զի եղ
բայր քո այս մեռեալ
էր և եկեաց . կորուս
եալ էր, և գտաւ .

Եւ ասէր առ
աշակերտսն .
այր մի էր մե
ծատուն, որոյ էր տն
տես, և եղև զնմանէ
ամբաստանութի̅ն, որպէս
թէ վատնիցէ զինչս նո̅ր .
Կոչեաց, և ասէ ցնա,
զինչ է այս, զոր լսեմ
զքէն, տուր զհամար
տն

տնտեսութե՛ քո , զի
ոչեւս կարես լինել տըն
տես ։
Ասէ ընդ միտս իւր
տնտեսն՝ զինչ գործե
ցից , զի տէր իմ հանէ
զտնտեսութիւ. գործել
ոչ կարեմ , մուրանալ
ամաչեմ ։
Գիտեմ զինչ արարից ,
զի յորժամ 'ի բաց լինի
ցիմ 'ի տնտեսութենէս, ըն
կալցին զիս 'ի տունս իւր
եանց ։
Եւ կոչեցեալ առ ինքն
մի ըստ միոջէ 'ի պար
տապանաց տեառն իւ
րոյ , ասէ ցառաջինն ,
քանի ինչ պարտիս տն
իմում ։
Եւ նա ասէ , հարիւր
մար ձիթոյ ։
Ասէ ցնա , կա՛ զգիր քո՝
Եւ նիստ գրեա՛ վաղվա
ղակի յիսուն ։
Դարձեալ ասէ ցմիւսն,
դու քանի ինչ պարտիս ։
Եւ նա ասէ , հարիւր
քոռ ցորենոյ ։
Եւ ասէ ցնա, կա՛ զգիր
քո՝ եւ նիստ գրեա՛ ութ
սուն ։
Եւ գովեաց տէրն
զտնտեսն անիրաւու
թե , զի իմաստութբ ա
րար . զի որդիք աշխար
հիս այսորիկ իմաստնա
գոյնք են քան զորդիս
լուսոյ՝ յազգս իւրեանց ։
Եւ ես ձեզ ասեմ , ա
րարէք ձեզ բարեկամս
'ի մամոնայէ անիրաւ
ութեան . զի յորժամ
պակասիցի այն , ընկալ
ցին զձեզ 'ի յարկսն յա
ւիտենականս ։
Որ 'ի փոքուն հաւատա
րիմ է . եւ 'ի բազմին հա
ւա

ւատարիմ է, և որ ՚ի
փոքուն անիրաւ է, և
՚ի բազմին անիրաւ է։
Իսկ արդ՝ եթէ յանիրաւ
մամոնային չեղէք հա
ւատարիմք, զճշմարիտն
ձեզ ո՞ հաւատասցէ։
Եւ եթէ յօտարին չե
ղէք հաւատարիմք, զձ
ձերն ո՞ տացէ ձեզ։
ճլա ե Ոչ ոք ծառայ կարէ եր
կուց տերանց ծառայել.
զի եթէ զմինն ատիցէ,
և զմիւսն սիրիցէ, կամ
զմին մեծարիցէ, և
զմիւսն արհամարհիցէ.
ոչ կարէք Աստուծոյ
ծառայել, և մամոնայի։
ճլբ ժ Լսէին լսէին զայս ամ
փարիսեցիքն, քանզի ար
ծաթասէրք էին, և
անգոսնէին զնա։
Եւ ասէ ցնոսա, դուք
էք որք արդարացուցա
նէք զանձինս առաջի
մարդկան, սակայն Աստ
գիտէ զսիրտս ձեր, զի
որ առաջի մարդկան
բարձր է, պիղծ է առ
աջի Աստուծոյ։
ճլգ ե Օրէնք և մարգարէք
մինչև ցՅովհաննէս։
յայնմ հետէ արքայու
թիւնն Աստուծոյ բըռ
նաբարի, և ամենայն ոք
զնա բռնաբարէ։
ճլդ ե Դիւրին իցէ երկնից
և երկրի անցանել, քան
յօրինացն միոյ նշանա
խեցի անկանել։
ճլե բ Ամենայն, որ արձակէ
զկին իւր, և առնու
այլ, շնայ, և որ զարձա
կեալն առնու, շնայ։
ճլզ ժ Այր ոմն էր մեծատուն,
և ագանէր բեհեզս և
ծիրանիս, և ուրախ լի
նէր հանապազ առա

տապ

գ մ
ճլա ժբ
ճլբ ։

գ մ փ
ճլգ ճե ։
ճլդ լէ ։
ճլե կ ճծ
ճլզ ։ ջ

տապէս:

Եւ աղքատ ոմն անուն
ղազարոս. անկեալ դրն
իւր առ դրան նորայ վի
րաւորեալ:

Եւ ցանկայր յագել 'ի
փշրանացն, որք անկա
նէին 'ի սեղանոյ մեծա
տանն, այլ և շունք եւ
գային, և լեզուին զվէրս
նորա:

Եղեւ 'ի մեռանիլ աղ
քատին, և տանել հրեշ
տակաց զնա 'ի գոգն աբ
րահամու:

Մեռաւ և մեծատունն
և թաղեցաւ:

Եւ 'ի դժոխսն ամբարձ
զաչսն իւր՝ մինչ 'ի տան
ջանսն էր, ետես զաբրա
համ 'ի հեռաստանէ, և
զղազարոս 'ի գոգ նորա
հանգուցեալ:

Եւ նա աղաղակեաց և

ասէ, հայր աբրահամ՝ ո
ղորմեա ինձ, և առա
քեա զղազարոս՝ զի թաթ
ցէ զծագ մատին իւրոյ
'ի ջուր, և զովացուսցէ
զլեզու իմ. զի պապա
կիմ 'ի տապոյ աստի:

Եւ ասէ ցնա աբրահամ
որդեակ, յիշեա, զի ըն
կալար անտէն զբարիս
քո 'ի կեանսն քում. և
ղազարոս նոյնպէս զչար
չարանս. արդ՝ սա աստ
մխիթարի, և դու այդր
պապակիս:

Եւ իվերայ այսր ամե
նայնի՝ վիհ մեծ է ընդ
մեզ և ընդ ձեզ. եթէ
կամիցին աստի առ ձեզ
անցանել ոչ կարեն. և
ոչ այտի, առ մեզ ան
ցանել:

Եւ ասէ արդ աղաչեմ
զքեզ հայր, զի արձա



կես

կեսցես զդա 'ի տուն
հօր իմոյ :
Են իմ անդ եղբարք
հինգ, որպէս զի տացէ նո
ցա զվկայութիւն, զի մի
և նոքա գայցեն յայս
տեղի տանջանաց :
Ասէ աբրահամ.
ունին զմովսէս և զմար
գարէս, նոցա լուիցեն :
Եւ նա ասէ, ոչ հայր
աբրահամ, բայց եթէ
'ի մեռելոց ոք երթիցէ
առ նոսա, ապաշխարես
ցեն :
Ասէ ցնա եթէ մո
վսէսի և մարգարէից ոչ
լսեն, և ոչ թէ 'ի մե
ռելոց ոք յառնիցէ հա
ւատասցեն :

ճշէ Բ Ասաց և առ Ե
աշակերտսն զը
իւր, ոչ է

մարթ չգալ գայթակ
ղութեան, բայց վայ
այնմիկ է՝ յորոյ ձեռն
գայցէ : Լաւ էր եթէ
վէմ երկանաքար կախ
իւր զպարանոցէ նորա
և ընկենոյր 'ի ծով,
քան թէ գայթակղե
ցուցանէ զմի 'ի փոքր
կանցս յայսցանէ :
ճշը Ե Զգուշ կացէք անձանց,
եթէ մեղիցէ քեզ եղ
բայր քո՝ սաստեա նմա :
ճշթ Ե Եւ եթէ ապաշխարեսցէ
ցէ թող նմա :
Եւ եթէ եօթն ան
գամ մեղիցէ քեզ, եօթն
անգամ դարձցի 'ի քեզ
և ասիցէ, ապաշխարեմ՝
թողցես նմա :
Եւ ասեն առաքեալքն
ցտէր, յաւել մեզ հա
ւատս :
Եւ ասէ տէր, եթէ ու
նի.

Հ ճշէ Մ ճհթ Մր ճթ

Հ ճլբ ճձփ
Մ ճշթ ճձե
Մ ճհե

նիցիք հաւատս քան զհատն մանանխոյ, և ասիցէք թթենւոյդ այդմիկ, խլեաց, և անկեաց 'ի ծովու, և հնազանդեսցի ձեզ.

ա ծ Իսկ ո՞վ 'ի ձէնջ, որ ունիցի զծառայ հողագործ կամ հովիւ, որ իբրև մտանիցէ յագարակէ, ասիցէ ցնա վաղվաղակի, թէ անց, բազմեաց.

Այլ ո՞չ ասիցէ ցնա՝ թէ պատրաստեա զինչ ընթրելոցիցեմ, և գօտի ածեալ պաշտեա զիս, մինչև կերիցեմ, և արբից, և ապա կերիցես և արբցես դու.

Մի՞թէ շնորհ ինչ ունիցի ծառային այնմիկ. զի արար զամ հրամանսն.

Նոյնպէս և դուք յոր ժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասասջիք եթէ ծառայք անպիտանք եմք, զոր պարտէաքն առնել արարաք.

ԿԱ. Եւ եղև մինչ երթայր նա յԵրուսաղէմ, և ինքն անցանէր ընդ մէջ Սամարեայ և Գալիլեացւոց.

Եւ մինչ դեռ մտանէր 'ի գեօղ ուրումն. պատահեցան նմա տասն արք բորոտք, որք կացին 'ի հեռաստանէ.

Բարձցին զձայնս, և ասեն. Յիսուս վարդապետ ողորմեաց մեզ.

Եւ իբրև ետես զնոսա. ասէ ցնոսա, երթայք ցուցէք զանձինս քահանայից.

Եւ եղև իբրև գնային, առժամայն սրբեցան.

Մի

Ո՞ ոմն 'ի նոցանէ, իբրև եռես եթէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն, 'ի ձայն մեծ փառաւոր առնէր զԱծ։ Անկաւ առ ոտս նորա՝ ի՛վերա երեսաց իւրոց, և գոհանայր զնմանէ, և ինքն էր սամարացի։ Պատասխանի ետ յս և ասէ։

Ոչ տասն սոքա սրբեցան, իսկ արդ 'ինոււնքն ուր են։

Ո՛չ ոք գտան դառնալ՝ և տալ փառս աստուծոյ, բայց միայն այլազգիս այս։

Եւ ասէ ցնա, արի՝ գնա, զի հաւատք քո կեցուցին զքեզ։

ճզ
Ժ
Իբրև հարցաւ 'ի փարիսեցւոցն՝ թէ երբ գայցէ արքայութիւնն աստուծոյ. պատասխանի ետ նոցա և ասէ, ոչ գայ արքայութի աստուծոյ խտրանօք. և չասիցեն թէ ահաւասիկ աստ է, կամ անդ, զի ահա արքայութի աստուծոյ 'ի ներքս 'ի ձեզ է։

ճդ
Ասաց և առ աշակերտսն, եկեսցեն աւուրք ցանկանալոյ մի յաւուրցն որդւոյ մարդոյ տեսանել, և ոչ տեսանիցէք։

ճգ
Ժ
Եւ եթէ ասիցեն ձեզ՝ եթէ ահաւասիկ է կամ անդ, մի՛ երթայցէք զհետ։

ճե
Ժ
Զի որպէս փայլակն փայլատակեալ 'ի ներքոյ երկնից ընդ երկնիւք ծագիցէ, նոյնպէս և որդի մարդոյ յաւուրն իւրում։ Նայց

Մ Մ
ժգ ճղէ

Մ Մ Մք
ժգ · ·
ճը ·ծգ մճը
ճհ ճծղ ·

յզ Բ Բայց նախ պարտ է
նմա բազում չարչարել
եւ խոտել յազգէս յայ
սմանէ :
յէ Թ Եւ որպէս եղեւ յաւուրսն
Նոյի, նոյնպէս եղիցի եւ
յաւուրս որդւոյ մարդոյ:
Ուտէին, ըմպէին, կա
նայս առնէին, եւ արանց
լինէին, մինչեւ յօրն յո
րում եմուտ Նոյ 'ի տա
պանն, եւ եկն ջրհեղեղն
եւ կորոյս զամենեսեան :
յը Ժ ‘Նոյնպէս’ եւ որպէս յաւ
ուրսն Ղովտայ եղեւ, ու
տէին, ըմպէին, գնէին,
վաճառէին, տնկէին,
շինէին, եւ յորում աւ
ուր ել Ղովտ 'ի Սոդո
մայ, տեղաց հուր եւ
ծծումբ յերկնից, եւ կո
րոյս զամենեսին :
Ըստ նմին օրինակի ե
ղիցի, եւ յաւուրն յորում
որդի մարդոյ յայտնե
լոց իցէ :
յթ Բ Յայնմ աւուր որ կայ
ցէ 'ի տանիս եւ կարասի
իւր 'ի տան, մի՛ իջցէ
առնուլ զայն :
յժ Ժ Եւ որ յանդի իցէ՝ նոյն
պէս մի՛ դարձցի յետս .
Յիշեցէք զկինն Ղովտայ :
յժա Գ Որ խնդրիցէ զանձն
իւր ապրեցուցանել՝ կո
րուսցէ զնա . եւ որ կո
րուսցէ ապրեցուսցէ
զնա :
յժբ Ե Ասեմ ձեզ, յայնմ գի
շերի, թէ եղիցին եր
կու 'ի մի մահիճս, մինն
առցի, եւ միւսն թողցի .
Եւ թէ եղիցին երկու
աղալ 'ի միասին . մինն
առցի, եւ միւսն թողցի .
Եւ եթէ իցեն երկու
յանդի . մինն առցի,
եւ միւսն թողցի .



| Ղ | Մ | Մր |
|---|---|---|
| յզ | ճկ: | ձց |
| յէ | մկա | . |
| յը | . | . |

| Ղ | Յ | Մ | Մր |
|---|---|---|---|
| յթ | . | մկբ | ծխց |
| յժ | . | . | . |
| յժա | ճե | գէ | . |
| յժբ | . | մկգ | . |

Պատասխանի ետուն և ասեն ցնա, յո՞ տր ։ Եւ նա ասէ ցնս, ուր մարմին է՝ անդր և արծուիք ժողովեսցին ։

ԺԸ

Ասաց և առակ մի նոցա, առ այն, թէ պարտ է յամ ժամ կալ նոցա յաղօթս, և մի ձանձրանալ ․ ասէ ․ Դատաւոր մի էր ՚ի քաղաքի ուրումն, յաստուծոյ ոչ երկնչէր, և ՚ի մարդկանէ ոչ ամաչէր ։ Եւ այրի մի էր ՚ի նմին քաղաքի, գայր առ նա և ասէր, դատ արա ինձ յոսոխէ իմմէ ։ Եւ ոչ կամէր ՚ի բազում ժամանակս ․ Յետ այնորիկ ասէ ՚ի միտս իւրում թէ և յաստուծոյ ոչ երկնչիմ, և ՚ի մարդկանէ ոչ ամաչեմ ։ Վասն զի աշխատ առնելոյ զիս այրւոյն՝ արարից նմա դատ ․ զի մի՛ իսպառ եկեալ թախանձիցէ զիս ․ Եւ ասէ տէր, լուարուք զինչ դատաւորն անիրաւութեան ասէր ․ Իսկ ա՛ծ ոչ առնիցէ զվրէժխնդրութիւն ծառայից իւրոց, որք աղաղակեն առ նա ՚ի տուէ և ՚ի գիշերի, և երկայնամիտ լինիցի առ նոսա ։ Ասեմ ձեզ ․ զի արասցէ զվրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի ․ Իսկ որդի մարդոյ եկեալ գտանիցէ արդեօք հաւատս յերկրի ․ Ասաց

Կդ. Ասաց և առ ոմանս
պանծացեալս յանձինս ,
թէ արդարք իցեն և
խոտիցեն զբազումս զա
ռակս զայս .
Արք երկու ելին 'ի տա
ճարն կալ յաղօթս . մինն
փարիսեցի , և միւսն
մաքսաւոր .
մյե ե Փարիսեցին կայր մե
կուսի , և զայս առան
ձինն աղօթս մատուցա
նէր .
Ա̄Ծ իմ գոհանամ զքէն,
զի ոչ եմ իբրև զայլս
մժզ բ 'ի մարդկանէ , զյափշ
տակօղս՝ և զանիրաւս՝
և զշունս՝ կամ իբրև
զայս մաքսաւոր ։
Այլ պահեմ երկիցս
'ի շաբաթու , և տամ
տասանորդս յա̄մ ստա
ցուածոց իմոց ։
Իսկ մաքսաւորն կայր
մեկուսի , և ոչ կամէր ,
և ոչ զաչսն ընդ երկ
ինս ամբառնալ , այլ , կո
ծէր զկուրծս իւր , և
ասէր . Ա̄Ծ քաւեա՛ զիս
զմեղաւորս .
Ասեմ ձեզ , էջ սա ար
դարացեալ 'ի տուն իւր
քան զնա ։
Զի ամենայն որ բարձ
րացուցանէ զանձն , խո
նարհեսցի , և որ խո
նարհեցուցանէ զանձն
բարձրասցի .
Մատուցանէին առ զն
նա և մանկտիս ,
զի մերձենայցէ
'ի նոսա ։
Իբրև տեսին աշակերտ
քն սաստէին նոցա ։
Իսկ յս̄ կոչեալ զնոսա
առ ինքն ասէ , Թո՛յլ
տուք մանկտւոյդ գալ
առ

զ մ մբ
մյե մլ .
մժզ ծլջ ճզ

առ իս, և մի՛ արգելուք
զդոսա, զի այդպիսեացդ է արքայութիւնն
աստուծոյ.
ՄԺԵ Բ Ամէն ասեմ ձեզ, որ
ոչ ընդունիցի զարքայութիւնն աստուծոյ իբ-
րև զմանուկ, ոչ մտցէ
՚ի նա.
ՄԺԶ Բ Եւ եհարց զնա ոմն իշ-
ԿԴ խան, և ասէ. Վարդա-
պետ բարի՛ զինչ գործե-
ցից, զի զկեանս յաւի-
տենականս ժառանգե-
ցից.
Ասէ ցնա յս. զի ասես
զիս բարի, չիք ոք բա-
րի, բայց մի ած.
Զպատուիրանս գի-
տես, մի շնար, մի սպա-
նաներ, մի գողանար,
մի սուտ վկայեր, պա-
տուեա զհայր քո և
զմայր.

Ղ Մ Մր
ՄԺԵ ԾՀԲ ՂԵ
ՄԺԶ ԾՀԴ ՂԶ

Եւ նա ասէ զայդ ամ
պահեցի ՚ի մանկութենէ
իմէ.
ՄԺԷ Բ Իբրև լուաւ զայս յս.
ասէ ցնա, միւսևս պա-
կաս է քեզ. զամ ինչ
զոր ունիս, վաճառեա
և տուր աղքատաց, և
ունիցիս գանձս յերկինս,
և եկ զկնի իմ.
Փ Բ Նա իբրև լուաւ զայս
տրտմեցաւ, քանզի էր
մեծատուն յոյժ.
Իբրև ետես զնա յս
տրտմեալ ասէ, ո՜րպ դժ-
ուարին է, որք ինչս
ունիցին, մտանիցեն յար-
քայութին աստուծոյ.
Դիւրագոյն իցէ մալ-
խոյ ընդ ծակ ասղան
անցանել, քան մեծա-
տան յարքայութին աս-
տուծոյ մտանել.
Եւ որք լուանն ասէին
և

Ղ Մ Մր
ՄԺԷ ԾՀԵ ՂԷ
Փ ԾՀԶ ՂԸ

Եւ ո՛ կարիցէ ապրել.

գա բ Եւ նա ասէ, անհնարինք առ 'ի մարդկանէ հնարաւորք են յաստուծոյ.

Եւ ասէ պետրոս, ահաւասիկ մեք թողաք զամ̃ ինչ զմեր, և եկաք զկնի քո.

Եւ նա ասէ ցն̃ս, ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ ոք է որ եթող զտունս՝ կամ զծնօղս՝ կամ զեղբարս՝ կամ զկին՝ կամ զորդիս՝ վ̃ն ար̃քայութ̃ե աստուծոյ, եթէ ոչ առնուցու բազմապատիկ, 'ի ժամանակի յայսմիկ, և յաշխարհին որ գալոցն է զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ.

կբ բ Եւ առեալ զերկոտասանսն առանձինն ասէ ցնոսա, ահաւասիկ ելա

Խ

ղ մ մբ
փա ճղբ ռժ
փբ ժա ռժթ

նեմք յե̃մ, և կատարեսցին ամ̃ գրեալքն մարգարէիւք վասն որդւոյ մարդոյ.

Զի մատնեսցի հեթանոսաց, և կատակեսցի, և հարկանիցի, և թքանիցի.

Եւ իբրև հարկանիցեն, և սպանանիցեն զնա. և յերիր աւուր յարիցէ.

կդ ժ Եւ նոքա ոչ իմացան յայնցանէ, այլ էր բանն ծածկեալ 'ի նոցանէ. և ոչ գիտէին զասացեալսն.

կե բ ԿԷ Եւ եղև 'ի մօտենալն նորա յերիքով, կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ. իբրև լուաւ զան

ղ մ փ
փգ . .
փե ժ ճժղ

զանցանել ժողովրդեանն, հարցանէր զինչ իցէ այն։

Եւ պատմեցին նմա, թէ յս՟ Նազովրեցի անցանէ․

Աղաղակեաց և ասէ․ յս՟ որդի Դաւթի, ողորմեա ինձ․

Եւ որք առաջին երթային, սաստէին նմա զի լռեսցէ, և նա ևս առաւել աղաղակէր․ որդի Դաւթի ողորմեա ինձ։

Զտեղի էառ յս՟, և հրամայեաց ածել զնա առ իւր․ և իբրև մերձ եղև առ նա, եհարց զնա և ասէ։

Զինչ կամիս դու զի արարից քեզ, և նա ասէ․ Տ՟ր, զի բացցին աչքիմ, և տեսից․

Եւ յս՟ ասէ ցնա, հայեաց, հաւատք քո կեցուցին զքեզ․

Եւ առժամայն ետես, երթայր զհետ նորա և փառաւոր առնէր զԱ՟ծ, և ամենայն ժողովրդեանն տեսեալ տային զօրհնութի՟ աստուծոյ․

մե
Ա. Օ
Եւ մտեալ շրջէր ընդ երիքով․

Եւ ահա այր մի անուն կոչեցեալ զաքէոս․ և նա էր մաքսապետ, և ինքն մեծատուն։

Եւ խնդրէր տեսանել թէ ով իցէ յս՟, և ոչ կարէր 'ի բազմութենէն, զի կարճէր հասակաւ․

Եւ ընթացեալ յառաջ ել 'ի ժանտեայ թզենին

զի

զի տեսանիցէ զնա ․ քանզի ընդ այն խոյս անցանելոց էր ․

Իբրեւ եկն ՚ի տեղին, հայեցաւ ՚ի վեր յս՟ եւ ասէ ցնա, զաքէ՛ փութա՛, էջ այտի, զի այսօր ՚ի տան քում արժան է ինձ ագանիլ ։

Փութացաւ, եւ էջ, եւ ընկալաւ զնա ուրախութեամբ ։

Իբրեւ տեսին ամենեքեան ․ տրտնջէին եւ ասէին, թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել ։

Եկն եկաց զաքէոս եւ ասէ ցտր՟, տէր, ահա զկէս ընչից իմոց տամ աղքատաց, եւ եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին ։

Եւ ասէ ցնա յս՟, այսօր եղեւ փրկութիւն տանս այսմիկ, քանզի եւ սա որդի աբրահամու էր ․

ՄԶ Ե Զի եկն որդի մարդոյ խնդրել եւ կեցուցանել զկորուսեալն ։

ՄԷ Ժ Եւ մինչդեռ նոքա զայն լսէին, յաւել առակ մի եւ ասէ ․ վասն մերձենալոյն նր՟ յեմ, եւ համարելոյ նոցա եթէ առժամայն յայտնելոց է արքայութիւն աստուծոյ ․

ՄԸ Բ Ա Ասէ ․ այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի առնուլ իւր թագաւորութիւն եւ դառնալ ․

ՄԹ Ե Ա Եւ կոչեաց զծառայս իւր, ետ նոցա տասն մնաս, եւ ասէ ցնոսա, յորդեցէք զայդ մինչեւ եկից ։

Եւ քաղաքացիք նորա ատէին

Ճ Մ Ք
ՃՂ ԾՂ ։
ՄԻ ․
ՄԵ ՃՁ ՃԿԲ
ՄԹ ՃԵ 6

տաէրին զնա, առաքե
ցին հրեշտակս զկնի նո՟ր
և ասեն, թէ ոչ կամիմք
թագաւորել դմա 'ի վե
րայ մեր ։

Եւ եղև դառնալ նմա
առեալ զթագաւորու
թ՟ին, և կոչեալ զծա
ռայսն, որոց տուեալ
էր զարծաթն, զի գի
տասցէ թէ ո՞ զինչ շա
հեցաւ ։

Եկն առաջինն և ասէ,
տէր, մնասն քո տասն
մնաս արար ։

Եւ ասէ ցնա, ազնիւ
ծառայ և բարի, զի 'ի
փոքու հաւատարիմ
եղեր, լիջիր իշխանու
թիւն ունել 'ի վերայ
տասն քաղաքաց ։

Եկն երկրորդն և ասէ.
մնասն քո՝ արար հինգ
մնաս ։

Ասէ և ցնա, և դու
լիջիր 'ի վերայ հինգ քա
ղաքաց ։

Եկն միւսն և ասէ,
տ՟ր, ահա մնասն քո զոր
ունէի ծրարեալ 'ի վար
շամակի ։ երկնչէի 'ի
քէն ։

Զի այր ստամբակ ես,
բառնաս զոր ոչ եդեր,
և հնձես, զոր ոչ սեր
մանեցեր ։

Եւ ասէ ցնա, 'ի բերա
նոյ քումմէ դատեցից
զքեզ՝ ծառայ անհա
ւատ, գիտէիր թէ ես
այր մի ստամբակ եմ,
բառնամ, զոր ոչ եդի,
և հնձեմ, ուր ոչ սեր
մանեցի ։

Եւ ընդէր ոչ ետուր
զարծաթդ իմ 'ի սեղա
նաւորս, և եկեալ ես
տոկոսեօք պահանջէի ։

Եւ

Եւ ասէ ցպաշտօնեայսն
առէք 'ի դմանէ զմնասն
եւ տարայք, տուք այնմ
որ ունի զտասն մնաս։
Եւ ասեն ցնա. տէր,
ունի տասն մնաս։
ճլ Ասեմ ձեզ, եթէ ա̃մի,
Բ որ ունիցի, տացի. եւ
յայնմանէ որ ոչն ունի
ցի, եւ զոր ունիցի բարձ
ցի 'ի նմանէ։
ճլա Բայց զթշնամիսն իմ
Ժ զայնոսիկ, որք ոչն կա
մէին զիս թագաւորել
ի վերայ նոցա. ածէք
այսր, եւ սպանէք առա
ջի իմ.
ճլբ Եւ իբրեւ զայս ասաց
Բ գնաց յառաջ ելանել յԵ
րուսաղէմ։

ՂԹ Եւ եղեւ իբրեւ էկ
մերձեցաւ 'ի
բեթփագէ, եւ

| | | |
|---|---|---|
| Ղ | Մ | Մթ |
| ճլ | ճհա | ճոբ |
| ճլա | ճհբ | |
| ճլբ | ճղ | ՃԺԵ |

'ի բեթանիայ մօտ 'ի
լեառն, որ կոչի Ձիթե
նեաց. առաքեաց եր
կուս յաշակերտաց իւ
րոց.
Եւ ասէ, երթայք 'ի
գեօղդ որ հանդէպ մեր
կայ, յոր իբրեւ մտանէք
գտանիցէք յաւանակ
կապեալ. յորում ոք 'ի
մարդկանէ երբեք ոչ
նստաւ. լուծէք զնա,
եւ ածէք։
Եւ եթէ ոք հարցա
նիցէ զձզ, եթէ ընդէր
լուծանէք. այսպ̃ ասաս
ջիք ցնա, թէ տեառն
ի րում պիտոյ է։
ճլգ Իբրեւ չոգան, որք առա
Բ քեցանն, գտին որպէս
ասացն ցնոսա, կայր յա
ւանակն։
Եւ մինչ դեռ լուծա
նէին զյաւանակն ա
սեն

| | | |
|---|---|---|
| Ղ | Մ | Մթ |
| ճլգ | մբ | ՃԺԲ |



սեն տեարքն նորա ցնո
սա, զի լուծանէք զյա
ւանակդ.
Եւ նոքա ասեն, Տն
իւրում պիտոյ է:
Եւ ածին զնա առ յս,
և արկին զնովաւ հան
դերձս, և հեծուցին
զյս:
Եւ մինչդեռ երթայր
զհանդերձս իւրեանց
տարածանէին զճանա
պարհաւն:
ՃԺ Ա Եւ իբրև այն ինչ մերձ
եղև 'ի զառիվայր լե
րինն Ձիթենեաց, սկսա
ն ամ բազմութի աշակեր
տացն ուրախութբ օրհ
նել զած 'ի ձայն մեծ,
վս ամ եղելոց զօրու
թեանցն, զորս տեսին.
Եւ ասէին, օրհնեալ
որ գայ թագաւորդ յա
նուն տեառն, խաղա
ղութիւն յերկինս, և
փառք 'ի բարձունս.
ՃԺԸ Ե Եւ ոմանք 'ի փարիսեց
ւոցն յամբոխէ անտի.
ասեն ցնա, վարդապետ
սաստեա աշակերտացդ
քոց.
Պատասխանի ետ, և
ասէ, ասեմ ձեզ, զի
եթէ դոքա լռեսցեն,
քարինքդ աղաղակես
ցեն:
ՃԻԲ Ժ Եւ իբրև մերձեցաւ
տեսեալ զքաղաքն ե
լաց 'ի վերայ նորա, և
ասէ. եթէ գիտէիր
դու գոնէ յաւուրս յայս
միկ զխաղաղութի քո,
բայց այժմ ծածկեցաւ
յերեսաց քոց:
Զի եկեսցեն աւուրք
'ի վերայ քո, և պատես
ցեն զքեւ թշնամիք քո
պատնէշ, և պաշարես
ցեն

Գ ՃԺԳ Յ Ճ Մ ԺԹ Մր ՃԺԹ

Գ ՃԺԸ Մ ԺԺԹ ՃԻԶ

ցեն զքեզ, և նեղեսցեն
զքեզ յամ կողմանց.
Եւ յատակեսցեն զքեզ,
և զորդիս քո 'ի քեզ.
ղե Բ Եւ ոչ թողուցուն ըզ
քար 'ի քարի վերայ,
յամի 'ի քեզ. փոխանակ
զի ոչ ծանեար զժամա
նակ այցելութե՞ քո.
ճլը Ա Եւ մտեալ 'ի տաճարն
սկսաւ հանել զաղաւ
նավաճառսն, և զգնո
ղս, և զսեղանս, հա
տավաճառացն ցրու
եաց.
Եւ ասէ ցնոսա, գրեալ
է, և եղիցի տուն իմ
տուն աղօթից, և դուք
արարէք զդա այրս աւա
զակաց.
ճլթ Ա Եւ ուսուցանէր զնո
սա հանապազ 'ի տաճա
րին.
Իսկ քահանայապետքն

| Ղ | Յ | Մ | Մր |
|---|---|---|---|
| ճլե | · | ձկբ | ճլէ |
| ճլը | իա | ժժա | ձիա |
| ճլթ | հե ձե ձը | գ | ձիւ ձիթ |

և դպիրք և գլխաւորք
ժողովրդեանն խնդրէ
ին զնա կորուսանել.
Եւ ոչ գտանէին թէ
զինչ արասցեն, զի ժո
ղովուրդն ամ կախեալ
կայեին զնմանէ 'ի լսել.

ճկդ Եւ եղև 'ի կէ
միում աւ
ուրցն յայն
ցանէ, մինչ
դեռ ուսուցանէր զժո
ղովուրդն 'ի տաճարի
անդ, և աւետարանէր.
հասին իվր քահանայա
պետքն և դպիրք ծե
րովքն հանդերձ.
Եւ ասեն ցնա, ասա մեզ
որով իշխանութե՞ գոր
ծես դու զայդ. կամ
ով է որ ետ քեզ զայդ
իշխանութի՞.

Պա

| Ղ | Մ | Մր |
|---|---|---|
| ճկ | ժժե | ձիե |

Պատասխանի ետ և
ասէ ցնոսա, հարցից մա
և ես զձեզ բան մի, և
ասացէք ինձ.
Մկրտութիւն յոհաննու յերկնից էր, եթէ 'ի
մարդկանէ.
Եւ նոքա խորհեցան 'ի
միտս իւրեանց և ասեն.
եթէ ասեմք յերկնից,
ասէ, իսկ ընդէր ոչ հաւատացիք նմա, և եթէ
ասեմք 'ի մարդկանէ,
ամենայն ժողովուրդն
քարկոծ առնեն զմեզ,
զի հաստատեալ է 'ի
միտս զյոհաննէ թէ
մարգարէ է. և պատասխանի ետուն չգիտել թէ ուստի իցէ.
Եւ յս ասէ ցնոսա, և
ոչ ես ասեմ ձեզ որով
իշխանութբ առնեմ
զայս.

ԽԸ

Սկսաւ ասել էր
առ ժողովուր
դըն զառակս
զայս. այր ոմն տնկեաց
զայգի, և ետ զնա մշակաց, և ինքն գնաց 'ի
ճանապարհ ժամանակս
բազումս.
Եւ 'ի ժամու առաքեաց առ մշակսն զծառայ
զի 'ի պտղոյ այգւոյն տացեն 'նմա.
Եւ մշակքն գան
հարին զնա, և արձակեցին ունայն.
Եւ յաւել միւսև
ծառայ յղել, նոքա և
զնա ևս գան հարին.
անարգեցին, և առաքեցին ունայն.
Եւ յաւել զերրորդն
առաքել. նոքա և զնա
վիրաւորեցին. և հանին

ար

արտաքս ։

Ասէ տէր այգւոյն , զինչ արարից ։ առաքեցից զորդի իմ սիրելի , թե‿րեւս ՚ի սմանէ պատկառեսցին ։

Իբրեւ տեսին զնա մշակքն , խորհեցան ընդ միմեանս եւ ասեն , սա է ժառանգութ͞ին ։

Եւ հանին զնա արտաքս քան զայգին , եւ սպանին ։

Արդ՝ զինչ արասցէ ընդ նոսա տ͞ր այգւոյն ։

Ոչ ապաքէն գայցէ եւ կորուսանիցէ զմշակսն զայնոսիկ ։ եւ տայցէ զայգին այլոց ։

Իբրեւ լուան , ասեն , քաւ մի՛ լիցի ։

Եւ նա հայեցեալ ընդ նոսա ասէ ։ իսկ զինչ իցէ այն , որ գրեալն է , թէ զվէ͞մն , զոր անարգեցին շինողքն , նա եղեւ գլուխ անկեան ։

Ամենայն որ հարցի ընդ վէմս ընդ այս՝ խորտակեսցի , եւ յորոյ վերայ անկցի , հոսեսցէ զնա ։

ժզ Ա Եւ խնդրէին դպիրքն եւ քահանայապետք արկանել ՚ի նա ձեռս ՚ի նմին ժամու , եւ երկեան ՚ի ժողովրդենէն , զի գիտէին թէ առ նոսա ասաց զառակն զայն ։

մգ Բ Եւ ապա սպասեցին , եւ առաքեցին դաւաճանս կեղծաւորեալս զանձինս առ արդարս ունել ։ զի ըմբռնեսցեն զնա բանիւք , առ ի մատնել զնա պետութեան ՀԲ

եւ

[illegible]

և իշխանութեան դատաւորին :
Հարցին ցնա և ասեն . վարդապետ՝ գիտեմք, զի ուղիղ խօսիս, և ուսուցանես, և ոչ առնուս ակն, այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես :
Արժան է մեզ կայսեր հարկս տալ թէ ոչ :
Եւ նայեցեալ ընդ խորամանկութիւն նոցա, ասէ ցնոսա :
Ցուցէք ինձ զդահեկանն :
Եւ նոքա ցուցին :
Եւ ասէ զոյր պատկեր և գիր ունի :
Պատասխանի ետուն և ասեն, զկայսեր :
Եւ նա ասէ ցնոսա, երթայք, տուք զկայսերն կայսեր, և զԱստուծոյն, Աստուծոյ :
Եւ ոչ կարացին զնա ըմբռնել բանիւք առաջի ժողովրդեանն, և զարմացեալ ընդ պատասխանին նորա լռեցին :

ՀԳ. Մատուցեալ ոմանք ՚ի սադուկեցւոց, որք հակառակէին չլինել յարութեան :
Հարցին զնա և ասեն, վարդապետ, Մովսէս գրեաց մեզ, եթէ ուրուք եղբայր մեռանիցի, որոյ իցէ կին, և նա անորդի իցէ, զի առցէ եղբայր նորա զկինն և յարուսցէ զաւակ եղբօր իւրում :
Արդ՝ եօթն եղբարք էին, և առաջինն առեալ

եալ կին մեռաւ անորդի ․

Առ զնոյն և երկրորդն, մեռաւ և նա անորդի ․

Առ զնա և երրորդն, նոյնպէս և եօթանեքին, և ոչ թողին որդիս․ մեռաւ և կինն ․

Արդ՝ ՚ի յարութեանն ում ՚ի նոցանէ լինիցի կին, զի եօթանեքին կալան զնա կին ․

Պատասխանի ետ նոցա Յս և ասէ, որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն, և արանց լինին ․

Իսկ որք արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել, և յարութե՛ն որ ՚ի մեռելոց, ոչ կանայս առնեն, և ոչ արանց լինին ․

Քանզի և ոչ մեռանել ևս կարեն, զի հաւասար հրեշտակաց են և որդիք աստուծոյ, քանզի յարութեան որդիք են ․

Այլ զի յառնեն մեռեալք ․ և մովսէս ցուցանէ ՚ի մորենւոջն, ո՛պ ասէ զ՛տէ աստուծոյ աբրահամու, և զաստուծոյ իսահակայ, և զաստուծոյ յակոբայ․

Այլ ա՛ծ չէ մեռելոց այլ կենդանեաց, զի ամենեքին նմա կենդանիք են ․

Պատասխանի ետուն ոմանք ՚ի դպրացն և ասեն ․ վարդապետ բարւոք ասացեր ․

մտ Բ Եւ ոչ ևս ոք իշխէր հարցանել զնա և ոչ ինչ ․

Ասէ

Ղ Ճ Փ
մգ մղ ԺԵ

ճժե
բ
,դ Աւէ և առ-
նէ՛, զի՛արդ
ասեն զ.քսէ
թէ որդի է դաւթի .
Զի ինքն դաւիթ ա
սէ 'ի գիրս սաղմոսաց
ասաց տր ցտր իմ, նիստ
ընդ աջմէ իմէ .
Մինչև եդից զթշնա
միս քո պատուանդան
ոտից քոց .
Իսկ արդ եթէ դաւիթ
զնա տր կոչէ, զի՛արդ որ
դի նորա իցէ .
ճլ
բ Եւ լսելով ամենայն
ժողովրդեանն՝ ասէ ցա
շակերտսն .
Զգոյշ լերուք 'ի
դպրացն, որք կամին
պատմուճանօք շրջել .
և սիրեն ողջոյնս 'ի հրա
պարակս, և զնախա
թոռս 'ի ժողովուրդս,
և զբարձերէցս յընթ
րիս .
մժէ
ն Որք ուտեն զտունս
այրեաց, և պատճա
ռանօք յերկարեն զա
ղօթս, նոքա ընկալցին
աւելի դատաստանս .
ԻԱ Եւ հայեցեալ ետես
զմեծատունս, որք ար
կանէին զտուրս իւր
եանց 'ի գանձանակն .
Ետես և զկին ոմն այրի
աղքատ, որ էարկ անդր
երկուս լումայս .
Եւ ասէ արդարև ա
սեմ ձեզ, զի այրին այն
աղքատ աւելի էարկ
քան զամենեսին .
Զամենեքին նոքա 'ի
մթերից իւրեանց ար
կին յընծայսն աստու
ծոյ, բայց նա 'ի կարօ
տութենէ իւրմէ զամ
զկեանս իւր զոր ունէր,
էարկ . Եւ

է մ փ
ճժե ճժե ճլդ
ճժէ ճժթ ճլե

է մբ
ճժե ճլէ

փք
բ
Եւ յասել ոմանց զտաճարէն, թէ գեղեցիկ վիմօք եւ աշտարակօք զարդարեալ է, ասէ։
Այդ ամենայն, զոր տեսանէք եկեսցեն աւուրք յորս ոչ թողցի այդր քար ՚ի քարի վերայ, որ ոչ քակտեսցի։
փք
բ
ՀՕ. Հարցին ցնա եւ ասեն, վարդապետ՝ երբ լինիցի այդ. եւ զինչ նշան իցէ յորժամ այդ լինելոց իցէ։
Եւ նա ասէ. զգոյշ կացէք, մի խաբիցիք, զի բազումք գայցեն յանուն իմ, եւ ասասցեն թէ ես եմ, եւ մերձեցաւ ժամանակ, մի՝ երթայցէք զկնի նոցա։
Եւ յորժամ լսիցէք պատերազմունս եւ խռովութիւնս մի՝ զարհուրիցիք. զի պարտ է նախ այդմ լինել, այլ ոչ առժամայն կատարած։
Յայնժամ ասէ ցնոսա, յարիցէ ազգ յազգի վերայ. եւ թագաւորութիւն ՚ի թագաւորութեան վերայ։
Եւ շարժմունք մեծամեծք. եւ ՚ի տեղիս տեղիս սովք եւ սրածութիւնք, եւ եղիցին արհաւիրք, եւ նշանք մեծամեծք յերկնից։
փք
Ա
Բայց յառաջ քան զայս ամենայն, մխեսցեն ըզձեռս իւրեանց ՚ի ձեզ, եւ հալածեսցեն, եւ մատնեսցեն ՚ի ժողովուրդս եւ ՚ի բանտս. եւ տանիցին առաջի դատաւորաց եւ թագաւորաց

քաց վասն անուան իմոյ ։
Եւ լինիցի ձեզ այն ՚ի
վկայութիւն ։
մծա բ Արդ՝ դիք ՚ի սիրտս ձեր
մի յառաջագոյն կրթել
տալոյ պատասխանի ։
Զի ես տաց ձեզ, բե
րան և իմաստութիւն,
որում ոչ կարիցեն կալ
հակառակ, կամ տալ
պատասխանի ամ̃ հակա
ռակորդք ձեր ։
Մատնեսջիք և ՚ի ծնո
ղաց, և յեղբարց, և յազ
գականաց, և ՚ի բարեկա
մաց, և սպանանիցեն
՚ի ձէնջ ։
Եւ եղիջիք ատեցեալք
յամենեցունց վասն ա
նուան իմոյ ։
Եւ մազ մի ՚ի գլխոյ
ձերմէ ոչ կորիցէ ։
Եւ համբերութբ̃ ձե
րով ստասջիք զոգիս ձեր

մծբ ժ Այլ յորժամ տեսանի
ցէք շուրջ պատեալ
զօրօք զեմ̃, յայնժամ
գիտասջիք թէ մերձ է
աւեր նորա ։
մծգ բ Յայնժամ որք ՚ի հրէ
աստանի իցեն, փախի
ցին ՚ի լերինս, և որք
՚ի միջի նորա իցեն,
խուսեսցեն, և որք ՚ի
գաւառսն իցեն, մի
մտցէ ՚ի նա ։
Զի աւուրք վրէժ
խնդրութե̃ են այնոքիկ,
առ ի կատարելոյ ամե
նայն գրելոց ։
մծդ բ Բայց վայ իցէ յղեաց
և ստնդուաց յաւուրսն
յայնոսիկ ։
մծե բ Զի եղիցի տագնապ
մեծ ի վերայ երկրի, և
բարկութիւն ժողովրդ
եանն այնմիկ ։
մծզ ժ Եւ անկցին ՚ի սուր սու
սերի,

| Ղ | Մ | Մր |
|---|---|---|
| մծա | ձը | ճլա |

| Ղ | Մ | Մր |
|---|---|---|
| մծբ | . | . |
| մծգ | մճէ | ճխգ |
| մծդ | մլթ | ճխդ |
| մծե | մծա | ճխէ |
| մծզ | . | . |

սերի, և գերեսցին յա մենայն հեթանոսս, և Եէմ եղիցի կոխան ազ գաց, մինչև կատարես ցին ժամանակք հեթա նոսաց։

ժե Բ Եւ եղիցին նշանք յարե գակն, և 'ի լուսինն, և յաստեղս, և յերկրի տագնապ հեթանոսաց, յահեղ բարբառոյ, եբրև ծովու և խռովութե։

Ցելանելոյ ոգւոց մարդ կան յերկիւղէ, և 'ի կարծեաց եկելոց 'ի վե տիեզերաց. զի զօրու թիւք երկնից շարժես ցին։

ժը Բ Եւ յայնժամ տեսցեն զորդի մարդոյ՝ եկեալ ամպօք, զօրութբ, և փառօք բազմօք։

Եւ յորժամ սկսանիցի այս լինել, ամբարձջիք և բարձրացուսջիք զգլ լուխս ձեր, զի մերձ է փրկութի ձեր։

Եւ ասաց առակ մի նո ցա, տեսէք զթզենիդ և զամենայն ծառ։

Յորժամ ցուցանիցեն զպտուղ իւրեանց, տեսանէք, և 'ի նոցա նէ ճանաչէք թէ մերձ է ամառն։

Նոյնպէս և դուք յոր ժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, գիտաս ջիք թէ մերձ է արքա ութին աստուծոյ։

Ամէն ասեմ ձեզ. թէ ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամենայն լի նիցի։

Երկինք և երկիր անց ցեն, և բանք իմ ոչ ան ցանիցեն։

ժթ Դ Զգոյշ լերուք ան ձանց

Զ Է Ժբ
ժե ժը ճձ
ԽԶ ժթ ճծա

Զ
ժթ

ձանց, գուցէ ծանրա
նայցեն սիրտք ձեր շու
այտութբ և արբեցու
թբ, և հոգովք աշխար
Մկ հականօք. և յանկար
ծակի հասանիցէ ի վր
ձեր օրն այն.
Զի իբրև որոգայթ
հասանիցէ ի վր ամենե
ցուն, որք բնակեալ են
ընդ ամ երեսս երկրի.
Արթուն կացէք այսու
հետև, յամենայն ժամ
աղօթս արարէք, զի
արժանի լինիջիք զեր
ծանել յայնմ յամենայնէ
որ լինելոց է, և կալ
առաջի որդւոյ մարդոյ.
Եւ ՚ի տուէ ՚ի տաճա
րին ուսուցանէր, և
զգիշերն ելեալ ագա
նէր ՚ի լերինն որ կոչիւր
Ձիթենեաց.
Եւ ամենայն ժողովուր
ԽԲ

դըն կանխէր ընդ ա
ռաւօտս առ նա ՚ի տա
ճարն լսել ՚ի նմանէ.
Մերձեցաւ տօն
բաղարջակե րաց
րացն, որ կո
չիւր փասքայ.
Մկա Ա Եւ խնդրէին քահա
նայապետքն և դպիրք
թէ որպէս սպանանիցեն
զնա, բայց երկնչէին
՚ի ժողովրդենէ անտի.
Մկբ Թ Եմուտ սատանայ
՚ի յուդայ ՚ի կոչեցեալն
իսկարիովտացի, որ էր
՚ի թուոյ երկոտասա
նիցն.
Մկգ Բ Չոգաւ եդ բանս ընդ
քահանայապետսն և ընդ
դպիրս և ընդ իշխանս
ժողովրդեանն, զի
մատնեսցէ զնա նոցա.
Եւ խնդացին, և խոս
տացան

Դ Յ Մ Մր
Մկ Իխշ Ղգ Մ: Ճծգ
Մկա Հե Փ Ճիէ ՃկԹ Ճծե
Մկբ Ճձջ Ճկե .
Մկգ . Փե Ճէ

տացան տալ նմա զար ծաթ.

Եւ յանձն էառ, եւ խնդրէր պարապ մատնել զնա նոցա՝ մեկուսի յամբոխէ անտի:

Եկն օր բաղարջակերացն, յորում օրէն էր զենուլ զպասեքն:

Եւ առաքեաց զպետրոս, եւ զյոհաննէս եւ ասէ, երթայք պատրաստեցէք մեզ զպասեքն, զի կերիցուք:

Եւ նոքա ասեն, ուր կամիս զի պատրաստես ցուք:

Եւ ասէ ցնոսա, ահա իբրեւ մտանիցէք 'ի քաղաքն, պատահեսցի ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ, երթիջիք զհետ նորա 'ի տունն, յոր մտանիցէ:

Եւ ասասջիք ցտանուտէր տանն, վարդապետն ասէ քեզ. ուր են վանք նիմ, յորում զպասեքն ուտիցեմ աշակերտօքս հանդերձ:

Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ, եւ անդ պատրաստեսջիք:

Եւ գնացեալ գտին, որպէս եւ ասաց նոցա, եւ պատրաստեցին զպասեքն:

Եւ իբրեւ ժամ եղեւ, բազմեցաւ, եւ երկոտասան առաքեալքն ընդ նմա:

մդ Ժ Եւ ասէ ցնոսա, ցանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ, մինչչեւ չարչարեալ իցեմ:

մե Ե Բայց ասեմ ձեզ, թէ ոչեւս

| | | |
|---|---|---|
| զ | մ | մր |
| մդ | . | . |
| մե | մձե | ճկզ |

ոչեւս կերից 'ի սմանէ, մինչեւ լցցի յարքայութեան աստուծոյ :

Եւ ընկալեալ բաժակ գոհացաւ, եւ ասէ, առէք զայդ եւ բաժանեցէք 'ի ձեզ :

Ասեմ ձեզ թէ յայսմ հետէ ոչ արբից 'ի բերոյ որթոյ, մինչեւ եկեսցէ արքայութիւն աստուծոյ :

մկզ Ա Եւ առեալ հաց՝ գոհացաւ, եբեկ, եւ ետ նոցա՝ եւ ասէ :

Այս է մարմին իմ, որ վասն բազմաց տուեալ . զայս արասջիք առ իմոյ յիշատակի :

մկէ Բ Նոյնպէս եւ զբաժակն յետ ընթրեացն էառ եւ ասէ . այս բաժակ է նոր ուխտ, իմով արեամբ վասն բազմաց հեղլոյ :

մկը Բ Բայց աւասիկ ձեռն մատնչի իմոյ՝ ընդ իս 'ի սեղանս :

Եւ որդի մարդոյ՝ ըստ սահմանելոյն երթայ, բայց վայ մարդոյն այնմիկ, յոր ձեռն մատնիցի :

մկթ Ա Եւ նոքա սկսան խնդրել ընդ միմեանս՝ թէ ով է 'ի նոցանէ . որ զայն գործելոց իցէ :

մհ Բ Եւ եղեւ հակառակութիւն 'ի մէջ նոցա, թէ ով 'ի նոցանէ համարիցի մեծ :

Եւ նա ասէ ցնս՞, թագաւորք ազգաց տիրեն նոցա, եւ որք իշխենն նոցա բարերարք կոչին :

Այլ դուք ոչ այնպէս, այլ որ մեծն է 'ի ձեզ, եղիցի իբրեւ զկրտսերն, եւ առաջնորդն իբրեւ

զսպա

| Ղ | Յ | Մ | Մր |
|---|---|---|---|
| մկզ | ծե կգ-կէ կզ | մշե | ճկե |
| մկէ | . | մձե | ճկզ |

| Ղ | Յ | Մ | Մր |
|---|---|---|---|
| մկ, | . | մշա | ճկգ |
| մկթ | փբ | մշ | ճկբ |
| մհ | . | մգ | ճժէ |

զսպասաւոր ։
մհա Ժ Ո՛վ է մեծ, բազմականն եթէ սպասաւորն, ոչ ապաքէն բազմականն ․ բայց ես եմ ՚ի միջի ձեր որպէս սպասաւոր ։ Եւ դուք էք որք ցանկ կացէք ընդ իս ՚ի փորձութիւնս իմ ։ Եւ ես ուխտեմ ձեզ ․ որպէս եւ Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն ։ Զի ուտիջիք , եւ ըմպիջիք , ՚ի սեղանն իմ յարքայութեան իմում ․
մհբ Ե Եւ նստջիք յերկոտասան աթոռս, դատել զերկոտասան ազգն Իսրայէլի ․
մհգ Դ Եւ ասէ Տէր , Սիմոն՝ Սիմոն , ահա սատանայ խնդրեաց զձեզ խարբալել իբրեւ զցորեան ․ Բայց ես աղաչեցի վասն քո զի մի՛ պակասեսցին հաւատք քո ․
մհդ Թ Եւ դու երբեմն դարձցիս , եւ հաստատեսցես զեղբարս քո ․ Եւ նա ասէ ցնա ․ Տէր , ընդ քեզ պատրաստ եմ եւ ՚ի բանտ եւ ՚ի մահ երթալ ։
մհե Ա Եւ նա ասէ ցնա ․ ասեմ քեզ Պետրէ , չիցէ այսօր հաւու խօսեալ մինչ երիցս ուրասցիս զիս չգիտել ։
մհզ Ժ Եւ ասէ ցնոսա , յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի եւ մախաղի եւ կօշկաց , միթէ կարօտացայք իմիք ․ Եւ նոքա ասեն , եւ ոչ իմիք ․ Բայց ասէ , այլ այժմ որ ունի զքսակ բարձցէ նոյնպէս եւ զմախաղ , եւ որ

| Ղ | Մ |
|---|---|
| մհա | . |
| մհբ | [illegible] |
| մհգ | . |

| Ղ | Յ | Մ | Փ |
|---|---|---|---|
| մհդ | ճկե ճլթ | . | . |
| մհե | ճկզ | մձթ | [illegible] |
| մհզ | . | . | . |

որ ոչն ունի՝ վաճառեսցէ զձորձս իւր և գնեսցէ իւր սուսեր ։
ՄՀԵ Ը Բայց ասեմ ձեզ, զի այս ևս որ գրեալ է՝ պարտ է զի կատարեսցի յիս, թէ ընդ անօրէնս համարեցաւ. զի որ վասն իմ ինչ է վճարեալ է ։ Եւ նոքա ասեն. Տէր՝ ահաւասիկ են աստ երկու սուրք ։
ՄՀԶ Ժ Եւ նա ասէ ցնոսա բաւական են ։
ՄՀԹ Ը Եւ ելեալ գնաց ըստ սովորութեան ՚ի լեառն ձիթենեաց, գնացին զհետ նորա և աշակերտքն ։
ՄՁ Ե Իբրև եհաս ՚ի տեղին, ասէ ցնոսա. յաղօթս կացէք չմտանել ՚ի փորձութիւն ։
ՄՁԱ Ա Եւ ինքն մեկնեցաւ ՚ի նոցանէ իբրև քարընկեց մի. եդ ծունր կայր յաղօթս ։
ՄՁԲ Ա Եւ ասէր, Հայր՝ եթէ կամիս անցո՛ զբաժակս զայս յինէն ։
ՄՁԳ Ա Բայց ոչ որպէս իմ կամք, այլ քո լիցի ։ Եւ երևեցաւ նմա հրեշտակ յերկնից՝ և զօրացուցանէր զնա. և էր ՚ի տագնապի, և մտադիւրութեամբ ևս կայր յաղօթս ։ Եւ հոսեին ՚ի նմանէ քրտունք իբրև զկայլակս արեան, ոլոռն, ոլոռն, հեղեալ յերկիր,
ՄՁԴ Բ Եւ յարուցեալ յաղօթից եկն առ աշակերտսն, եգիտ զնոսա ՚ի քուն ՚ի տրտմութենէ ։ Եւ ասէ ցնոսա, զի՞ ննջէք, արիք, կացէք յա

| Ղ | Յ | Մ | Մր |
|---|---|---|---|
| ՄՀԵ | . | . | ՄԺՂ |
| ՄՀԶ | . | . | . |
| ՄՀԹ | ԾԺԶ | ՄՂԱ | ՃԿԲ |
| ՄՁ | . | ՄԼԶ | ՃՀԵ |
| ՄՁԱ | ԾԿԱ | ՄՂԳ | ՃՀԶ |

| Ղ | Յ | Մ | Մր |
|---|---|---|---|
| ՄՁԲ | ԾԿ | ՄՂԵ | ՃՀԷ |
| ՄՁԳ | ԽԲ | ՄՂԷ | ՃՀԳ |
| ՄՁԴ | . | ՄՂԸ | ՃՀԸ |

յաղօթս զի մի' մտանի
ցէք 'ի փորձութիւն ։
մհե Ա Եւ մինչդեռ խօսէր,
ահաւասիկ ամբոխ, և
որ կոչէրն Յուդա, մի
յերկոտասանիցն առաջ
նորդէր նոցա ։
մհզ Ժ Իբրև մերձեցաւ առ
Յս՟ համբուրեաց զնա,
քանզի զայն նշան տու
եալ էր նոցա, թէ ընդ
որում ես համբուրե
ցից, նա է զնա ունի
ցիք ։
Ասէ ցնա Յս՟, Յուդա,
համբուրելով մատնես
զորդի մարդոյ ։
մհէ Ա Իբրև տեսին, որք
զնովաւն էին որ ինչ
եղև, ասեն ցնա. Տր՟,
հարցուք զնոսա սրով ։
Եւ եհար միոմն 'ի նո
ցանէ զքահանայապե
տին ծառայ, և եհատ
զաջոյ ունկն նո
րա ։
Պատասխանի ետ Յս՟ և
ասէ, թոյլ տուք մին
չև ցայդ վայր.
մհը Ժ Եւ մատուցեալ յունկն
բժշկեաց զնա.
մհթ Ա Եւ ասէ ցեկեալսն ի վե
րայ նորա, ցքահանայա
պետսն՝ և ցիշխանսն տա
ճարին՝ և ցծերս, Իբրև
ի վՐ՟ աւազակի ելէք սու
սերօք և բրօք.
Հանապազ ընդ ձեզ էի
'ի տաճարին, և ոչ ձգե
ցէք ձեռս յիս, այլ այս
է ձեր ժամ, և իշխա
նութիւն խաւարին ։
մձ Ա Եւ կալեալ զնա ածին,
և մուծին 'ի տուն քա
հանայապետին ։
մձա Ա Եւ պետրոս երթայր
զկնի նորա հեռագոյն ։
Իբրև լուցին զկրակ
ի մէջ

| Ղ | Յ | Մ | Փ |
| --- | --- | --- | --- |
| մհե | հթ ճխը | յ | ճճա |
| մհզ | · | · | · |
| մհէ | ճկ | յբ | ճճգ |

| Ղ | Յ | Մ | Փ |
| --- | --- | --- | --- |
| մհը | · | · | · |
| մհթ | ճհ | յփ | ճճփ |
| մձ | ճկբ | յգ | ճճէ |
| մձա | ճկզ | յճփ | ճզե |

ի մէջ գաւթին , եւ նս
տան շուրջ , նստաւ
եւ պետրոս 'ի մէջ նո
ցա ։
Տեսեալ զնա աղախնին
ոմն զի նստէր առ լուսն ,
հայեցաւ ընդ նա եւ
ասէ , եւ սա ընդ նոսա
էր ․ որք ընդ նմա էին ։
Իսկ պետրոս ուրացաւ
եւ ասէ ․ ոչ գիտեմ զնա
կին դու ։
մէ Ա Եւ յետ սակաւ միոյ
այլ ոմն ետես զնա եւ
ասէ , եւ դու 'ի նոցա
նէ ես ։
Եւ պետրոս ասէ այր
դու չեմ 'ի նոցանէ ։
Եւ իբրեւ ժամ մի
եանց ի վ̄ր , այլ ոմն վի
ճէր եւ ասէր , ստոյգ
եւ սա ընդ նմա էր ,
քանզի գալիլեացի է ։
Ասէ պետրոս , այր
դու , չգիտեմ զինչ
խօսիս ։
Եւ առժամայն մինչ
դեռ զայն ասէր , խօսե
ցաւ հաւ ։
մդ Բ Դարձաւ տէր , եւ հայե
ցաւ 'ի պետրոս ․
Եւ յիշեաց պետրոս
զբանն տեառն , զոր
ասաց ցնա ․ մինչչեւ հաւ
ու խօսեալ իցէ , եր
իցս ուրասցիս չգիտել
զիս ։
Եւ ելեալ արտաքս ե
լաց դառնապէս ։
մդ Բ Եւ արքն , որք պա
հէին զնա , այպն առ
նէին զնովաւ , եւ հար
կանէին ։
Ծածկէին զերեսս նո
րա եւ տանջէին , եւ հար
ցանէին ցնա եւ ասէին ,
մարգարէացի ով է որ
եհարն զքեզ ։
Եւ

| Ղ | Յ | Մ | Մր |
|---|---|---|---|
| մդէ | ծհե | յժե | ծղզ |
| մդգ | . | յժզ | ծղե |
| մղդ | յժգ | յժդ | ծլգ |

յղե ժ Եւ այլ բազում ինչ հայ
հոյութե՛ խօսէին 'ի նա ․

Եւ իբրեւ այգ
եղեւ , ժողո
վեցաւ ծե
րակոյտ ժո
ղովրդեանն , քահա
նայապետքն , եւ դպիրք
եւ հանին' ածին զնա
յատեանն իւրեանց , եւ
ասեն , թէ դու ես
քս՞ն , ասա՛ մեզ ․
յղզ ժ Ասէ ցնոսա ․ եթէ
ասացից ձեզ՝ սակայն ոչ
հաւատայք ․
Եւ եթէ հարցից ինչ
զձեզ չտայք ինձ պա
տասխանի , կամ արձա
կիցէք ․
յղէ Ա Բայց յայսմ հետէ նստ
ցի որդի մարդոյ ընդ
աջմէ զօրութեան աս
տուծոյ ․

յղը թ Եւ ասեն ամենեքեան ․
ուրեմն դու ես որդին
աստուծոյ ․
Եւ նա ասէ ցնոսա ․
դուք ասէք թէ ես եմ ․
յղթ Բ Եւ նոքա ասեն , զինչ
եւս պիտոյ է մեզ վկայ
ութի , զի մեզէն իսկ
լուաք 'ի բերանոյ դո
րա ․
յ Ա Եւ յարուցեալ ա՟մ բազ
մութի նոցա , ածին
զնա առ պիղատոս ․
յա ժ Եւ սկսան չարախօս
լինել զնմանէ եւ ասել ․
գտաք զդա ․ զի թիւրէր
զազգս մեր , եւ արգե
լոյր 'ի տալոյ հարկս կայ
սեր , եւ ասէր զանձնէ
եթէ քս՞ն իցէ թագա
ւոր ․
յբ Ա Իսկ պիղատոս եհարց
զնա եւ ասէ , դու ես թա
գաւորն հրէից ․

| Ղ | Մ | Մ | Մր |
|---|---|---|---|
| յղե | ․ | ․ | ․ |
| յղզ | ․ | ․ | ․ |
| յղէ | կթ | յժ | ճղա |

| Ղ | Մ | Մ | Մր |
|---|---|---|---|
| յղը | ․ | ․ | ․ |
| յղթ | ․ | յժբ | ճզ |
| յ | ճհզ | յժը | ճւթ |
| յա | ․ | ․ | ․ |
| յբ | ճհը | յի | ճ |

Եւ

Նա պատասխանի ետ նմա եւ ասէ, դու ասացեր ։

ՅԳ Թ Ասէ պիղատոս ցքահանայապետսն եւ ցժողովուրդսն, չգտանեմ ինչ վնաս յառնս յայսմիկ ։

ՅԴ Ժ Եւ նոքա պնդէին եւ ասէին, եթէ խռովէ զժողովուրդս, ուսուցանէ ընդ ամ Հրէաստան, սկսեալ ՚ի գալիլեէ մինչեւ ցայսր ։

Իսկ պիղատոս իբրեւ լուաւ զգալիլեէ, եհարց եթէ գալիլեացի իցէ այրն ։

Եւ իբրեւ գիտաց եթէ յիշխանութէն հերովդի է, ետ տանիլ զնա առ հերովդէս, քանզի եւ նա յեմ էր յաւուրսն յայնոսիկ ։

ԽԳ

Է Յ
ՅԴ ՃԼ
ՅԵ .

Եւ հերովդէս իբրեւ ետես զյս, ուրախ եղեւ յոյժ. զի ցանկայր ՚ի բազում ժամանակաց տեսանել զնա, քանզի լսէր բազում անգամ զնմանէ, եւ ակն ունէր նշան ինչ լեալ տեսանել ՚ի նմանէ ։

Հարցանէր զնա բանիւք բազմօք, եւ նա ոչ ինչ ետ նմա պատասխանի ։

ՅԵ Ժ Կային քահանայապետքն՝ եւ դպիրք, եւ պնդագոյնս չարախօսէին զնմանէ ։

ՅԶ Բ Արհամարհեաց զնա եւ հերովդէս հանդերձ իւրովք զօրականօքն, եւ այպն արարեալ էարկ զնովաւ հանդերձս սպիտակս, եւ ետ տանիլ անդրէն առ պիղատոս ։

Եւ

Է Մ Մի
ՅԵ . .
ՅԶ ՅԸ ՃՀԹ

Եւ եղեն բարեկամք Պիղատոս եւ Հերովդէս յաւուրն յայնմիկ. քանզի յառաջ թշնամիք էին միմեանց։

ՅԺԵ Ժ Կոչեաց Պիղատոս զքահանայապետսն, եւ զիշխանս, եւ զժողովուրդն։

Եւ ասէ ցնոսա. ածիք մատուցէք ինձ զայրս զայս իբրեւ զխոտորեցուցիչ ժողովրդեանն, եւ ահաւասիկ առաջի ձեր դատեցի, եւ վնաս ինչ ոչ գտի յառնս յայսմիկ, զորոյ դուք չարախօսէքդ զդմանէ։

ՅԺԶ Ժ Այլ եւ ոչ Հերովդէս, քանզի եառ տանիլ զդա առ նա, եւ արդ ոչինչ մահու արժանի է գործեալ դորա. խրատեցից զդա, եւ արձակեցից։

ՅԺԷ Բ Զի հարկ էր մի մի ըստ տօնի արձակել նոցա։

ՅԺԸ Ա Եւ նոքա աղաղակէին ամ բաղումբն եւ ասէին, բարձ զդա. եւ արձակեա մեզ զԲարաբբայն։ Որ էր վասն խռովութեան իրիք եղելոյ 'ի քաղաքին, եւ սպանութեան մտեալ բանտ։

ՅԺԹ Ա Դարձեալ Պիղատոս ձայնէր խօսել, քանզի կամէր արձակել զՅս։ Եւ նոքա անդրէն աղաղակէին եւ ասէին, 'ի խաչ հան զդա։

ՅԻ Թ Եւ նա երիցս ասէ ցնոսա, զինչ չար արար սա, ոչինչ վնաս մահու գտի 'ի սմա, խրատեցից զսա, եւ արձակեցից։

ՅԻԱ Ա Եւ նոքա ստիպէին մեծաւ

| | |
|---|---|
| Ղ | Յ |
| ՅԺԵ | ՃԿԲ |
| ՅԺԶ | . |

| | | | |
|---|---|---|---|
| Ղ | Յ | Մ | Մտ |
| ՅԺԸ | . | ՄԽԲ | ՄԲ |
| ՅԺԹ | ՃԿԴ | ՄԽԵ | ՄԳ |
| ՅԻ | ՃԿԸ | ՄԽԼ | ՄԵ |
| ՅԻԱ | ՃԿԶ | . | . |
| ՅԻԲ | ՃԿԵ | ՄԽԻ | ՄԿ |

մեծամձայն և խնդրէին զնա 'ի խաչ հանել, և զօրանային բարբառք նոցա, և քահանայապետ աւրցն.

ծժդ Ա Եւ պիղատոս հաւանեցաւ առնել զհայցուածս նոցա.

Արձակեաց նոցա զբարաբայն. զոր վասն խռովութեան և սպանութեան արկեալ էր 'ի բանտ, զոր և խնդրէինն իսկ, և զյս̃ մատնեաց կամաց նոցա:

ծժե Ա Իբրև տանէին զնա, ըմբռնեցին զոմն սիմոն կիւրենացի որ գայր յանդէ, եդին ի վերայ նորա զխաչն բերել զկնի յս̃ի.

ծժզ Չ Մ Եւ երթայր զհետ նորա բազմութիւն ժողովրդեանն, և կանանց, որք կոծէին. և աշխարէին զնա.

Դարձաւ յս̃ և ասէ ցնոսա, դստերք եր̃մի' մի' լայք ի վերայ իմ, այլ լացէք ի վերայ անձանց' և ի վերայ որդւոց ձերոց:

Զի եկեսցեն աւուրք յորս ասիցեն, թէ երանի ամլոց և որովայնից որք ոչ ծնան, և ստեանց, որք ոչ դիեցուցին:

Յայնժամ սկսանիցեն ասել լերանց. թէ անկերուք ի վերայ մեր, և բլրոց թէ ծածկեցէք զմեզ:

Զի եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զինչ լինիցի.

ծժէ Ա Ածին և այլ երկուս չարագործս, սպանանել

զ յ մ մր
ծժզ չըզ ձխե փզ
ծժե չըէ ձխը ճփ
ճժզ : : :

զ յ մ փ
ծժէ չըը ձկզ ձժէ

նել ընդ նմա ։
յժը Ա Եւ իբրեւ չոգան ՚ի տեղին
կոչեցեալ գագաթ ,
անդ հանին զնա ՚ի խաչ ։
յժթ Ա Եւ զչարագործսն զոմն
ընդ աջմէ , և զոմն ընդ
ձախմէ խաչեցին ։
յի Ժ Եւ յս̃ ասէ ․ հա̃յր ,
թող դոցա , զի ոչ գի
տեն զինչ գործեն ։
յիա Ա Եւ ՚ի բաժանել զհան
դերձս նորա՝ արկին վի
ճակս ։
Եւ կայր ժողովուրդն
հայեցեալ ։
յիբ Բ Ընդոսնէին զնա և
իշխանքն հանդերձ նո
քօք , և ասէին , զայլս
ապրեցոյց , ապրեցուս
ցէ և զանձն եթէ դա
է քս̃ , որդի աստու
ծոյ ընտրեալն ։
յիգ Բ Այպն առնէին զնա և
զինուորքն , եկեալ

| ղ | յ | մ | մր |
|---|---|---|---|
| յժը | ճլէ | յլէ | մժ |
| յժթ | ճլը | յլը | մժէ |
| յի | · | · | · |
| յիա | ժա | յլգ | մժը |
| յիբ | · | յլը | մժը |
| յիգ | · | յխը | միը |

առաջի մատուցանէին
նմա քացախ ։
Եւ ասէին , եթէ դու
ես թագաւորն հրէից՝
փրկեա՛ զանձն քո ․
յիդ Ա Եւ էր գիր գրեալ ՚ի վե՛ր
նորա ․ յունարէն , և
դաղմատերէն , և եբ
րայեցերէն գրով ․ ե
թէ սա է արքայն հրէ
ից ։
յիե Բ Իսկ միոմն ՚ի կախելոց
չարագործացն հայհոյ
էր զնա , և ասէր ․ ոչ
դու ես քս̃ն , փրկեա՛
զանձն քո , և զմեզ ։
յիզ Բ Պատասխանի ետ ըն
ՁՐ կերն սաստելով նմա ,
և ասէ , չերկնչիս դու
յաստուծոյ , զի ՚ի նմին
պատժի կաս ․ և մեք
յիրաւի , զի արժանի
որոց գործեցաքն առ
նումք զհատուցումն ,
և

| ղ | յ | մ | մր |
|---|---|---|---|
| յիդ | ճղթ | յլե | մժդ |
| յիե | · | յլթ | մժթ |
| յիզ | · | յլթ | ճժթ |


ՅՆՌՀ

և սա ապիրատ ինչ ոչ գործեաց ։

Եւ ասէ ցյս̃, յիշեա՛ զիս տ̃ր՝ յորժամ գայցես արքայութբ̃ քով ։

Եւ ասէ ցնա յս̃, ամէն ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես ՚ի դրախտին ։

յխ̃ բ Եւ էր իբրեւ վեց երորդ ժամ ; և խաւար եղեւ ի վ̃ր ամ երկրի՝ մինչեւ ցիններորդ ժամն, խաւարեցաւ արեգակն ։

յխա բ Եւ հերձաւ վարագոյր տաճարին ընդ մէջ ։

Եւ կարդաց յս̃ ՚ի ձայն մեծ, և ասէ ։

յխբ Ա Հայր՝ ՚ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ ։

Զայս իբրեւ ասաց, ե հան զոգի ։

յխգ բ Եւ տեսեալ հարիւրապետին որինչ եղեւն, փառաւոր արար զա̃ծ և ասէ, արդարեւ՝ այրս այս արդար էր ։

յլ̃ ձ Եւ ամ ժողովուրդն, որք եկեալ էին, և տեսանէին զտեսիլն զայն և զգործ, բախէին զկուրծս և դառնային ։ Կային և ամ ծանօթքն նորա ՚ի հեռաստանէ, և կանայք, որք եկեալ էին զհետ նորա ՚ի գալիլեէ տեսանէին զայն ։

յլէ ԶԳ Եւ ահա այր մի անուն յովսէփ, որ էր նախարար ։ այր բարեգործ՝ և արդար ։

Նա չէր միաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա, յարեմաթեայ քաղաքէ հրէից, որ

| Ղ | Յ | Մ | Մ |
| --- | --- | --- | --- |
| յլէ | · | յհ | մլ |
| յլը | · | յհ | մլը |
| յլթ | ձը | յհը | մլը |
| յխ | · | յհշ | մխ |

| Ղ | Յ | Մ | Մ |
| --- | --- | --- | --- |
| յխա | · | · | · |
| յխբ | ձշ | յհէ | մխ |



որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեանն Աստուծոյ։ Սա մատուցեալ առ Պիղատոս, խնդրեաց զմարմինն յի̃ի։

յլգ Ե Եւ իջուցեալ զնա պատեաց պատատանաւկաւ, և եդ 'ի կառածոյ գերեզմանին, ուր չէր բնաւ զոք եդեալ։

յլդ Ժ Եւ օրն էր ուրբաթ, և շաբաթ լուսանայր։ Եւ երթային զհետ նր̃ կանայք, որք եկեալ էին ընդ նմա 'ի Գալիլեէ, տեսին զգերեզմանն, և որպէս եդաւ մարմին նորա։

յլե Է Դարձան, և պատրաստեցին խունկս և իւղս, և 'ի շաբաթուն հանդարտեցին վս̃ պատուիրանին։

| ղ | ճ | մ | մր |
|---|---|---|---|
| յլգ | ժզ | յխթ | ժը |
| յլդ | ։ | ։ | ։ |
| յլե | ։ | — | ն |

ՅԼԶ Ա ՁԴ Ի միաշաբաթուն վաղ փոյթ ընդ առաւօտն, եկին 'ի գերեզմանն, բերին զխունկսն, զոր պատրաստեցին, և այլ կանայք ընդ նոսա։ Եւ գտին զվէմն թաւալեցուցեալ 'ի գերեզմանէ անտի. Եւ մտեալ 'ի ներքս ոչ գտին զմարմին տեառն յի̃ի. Եւ եղև ընդ հիանալն նոցա վասն այնորիկ, և ահա արք երկու հասին առ նոսա 'ի հանդերձս լուսաւորս։

յլէ Ա Եւ իբրև զահի հարան և խոնարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր. ասեն ցնոսա, զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս։

Չէ

| ղ | ճ | մ | մր |
|---|---|---|---|
| յլզ | ·թ | յհբ | ·լա |
| յլէ | ժժա | յհգ | ·լբ |

Չէ աստ, այլ յարեաւ.
Յիշեցէք որպէս խօսեցաւ
ընդ ձեզ, մինչ էր ՚ի Գա
լիլեա. և ասէր թէ
պարտ է որդւոյ մար
դոյ մատնիլ ՚ի ձեռս մար
դոց մեղաւորաց, և
՚ի խաչ ելանել և յեր
րորդ աւուր յառնել:
Եւ յիշեցին զբանսն
նորա:
ԼԷ Բ Եւ դարձան, պատմե
ցին զայս ամ՟ մետասա
նիցն, և այլոցն ամենե
ցուն:
ԼԹ Եւ էին Մարիամ Մագ
դաղենացի, և Յոհան
նա. և Մարիամ Յակո
բայ. և այլք ընդ նո
սա, որք պատմեցին
զայս առաքելոցն.
Եւ երևեցան առաջի
նոցա շաղփաղփութի
բանք նոցա, և չհաւա

ԽՍԴ.

ՅՂ Մ Մկ
ՅԼԲ ՅԾԴ ՄԼԶ
ԼԹ . .

տային նոցա.
Բայց Պետրոս յարու
ցեալ ընթացաւ ՚ի գե
րեզմանն, և հայեց
եալ տեսանէ զկտաւսն
լոկ, զի կային, և գնաց
ընդ միտս զարմացեալ
թէ զինչ եղև.

ՁԵ Եւ ահա՛ եր
կուք ՚ի նոցա
նէ երթային
՚ի նմին աւուր ՚ի գեօղ
մի, որ հեռի էր յե՟րմէ
հարիւր և վաթսուն
ասպարիսաւ, և էր
անուն նորա Էմմա
ուս.
Եւ նոքա խօսէին ընդ
միմեանս, վս՟ ամ՟ անցիցն
անցելոց.
Եւ եղև ընդ խօսիլն
նոցա և ընդ վիճել. և
ինքն Յս՟ մերձեցաւ

և



և երթայր ընդ նոսա ։

Եւ նոցա աչք կալեալ էին, առ ի չճանաչելոյ զնա ։

Եւ ասէ ցնոսա, զինչ են բանքդ վ̃ որոյ վիճէք ընդ միմեանս, մինչ գնա երթայք և տրտմեալ էք,

Պատասխանի ետ մի ոմն ՚ի նոցանէ, որում անուն էր Կղէոպաս՝ և ասէ ցնա, դու միայն կաս յԵԷՄ, որ ոչ գիտացեր զինչ գործեցաւ ՚ի նմա յաւուրս յայսոսիկ ։

Եւ ասէ ցնոսա զինչ ։

Եւ նոքա ասեն զյ̃է նազովրեցւոյ, որ եղև այր մարգարէ, հզօր արդեամբք՝ և բանիւք առաջի աստուծոյ և ամենայն ժողովրդեան ։

Որպէս մատնեցին զնա քահանայապետքն և իշխանքն մեր ՚ի դատաստան մահու, և հանին զնա ՚ի խաչ ։

Մեք ակն ունէաք՝ թէ նա է որ փրկելոց իցէ զԻ̃էլ ։

Բայց և հանդերձ այսու ամ̃ենիւ ։ այս երրորդ օր է, յորմէ հետէ այն գործեցաւ ։

Բայց և կանայք ոմանք ՚ի մէնջ զարմացուցին զմեզ, որք կանխեալ ընդ առաւօտն չոգան ՚ի գերեզմանն ։

Եւ ոչ գտին զմարմին նորա, եկին և ասեն, թէ և տեսիլ ևս հրեշտակաց տեսին, որք ասէին զնմանէ թէ կենդանի է ։

Եւ գնացին ոմանք ՚ի մէնջ ՚ի գերեզմանն, և

գտին նոյնպէս որպէս և
կանայքն ասացին , բայց
զնա ոչ տեսին ։
Եւ նա ասէ ցն՟ս , ով
անմիտք և հեղգամիտ
տք , առ 'ի հաւատալ
յա՟մ , զոր խօսեցան
մարգարէքն ։
Ոչ զնոյն պարտ էր չար
չարիլ քի՟ , և մտանել 'ի
փառս իւր ։
Եւ սկսեալ 'ի մովսէսէ
և յա՟մ մարգարէից մեկ
նէր նոցա՝ որինչ յա՟մ
գիրս գրեալ է զնմանէ ։
Եւ մերձեցան 'ի
գեօղն յոր երթային ,
և նա պատճառէր հե
ռագոյն ևս ուրեք եր
թալ ։
Եւ բռնադատեցին
զնա և ասեն , առ մեզ
ագիր , զի ընդ երեկս
է և տարաժամեալ է
օրս ։
Եւ եմուտ ագանիլ
անդ ընդ նոսա ։
Եւ եղև 'ի բազմիլն նո
րա ընդ նոսա , առեալ
զհացն , օրհնեաց՝ եբեկ՛
և ետ նոցա ։
Եւ նոցա բացան աչք
և ծանեան զնա , և
նա եղև 'ի նոցանէ ան
երևոյթ ։
Եւ ասեն ցմիմեանս ,
ոչ իսկ և սիրտք մեր
ձմլեին 'ի մեզ , մինչ խօ
սէրն ընդ մեզ զճանա
պարհայն , և որպէս բա
նայր մեզ զգիրս ։
Եւ յարուցեալ նոյն ժա
մայն դարձան յե՟մ , և
գտին ժողովեալ զմե
տասանսն . և զորս ընդ
նոսայն էին ։
Եւ ասեն թէ արդարև
յարեաւ տ՟ր , և երևե
ցաւ

ցաւ սիմոնի ։
Եւ նոքա պատմէին,
որ ի ճանապարհայն,
և թէ զիարդ եա ծա
նօթս նոցա 'ի բեկանել
հացին ։

յե Թ. Մինչ դեռ զայն
խօսէին, ինքն
իսկ յս̃ եկաց
'ի մէջ նոցա և ասէ ցն̃ս,
խաղաղութի̃ ընդ ձեզ։
ես եմ, մի՛ երկնչիք ։
Եւ զահի հարեալ երկն
չէին, և համարէին
զոգի ինչ տեսանել ։
Եւ ասէ ցն̃ս, զի խռով
եալ էք ։ և ընդէր խոր
հուրդք ելանեն 'ի սիր
տս ձեր ։
Տեսէք զձեռս իմ և
զոտս, զի ես նոյն եմ ։
Շօշափեցէք զիս և տե
սէք, զի ոգի մարմին
և ոսկերս ոչ ունի, որպ̃
զիս տեսանէք զի ունիմ ։
Եւ զայս ասացեալ, ե
ցոյց նոցա զձեռսն և
զոտս ։

յխա Թ. Եւ մինչ դեռ
տակաւին չհա
ւատային 'ի խն
դութենէն, և
զարմացեալ էին, ասէ
ցն̃ս, ունիք ինչ կերա
կուր աստ ։
Եւ նոքա ետուն նմա
ձկան խորովեցելոյ
մասն, և խորիսխ մե
ղեր ։
Եւ եկեր առաջի նոցա
և զմնացորդսն ետ նո
ցա ։
յխբ Ժ. Եւ ասէ այս բանք են,
զոր խօսեցայ ընդ ձեզ,
մինչ առ ձեզն էի, թէ
պարտ է լնուլ ա̃մ գրե
լոցն

Դ Յ
յե մէդ. մժէ

Դ Յ
յխա մփա մվդ մթե.
յխբ ·

րոցն յօրէնսն մօսէսի, և 'ի մարգարէս, և 'ի սաղմոսն վն իմ.

Յայնժամ եբաց զմիտս նոցա՝ իմանալ զգիրս.

Եւ ասէ ցնս, թէ այսպէս պարտ էր չարչարիլ քի՝, և յառնել ի մեռելոց յաւուր երրորդի, և քարոզիլ յանուն նորա ապաշխարութն, և թողութն մեղաց. յամենայն ազգս սկսեալ յեմէ.

Եւ դուք էք վկայք բանիցս այսոցիկ.

Եւ ահա ես առաքեմ զաւետիս հօր իմոյ 'ի ձեզ, և դուք նստարուք 'ի քաղաքիս յեմ, մինչև զգենուցուք ըզզօրութն 'ի բարձանց.

Եհան զնոսա մինչև 'ի բեթանիայ, և ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա.

Եւ եղև յօրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ 'ի նոցանէ, և վերանայր յերկինս.

Եւ նոցա երկիրպագեալ նմա՝ դարձան յեմ ուրախութբ մեծաւ.

Եւ էին հանապազ 'ի տաճարին, գովէին, և օրհնէին զած.



Նախադրութիւն Յոհաննու Աւետարանին .

Աւետարանս որ ըստ Յոհաննու գրեալ է. նոյն Յոհաննէսն որ է եղբայր Յակոբայ զեբեթեայ, որ անկաւ ի վ̃ր լանջացն տ̃ն . սա սկիզբն առնէ ՚ի բանէն ա̃ծայնոյ, և զըստ մարմնոյ ծնունդն յի շատակէ ասելով, և բանն մարմին եղև . և յիշատակէ զմկրտութիւն Յոհաննու, և զընտրութի̃ աշակերտացն, այլ և զնշանս և զարուեստս զորս արար յ̃ս, և զկատարածն . և թէ որպէս մատնեցաւ ՚ի ձեռս պոնտացւոյ պիղատոսի և խաչեցաւ, և զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա, և ի վերայ պատմուճանի նորա վիճակ արկին . և մարմինն ն̃ր եդաւ ՚ի գերեզմանի, և յարեաւ յերրորդ աւուր, և երևեցաւ աշակերտաց .

Յոհաննէս եղբայր Յակոբայ առաքելոյն, և կոչեցեալն որդի որոտման զկնի . ԾԷ ամաց համբառնալոյ տ̃ն մերոյ յ̃ի ք̃ի, գրեաց զաւետարանն իւր լեզուաւ յունականաւ ՚ի յեփեսոս քաղաքի ըստ խնդրոյ եպիսկոպոսացն ասիացւոց .

Ցանկ Գլխոց Աւետարանին Յօհաննու :

Ա ա զի անպատճառ է բանն ած ։
Ա բ յովհաննու վկայելոյն բանին այ ։
Ա գ գալոյն առ նա գառին այ ։
Ա դ աշակերտացն առ յս ագանելոյն ։
Ա ե գտանելոյն զմեսիա ։
Ա զ հարսանեաց ՚ի կանայ գալիլեացւոց ։
Ա է արտաքսելոյն ՚ի տաճարէն զվաճառօղս ։
Ա ը նիկոդիմոսի ։
Ա թ ՚ի յորդանան մկրտելոյն ։
Ա ժ խնդիր լինելոյ սակս սրբութեան ։
Ա ժա կնոջն սամարացւոյ ։
Ա ժբ թագաւորազին ։
Ա ժգ երեսուն և ը ամեայ հիւանդին ։
Ա ժդ զի հայր սիրէ զորդի ։
Ա ժե հնգից հացիցն, և երկուց ձկանց ։
Ա ժզ գնալոյն ի վերայ ծովուն ։
Ա ժէ տրտնջելոյն զնմանէ հրէիցն ։
Ա ժը շրջելոյն յի ՚ի գալիլեա ։
Ա ժթ խնդրելոյն հրէից ունել զյս ։
Ա ի ՚ի ծնէ կուրին ։
Ա իա դնելոյն յսի զանձն ի վերայ ոչխարացն ։
Ա իբ նաւակատեացն յէմ ։
Ա իգ ղազարու յարութեան ։
Ա իդ օծանելոյ զտրն ։

| յոհ | մթս | | մրկ | ղուկ |
|---|---|---|---|---|
| ա | — | — | — | — |
| բ | գ | — | ա | — |
| գ | — | — | — | — |
| դ | — | — | — | — |
| ե | — | — | — | — |
| զ | — | — | — | — |
| է | խե | — | ժգ | կը |
| ը | — | — | — | — |
| թ | — | — | — | — |
| ժ | — | — | — | — |
| ժա | — | — | — | — |
| ժբ | ե | — | — | ժը |
| ժգ | — | — | — | — |
| ժդ | — | — | — | — |
| ժե | իզ | — | իզ | իը |
| ժզ | — | — | — | — |
| ժէ | — | — | — | — |
| ժը | — | — | — | — |
| ժթ | ծ | — | ճգ | կը |
| ի | — | — | — | — |
| իա | խգ | — | լ | — |
| իբ | — | — | — | — |
| իգ | — | — | — | — |
| իդ | — | կբ | խդ | իա |

ԽՍԹ Ա

Վս չէմլոյն յուդայի զծախումն իւղոյն .
Վս աւանակին և իշոյն .
Վս դարձմանն հեթանոսաց .
Վս հատին ցորենոյ .
Վս յի՟, որ լոյս եկն յաշխարհ .
Վս ընթրեաց և լուանլոյ զոտս աշակերտաց
Վս չարչարանաց և սփոփելոյ զաշակերտսն .
Վս գալոյ հոգւոյն սրբոյ և մխիթարելոյ զաշակերտսն .
Վս մատնութեան յի .
Վս ուրացութեան պետրոսի և հաւուն խօսլոյ .
Վս ածելոյն զյս ՚ի վանանց կայիափայ .
Վս տանելոյն զյս ՚ի գողգոթայ .
Վս աւանդելոյն յի զհոգին .
Վս խնդրելոյ զտրունական մարմին .
Վս բերելոյն նիկոդիմոսի զզմուռս .
Վս գալոյ կանանցն ՚ի գերեզմանն .
Վս դրօքն փակելովք մտանելոյն յի առ աշակերտսն .
Վս հաստատելոյն յի զթօմաս ՚ի հաւատս .
Վս ուտելոյ ընդ նոսա և հրցանլոյ զպետրս .
Վս սիրելոյ աշակերտին որ գրեաց զաւետարանն .

| Յոհ | Մթէ | Մրկ | Ղուկ |
|---|---|---|---|
| [illegible] | — | — | — |
| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| [illegible] | — | — | — |
| [illegible] | — | — | — |
| [illegible] | — | — | — |
| — | — | — | — |
| [illegible] | — | — | — |
| [illegible] | [illegible] | [illegible] | — |
| — | — | — | — |
| [illegible] | — | — | — |
| [illegible] | — | — | — |
| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| [illegible] | — | — | — |
| [illegible] | [illegible] | — | [illegible] |
| [illegible] | — | — | [illegible] |
| [illegible] | — | — | — |
| [illegible] | — | — | — |
| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| [illegible] | — | — | — |
| — | — | — | [illegible] |
| — | — | — | — |
| [illegible] | — | — | — |
| [illegible] | — | — | — |
| [illegible] | — | — | — |
| — | — | — | — |
| [illegible] | — | — | — |
| — | — | — | — |
| — | — | — | — |








# Ի ՍԿԶԲԱ

ՆԷ ԷՐ ԲԱՆՆ ԵՒ ԲԱՆՆ ԷՐ ԱՌ ա՜ծ, և ա՜ծ էր բանն ։ Նա էր ՚ի սկզբանէ առ ա՜ծ, Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև, և ոչինչ, որ ինչ եղև ։

Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան ։ Եւ լոյսն ՚ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար նմա ոչ եղև հասու ։

Եղև

Զ Եղեւ այր մի առաքեալ
յԱստուծոյ, անուն նմա
Յովհաննէս։
Սա եկն 'ի վկայութի՛, զի
վկայեսցէ վասն լուսոյն.
զի ամենեքին հաւա
տասցեն նովաւ։
Ոչ էր նա լոյսն, այլ
զի վկայեսցէ վասն լու
սոյն։
Թ Էր լոյսն ճշմարիտ,
որ լուսաւոր առնէ զա̃մ
մարդ, որ գալոց է յաշ
խարհ։
Յաշխարհի էր, և
աշխարհ նովաւ եղեւ,
և աշխարհ զնա ոչ ծա
նեաւ։
ԺԱ Յիւրսն եկն, և իւրքն
զնա ոչ ընկալան։
Իսկ որք ընկալանն
զնա, ետ նոցա իշխա
նութի՛ որդիս Աստու
ծոյ լինել, որոց հաւա
տացեն յանուն նորա,
Որք ոչ յարենէ, և ոչ
'ի կամաց մարմնոյ, և ոչ
'ի կամաց առն, այլ
յԱստուծոյ ծնան.
ԺԴ Եւ բանն մարմին եղեւ
և բնակեաց 'ի մեզ,
և տեսաք զփառս նորա,
զփառս իբրեւ զմիածնի
առ'ի Հօրէ, լի շնորհօք
և ճշմարտութեամբ։
ԺԵ Յովհաննէս վկայեաց
վասն նորա, աղաղակեաց
և ասէ, սա՛ է զորմէ
ասէի, որ զկնի իմ գա
լոցն էր, առաջի իմ եղեւ,
զի նախ քան զիս էր։
ԺԶ Զի 'ի լրութենէ անտի
նորա, մեք ամենեքին
առաք շնորհս՝ փոխա
նակ շնորհաց.
Զի օրէնքն 'ի ձեռն
Մովսէսի տուան. շնորհ
հք և ճշմարտութիւն 'ի
ձեռն

Յ Մ Ղ
Բ Ե Զ
Գ Ա ԺՔ
Ջ . .

Յ Մ Գ Ղ
Ե Ա . ԺԳ
Զ - Թա Գ Ժ
Ջ . . .

ձեռն յի՟ քի՟ եղեն ․

ը Ժ Զա՟ծ ոչոք ե տես երբեք , բայց միածինն որդի որ 'ի ծոց հօր , նա պատմեաց մեզ ։

Թ Ժ Եւ այս է վկայութիւն յոհաննու ․ յորժամ առաքեցին առ նա հրեայքն յեճմէ քահանայս և ղևտացիս , զի հարցցեն ցնա թէ դու ո՞ ես ։

Եւ խոստովան եղև , և ոչ ուրացաւ , խոստովան եղև , թէ ես ոչ եմ քի՟ն ։

Եւ հարցին ցնա , իսկ ով ես դու ․ եղիա ես ։

Եւ ասէ , ոչ եմ ։

Իսկ մարգարէնես դու ։

Պատասխանի ետ թէ ոչ ․

բբ Իսկ ասա՛ մեզ դու ով ես , զի պատասխանի տարցուք՝ որոց առաքեցինն զմեզ , զի ասես վասն քո ։

Ժ Ա Ասէ , ես ձայն բարբառոյ յանապատի ․ ուղիղ արարէք զճանապարհս տեառն ։

Որպէս ասաց եսայի մարգարէ ։

ժա Ժ Եւ որք առաքեցանն , 'ի փարիսեցւոց անտի էին ․ հարցին ցնա և ասեն ։

Իսկ զի մկրտես եթէ դու չես քի՟ն , և ոչ եղիա , և ոչ մարգարէն ,

ժբ Ա Պատասխանի ետ նոցա յոհաննէս և ասէ ․ ես մկրտեմ զձեզ ջրով ․ 'ի միջի ձերում կայ՝ զոր դուքն ոչ գիտէք ։

Որ զկնի իմ գալոցն է ․

որ

| | |
|---|---|
| մ | մ |
| ը | ձժը |
| թ | ․ |

| | | | |
|---|---|---|---|
| մ | մ | փ | ղ |
| ժ | ը | բ | ե |
| ժա | ․ | ․ | ․ |
| ժբ | ժա | գ | ժ |

որ առաջի իմ եղեւ, որոյ չեմ արժանի, եթէ լուծից զխրացս կօշկաց նորա

ժգ Այս ՚ի բեթաբրայ եղեւ յայնկոյս յորդանանու, ուր էրն յովհաննէս, և մկրտէր և անդ լինէր։

Գ Վաղիւ անդր բդ տեսանէ զյս̃ զի գայր առ նա, և ասէ, ահաւասիկ գառն աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի։

ժդ Ա Սա է, վասն որոյ եսն ասէի, զկնի իմ գայ այր. որ առաջի իմ եղեւ, զի յառաջ էր քան զիս։

Եւ ես ոչ գիտէի զնա. այլ զի յայտնի լինիցի իլի. վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել։

ժե Ա Վկայեաց յովհաննէս և ասէ, թէ տեսանէի զհոգին զի իջանէր իբրև զաղաւնի յերկնից, և հանգչէր ի վերայ նորա։

Եւ ես ոչ գիտէի զնա, այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով, նա ասաց ցիս։

Յոր վերայ տեսանիցես զհոգին, զի իջանիցէ, և հանգչիցի ի վերայ նորա, նա է որ մկրտէ հոգւովն սրբով։

Եւ ես տեսի, և վկայեցի, եթէ սա է որդին աստուծոյ։

ժզ Դ Վաղիւ անդր բդ կայր յովհաննէս և յաշակերտացն անտի

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| յ | մ | մբ | ղ | մ | մ | մբ | ղ |
| ժգ | ․ | ․ | ․ | ժե | ժգ | ․ | ժգ |
| ժդ | ժա | ․ | ․ | ժզ | ․ | ․ | ․ |



Խ.Օ.

անտի նորա երկու. և
հայեցեալ ընդ յն զի
զգնայր, և ասէ, ահա
ւասիկ քն գառն աստու
ծոյ.
Լուան 'ի նմանէ երկու
աշակերտքն զի խօսէր,
և գնացին զհետ յն։
Իբրև դարձաւ յս և
եսես զնոսա զի երթային
զհետ նորա, ասէ ցնս,
զինչ խնդրէք.
Նոքա ասեն ցնա.
ռաբբի, որ թարգմա
նեալ կոչի վարդապետ.
ուր են օթեվանք քո.
Ասէ ցնոսա եկայք, և
տեսէք.
Եկին, և տեսին, ուր
էին օթեվանք նորա,
և առ նմա ագան այն
օր, զի ժամ էր իբրև
տասն երորդ.
Էր անդրէաս եղբայր
սիմոնի վիմի, մի յեր
կուց անտի, որք լուանն
'ի յոհաննէ և գնացին
զկնի նորա.
ԺԵ Ա Գտանէ սա նախ զեղ
բայր իւր զսիմոն, և
ասէ ցնա, գտաք զմե
սիայ, որ թարգմանի քս.
Սա էած զնա առ յս.
Հայեցեալ ընդ նա յս
ասէ, դու ես սիմոն
որդի յօնանու. դու
կոչեսցիս կեփաս, որ
թարգմանի պետրոս.
ԺԸ Ժ Ն Ի վաղիւն անդր են
կամեցաւ ե
լանել 'ի գա
լիլեայ, գտանէ զփիլիպ
պոս, և ասէ ցնա յս,
եկ զկնի իմ.
Էր փիլիպպոս 'ի բե
թսայիդայ, 'ի քաղաքէ
անդրեայ և պետրոսի.
Գտա

| Յ | Մ | Ղ | Հ |
|---|---|---|---|
| ԺԷ | ՃԿԷ | ԽԲ | ԻԵ |
| ԺԸ | . | . | . |

Գտանէ Փիլիպպոս զՆաթանայէլ եւ ասէ ցնա, զորմէ գրեաց Մովսէս յօրէնսն եւ մարգարէքն. գտաք զՅս զորդի Յովսեփայ ի Նազարեթէ.

Ասէ ցնա Նաթանայէլ, իսկ ի Նազարեթէ մարթ ինչ իցէ բարւոյ իմիք լինել.

Ասէ ցնա Փիլիպպոս, եկ եւ տես.

Իբրեւ ետես Յս զՆաթանայէլ զի գայր առ նա, ասէ վն նր, ահա արդարեւ Իսրայէլացի յորում նենգութիւն ոչ գոյ.

Ասէ ցնա Նաթանայէլ, ուստի ճանաչես զիս. Պատասխանի ետ Յս եւ ասէ ցնա. մինչչեւ էր Փիլիպպոսի կոչեալ ըզքեզ, զի էիր ի ներքոյ թզենւոյն, տեսի ըզքեզ.

Պատասխանի ետ նմա Նաթանայէլ եւ ասէ. Ռաբբի, դու ես որդին Աստուծոյ, դու ես թագաւոր Իէլի.

Պատասխանի ետ նմա Յս եւ ասէ, փոխանակ զի ասացի քեզ, թէ տեսի ի ներքոյ թզենւոյն, հաւատաս, մեծամեծս եւս քան զայս տեսցես.

Եւ ասէ ցնա, ամէն ասեմ ձեզ, տեսանիցէք զերկինս բացեալ եւ զհրեշտակս աստուծոյ. զի ելանիցեն եւ իջանիցեն ի վերայ որդւոյ մարդոյ.

Եւ

Եւ յաւուրն եր
րորդի հարսա
նիք էին ՚ի կա
նայ գալիլեացւոց ,
և անդ էր մայրն յի՟ ,
կոչեցաւ և յս՟, և աշա
կերտքն նորա ՚ի հարսա
նիսն ։

Եւ ՚ի պակասել գին
ւոյն , ասէ մայրն ցյս՟ ,
գինի ոչ ունին ։

Եւ ասէ ցնա յս՟ , զի՞
կայ իմ և քոյ, կին դու ։
չև է հասեալ ժամա
նակ իմ ։

Ասէ մայր նորա ցպաշտա
ւորսն , զոր ինչ ասի
ցէ , արասջիք ։

Անդ էին թակոյկք
կճեայք վեց, ըստ սրբու
թեան հրէից , տանէին
մի մի ՚ի նոցանէ մարս եր
կուս կամ երիս ։

Ասէ ցնոսա յս՟ , լցէք
զթակոյկսդ ջրով ։

բղ Եւ լցին զնոսա մինչև
՚ի վեր ։

Եւ ասէ ցնոսա , արդ
արկէք , և բերէք տա
կառապետիս , և նոքա
բերին ։

Եւ իբրև ճաշակեաց
տակառապետն զջուրն
գինի եղեալ , և ոչ գի
տէր ուստի իցէ , բայց
սպասաւորքն գիտէին
որք արկին զջուրն ։

Կոչէ ընդ փեսային տա
կառապետն ։

Եւ ասէ , ամենայն
մարդ զանոյշ գինին յա
ռաջագոյն պաշտէ , և
յորժամ արբենան , յայն
ժամ զյոռին ։ դու պա
հեցեր զանոյշ գինիդ
մինչև ցայժմ ։

Զայս արար սկիզբն
նշա

Նշանաց յս, 'ի կանայ գա
լիլեացւոց, և յայտն
եաց զփառս իւր, և
հաւատացին 'ի նա աշա
կերտք նորա.

ժբ Յետ այսորիկ էջ
յս 'ի կափառ
նաում, ինքն
և մայր իւր, և եղբարք
իւր, և անդ լինէր ոչ
բազում ինչ աւուրս.

ժ Ա Եւ էր մերձ զատիկն
հրէից. և ել յԵմ.

ժա Ա Եւ եգիտ 'ի տաճարին,
զի վաճառէին զարջա
ռս՝ և զոչխարս՝ և զա
ղաւնիս, և զլումա
փոխսն որք նստէին.
Եւ արար խարազան
չուանեաց, և եհան զա
մենեսին 'ի տաճարէն,
զոչխարս և զարջառս՝ և
զպղինձս հատավաճա

ռացն ցրուեաց և զսեղ
անսն կործանեաց.
Եւ որք զաղաւնիսն
վաճառէին՝ ասէ ցնո
սա, առէք զայդ աս
տի, և մի՛ առնէք

ժէ զտուն հօր իմոյ տուն
վաճառի.

ժգ Ժ Յիշեցին աշա
կերտքն նորա թէ գրեալ
է, նախանձ տան քո
կերիցէ զիս.

ժդ Դ Պատասխանի ետուն
հրէայքն և ասեն ցնա,
զինչ նշան ցուցանես
դու մեզ զի զայդ առ
նես.

ժե Ժ Պատասխանի ետ յս և
ասէ ցնոսա. քակեցէք
զտաճարդ զայդ, և զե
րիս աւուրս շինեցից
զդա.
Ասեն ցնա հրէայքն.
զքառասուն և զվեց
ամ

| Յ | Մ | Մր | Ղ |
|---|---|---|---|
| ժբ | ժբ | . | . |
| ժ | ՙհդ | ճձշ | ժդ |
| ժա | ժժա | ճխա | ճլբ |

| Յ | Մ | Մր |
|---|---|---|
| ժբ | . | . |
| ժգ | ճկա | հե |
| ժդ | . | . |

ամ շինեցաւ տաճարս
այս, և դու զերիս ա-
ւուրս կանգնես զդա։
Բայց նա ասէր վասն
տաճարի մարմնոյ իւրոյ։
Իսկ յորժամ յարեաւ
'ի մեռելոց, յիշեցին
աշակերտքն նորա, թէ
այն է զոր ասացն, և
հաւատացին գրոյն և
բանին, զոր ասաց յս։
Եւ իբրև էր գի
յեմ 'ի զատ
կին տօնի, բա
զումք հաւատացին յա
նուն նորա, զի տեսա
նէին զնշանսն զորս առ-
նէր։
Բայց ինքն յս ոչ հաւա
տայր զանձն նոցա, քանզի
զի ինքն գիտէր զամե
նայն։
Եւ զի ոչ էր պէտս
եթէ ոք վկայեսցէ վասն
մարդոյ. զի ինքն իսկ
գիտէր զինչ կայր 'ի
մարդն։
Բ. Եւ էր այր մի 'ի փարի
սեցւոց անուն Նիկոդե
մոս անուն նորա, իշխան
հրէից։
Սա եկն առ նա գիշե
րի՝ և ասէ ցնա, ռաբբի,
գիտեմք եթէ յաստու
ծոյ եկեալ ես վարդա
պետ, զի ոչոք կարէ
զայդ նշանս առնել
զոր դուդ առնես. եթէ
ոչ այ իցէ ընդ նմա։
Պատասխանի ետ յս և
ասէ ցնա, ամէն ամէն
ասեմ քեզ։
Եթէ ոք ոչ ծնցի վերս
տին, ոչ կարէ տեսա
նել զարքայութիւն աս
տուծոյ։
Ասէ ցնա Նիկոդեմոս.
զիարդ

զիարդ կարէ մարդ ծնանիլ որ ծերն իցէ ։

Մի՞թէ մարթ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել և ծնանիլ ։

Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա, ամէն ամէն ասեմ քեզ. եթէ ոք ոչ ծնցի 'ի ջրոյ և 'ի հոգւոյ ոչ կարէ մտանել յարքայութիւն աստուծոյ ։

Զի՛ ծնեալն 'ի մարմնոյ՝ մարմին է, և ծնեալն 'ի հոգւոյ հոգի է ։

Դու մի՛ զարմանար թէ ասացի քեզ, պարտ է ձեզ ծնանիլ վերստին ։

Զի՛ հողմ ուր կամի շնչէ, և զձայն նորա լսես, այլ ոչ գիտես, ուստի գայ կամ յո՛ երթայ, սոյնպէս և ամենայն ծնեալն ' հոգւոյն ։

Պատասխանի ետ Նիկոդեմոս և ասէ ցնա. զիարդ մարթի այդմ լինել ։

Պատասխանի ետ Յս և ասէ ցնա, դու ես վարդապետ Իէլի և զայդ ոչ գիտես ։

Ամէն ամէն ասեմ քեզ, զի զորինչ գիտեմք խօսիմք, և զոր տեսաք՝ վկայեմք, և զվկայութիւն մեր ոչ ընդունիք ։

Իսկ արդ եթէ զերկրաւորս ասացի ձեզ և ոչ հաւատայք, զի արդ եթէ զերկնաւորն ասացից հաւատայցէք ։

Եւ ոչոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից

որդի մարդոյ, որ էն յերկինս.

Եւ ոպ̅ Մօսէս բարձրացոյց զօձն յանապատի, նոյնպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ.

Զի ամենայն, որ հաւատայ 'ի նա՝ ոչ կորիցէ. այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս.

Զի այնպէս սիրեաց ած̅ զաշխարհ, մինչեւ զորդին իւր միածին ետ, զի ամ̅ որ հաւատայ 'ի նա, մի կորիցէ. այլ ընկալցի զկեանս յաւիտենականս.

Զի ոչ առաքեաց ած̅ զորդի իւր յաշխարհ, թէ դատեսցէ զաշխարհ. այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ.

Որ հաւատայ 'ի նա, ոչ դատապարտեսցի, եւ որ ոչ հաւատայ 'ի նա՝ արդէն իսկ դատապարտեալ է, զի ոչ հաւատաց յանուն միածնի որդւոյն այ̅.

Եւ այս իսկ է դատաստան. զի լոյս եկն յաշխարհ՝ եւ սիրեցին մարդիկ զխաւար՝ առաւել քան զլոյս, զի էին գործք իւրեանց չարութեան.

Զի ամենայն որ զչար գործէ ատեայ զլոյս, եւ ոչ գայ առ լոյսն, զի մի յանդիմանեսցին գործք նորա.

Իսկ որ առնէ զճշմարտութիւն, գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա՝ թէ աստուծով գործեցան.

Թ. Յետ այսորիկ եկն յս̅ եւ աշակերտք նորա յերկիրն դդ

կեր՛ն Հրէաստանի , և
անդ շրջէր նոքօք հան
դերձ և մկրտէր ։
Մկրտէր և յոհաննէս
'ի յայենոն մերձ առ
սաղիմ , զի ջուրք բա
զումք էին անդ , և
գային , և մկրտէին ։
ԻԴ Զի չև ևս էր արկեալ
զյոհաննէս 'ի բանտ ։
ԻԵ Եւ եղև խնդիր յաշա
ԺԱ կերտացն յոհաննու
ընդ հրէից , վասն սըր
բութեան ։
Եկին առ յոհաննէս ,
և ասեն ցնա ։
Ռաբբի , որ էրն ընդ
քեզ յայնկոյս յորդանա
նու , որում դու ն վկա
եցեր ։ ահաւանիկ նա
մկրտէ և ամենեքին
գան առնա ։
Պատասխանի ետ յոհան
նէս և ասէ , ոչ կարէ
Խն

Ժ Ն Փ Հ
ԻԵ Ե ։ Հ
ԻՉ Ը Ը ։
ԺԵ ։ ։ ։

մարդ առնուլ՝ յանձնէ
և ոչ ինչ ։ եթէ ոչ իցէ
տուեալ նմա յերկնից
ի վերուստ ։
ԻԸ Ա Դուք ձեզէն վկայէք
ինձ , զի ասացի ձեզ թէ
չեմ ես քն , այլ թէ
առաքեալ եմ առաջի
նորա ։
ԻԹ Ժ Որ ունի զհարսն նա է
փեսայ , իսկ բարեկամ
փեսային որ կա և լսէ
նմա , ուրախութեամբ
ուրախ լինի վասն ձայնի
փեսային ։
Արդ այս ուրախութին ,
որ իմն է , լցեալ է ։
Նմա պարտ է աճել ։
և ինձ նուաղանալ ։
Որ ի վերուստն գայ , ի վե
րոյ է քան զամենայն ։
որ յերկրէ աստի է , եր
կրէ է և յերկրէ խօսի ։
Որ յերկնից գայ զը
ինչ

Ժ Ն Փ Հ
ԻԸ Ծ Գ Ճ
ԻԹ ։ ։ ։

ինչ տեսեաւ եւ զոր լու-աւ վկայէ, եւ զվկայութիւն նորա ոչ ոք ընդունի ։

Որ ընդունի զվկայութիւն նորա՝ կնքեաց թէ ած ճշմարիտ է ։

Զի զոր ածն առաքեաց զբանս աստուծոյ խօսի ։

Զի ոչ եթէ չափով տայ ած զհոգին ։

լե Հայր սիրէ զորդի, եւ զամենայն ինչ ետ 'ի ձեռս նորա ։

լզ Որ հաւատայ յորդի ընդունի զկեանս յաւիտենականս, եւ որ ոչն հնազանդի որդւոյ՝ ոչ տեսցէ զկեանս, այլ բարկութիւն աստուծոյ մնայ իվերայ նորա ։

Իբրեւ գիտաց յս, եթէ լուան փարիսեցիք, եթէ յս բազում աշակերտս առնէ եւ մկրտէ քան զյովհաննէս ։ քանզի ոչ եթէ յս ինքնին մկրտէր այլ աշակերտքն նորա ։

Գ Եթող զհրէաստան եւ եկն միւս անգամ 'ի գալիլեայ ։

Դ Եւ էր նմա անցանել ընդ սամարիայ ։

ԺԱ Ե Գայ նա 'ի քաղաք մի սամարացւոց որում ա-նուն էր սուքար ։ մերձ 'ի գիւղն զոր ետ յակոբ որդւոյ իւրում յով-սեփայ ։

Եւ անդ էր աղբիւր մի յակոբայ ։

Եւ յս վաստակեալ 'ի ճանապարհէն, նստէր իվերայ աղբերն, եւ էր ժամ իբրեւ վեց ե-րորդ ։

ԳԴ Գայ կին մի 'ի սամա-րեայ

ժ ճ զ
լ ճժա ճժթ
լա

ժ ճ
լ ժթ
լթ

եայ հանել ջուր ։
Ասէ ցնա յս՟ · տուր ինձ
ըմպել ·
Զի աշակերտքն նո
րա երթեալ էին 'ի քա
ղաք անդր՝ զի կերա
կուրս գնեսցեն ։
Ասէ ցնա կինն սամա
րացի · դու որ հրեայդ
ես , զիարդ յինէն
ըմպել խնդրես 'ի կնոջէ
սամարացւոյ ·
Զի՛ ոչ երբեք խառ
նակին հրեայք ընդ սա
մարացիս ·
Պատասխանի ետ նմա
յս՟ և ասէ , եթէ գիտէիր
դու զպարգևս աստու
ծոյ , և ով է որ ասէ
ցքեզ՝ թէ տուր ինձ ըմ
պել՝ դու արդեօք խնդ
րէիր 'ի նմանէ , և տայր
քեզ զջուրն կենդանի ·
Ասէ ցնա կինն · տր՟ ,
դու քանզի և դոյլ իսկ
ոչ ունիս , և ջրհորս խոր
է · իսկ արդ՝ ուստի ու
նիցիս զջուրն կենդանի ·
Մի թէ դու մեծ ինչ
ոք իցես քան զհայրն
մեր յակոբ , որ զայս ջր
հոր ետ մեզ · և ինքն
աստի էարբ , և որդիք
նորա , և խաշինք նորա ·
Պատասխանի ետ նմա
յս՟ և ասէ , ամենայն որ
ըմպէ 'ի ջրոյ յայդմանէ
միւսանգամ ծարաւի ·
Իսկ որ ըմպէ 'ի ջրոյն ,
զոր ես տաց նմա , մի՛
ծարաւեսցի յաւիտեան ·
այլ ջուրն , զոր ես տաց
նմա , եղիցի 'ի նմա աղ
բիւր ջրոյ բղխեցելոյ 'ի
կեանսն յաւիտենականս ·
Ասէ ցնա կինն , տր՟
տուր ինձ զջուրն զայն ,
զի մի՛ ծարաւեցայց ·
և

և մի՛ եկից այսր հանել զջուր։

Ասէ ցնա յ̃ս. Երթ՝ կոչեա զայր քո, և եկ այսր։

Պատասխանի ետ նմա կինն և ասէ. չիք իմ այր։

Ասէ ցնա յ̃ս, բարւոք ասացեր թէ չիք իմ այր։

Զի հինգ այր փոխեալ է քո, և զոր այժմ ունիս չէ քո այր. զայդ արդար ասացեր։

Ասէ ցնա կինն, տէ՛ր, թուի ինձ թէ մարգարէ իցես դու։

Հարքն մեր ՚ի լերինս յայսմիկ երկիրպագին, և դուք ասէք եթէ յեՀ̃մ է եթէ տեղի, ուր արժան իցէ երկիր պագանել։

Ասէ ցնա յ̃ս, կին դու հաւատա ինձ, զի եկեսցէ ժամանակ յորժամ ոչ ՚ի լերինս յայսմիկ, և ոչ յեՀ̃մ երկիրպագանիցեն հօր։

Դուք երկիրպագանէք, որում ոչն գիտէք. մեք երկիրպագանեմք, որում գիտեմքն. զի փրկութիւն հրէից է։

Այլ եկեսցէ ժամանակ և այժմ իսկ է, յորժամ ճշմարիտքն երկրպագուք երկիրպագանիցեն հօր հոգւով և ճշմարտութեամբ։

Քանզի և հայր զայնպիսի երկրպագուս իւր խնդրէ։

Հոգի է ա̃ծ, և երկրպագուաց նորա հոգւով և ճշմարտութ̃բ պարտ է

է երկրպագանել ։
Ասէ ցնա կինն , գի
տեմք զի մեսիայ գայ
անուանեալն քս՟ , յոր
ժամ եկեսցէ , նա պատ
մեսցէ մեզ զամենայն ։
Ասէ ցնա յս՟ , ես եմ ,
որ խօսիմս ընդ քեզ ։
Եւ յայն բան եկին աշա
կերտքն նորա , և զար
մանային , զի ընդ կնոջն
խօսէր , բայց ոչոք ա
սաց 'ի նոցանէ թէ զինչ
խնդրես , կամ զինչ խօ
սիս ընդ դմա ։
Թողոյր կինն զսափոր
իւր , և չոգաւ 'ի քա
ղաք , և ասէ ցմարդիկն
Եկայք , և տեսէք զայր
մի , որ ասաց ինձ զա
մենայն , որ ինչ իմ գոր
ծեալ է ․ միթէ նա
իցէ քս՟ն ․
Ելին 'ի քաղաքէն և
գային առ նա ։
Եւ մինչչև եկեալ էին
նորա , աղաչէին զնա
աշակերտքն և ասէին ․
ռաբբի , հաց կեր ։
Նա ասէ ցնոսա , ես
կերակուր ունիմ ու
տել ․ զոր դուքն ոչ
գիտէք ․
Ասէին աշակերտքն
ընդ միմեանս՝ միթէ ե
բեր ինչ ոք դմա ուտել ։
Ասէ ցնոսա յս՟ ․ իմ կե
րակուր այն է , զի արա
րից զկամս այնորիկ որ
առաքեացն զիս , և կա
տարեցից զգործն նորա ․
Ոչ դուք ասէք եթէ
այլ և չորք ամիսք են ,
և հունձք գան , ահաւա
սիկ ես ասեմ ձեզ՝ ամ
բարձէք զաչս ձեր , և
տեսէք զարտորայսն ,
զի սպիտակացեալք են
և

և 'ի հունձս հասեալ ք.
Եւ որ հնձէն, վարձս առնու, և ժողովէ զպտուղ 'ի կեանսն յաւիտենականս, զի որ սերմանէն և որ հնձէ հասարակ ցնծասցեն։
Յայսմ իսկ է բանն ճշմարիտ, զի այլ է որ սերմանէ, և այլ է որ հնձէ։
Ես առաքեցի զձեզ հնձել, զոր ոչ դուք վաստակեցիք. այլք վաստակեցին, և դուք 'ի վաստակս նոցա մտէք։
Եւ 'ի քաղաքէն յայնմանէ սամարացւոց՝ բազումք հաւատացին 'ի նա վասն բանի կնոջն վկայելոյ, եթէ ասաց ինձ զամենայն, որ ինչ իմ գործեալ էր։
Իսկ իբրև եկին առ նա սամարացիքն, աղաչէին զնա լինել առ նոսա։
Եւ եղև անդ աւուրս երկուս։
Եւ ևս բազումք հաւատացին 'ի նա՝ վասն բանին նորա։
Եւ ասէին ցկինն թէ ոչ այսուհետև վասն քոյ խօսիցդ հաւատամք, զի մեզէն իսկ լուաք 'ի դմանէ, և գիտեմք եթէ դա է ճշմարտիւ փրկիչ աշխարհաց։

ԼԵ Ժ Յետ երկուց աւուրց ել անտի և գնաց 'ի Գալիլեա։
ԼԶ Ա Զի ինքն իսկ յս վկայեաց՝ եթէ մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի։
ԼԷ Ժ Եւ յորժամ եկն նա 'ի

Գա

[illegible]

գալիլեայ , ընկալան զնա գալիլեացիքն , զի տեսեալ եւս էր զամենայն նշանսն , զորս արար յեհմ ՚ի տօնին , քանզի եւ նոքա եկեալ էին ՚ի տօնն

Եկն դարձեալ ՚ի կանայ գալիլեացւոց , ուր արար զջուրն գինի ։

ԺԸ Դ Յոհ Եւ անդ էր թագաւորազն մի , որոյ որդին հիւանդ կայր ՚ի կափառնաում ։

Նա իբրեւ լուաւ եթէ յս եկեալ է ՚ի հրէաստանէ ՚ի գալիլեայ , եկն առ նա , եւ աղաչէր , զի իջցէ , եւ բժշկեսցէ զորդի նորա , քանզի մերձ էր ՚ի մեռանիլ ։

Ասէ ցնա յս , եթէ ոչ նշանս ինչ եւ արուեստս տեսանիցէք , ոչ հաւատայք ։

Ասէ ցնա թագաւորազն ։ տր , էջ մինչ չեւ մեռեալ իցէ մանուկն իմ ։

Ասէ ցնա յս ։ երթ ։ որդին քո կենդանի է , եւ հաւատաց այրն բանին զոր ասաց ցնա յս ։ եւ գնաց ։

Եւ մինչ դեռ իջանէր ընդ առաջ եղեն նմա ծառայքն նորա , աւետիս ետուն եւ ասեն , թէ մանուկն նորա կենդանի է ։

Հարցանէր ցնոսա վասն ժամուն յորում աւա քինեաց ։

Եւ ասեն ցնա ։ երէկ յեօթներորդ ժամուն եթող զնա ջերմն ։

Գիտաց հայրն նորա եթէ յայնմ ժամու , յորում ասացն ցնա յս , թէ որդին քո կենդանի է , եւ

ծէ եւ նթ

և հաւատաց ինքն և ամենայն տուն իւր ։

Օ՛ այս դարձեալ երկրորդ նշան արար յի՛, եկեալ ի հրէաստանէ ի գալիլեա ։

կբ Յետ այսորիկ տօն էր հրէից, և ել յի՛ յեմ ։

Եւ էր յեմ ի պրոպատիկէ աւազանին ․ որ կոչիւր եբրայեցերէն բեթհեզդայ, հինգ սրահ ․ յորս անկեալ դնիւր բազմութի յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, գօսացելոց, որք ակնունէին ջրոյ յուզելոյ ։ Եւ հրեշտակ տեառն իջանէր ըստ ժամանակի յաւազանն և յուզէր ըզջուրն ․ և որ նախ ի շարժումն ջուրցն իջանէր յաւազանն բժշկիւր, ոչ ունելով զնշան հիւանդութեան ։

ԺԳ Ն Եւ անդ էր այր մի ․ որոյ երեսուն և ութ ամ էր ի հիւանդութեան իւրում ։

գէ Օ՛ զնա իբրև ետես յի՛, զի անկեալ դնիւր, և գիտաց եթէ բազում ժամանակք էն այնու հետև ․ ասէ ցնա կամիս ողջ լինիլ ։

Պատասխանի ետ նմա հիւանդն ․ տէր, ոչ զոք ունիմ թէ յորժամ ջուրքն յուզիցին, արկցէ զիս յաւազանն ․ և մինչ ես դանդաղիմ, այլոք քան զիս յառաջագոյն իջանէ ։

Ասէ ցնա յի՛, արի՛, առ զմահիճս քո և գնա՛ ․ Եւ ողջացաւ այրն, և

յարեաւ է առ զմահիճս
իւր և շրջէր , և էր
շաբաթ յաւուրն յայն
միկ ։
Ասէին հրէայքն ցբժշ
կեալն , շաբաթ է , և ոչ
է արժան քեզ առնուլ
զմահիճս քո ։
ժա Պատասխանի ետ նո
ցա և ասէ , որ բժշկ
եացն զիս նա ասաց ցիս ,
առ զմահիճս քո և
գնա՛ ։
Հարցին ցնա և ասեն ,
ո՞վ է այրն , որ ասաց
ցքեզ առ զմահիճս քո
և շրջեաց ։
Իսկ բժշկեալն ոչ գի
տէր թէ ով իցէ , քան
զի Յ̅ս խոյս ետ վ̅ն ամբո
խին ՚ի տեղւոջէ անտի ։
Յետ այսորիկ գտանէ
զնա Յ̅ս ՚ի տաճարին ,
և ասէ ցնա , ահաւա
Խր

ժ

դիկ ողջացար , մի ևս
մեղանչեր ։ զի մի՛ չար
ևս ինչ լինիցի քեզ ։
Գնաց այրն և պատ
մեաց հրէիցն , եթէ Յ̅ս
էր որ բժշկեացն զիս ։
Եւ վասն այնորիկ հա
լածէին զՅ̅ս հրէայքն ,
զի զայն առնէր ՚ի շաբա
թու ։
Եւ Յ̅ս պատասխանի
ետ նոցա , հայր իմ մին
չև ցայժմ գործէ , և
ես գործեմ ։
Վասն այնորիկ առաւ
ել խնդրէին հրէայքն
սպանանել զնա , զի ոչ
միայն լուծանէր զշա
բաթս այլ և հայր իւր
կոչէր զԱ̅ծ , և հաւա
սար առնէր զանձն աս
տուծոյ ։

պա

ժ․գ․ Պատասխանի ետ
յիսուս և ասէ
ցնոսա․
Ամէն ամէն ասեմ ձեզ․
ոչ կարէ որդի մարդոյ
առնել յանձնէ, և ոչ
ինչ, եթէ ոչ տեսանի
ցէ զհայրն զի առնէ․
զի զոր նա առնէ,
զնոյն և որդին նմին
նման գործէ․
Զի հայր սիրէ զորդի,
և զամենայն ինչ ցու
ցանէ նմա զոր ինքն առ
նէ, և մեծամեծս ևս
քան զսոյնս ցուցանէ
նմա գործս, ընդ
որս դուք զարմա
նայք․
Զի որպէս հայր յա
րուցանէ զմեռեալս
և կենդանի առնէ, նոյն
պէս և որդի զորս կամի
կենդանի առնէ․
դկ Եւ ոչ եթէ հայր դա
տէ զոք, այլ զամենայն
դատաստան ետ որդւոյ
իւրոյ․
Զի ամենեքեան պա
տուեսցեն զորդին, որ
պէս պատուեն զհ
այրն․
ի
Ա Որ ոչ պատուէ զորդին,
ոչ պատուէ զհայր զա
ռաքիչն նորա․
իա
ժ Ամէն ամէն ասեմ
ձեզ, զի որ զբանս
իմ լսէ՝ և հաւատայ
այնմ, որ առաքեացն
զիս, ընդունի զկեան
սն յաւիտենականս,
և ՚ի դատաստան ոչ մը
տանէ, այլ փոխե
ցաւ ՚ի մահուանէ ՚ի
կեանս․
Ամէն ամէն ասեմ ձեզ․

դայ

| | | | |
|---|---|---|---|
| ժ | մ | կ | ղ |
| ի | ՂԸ | ՂԷ | ՃԺԸ |
| իա | ․ | ․ | ․ |



գայ ժամանակ և ար
դէն իսկ է, յորժամ մեռ
եալք լուիցեն ձայնի
որդւոյն աստուծոյ, և
որք լուիցեն, կեցցեն։ իբ Ա
Զի՛ որպէս հայր ու
նի կեանս յանձին իւ
րում, նոյնպէս ետ և
որդւոյ ունել կեանս իգ Ժ
յանձին իւրում։
Եւ իշխանութիւն ետ
նմա դատաստան առնել
Եւ զի որդի մարդոյ է։
Ընդ այն զի զարմանայք։
զի եկեսցէ ժամանակ
յորում ամենեքին որք 'ի
գերեզմանս կայցեն,
լուիցեն ձայնի նորայ։
և եկեսցեն արտաքս։
Որոց բարիս գործեալ
իցէ 'ի յարութ՟ն կենաց,
և որոց զչար արարեալ
'ի յարութիւն դատաս
տանաց։
Ոչ կարեմ ես յանձնէ
առնել և ոչինչ, այլ
որպէս լսեմ, դատեմ,
և դատաստանն իմ ար
դար է։
Զի՛ ոչ խնդրեմ զկա
մս իմ, այլ զկամս այնո
րիկ որ առաքեացն զիս։
Եթէ ես վկայ դէ
եմ վասն ան
ձին իմոյ։
վկայութիւն
իմ չէ՛ ճշմարիտ։ այլ
է որ վկայէ վն իմ, և
դուք գիտէք՝ եթէ ճշ
մարիտ է վկայութ՟ն զոր
վկայեաց վասն իմ։
Դուք առաքեցիք առ
յոհաննէս և վկայեաց
ճշմարտութեան, այլ
ես ոչ եթէ 'ի մարդկա
նէ առնում զ վկայութ՟ն,
այլ զայս ասեմ, զի դուք
ապրեսջիք։
Նա՛ էր ճրագն, որ
լու

իբ Ժ ։ Ժ ։ Ե ։ Գ
իգ ։ ։ ։

լուցեալ էր, և ծագ-
քէր, և դուք կամեցայք
ցնծալ առ ժամանակ
մի 'ի լոյս նորա։
Այլ ես ունիմ զվկայ
ութիւն մեծ ևս քան զՅով-
հաննու, զգործսն
զորս ետ ինձ Հայր, զի
կատարեցից զնս, նոքին
իսկ գործքն զորս գոր
ծեմ, վկայեն վասն իմ,
եթէ Հայր առաքեաց
զիս։
Եւ որ առաքեաց զիս
Հայր՝ նա վկայեաց վասն իմ։
ԽԴ Գ Ոչ զձայն նորա
երբէք լուայք, և ոչ
զտեսիլ նորա տեսէք։
ԽԵ Ժ Եւ ոչ զբան նորա ու-
նիք 'ի ձեզ բնակեալ,
զի զոր նա առաքեաց
դուք նմա ոչ հաւատայք։
Քննեցէք զգիրս, զի
դուք համարիք նոքօք
ունել զկեանսն յաւի-
տենականս և նոքին իսկ
են, որք վկայեն վն իմ,
որովք համարիք ունել
կեանս։
Եւ դուք ոչ կամիք
գալ առ իս, զի զկեանս
ունիցիք։
Ես փառս 'ի մարդկա
նէ ոչ առնում։
Այլ գիտեմ զձեզ՝ թէ
զսէրն Աստուծոյ ոչ ու-
նիք յանձինս։
Ես եկի յանուն Հօր
իմոյ, և ոչ ընդունիք
զիս. եթէ այլ ոք եկեսցէ
յիւր անուն, զնա
ընդունիցիք։
Զիարդ կարէք դուք
հաւատալ, զի զփառս
'ի միմեանց առնուք, և
զփառս զառ 'ի միոյն
Աստուծոյ ոչ խնդրէք։
Մի համարիք եթէ ես
չա

[illegible]

չարախօս ինչ լինիմ ըզ ձէնջ առ Հայր, գոյ, որ չարախօս կայ զձէնջ՝ Մովսէս, յոր դուքն յուսացեալ էք։

Զի եթէ հաւատայիք դուք Մովսեսի, հաւատայիք արդեօք և ինձ. զի նա վասն իմ իսկ գրեաց։

Զի եթէ նորա գրոցն ոչ հաւատայք, զիարդ իմոց բանից հաւատայցէք։

ԽԶ Ա
Յետ այսորիկ գնաց Յս յայն կոյս ծովուն գալիլեացւոց տիբերեայ։

Եւ զհետ երթայր նորա ժողովուրդ բազում, զի տեսանէին զնշանսն. զորս առնէր ի վերայ հիւանդաց։

ԽԷ Գ
Ել ՚ի լեառն Յս, և անդ նստէր աշակերտօքն հանդերձ։

ԽԸ Ա
Եւ էր մերձ զատիկ տօնն հրէից։

ԽԹ Ա
Ամբարձ ՚ի վեր զաչս իւր Յս, և ետես զի ժողովուրդ բազում գայր առ նա, ասէ ցփիլիպպոս, ուստի գնեսցուք հացս զի կերիցեն դոքա։

Զայս ասէր փորձելով զնա, այլ ինքն գիտէր զինչ առնելոցն էր։

Պատասխանի ետ նմա
ԾԳ
փիլիպպոս, երկերիւր դահեկանի հաց չէ դոցա բաւական, թէպէտ և իւրաքանչիւրոք սակաւ ինչ առնուցու։

Ասէ ցնա մի յաշակերտացն նորա, անդրէաս եղբայր սիմոնի վիմի։

Աստ պատանեակ մի, որ ունի հինգ նկանակ

նակ գարեղէն, և եր կուս ձկունս, այլ այն զինչ է առ այդ չափ մարդիկ:
Ասէ յս, բազմեցուցէք զմարդիկդ:
Եւ էր խոտ յոյժ ի տեղւոջն, և բազմեցան մարդիկն թուով իբրև հինգ հազար:
Եւ եառ զհացն յս և գոհացաւ, և բաշխեաց բազմականացն. նոյնպէս և ի ձկանցն որչափ և կամեցան:
Եւ իբրև յագեցան, ասէ ցաշակերտսն իւր, ժողովեցէք զնշխար եալ կոտորսդ, զի մի ինչ կորիցէ:
Ժողովեցին, և լցին երկոտասան սակառի զկոտորոցն, ի հինգ գա րեղէն նկանակէ անտի, որ յաւելաւ ի կերողացն.
Իսկ մարդիկն իբրև տեսին զնշանն զոր ա րար, ասէին, սա է ճշմարիտ մարգարէն, որ գալոց է յաշխարհ.
Յս իբրև գիտաց եթէ գալոց են յափշտակել զնա. զի արասցեն զնա թագաւոր:
Գնաց դարձեալ ի լեառն միայն:
Եւ իբրև երեկոյ եղև իջին աշակերտքն նորա ի ծովեզրն:
Եւ մտեալ ի նաւ գային յայնկոյս ծովուն ի կափառնաում.
Եւ իբրև նսեմացաւ. և չև ևս եկեալ էր առ նոսա յս:
Եւ ծովն ի սաստիկ հող

հողմոյ շնչելոյ յուզէր։
Ապա վարեալ իբրեւ ասպարէզս քսան և հինգ, կամ երեսուն, տեսանէին զՅս զի գնայր ի վր ծովուն, և մերձ էր ի նաւն, զարհուրեցան յոյժ,
Նա ասէ ցնոսա, Ես եմ, մի՛ երկնչիք։
Ապա կամէին զնա ընդունել ի նաւն, և վաղվաղակի եհաս նաւն յերկիրն յոր երթային։

ժբ
ծ

Ի վաղիւ անդր ժողովուրդն որ կայր յայնկոյս ծովուն, տեսանէր թէ այլ նաւ ոչ գոյր անդ բայց ի միոյն. յոր մտին աշակերտքն յի։
Ապա զի չէր մտեալ յս ընդ աշակերտսն իւր ի նաւն, բայց միայն աշակերտքն նորա գնացին։
Իբրեւ այլ նաւք գային ի տիբերեայ մօտ յայն տեղին ուր զհացն կերին։
Իսկ իբրեւ ետես ժողովուրդն՝ եթէ յս չէ անդ, և ոչ աշակերտքն նորա. առին նոքա ընդ նաւսն, և եկին ի կափառնաում խնդրել զյս։
Ապա իբրեւ գտին զնա յայնկոյս ծովուն։
Ասեն ցնա. ռաբբի, երբ եկիր այսր։

դե

Պատասխանի ետ նոցա յս և ասէ, ամէն ամէն ասեմ ձեզ, խնդրէք զիս, իբրեւ ոչ եթէ զնշանս ինչ տեսէք, այլ զի կերիք ի հացէ անտի, և յագեցայք։
Արթայք, գործեցէք մի՛ զկորստական կերակուրն

յ ժ ր
եբ ։ ։

կուրն այլ զկերակուրն
որ մնայ՝ի կեանսն յաւի
տենականս, զոր Որդին
մարդոյ տացէ ձեզ.
քանզի զնա Հայր կնք
եաց Ած.
Ասեն ցնա, զինչ առնի
ցեմք, զի գործսն Աս
տուծոյ գործեսցուք.
Պատասխանի ետ Յս,
եւ ասէ ցնոսա, այս է
գործն Աստուծոյ, զի
հաւատայցէք յայն, որ
առաքեացն զիս.
ծգ Դ Ասեն ցնա, զինչ նշանս
առնիցես զի տեսցուք,
եւ հաւատասցուք, զինչ
գործիցես.
ծդ Ժ Հարքն մեր կերին զմա
նանայն յանապատի
անդ, որպէս եւ գրեալ է,
զհաց յերկնից ետ նոցա
ուտել.
Ասէ ցնոսա Յս, ամէն

ամէն ասեմ ձեզ. եթէ
ոչ Մովսէս ետ ձեզ զհա
ցն յերկնից. այլ
հայրն իմ տայ ձեզ զհա
ցն յերկնից զճշմարիտ.
Զի հաց Աստուծոյ է
որ իջանէ յերկնից, եւ
զկեանս տայ աշխարհի.
Ասեն ցնա. Տր, յամ
ժամ տուր մեզ զհացն
զայն.
ծե Ա Ասէ ցնոսա Յս, ես եմ
հացն կենաց.
ծզ Ժ Որ գայ առիս, ոչ քաղ
ցիցի, եւ որ հաւատայ
յիս ոչ երբէք ծարաւեսցի.
Այլ ասացի ձեզ, թէ
տեսանէք զիս, եւ ոչ
հաւատայք.
Զամենայն զոր տայ ինձ
Հայր, առիս եկեսցէ,
եւ որ գայ առիս, ոչ հա
նից արտաքս.
ծէ Ա Զի իջի ես յերկնից

Յ Մ Ղկ Ղ
ծգ ճղա ՃԿ .
ծդ . . .

Յ Մ Ղ Լ
ծե ՃՀԳ ճկե ՃԺԴ
ծզ . . .
ծէ ՃՂԵ ճհդ ՃԽԶ

ոչ զի զկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ որ առաքեացն զիս։

Այս են կամք Հօր իմոյ, որ առաքեացն զիս. զի զամենայն զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից ՚ի նմանէ, այլ յարուցից զնա յաւուրն յետնում։

Այս են կամք Հօր իմոյ, զի ամենայն, որ տեսանէ զՈրդի և հաւատայ ՚ի նա ընկալցի զկեանսն յաւիտենականս, և ես յարուցից զնա յաւուրն յետնում։

Տրտնջէին զնմանէ Հրեայքն՝ զի ասաց թէ ես եմ հացն իջեալ յերկնից. և ասէին, ոչ սա է Յիսուս որդին Յովսեփու, զորոյ մեք գիտեմք զՀայրն. Իսկ արդ՝ զի՞ ասէ թէ ես յերկնից իջի։

Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա, մի՛ քրթմնջէք ընդ միմեանս։

Ոչ ոք կարէ գալ առիս, եթէ ոչ Հայրն որ զիս առաքեաց ձգեսցէ զնա՝ և ես յարուցից զնա յաւուրն յետնում։

Գրեալ է ՚ի մարգարէս, և եղիցին ամենեքեան ուսեալք յԱստուծոյ, ամենայն որ լսէ ՚ի Հօրէ և ուսանի, գայ առիս։

Ոչ եթէ զՀայր ուրուք տեսեալ իցէ, եթէ ոչ որ էն յԱստուծոյ, նա ետես զՀայր։

Ամէն ամէն ասեմ ձեզ, զի որ հաւատայ յիս ընդունի զկեանսն յաւիտենականս։

Ես եմ հացն կենաց։

Հարքն ձեր կերին զմանա

| | | | |
|---|---|---|---|
| Յ | Ճ | Վ | Չ |
| ԻԵ | · | · | · |
| ԻԹ | ԿԱ | Ժ | ԺԹ |

| | | | |
|---|---|---|---|
| Յ | Մ | Փ | Ղ |
| Կ | · | · | · |
| ԿԱ | ՃԺԲ | · | · |
| ԿԲ | · | · | · |
| ԿԴ | ՄԴ | ՃԿԵ | ՁԶ |
| ԿԵ | · | · | · |

նանայն յանապատին եւ
մեռան ։
Այս է հացն, որ յեր
կնից իջեալ է, զի որ
ուտիցէ ՚ի սմանէ մի՛
մեռանիցի ։
ԿԵ Ա Ես եմ հացն կենդանի,
որ յերկնից իջեալ ։
Եթէ ոք ուտիցէ ՚ի
հացէ յայսմանէ՝ կեցցէ
յաւիտեան ։
Եւ հացն, զոր ես տաց
մարմին իմ է, զոր ես
տաց վս կենաց աշխարհի ։
ԿԶ Ա Մարտնչէին ընդ մի
մեանս հրեայքն եւ ա
սէին, զիարդ կարէ սա
տալ մեզ զմարմին իւր
յուտել ։
Ասէ ցնոսա յս, ամէն
ամէն ասեմ ձեզ. եթէ
ոչ կերիջիք զմարմին
որդւոյ մարդոյ, եւ արբ
ջիք զարիւն նորա, ոչ

ունիք կեանս յանձինս ։
Որ ուտէ զմարմին իմ,
եւ ըմպէ զարիւն իմ, ու
նի զկեանս յաւիտենա
կանս, եւ ես յարուցից
զնա յաւուրն յետնում ։
ԿԷ Ա Զի մարմին իմ ճշմա
րիտ կերակուր է, եւ
արիւն իմ, ճշմարիտ
ըմպելի է ։
ԿԸ Ժ Որ ուտէ զմարմին իմ,
եւ ըմպէ զարիւն իմ,
յիս բնակեսցէ, եւ ես
՚ի նմա ։
Որպէս առաքեաց զիս
կենդանին Հայր, եւ ես
կենդանի եմ վասն Հօր,
եւ որ ուտէն զիս, եւ նա
կեցցէ վասն իմ ։
Այս է հացն, որ յերկ
նից իջեալ ։
Ոչ որպէս կերին հարքն
ձեր զմանանայն եւ մե
ռան, որ ուտէ զհացս
զայս

| Յ | Մ | Մր | Ղ |
|---|---|---|---|
| ԿԵ | ՄՃԲ | ՃԿԵ | ՃԿԶ |
| ԿԶ | · | ՃԿԵ | ՃԿԶ |

| Յ | Մ | Մր | Ղ |
|---|---|---|---|
| ԿԷ | ՄՃԲ | ՃԿԵ | ՃԿԶ |
| ԿԸ | · | · | · |

զայս կեցցէ յաւիտեան։
Զայս ասաց ՚ի ժողո
վրդեանն, յուսուցա
նելն ՚ի կափառնաում։
Եւ բազումք յաշակեր
տացն իբրեւ լուան ա
սէին, խիստ է բանդ
այդ, ով կարէ լսել դմա։
Իբրեւ գիտաց յս յանձն
իւր՝ եթէ տրտնջեն վասն
այնորիկ աշակերտքն իւր,
ասէ ցնոսա. այդ գայ
թակղեցուցանէ զձեզ։
կթ Ա Իսկ արդ եթէ տեսանի
ցէք զորդի մարդոյ, զի
ելանիցէ ուր էր զա
ռաջինն։
հ Դ Հոգին է կենդանա
րար, մարմինն ինչ ոչ օգնէ
հա Ժ Զբանսն զոր ես խօ
սեցայ ընդ ձեզ հոգի
է եւ կեանք։
Այլ են ոմանք ՚ի ձէնջ
որք ոչ հաւատան։

հբ Դ Քանզի գիտէր յիսուս
ի սկզբանէ, ով են այնո
քիկ որք ոչն հաւատան,
եւ ով այն է որ մատնե
լոցն է զնա։
հգ Ժ Եւ ասէ, վասն այնորիկ
ասացի ձեզ՝ թէ ոչ ոք կա
րէ գալ առ իս. եթէ
ոչ իցէ տուեալ նմա ՚ի
հօրէ իմմէ։
Յայսմանէ բազումք
յաշակերտացն նորա չո
գան յետս, եւ ոչ եւս
շրջէին ընդ նմա։
Ասէ յս ցերկոտասանսն
աշակերտսն, միթէ եւ
դուք կամիք երթալ։
հդ Ա Պատասխանի ետ նմա
սիմոն պետրոս, տէ՛ր առ
ով երթիցուք, զբանս
կենաց յաւիտենակա
նաց ունիս։
Եւ մեք հաւատացաք
եւ ծանեաք եթէ դու
ես

| Յ | Մ | Մր | Ղ |
|---|---|---|---|
| կթ | յժ | ճչա | ճչե |
| հ | ճչե | ճգը | . |
| հա | . | . | . |

| Յ | Մ | Մր | Ղ |
|---|---|---|---|
| հբ | ճհթ | ճկա | . |
| հգ | . | | . |
| հդ | ճկղ | ձբ | ղբ |

ես քսն որդի աստուծոյ
ճե ծ Պատասխանի ետ յս̃ , ոչ ես զձեզ զերկոտասանսդ ընտրեցի , եւ մինդ ՚ի ձէնջ սատանայ է . Ասէր զսիմոնեան յուդայէ իսկարիոտացւոյ , զի նա իսկ մատնելոց էր զնա , եւ մի էր յերկոտասանիցն .

ԺՐ. Յետ այսորիկ շրջէր յս̃ ՚ի գալիլեա , քանզի ոչ կամէր ՚ի հրէաստանի շրջել , զի խնդրէին զնա հրէայքն սպանանել . Եւ էր մերձ տօնն հրէից տաղաւարահարաց , Ասեն ցնա եղբարքն նորա . գնա աստի , եւ երթ ՚ի հրէաստան , զի եւ աշակերտքն քո տեսցեն զգործսդ քո զորս գործես .

Ո՛չ ոք է որ ՚ի ծածուկ ինչ գործէ եւ խնդրէ զինքն համարձակ լինել . եթէ զայդ գործես , յայտնեա զանձն քո աշխարհի . Քանզի եւ եղբարքն իսկ չէին հաւատացեալ ՚ի նա . Ասէ ցնոսա յս̃ , ժամանակ իմ չեւ է հասեալ , բայց ձեր ժամանակ յամենայն
դե ժամու պատրաստ է . Ոչ կարէ աշխարհս ատել զձեզ , բայց զիս ատեայ , զի ես վկայեմ վասն նորա եթէ գործքն իւր չարութեան են . Դուք երթայք ՚ի տօնն յայն , ես ոչ երթամ ՚ի տօնն յայն , զի իմ ժամանակ չեւ է լցեալ . Զայս իբրեւ ասաց ինքն մնաց անդէն ՚ի գալիլեա .

Իբրեւ

ծ ձե . Տ . Փ . Զ .

Իբրեւ ելին եղբարքն
նորա, եւ ինքն ել ՚ի տօնն,
ոչ յայտնի, այլ իբրեւ ՚ի
ծածուկ ։
Եւ հրէայքն խնդրէին
զնա ՚ի տօնի անդ՝ եւ
ասէին, ուր իցէ նա ։
Եւ քրթմնջիւն էր ըզ
նմանէ ՚ի ժողովուրդսն
Կէսքն ասէին թէ
բարւոք է ։
Կոմլքն ասէին ոչ, այլ
մոլորեցուցանէ զժողո
վուրդն ։
Եւ ոչոք համարձակ խօ
սէր զնմանէ վասն երկիւ
ղին հրէից ։

Իբրեւ տօնն ընդ եկ
միջեցաւ, ել Յս
՚ի տաճարն եւ
ուսուցանէր ։
Զարմանային հրէ
այքն եւ ասէին, զիարդ
զգիրս գիտէ սա, զի
ուսեալ ընաւ չէք ։
Պատասխանի ետ նոցա
Յս եւ ասէ, իմ վարդա
պետութիւնս չէ իմ, այլ
այնորիկ որ առաքեացն
զիս ։
Եթէ ոք կամի զկամս
նորա առնել՝ գիտասցէ
վասն վարդապետութեանս,
յաստուծոյ իցէ այր
դեօք, եթէ ես ինչ
յանձնէ ՚իմէ խօսիմ ։
Որ յանձնէ իւրմէ խօ
սի փառս անձին իւրում
խնդրէ ։ իսկ որ խնդրէ
զփառս այնորիկ որ առա
քեացն զնա, նա ճշմարիտ
է, եւ անիրաւութիւն
ոչ գոյ ՚ի նմա ։
Ոչ մովսէս ետ ձեզ զօր
էնս, եւ ոչոք ՚ի ձէնջ
առնէ զօրէնսն ։
Զի՞ խնդրէք զիս սպա
նա

նանել ․ պատասխանի ետ ժողովուրդն և ասէ դև գոյ ՚ի քեզ , ով խնդրէ զքեզ սպանանել ։

Պատասխանի ետ նոցա յս և ասէ , գործ մի գործեցի , և ամենեքին զարմացեալ էք ։

Վասն այնորիկ մովսէս ետ ձեզ զթլփատութիւն , զի ոչ եթէ ՚ի մովսիսէ էր , այլ ՚ի հարց անտի ․ և ՚ի շաբաթու թլփատէք զմարդ ։

Իսկ արդ եթէ զթլփատութիւն առնու մարդ ՚ի շաբաթու , զի մի՛ օրէնքն մովսիսի լուծցին , ՀԶ Ժ

Ընդ իս ցասուցեալ էք , զի զողջոյն իսկ մարդ բժշկեցի ՚ի շաբաթու ․

Մի ըստ աչս դատէք , այլ ուղիղ դատաստան արարէք ․ եք

Ասէին ոմանք յԷմացւոց անտի , ոչ նա է սա զոր խնդրէին սպանանել

Եւ ահաւասիկ յայտնապէս խօսի , և չասեն ինչ ընդդէմ , գուցէ արդեօք և իշխանքն գիտացին թէ սա է քն ․

Այլ զսա գիտեմք ուստի է , իսկ քսն յորժամ գայցէ ոչոք գիտէ ուստի է ․

Աղաղակեաց յս ՚ի տաճարին , ուսուցանէր , և ասէր ․

ՀԶ Ժ Եւ զիս գիտէք , և ուստի եմ գիտէք ․ և յանձնէ իմմէ ոչ եմ եկեալ , այլ է ճշմարիտ՝ որ առաքեացն զիս , զոր դուք ոչ գիտէք ․

Ես գիտեմ զնա ․ զի ՚ի նմանէ իսկ եմ , և նա առա

առաքեաց զիս :
ճե Ա Մ.Խ. Խնդրէին զնա ունել, և ել ՚ի ձեռաց նոցա. և ոչոք էարկ ՚ի նա ձեռն զի չև էր հասեալ ժամ նր :
ճզ Ժ Եւ բազումք ՚ի ժողո վրդենէն հաւատացին ՚ի նա, և ասէին. քնն յորժամ գայցէ միթէ աւելի ինչ նշանս առ նիցէ՝ քան զոր սա առնէ: Եւ լուան փարիսեցիքն զտրտունջ ժողովրդեանն զնմանէ :
ճէ Ա Եւ առաքեցին քահա նայապետքն և փարիսե ցիքն սպասաւորս, զի կալ ցեն զյն :
ճը Դ Ասէ յս, փոքր մի ևս ժամանակ ընդ ձեզ եմ, և երթամ առ այն որ առաքեացն զիս:
ճա Ժ Խնդրիցէք զիս և ոչ գտանիցէք, և ուր եմն երթամ, դուք ոչ կա րէք գալ :
Ասեն հրեայքն ընդ մի մեանս, ուր յօ երթայցէ դա՝ զի մեք ոչ գտանի ցեմք զդա. միթէ ՚ի սփիւռս հեթանոսաց երթայցէ և ուսուցանի ցէ զհեթանոսս :
Զինչ է բանն այն զոր ասաց, խնդրիցէք զիս և ոչ գտանիցէք, և ուր եմն երթամ, դուք ոչ կարէք գալ :

Յաւուր վերջնում աւուր եւ մեծի տօնին, կայր յս աղաղակէր և ասէր, եթէ ոք ծա րաւի իցէ եկեսցէ առ իս և արբցէ. որ հաւա տայ յիս՝ որպէս ասէն գիրք, գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կեն

| յ | մ | մր | ղ | |
|---|---|---|---|---|
| ճե | ժ | ծկբ | ՟լթ | մկթ |
| ճզ | . | . | . | |
| ճէ | յ | ճձա | մձե | |
| ճը | ․ճե | ձճթ | . | |
| ճա | . | . | . | |

կենդանութեան ։
Օ այս ասէր վասն հոգ-
ւոյն զոր ընդունելոց
էին , որք հաւատային
՚ի նա , զի չեւ էր հոգին
քանզի յս չեւ էր փա
ռաւորեալ ։
ձբ Ոմանք ՚ի ժողովրդե-
ե նէն իբրեւ լուէին զբանս
զայս , ասէին , սա է
ճշմարիտ մարգարէն ։
ձբ Այլքն ասէին , սա է
ե քսն · իսկ կէսքն ասէին
միթէ ՚ի գալիլեէ գալոց
իցէ քս ։
Ոչ գիրք ասեն , եթէ
՚ի զաւակէ դաւթի , եւ
՚ի բեթղեհեմ գեղջէ ,
ուր դաւիթն է , գալոց
է քսն ։
ձգ Եւ եղեւ հերձուած ՚ի
ժ ժողովրդեանն վասն նր ։
ձե Եւ ոմանք ՚ի նոցանէ
Ա կամեցան ունել զնա ,
այլ ոչոք մխեաց ՚ի նա
Ձ

Ձեռս ։
ձզ Իսկ եկին անդրէն սպա-
ժ սաւորքն առ քահանայա-
պետսն եւ փարիսեցիս ,
եւ ասեն՝ սոքա ցնոսա · ընդ-
էր ոչ ածիք զնա այսր ։
Պատասխանի ետուն
սպասաւորքն , եւ ասեն ,
ոչ երբէք այնպէս խօսե-
ցաւ մարդ՝ որպ այրն այն ։
Պատասխանի ետուն
փարիսեցիքն , եւ ասեն ,
միթէ եւ դուք մոլոր
եցայք ։
Մի թէ յիշխանացն ոք
հաւատաց ՚ի նա , կամ
՚ի փարիսեցւոց ։
Այլ այն խաժամուժ
ամբոխն , որ ոչ գիտէ
զօրէնս , եւ նզովեալ քեն ։
Ասէ նիկոդեմոս ցնոսա ,
որ եկեալ էր առ նա գի-
շերին յառաջագոյն , եւ
մի էր ՚ի նոցանէ ։
Մի

Յ Մ
ձբ ճի
ձգ ե
ձդ ·
ձե կ ճիբ զԹ

Յ Մ Ք Ղ
ձզ · · ·

Միթէ օրէնքն մեր
դատեն զմարդ՝ եթէ ոչ
լսեն ինչ նախ ՚ի նմանէ,
կամ գիտեն զինչ գործէ .
Պատասխանի ետուն
նմա և ասեն, մի թէ և
դու ես գալիլեացի ես .
քննեա՝ և տես, զի
մարգարէ, ՚ի գալիլեէ ոչ
յառնէ .
Եւ գնացին իւրաքանչ
իւր ոք ՚ի տեղի իւր .
Իսկ յ̅ն գնաց
՚ի լեառն ձի
թենեաց, և
ընդ առաւօտն դարձ
եալ եկն ՚ի տաճարն . և
գայր առ նա ամենայն ժո
ղովուրդն, և ուսուցա
նէր զնոսա .
Ածին քահանայապետ
քըն և փարիսեցիք զկին
մի ըմբռնեալ ՚ի շնու
թեան .
Եւ կացուցեալ զնա
առաջի, ասեն .
Կինս այս ըմբռնեալ՝
ինքն յայտնապէս շնաց
եալ է .
Եւ յօրէնս Մովսէս մեզ
պատուիրեաց՝ զայսպի
սիս քարկոծել .
Արդ՝ դու զինչ ասես
վասն դորա .
Զայս ասէին փորձե
լով զնա՝ զի ունիցին զամ
բաստանութիւն զնմանէ .
Իսկ յ̅ն ՚ի խոնարհ նայե
լով գրէր մատամբն
յերկրի .
Իսկ իբրեւ ստիպեցին
հարցանելով զնա, հայե
ցեալ ՚ի վեր ասէ ց̅նս, ան
մեղն ՚ի ձէնջ նախ՝ նա ըն
կեսցէ զքար ի վ̅ր դորա .
Եւ դարձեալ ՚ի խո
նարհ նայելով գրէր
յերկրի . Եւ

Եւ լուեալ ելանէին մի ըստ միոջէ՝ սկսեալ յառաջնոյն մինչև ՚ի վերջինսն. և մնաց միայն Յս, և կինն կայր առաջի նորա.

Պատասխանի ետ Յս և ասէ ցնա, կին ո՞ւր են, ոչ ոք զքեզ դատապարտեաց.

Եւ ասէ, ոչ Տր.

Եւ ասէ Յս, և ոչ ես դատապարտեմ զքեզ, երթ յայսմ հետէ մի՛ մեղանչեր.

Վերստին խօսել եդ ընդ նոսա Յս, և ասէ.

Ես եմ լոյս աշխարհի, որ գայ զկնի իմ, ընդ խաւար մի՛ գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց.

Ասեն ցնա փարիսեցիքն դու վասն անձին քոյ վկայես՝ և վկայութիւն քո չէ ճշմարիտ.

Պատասխանի ետ Յս և ասէ ցնոսա, թէպէտ ես վկայեմ վասն անձին իմոյ վկայութիւն իմ ճշմարիտ է. զի գիտեմ ուստի եկի, և յո՞ երթամ, բայց դուք ոչ գիտէք, ուստի գամ կամ յո՞ երթամ.

Դուք ըստ մարմնոյ դատիք, ես ոչ դատեմ և ոչ զոք.

Թէպէտ և դատեմ ես զոք՝ դատաստանն իմ ճշմարիտ է. զի չեմ միայն, այլ ես, և որ առաքեացն զիս Հայր.

Եւ յօրէնսն իսկ ձեր գրեալ է. թէ երկուց մարդոց վկայութիւն ճշմարիտ է.

Ես եմ, որ վկայեմ վասն իմ.

իմ, և վկայէ վասն իմ,
որ առաքեացն զիս Հայր։
ձե Դ Ասէին ցնա, ուր է
Հայրն քո.
Պատասխանի ետ յս̃ և
ասէ ցնս̃, ոչ զիս գիտէք
և ոչ զՀայրն իմ. եթէ
զիս գիտէիք՝ և զՀայրն
իմ թերևս գիտէիք.
ձէ Ը Զայս բան խօսեցաւ
'ի տան գանձին յորժամ
ուսուցանէր 'ի տաճարի
անդ, և ոչոք կալաւ զնա
զի չև ևս հասեալ էր
ժամ նորա։
ձԹ Ժ Ասէ դարձեալ
ցնոսա յս̃, ես
երթամ, և
խնդրիցէք զիս. և 'ի
մեղս ձեր մեռանիցէք.
զի ուր ես երթամ,
դուք ոչ կարէք գալ։
Ասեն հրէայքն, միթէ
զիւրովին երթայցէ,
զի ասէ, թէ ուր ես
երթամ, դուք ոչ կա
րէք գալ։
Եւ ասէ ցնոսա, դուք 'ի
ներքուստ աստի էք,
և ես 'ի վերուստ անտի
եմ. դուք յաշխարհէ
աստի էք, ես չեմ յայսմ
աշխարհէ.
Բայց ասացի ձեզ թէ
'ի մեղս ձեր մեռանիցիք,
զի թէ ոչ հաւատայցէք
թէ ես եմ, մեռանի
ցիք 'ի մեղս ձեր
Ասեն ցնա դու ով ես.
եե Ասէ ցնոսա յս̃, նախ զի
և խօսիմս իսկ ընդ ձեզ.
Բազում ինչ ունիմ վասն
ձեր խօսել և դատել,
այլ որ առաքեացն զիս
ճշմարիտ է,
Եւ ես զոր լուայ 'ի նմա
նէ, զայն խօսիմ յաշ
խարհ

յ ճ փ ղ
ձե ՃԺԲ : ՃԺԹ
ձէ փ ՃԻԹ փԲ
ձԹ : , :

խօրհի։
Եւ ոչ գիտացին թէ
զՀօրէ ասէր ցնոսա։ Ասէ
ցնս յս, յորժամ բարձրա-
ցուցանիցէք զՈրդի մար-
դոյ՝ յայնժամ գիտասջիք
եթէ ես եմ, և յանձնէ
իմէ ինչ ոչ առնեմ։
այլ որպէս ուսոյց զիս Հայրն
իմ, զայն խօսիմ։
Եւ որ առաքեացն զիս,
ընդ իս է, ոչ եթող
զիս միայն, զի ես զՀա-
ճոյս նորա առնեմ հա-
նապազ։
Զայս զայն խօսեցա-
բազումք հաւատացին
'ի նա,
Եւ ասէր յս առ եղ
հրէայսն հաւ-
ատացեալսն,
եթէ դուք կացջիք 'ի
բանին իմում, ճշմա-
րիտ աշակերտք իմ էք։

Եւ ծանիջիք զճշմար-
տութիւնն, և ճշմար-
տութիւն ազատեսցէ
զձեզ։
Պատասխանի ետուն
և ասեն, զաւակք աբրա-
համու եմք, և ոչ ու-
մեք երբէք ծառայե-
ցաք, զիարդ ասես
թէ ազատք լինիջիք։
Պատասխանի ետ նոցա
յս, ամէն ամէն ասեմ
ձեզ, եթէ ամ, որ առնէ
զմեղս, ծառայ է մեղաց։
Եւ ծառայն ոչ յաւի-
տեան կայ 'ի տան։
Իսկ որդին յաւիտեան կայ
Իսկ արդ եթէ որդին
զձեզ ազատեսցէ, ճշ
մարիտ ազատք լինիջիք։
Գիտեմ զի զաւակք
աբրահամու էք, այլ
խնդրէք սպանանել զիս,
զի բանն իմ ոչ գտանէ տեղի
'ի ձեզ։ Ես

[illegible] զոր տեսի առ Հօր
իմում խօսիմ, և դուք
զոր լուայք 'ի Հօրէն
ձերմէ առնէք ։
Պատասխանի ետուն
նմա և ասեն, Հայր մեր
աբրահամ է ․
Ասէ ցնոսա յս ․ եթէ որ
դիք աբրահամու էիք՝
զգործսն աբրահամու
գործէիք ։
Այլ այժմ խնդրէք սպա
նանել զիս, զայր մի,
որ ձեզ զճշմարտութիւն
խօսեցայ, զոր լուայ 'ի
Հօրէ իմէ․ զայդ աբրա
համ ոչ արար ։
Դուք առնէք զգործս
հօրն ձերոյ ։
Ասեն ցնա, մեք 'ի պոռն
կութենէ չեմք ծնեալք,
մի է հայր մեր ած ։
Ասէ ցնոսա յս, եթէ ած
էր հայր ձեր, սիրէիք
արդեօք զիս ։
Զի ես յաստուծոյ ելի
և եկի, և ոչ եթէ յանձ
նէ ինչ եկի, այլ նա առա
քեաց զիս ։
Ընդէր զխօսս իմ ոչ գի
տէք դուք․ վասն զի ոչ
կարէք լսել զբանն իմ․
Դուք 'ի հօրէն սատա
նայէ էք, և զցանկու
թիւն հօր ձերոյ կամիք
առնել, զի նա մարդա
սպան էր 'ի սկզբանէ, և
'ի ճշմարտութեան ոչ ե
կաց, զի ոչ գոյ ճշմար
տութիւն 'ի նմա, յորժամ
խօսիցի սուտ յիւրոց ան
տի խօսի, զի սուտ է
և հայր նորա ։
Իսկ ես, զի զճշմարտու
թիւն խօսիմ՝ ոչ հաւա
տայք ինձ ։
Ո՞վ 'ի ձէնջ յանդիմա
նեսցէ զիս վասն մեղաց,
Թէ

Թէ զճշմարտութիւն ա
սեմ ձեզ ընդէր ոչ
հաւատայք ինձ։
Որ էն յաստուծոյ՝ զբա
նս աստուծոյ լսէ՝ և
դուք վասն այնորիկ ոչ
լսէք, զի չէք յաստուծոյ։
Պատասխանի ետուն
հրէայքն և ասեն ցնա,
ոչ բարւոք ասեմք մեք՝
եթէ սամարացի ես դու,
և դև գոյ 'ի քեզ։
Պատասխանի ետ յ͞ս և
ասէ, յիս դև ոչ գոյ,
այլ պատուեմ զհայր իմ,
և դուք անարգէք զիս։
Ես ոչ խնդրեմ զփառս
իմ, է՛ որ խնդրէն և
դատէ։
Ամէն ամէն ասեմ ձեզ,
եթէ ոք զբանն իմ պա
հեսցէ՝ զմահ մի՛ տեսցէ
'ի յաւիտեան։
Ասեն ցնա՝ հրէայքն,
արդ գիտացաք եթէ
դև գոյ 'ի քեզ, աբրա
համ մեռաւ և մարգա
րէքն. և դու ասես,
եթէ ոք զբանն իմ պա
հեսցէ, մի՛ ճաշակեսցէ
զմահ 'ի յաւիտեան։
Միթէ դու մեծ ինչ
ոք իցես քան զհայր մեր
աբրահամ, որ մեռաւ
և մարգարէքն մեռան,
արդ դու զո՞ առնես
զքեզ։
Պատասխանի ետ յ͞ս ե
թէ ես փառաւորեմ
զանձն իմ, փառքն իմ
ոչինչ են, է՛ հայր որ
փառաւորէ զիս. զորմէ
դուքն ասէք թէ ա͞ծ
մեր է։
Եւ ոչ ճանաչէք զնա,
Բայց ես գիտեմ զնա,
և թէ ասեմ, թէ ոչ
գիտեմ զնա՝ ձեզ նման
սուտ լինիմ. այլ ես

գիտեմ զնա , և զբան
նորա պահեմ ։
Աբրահամ հայր ձեր՝
ցանկացաւ տեսանել
զօրն իմ , ետես , և
ուրախ եղև ։
Ասեն ցնա հրէայք ,
յիսուն ամ չև ևս է քո ,
և զաբրահամ տեսեր ։
Ասէ ցնոսա յս , ամէն
ամէն ասեմ ձեզ , յա
ռաջ քան զլինիլն աբրա
համու եմ ես ։
Վէմս առին , հրէայքն
զի արկցեն ի վերայ նո
րա , և յս խոյս ետ , և
ել գնաց 'ի տաճարէ
անտի ։

Եւ մինչ դեռ եէ
անցանէր , ե
տես զայր մի
կոյր 'ի ծնէ ։
Եւ հարցին ցնա աշա
կերտքն նորա և ասեն ։
Ռաբբի , ո՞ր մեղաւ է ։
սորա՝ թէ հօր և մօր ի
րոյ , զի կոյր ծնցի ։
Պատասխանի ետ յս ,
ոչ դորա մեղաւ է , և ոչ
հօր և մօր իւրոյ , այլ
զի յայտնի լիցին գործքն
աստուծոյ 'ի դմա ։
Եւ ինձ պարտ է գոր
ծել զգործս այնորիկ , որ
առաքեաց զիս ։ մինչ
օր կայ , գայ գիշեր , յոր
ժամ ոչ ոք կարէ գործել
Մինչ դեռ յաշխարհի
եմ , լոյս եմ աշխարհի ։
Զայս իբրև ասաց ,
եթուք 'ի գետին , և
արար կաւ 'ի թքոյն ,
և ծեփեաց զկաւն ի վե
րայ աչաց կուրին ։
Եւ ասէ ցնա , երթ ,
լուա՛ յաւազանին սե
լովամայ , որ թարգմանի

առա

առաքեալ ։
Չոգաւ, լուացաւ եկն և տեսանէր ։
Իսկ դրացիքն և որոց տեսեալ էր զնա յառաջագոյն եթէ մուրացիկ էր ․ ասէին ․ ոչ սա էր որ նստէրն՝ և մուրանայր ։
Ոմանք ասէին նա է ։
Այլքն ասէին ոչ, այլ նման է նմա ։
Նա ինքն ասէր թէ ես եմ ։
Ասեն ցնա ․ իսկ զիարդ բացան աչք քո ։
Նա ետ պատասխանի, այր մի, որում յս՟ ասեն, կաւ արար, և ծեփեաց զաչս իմ, և ասէ ցիս, երթ ՚ի սելովամ, և լուա՛ ․ չոգայ լուացայ և տեսանեմ ։
Ասեն ցնա ․ ուր է նա ։

ՃԾԱ

Ասէ ցնոսա ոչ գիտեմ ։
Ածին առ փարիսեցիսն զնա, որ երբեմն կոյրն էր
Եւ էր շաբաթ յորժամ կաւն արար յս՟, և եբաց զաչս կուրին ․
Դարձեալ հարցանէին զնա փարիսեցիքն, թէ զիարդ տեսանես ․
Եւ նա ասէ ցնոսա, կաւ եդ ի վերայ աչաց իմոց ․ և լուացայ, և տեսանեմ ։
Ասեն ոմանք ՚ի փարիսեցւոցն, ոչ է այրն այն յաստուծոյ, զի զշաբաթս ոչ պահէ ․
Այլքն ասէին, իսկ զիարդ կարէ մարդ մեղաւոր այսպիսի նշանս առնել,
Եւ էին հերձուածք իմէջ նոցա ։
Ասեն դարձեալ ցկոյրն դու զի ասես վասն նորա

զի

զի եբաց զաչս քո ։
Եւ նա ասէ թէ մարգարէ է ։
Եւ ոչ հաւատային հրէայքն զնմանէ՝ եթէ կոյր էր և բացաւ, մինչև կոչեցին զծնողս բացելոյն ։
Հարցին ցնոսա և ասեն, սա է որդին ձեր, զոր դուքն ասէիք թէ կոյր ծնաւ ։ արդ՝ զիարդ տեսանէ ։
Պատասխանի ետուն նոցա ծնողքն նորա և ասեն, գիտեմք զի սա է որդին մեր, և զի կոյր ծնաւ ։
Բայց զիարդ այժմ տեսանէ ոչ գիտեմք, կամ թէ ով եբաց զաչս դորա, մեք ոչ գիտեմք ։ ցդա իսկ հարցէք, ինքնին ՚ի չափ հասեալ է, ինքն իսկ խօսեսցի վասն իւր ։
Զայս ասացին ծնողքն նորա՝ զի երկնչէին ՚ի հրէից ։ քանզի ուխտ եդեալ էր հրէից, եթէ ոք խոստովանեսցի զնա Քս̃, ՚ի բաց կացցէ ՚ի ժողովրդենէն ։
Վասն այնորիկ ասացին ծնողքն նորա, եթէ ինքնին ՚ի չափ հասեալ է՝ ցնա իսկ հարցէք ։
Դարձեալ կրկին անգամ կոչեցին զայրն, որ կոյրն էր, և ասեն ցնա. տուր փառս աստուծոյ, մեք գիտեմք զի այրն այն մեղաւոր է ։
Եւ նա ասէ, թէ մեղաւոր իցէ ես ոչ գիտեմ, բայց այս գիտեմ, զի կոյր էի և արդ տեսանեմ։
Դարձեալ ասեն ցնա,
զինչ

զինչ արար քեզ, զիարդ
եբաց զաչս քո:
Պատասխանի ետ նոցա,
այժմ ասացի ձեզ եւ ոչ
լուայք. զի կամիք միւս
անգամ լսել. միթէ եւ
դուք կամիք աշակերտ
լինել նմա:
Նոքա հայհոյեցին զնա
եւ ասէին. դու լիջիր
նորա աշակերտ, մեք
Մովսէսի աշակերտք եմք:
Մեք գիտեմք զի ընդ
Մովսէսի խօսեցաւ ած.
զսա ոչ գիտեմք ուստի
իցէ:
Պատասխանի ետ այրն,
եւ ասէ ցնոսա.
Այդ իսկ են սքանչե-
լիք՝ զի դուք ոչ գիտէք
ուստի իցէ, եւ զիմ աչս
եբաց.
Գիտեմք, զի ած մե-
ղաւորաց ոչ լսէ.

Բայց եթէ ածապաշտ
ոք իցէ՝ եւ զկամս նորա
առնիցէ, նմա լսէ.
Ի յաւիտենից ոչ ոք լու-
աւ՝ եթէ եբաց ոք զաչս
կուրի ի ծնէ կոյր ծնի
ցելոյ.
Եթէ ոչ յաստուծոյ էր
այրն այն՝ ոչ կարէր առ-
նել ինչ.
Պատասխանի ետուն
եւ ասեն ցնա, ի մեղս
իսկ ծնեալ ես ամեն
եւին. եւ դու վարդա-
պետ լինիս մեր.
Եւ հանին զնա արտաքս.
Լուաւ յս եթէ հանին
զնա արտաքս. եւ եգիւ
եգիտ զնա ասէ ցնա.
Դու հաւատաս յորդին
աստուծոյ.
Նա պատասխանի ետ
եւ ասէ, տր, ո՞վ է, զի
հաւատացից ի նա.
Ասէ

Ասէ ցնա Յս, և տեսեր զնա, և որ խօսի ընդ քեզ, նա է։

Եւ նա ասէ, հաւատամ՝ տր, և երկիր եպագ նմա։

Եւ ասէ Յս, ի դատաստան եկի յաշխարհս յայս, զի որք ոչն տեսանեն՝ տեսցեն, և որք տեսանենն, կուրասցին։

Լուան ոմանք ՚ի փարիսեցւոցն, որք ընդ նմա էին, և ասեն ցնա, միթէ և մեք կոյրք իցեմք։

Ասէ ցնոսա Յս, եթէ կոյրք էիք ոչ էր ձեր մեղ, բայց արդ ասէք եթէ տեսանեմք՝ և մեղքն ձեր ՚ի ձեզ հաստատեալ են։

Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ոչ մտանէ ընդ դրունն ՚ի գաւիթն ոչխարաց՝ այլ ընդ այլ ելանէ, նա գող է և աւազակ։

զկ Իսկ որ մտանէ ընդ դրունն, հովիւ է ոչխարաց. Նմա դռնապանն բանայ. և ոչխարքն ձայնի նորա լսեն, և զիւր ոչխարսն կոչէ յանուանէ, և հանէ զնա։

Եւ յորժամ զիւրն զամենայն հանիցէ՝ առաջի նոցա երթայ. և ոչխարքն զհետ նորա երթան, զի ճանաչեն զձայն նորա։

Օտարի զհետ ոչ երթիցեն, այլ փախիցեն ՚ի նմանէ, զի ոչ ճանաչեն զձայն օտարաց։

Զայս առակ ասաց նոցա Յս, և նոքա ոչ գիտէին եթէ զինչ էր որ

խօ

խօսէրն ընդ նոսա ։
Դարձեալ ասէ ցնս՟ յս՟ ,
ամէն ամէն ասեմ ձեզ,
ես եմ դուռն ոչխարաց ։
Ամենեքեան որք յա
ռաջ քան զիս եկին ,
գողք էին և աւազակք.
այլ ոչ լուան նոցա ոչ
խարքն ։
Ես եմ դուռն ։
Ընդ իս՝ եթէ ոք մտա
նիցէ՝ կեցցէ . մտցէ ,
և ելցէ , և ճարակ
գտցէ ։
Ղ Գող ոչ գայ՝ եթէ ոչ
Գ զի գողասցի , և սպան
ՂԱ ցէ , և կորուսցէ . ես
Դ եկի զի զկեանս ունի
ՂԲ ցին , և առաւել ևս
Ժ ունիցին ։

ՅԻԱ Ես եմ հովիւն ՂԳ
քաջ , հովիւ
քաջ զանձն իւր
դնէ ի վերայ ոչխարաց ։
Իսկ վարձկանն , որ ոչ
է հովիւ , որոյ ոչ իւր
են ոչխարքն , իբրև
տեսանէ զգայլն զի գայ՝
թողու զոչխարսն և
փախչի , և գայլն յափշ
տակէ զնոսա և ցրուէ ։
Քանզի վարձկան է
և չէ փոյթ նմա վասն
ոչխարացն ։
Ես եմ հովիւն քաջ ,
և ճանաչեմ զիմսն , և
ճանաչիմ յիմոցն ։
Որպէս գիտէ զիս Հայր ,
գիտեմ և ես զՀայր ։
Եւ զանձն իմ դնեմ ի
վերայ ոչխարաց ։
Այլ և այլ ևս ոչխարք
են իմ , որք ոչ են յայսմ
գաւթէ , և զայն ևս
պարտ է ինձ ածել
այսր , և ձայնի իմում
լուիցեն , և եղիցին մի
հօտ

| | | |
|---|---|---|
| Յ | Մ | Մր |
| Ղ | ՃԺԸ | ՃԺԹ |
| ՂԱ | ԻԴ | ՃԺԵ |
| ՂԲ | ։ | ։ |

հօտ և մի հովիւ ։
Վասն այնորիկ սիրէ զիս հայրն իմ . զի ես դնեմ զանձն իմ , զի միւս անգամ առից զնա ։
Ոչ ոք հանէ զնա յինէն , այլ ես դնեմ զնա անձամբ իմով ։
Իշխանութիւն ունիմ դնել զնա , և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա ։
Զայս պատուէր առի ՚ի հօրէ իմմէ ։
Դարձեալ հերձուած լինէր իմէջ հրէից՝ վասն բանիցս այսոցիկ ։
Եւ ասէին բազումք ՚ի նոցանէ , դև գոյ ՚ի նմա և մոլեգնի , զի՞ բնաւ լսէք նմա ։
Այլքն ասէին այսպիսիք բանք ոչ են դիւահարի . միթէ դև կարէ զաչս կուրի բանալ ։
Եղեն յայնժամ նաւակատիկ զԵրուսաղէմ, և ձմեռն էր ։
Եւ շրջէր յ͞ս ՚ի տաճարին , ՚ի սրահին սողոմոնի ։
Շուրջ եղեն զնովաւ հրէայքն և ասեն , մինչև յե՞րբ՝ թափես զոգիս մեր , եթէ դու ես ք͞ն ասա՛ մեզ համարձակ ։
Պատասխանի ետ նոցա յ͞ս և ասէ , ասացի ձեզ , և ոչ հաւատայք ինձ ։
Զգործս , զորս ես գործեմ յանուն հօր իմոյ՝ նոքին իսկ վկայեն վասն իմ ։
Այլ դուք ոչ հաւատայք . զի չէք յոչխարաց անտի իմոց ։
Ոչխարք իմ ձայնի իմում լսեն ։



լսեն, եւ ես ճանաչեմ
զնոսա. եւ զկնի իմ գան։
Եւ ես տամ նոցա զկեան
ան յաւիտենականս. եւ
մի՛ կորիցեն ՚ի յաւիտ
եան, եւ մի՛ ոք յափշտա
կեսցէ զնոսա ՚ի ձեռաց
իմոց։
Հայրն իմ, որ ետ ինձ
զնոսա՝ մեծ է քան զա
մենայն, եւ ոչոք կարէ
յափշտակել ՚ի ձեռաց
հօր իմոյ։
Ես, եւ հայր իմ մի եմք։
Վերստին հրէայքն զի
քարկոծ արասցեն զնա։
Պատասխանի ետ նոցա
յս, բազում գործս բա
րիս ցուցի ձեզ ՚ի հօրէ
իմմէ, վասն որոյ գործոյ
՚ի նոցանէ քարկոծ առ
նէք զիս.
Պատասխանի ետուն
նմա հրէայքն, վասն

բարւոյ գործոյ ոչ առ
նեմք զքեզ քարկոծ, այլ
վասն հայհոյութեան. եւ
զի դու մարդ ես, եւ
զանձն քո ած առնես։
Պատասխանի ետ նոցա
յս. ոչ յօրէնս ձեր
գրեալ է, եթէ ես ասացի
թէ աստուածք իցէք։
Իսկ եթէ զնոսա աստուա
ծս ասէ, առ որս բանն
աստուծոյ եղեւ, եւ չէ
մարթ եղծանիլ գրոյն։
Իսկ զոր հայր սրբեաց
եւ առաքեաց յաշխարհ,
դուք ասէք թէ հայ
հոյես, զի ասացի թէ որ
դի աստուծոյ եմ։
Եթէ ոչ գործեմ զգոր
ծս հօր իմոյ՝ մի՛ հաւա
տայք ինձ։
Ապա թէ գործեմ, թէ
եւ ինձ ոչ հաւատայք,
սակայն գործոցն հաւա

տայցէք, զի գիտասջիք, և ծանիջիք՝ եթէ հայր յիս, և ես ՚ի հայր։

ԺԹ Դ Դարձեալ խնդրէին զնա ունել, և ել ՚ի ձեռաց նոցա։

Եւ գնաց միւսանգամ յայնկոյս յորդանանու ՚ի տեղին, ուր էր յոհաննէս զառաջինն և մկրտէր, և անդ լինէր։

ՃԺ Ժ Եկին բազումք առ նա և ասէին, զի յոհաննէս նշան ինչ ոչ արար։

Բայց զա՞մ, զոր ասաց յոհաննէս վասն նորա, ճշմարիտ էր։ և բազումք հաւատացին ՚ի նա անդ։

ԽԳ. Եւ էր ոմն զգ հիւանդ ղազարոս՝ ՚ի բեթանիայ, ՚ի գեղջէ մարիամայ՝ և մարթայի քեռ նորայ։

Նա յս այն մարիամն էր որ էօծ զտ՞րն իւղով, և ջնջեաց զոտս նորա հերով իւրով, որոյ եղբայրն ղազարոս հիւանդ էր։

Առաքեցին առ նա քորքն նորա և ասեն։

Տ՞ր, ահաւասիկ զոր դուն սիրէիր, հիւանդացեալ է։

Իբրև լուաւ յ՞ս, ասէ։ այն հիւանդութիւն չէ ՚ի մահ, այլ վասն փառացն աստուծոյ։ զի փառաւոր լիցի որդի աստուծոյ այնուիկ։

Եւ սիրէր յ՞ս զմարիամ և զմարթայ զքոյր նորա և զղազար։

Իբրև լուաւ թէ հիւանդացեալ է, զտեղի կալաւ անդէն ուր էրն, աւ

մ ճշ ճշ
մ շաբ.
ք կզ.

աւուրս երկուս ։
Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա, եկայք երթիցուք միւսանգամ ՚ի Հրէաստան ։
Ասեն ցնա աշակերտքն. ռաբբի՛ այժմ ևս խնդրէին զքեզ Հրէայքն քարկոծ առնել, և դարձեալ երթաս անդրէն ։
Պատասխանի ետ յս, ոչ երկոտասան ժամ է աւուր, եթէ ոք գնայ ՚ի տուընջեան, ոչ գայթակղի, զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ ։
Ապա թէ ոք գնայ ՚ի գիշերի, գայթակղի, զի լոյս ոչ գոյ ընդ նմա ։
Զայս իբրև ասաց, յետ այսորիկ ասէ, ղազարոս բարեկամ մեր ննջեաց ։ այլ երթամ, զի զարթուցից զնա ։
Ասեն ցնա աշակերտքն նորա, եթէ ննջեաց ապա ապրի ։
Այլ յս վասն մահու նորա ասէր, նոցա այսպէս թուեցաւ՝ թէ վասն ննջելոյ քնոյն ասէր ։
Յայնժամ ասէ ցնոսա յս յայտնապէս, ղազարոս մեռաւ ։
Եւ ես ուրախ եմ վասն ձեր, զի դուք հաւատասջիք ինձ, զի ես չէի անդ, բայց արդ եկայք, երթիցուք առ նա ։
Ասէ թովմաս անուանեալն երկուորեակ ցաշակերտակիցսն, եկայք և մեք զի ընդ նմա մեռցուք ։
Եկն յս եգիտ զնա չորեքօրեայ ՚ի գերեզմանի ։
Եւ էր բեթանիա մերձ

յե

յերուսաղէմ, իբրև ասպ
արիսօք հնկետասան ։
Բազումք ՚ի հրէից ան
տի, եկեալ էին առ
մարթայ և մարիամ, զի
մխիթարեսցեն զնոսա
վասն եղբօրն ։
Մարթա իբրև լուաւ
թէ յս̅ գայ, ընդ առաջ
գնաց նորա, բայց մա
րիամ նստէր անդէն ՚ի
տան ։
Ասէ մարթա ցյս̅ ։ տր̅,
էթէ աստ լեալ էիր,
եղբայրն իմ չէր մեռեալ
Այլ և արդ գիտեմ,
եթէ զորինչ խնդրես
ցես յաստուծոյ տացէ
քեզ ած̅ ։
Ասէ ցնա յս̅, յարիցէ
եղբայրն քո ։
Ասէ ցնա մարթա, գի
տեմ, զի յարիցէ ՚ի յա
րութեան յաւուրն յետ
նում ։
Ասէ ցնա յս̅, ես իսկ
եմ յարութիւն և կեանք,
որ հաւատայ յիս, թէ
պէտ և մեռանի, կեցցէ ։
Եւ ամ̅, որ կենդանի
է և հաւատայ յիս, մի՛
մեռցի ՚ի յաւիտեան,
հաւատաս այսմիկ ։
Ասէ ցնա, այո՛ տր̅,
ես հաւատացի եթէ
դու ես քս̅ն որդի աս
տուծոյ, որ յաշխարհ
գալոց էիր ։
Եւ զայս իբրև ասաց՝
գնաց, և կոչեաց զմա
րիամ զքոյր իւր լռե
լեայն և ասէ ։ վարդա
պետն եկեալ է, և կոչէ
զքեզ ։
Նա իբրև լուաւ յա
րեաւ վաղվաղակի, և
եկն առ նա ։
Չև ևս էր եկեալ յս̅ ՚ի

գիւղն, այլ էր անդէն 'ի տեղւոջն ուր ընդ առաջ եղև նմա Մարթա։

Իսկ Հրէայքն, որք էին ընդ նմա 'ի տան անդ՝ և մխիթարէին զնա. իբրև տեսին զՄարիամ թէ յարեաւ վաղվաղակի և գնաց, գնացին և նոքա զհետ նորա. համարէին թէ 'ի գերեզմանն երթայ՝ զի լացցէ անդ։

Իսկ Մարիամ իբրև եկն, ուր էրն Յս, և ետես զնա, անկաւ առ ոտս նորա և ասէ։

Տր, եթէ աստ էիր դու՝ ոչ էր մեռեալ եղբայրն իմ։

Յս իբրև ետես զնա զի լայր, և որք ընդ նմա էին Հրէայքն լային. խռովեցաւ յոգի իւր իբրև զայրացեալ։

Եւ ասէ, ուր եդիք զնա

Ասեն ցնա՝ տէր, եկ, և տես։

Եւ արտասուեաց Յս։

Ասէին Հրէայքն, տես, որչափ սիրէր զնա։

Ոմանք 'ի նոցանէ ասէին, ոչ կարէր սա, որ եբաց զաչս կուրին առնել՝ զի և սա մի՛ մեռցի. Յս դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր, գայ 'ի գերեզմանն. և էր այր մի, և վէմ մի եդեալ իվերայ նորա։

Եւ ասէ Յս, իբաց արարէք զվէմդ։

Ասէ ցնա Մարթա, քոյր մեռելոյն. Տր, արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է։

Ասէ ցնա Յս, ոչ ասացի քեզ եթէ հաւատասցես, տեսցես զփառս աստուծոյ։

Եւ

Եւ իբրեւ իվեր առին
զվէմն. յս̅ ամբարձ զաչս
իւր իվեր եւ ասէ.
Հայր, գոհանամ զքէն,
զի լուար ինձ.
Եւ ես գիտէի զի յամե
նայն ժամ լսես ինձ, այլ
վասն ժողովրդեանս, որք
շուրջ կան առնեմ, զի
հաւատասցեն թէ դու
առաքեցեր զիս.
Զայս իբրեւ ասաց՝ 'ի
ձայն մեծ աղաղակեաց
եւ ասէ, ղազարէ, արի
եկ արտաքս.
Եւ ել մեռեալն ոտիւք
կապելովք, եւ ձեռօքն
երիզապնտօք, եւ երե
սօքն վարշամակապա
տօք.
Եւ ասէ ցնոսա յս̅. լու
ծէք զդա, եւ թողէք
երթալ.
Բազումք 'ի հրէիցն
որք եկեալ էին առ մա
րիամոն, իբրեւ տեսին
զոր արարն հաւատացին
'ի նա.
Եւ ոմանք 'ի նոցանէ
գնացին առ փարիսեց
իսն. եւ պատմեցին նոցա
զոր արարն յս̅.
Ժողովեցան քա զգ
հանայապետ
քն եւ փարիսե
ցիքյատեան, եւ ասեն.
զինչ արասցուք զի այր
այն բազում նշանս առ
նէ. եթէ թողումք
զնա այնպէս, ամենե
քին հաւատան 'ի նա,
եւ գայցեն հռոմք եւ
բառնայցեն զազգս մեր
եւ զտեղի.
Մի ոմն 'ի նոցանէ ա
նուն կայիափայ. որ
քահանայապետ էր ամա
ւոյն



ւոյն այնորիկ, ասէ ցնո
սա, դուք ոչինչ գիտէք.
Եւ ոչ բնաւ խորհիք
իսկ, թէ լաւ է մեզ
զի այր մի մեռանիցի
ի վերայ ժողովրդեանս,
և մի՛ ամ̃ ազգս կորիցէ.
Զայս ոչ յանձնէ ինչ
ասաց, այլ զի քահա
նայապետ էր տարւոյն
այնորիկ, մարգարէա
ցաւ՝ եթէ մեռանելոց
էր յս̃ ի վերայ ազգին.
Եւ ոչ ի վերայ ազգին
միայն, այլ զի և զոր
դիսն աստուծոյ զցրու
եալսն ժողովեսցէ 'ի մի.
ՂԵ Դ Յայնմ օրէ խոր
հուրդ արարին, զի
սպանցեն զնա.
Եւ յս̃ այնու հետև
ոչ եւս համարձակ շր
ջէր ի մէջ հրէիցն, այլ
գնաց անտի յերկիր մի,

[illegible]

որ մերձ էր յանապատ,
'ի քաղաք մի, որում
անուն էր Եփրայիմ. և
անդ լինէր աշակերտօ
քն հանդերձ.

ՂՂ Ա Եւ էր մերձ զա
տիկն հրէ
ից.
ՂԵ Ժ Եւ բազումք ելին
յերուսաղէմ 'ի գաւա
ռէ անտի յառաջ ք[ն]
քան զզատիկն, զի սր
բեսցեն զանձինս իւր
եացն.
Խնդրէին զյս̃, և ա
սէին ընդ միմեանս մինչ
կային 'ի տաճարին, զի՞
արդ թուի ձեզ՝ եթէ
ոչ գայցէ 'ի տօն այսր,
Պատուէր տուեալ էր
քահանայապետիցն և
փարիսեցւոց, զի թէ
ոք գիտասցէ թէ ուր
է.

[illegible]

է. ցուցանիցէ զնմանէ զի կալցեն զնա :
ԻԳ Իսկ յառաջ վեց աւուրբք յառաջ քան զզատիկն՝ եկն
՚ի Բեթանիայ, ուր էր
Ղազար մեռեալն. զոր
յարոյց ՚ի մեռելոց :
Արդ արարին անդ նմա
ընթրիս, և ՚ի սպասաւորել Մարթա. և Ղազար
մի էր ՚ի բազմելոցն ընդ
նմա :
Ճ Իսկ Մարեմայ առեալ
լիտր մի իւղոյ նարդեան՝
ազնուի մեծագնոյ,
եօծ զոտսն յի՛, և հերովն իւրով մաքրէր զոտս
նորա. և տունն լի եղև
հոտոյ իւղոյն :
ԻԱ Ասէ մի ոմն յաշակերտաց անտի՝ Յուդա Իսկարիովտացի, որ մատնելոցն էր զնա :
Ընդէր ոչ իւղդ այդ
վաճառեցաւ երեք հարիւր դենարի, և տուաւ աղքատաց :
Զայս ասաց՝ ոչ զի աղքատաց ինչ փոյթ էր
նմա, այլ զի գող էր
և զարկղն ինքն ունէր,
և որինչ անկանիւրն
նա կրէր :
Ասէ յի՛, թոյլ տուք
դմա. զի յօրն պատանաց իմոց պահեսցէ
զայդ :
Զաղքատս յամժամ
ընդ ձեզ ունիք, զիս
ոչ հանապազ ընդ ձեզ
ունիք :
ՂԹ Իբրև գիտաց ժողովուրդ բազում ՚ի հրէից
թէ անդ է, եկին, ոչ
միայն վասն յի՛, այլ զի և
զՂազար տեսցեն, զոր
յարոյց ՚ի մեռելոց :
Խորհուրդ արարին
քա

քահանայապետքն զի և
զՂազար սպանցեն .
Բազումք ՚ի
հրէից երթային և ճը
հաւատային ՚ի յՍ . ժ

Ա Ի վաղիւ անդր ժո էկ
ղովուրդ բազում
որ եկեալ էր ՚ի
տօնն . իբրև լուան թէ
գայ յՍ յԵՂմ . առին
ոստս արմաւենեաց և
ելին ընդառաջ նորա ,
աղաղակէին և ասէին ,
ովսաննայ , օրհնեալ որ
գաս յանուն տեառն ,
թագաւորդ ԻՂի .
ճա Եւ գտեալ յՍ էշ մի ,
ե նստաւ ի վերայ նորա , որպէս
ԻՕ և գրեալ է .
Մի՛ երկնչիր դուստր
սիոնի , ահաւասիկ թա
գաւոր քո գայ , նստեալ
ի վերայ յաւանակի իշոյ .

Եւ զայն ինչ ոչ գիտա
ցին աշակերտքն նորա
զառաջինն .
Այլ յորժամ փառաւո
րեցաւ յՍ յայնժամ յի
շեցին եթէ այն էր որ
գրեալն էր վասն նորա . և
զայն արարին նմա .
Եւ ժողովուրդն վկայ
էր որ էր ընդ նմա , թէ
զՂազար կոչեաց ևեթ
՚ի գերեզմանէն , և յա
րոյց զնա ՚ի մեռելոց .
Եւ վասն այնորիկ ընդա
ռաջ եղև նմա ժողո
վուրդ , զի լուան եթէ
զայն նշան արարեալ էր
նորա .
Իսկ փարիսեցիքն ասէ
ին ընդ միմեանս , տեսա
նէք զի ոչինչ օգտիք .
ահաւասիկ աշխարհ ամ
զկնի նորա գնաց .
Էին անդ ոմանք և
հե



հեթանոսաց յելելոց ան
տի, զի երկիր պագանի
ցեն ՚ի տօնին ։ ՃԽ Գ
Սոքա մատեան առ
Փիլիպպոս, որ ՚ի բեթ
սայիդայ գալիլեացւոց
էր ։ աղաչէին զնա և
ասէին ։ Տէր, կամիմք
զՅիսուս տեսանել ։ ՃԽԶ Ժ
Գայ Փիլիպպոս և ասէ
ցԱնդրեաս, Անդրեաս
և Փիլիպպոս ասեն
ցՅիսուս ։
Եւ Յիսուս պատասխանի ետ
ՃԽԷ Դ նոցա և ասէ, եհաս
ժամ, զի փառաւորես ՃԽԸ
ցի որդի մարդոյ ։ Դ
ՃԽԹ Ամէն ամէն ասեմ ձեզ, ԷԲ
Ժ եթէ ոչ հա
տն ցորենոյ անկեալ յեր
կիր մեռանիցի ։ ՃԾ
Ինքն միայն կեայ, Ժ

ապա եթէ մեռանիցի բա
զում արդիւնս առնէ ։
ՃԽ Գ Որ սիրէ զանձն իւր ար
ձակէ զնա, և որ ատեայ
զանձն իւր յաշխարհիս
յայսմիկ, ՚ի կեանսն յաւի
տենականս պահեսցէ
զնա ։
ՃԽԶ Ժ Եթէ ոք զիս պաշտես
ցէ, զկնի իմ եկեսցէ ։
և ուր եսն եմ, անդ և
պաշտօնեայն իմ եղիցի ։
Եթէ ոք զիս պաշտես
ցէ, պատուեսցէ զնա
Հայրն իմ ։
ՃԽԸ Դ Այց այժմ անձն
իմ խռովեալ
ԷԲ է, և զինչ աս
ասցից, եթէ Հայր ա
պրեցո զիս ՚ի ժամէ աս
տի յայսմանէ ։
ՃԾ Ժ Այլ վասն այնորիկ եկի
ես ՚ի ժամս յայս ։
Հայր

Մ Մ Ղ
ՃԿ ՄԼԹ ՃԶ
ՃԾ . .

Մ Մ Ղ Հ
ՃԽ ՀԵ . ՄԺԹ
Ճ . . .
ՃԽ ՄԼԹ ՃՀԵ .
ՃԽ . . .

Հայր՝ փառաւորեա՛ զանուն քո ։

Եկն բարբառ յերկնից՝ և փառաւոր արարի, և դարձեալ փառաւոր արարից·

Եւ ժողովուրդն, որ կայր և լսէր, ասէին որոտումն լինի ։

Այլքն ասէին, հրեշտակ խօսեցաւ ընդ նմա ։

Պատասխանի ետ յս̃ և ասէ, ոչ վասն իմ ինչ եկն բարբառս այս, այլ վասն ձեր ։

Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ, այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս ։

Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս ։

Զայս ասէր, նշանակեալ թէ որով մահու մեռանելոց իցէ ։

Պատասխանի ետ նմա ժողովուրդն, մեք լուաք յօրինաց՝ եթէ քս̃ն յաւիտեան կայ, և դու զիարդ ասես՝ եթէ պարտ է բարձրանալ որդւոյ մարդոյ, ով է այն որդին մարդոյ ։

Ասէ ցնոսա յս̃, փոքր մի ևս ժամանակ լոյսն ընդ ձեզ է, գնացէք՝ մինչ դեռ զլոյսն ունիք, զի մի՛ խաւար ձեզ հասցէ, զի որ գնայ ՚ի խաւարի, ոչ գիտէ յո՛ երթայ ։

Մինչ դեռ զլոյսն ընդ ձեզ ունիք՝ հաւատացէք ՚ի լոյսն, զի որդիք լուսոյ եղիջիք ։

Զայս խօսեցաւ յս̃,

և

եւ չոգաւ թագեաւ ՚ի
նոցանէ ։
Եւ այնչափ նշանս արար
եալ էր առաջի նոցա,
եւ նոքա ոչ հաւատային
՚ի նա ։
Զի լցցի բանն Եսայեայ
մարգարէի՝ զոր ասացն,
Տէր, ո՞ հաւատաց ՚ի լուր
մեր, եւ բազուկ Տեառն
ում յայտնեցաւ ։
ճղ Ա Վասն այնորիկ ոչ կարէին
հաւատալ ՚ի նա, զի միւս
անգամ ասէ Եսայի ։
Թէ կուրացոյց զաչս նո
ցա, եւ ապշեցոյց զսիրտս
նոցա, զի մի՛ տեսցեն
աչօք, եւ իմասցին սր
տիւք, եւ դարձցին,
եւ բժշկեցից զնոսա ։
ճղբ Ժ Զայս ասաց Եսայի,
յորժամ ետես զփառսն
նորա, եւ խօսեցաւ վասն
նորա ։

Բայց սակայն եւ յիշխա
նաց անտի բազումք
հաւատացին ՚ի նա, այլ
վասն փարիսեցւոցն ոչ
յայտնէին, զի մի՛ ՚ի ժո
ղովրդենէն ելանիցեն ։
Քանզի սիրեցին ըզ
զփառս մարդկան, ա
ռաւել քան զփառսն Աս
տուծոյ ։
ճղա Ա Յ ւ յիսուս աղ
աղակէր եւ ա
սէր, որ հաւա
տայ յիս՝ ոչ
հաւատայ յիս, այլ
յայն որ առաքեացն զիս ։
Եւ որ տեսանէ զիս,
զայն տեսանէ որ առա
քեացն զիս ։
ճղգ Ժ Ես լոյս յաշխարհ եկի ։
Զի ամ, որ հաւատայ
յիս, ՚ի խաւարի մի՛
մնասցէ ։
Եւ

ճղ Ա
ճղբ Ժ

ճղա Ա
ճղգ Ժ

Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց, եւ ոչ պահեսցէ, ես ոչ դատեմ զնա, քանզի ոչ եկի, թէ դատեցից զաշխարհ, այլ զի փրկեցից զաշխարհ .

Որ անարգէ զիս, եւ ոչ ընդունի զբանս իմ, գոյ որ դատէ զնա . բանն, զոր ես խօսեցայ, նա դատէ զնա յաւուրն յետնում .

Զի ես յանձնէ իմմէ ոչ խօսեցայ, այլ որ առաքեացն զիս Հայր, նա ետ ինձ պատուէր զինչ ասացից եւ զինչ խօսեցայց .

Եւ գիտեմ, թէ պատուէրն այն կեանք են յաւիտենականք, արդ զոր ես խօսիմ որպէս ասաց ինձ Հայրն, այնպէս խօսիմ .

Յառաջ քան զտօնն զատկին, գիտաց յս̃ թէ հասեալ է ժամ նորա՝ զի փոխեսցի յաշխարհէ աստի առ Հայր, սիրեաց զիւրսն որք յաշխարհի աստ էին, իսպառ սիրեաց զնոսա .

ՃԺԳ Թ Եւ ՚ի լինել ընթրեացն, սատանայի իսկ արկեալ էր ՚ի սիրտ, զի մատնեսցէ զնա յուդա սիմոնի իսկարիովտացւոյ .

Գիտաց յս̃ զի զա̃մ ինչ
ՃԺԴ Գ ետ Հայր ՚ի ձեռս նորա :
ՃԺԵ Ժ Եւ թէ յաստուծոյ ել, եւ առ ա̃ծ երթայ .

Յառնէ յընթրեաց անտի, եւ դնէ զհանդերձ ան . եւ առեալ զզենջակ մի սփածաւ .

Եւ

ճ ճ ղ
ՃԺԴ . Թ
ՃԺ, ՃԺա ՃԺԶ
ՃԺԵ . .

Եւ ապա առեալ զջուր
էարկ 'ի կոնք, և սկսաւ
լուանալ զոտս աշակեր
տացն, և սրբէր զենջա
կաւն զոր ածածեալն էր.
Գայ առ սիմոն պետրոս։
Եւ նա ասէ ցնա. տէր,
դու զիմ զոտս լուանաս։
Պատասխանի ետ նմա
յսս և ասէ, զոր ինչ ես
գործեմ, դու այժմ ոչ
գիտես. բայց յապայ գի
տասջիր։
Ասէ ցնա պետրոս, ոչ
լուասցես զոտս իմ յաւի
տեան։
Պատասխանի ետ նմա
յսս, եթէ ոչ լուացից ըզ
քեզ՝ ոչ ունիս ընդ իս
մասն։
Ասէ ցնա սիմոն պետ
րոս. տէր, մի՛ միայն
զոտս իմ, այլ և զձեռս
և զգլուխ.

Ասէ ցնա յսս, լուացե
լոյն չէ ինչ պիտոյ, բայց
զի զոտսն լուանայցէ.
քանզի ամենևին սուրբ է,
և դուք սուրբ էք, այլ
ոչ ամենեքին.
Զի գիտէր զայն որ
մատնելոցն էր զնա.
վասն այնորիկ ասաց՝ ե
թէ ոչ ամենեքին սուրբ էք.
Եւ յորժամ լուաց զոտս
նոցա, էառ զհանդերձ
սն իւր՝ և դարձեալ
բազմեցաւ, և ասէ
ցնոսա, գիտէք զինչ ա
րարի ձեզ.
ճժզ գ Դուք կոչէք զիս վար
դապետ և տէր, և բար
ւոք ասէք, քանզի եմ
իսկ.
ճժէ ժ Իսկ արդ՝ եթէ ես լուա
ցի զոտս ձեր, տէրս և
վարդապետս, և դուք
պարտիք զմիմեանց զո

տս

| Յ | Մ | Մր | Ղ |
|---|---|---|---|
| ճժզ | ծթ | . | կթ |
| ճժէ | . | . | ձը |

տս լուանալ ։
Զի օրինակ մի ետու
ես ձեզ, զի որպէս ես ձեզ
արարի, և դուք առնի
ջիք ։

ճժը Դ Ամէն ամէն ա
սեմ ձեզ, ոչ
է ծառայ
մեծ քան զտէր իւր, և
ոչ առաքեալ մեծ՝ քան
զայն որ, առաքեացն
զնա ։
Եթէ զայս գիտէք,
երանելի եւս էք եթէ
առնիցէք զայս ։
ճժթ Ժ Ոչ վասն ամենեցուն ձեր
ասեմ, զի լցցի գիրն,
թէ որ ուտէր ընդ իս
հաց՝ արար ինձ խաբէ
ութիւն ։
Յայսմ հետէ իսկ ասեմ
ձեզ մինչ չև եղեալ ։
Զի յորժամ լինիցի

հաւատասջիք թէ ես
եմ ։
ճի Ա Ամէն ամէն ասեմ ձեզ, ԺԳ
որ ընդունի, զորոք ես
առաքեցից՝ զիս ընդ ու
նի, և որ զիս ընդունի,
ընդունի զայն, որ ա
ռաքեացն զիս ։
ճիա Դ Զայս իբրև ասաց Յս,
խռովեցաւ յոգի իւր,
վկայեաց և ասէ ։ ամէն
ամէն ասեմ ձեզ, զի
մի ոմն ՚ի ձէնջ մատնե
լոց է զիս ։
ճիբ Ա Հայէին ընդ միմեանս
աշակերտքն տարակուս
եալք, թէ զումէ ա
սիցէ ։
ճիգ Ժ Եւ էր միոմն յաշակեր
տացն՝ բազմեալ առ լն
զոր սիրէրն Յս ։
Ակնարկէ նմա սիմոն
պետրոս հարցանել թէ
ով իցէ, վասն որոյ ասէն ։
Եւ

| Մ | Մ | Ղ | Յ |
|---|---|---|---|
| ճժզ | Ղ | | Ժ |
| ճժէ | | | |

| Մ | Մ | Ղ | Յ |
|---|---|---|---|
| ճի | ՂԸ | ՂՂ | ճժզ |
| ճիա | ճհԹ | ճկա | |
| ճիբ | ճԺ | ճկբ | |
| ճիգ | | | |

Եւ նա անկեալ զ լան ջօքն յի , ասէ ցնա . տէր , ով է ։

Պատասխանի ետ յս և ասէ , այն է որում ես թացից զպատառն և տաց ։

ՃԻԴ Թ Եւ թացեալ զպատա ռըն՝ տայ յուդայի իսկա րիովտացւոյ ։

Եւ յետ պատառոյն ապա եմուտ 'ի նա սա տանայ ։

ՃԻԵ Ժ Եւ ասէ ցնա յս , զոր ինչ առնելոց ես արա՛ վաղվաղակի ։

Եւ զայս ոչոք իմացաւ 'ի բազմականաց անտի , թէ առ ինչ ասաց ցնա ։

Զի ոմանք համարէին թէ , զի զարկղն ունէր յուդա , ասաց նմա յս , գնեա՛ զինչ որ պիտոյ է մեզ 'ի տօնիս , և կամ թէ աղքատաց ինչ տացէ ։

Իսկ նորա առեալ զպա տառն ել արտաքս վաղ վաղակի , և էր գիշեր ։

Եւ իբրև ել , էհ ասէ յս , այժմ փառաւորե ցաւ որդի մարդոյ , և ած փառաւորեցաւ 'ի նմա ։

Զի եթէ ած փառա ւորեցաւ 'ի նմա , և ած փառաւորեսցէ զնա յան ձն իւր , և վաղվաղակի փառաւորեսցէ զնա ։

Որդեակք իմ փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ , խնդրիցէք զիս , և որպէս ասացի ցհրէայսն , թէ ուր ես երթամ , դուք ոչ կարէք գալ , և արդ ձեզ ասեմ ,

Պատուիրան նոր տամ ձեզ ,

ՈՊ

| Յ | Մ | Ղ | Մ |
|---|---|---|---|
| ՃԻԴ | . | . | Թ |
| ՃԻԵ | . | . | . |

ձեզ, զի սիրիցէք զմի
մեանս, որպէս սիրեցի
ես զձեզ, զի և դուք
սիրեսջիք զմիմեանս։
Յայսմ գիտասցեն ամե
նեքեան, եթէ իմ ա
շակերտք էք, եթէ սի
րիցէք զմիմեանս։
ճղզ Ա Ասէ ցնա Սիմոն պետ
րոս։
Տ՟ր յո՞ երթաս.
Պատասխանի ետ յ՟ս, ուր
եսն երթամ, դու ոչ
կարես այժմ գալ զկնի
իմ, բայց յապայ եկես
ցես զկնի իմ։
Ասէ ցնա պետրոս. Տ՟ր,
ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ
այժմ զկնի քո, արդէն
զանձն իմ իսկ եդից ՚ի
վերայ քո։
Պատասխանի ետ յ՟ս,
զանձն քո դիցես իվե
րայ իմ, ամէն ամէն

ճիդ ւաթ ճչ ճչզ

ասեմ քեզ, չէ իցէ
հաւու խօսեալ, մինչ
դու երիցս ուրասցիս
զիս.
ճղե Մի խռովեսցին սիրտք
ձեր. այլ հաւատացէք
յա՟ծ, և յիս հաւատա
ցէք. ՚ի տան հօր իմոյ
օթեվանք բազումք են.
ապա թէ ոչ ասացեալ
էր իմ ձեզ, թէ երթամ,
և պատրաստեմ ձեզ
տեղի.
Եւ եթէ երթամ, և
պատրաստեմ ձեզ տե
ղի, դարձեալ գամ,
և առնում զձեզ առ իս.
զի ուր եսն իցեմ, և
դուք ընդիսիցէք.
Եւ ուր երթամն գիտէ
ցէք, և զճանապարհն
գիտիցէք.
Ասէ Թովմաս, տէր ոչ գի
տեմք, յո՞ երթաս, և
զի

ճիզ

զիարդ զճանապարհն կարասցուք գիտել ։

Ասէ ցնա Յս, Ես եմ ճանապարհ, եւ ճշմարտութիւն, եւ կեանք. ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինեւ ։

Եթէ զիս գիտէիք ապա եւ զՀայրն իմ գիտէիք, եւ այսու հետեւ գիտասջիք զնա ։

Ասէ ցնա Փիլիպպոս. Տր, ցոյց մեզ զՀայր՝ եւ շատ է մեզ ։

Ասէ ցնա Յս, այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, եւ ոչ ծանեար զիս Փիլիպպէ, որ ետես զիս, ետես զՀայրն. եւ դու զիարդ ասես եթէ ցոյց մեզ զՀայրն ։

Ոչ հաւատաս, եթէ ես 'ի Հայր, եւ Հայր յիս է ։ Զբանն, զոր ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն որ յիս բնակեալ է՝ նա գործէ զգործսն ։

Հաւատայք ինձ, եթէ ես 'ի Հայր, եւ Հայր յիս է ։

Ապա թէ ոչ, գոնէ վասն գործոցն հաւատացէք ինձ ։

Ամէն ամէն ասեմ ձեզ, թէ որ հաւատայն յիս, զգործսն զորս ես գործեմ, եւ նա գործեսցէ. եւ մեծամեծս եւս քան զնոյնս գործեսցէ. զի ես առ Հայր երթամ ։

ԺԲ Դ Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, արարից զայն. զի փառաւորեսցի Հայր յՈրդի. եթէ զոր ինչ խնդրիցէք յինէն, արարից զայն ։

ԺԴ. Եթէ սիրէք զիս՝ ընդ զպատուիրանս իմ պահեսջիք.

Եւ ես աղաչեցից զՀայր. եւ այլ մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցի 'ի յաւիտեան.

Զհոգին ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ կարէ ընդունիլ. զի ոչ տեսանէ զնա, եւ ոչ ճանաչէ զնա.

Բայց դուք ճանաչէք զնա. զի առ ձեզ բնակեսցի, եւ ընդ ձեզ եղիցի.

Ոչ թողից զձեզ որբս, գամ առ ձեզ.

Միւս եւս, եւ աշխարհս ոչ եւս տեսանէ զիս, բայց դուք տեսանիցէք զիս, զի ես կենդանի եմ, եւ դուք կենդանի լինելոց էք.

Յայնմ աւուր գիտասջիք դուք, զի ես 'ի Հօր իմում, եւ դուք յիս, եւ ես 'ի ձեզ.

Որ ունի զպատուիրանս իմ, եւ պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս.

ՃԺԹ Ա Եւ որ սիրէն զիս, սիրեսցի 'ի Հօրէ իմմէ, եւ ես սիրեցից զնա, եւ երեւեցուցից նմա զիս.

ՃԻ Ժ Ասէ ցնա Յուդա՝ ոչ իսկարիովտացին, Տէր, զի եղեւ՝ զի մեզ յայտնելոց ես զքեզ եւ ոչ աշխարհի.

Պատասխանի ետ Յս եւ ասէ ցնոսա, եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ, եւ Հայրն իմ սիրեսցէ զնա, եւ առ նա եկեսցուք՝ եւ օթեվանս առ.

առ նմա արասցուք ։
Եւ որ ոչն սիրէ զիս՝
զբանն իմ ոչ պահէ ։
ՃԻԴ Ա Եւ բանն իմ, զոր լուէք՝
ոչ է իմ, այլ Հօրն, որ
առաքեացն զիս ։

ՃԻԹ Ժ ԻԵ Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ
առ ձեզս եմ ։
Իսկ մխիթարիչ Հոգին
Սբ, զոր առաքեսցէ Հայր
յանուն իմ, նա ուսուս
ցէ ձեզ զամ, եւ յիշե
ցուսցէ ձեզ զամ, զորինչ
ասացի ձեզ ։
Զխաղաղութիւն թո
ղում ձեզ, զխաղաղու
թիւն զիմ տամ ձեզ, ոչ
որպէս աշխարհս տայ տամ
ես ձեզ ։
Մի խռովեսցին սիրտք
ձեր, եւ մի զանգիտես
ցեն ։

Լուայք, զի ասացի ես
ձեզ թէ երթամ, եւ
գամ առ ձեզ, եթէ սի
րէիք զիս ապա ուրախ
լեալ էր ձեր, թէ եւ
առ Հայր երթամ, զի
Հայր իմ մեծ է քան զիս ։
Եւ այժմ ասացի ձեզ՝
մինչ չեւ եղեալ, զի յոր
ժամ լինիցի հաւատաս
ջիք ։
Ոչեւս այլ շատ խօս
եցայց ընդ ձեզ, գայ
իշխան աշխարհիս այսո
րիկ եւ յիս ինչ ոչ գտանէ ։
Այլ զի ծանիցէ աշ
խարհ՝ եթէ սիրեմ զՀ
Հայր, եւ որպէս պատուիր
եաց ինձ Հայր այնպէս
առնեմ ։ Օ՛ն արիք գնաս
ցուք աստի ։
Ես եմ որթն ճշմարիտ,
եւ Հայր իմ մշակ է, ա
մենայն ուռ՝ որ յիս է,

եւ

Յ Յով ՂԿ — Մ ՂԸ ։ — Մր ՂԴ ։ — Ղ ՃԺՂ ։



և որ բերէ զպտուղ սրբէ զնա զի առաւել ևս պտղաբեր լիցի ։

Դուք արդէն սուրբ էք, վասն բանին զոր խօսեցայ ընդ ձեզ ։

Կացէք յիս՝ և ես ՚ի ձեզ ․ որպէս ուռն ոչ կարէ զպտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ ոչ իցէ հաստատեալ յորթն, նոյնպէս և դուք եթէ ոչ յիս հաստատեալ իցէք ։

Ես եմ որթն՝ և դուք ուռն, որ հաստատեալ է յիս՝ և ես ՚ի նա ․ նա բերէ զպտուղ յոյժ, զի առանց իմ ոչինչ կարէք առնել ։

Եթէ ոք ոչ է հաստատեալ յիս, ել նա արտաքս իբրև զուռն և ցամաքեցաւ ․ և ժողովեն զնա՝ և ՚ի հուր արկանեն և այրի ։

ՃլԴ Եթէ կայցէք յիս, և բանք իմ ՚ի ձեզ կայցեն ․ զորինչ կամիցիք խնդրեսջիք՝ և լինիցի ձեզ ։

ՃլԺ Յայսմիկ փառաւորեցաւ Հայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք, և եղիջիք իմ աշակերտք ։

Որպէս սիրեաց զիս Հայրն, և ես սիրեցի զձեզ ․ հաստատուն կացէք ՚ի սէր իմ ․

Եթէ պահիցէք զպատուիրանս իմ կացջիք ի սէր իմ, որպէս և ես զպատուիրանս Հօր իմոյ պահեցի, և կամ ՚ի սէր նորա ։

Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրախութիւն իմ ՚ի ձեզ իցէ, և ձեր ուրախութիւն լցեալ

եղի

Ճլք ձկդ ԴԺԶ
Ճլք ․ ․

եղիցի ։

Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս եւ ես զձեզ սիրեցի ։

ճլե դ Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց ։

ճլզ ժ Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք զոր ես պատուիրեմ ձեզ ։

Ոչ եւս կոչեմ զձեզ ծառայս ․ զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ տէր նորա, այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն, զոր լուայ ՚ի Հօրէ իմմէ ծանուցի ձեզ ։

Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս, այլ ես ընտրեցի զձեզ, եւ եդի զձեզ, զի դուք երթայցէք եւ պտուղ բերիցէք, եւ պտուղն ձեր կայցէ ․

ճլէ դ Այլ զոր ինչ խնդրիցէք ՚ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ ․

ճլը ժ Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս ․

Եթէ աշխարհս զձեզ ատեայ, գիտասջիք զի նախ զիս ատեաց ․

Եթէ յաշխարհէ աստի էիք աշխարհս զիւրն սիրէր արդեօք, բայց զի չէք յաշխարհէ ․ այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վասն այնորիկ ատեայ զձեզ աշխարհս ․

ճլթ դ Յիշեցէք զբանն զոր ասացի ձեզ, եթէ ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր ։

ճխ ժ Եթէ զիս հալածեցին, ապա եւ զձեզ հալածեսցեն, եթէ զբանն իմ պա

| Յ | Մտ | Մր | | | |
|---|---|---|---|---|---|
| ճլե | Լկ | ճձե | | | |
| ճլզ | գ | ը | | | |

| Յ | Մ | Մր | Ղ |
|---|---|---|---|
| ճլէ | ձզ | ռխե | . |
| ճլը | . | . | . |
| ճլթ | ղ | . | ծը |
| ճխ | . | . | . |

պահեցին, ապա և
զձերն պահեսցեն:
ճխա Ա Այլ զնոյնս արասցեն
ընդ ձեզ՝ վասն անուան
իմոյ:
ճխբ Դ Զի ոչ գիտեն զայն
որ առաքեացն զիս:
ճխգ Ժ Իմ եթէ չէր եկեալ և
խօսեցեալ ընդ նոսա.
մեղ ինչ ոչ գոյր նոցա,
բայց արդ չիք պատ
ճառ վասն մեղաց իւր
եանց:
ճխդ Ժ Որ զիս ատեայ, և զՀա
յրն իմ ատեայ:
ճխե Ժ Եթէ զգործսն չէր գոր
ծեալ 'ի նոսա զոր ոչ
այլք գործեաց, մեղ
ինչ ոչ գոյր նոցա, բայց
արդ տեսին, և ատեցին
և զիս և զՀայր իմ:
Այլ զի լցցի բանն, որ
յօրէնս նոցա գրեալ է,
թէ ատեցին զիս տարա

պարտուց:
Բայց յորժամ եկեսցէ
մխիթարիչն, զոր ես առ
աքեցից ձեզ 'ի Հօրէ. զՀո
գին ճշմարտութեան
որ 'ի Հօրէ ելանէ, նա
վկայեսցէ վասն իմ:
Եւ դուք վկայէք՝ զի
'ի սկզբանէ ընդ իս էք:
Զայս խօսեցայ ընդ
ձեզ զի մի՛ գայթակղես
ջիք: 'Ի ժողովրդոց իւր
եանց հանիցեն զձեզ:
ճխզ Ա Այլ եկեսցէ ժամանակ՝
զի ամենայն որ սպանա
նիցէ զձեզ համարիցի
պաշտօն մատուցանել
Աստուծոյ:
Եւ զայն արասցեն ընդ
ձեզ, քանզի ոչ ծանեան
զՀայր և ոչ զիս:
Այլ և զայս խօսեցայ
ընդ ձեզ, զի յորժամ ե
կեսցէ ժամանակ յիշէ
ցէք

| յ | մ | մր | ղ |
|---|---|---|---|
| ճխա | ճկգ | ճլթ | մե |
| ճխբ | ւժբ | . | ճժթ |
| ճխգ | . | . | . |
| ճխդ | . | . | . |
| ճխե | . | . | . |

| յ | մ | մր | ղ |
|---|---|---|---|
| ճխզ | մեկգ | ճլթ | մե |

ցէք եթէ ես ասացի
ձեզ.
Զայս 'ի սկզբանէ ոչ
ասացի ձեզ, քանզի
ընդ ձեզ էի.
դե Թ Այժմ արդ եր-
թամ ես առ
առաքիչն իմ,
և ոչոք 'ի ձէնջ հարցա-
նիցէ զիս, թէ յո՛ եր-
թաս.
Այլ զի զայս խօսեցայ
ընդ ձեզ. տրտմութիւն
ելից զսիրտս ձեր.
Այլ ես զճշմարիտն ա-
սեմ ձեզ, լաւ է ձեզ
եթէ ես երթամ, զի
եթէ ես ոչ երթայց՝
մխիթարիչն ոչ եկեսցէ
առ ձեզ, ապա եթէ
երթամ, առաքեցից
զնա առ ձեզ.
Եւ նա եկեալ յանդի-
մանեսցէ զաշխարհ՝ վասն
մեղաց. և վասն արդարու-
թեան. և վս դատաստանի.
Վասն մեղաց, զի ոչ
հաւատան յիս.
Վասն արդարութեան,
զի առ հայր իմ երթամ,
և ոչ ևս տեսանէք զիս.
Վասն դատաստանի, զի
իշխան աշխարհիս այսո-
րիկ դատապարտեալ է.
Եւս բազում ինչ ունիմ
ասել ձեզ, այլ ոչ կարէք
հանդարտել այժմիկ.
Յորժամ եկեսցէ նա
հոգին ճշմարտութեան՝
առաջնորդեսցէ ձեզ
ամ ճշմարտութեամբ, զի
ոչ եթէ յանձնէ ինչ խօ-
սիցի, այլ զոր լսիցէ խօ-
սիցի, և զգալոցն պատ-
մեսցէ ձեզ.
Նա զիս փառաւորես-
ցէ, զի յիմմէ անտի առնու-
ցու

ցու եւ պատմեսցէ ձեզ ։
ՃԿԵ Գ Զամենայն ինչ զոր ունի
Հայր իմ է ,
ՃԿԶ Ժ Վասն այնորիկ ասացի
ձեզ , թէ յիմէ անտի
առնուցու եւ պատմես
ցէ ձեզ ։
Փոքր մի , եւ ոչ եւս տե
սանէք զիս , եւ ապա սա
կաւիկ մի՝ եւ տեսանի
ցէք զիս , եւ զի ես եր
թամ առ Հայր ։
Ասէին ոմանք յաշակեր
տաց անտի ցմիմեանս ,
զինչ է այս զոր ասէ
ցմեզ , թէ փոքր մի ,
եւ ոչ տեսանէք զիս ,
եւ դարձեալ սակաւիկ
մի եւ տեսանիցէք զիս ,
եթէ ես առ Հայր եր
թամ ։
Ասէին , զինչ իցէ
այն փոքր միւս եւս ,
չգիտեմք զինչ խօսի ։

Գիտաց Յս՟ եթէ կա
մէին զնա հարցանել ։
Եւ ասէ ցնոսա վասն
այդորիկ խնդրէք ընդ
միմեանս զի ասացի
թէ փոքր մի , եւ ոչ
տեսանէք զիս , եւ դար
ձեալ սակաւիկ միւս
եւս տեսանիցէք զիս ։
Ամէն ամէն ասեմ ձեզ ,
զի լայջիք եւ ողբասջիք
դուք՝ եւ աշխարհ խնդաս
ցէ , դուք տրտմեսջիք՝
այլ տրտմութիւն ձեր
յուրախութիւն եղիցի ։
Կին յորժամ ծնանիցի՝
տրտմութիւն է նմա զի
հասեալ է ժամ նորա ,
այլ յորժամ ծնցի զմա
նուկն , ոչ եւս յիշէ զնե
ղութիւնն վս՟ խնդութեանն ,
զի ծնաւ մարդ յաշ
խարհ ։
Եւ դուք այժմ տրտմու
թիւն

Յ Մ Ղ
ՃԿԷ ՃԾա ՃԻԹ
ՃԿԸ . .

Թէ ունիք այլ դարձեալ
տեսից զձեզ եւ ուրախ
լիցին սիրտք ձեր, եւ
զուրախութիւն ձեր ոչ
ոք հանիցէ 'ի ձէնջ։
Եւ յայնմ աւուր զիս
ինչ ոչ հարցանիցէք։
ՃԿ Գ Ամէն ամէն ասեմ ձեզ՝
զի զոր ինչ խնդրիցէք 'ի
Հօրէ իմէ յանուն իմ,
տացէ ձեզ։
Մինչեւ ցայժմ ոչինչ
խնդրեցիք յանուն իմ.
խնդրեցէք, եւ առնու
ցուք, զի ուրախու
թիւն ձեր լցեալ իցէ։
ՃԿԱ Ժ Զայս առակօք խօսե
ցայ ընդ ձեզ, եկես
ցէ ժամանակ յորժամ
ոչեւս առակօք խօսե
ցայց ընդ ձեզ, այլ
յայտնապէս զՀօրէ պատ
մեցից ձեզ։
Յայնմ աւուր խնդրես
ջիք յանուն իմ. եւ ոչ
ասեմ ձեզ եթէ ես ա
ղաչեցից զՀայր վասն
ձեր։
Զի ինքն իսկ Հայր սի
րէ զձեզ՝ զի դուք զիս
սիրեցիք, եւ հաւատա
ցիք, թէ ես յաստուա
ծոյ ելի։
Ելի 'ի Հօրէ եւ եկի յաշ
խարհ, դարձեալ թո
ղում զաշխարհ, եւ եր
թամ առ Հայր։
Ասեն ցնա աշակերտ
քն. Ահա արդ յայտ
նութեամբ խօսիս, եւ ա
ռակ եւ ոչ մի ինչ ա
սես. այժմ գիտեմք
եթէ գիտես զամենայն.
եւ ոչինչ պիտոյ է եթէ
ոք հարցանիցէ զքեզ,
յայսմիկ հաւատամք ե
թէ յաստուածոյ ելեր։
ՃԿԲ Ի Պատասխանի ետ նոցա



Մ Լ Մր ՃԽ ՃԾԶ ՃԻԵ ՃԾԱ
Մ Լ Մր ՃՂԲ ՃՃԵ ՃԿԲ

յս և ասէ , այժմ հաւա
տայք ․ ահա եկեսցէ
ժամ , և եկեալ իսկ է ,
զի ցրուեսջիք իւրա
քանչիւր տեղիս , և
զիս միայն թողուցուք ,
և չեմ միայն , զի հայր
ընդ իս է ։

Ճեգ Փ Զայս խօսեցայ ընդ
ձեզ , զի ընդ իս զխա
ղաղութիւն ունիցիք ,
յաշխարհի աստ զնեղու
թիւն ունիցիք ․ այլ քա
ջալերեցարուք , զի ես
յաղթեցի աշխարհի ։

Զայս իբրև խօ
սեցաւ յս ,
համբարձ զա
չս իւր յեր
կինս և ասէ ։

Հայր հասեալ է ժամ՝
փառաւորեա զորդի քո ,
զի և որդի քո փառա
ւորեսցէ զքեզ ․ որպէս
ետուր նմա իշխանու
թիւն ամենայն մարմնոյ ,
զի զամ , զոր ետուր
նմա , տացէ զկեանս
յաւիտենականս ․

Այս են յաւիտենական
կեանք , զի ծանիցեն
զքեզ ․ միայն ճշմարիտ
այծ , և զոր առաքեցեր
զյս քս ։

Ես զքեզ փառաւորե
ցի յերկրի , զգործն
կատարեցի , զոր ետուր
ցիս զի արարից ․

Եւ այժմ փառաւորեա
զիս հայր՝ առ իքէն փա
ռօքն զոր ունէի յառաջ
քան զլինիլն աշխարհի
առ իքէն ․

Յայտնեցի զանուն քո
մարդկան ․ զորս ետուր
ինձ յաշխարհէ , քո էին ,
և ինձ ետուր զնոսա , և
զբանն քո պահեցին ․

Արդ

Արդ՝ գիտացին եթէ
զամենայն ինչ զոր ե
տուր ինձ, առ ի քէն են.
Զի բանն զոր ետուր
ինձ ետու նոցա, և նո
քա ընկալան՝ և ծա
նեան ճշմարտութեամբ
թէ առ ի քէն ելի, և
հաւատացին եթէ դու
առաքեցեր զիս.
Արդ՝ ես վասն նոցա
աղաչեմ. և ոչ վասն աշ
խարհի աղաչեմ, այլ
վասն նոցա զորս ետուր
ինձ, զի քո են.
Եւ որինչ իմ է՝ ամե
նայն քո է. և որինչ
քո է՝ այն իմ է, և փա
ռաւորեալ եմ ՚ի նոսա.
Եւ ես ոչեւս եմ յաշխար
հի և նոքա յաշխարհի
են, և ես առ քեզ գամ.
Հա՛յր, ս՜բ պահեա՛ զնոսա
յանուն քո, որով ետուրն
ինձ, զի եղիցին մի, որ
պէս և մեք մի եմք.
Մինչ էի յաշխարհի
ընդ նոսա, ես պահէի
զնոսա յանուն քո, որով
ետուրն ինձ և պահեցի
և ոչոք ՚ի նոցանէ կոր
եաւ՝ բայց որդին կորստ
եան, զի գիրն լցցի.
Բայց արդ առ քեզ
գամ, և զայս խօսիմ
յաշխարհի, զի ունիցին
զուրախութիւն իմ լիով
յանձինս իւրեանց.
Ես ետու նոցա զբանն
քո, և աշխարհ ատեաց
զնոսա. զի չեն յաշխար
հէ, որպէս և ես չեմ
յաշխարհէ.
Ոչ զայս աղաչեմ, զի
բարձցես զնոսա յաշխար
հէ. այլ զի պահեսցես
զնոսա ՚ի չարէ.
Յաշխարհէ աստի չեն,
որ

որպէս և ես չեմ յաշխարհէ ։
Սուրբ արա զնոսա ճշմար
տութեամբ քով ։ զի քո
բանդ ճշմարտութի՛ է ։
Որպէս զիս առաքեցեր
յաշխարհ, և ես առա
քեցի զնոսա յաշխարհ ։
Եւ ի վերայ նոցա ես
ա̅ռ առնեմ զանձն իմ,
զի եղիցին և նոքա սրբ
եալք ճշմարտութեամբ ։
Բայց ոչ վասն նոցա մի
այն աղաչեմ, այլ և
վասն ամենայն հաւա
տացելոց բանիւ նոցա
յիս ։ զի ամենեքին մի
լիցեն, որպէս դու հայր
յիս՝ և ես ՚ի քեզ ։ զի և
և նոքա ՚ի մեզ լիցեն,
զի և աշխարհ հաւա
տասցէ եթէ դու ա
ռաքեցեր զիս ։
Եւ ես զփառսն, զորս
ետուր ինձ, ետու նոցա
զի լիցեն մի, որպէս և մեք

մի եմք ։
Ես ՚ի նոսա և դու յիս,
զի եղիցին կատարեալք
՚ի մի ։
Եւ գիտասցէ աշխարհ
եթէ դու առաքեցեր
զիս, և սիրեցեր զն̃ս որպ
դու զիս սիրեցեր ։
Հայր, զորս ետուրն ինձ
կամիմ, զի ուր ես
եմ, և նոքա լիցեն ընդ
իս, զի տեսանիցեն
զփառսն իմ, զորս ե
տուրն ցիս, զի սիրե
ցեր զիս յառաջ քան զլի
նելն աշխարհի ։
ՃԿԴ Գ Հայր, արդարև աշ
խարհ զքեզ ոչ ծանեաւ
այլ ես զքեզ ծանեայ ։
ՃԿԵ Ժ Եւ նոքա ծանեան ե
թէ դու առաքեցեր զիս ։
Եւ ծանուցի զանուն
քո, և ծանուցից,
զի սէրն, զոր սիրեցեր
զիս

մ ՃԿԴ ՃԶԵ — մ ՃԹԲ ։ — ղ ։ ։ — յ ՃԿԹ ։

զիս ՚ի նոսա իցէ և ես
՚ի նոսա ։

ՃԾԼ Ա Զայս իբրեւ ասաց յս, ել աշակերտօքն հանդերձ յայնկոյս ձորոյն կեդրոնի, ուր էր պարտէզ, յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր ։

ՃԾԵ Ժ ԼԳ Գիտէր և յուդա որ զնա մատնելոց էր զտեղին, զի բազում անգամ ժողովեալ էր անդր յս, աշակերտօքն հանդերձ ։

ՃԾԶ Ա Իսկ յուդայի առեալ ընդ իւր զգունդն, և ՚ի քահանայապետիցն և ՚ի փարիսեցւոցն սպասաւորս, գայ անդր՝ ջահիւք և լապտերօք և զինուք ։

ՃԾԹ Ժ Իսկ յս իբրեւ ետես զայն ամ եկեալ իվերայ նորա, ել և ասէ ցնոսա, զո՞ խնդրէք ։ Պատասխանի ետուն նմա, զյս նազովրեցի ։ Ասէ ցնոսա յս, ես եմ ։ Կայր ընդ նոսա, և յուդա որ մատնէր զնա ։ Իբրեւ ասաց թէ ես եմ, յետս յետս չոգան՝ և զարկան զգետնի ։ Դարձեալ եհարց զնոսա՝ զո՞ խնդրէք ։ Նոքա ասեն, զյս նազովրեցի ։ Պատասխանի ետ նոցա յս, ասացի ձեզ թէ ես եմ ։ Արդ՝ եթէ զիս խնդրէք՝ թոյլ տուք դոցա երթալ ։ Զի լցցի բանն զոր ասաց, թէ զոր ետուր ցիս ոչ կորուսի ՚ի նոցանէ և ոչ զոք ։

| Յ | Մ | Ղ | Զ |
| --- | --- | --- | --- |
| ՃԾԶ | ԺԼ | ՃՀԲ | ՄՀԹ |
| ՃԾԵ | . | . | . |
| ՃԾԼ | Ա | ՃՁԱ | ՄՁԵ |
| ՃԾԹ | . | | . |

Իսկ

ՃԿ Իսկ սիմոն պետրոս քան
Ա զի ունէր զսուր, ձգեաց
զնա, և եհար զքահա
նայապետին ծառայ՝ և
եհատ զունկն նորա
զաջոյ, և էր անուն
ծառային մաղքոս .
Ասէ յս̅ ցպետրոս, արկ
զսուրդ անդրէն ՚ի
պատեանն իւր .
ՃԿԱ Զբաժակն, զոր ետ
Ա ինձ հայր՝ ոչ ըմպիցեմ
զնա .
ԼԳ ՃԿԲ Իսկ գունդն, և հազա
Ա րապետն, և սպասա
ւորքն հրէից կալան զյս̅
և կապեցին .
ՃԿԳ Եւ ածին զնա նախ
Ժ առ աննա, որ էր աներ
կայիափայ, որ քահա
նայապետն էր տարւոյն
այնորիկ .
Այս այն կայիափա էր
որ խրատ ետ հրէից,
եթէ լաւ է առն միում
մեռանել ՚ի վերայ ժողո
վրդեանն .
ՃԿԴ Եւ երթայր զհետ նո
Ա րա սիմոն պետրոս՝ և
միւս աշակերտն .
ՃԿԵ Եւ աշակերտն այն
Ժ քանզի ծանօթ էր քա
հանայապետին եմուտ
ընդ յս̅ ՚ի գաւիթ քահա
նայապետին .
ՃԿԶ Եւ պետրոս կայր առ
Ա դրանն արտաքոյ .
ՃԿԷ Ել միւս աշակերտն որ
Ժ էր ծանօթ քահանայա
պետին, և ասաց ցդռնա
պանն և եմոյծ ՚ի ներ
քս զպետրոս .
ՃԿԸ Ասէ աղջիկն որ դռնա
Ա պանն էր, ցպետրոս .
միթէ և դու յաշակեր
տաց առն այնորիկ իցես .
ՃԿԹ Եւ նա ասէ ոչ եմ .
Ժ Կային անդ ծառայքն
և

ԾՕ.

| Յ | Մ | Մր | Ղ |
|---|---|---|---|
| ՃԿ | ՄՂ | ՃՁԴ | ՄՁԵ |
| ՃԿԱ | ՄՂԲ | ՃՀԵ | ՄՁԱ |
| ՃԿԲ | ՄՂ | ՃՁԵ | ՄՂ |
| ՃԿԳ | . | . | . |

| Յ | Մ | Մր | Ղ |
|---|---|---|---|
| ՃԿԴ | ՄՌ | ՃՁԸ | ՄՂԱ |
| ՃԿԵ | . | . | . |
| ՃԿԶ | ՄԾԳ | ՃՁԵ | ՄՂԱ |
| ՃԿԷ | . | . | . |
| ՃԿԸ | ՄԾԴ | ՃՁԵ | ՄՂԲ |
| ՃԿԹ | . | . | . |

և սպասաւորք խարոյկ
արկեալ, քանզի ցուրտ
էր և ջեռնուին. կայր
ընդ նոսա և պետրոս
և ջեռնոյր.
Իսկ քահանայապետն ե-
հարց զՅս վասն աշակեր-
տացն՝ և վասն վարդապե-
տութեան նորա.
ՃՀ Ա Պատասխանի ետ նմա
Յս, ես յայտնապէս խօ-
սեցայ յաշխարհի, ես
յամ ժամ ուսուցի ՚ի ժո-
ղովրդեանն, և ՚ի տա-
ճարի անդ՝ ուր ամ հրէ-
այքն ժողովեալ էին,
և ՚ի ծածուկ ինչ ոչ խօ-
սեցայ.
ՃՀԱ Ժ Զի՞ հարցանես զիս,
հարց զայնոսիկ որք
լուանն, եթէ զինչ ասացի
ցնոսա, ահաւանիկ նոքա
գիտեն զինչ ասացի ես.
ՃՀԲ Ա Իբրև նա զայս ասաց,
մի ոմն ՚ի սպասաւորացն
որ անդ կայր. էած ապ-
տակ յՅս և ասէ, այդպէս
պատասխանի տաս քա-
հանայապետիդ.
ՃՀԳ Ժ Ասէ ցնա Յս, եթէ
չար ինչ խօսեցայ վկայ-
եա վասն չարին, իսկ եթէ
բարւոք, ընդէր հարկա-
նես զիս.
ՃՀԴ Ա Եւ առաքեաց զնա Ան-
նա կապեալ առ Կայիա-
փայ քահանայապետ.
ՃՀԵ Ա Եւ սիմոն պետրոս կայր
անդ և ջեռնոյր, ասեն
ցնա, միթէ և դու յաշա-
կերտաց անտի նր իցես.
Նա ուրացաւ և ասէ
թէ չեմ.
Ասէ մի ոմն ՚ի ծա-
ռայից քահանայապե-
տին ազգական այնորիկ,
զորոյ զունկն եհատ
պետրոս, ոչ ես իսկ տե-
սի զքեզ ՚ի պարտիզի
անդ ընդ նմա.

Մ Ղ Զ
ՃՀԱ ՄԽԹ

Դուռ

| Յ | Մ | Մր | Զ |
|---|---|---|---|
| ՃՀԳ | . | . | . |
| ՃՀԴ | ՄԶ | ՃԼԷ | ՀԶ |
| ՃՀԵ | ՄԺԸ | ՃՂԱ | ՀԹ |

Դարձեալ ուրացաւ պետրոս, և վաղվաղակի հաւ խօսեցաւ :

ՃԿԶ Ա Ժ Եւ ածեն զՅս՛ 'ի վանաց կայիափայ յապարանս դատաւորին, և էր այգուց :

ՃԿԷ Ժ Եւ նոքա ոչ մտին յապարանսն, զի մի՛ պղծեսցին, այլ զի ուտիցեն զզատիկն :

Ել առ նս՛ պիղատոս ար տաքս և ասէ, զինչ չարախօսութիւն մատուցանէք զառնէն զայնմանէ : ՃԿԸ

Պատասխանի ետուն և ասեն ցնա, եթէ չէր չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ :

Ասէ ցնոսա պիղատոս. առէք զնա դուք, և ըստ ձերոց օրինացն դատեցէք :

Ասեն ցնա հրեայքն, մեզ ոչ է արժան սպանանել զոք :

Զի լցցի բանն յի՛, զոր ասաց, նշանակեալ թէ որով մահու մեռանելոց իցէ :

ՃԿԸ Եմուտ միւսանգամ յապարանսն պիղատոս, կոչեաց զյս՛ և ասէ ցնա, դու ես թագաւորն հրէից :

ՃԿԹ Ժ Պատասխանի ետ յս՛, 'ի քէն ասես զայդ՝ եթէ այլք ասացին քեզ զինէն :

Պատասխանի ետ պիղատոս, մի թէ և ես հրեայ իցեմ, ազգն քո և քահանայապետք մատնեցին զքեզ ինձ, զինչ գործ գործեալ է քո :

Պատասխանի ետ յս՛, իմ արքայութիւն չէ յայսմ աշ

խարհ

խարհէ, եթէ յաշխարհէ
աստի էր արքայութիւն
իմ, սպասաւորքն իմ
մարտնչէին արդեօք՝ զի
մի՛ մատնեցայց հրէից,
բայց արդ թագաւո
րութիւն իմ չէ աստի։
ՃԾ Դ Ասէ ցնա պիղատոս,
ապա թէ այդպէս իցէ,
թագաւոր ոմն ես դու։
Պատասխանի ետ յս,
դու ասես թէ թագա
ւոր իցեմ։
ՃԾԱ Ժ Բայց ես յայդ իսկ ծն
եալ եմ, և՝ի դոյն իսկ
եկեալ եմ յաշխարհ՝ զի
վկայեցից ճշմարտութե։
ամենայն որ ՝ի ճշմարտու
թէ է լսէ բարբառոյ
իմոյ։
Ասէ ցնա պիղատոս,
զինչ է ճշմարտութիւն։
ՃԾԲ Թ Զայս իբրեւ ասաց,
դարձեալ ել առ հրէ

այսն և ասէ ցնոսա, ես
և ոչ մի ինչ պատճառս
գտանեմ ի նմա։
ՃԾԴ Դ Բայց է ձեր սովորու
թիւն, զի զմի ոք արձա
կեցից ձեզ ի զատկիս,
արդ կամիք զի արձա
կեցից ձեզ զթագաւորն
հրէից։
ՃԾԵ Ա Աղաղակեցին ամենե
քեան և ասացին, մի՛
զդա, այլ զբարաբբայ,
և էր բարաբբայն այն
աւազակ։
ՃԾԶ Դ Յայնժամ էառ
պիղատոս զյս
և գան եհար։
Եւ զինուորացն արար
եալ զպսակ ՝ի փշոց՝ և
դին ՝ի գլուխ նորա, և
զգեցուցին նմա զհան
դերձ ծիրանի։
Եւ գային առ նա, և
ասէ

| Յ | Մ | Մր | Ղ |
| --- | --- | --- | --- |
| ՃԾ | ՅԻա | մա | ․ |
| ՃԾԱ | ․ | ․․ | ․ |
| ՃԾԲ | ․ | ․ | ՅԹբ |

| Յ | Մ | Մր | Ղ |
| --- | --- | --- | --- |
| ՃԾԴ | ՅԻԴ | մդ | ․ |
| ՃԾԵ | ՅԻԵ | մե | ․ յԺ |
| ՃԾԶ | ՅԻԹ | մէ | ․ |

ասէին , ողջ էր արքայ
հրէից , և հանէին նմա
ապտակս ։
ՃԺԴ Թ Ել դարձեալ պիղատոս
արտաքս՝ և ասէ ցնոսա ,
ահա ածեմ զնա արտա
քս առ ձեզ , զի գիտաս
ջիք թէ ես վնաս ինչ 'ի
նմա ոչ գտանեմ ։
ՃԺԵ Դ Ել յս̅ արտաքս , և ու
նէր զպսակ 'ի փշոց , և
զհանդերձ ծիրանի ։
ՃԺԶ Ա Եւ ասէ ցնոսա , ահա
այրդ ցձեզ ։
Իբրև տեսին զնա քա
հանայապետքն և սպա
սաւորք , աղաղակ բար
ձին և ասեն , 'ի խաչ
հան , 'ի խաչ հան զդա ։
ՃԺԹ Ժ Ասէ ցնոսա պիղատոս ,
առէք զդա 'ի ձեզ , և
ձեզէն հանէք 'ի խաչ ։
ՃԻ Թ Զի ես 'ի դմա վնաս
ինչ ոչ գտանեմ ։

| Յ | Մ | Մր | Ղ |
|---|---|---|---|
| ՃԺԴ | . | . | ՅԺԲ |
| ՃԺԵ | ՅԿԳ | ՃԻ | . |
| ՃԺԶ | ՅԿԴ | ՃԻ | ՅԺԱ |
| ՃԺԹ | . | . | . |
| ՃԻ | . | . | ՅԺ ՅԲ |

ՃԺԷ Դ Պատասխանի ետուն
նմա հրէայքն , մեք օրէ
նս ունիմք , և ըստ օրի
նաց մերոց պարտի մե
ռանիլ , զի զանձն իւր
որդի աստուծոյ արար ։
ՃԺԸ Ժ Իբրև լուաւ զբանս
զայս պիղատոս , առա
ւել ևս երկեաւ ։
Եմուտ դարձեալ ան
դրէն յապարանսն , և
ասէ ցյս̅ , ուստի ես դու ։
Եւ յս̅ ոչ ետ նմա պա
տասխանի ։
Ասէ ցնա պիղատոս ,
ընդ իս ոչ խօսիս , ոչ
գիտես եթէ իշխանու
թի̅ ունիմ հանել զքեզ
'ի խաչ , և իշխանութի̅
ունիմ արձակել զքեզ ։
Պատասխանի ետ յս̅ ,
ոչ ունէիր դու իշխա
նութի̅ 'ի վերայ իմ , և
ոչ մի , եթէ ոչ էր տու
եալ քեզ 'ի վերուստ ։
վս̅

| Յ | Մ | Մր |
|---|---|---|
| ՃԺԷ | . | |
| ՃԺԸ | ՅԿԸ | ՃԺԹ |

վասն այսորիկ որ մատ
նեացն զիս քեզ՝ նորա
մեծ մեղք են.
Եւ յայնմանէ պիղատոս
խնդրէր արձակել զնա.
Եւ հրէայքն աղաղակէ
ին, և ասէին, եթէ զդա
արձակես չես բարեկամ
կայսեր, ամ որ թա
գաւոր կոչէ զանձն իւր,
հակառակ է կայսեր.
ճղգ Ա Իսկ պիղատոս իբրև
լուաւ զբանս զայս,
է ած զՅս արտաքս. և
նստաւ ի վերայ բեմին,
'ի տեղւոջն որ կոչիւր
քարայատակ, և եբրայե
ցերէն կապպաթա. էր
ուրբաթն զատկի.
Եւ էր ժամ իբրև վեց
երորդ, և ասէ ցհրէ
այսն, ահա թագաւոր
ձեր ցձեզ.
ճղե Ժ Եւ նոքա աղաղակէին,
բարձ 'ի մէնջ, բարձ 'ի
մէնջ. և հան զդա 'ի խաչ

ճղզ Թ Ասէ ցնոսա պիղատոս, եւ
զթագաւորդ ձեր 'ի
խաչ հանիցեմ.
Պատասխանի ետուն
քահանայապետքն, չիք
մեր թագաւոր՝ բայց 'ի
կայսերէ.
ճղէ Ա Յայնժամ ետ զնա 'ի
ձեռս նոցա, զի 'ի
խաչ ելանիցէ.
ճղը Ա ՅՈ. Եւ նոքա առեալ
տանէին զնա,
և բարձեալ էր
ինքնին զխաչափայտն.
Եւ ելանէր 'ի տեղին որ
անուանեալ էր գա
գաթ, և կոչիւր եբրայե
ցերէն գողգոթա. ուր
և 'ի խաչ իսկ հանին զնա
ճղթ Ա Եւ ընդ նմա երկուս
ևս այլս, աստի և անտի,
և 'ի մէջ զՅս.
ճղժ Ա Գրեաց և տախտակ
մի պիղատոս, և եդ ի վե
խա

| Յ | Մ | Մր | Ղ |
|---|---|---|---|
| ճղգ | մհէ | մկ | յծա |
| ճղդ | ։ | ։ | ։ |

| Յ | Մ | Մր | Ղ |
|---|---|---|---|
| ճղզ | ։ | ։ | ։ |
| ճղէ | յհօ | մղ | յճը |
| ճղը | շլ | մթ | յհե |
| ճղթ | յղ | յհե | յհը |
| ճղժ | [illegible] | [illegible] | [illegible] |


ՅՆԹՀ

խաչին, եւ էր գրեալ յս
նազովրեցի, Թագաւոր
հրէից ։

յ ժ Զայն տախտակն ըն
թերցան բազումք ՚ի հրէ
ից, զի մօտ էր ՚ի քաղաք
անդր տեղին, ուր խաչե
ցաւն յս. եւ էր գրեալ
եբրայեցերէն, դաղմա
տերէն, եւ յունարէն ։
Ասեն ցպիղատոս քա
հանայապետքն հրէից,
մի՛ գրեր Թագաւոր հրէ
ից, այլ թէ նա ասաց
Թագաւոր եմ հրէից ։
Պատասխանի ետ պիղա
տոս, զոր ինչ գրեցի,
գրեցի ։

մա Ա Իսկ զինուորքն իբրեւ
հանին ՚ի խաչ զյս, ա
ռին զհանդերձս նորա,
եւ արարին չորս մասու
նս, իւրաքանչիւր զի
նուորի մասն, իսկ զպատ
մուճանն քանզի էր ա
ռանց կարանի, ՚ի վեր

ուստ փորոտնկեալ ամե
նեւին ։
Ասեն ցմիմեանս, մի՛ պա
տառեսցուք զայդ, այլ
արկցուք վիճակս ի վե
րայ դորա՝ ում եւ ելցէ ։
Զի լցցի գիրն որ ասէ,
բաժանեցին զհանդերձ
ձս իմ յինքեանս, եւ ի վե
րայ պատմուճանի իմոյ
զվիճակ արկին ։
Զինուորքն զայս ինչ
գործեցին ։
մբ ժ Կային առ խաչին յս
մայր նորա, եւ քոյր մօր նր
մարիամ կղէովպայ, եւ մա
րիամ մագդաղենացի ։
Յս իբրեւ ետես զմայրն
եւ զաշակերտն, զոր սի
րէր, զի կայր մօտ, ասէ
ցմայրն, կին դու, ահա
որդի քո ։
Ապա ասէ ցաշակերտն ։
ահա մայր քո ։
Եւ յայնմ ժամանակէ
էառ աշա

յ ժ մբ Ղ
ճ . . .
ճա յլգ մժբ յհա

յ
մբ

աշակերտն զնա առ ինքն.
ԻԸ Յետ այսորիկ գիտաց
Դ յս, եթէ ամն ինչ
կատարեալ է, զի կա
տարեսցի գիրն, ասէ,
Ծարաւի եմ.
Եւ անդ կայր աման ինչ
լի քացախով, և նոցա
սպունգ լցեալ քացա
խով ընդ լեղւոյ՝ շուրջ
եդեալ զմշտկաւ զո
պայի, մատուցին 'ի բե
րան նորա.
Իբրև էառ յս զքա
ցախն հանդերձ լեղ
ւովն, ասէ, ամն ինչ կա
տարեալ է.
Լ Եւ խոնարհեցուցեալ
զգլուխն աւանդեաց
զոգին.
ԼԱ Իսկ հրէայքն քանզի
Ժ ուրբաթ էր, զի մի
անդէն 'ի խաչին ադա
մեսցին մարմինքն մինչև

ցշաբաթն. զի էր օր մեծ
շաբաթուն այնորիկ.
աղաչեցին զպիղատոս,
զի խորտակեսցեն զբար
ձս նոցա, և բարձցին.
Եկին զինուորքն, և
զառաջնոյն խորտակե
ցին զբարձս, նոյնպէս
և զմիւսոյն՝ որ ընդ նմա
'ի խաչ ելեալ էր.
Բայց իբրև եկին առ
յս, և տեսին զի այն
ինչ մեռեալ էր, ոչ
խորտակեցին զբարձս
նորա.
Այլ մի ոմն 'ի զինուա
րացն տիգաւ խոցեաց
զկողս նորա, և վաղ
վաղակի ել արիւն, և
ջուր.
Եւ որ եաեսն, վկայ
եաց, և ճշմարիտ է
վկայութի նորա, և նա
գիտէ թէ ճշմարիտ ասէ
զի

զի և դուք հաւատաց
ջիք ։
Այս եղև զի լցցի գիրն,
եթէ ոսկր նորա մի՛
փշրեսցի ։
Եւ դարձեալ միւս գիր
ասէ, եթէ հայեսցին
'ի նա զոր խոցեցին ։

մղ Ա Սր. Յետ այսորիկ ա
ղաչեաց զպիղա
տոս յօսէփ, որ
յարիմաթեայ էր, աշա
կերտ յի՛ ի ծածուկ վա՛
ահին հրէից, զի բարձ
ցէ զմարմինն յի՛ ։
Եւ հրամայեաց պիղա
տոս ։
Եկն և եբարձ զնա ։
Եկն և նիկոդեմոս որ
Եւ Բն. եկեալն էր առ յս՛ 'ի
գիշերի զառաջինն, և
եբեր զմուռս խառն
ընդ հալուէս, լիտրս

լտերս հարիւր ։
ձ Ա Առին զմարմինն յի՛, և
պատեցին կտաւօք և
խնկօք հանդերձ, որպէս
օրէն էր հրէից պատել ։
Եւ էր 'ի տեղւոջն յո
րում խաչեցաւ պար
տէզ, և 'ի պարտիզի
անդ գերեզման նոր յո
րում ոչոք երբեք էր
եդեալ ։
Անդ վասն ուրբաթուն
հրէից՝ զի մօտ էր գերեզ
մանն, եդին զյս՛ ։

մբ Իչ Ի Եւ 'ի միաշաբա
թոջն՝ մարիամ
մագդաղենա
ցի գայ առաւօտուն
ընդ արշալուսն 'ի գե
րեզման անդր, և տեսա
նէ զվէմն բարձեալ 'ի
դրանց գերեզմանին ։
մգ Ապա ընթանայ և գայ
առ

յ ր մզ զ
յկը պն յ

յ ր մ զ
յխթ մբ յլթ
յթա մլ յլզ



առ Սիմոն Պետրոս, եւ առ միւս աշակերտն, զոր սիրէրն յս̃, եւ ասէ ցնոսա, բարձին զՏ̃րն ՚ի գերեզմանէ անտի, եւ ոչ գիտեմ, ուր եդին զնա։

Ել Պետրոս եւ միւս աշակերտն, եւ գային ՚ի գերեզմանն։

Ընթանային երկոքեանն ի միասին, եւ միւս աշակերտն յառաջեաց, ընթացաւ վաղագոյն քան զպետրոս, եւ եկն նախ ՚ի գերեզմանն։

Եւ խոնարհեալ տեսանէ զի կային անդ կտաւքն, բայց ՚ի ներքս ոչ եմուտ։

Եկն եւ Սիմոն Պետրոս որ գայր զհետ նորա, եւ մտանէ ՚ի գերեզմանն եւ տեսանէ զկտաւսն, զի կային անդ։

Եւ վարշամակն, որ էր ՚ի գլուխ նորա՝ ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ ՚ի մի կողմն։

Յայնժամ եմուտ եւ միւս աշակերտն, որ եկեալ էր յառաջագոյն ՚ի գերեզմանն, եւ ետես եւ հաւատաց։

Զի չեւ եւս գիտէին զգիրս թէ պարտ է նմա ՚ի մեռելոց յառնել։

Չոգան դարձեալ առ միմեանս աշակերտքն։

ԺԳ Ա Բայց Մարիամ կայր առ տապանն գերեզմանին եւ լայր, եւ մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ ՚ի գերեզմանն։

Եւ տեսանէ երկուս հրեշտակս ՚ի սպիտակս, զի նստէին մի ՚ի սնարսն եւ

сильно просить, чтобъ ...
силу въ пользу вѣрителя сего въ ...
затруднять столь... просьбою. Я ...
власти, которою вы мнѣ даете;
...ніемъ, что и вы также бу...

եւ մի յանոտից՝ ուր կայր
մարմինն յի ։

ժգ Եւ նոքա ասեն ցնա ,
կին դու զի՞ լաս , ասէ
ցնոսա , զի բարձին զտէրն
իմ ՚ի գերեզմանէ անտի
եւ ոչ գիտեմ , ուր եդին
զնա ։

Զայս իբրեւ ասաց ։
դարձաւ ՚ի թիկուն
կոյս , եւ տեսանէ զյս
դ զի կայր , եւ ոչ գիտէր
թէ յս իցէ ։

Ասէ ցնա յս , կին դու
զի՞ լաս , զո՞ խնդրես ։
Նա այսպէս թուե
ցաւ թէ պարտիզպանն
իցէ , ասէ ցնա ։ Տէր
եթէ դու բարձեր զնա
ասա ինձ , ուր եդեր
զնա զի ես առից զնա ։

Ասէ ցնա յս մարիամ ,
եւ նա դարձաւ , եւ ասէ
ցնա եբրայեցերէն , ռաբ
բունի , որ թարգմանի
վարդապետ ։

Ասէ ցնա յս , մի՛ մերձե
նար յիս , զի չեւ ես ել
եալ եմ առ հայրն իմ ,
այլ երթ դու առ եղ
բարս իմ , եւ ասա ցնս ։
Ելանեմ ես առ հայրն
իմ , եւ առ հայր ձեր ,
եւ ածնիմ , եւ ած ձեր ։

Գայ մարիամ մագդա
ղենացի եւ պատմէ աշա
կերտացն , եթէ ետես
նա զտէր , եւ զայս ինչ
ասաց ցնա ։

ԺԹ Խւ։ Եւ էր երեկոյ ՚ի
միաշաբաթոջ
աւուրն , եւ
դրունք փակելոց ուր էին
աշակերտքն ժողով
եալք վասն ահին հրէից
եկն յս՝ եւ եկաց ՚ի մէջ
նոցա , եւ ասէ ցնս ողջոյն
ընդ

ընդ ձեզ ։
Իբրեւ զայս ասաց, ետոյց
նոցա զձեռսն եւ զկողն
իւր ։
մժդ Ժ Եւ խնդացին աշա
կերտքն իբրեւ տեսին
զՏէր ։
Ասէ ցնոսա դարձեալ, ողջ
ջոյն ընդ ձեզ, որպէս առա
քեաց զիս Հայր իմ, եւ
ես առաքեմ զձեզ ։
մժե Թ Եւ զայս իբրեւ ասաց
փչեաց 'ի նոսա եւ ասէ,
առէք զՀոգի սուրբ ։
մժզ Ե Եթէ ումեք թողու
ցուք զմեղս՝ թողեալ լի
ցի նոցա ։ եւ եթէ զու
րուք ունիցիք՝ կալեալ
լիցի ։
մժէ Ժ Իսկ Թովմաս մի յերկո
տասանիցն անուանեալն
Երկուորեակ, ոչ
էր ընդ նոսա յորժամ
եկն Յս ։

Ասէին ցնա այլ աշա
կերտքն, եթէ տեսաք
զՏր ։
Եւ նա ասէ ցնս, եթէ
ոչ տեսից 'ի ձեռս նորա
զնշան բեւեռացն, եւ
արկից զմատունս իմ 'ի
տեղիս բեւեռացն, եւ
մխեցից զձեռս իմ 'ի կո
ղս նորա ոչ հաւատամ ։
ԽԲ Եւ յետ ութ
աւուր դար
ձեալ էին 'ի
ներքս աշա
կերտքն, եւ Թովմաս ընդ
նոսա, գայ Յս դրունք փա
կելոց, եւ եկաց իմէջ
նոցա եւ ասէ, ողջոյն ընդ
ձեզ ։
Ապա ասէ ցԹովմաս բեր
զմատունս քո եւ արկ
այսր, եւ տես զձեռս իմ,
եւ բեր զձեռն քո, եւ
մխեա

Մ Ը
մժդ .
մժե ՃԺԶ
մժէ .

Մ Մ Ղ Ղ
մժը . . Ժ

ձեռս 'ի կողս իմ, և մի' լինիր անհաւատ այլ հաւատացեալ ։ Պատասխանի ետ Թովմաս և ասէ ցնա . տէր իմ, և աստուած իմ ։ Ասէ ցնա յս, այդ զի տեսեր զիս և հաւատացեր, երանի, որոց ոչ իցէ տեսեալ հաւատասցեն . բազում և այլ նշանս արար յս առաջի աշակերտաց իւրոց, որ ոչ է գրեալ 'ի գիրս յայս մի ։ Այլ այս այնչափ ինչ գրեցաւ՝ զի հաւատայցէք եթէ յս քս է որդի աստուծոյ ։ Եւ զի հաւատայցէք, և զկեանսն յաւիտենականս ընդունիցիք յանուն նորա ։

ԺԹ
Ա

Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր յս աշակերտացն իւրոց՝ առ ծովեզերբն տիբերեայ, և յայտնեաց այսպէս ։ Էին իմիասին սիմոն պետրոս, և Թովմաս անուանեալն երկուորեակ, և նաթանայէլ, որ 'ի կանայ գալիլեացւոց, և որդիքն զեբեթեայ, և այլք յաշակերտաց անտի երկու ։ Ասէ ցնա սիմոն պետրոս . երթամ ձուկն որսալ ։ Ասեն ցնա, գամք և մեք ընդ քեզ . Գնացին, և մտին 'ի նաւն, և յայնմ գիշերի կալան և ոչ ինչ . Իբրև այգ եղև, կայր յս

մտ յեզր ծովուն, բայց ոչ ծանեան աշակերտ քն թէ յս իցէ ։

Ասէ ցնոսա յս, մանկունք՝ միթէ ունիք ինչ ուտելիս ։

Պատասխանի ետուն և ասեն ցնա, ոչ ։

Ասէ ցնոսա, արկէք յաջակողմն նաւին զուռկանդ, և գտանիցէք, արկին, և ոչ կարէին ձգել ՚ի բազմութենէ անտի ձկանցն ։

Թ Ասէ աշակերտն այն, զոր սիրէրն յս ցպետրոս ։ տր է այն ։

Սիմոն պետրոս իբրև լուաւ թէ տր է, էարկ զիւրև զսփածանելին՝ քանզի մերկ էր, և ընկեց զինքն ՚ի ծովն ։

Իսկ այլ աշակերտքն նաւաւն եկին գային, քանզի չէին հեռի ՚ի ցամաքէ, այլ իբրև երկերիւր կանգնաւ. քարշէին զգործին՝ հանդերձ ձկամբքն ։

Փա Թ Իբրև ելին ՚ի ցամաք, տեսանեն կրակետղ կայծականց, և ձուկն մի ՚ի վերայ և հաց ։

Ասէ ցնոսա յս, բերէք ՚ի ձկանց այտի զոր դուք կալայք այժմիկ ։

Փբ Թ Ել սիմոն պետրոս, և ձգէր զգործին ՚ի ցամաք, լի մեծամեծ ձկամբք, հարիւր յիսուն և երիւք, և այն չափ ինչ կայր, և ոչ պատառեցաւ գործին ։

Փգ Թ Ասէ ցնոսա յս, եկայք ճաշեցէք ։

Փդ Ժ Եւ ոչոք յաշակերտացն իշխէր հարցանել թէ դու

Յ Հ
Փա յեա
Փբ '
Փգ յեա
Փդ .

դու ո՞վ ես, զի գիտէին
թէ տ՟րն է ։
մժե թ Գայ յ՟ս եւ առնու զհացն, եւ տայ նոցա,
նոյնպէս եւ զձուկն ։
մժզ ժ Զայս երրորդ անգամ երեւեցաւ յ՟ս աշակերտացն՝ յարուցեալ ՚ի մեռելոց ։

մժէ ժ Եւ իբրեւ ճաշեցին, ասէ ցսիմոն պետրոս
յ՟ս, սիմոն յօնանու սիրես զիս առաւել քան
զդոսա ։
Ասէ ցնա, այո՛ տ՟ր, եւ դու գիտես զի, սիրեմ
զքեզ ։
Ասէ ցնա արածեա՛
զգառինս իմ ։
մժը ժ Դարձեալ ասէ ցնա, սիմոն յօնանու սիրես զիս ։
Ասէ ցնա, այո՛ տ՟ր եւ
դու գիտես զի սիրեմ
զքեզ ։
Ասէ ցնա արածեա՛ զոչ
խարս իմ ։
մժթ թ Ասէ ցնա երրորդ անգամ, սիմոն յօնանու սիրես
զիս ։
մի ժ Տրտմեցաւ պետրոս, զի ասաց ցնա երրորդ թէ
սիրես զիս ։
Եւ ասէ ցնա ։ տ՟ր, դու զա՟մ գիտես, եւ դու ինքն զա՟մ ճանաչես, եւ եթէ սիրեմ զքեզ ։
միա թ Ասէ ցնա յ՟ս, արածեա՛
զոչխարս իմ ։
միբ ժ Ամէն ամէն ասեմ քեզ, զի մինչ մանուկն էիր, անձամբ անձին գօտի ածէիր եւ երթայիր յո եւ կամէիր, եւ յորժամ ծերասցիս, ձեռս ՚ի վեր կոյցես, եւ այլք ածցեն քեզ գօտի, եւ



| յ | հ |
|---|---|
| մժե | յեա |
| մժզ | ։ |
| մժէ | ։ |
| մժը | ։ |

| յ | հ |
|---|---|
| մժթ | յ՟ւ |
| մի | |
| միա | մ՟ւ |
| միբ | ։ |

տարցեն ուր ոչն կամի
ցիս ։

Զայս ասաց նշանա կեալ՝ թէ որով մահու փառաւոր առնիցէ զա՛ծ ։

Եւ զայս իբրեւ ասաց, ասէ ցնա եկ զկնի իմ ։

ԽՊ Դարձաւ պետրոս եւ տեսանէ զաշակերտն զոր սիրէր յս՛, զի եր թայր զկնի, որ եւ անկաւ զլանջօք նորա եւ ասէ. տր՛ ով է որ մատնելոց է զքեզ ։

Զնա տեսեալ պետրոսի, ասէ ցյս՛, տր՛, իսկ սա զի՛ ։

Ասէ ցնա յս՛, եթէ կամիմ. զի կայցէ դա մինչեւ ես գամ, քեզ զի փոյթ է, դու եկ զկնի իմ ։

Ել բանս այս յեղբարս՝ եւ համարեցան թէ աշակերտն այն ոչ մեռանիցի ։

Եւ ոչ ասաց նմա յս՛ եթէ ոչ մեռանիցի. այլ թէ կամիմ ես թէ կայցէ դա մինչեւ ես գամ ։

Սա աշակերտ է որ վկայէ վս՛ այսորիկ, որեւ գրեացն իսկ զայսոսիկ, եւ գիտեմք եթէ ճշմարիտ է վկայութի՛ նորա ։

Բայց է՝ եւ այլ ինչ բազում, զոր արար յս՛, որք եթէ գրեալ էին մի ըստ միոջէ, կարծեմ թէ եւ ոչ աշխարհս բաւական էր տանել զգիրսն որք թէ գրեալք էին ։

Վերջ Սրբոյ Աւետարանիս ։

Ի հինգ տեղւոջ չորս աւետարանիչքն համաձայնին միմեանց ․

Ի հինգ տեղւոջ չորս աւետարանիչքն համաձայնին միմեանց ․

Ի հինգ տեղւոջ չորս աւետարանիչքն համաձայնին միմեանց ․

Մատթէոս ԻԴ տեղի երեքն համաձայնին ․
Ղուկաս ԻԷ տեղի երեքն համաձայնին ․
Յոհաննէս Է տեղի երեքն համաձայնին ․
Մատթէոս Ի տեղի երկուքն համաձայնին ․
Մարկոս ՃԲ տեղի երկուքն համաձայնին ․
Ղուկաս Ճ տեղի երկուքն համաձայնին ․
Յոհաննէս չունի ................................ ․
Մատթէոս ՃԷ տեղի միայն ..................... ․
Մարկոս երեք տեղի միայն ..................... ․
Ղուկաս ԿԷ տեղի միայն ..................... ․
Յոհաննէս Ի տեղի միայն ..................... ․

Փառք

Փառք անեղ էին, անսկիզբն գոյին. և միշտ կենդանւոյն. եռանձնեա միութեան. եզաբուն բնութեան, միասնական տէրութեն և ինքն իշխան թագաւորութեան. Հօր անսկզբնականի, ան փաղձանի և ան եղլի, գեր սկզբնականի, պատճառ էին ինքնագոյի. և Որդւոյն նորին անիմանալւոյ, անհաս և անճառելւոյ, իսկական բանի, և նոյնազօրի և Հոգւոյն սրբոյ ճշմարտի. անորոշելւոյ. մշտնջենականի՝ մխիթարչի և ամենակալի: Եռահիւսեակ միազոյգ, համանման, համահաւասար, համապատիւ, և համապաշտելի միութեան. ի բնաւից գոլից յանտարրից և տարրեղինաց վեր առաքեսցի. օրհնութիւն գոհութիւն, և փառաբանութիւն, անցելովս ներկայիւքս, և ապառնեօք անզրաւ յաւիտենիւ ամէն:

Որմէ գերագոյն անհասանելի և ինքնաբուն բարւոյն, ամէն իմաստ վեհագոյն գիտութեան, և նախագաղաբար տեսութեան ամենասուրբ երրորդութեանն, ստեղծեալ գոյացան էակքս ամենայն, յոչէից անթերի լրութեամբ և անպակաս կատարելութեամբ:

Իսկ զկնի ժամանակաց մարդասիրեալ ընդ հողեղէն բնութեանս, բովանդակեալ պարագրեաց իձեռն օրինաց և մարգարէից, ծանուցանելով զխորհուրդն անքննելին զծածկեալն յաւիտենից, որ էրն առ Հօր և երևեցաւ մեզ. բանին մարմին եղեալ անճառելի խառնմամբ

ընդ

ընդ մարմնոյ անօրինաբար 'ի սրբոյ կուսէն վասն փրկութեան մերոյ կատարեաց զամ, տրն մեր Յս Քս, հօր իմաստութիւն ։ Որ կանգնեաց զեօթնասիւն հրաշակերտն, առաքելով զընտրեալսն 'ի հրաւիրումն անմահական խառնարանին ․ որ և յաւէտ ուռոգէ կաթուղիկէ և առաքելական սբ եկեղեցի ծարաւուտ եւառատահոս վտակօք աղցեալ՝ արբուցանելով զանմահական ճաշակն իւր, մեծապանծ և զարմանալի ։ Սուսան գերագոյն և գերահրաշ եւգերաբարձր ամենասուրբ զաւետարանն իւր աւանդեաց հաւատացելոց մեր՝ շնորհ՝ և պարգև՝ իձեռն ամենառատ մարդասիրութեան իւրոյ ․ որ և ստորաճառութեամբ վիպէ մեզ զանօրինութէ բանին մարմնացելոյ, որով եղև փրկութիւն հաւատացելոց ազգաց և ազանց ընդհանուր տիեզերաց ․ որոյ անբաւ մարդասիրութեան շնորհակալութեամբ մատուցանիցէ

գոհութիւն և երկրպագութիւն ։ ամէն

Արդ՝ եղև տպագրութիւն սրբոյ մատենիս այսորիկ վայելչատիպ հոգաբարձութեամբ և ծախիւք գնդևանցի վարդանի որդի Լուկեարին ։ և հոգևոր եղբօրն Շօռութեցի բարայքլասի որդի մահտեսի Մինասին ։ Քանզի բարեպաշտօն արքս այսոքիկ, ամենայնիւ ջանիւ հոգ անձին կալեալ, անձանձիր աքնութեամբ ․ ի տուէ և ի գիշերի ․ գուն գործեալ ․ իվճար հասուցին յիշատակ անջնջելի յինքեանց՝ և բնաւին զարմից իւրեանց․ Իսկ յառաջադիմութիւն գործոյ սոյին եղև իվերայ

յառ

յառաջնոյ տպեցեալ աւետարանին, որէր տպեցեալ
ՌՃԼԵ թվին Հայոց. յարևմտան նմին ամի. բայց սա
կայ ինչ փոյթ առեալ առողջութեանն կերպարանե-
ցաւ, առ ի դիւրադին ընթեռնլոյ, մանաւանդ խակակր-
թիցն սակս։ Նայ և յորում աշխատեալ իվերայ տողիցն, որ
ունէր գիրս այս մերձ առ մերձ լեալ՝ զայս ևս ընդ-
արձակեալ անջրպետական միջնորմովն նրբականօք
բացազատեալ, որոյ գործածութիւն լինիւր ներ-
իմն աշխատութիւն և դժուարութիւն ոչ սակաւ։
Նայ և սրբագրութ սորին եղև իվր նոյնոյ աւետարանին,
կրկին և երեքկին խուզմամբ, բայց առողջութեանց
ոմանց, որպէս վերոգրեցաւ։ Իսկ ծախք սորին որ եղեն
յորովքեն. միայն թէ յադաւինեալ յամ և առ
բարեպաշտ եղբայրսն ձեռնամուխ եղեալ յայսմ գոր-
ծոյ վճար եհաս անն շնորհիւ։ Վասն որոյ ժամեմ՝
հայցեմ՝ և մաղթեմ ճշմարտասիրաց և հաւատարմական
քրիստոնէական գթութեանց ձերոց, մինչել իմաքրա-
փայլ աղօթս ձեր, վերոյ գրեալ զաղնուատոհմ
և զբարեպաշտ զնորահասակ և ծաղկածաւալ
զՎինդևանցի Մարդանի Որդի Լակեարն.
և զ[illegible]ազմահանճար և նրբայարհեստ զհոգևոր եղբայրն
ըս Շնորհեցի բարուքիսի որդի զՄինաս դպիրն։
որք ամենայնիւ ջանիւ, արդեամբք և գոյիւք՝ ի լոյս
հանին զգեղեցկադիր ըզ [illegible] զմբ աւետարանս այս։
Նաև [illegible] մատենիս այս ՝ի մայրաքա-

ղա

ղաքն կոստանդինու պօլիս ։ Ի Թվականութեան
կենարարին մերոյ ռ̃չ̃ժ̃ երորդի ։ և Հայոց ռ̃ճ̃ծ̃թ̃
երորդի , Դեկտեմբերի վերջն ։

Յաւուր Հայրապետութեան հանդարտախաղաց ծովու,
Տեառն Աղեքսանդրի Կաթուղիկոսի սրբոյ աթոռոյն
Էջմիածնի ։ և դիտապետութեան երկուց սրբոց
աթոռոց, սրբոյ Երուսաղեմի և Կոստանդինու պօլսոյ
տ̃ն Իսահակայ վարդապետի ։

Արդ՝ որք ընթեռնոյք զս̃բ և զա̃ծային կենսաբուխ
զաւետարանս զայս՝ յիշեցէք 'ի մաքրափայլ աղօթս ձեր
զաշխատօղս և զգործաւորս սորին ։ Ընդ նոսին
և զնուաստս ամենից և ամենեցունց ծառայ զյետ
նեալս , զսրբագրողս ըստ տպագրութեան ։ և որք
յիշէք յիշեալ լիջիք ի ք̃է̃ ա̃յ մեր մէ ամէն ։